закладывалась прочная гражданская жизнь в Армении. Паралельно с этим, укрьплялась армія, дошедшая к осени 1920 года до 40.000-аго комплекта. Во главѣ ея непрерывно стоял боевой генерал бывшей русской службы ген. Ф.И. Назарбеков, а также генерал (генеральн. штаба) И.В. Ахвердов, его начальник штаба, – и ряд прочих генералов, сделавших себѣ почетное имя в рядах русской арміи. Усилиями арміи и ея руководителей постепенно, – при содѣйствіи союзников, гл. обр. англичан, – к Армении присоединялась ея неразрывныя части–Карсская область, Сурмалинский уѣзд, Шаруро-Нахичеванский и Зангезурский уѣзды. Я лично, как председатель Правительства Армении, избранный Парламентом на эту должность в лѣто 1919 года, – впервые посѣщал эти работы и возвещал населенію о водвореніи новой власти. Территорія росла и дошла до 45.000 кв. кил., – почти упершись в границы Турціи 1914 года. Мы ожидали рѣшенія парижской конференціи, чтобы перейти довоенную границы Турецкой Россіи и расширить границы Армении. Расширеніе границ было необходимо для Армении, ибо в нее вливались новые бѣженцы из Азербейджана и из областей Турціи. Паралельно шла дипломатическая работа в Парижѣ со стороны Делегаціи Республики Армении, завершившаяся подписаніем Севрскаго договора, 10 авг. 1920, коим согласно арбитража президента Соединенных штатов Вильсона, Армения получала Ван, Эрзрум, Муш и Трапезунд и всего должно было имѣть 180.000 кв. кил. В декабрѣ 1920 г. ставился вопрос о вхожденіи Армении в состав Лиги Націй. Таким образом и внутри страны и во внѣ ея нормально упрачивался процесс развитія Республики Армении. Правда, – внутри страны и на ея границах были недорозуменія, гл. обр. по двум причинам: Татарское населеніе внутри страны неизмѣнно подвергалось агитаціи со стороны турецких агентов, поджигавших мирное населеніе против власти Правительства Армении, – и с другой стороны сосѣди Армении – Азербейджан и Грузія не имѣли одинаковых с Арменией взглядов на границы Армении и это разногласіе причиняло много забот Армении. Главнейшим разногласіем был вопрос о Карабахѣ и Зангезурѣ, этих исконно армянских раіонах, в теченій вѣков служивших оплотом армянства. С Грузіей яблоком раздора служили два уѣзда – Ахалкалакскій, сплошь населенный армянами (из 90.000 населенія – 80.000 армяне), и Борчалинский, – в своей южной части весь населеный 60.000-ым армянским населеніем. Конфликт с Азербейджаном вызывал ряд кровавых столкновений, пожар Шуши, кровавыя избіенія армян в г. Нухе, в различных раіонах Азербейджана, новыя волна

бѣженства, нищету и как неизбежность финал – почти бесплодная конференція. Но несмотря на всѣ эти печальныя осложненія внутри и на границах Арменіи, – все же ковалась независимость Арменіи и медленно входила в сознание Кавказских народов необходимость соглашеній, арбитража и мирнаго разрѣшенія конфликтов и разногласій. И не будь событий 1920 и 1921 годов, повлекших за собой совѣтизацію Арменіи, Грузіи и Азербейджана, – можно с увѣренностью сказать, – что из огненнаго горнила Русской Революціи и Великой Войны на югѣ бывшей Русской Имперіи создались-бы и мирно ужились новыя національно-территориальныя независимыя в действительности государственныя новообразованія. Зная, что без согласія самой Россіи Арменія не сможет окончательно выявить свое независимое бытіе и оформить его прочно, – Правительство Арменіи 2^{го} мая 1920 года отправило в Москву особую делегацію для заключенія соглашенія с Россіей в лицѣ тогдашней совѣтской власти. В состав делегаціи входили: предсѣдатель – Леон Шант (Сегбосян), извѣстный писатель и Предсѣдатель Парламента; А. Тертерян, присяжный повѣренный, член Парламента, и Леон Зарафян, – член Парламента. Делегація эта осталась два мѣсяца в Москвѣ, вела переговоры с Чичериным, установила основы соглашенія и для окончательнаго их оформления вернулась осенью 1920 го года в Эривань, гдѣ должны были продолжаться переговоры через Лиграна, – уполномоченнаго от Московскаго Правительства. Переговоры эти не закончились благодаря турецко-большевическому натиску на Арменію. Но во всяком случаѣ Московская власть признала независимость Арменіи, ея права на армянскія вилайеты Турціи и все обѣщало подписаніе формальнаго договора между Арменіей и Россіей на подобіе подписаннаго 7^{го} іюня соглашенія между Грузіей и Россіей. Но безпокойныя сосѣди Арменіи не дрѣмали: большевики не могли примириться с демократическим строем Арменіи, кемалисты-турки не могли допустить осуществленіе Севрскаго договора. У обѣих сил был общій враг – демократическая Арменія, а общеевропейская конъюнктура толкала большевистскую Россію и кемалистскую Турцію на взаимное соглашеніе во вред европейским державам, гл. обр. Англійи и отчасти Франціи. Над головою Арменіи заносился мечь – ангоро-московское соглашеніе. Открыто мечь этот был занесен над Арменіей осенью 1920-го года, – а скрытно в маѣ того же года. В первых числах мая (от 1 до 5^{го} мая) большевики устроили ряд открытых выступлений в Александрополѣ, Карсѣ, Делижанѣ, Караван-Сараѣ, но были сломлены Правительством Арменіи, арміей и населеніем.

Попытка с низвержением власти не удалась, большевики частью бѣжали, частью раскаялись и сдались, частью были наказаны. Лично я в этот период, – 5^{го} мая, – оставил власть, выѣхал в июнѣ в Заграничную специальную миссию, – заключить для Арменіи заем в 20 милл. долларов, – и вернулся в Арменію в концѣ октября того-же года. За это время кемалисты и большевики в течение начала осени задумали комбинированный план захвата Арменіи, ея раздѣла и совѣтизації. План этот начал осуществляться с осени 1920 года и завершился 2^{го} декабря того же года. Турки начали наступление со стороны Олты (Карсская область), постепенно отгѣсня армянскія войска, захватили Сарыкамыш, Крепость Карс, Александрополь и продвигались к столицѣ Арменіи – Эривани. Большевики с другой стороны, – со стороны Адербейджана, – подходили к Александрополью: армяне были стиснуты с двух сторон. Стояла лютая зима. Ноябрь. Десятки тысяч бѣженцев вновь широкой волной хлынули на территорию Эривани, вновь призрак голода, болезней, резни зарѣяли над Арменіей и политический горизонт Арменіи заволочся свинцовыми тучами. Чечерин из Москвы предложил свое посредничество и делегировал в Арменію Буду Мдивани, как своего представителя. Правительство Арменіи начало мирные переговоры с турками в лицѣ командующаго войсками ген. Кязим-Карабекир-паши. Состоялось перемирие, а 23^{го} ноября я принял пост председателя мирной делегации Республики Арменіи и выѣхал из Эривани в Александрополь во главѣ Делегации, имѣвшей членами бывшего Карсского губернатора С.А. Корганова и министра финансов Абрама Гюльхандянина. 24^{го} ноября мы были в Александрополь, помѣстились в здании полковой концелярии, гдѣ и начали 25^{го} ноября мирные переговоры с Турками. Председателем Турецкой делегации был Главнокомандующий Турецкой Армией генерал Кязим-Карабекир-паша, членами – два депутата ангарскаго Парламента. Переговоры были очень тяжелыми и по содержанию и по своей обстановкѣ. Наша делегация жила в условиях чрезвычайно тяжелых: город Александрополь находился в руках большевистской власти. Крепостная-же часть, гдѣ собственно мы жили, – была в руках турок. Мы видѣли из окон нашего дома, как турецкіе солдаты разбирали окна, двери, снимали деревянные части с домов, – нагружали фуры и направляли их в Карскую область, граница коей находилась от нас в 2-х верстах. Армянскую мужскую молодежь собирали сотнями и уводили в Турцію в плѣн и на тяжелые работы. Таким образом было уведено 11.000 мужчин, из коих через 1^{1/2} года вернулись из плѣна лишь 300 –

изнеможденные и разбитые. Большевики-же в городъ заперали людей в тюрьмы, выселяли жителей из квартир и бессильно угрожали членам Делегации. Мы начали переговоры с турками, пытались найти среднее рѣшеніе в вопросѣ о границах Арменіи, – но все было напрасно: турки рѣшили использовать свою побѣду до самой послѣдней степени. Большевистский агент Буду Мдивали с перваго-же дня турками не был допущен на Конференцію и уѣхал, – начав немедленно свою большевистскую пропаганду в Александрополѣ, на митингах и в Карсѣ. Видя, что мы пытаемся выговорить для себя сносные условія, турки 1^{го} дек. предложили нам очень тяжелый ультиматум, – и заявили, что в случаѣ отклоненія нами ультиматума они немедленно возобновят военные действия и двинутся на столицу Эривань. В это же время большевистские военные силы двигались на Эривань по другой дорогѣ, через Делижан-Еленовку. Правительство Арменіи под предсѣдательством Врацяна, учтя безнадежность всякаго военного сопротивленія, предложило делегации принять ультиматум турок и на сравнительно почетных условіях принуждено было уступить власть Совѣтам. В условіях придачи власти значились признанія со стороны совѣтов независимости Республики Арменіи, обязательство расширить ея границы и никого не преслѣдовать за принадлежность к политическим партиям. 2^{го} дек. 1920 г. Совѣты объявили свою власть в Арменіи и 6^{го} дек. русско-большевистские войска вошли в Эривань. 2^{го}-же дек. Делегация подписала в Александрополѣ мирный договор с Турціей, по каковому договору Арменіи оставлялась вмѣсто 180.000 кв.к. (по Севр.) всего 29.000 кв. кил., – Арменія вновь сжималась в узкіи тиски, Карсская область отходила к туркам, также и Сурмалинский уѣзд. Армянское населеніе в 1.200.000 чел. вмѣсте с татарским, русским, греческим доходившими до 300.000 чел., – итого населеніе Арменіи в 1 ¹/₂ милліона человекъ зажималось в территорію, на треть состоявшую из гор, солончаков и болот, лишленную выхода в море и обрекалось на весьма скудное существованіе. 2^{го}-дек. 1920 г. независимое существованіе Арменіи прекращалось и она подпала под власть оккупировавшей ее Москвы. Если еще добавить, что 28 мая 1919 года мы провозгласили акт о независимости объединенной Арменіи, т.е. Арменіи русской и турецкой, – согласно Севрскому договору, со 180.000 кв. километров, – то станет особенно яркой и выпуклой та разница между мечтой, почти ставшей фактом, реальностью, – и той дѣйствительностью, которая продолжается до сегодняшняго дня. С одной стороны – Севрскій договор Арменіи, признание defacto 20 янв. 1920 г. и de jure в 1920 году, совершенно

независимая и свободная, с демократическим режимом, – а с другой, сжатая в 29.000 кв. кил., – совѣтизированная, связанная с Москвой и в неволѣ. Лично я, подписав от имени Арменіи 2^{го} дек. Александропольский договор, со всѣм составом Делегации вернулся в Эривань и думал там остаться в качестве частного лица, – но в действительности вышло иначе. Совѣтское Правительство 20^{го} дек. предложило мнѣ оставить Армѣнію. Я выѣхал в Тифлис, а в февралѣ 1921^{го} года переѣхал в Париж и стал работать в Делегации независимой Арменіи. 25^{го} февраля 1921 года Совѣты овладели столицей Грузіи – Тифлисом, черед недѣлю Батумом и к концу февраля весь Кавказ подпал под власть Совѣтов. Началась новая глава в исторіи Кавказских Республик. Глава эта еще не дописана в тѣ дни, когда пишутся эти строки. Ее надо излагать особо: у нея свои горести и печали с возстаніями и кровавыми подавленіями, ссылками, экзекуціями и слезами и удушеніем живого слова и духа, – но без радостей и воодушевленія. Об этой эпохѣ когда нибудь в другой раз. Для иных, – этот період знаменует возвращеніе Кавказа Россіи. Событія послѣдних лѣт однако показали, что в глазах самага населенія это есть военная оккупация. Когда и как она кончится или во что окончательно выльется – этого никто не знает. Но одно ясно и безспорно: идея независимости вошла в плоть и кровь армянскаго народа, она облакает в реальные формы независимой Республики, проявилась, разцвѣла и насильно была придушена, – но не задушена. Она жива и будет жить, ибо идею нельзя убить: она по своей натурѣ бессмертна.

Оглядываясь на весь исторический період, в жизни армянскаго народа, затронутый моими записками – читатель, конечно, отмѣтит в своей памяти, что народ этот прошел через невообразимыя страданія: въ 1914 году он имѣл 4 ¹/₂ милл. человек по всему пространству Россіи и Турціи, – а в 1925 г. осталось от него всего 3.100.000 чел. – почти полтора милліона было убито в Турціи, зажато в пустыни Месапотаміи и Сиріи, гдѣ оно погибло от голода, жары и жажды, погибло от тифа, холеры, было убито на войнѣ. Но оставшіеся три милліона, еще сегодня не всѣ смогли послѣ войны вернуться к себѣ домой: всего около 1 милл. 200.000 живут в предѣлах Русской Арменіи, а остальные, – частью в Совѣтской Россіи и Грузіи (до 800.000 ч.), частью (до милліона) в различных странах Европѣ, Америкѣ, Азії и Африкѣ. Еще сегодня они в положеніи бѣженцев, временно пріютившихся в чужих странах. Вопрос о их возвращеніи на Родину – жгучий и полный трагизма. Но рядом с их трудным положеніем станет во всей широте и остроте поли-

тический вопрос о восстановлении демократического строя в Республикѣ Арменіи и о расширеніи ея границу до таких предѣлов, чтобы весь армянский народ бы в нем размѣстился и спокойно развивался, обеспечить свои культурные и матеріальныя потребности. Трагическая судьба сегодняшней Россіи, ея страданія и переживанія, надежды и будущее устройство, – так тѣсно, так неразрывно связаны со всѣм настоящим положеніем Арменіи, что было бы вполне естественным завершить мои записки горячим пожеланіем, чтобы великий и сильный русский народ скорѣе бы вышел на путь свободного, демократическаго развитія и установил бы братскіе отношенія с окружающими его малыми народами, которые также хотят, – и имѣют на то право, – получить свое мѣсто под солнцем. Ал. Хатисовъ.

в миру Великого Капула, ^{в Ватикане}, ^{когда}, ^{вспомни}, ^{вспомни}
 в свое время, что народ этот ^{неоднократно}
 много страдал: в 1914 году он ^{был} ^в ^{числе} ^{4 1/2} ^{млн.} ^{человек}
 во время ^{преследований} России и Турции, - в 1918 г. ^{вспомни}
 от него было ^{3.000.000} чел., - почти половина миллиона ^{было}
 убито в Турции, ^{частью} в ^{преследованиях} ^в ^{Сирии}, ^{от} ^{чего} ^{погибли} ^{от} ^{голода}, ^{жестокости} ^и ^{убийств}, ^{погибли}
 от ^{либра}, ^{жестокости}, ^{жестокого} ^{на} ^{войне}, ^{то} ^{убавился}
 от миллиона ^{еще} ^{смерло} ^{на} ^{два} ^{сидона} ^{после} ^{войны}
 безработицы ^и ^{голода}: было ^{тогда} ^{только} ^{1.000.000} ^{человек}
 в ^{пределах} ^{Российской} ^{Армении}, ^в ^{особенности}, ⁻ ^{частью} ^в
^{Сотской} ^{Дели} ^{(до} ^{200.000} ^{человек}), ^{частью} ^{(до} ^{100.000} ^{человек}) ^в
^{таких} ^{ситуациях} ^в ^{Индии}, ^{Африке}, ^{Азии} ^и ^{Америке}. ^{Еще}
^{смерло} ^{они} ^в ^{паче} ^{от} ^{убийств}, ^{убавился} ^{продовольствия}
 в ^{таких} ^{ситуациях}. ^В ^{Восток} ^и ^{их} ^{выбывание} ^{на} ^{родины}
^{турецкой} ^и ^{паче} ^{турецкой}. ^{То} ^{решение} ^с ^{их} ^{(наименее} ^{того}
 во ^{всей} ^{мире} ^и ^{особенно} ^{на} ^{территории} ^{Востока} ^и ^{Ближнего}
^{Востока} ^{Тайно} ^{на} ^{Армянском} ^{воле} ^в ^{Ассамблее} ^{Армении} ^и ^о ^{разных}
^{делах} ^{на} ^{границе} ^{до} ^{таких} ^{предметов}, ^{какова} ^{была} ^{Великая}
^{война} ^и ^в ^{ней} ^{революция} ^и ^{т.д.} ^{развивалось}, ^и
^{клетка} ^{свет} ^{Христианская} ^и ^{мусульманская} ^{погрязли}.
^{Турецкая} ^{Восток} ^{России}, ^и ^{ситуация} ^и ^{проблемы},
^{каждому} ^и ^{были} ^{устойчиво}, - ^{там} ^{по} ^{тем} ^{там} ^{неод-}
^{рочно} ^{свободно} ^{со} ^{всей} ^{наступившей} ^{паникой} ^{Арме-}
^{нии}, - ^{что} ^{было} ^{до} ^{таких} ^{средств} ^{разрешения} ^и
^{разлика} ^{погрязли} ^{паче} ^и, ^{какова} ^{была} ^и ^{школа}
^{русской} ^{народ} ^и ^{всего} ^{на} ^{пути} ^{свободы}, ^и ^{во}
^{французского} ^{разрешения} ^и ^{устойчиво} ^и ^{французского}
^с ^{архипа} ^{его} ^{машин} ^{работами}, ^{какова} ^{такая}
^{хотел}, ^{какова} ^{была} ^{свое} ^{имею} ^{под} ^{солнцем}. ^В ^{Хатисову}

Քսոթիսակի ձեռագիր տեքստի վերջին էջը

Государственный архив Российской Федерации (ГАРФ).
Фонд(Ф) Р5881, Опись(ОП) 1, Дело (Д) 524, Листы(Л) 1-323;
рукопись, машинопись.

ԲԱԺԻՆ I I

№ 1 ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽԱՏԻՍՈՎ Ա.

Խատիսով Ա. « Ռուսական հեղափոխությունը և Հայաստանի
Հանրապետության ստեղծումը Կովկասում»
/1917 – 1918թթ./

Գրառումներ, կից՝ արտաքին քաղաքականության մասին Անդր-կովկասյան Սեյմի նախագահ³ Ե.Պ. Գեգեչկորու⁴ ճառը, անկախ Անդր-կովկասյան Հանրապետության կառավարության հռչակագրերը և այլ փաստաթղթեր:

Ձեռագիր, մեքենագիր և տպագիր օրինակներ:
1924 թ.

Դրոշմակնիք. «Центральный Государственный Архив
Октябрьской Революции» ИИВ.9574.
5881 796 (ջնջված, կողքին ավելացված՝ 524)

³ Ակնհայտ վրիպում է: Նշված ժամանակաշրջանում **Ե.Պ.Գեգեչկորին** իրականում հանդիսացել է ոչ թե Անդրկովկասյան Սեյմի, այլ դրա կառավարության՝ Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահը, ինչը, պարզապես, անհնար է, որ հուշերի հեղինակը չիմանար, կամ էլ, շփոթեր:

⁴ **Գեգեչկորի Եվգենի Պյոտրի** (1881թ., Քութայիսի նահանգ, Ռուսական կայսրություն – 1954թ., Փարիզ, Ֆրանսիա): Ծագումով ազնվական, Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության (1918թ., մայիս - 1921թ., մարտ) պետական և քաղաքական գործիչ: Ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը (1907թ.), Ռուսաստանի սոցիալ – դեմոկրատական բանվորական կուսակցության (հետայսու՝ ՌՄԴԲԿ) անդամ, մենջևիկ: 1907թ. ընտրվել է Ռուսաստանի Պետական III Դումայի պատգամավոր: 1917թ. նոյեմբերից մինչև 1918թ. ապրիլը՝ Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ, 1918թ. նոյեմբերից մինչև 1921թ. մարտը՝ անկախ Վրաստանի արտաքին գործերի մինիստր: 1921-ի մարտին արդարադատության մինիստր:

Խորհրդային Ռուսաստանի կողմից Վրաստանի անկախությունը վերացնելուց և երկիրը բռնազավթելուց հետո տարագրվել է Ֆրանսիա: 1953-1954թթ. զբաղեցրել է Վրաստանի վտարանդի կառավարության նախագահի պաշտոնը: (տե՛ս, A. Kacharava, A. Daushvili, *The Democratic Republic of Georgia: Struggle for Independence 1918-1921*, Published 2021 by Artanuji Publishing. 148p.)

Ռուսական Հեղափոխությունը և Հայաստանի Հանրապետության ստեղծումը Կովկասում (անձնական տպավորություններ)

Մամուլին հանձնելով տվյալ գրառումները, անհրաժեշտ եմ համարում նախապես կատարել մի քանի դիտողություններ դրանց վերաբերյալ: Առաջին հերթին նրա համար, որպեսզի ընթերցողը հասկանա, թե ինչն է ես որոշել այս քայլը կատարել, իսկ երկրորդը՝ որպեսզի վաղորոք նշվեն պատճառները նման դեպքերում այն անխուսափելի խոտանների, որոնք ընթերցողն ինքը կհայտնաբերի այս պատումներում: Առանց իմ կողմից արած այդ նախնական դիտողությունների ընթերցողն իրավասու կլիներ ինձ ուղղել բազմաթիվ կշտամբանքներ, որոնք կառնչվեին շարադրանքի ոչ լրիվ լինելուն և Հայաստանի Հանրապետության նորագույն պատմությանն առնչվող պատմական նյութը չօգտագործելուն: Առաջին հարցին, - թե ինչու՞ ես ավելորդ չհամարեցի իմ լուսման ներդնել Հայաստանի Հանրապետության ծագման և զարգացման լուսաբանման հարցում, - ես պետք է պատասխանեմ, որ իմ կողմից դա արվում է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ես անձամբ շատ բաներ եմ տեսել, անձամբ բազմաթիվ իրադարձությունների ականատեսն ու անմիջական մասնակիցն եմ եղել Հայաստանի ծագմանն ու զարգացմանն առնչվող բոլոր գլխավոր քաղաքական իրադարձությունների: Եվ այդ ամենից ստացած տպավորություններն ու փաստերի վերապրումը, կարծում եմ, պետք է որ հետաքրքիր լինեն ընթերցողին: Ավելորդ չի լինի, թերևս, հստակեցնել այն դիրքերն ու հարթակները, որոնցից ժամանակին ես դիտարկել եմ այս կամ այն դեպքերը և իրադարձությունները, որպեսզի ընթերցողը կարողանա պարզել իր համար իմ վերաբերմունքը կատարվածի նկատմամբ:

Իմ հասարակական-քաղաքական կյանքը Կովկասում ես սկսել եմ 1900թ., Թիֆլիսում՝ աշխատելով Թիֆլիսի քաղաքապետարանում, որտեղ հին ռուսական վարչակարգի պայմաններում դրսևորվում էր կովկասյան բոլոր ազգությունների մտավորականության հասարակական-

քաղաքական միտքը: 1902 – 1906 թթ. եւ եղել եմ քաղաքապետարանի ընտրված պատգամավոր, 1906-1910թթ՝ Թիֆլիսի քաղաքագլխի օգնական (*խնա՝ տեղակալ- Վ.Ն.*), 1910 թվականից մինչև 1917թ.՝ Թիֆլիսի քաղաքագլուխը: 1914 -1917թթ. հանդիսացել եմ Կովկասի 44 քաղաքների միության նախագահ: 1917-1918թթ. եղել եմ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը, 1918թ.՝ Անդրկովկասյան Հանրապետության կառավարությունում՝ ֆինանսների մինիստրը, 1918թ. ամառվանից՝ հուլիսի 24-ից մինչև նոյեմբերի 4-ը և 1919թ. հունիսի 24-ից մինչև 1920թ. ապրիլի 3-ը՝ Հայաստանի Հանրապետության արտգործնախարար, 1918թ. նոյեմբերի 14-ից մինչև 1919թ. փետրվարի 7-ը՝ հանրային խնամատարության նախարար, 1919թ. հունվարի 29-ից մինչև օգոստոսի 10-ը՝ ներքին գործերի նախարար, 1919թ. մարտից մինչև սեպտեմբեր՝ Հայաստանի կառավարության նախագահի տեղակալ, 1919թ. օգոստոսի 7-ից մինչև 1920թ. մայիսի 5-ը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ: 1918-1920 թթ. ընդգրկվել եմ Անդրկովկասյան Հանրապետության և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների կազմում, այդ թվում՝ նաև որպես նախագահ, որոնք Թուրքիայի հետ խաղաղության շուրջ բանակցություններ են վարել Տրապիզոնում (1918թ. փետրվար-մարտ), Բաթումում (1918թ. մայիս-հունիս), Կոստանդնուպոլսում (1918թ. աշուն), Ալեքսանդրապոլում (1920թ. նոյեմբեր-դեկտեմբեր): Երկու անգամ Հայաստանի Հանրապետության անունից խաղաղության պայմանագիր եմ ստորագրել Թուրքիայի հետ: 1921-1925 թթ. եղել եմ Փարիզում Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում: Ընթերցողը մեծահոգաբար կների ինձ այս տեղեկանքը մեջբերելու համար, որը ես ներկայացնում եմ հենց նրա համար, որպեսզի ընթերցողին պարզ լինի, թե հատկապես ո՞ր դիրքերից եմ ես դիտարկել իրադարձությունները և որպեսզի իրեն հասկանալի դառնա, թե ինչո՞ւ ես անդրադառնում եմ հենց այս, այլ ոչ թե մեկ ուրիշ իրադարձության լուսաբանմանը: Ինքնակառավարման մարմիններում ծառայության բուն բնույթի, դրանցում իմ ունեցած տեղի և դերի բերումով բազմիցս շփվել եմ ռուսական ու կովկասյան կուսակցությունների քաղաքական գործիչների՝ ամենաաջակողմյանից մինչև ամենաձախակողմյան հայացքներ դավանողների, վարչական ղեկավար

անձերի հետ՝ սկսած նահանգապետներից մինչև Կովկասի փոխարքա-ներ կոմս Վորոնցով-Դաշկովը⁵ և Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչը⁶:

⁵ Կոմս Բլարինոն Բվանովիչ Վորոնցով-Դաշկով (1837թ., Սանկտ-Պետերբուրգ, Ռուսական կայսրություն – 1916թ., Ալուպկա, Տավրիկյան նահանգ, Ռուսական կայսրություն), ռուս պետական և ռազմական գործիչ, գեներալ-լեյտենանտ, գեներալ-համհարգ: Ռոմանովների կայսերական ընտանիքին առավել մոտ կանգնած մտերիմ և վստահելի անձերից մեկը: Որպես մարտական սպա մասնակցել է իր օրոք Կայսրության վարած տարբեր պատերազմներին, կայսերական կառավարչական համակարգում զբաղեցրել մի շարք առանցքային պաշտոններ: Հենց կոմս Վորոնցով-Դաշկովին է վստահվել Նիկոլայ II կայսեր թագադրման արարողության կազմակերպումը: Թագադրումը, սակայն, ինչպես հայտնի է, ավարտվեց Խոդինկայի ողբերգությամբ, ինչի հետևանքով ռոմանտակ եղավ և զոհվեց հարյուրից ավելի մարդ: Ու թեև արարողության կազմակերպիչն անձամբ այդ ամենում ողղակի մեղավորություն չունեի, սակայն կոմս Վորոնցովը, որպես գահի հավատարիմ հպատակ, իր վրա վերցրեց կատարվածի պատասխանատվությունը և 1896թ. հրաժարական տվեց բոլոր պաշտոններից, մնալով միայն Պետական խորհրդի անդամ: Սակայն կայսրությունում, այդ թվում և հատկապես՝ Կովկասում, բոցավառվող ռուսական հեղափոխության կրակը Նիկոլայ II –ին ստիպեց վերականգնել նախկինում լուծարված Կովկասի փոխարքայի պաշտոնը և Կովկասը հուսալի ձեռքբերում պահելու համար 1905թ. այդ պաշտոնում նշանակել 68-ամյա կոմս Վորոնցով-Դաշկովին: Երկրամասը <<հանդարտեցնելու>> և Ռուսաստանի հետ անխզելի կերպով նրա սերտաճումը ապահովելու համար, նորանշանակ փոխարքան ցարի կողմից օժտված էր ոչ միայն քաղաքացիական-վարչական, այլ նաև՝ դատական և ռազմա-նոստիկանական ոլորտներում որոշումներ կայացնելու չափազանց լայն լիազորություններով: Նրան էին ենթարկվում երկրամասի բոլոր պետական հաստատությունները, նա հանդիսանում էր Կովկասյան ռազմական օկրուգի հրամանատարը, նրան էին ենթարկվում նաև Թերեքի և Կուբանի կազակական զորքերը: Կովկասում ռուսական պետական քաղաքականության հաջող իրականացման համար կոմս Վորոնցովի կողմից կիրառման մեջ էր դրվել Ռուսաստանի պետական շահերի և տեղի ազգաբնակչության շահերի, իբր հավասարակշռման սկզբունքը. կիրառելով պատժիչ միջոցներ <<բացահայտ հեղափոխականների և ահաբեկիչների նկատմամբ>>, միաժամանակ համազործակցել և հենվել <<տեղական բնակչության բարեմիտ>> զանգվածների վրա: Բնականաբար, վերջնարդյունքում ապահովելով ու երաշխավորելով, առաջին հերթին, ռուսական պետության իրական շահը: (Տե՛ս օրինակ, Соколов А.С., Наместник Кавказа И.И. Воронцов-Дашков: программа социальных реформ и проблемы ее осуществления, Кавказология / Caucasology, № 2/2017, сс.41-47): Քանզի այդ տարիներին Կովկասի տնտեսական դաշտում հայերն առաջնային դիրքերում էին, և հայության հետ իշխանությունների շփումներն առավել ինտենսիվ էին, նման մոտեցումը փոխարքային բերել էր <<լիբերալի>> և, մասնավորապես՝ <<հայասեր>> և <<հայա-

նպաստ» գործչի համբավ: Կոմսի կառավարման սկզբնական շրջանը նշանավորվեց ռուսական իշխանությունների կողմից սադրած և ուղղորդված՝ կոտորածների վերաճող հայ-թաթարական արյունալի բախումներով:

Իսկ Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես, Կովկասի փոխարքան «խիստ ըմբռնունով» մոտեցավ Կովկասի հայկական ազգային շրջանների այն երագներին, թե Ռուսաստանը, Թուրքիայից նվաճելով Արևմտյան Հայաստանը, այնտեղ կհիմնի հայկական ինքնավարություն: Եվ, «անսալով» այդ երագանքի իրագործմանն ուղղված հայերի գործնական առաջարկին, այդ պահին ոչ միայն թույլ տվեց, այլ խրախուսեց և պետականորեն աջակցեց հայկական կամավորական ջոկատների կազմավորմանը, որոնք ռուսական բանակի կազմում արշավեցին դեպի Արևմտյան Հայաստան և որոշակի ներդրում ունեցան ռուսական զորքի կողմից Օսմանյան կայսրության հայաբնակ տարածները գրավելու հարցում: Մակայն հանրահայտ փաստ է, որ ռուսական կողմից հայկական զորաջոկատների՝ թուրքական բանակի դեմ կռվելու ռազմական առումով ոչ այնքան վճռորոշ ու ոչ այնքան ծանրակշիռ գործոնը, թուրքերի համար դարձավ այն ծանրակշիռ գործոններից մեկը, որը Թուրքիայի իշխանությունները «հմտորեն» օգտագործեցին Հայոց Ցեղասպանությունը կազմակերպելու և իրականացնելու համար: Միաժամանակ, երբ Արևմտյան Հայաստանի մեծ մասն արդեն նվաճված էր, հայկական կամավորական ջոկատների գոյությունը ռուսական կողմի համար դարձավ այլևս միանգամայն անընդունելի՝ նախ նրանք, որպես առանձին մարտական միավորներ, լուծարվեցին և ցրվեցին ռուսական բանակի կազմի մեջ, իսկ որոշ հայ զինվորների հանկարծ մեղադրեցին դասալքության, դիակապտության և նույնիսկ՝ ռուս զինվորի վրա զենք բարձրացնելու մեջ, բնականաբար, համապատասխան քարոզչության և պատժամիջոցների կիրառմամբ: Օգտագործելով Կովկասում հայերի «բարեմտությունը»՝ Թուրքիայի նկատմամբ իր տարածքային էքսպանսիան հաջողությամբ պսակելու համար, հաղթանակներից հետո գրավյալ տարածքներում ռուսական կողմն անթաքույց կերպով անցավ արդեն «Հայաստանն առանց հայերի» ծրագրային սկզբունքի իրականացմանը: Փոխարքա Վորոնցով-Դաշկովը միանգամայն բնականոն ձևով տեղավորվում և գործում էր հայերի հանդեպ վարվող ռուսական պետական այդ քաղաքականության ծիրի մեջ: Մասնավորապես, Կովկասի փոխարքան հաստատել էր զեներալ Ն. Ն. Յուդենիչի 1915թ. ապրիլի 5-ի «Եփրատի կազակությանը» վերաբերող No 1482 զեկուցագիրը, որտեղ նշվում էր, որ «...ելնելով ռուսական շահերից և չափազանց ցանկալի համարելով բնակեցնել սահմանագծի վայրերը ռուսական տարրով, պետք է Արևմտյան Հայաստանում, մասնավորապես, արդեն գրավված Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի հովիտներում, բնակեցնել Կուբանից և Դոնից զաղթածներով և այս միջոցներով կազմել սահմանամերձ կազակություն» (տե՛ս, Մ.Արզումանյան, Հայաստան 1914-1917, էջ 269, «Հայաստան», Երևան, 1969): Բնականաբար, ճիշտ կլիներ, որ հարցը հաջողությամբ այդ հանգրվանին հասցրած «հայասեր» փոխարքան արդեն գնար և իր տեղը զիջեր ծրագրի հաջորդ փուլն իրականացնողին: «Հայասեր»

կոմս Կորոնցով-Դաշկովը Կովկասի փոխարքայի պաշտոնը թողեց 1915թ. սեպտեմբերին՝ նրան նշանակած նույն Նիկոլայ I I-ի որոշմամբ:

Ահա թե ինչ էր գրում օրվա հայ մամուլը այդ կապակցությամբ. <<...Տասն տարուց յետոյ թագաւոր կայսրը վաստակաւոր Փոխարքայի միսիան լիովին կատարուած տեսնելով, նրան հանգստի է հրաւիրում իր մօտ գուհութեան փառաւոր հաւաստիքներով: Կովկասը սրտով ողջերթ է մաղթում սիրեցեալ Փոխարքային, մասնաւորապէս հայ ժողովուրդը իր ցաւոտ, դատնագին օրերում, երբ Տաճկաստանի հայութիւնը բնաջինջ է լինում, կամ հին անդունդից՝ Տաճկաստանից դուրս գալով, նոր անդունդի՝ գաղթականութեան տառապանքների մեջն է ընկնում...>> (Տե՛ս, “ՀՌՎԻՏ” ազգային, հասարակական, գրական շաբաթաթերթ, 6 սեպտեմբերի, 1915թ., No 34):

- ⁶ Մեծ իշխան **Ռոմանով Նիկոլայ Նիկոլանիչ** – կրտսեր, (1856թ., Մանկտ-Պետերբուրգ- 1929թ., Անթիբ, Ֆրանսիա): Կայսր Նիկոլայ I –ի թոռը, Նիկոլայ II –ի հոր՝ հորեղբորորդու որդին, գեներալ- համհարգ: 1905-1908թթ. եղել է Ռուսաստանի պաշտպանության Պետական խորհրդի նախագահ, 1905-1914թթ.՝ գվարդիայի գործերի և Պետերբուրգի ռազմական օկրուգի հրամանատար, 20 հուլիսի 1914թ. 23 օգոստոսի 1915թ. և 1917թ մարտի 2-11 –ը՝ Ռուսաստանի Զինված ուժերի Գլխավոր գերագույն հրամանատար: 1915թ. օգոստոսի 24-ից մինչև 1917թ. մարտի 1-ը Կովկասի փոխարքան էր, Կովկասյան բանակի Գլխավոր հրամանատարը: Ռուսաստանում Փետրվարյան հեղափախությունից հետո որպէս արտոյալ գտնվել է Ղրիմի իր Կոյլբեր կոչվող կալվածքում: 1919-ի մարտին տարագրվել է Իտալիա, իսկ 1922-ից հաստատվել է Ֆրանսիայում: 1924թ. դեկտեմբերին բարոն Պ.Ն. Վրանգելից ընդունել է արտասահմանում գործող ռուսական բոլոր ռազմական կազմակերպությունների ղեկավարումը:

Ն.Ն. Ռոմանովը Կովկասի փոխարքա նշանակվեց այն ժամանակահատվածում, երբ Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասն արդեն գրավված էր ռուսական զորքի կողմից, իսկ այդ տարածքների հայ բնակչությունն էլ՝ <<շնորհիվ>> թուրքերի իրականացրած կոտորածների և ռուսական զորքի առաջ-հետառաջ զորաշարժերի, կամ ոչնչացված էր, կամ դարձել էր գաղթական: Արևմտյան Հայաստանի գրաված տարածքների նկատմամբ մշակվել և պաշտոնապես ընդունված էր այն տեսակետը, թե. <<... քանի որ պատերազմի հետևանքով կոտորվել են տեղական բնակիչներից շատերը, իսկ մնացածներն էլ չունեն համապատասխան փաստաթղթեր իրենց հողերի սեփականության մասին, ուստի հարցի լավագույն լուծումն այն է, որ մինչև հաշտությամբ Թուրքահայստանի միացումը Ռուսաստանյան պետությանը, նվաճված ամբողջ հողային տարածությունը պետք է ճանաչվի պետական...Հայ փախստականներն իրավունք չունեն վերադառնալ իրենց բնակավայրերը, կամ տեղավորվել Արևմտյան Հայաստանի որևէ այլ մասում, որովհետև դա ռուսների արյամբ գրավված երկրամաս է: (տե՛ս, Մ.Արզումանյան, Հայաստան 1914-1917, էջ 268-271, “Հայաստան”, Երևան, 1969): Միանգամայն հասկանալի է, որ Թուրքիայից հսկայական տարածքներ նվաճելուց հետո Ռոմանովներից առավել ազդեցիկ անձերից մեկին Կովկասի փոխարքա նշանակելը

Վերջիններիս հետ շփվել եմ 1905-1917 թթ., իսկ 1914թ.՝ Մեծ պատերազմի առաջին ամիսներին որպես Թիֆլիսի քաղաքագլուխ ընդունել և Կովկասի բարքերի հետ եմ ծանոթացրել կայսր Նիկոլայ II-ին: Որպես Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ, ես շփվել եմ Կովկասի բոլոր կուսակցությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև հանդիպել և բանակցել եմ թուրքական պետության տարբեր հոսանքներ ներկայացնող պետական գործիչների հետ: Եթե այս ամենին հավելենք նաև, որ որպես Թիֆլիսի քաղաքագլուխ և Կովկասի քաղաքների միության նախագահ ես պատվիրակված եմ եղել Կովկասի համար զենստվոների դրոյթների մշակմանը նվիրված 1916 թ Համակովկասյան համագումարին, մասնակցել եմ 1915, 1916, 1917թթ. քաղաքների Համառուսաստանյան համագումարներին, իսկ որպես Հայ ազգային բյուրոյի ներկայացու-

ուներ մեկ և խիստ որոշակի նպատակ՝ ապահովել գրավյալ տարածքների հնարավորինս արագ գաղութացումը: Որպեսզի պարզ լինի այն մթնոլորտը, որ տիրում էր Մեծ իշխանի շրջապատում այդ հարցի վերաբերյալ, բերենք նրա առավել վստահելի և մտերիմ անձանցից մեկի՝ իշխան Հաջեմուկովի կարծիքը հայկական կոտորածների մասին. <<Եթե այդ ամենին նայենք ոչ թե հումանիտար, այլ քաղաքական տեսակետից և, որպես արդեն կատարված փաստի, որի մեղավորը հարկ է ճանաչել հայերին, ապա պետք է ասել, որ այդ ամենն ունի իր դրական կողմը՝ Թուրքիան Հայաստանը մեզ թողեց առանց հայերի>> (տե՛ս https://ru.wikipedia.org/wiki/%D0%90%D0%B4%D0%BC%D0%B8%D0%BD%D0%B8%D1%81%D1%82%D1%80%D0%B0%D1%86%D0%B8%D1%8F_%D0%97%D0%B0%D0%BF%D0%B0%D0%B4%D0%BD%D0%BE%D0%B9_%D0%90%D1%80%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B8):

Իսկ ահա թե ինչպես էր արձագանքում օրվա հայ մամուլը Մեծն իշխան Նիկոլայ Նիկոլանիչին Կովկասի նոր փոխարքա նշանակելու կապակցությամբ. <<Կոմսի տեղ Ամենաողորմած թագաւորը... իր լայնածավալ պետութեան շողակը Կովկասի պահպանութիւնը յանձնում է Նորին Կայսերական Բարձրութիւն Նիկոլայ Նիկոլանիչին... Նորին Կայսերական Բարձրութիւնը անշուշտ համոզուած է թե Կովկասն ընդհանրապէս, հայութիւնը մասնաւորապէս իր սրտով կապուած է Ռուսիո գահին: Մասնաւորապէս արիւնլուայ հայ ժողովուրդը, Տաճկաստանի ժողովուրդը, որ մատաղ եղավ ռուսիոյ զօրքի ճանապարհին, կարժանանայ Մեծ զորավարի բարձր ուշադրութեան և իր փրկութիւնն ու պաշտպանութիւնը նրա ձեռքից կընդունի: Այս քաղցր յոյսերով և ակնկալութիւններով հայ ազգը <<բարի գալուստ>> է մաղթում Մեծ իշխանին>> (Տե՛ս, “ՀՈՎԻՏ” ազգային, հասարակական, գրական շաբաթաթերթ, 6 սեպտեմբերի, 1915թ., No 34):

ցիչ միջնորդն են եղել հայկական կամավորական ջոկատների և Կովկասի փախարքայի ու Կովկասյան բանակի Գլխավոր շտաբի միջև, ապա, մեր կարծիքով, կապառվեն այն դիրքերի քանակը, որոնցից են դիտարկել են իմ գրառումների թեմայի հետ կապված անձանց ու փաստերը: Սրանք են այն շարժառիթները, որոնցով ղեկավարվելով, երկար տատանումներից հետո, են որոշեցի, որ ամենևին անօգուտ չի լինի, եթե են իմ տպավորություններով կիսվեմ ընթերցողի հետ:

Բայց միաժամանակ անհրաժեշտությունը կա որոշ վերապահումների, որպեսզի սպառիչ պատասխան տրվի նաև երկրորդ հարցին՝ շարադրված նյութի ոչ լրիվ և ամբողջական լինելու վերաբերյալ: Երբ թղթին են հանձնվում անձնական տպավորությունները, ապա դիմում են գլխավորապես հիշողությանն ու փաստաթղթերին: Ինչ վերաբերում է հիշողությանը, ապա նա թղթին է հանձնում այն ամենը, ինչին հեղինակը անձամբ է ականատես եղել: Եվ հենց այստեղից էլ գալիս են շարադրված նյութի անխուսափելիորեն միակողմանի և ոչ լրիվ ու ամբողջական լինելը: Բայց այդ անխուսափելիությունը, որը պայմանավորված է գրառումների խիստ անձնական լինելու բնույթով, իր հետ բերում է նաև ականատեսի ձեռքով գրված պատումների կենդանի և ճշմարտացի լինելու գործոնը: Սա հիշողության մասով: Ինչ վերաբերում է փաստաթղթերին, ապա իմ փաստաթղթերը՝ օրագրեր, բնօրինակներ և լուսանկարներ, - իրադարձությունների բերումով մնացել են Էրիվանում, Թիֆլիսում, և այսօր ձեռքի տակ են ունեմ շատ փոքր թվով չհրապարակված աղբյուրներ: Այստեղից էլ նյութի ոչ լրիվ լինելը, իսկ որոշ դեպքերում էլ՝ թվային տվյալների, տարեթվերի և ամսաթվերի անխուսափելի սխալներ ու անճշտություններ: Սրանք են այն վերապահումները, որոնք վաղօրոք հանում են իմ վրայից հանդիմանությունները նյութի ոչ լրիվ լինելու և որոշ դեպքերում՝ նաև ինչ-ինչ մանրուքներում պարզության բացակայության համար:

Սակայն կա ևս մեկ լրացուցիչ դիտողություն. երբ թղթին են հանձնվում տպավորություններ և հիշողություններ վաղուց անցած և պատմության բաժին դարձած դեպքերի մասին, ապա հեղինակը միանգամայն ազատ է խոսելու այն անձանց մասին, որոնք պատկանում են արդեն պատմությանը և, ըստ այդմ էլ, ենթակա են ազատ գնահատանքի: Սա-

կայն այսօր, երբ գրվում են այս տողերը, այդ ժամանակը դեռևս ամբողջովին չի եկել: Ահա սրանք են այն նախնական դիտողությունները, որոնք ես որոշեցի նախորդել այն շարադրանքին, որը կարող է վերնագրվել որպես “Կովկասում Հայաստանի Հանրապետության ստեղծումն ու զարգացումը”:

Երկու խոսք նաև գրառումների բուն բովանդակության մասին: Ինչո՞ւ եմ ընտրել հենց այս թեման: Ես կցանկանայի լույս սփռել նաև այս հարցի վրա: Այն պատճառներից զատ, որոնց ես անդրադարձել եմ վերը, ինձ մոտ առկա էր նաև հետևյալ դատողությունը. հնարավոր չէ ժխտել, - և դա կլինեի կոպիտ պատմական սխալ, - որ մինչև այս վերջին տարիները հայկական քաղաքական միտքը մեկնաբանում էր հայկական հարցը՝ փոխկապակցված հայկական վիլայեթների հետ նախկին Օսմանյան կայսրության սահմաններում: Այդպես էր ընկալվում հայկական հարցը Եվրոպայում տասնամյակների ընթացքում: Մեծ պատերազմի ընթացքում, - և հատկապես այդ պատերազմից և Ռուսաստանում տեղի ունեցած Հեղափոխությունից հետո, - այն օրերին, երբ գրվում են այս տողերը, առանձնակի ուժով, հայկական հարցի քաղաքական իրավիճակի ծանրության կենտրոնը տեղափոխվել է Ռուսահայաստանի, այն է՝ Կովկասյան Հայաստանի սահմաններից ներս: Այժմ այն առաջ չի բերում այլևս նույնիսկ նախկին սաստիկ տարաձայնությունները: Այս գրառումների միջոցով ես կցանկանայի մի քանի ստվերագծեր ավելացնել այդ ծանրության կենտրոնի տեղափոխման պատմությանը: Բայց արդյո՞ք կա անհրաժեշտություն հավաստիացմանն այն բանի, որ իմ, ինչպես նաև իմ քաղաքական բարեկամների համար, 1917թ. առկա է մնում միմիայն մեկ՝ միացյալ և անկախ Հայաստանի հարցը: Եվ 1918թ. մայիսի 28-ի օրը, երբ մենք հռչակեցինք Հայաստանի անկախությունը, և 1919թ. մայիսի 28-ը, երբ մենք հռչակեցինք միացյալ ու անկախ Հայաստանը, իմ համար հանդիսացել են և կմնան այն աներեր քաղաքական անկյունաքարերը, որոնք չեն կարող տատանվել անցողիկ՝ թեև փոթորկի նման հզոր անցքերով: Այդ երկու տարեթվերը լինելու են ուղեցույց աստղերը իմ սույն գրվածքի:

Փարիզ, 27 հունվարի, 1925 թ., Ալ. Խատիսով

ԳԼՈՒԽ I

Հայերը Կովկասում մինչև 1914 թվականը

1900 թ. հունվարին որպես երիտասարդ բժիշկ ես եկա իմ հարազատ քաղաք Թիֆլիս, որտեղ ծնվել էին իմ պապը, հայրս ու մայրս: Իմ պապը՝ Ղամբարյանը, Թիֆլիսի նահանգային դատախազն էր, հայրս՝ պետական ունեցվածքների կառավարիչ⁷, մայրս՝ հայ գրող⁸, քեռիս՝ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր էր, մյուս քեռիս՝ Վարշավայում պետական բանկի կառավարիչ, իսկ եղբայրս ինժեներ էր Բաքվում: Թվում է, թե նման կապերով ընտանիքը պետք է որ հեռու լիներ Հայաստանի հոգսերից ու կարիքներից: Բայց իրականում ամեն ինչ այլ կերպ էր: Հոգեպես մենք բոլորս էլ կապված էինք հայկական գաղափարին: Հայրս՝ խոշոր ռուսական պետական պաշտոնյա, Անանյան հայկական դպրոցի հոգաբարձուն էր, մայրս բազմաթիվ վեպեր էր գրել, որոնք հրատարակվել էին հայերեն, եղբայրս՝ “Դաշնակցություն” կուսակցության առաջին գործիչներից էր, “Հայ Մշակութային (բնագրով՝ կուլտուրական –Վ.Հ.) Միութե-

⁷ **Հովհաննես Ստեփանի Խատիսյան** (1840-1894), ազնվական, իսկական պետական խորհրդական (действительный статский советник), ինչի համարժեք էր զինվորական աստիճանակարգի գեներալ-մայորի կոչմանը:

⁸ **Սարիամ Ստեփանի Խատիսյան (Ղամբարյան)** (1845 – 1914): **Հովհաննես և Սարիամ Խատիսյանները** ունեցել են չորս որդի՝ **Կոնստանտին** (1864 – 1913), **Ալեքսանդր** (1874 – 1945), **Լևոն** (1878 – 1921) և **Գևորգ** (1879 – 1935) **Խատիսյանները** և մեկ դուստր՝ **Նունե Խատիսյան** (ամուսնությամբ՝ **Ալիբեկյան**)

(1869 – 1943): Բոլորն էլ ստացել են առաջնակարգ բարձրագույն կրթություն, եղել են հասարակության մեջ հայտնի և մեծ կշիռ ունեցող անձինք: Պատահական չէ, որ **Խատիսյան** եղբայրներից չորսն էլ գտնվել են ցարական «օխրանկայի» ուշադրության դաշտում; տե՛ս, օրինակ, ԳԱՐՓ, ֆ.63, օպ.14, Կ.431, О подлежащем негласному надзору полиции студенте Харьковского университета Александре Иванове Хатисове; ԳԱՐՓ, ֆ. 102, օպ.228, Կ.329, О дворянине Александре Иванове Хатисове; ԳԱՐՓ, ֆ.63, օպ.16, Կ. 1350, О студенте Московского Университета Георгие Иванове Хатисове; ԳԱՐՓ, ֆ.63, օպ.19, Կ.1960, О студенте Московского университета Леоне Иванове Хатисове. Ի դեպ, Սարիամ Խատիսյանի եղբայրը՝ իրավագիտության պրոֆեսոր **Յուրի Ղամբարյանը** (1850-1926) Երևանի Պետական Համալսարանի առաջին ռեկտորն է (1919թ. հուլիս-1920թ. դեկտեմբեր), իսկ 1922թ.՝ Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտորը:

յան” հիմնադիրը⁹, ով հայության ապագան տեսնում էր Էրիվանի նահանգում: Բայց մենք բոլորս ծնվել էինք Վրաստանի մայրաքաղաքում՝ Թիֆլիսում և սովորել էինք ռուսական դպրոցներում: Մեր ընտանիքի օրինակը բավականին հատկանշական է այն առումով, որ նա մեկն է հազարավոր օրինակներից, որոնք ցույց են տալիս, որ ստեղծված պատմական պայմաններում Թիֆլիսը՝ Վրաստանի մայրաքաղաքը և Բաքուն՝ Ադրբեջանի մայրաքաղաքը, իրենց մեջ էին ներառել հզոր հայկական մտավորականությունը, բուրժուազիան, հայկական մամուլը, թատրոնը, ինչպես նաև՝ զարգացած և ակտիվ հայ պրոլետարիատը: Իսկ պատմական Հայաստանը՝ Էրիվանի նահանգը, Ելիզավետպոլի¹⁰ նահանգի մի մասը՝ Ջանգեզուրով ու Ղարաբաղով և Կարսի մարզը, զրկվում էին նյութապես ուժեղ և հոգեբանորեն ու մտավոր հզոր ուժերից: Ծնունդով այդ շրջանների երիտասարդությունը, ստանալով Ռուսաստանում բարձրագույն կրթություն, վերադառնում էր Բաքու, Թիֆլիս, բայց ոչ երբեք՝ Էրիվան, կամ Կարս: Ահա թե ինչու հայերի բոլոր տեսակի մշակութային նախաձեռնությունները կենտրոնանում էին Թիֆլիսում, մասամբ էլ՝ Բաքվում: Նյութապես ուժեղ լինելով կենտրոններում՝ Բաքու, Թիֆլիս, Բաթում, - Կովկասում բոլոր խոշոր արտադրությունների և արդյունագործության՝ մետաքսամանվածքային, բամբակի, ձկան, մսարտադրության, գինու և պտուղ-բանջարեղենի, բանկերի ու թատրոնների սեփականատեր հայ բուրժուազիան իրեն հարազատ քաղաքներ էր համարում ոչ թե Էրիվանն ու Ալեքսանդրապոլը, այլ Թիֆլիսն ու Բաքուն: Լավագույն հայկական թատերախումբը ներկայացումներ էր տալիս Թիֆլիսում և Բաքվում, հայկական թերթերը, որոնց տպաքանակը 10000 ընթերցողի համար էր, հրատարակվում էին Թիֆլիսում: Հայկական քաղաքական կուսակցությունների ղեկավար կոմիտեները տեղակայված էին Թիֆլիսում: Իմ կյանքի 15 տարիների ընթացքում՝ 1900-1914թթ., ես ընդամենը երկու անգամ, այն էլ երկու օրով, այցելել եմ Էրիվան: Առաջին անգամ Կաթողիկոսի ընտրության կապակցությամբ՝ որպես պատվիրակ և երկրորդ ան-

⁹ Խոսքը Խատիսյան եղբայրներից **Կոնստանտին Խատիսյանի** մասին է:

¹⁰ Հայկական **Գանձակն** է: Խորհրդային տարիներին՝ Կիրովաբադ, այժմ՝ Գյանջա (Ադրբեջանի կազմում):

գամ՝ Կաթողիկոսի թաղման կապակցությամբ՝ որպես Թիֆլիսի քաղաքագլուխ: Ինչ-որ մեկին Էրիվանի նահանգում՝ «խուլ» վայրերում աշխատանքի նշանակելը չինովնիկական միջավայրում համարվում էր այդ անձի նկատմամբ որոշակի պատժամիջոցի կիրառում, իսկ Թիֆլիս տեղափոխելը՝ խրախուսանք և նույնիսկ պարգևատրում: Եվ դա, որպես կանոն, ընդունված էր ոչ միայն բուրժուական և չինովնիկական միջավայրերում, այլ գաղափարական անձինք նույնպես ձգտում էին դեպի Բաքու և Թիֆլիս: Աշխույժ դարաբաղու սովորական վերելքն ընթանում էր հետևյալ ուղիով. գնալ Բաքու, այնտեղ հիմնել մի «գործ» և զարգացնել այն, տեղափոխվել Թիֆլիս, տեղավորվել այնտեղ, գործը փոխանցել կառավարչին, իսկ իր հայրենիքի մասին հիշել միայն առավել հանդիսավոր օրերին: Այդպիսի հոգեբանության առկայության հետևանքն էր, որ հայերի պատկերացումներում ամբողջ «Կովկասը» հանդիսանում էր իրենց հայրենիքը: Իսկ պատկերացումներ Հայաստանի մասին՝ որպես մեկ միասնական երկրի, որպես մեկ քաղաքական կենտրոնի, գոյություն չունեին հայ ժողովրդի և ոչ մի խմբավորման ներսում: Քաղաքական առումով, թվում էր, թե հայերը կապված էին Ռուսաստանի հետ անխզելի կապերով և իրենց բոլոր քաղաքական մտքերն ու երազանքները կապում էին բուն Ռուսաստանի ներսում հնարավոր բարեփոխումների հետ: Ովքեր ծանոթ են գլխավոր կովկասյան կուսակցությունների ծրագրերին, լավատեղյակ են, որ ամենահզոր հայկական կուսակցությունը՝ «Դաշնակցությունը» պահանջում էր շվեյցարական դաշնության օրինակով դաշնային Ռուսաստանի սահմաններում դաշնություն հաստատել նաև Կովկասում: Այդ պահանջը համահունչ էր հայ բնակչության ամբողջ Կովկասով մեկ բնակեցվածությանը և հայ բնակչության կովկասյան հոգեբանության հետ:

Վրացիները իրենց ամենաուժեղ՝ «մենշնիկյան սոցիալ-դեմոկրատ» կուսակցության միջոցով պահանջում էին ամբողջապես միաձուլվել Ռուսաստանին: Իսկ ադրբեջանցիների մոտ բացակայում էին որևէ բաց քաղաքական իդեալները: Ահա այսպիսի քաղաքական ֆոնին էր զարգանում հայ ազգային կյանքը Կովկասում: Հայկական կյանքի այդ շրջանի գլխավոր տպավորություններն էին Հայկական Եկեղեցու ունեցվածքի

բռնագրավումը Կովկասի փոխարքա իշխան Գոլիցինի օրոք՝ 1902-1903թթ., չինովնիկության ահաբեկումը և Եկեղեցու ունեցվածքի վերադարձները, ռուսական վարչակարգի մուօ ուժերի կողմից հայ-թաթարական կոտորածների հրահրումը և ինքնապաշտպանության փրկարար դերը, դատավարությունը “Դաշնակցություն” կուսակցության նկատմամբ և ռուսահայերի ու թրքահայերի միջև առկա գրեթե լիակատար օտարացումը: Սրանք էին այն գլխավոր թեմաներն ու հարցերը, որոնք զբաղեցնում էին հայության միտքն ու կարողությունը ներքին կյանքում: Կարևորագույն հարց էր հանդիսանում թրքահայերին վերաբերող Թուրքիայում սպառնալիք բարեփոխումները: Այդ բարեփոխումներով հետաքրքրվում էին, սակայն ռուսահայերին մտահոգող հարցերի և այդ բարեփոխումների իրականացման միջև բացակայում էր նույնիսկ ամենաանշան կապը. ազգային այդ երկու տարբեր առվակները հոսում էին, չմիախառնվելով միմյանց:

Այդ տարիներին ես իմ ծառայությունն էի անցկացնում Թիֆլիսի քաղաքապետարանում: Կովկասում այդ ժամանակ քաղաքական իդեալների արտահայտման համար որևէ հարթակ գոյություն չունեց: Ինչ-ինչ մտքեր արտահայտվում էին ընդհատակում գործող քաղաքական կուսակցությունների կողմից, նրանց թուուցիկների միջոցով: Լեզալ գործող, նույնիսկ ամենաչափավոր կուսակցություններ, ասպարեզում իսպառ բացակայում էին, մինչև որոտաց 1905թ. առաջին ռուսական հեղափոխությունը: Այդ օրերին, առաջին անգամ, Կառավարության հատուկ հրավեր-թույլտվության հիման վրա, Ռուսաստանի բնակչության բոլոր խմբերին թույլատրվում էր գումարել համագումարներ, դրանցում մշակել ու ձևակերպել իրենց “ցանկությունները” և հղել դրանք Կառավարությանը՝ “ի գիտություն”: Եվ ահա, 1906թ. Թիֆլիսի քաղաքապետարանի շենքում գումարվեց “հայերի ներկայացուցիչների” համագումարը, որտեղ պետք է մշակվեին և ձևակերպվեին “հայ ժողովրդի ցանկությունները”: Բնականաբար, մասնակիցների ընտրությունն իրականացվել էր առանց որևիցե կանոնակարգման: Այսօր հետադարձ հայացք գցելով այն օրերին, ես հիշում եմ այդ համագումարը, որին հետևեցին երկրորդը, երրորդը, չորրորդը: 15 տարիների ընթացքում ես մասնակցել եմ բոլոր այդ

համագումարներին և կարող եմ հավաստել, որ դրանցում լիովին դրսևորվեց հայկական “ցանկությունների” միանգամայն շատ համեստ էությունը: Տարբեր առաջարկությունների քննարկումներից հետո ինձ և Միք. Պապաջանյանին¹¹ հանձնարարվեց մշակել և խմբագրել “ հայ ժողովրդի ցանկությունները”: Ես հիշում եմ /”ցանկությունների” տրցակը իմ ձեռքի տակ է/, թե ինչպես համագումարն ընտրեց “սահմանադիր” ժողովի պահանջները: Մենք, ի վերջո, կանգ առանք “ներկայացուցչական” ժողով սահմանման վրա: Այդ “ցանկությունները” ներկայացնելը ընդհանուր պետական հրահանգ էր: Մեր հարևան վրացիները իրենց “ցանկություններում” պահանջում էին համառուսաստանյան սահմանադիր ժողով: Զուտ հայկական պահանջներից նշեմ հետևյալ “ցանկությունները”. հայերն իրենց պարտադիր զինվորական ծառայությունն անցկացնեն “Անդրկովկասի սահմաններում”, լեզվի ազատություն, կովկասյան չինովնիկության շարքերի անկաշկանդ համալրումը հայազգի անձերով, եկեղեցական դպրոցներում դասավանդման ազատություն, լիիրավ ազատություն մշակութային նախաձեռնումների ոլորտում /թատրոն, մամուլ, հրատարակչական գործ/:

¹¹ **Պապաջանյան Միքայել Հովհաննեսի** (1868թ., Էրիվան, Ռուսական կայսրություն - 1929թ, Թիֆլիս, ԽՍՀՄ): Հայ հասարակական-քաղաքական գործիչ, դիվանագետ: Մերվում է Էրիվանի ազնվականներից: Ավարտել է Օդեսայում գտնվող Նովոռոսիայի Կայսերական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, երդվյալ հավատարմատար, կադետական կուսակցության անդամ, 1917թ. սեպտեմբերից՝ Հայ ժողովրդական կուսակցության ղեկավարներից մեկը: Ռուսաստանի 4-րդ Պետական դումայի (1912-1917) պատգամավոր, Հայոց ազգային խորհրդի, Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (1917), Անդրկովկասյան կոմիսարիատի (1917), Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի անդամ: 1918թ. հունիսի 4-ին՝ Հ. Քաջազունու և Ա. Խատիսյանի հետ ստորագրել է Բաթումի հայ-թուրքական խաղաղության պայմանագիրը, նույն թվի հունիս-սեպտեմբեր ամիսներին մասնակցել է Կոստանդնուպոլսում ընթացած հայ-թուրքական բանակցություններին: Եղել է Հայ օգնության կոմիտեի Փարիզի մասնաճյուղի նախագահ, Հայոց Ազգային պատվիրակության (1919-1922) անդամ: Հայաստանի խորհրդայնացումից հետո մնացել է Ֆրանսիայում, եղել է այդ երկրում գործող ռուս փաստաբանների միության անդամ: 1929թ. իր կուսակցության կողմից գործուղվել է ԽՍՀՄ՝ խորհրդային իշխանության հետ հարաբերություններ կարգավորելու և հաստատելու համար ու այդ ուղևորության ընթացքում էլ՝ ԽՍՀՄ տարածքում մահացել է:

Մյուս պահանջները նույն բնույթն էին կրում: Այսպիսով, տրամադրությունները հնարավոր է բնութագրել հետևյալ պնդման տեսքով. համապետական-քաղաքական պահանջները համահունչ էին համառուսաստանյան կոմիտեների առաջ քաշած պահանջներին, իսկ ազգային ու լոբբիայի պահանջները՝ խղճի ազատության, մշակույթի և լեզվի շրջանակներում: Ես չեմ հիշում գեթ մեկ կետ, որը վերաբերեր հատուկ հայկական քաղաքական բնույթի պահանջներին: Կրկնեմ. քաղաքական իդեալները մտովի գտնվում էին Թուրքիայի հայկական վիլայեթների սահմաններում: Դեպի այդ կողմ էին գնում կուսակցական գործիչները, զինված խմբերը, ինքնապաշտպանության կազմակերպման համար նախատեսված գումարները, առանձին հերոսները: Իսկ արտասահմանում էլ այդ ուղղությամբ ընթանում էր համապատասխան քարոզչությունը:

Հայերի ցանկությունները բարձրաձայնողները համագումարներում տարբեր հաստատությունների “ներկայացուցիչներն” էին. Տարբեր հասարակական միավորումներից, մամուլից, դպրոցական խնամատարություններից, և նման այլ կազմակերպություններից: Դա էլ առիթ տվեց պոետ Հովհաննես Թումանյանին մի հիանալի կատակ-նոտանավոր գրել առ այն, որ համագումարին եկել էին ներկայացուցիչներ “ եկեղեցուց ու բանկերից, եկեղեցիների բակերից ու իրենց տներից. *Եկուն վանքից, Եկուն Բանկից; Վանքի Բակից 2 իրանց տներից*”. Վերջին բառերը չափազանց բնութագրական են արթնացող տրամադրությունների բնութագրման համար: Օրինակ՝ երբ համագումար ներկայացավ “Մշակի” աշխատակից Արշ. Մխիթարյանը, նա վկայական ներկայացրեց, որ ինքն ընտրված է Ավչալա փոքր գյուղից: Տաղանդավոր դաշնակցական հրապարակախոս Գար. Խաժակը¹² (հետագայում սպանվեց Թուրքիայում), պահան-

¹² **Խաժակ (Չաքայյան) Գարեգին Կարապետի** (1867թ., Ալեքսանդրապոլ, Ռուսական կայսրություն - 1915թ., Դիարբեքիր, Թուրքիա), բազմաշնորհ հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ, լրագրող, մանկավարժ, Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության անդամ: Ավարտել է ժննի համալսարանը (1898թ.), զբաղվել է կուսակցական գործունեությամբ, մանկավարժությամբ, թղթակցել հայ մամուլին, եղել խմբագիր: Ցարական ռեժիմի կողմից ենթարկվել է հալածանքների, 1908-ին և հաջորդ տարում երկու անգամ ձերբակալվել է, երկար ամիսներ բանտարկված մնալուց հետո, 1912-ին կարողացել է բանտից

ջեց, որպէսզի իրեն նույնպէս հնարավորություն տան մասնակցել համագումարին: Նախագահությունը նրան բացատրեց, որ դրա համար անհրաժեշտ է ունենալ մանդատ: Խաժակը հարցրեց, իսկ ո՞վ է Միխիթարյանին մանդատ տվել: Նրան պատասխանեցին, որ մանդատը տրվել է Ավչալա գյուղի հայերի կողմից /40-50 մարդուց ոչ ավելի/: Այդժամ Խաժակը եկեղեցու բակում մի մեծ հանրահավաք գումարեց / մոտ 2000 մասնակից/, ստացավ նրանցից իր մանդատը, հաջորդ օրը ներկայացավ համագումար և նրան թուլատրվեց մասնակցել համագումարի նիստերին: Դա Կովկասում հայերի քաղաքական հավաքի առաջին փորձն էր:

Վրացիներն ունեին իրենց համագումարը, բայց իրենց մոտ “ժողովրդի” անունից հանդես էր գալիս կազմակերպված ազնվականությունը: Նրանց գլխավոր ազգային պահանջը վրացական եկեղեցու ինքնագլուխ-ավտոկեֆալ լինելն էր: Առավել ուժեղ “ մենշևիկ սոցիալ-դեմոկրատներ” կուսակցությունը և՛ հանրահավաքներին, և՛ մամուլում համառորեն դեմ էին արտահայտվում ինչ որ առանձնակի զուտ վրացական պահանջների վերաբերյալ: Ժողովրդական հանրահավաքները 1905-1906թթ.՝ հեղափոխական այդ առաջին տարում ընթանում էին Թիֆլիսի քաղաքապետարանի շենքում և նրա դահլիճում: Ես ներկա եմ եղել այդ հավաքներին՝ զօր ու զիշեր: Եվ որպէսզի պարզ դառնա, թե ինչպէս էր այն օրերին սկզբնավորվում այն ամենը, ինչը 12 տարի անց արդեն հաղթանակ էր տոնում, ես կհիշեցնեմ երեք բանախոսների. երիտասարդ ուսանող, վրացի բոլշևիկ Շավա Էլիավայի¹³ (այժմ նա Անդրկովկասյան

դուրս գալ և մեկնել Կոստանդնուպոլիս: Խաժակի գործունեության աշխարհագրությունը չափազանց լայն է. Պոլսից մինչ Բաքու, Բալկաններից մինչև Եգիպտոս: Գարեգին Խաժակը գտնում էր, որ հայերի համար, որոնք դեռ չեն լուծել ազգային հարցը, դասակարգային պայքարը դեռևս վաղաժամ է, որ յուրաքանչյուր ազգի բանվոր դասակարգ պետք է հետևի, նախևառաջ, իր ազգային շահերին և դրանից հետո միայն՝ դասակարգային շահերին: Գարեգին Խաժակի դեմ հրապարակային ելույթներ են ունեցել հայ բոլշևիկներ Ստեփան Շահումյանը, Սարգիս Կասյանը և ուրիշներ: Խաժակը սպանվել է թուրքերի ձեռամբ՝ Մեծ Եղեռնի օրերին:

¹³ **Էլիավա Շավա Զուրաբի** (1883թ.,Քութայիսի նահանգ, Ռուսական կայսրություն - 1937թ., Թբիլիսի, ԽՍՀՄ), հայտնի վրացի բոլշևիկ, մասնակցել է Վրաստանի անկախության կործանմանը և Վրաստանում խորհրդային կարգերի հաստատմանը:

Դաշնության պաշտպանության մինիստրն է), հայ սոցիալիստ-մենշևիկ Արամայիս Երզնկյանի¹⁴ (այժմ նա Հայաստանի հողագործության մինիստրն է) և բոցաշունչ դաշնակցական Խաժակի ելույթները: Այս երեք բանախոսները ելույթներ էին ունենում ամեն օր: Ելույթներից զատ, նրանք անդադար խոսում էին տարբեր խմբակներում, մամուլում, մասնավոր գրույցների ժամանակ: Նրանցից ամեն մեկի շուրջ խմբավորվել էին ակտիվ քարոզիչ-պրոպագանդիստներ և ամբոխը նրանց լսում էր: Էլիավան “պրոլետարիատի դիկտատուրա” էր պահանջում՝ Սահմանադիր ժողովի միջոցով: Նրան բոլորը համարում էին ֆանատիկոս, բառամուլ: Բոլորի առջև դեռևս կանգուն ձևով առկա էր միահեծան ցարի կերպարը և բոլորին թվում էր, թե միապետությունը գահին բազմած է անսասանորեն: Նրա ելույթները լսում էին, բայց դրանք ոչ ոքի չէին համոզում: Բայց նրա ելույթները չդադարեցին: Ըստ այդմ էլ, բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե 1917թ. “բոլշևիզմը” հանկարծ երկնքից ընկավ, պետք է մանան, որ նրանց կոչերը Թիֆլիսում՝ Դումայի շենքում, հնչում էին դեռևս 1905թ. և այդ կոչերը հնչեցնում էին հենց նրանք, ովքեր այսօր զավթել են իշխանությունը: Էլիավայի անվան կողքին ես կավելացնեմ Ֆիլ-Մախարաձեի¹⁵, Բուդու Մդիվանու¹⁶, Կամո Պետրոսյանի¹⁷, Մամիա Օ-

Խորհրդային կարգերի օրոք զբաղեցրել է մի շարք բարձրագույն պետական պաշտոններ: Գնդակահարվել է 1937թ. բոլշևիկյան իշխանության որոշմամբ:

¹⁴ **Երզնկյան Արամայիս Հարությունի** (1879թ., Հաղպատ, Թիֆլիսի նահանգ, Ռուսական կայսրություն – 1937թ., Երևան, ԽՍՀՄ), հեղափոխական, խորհրդային կուսակցական և պետական գործիչ, ՌՄԴՊԿ անդամ (1898թ.), հարել է կուսակցության մենշևիկյան թևին: 1916 թվականին ընտրվել է Թիֆլիսի քաղաքային դումայի, 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ բանվորական խորհրդի, ապա՝ Անդրկովկասյան սեյմի անդամ: Անդրկովկասը Խորհրդային Ռուսաստանի կողմից նվաճելուց հետո, պատասխանատու պետական պաշտոններ է վարել Խորհրդային Վրաստանում և ապա՝ Խորհրդային Հայաստանում: 1936 թվականին բոլշևիկյան իշխանության որոշմամբ ձերբակալվում է որպես ձախակողմյան հակահեղափոխական տրոցկիստական կազմակերպության անդամ ու 1937 թվականի օգոստոսին անհայտ պայմաններում մահանում է ՀԽՍՀ Ներքին գործերի ժողկոմիսարիատի բանտախցում:

¹⁵ **Մախարաձե Ֆիլիպ Իսևեկի** (1868 թ., Քութայիսի նահանգ, Ռուսական կայսրություն - 1941թ., Թբիլիսի, ԽՍՀՄ): Հայտնի վրացի բոլշևիկ, խորհրդային պետական գործիչ, ՌՄԴԲԿ անդամ 1903-ից: Սովորել է Վարշավայի անասնաբուժական

րախելաշվիլու¹⁸ անունները: Դրանցից երեքը 1921-1922թթ. զբաղեցրել են Վրաստանի բոլշևիկյան կառավարության նախագահի պաշտոնը:

Այն օրերին ես նրանց ճանաչում էի և լավ գիտեի: Ես շատ կշեղվեմ իմ շարադրանքի հիմնական թեմայից, եթե մանրամասնորեն կանգ առնեմ այդ անձանց մասնակցությամբ թե՛ մտահղացմամբ և թե՛ իր կատարումով արտակարգ հանդուգն այն կողոպուտի նկարագրման վրա, որն առնչվում է նրանց կողմից 250.000 ռուբլի փոստային գումարի առգրավմանը /էքսպրոպրիացիա/: Առավել հետաքրքրական են Կամո Պետրոսյանի արկածները: Վերջինս զարմանալի հմտությամբ կարողացել էր կեղծագործել կոպրոֆագիան (հոգեկան հիվանդություն, որի ժամանակ

ինստիտուտում: 1918-1921 թվականներին ընդհատակյա աշխատանք է կատարել Վրաստանում: 1921 թվականին ընտրվել է Վրաստանի Հեղկոմի նախագահ, 1922 թվականից՝ Վրաստանի Կենտգործկոմի նախագահ, այնուհետև մի շարք բարձր պաշտոններ է զբաղեցրել Խորհուրդների երկրի պետական կառավարման համակարգում:

¹⁶ **Մոխիվանի Պոլիկարպ (Բուդու) Գուրգենի** (1877թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն-1937, Թիֆլիսի, ԽՍՀՄ): Վրացի հայտնի բոլշևիկ, Անդրկովկասի խորհրդայնացման ակտիվ մասնակից, գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի անկախության ոչնչացման, երկրի խորհրդայնացման և վերջինս թուրքա-բոլշևիկյան մասնատման ենթարկելու հարցում: 1918-1921թթ. զբաղեցրել է մի շարք պատասխանատու քաղաքական պաշտոններ Կովկասյան Կարմիր բանակի գորամիավորումներում, 1921-1922թթ.՝ խորհրդայնացված Վրաստանում, իսկ հետագայում՝ նաև ԽՍՀՄ պետական և Կոմկուսի կուսակցական համակարգերում: 1936թ. բոլշևիկյան իշխանության որոշմամբ ձերբակալվել է և 1937թ. հուլիսի 10-ին գնդակահարվել: Նույն՝ 1937 թ. ձերբակալվել և գնդակահարվել են նաև նրա կինը, չորս որդիներն ու դուստրը:

¹⁷ **Պետրոսյան (Տեր-Պետրոսյան) Միսոն (Կամո) Արշակի** (1882թ., Գորի, Ռուսական կայսրություն-1922, Թիֆլիս, ԽՍՀՄ): Հայ բոլշևիկ, պրոֆեսիոնալ հեղափոխական: Կատարել է բազմաթիվ վտանգավոր կուսակցական հանձնարարություններ, իրագործել ահաբեկչական ակտեր: Բազում անգամ ձերբակալվել, բանտարկվել, փախել, նորից բանտարկվել, դատապարտվել մահապատժի, համաներամբ փրկվել և ի վերջո հասել Խորհրդային կարգերին: Չոհվել է Թիֆլիսում՝ ավտովթարից:

¹⁸ **Օրախելաշվիլի Մամիա (Իվան) Դմիտրիի** (18 թ., Քութայիսի նահանգ, Ռուսական կայսրություն- 1937 Թիֆլիսի, ԽՍՀՄ): Հայտնի վրացի բոլշևիկ, Վրաստանի խորհրդայնացման ակտիվ մասնակից: Խորհուրդների օրոք զբաղեցրել է բազմաթիվ բարձր և պատասխանատու պետական ու կուսակցական պաշտոններ: Բոլշևիկյան իշխանության որոշմամբ ձերբակալվել և գնդակահարվել է 1937թ.:

հիվանդն ուտում է իր արտաթորանքները)¹⁹ և այդ միջոցով կարողացել էր հիմարացնել ու մոլորեցնել գերմանական լավագույն մասնագետ պրոֆեսորներին և Թիֆլիսի փորձված բժիշկներին, ու հիվանդանոցից դիմել փախուստի: Դրանից հետո՝ ոչ մեկի կողմից չճանաչված, նա հայտնվեց ինձ մոտ՝ Թիֆլիսի քաղաքապետարանում:

Դաշնակցության հակառակորդ Արամայիս Երզնկյանը հավատում էր ամբողջ Անդրկովկասի պրոլետարիատի միասնությանը, խիստ վնասակար էր համարում ազգային դրոշի ներքո սոցիալիզմ քարոզելը և մենշևիզմի նվիրյալ կողմնակից էր ու համառ քարոզիչ: Նրա գաղափարախոսությունը չհաղթանակեց. Տարիների փորձը ցույց տվեց, որ սոցիալիզմը զարգացավ հենց ազգային դրոշի ներքո: Այսօր նա Հայկական բոլշևիկյան կառավարության կազմում հողագործության մինիստր է (կոմիսար) և պարտավոր է նոր կարմիր դրոշի ներքո պաշտպանել, եթե հետևենք բոլշևիկյան տերմինաբանությանը, հայ բանվորների և գյուղացիների շահերը: Խաժակի, այն է՝ “Դաշնակցության” գաղափարները փայլուն կերպով դիմագրավեցին ռուսական հեղափոխական ժամանակաշրջանի բուռն օրերի ճնշումներին: Այն օրերի, երբ շուրջ բոլորն ամեն ինչ փլուզվում էր և կանգուն էր մնում միայն այն, ինչը կառուցված էր հավերժական գաղափարների ու հաստատուն նախադրյալների հիմքերի վրա: Այդ գաղափարներում արմատավորված էր միացյալ Հայաստանի մասին գաղափարը և աշխատավորության համախմբումը առողջ ազգայնականության և էվոլյուցիոն սոցիալիզմի դրոշի ներքո: Այդ գաղափարները դիմացան բոլոր հարվածներին և իրենց իրականացումը ստացան 1918-1920թթ. միացյալ Հայաստանի ստեղծումով և Հայաստանի Հանրապետությունում կառավարման ժողովրդավարական – հանրապետական ձևի հաստատումով:

¹⁹ Խորհրդային տարիներին գրքերի և կինոնկարների միջոցով ժողովրդին ներկայացվում էր, թե Թիֆլիսի Էրիվանյան հրապարակում դրամ տեղափոխող կառքը պայթեցնելուց և հսկայական քանակով գումար առգրավելուց հետո, երբ Կամոն ձերբակալվել է, իբրև թե նա, դրսևորելով անհավանական կամքի ուժ, քննիչների և բժշկական փորձագետների առջև կեղծագործել է այնպիսի հոգեկան մի հիվանդություն, որի ժամանակ անձը բացարձակ անզգա է ցավի նկատմամբ և այդպիսով կարողացել է խուսափել մահապատժից:

Ես հիշում եմ հայ աշխատավոր զանգվածների անթիվ հանրահավաքներ, որտեղ ելույթ էին ունենում Խաժակը, Թոփչյանը, Համո Պաջինյանը: Հիշում եմ հրապարակային դասախոսությունները արհեստագործական միություններում, որտեղ հիմնական ուղեգիծը ազգային հատկանիշի դրոշի ներքո զանգվածների սոցիալիզմն էր: Միաժամանակ միտք էր ծնվում՝ «Պիրենեյան միությունն»²⁰ իրականացնելու մասին, այսինքն, թուրքահայատակ և ռուսահայատակ հայերը պետք է միախառնվեն և միաձուլվեն, կազմելով մեկ միասնական ազգային-քաղաքական օրգանիզմ: Ահա առանց բռնի սոցիալիզացիայի կիրառման այն երեք՝ կոմունիստական, մենշևիկյան և ազգային-աշխատավորական ուղղությունների ծագումը, որպես այդպիսին: Հարկ է նշել, որ մենշևիկյան ուղղությունը հետագայում վերապրեց պատմության մեջ չտեսած մի էվոլյուցիա, դառնալով 1917թ. Վրաստանի անկախության տեսակետի պաշտպան: Այն անկախության, որի դեմ նախորդող տարիներին պայքարել էին բավականին ջանադաբար:

Ի պաշտոնե, որպես Թիֆլիսի քաղաքագլուխ, ես 10 տարի՝ 1907-1917թթ. եղել եմ ամենօրյա, անընդհատ շփումների մեջ այդ հոսանքների ներկայացուցիչների հետ: Թիֆլիսի քաղաքագլուխի դերը չափազանց բացառիկ էր. դա միակ անձնավորությունն էր, ով մշտական և ազատ մուտք ուներ երկրի իշխանությունների մոտ՝ Կովկասի փոխարքա, Ռուսաստանի մինիստրներ: Եվ միաժամանակ, Թիֆլիսի քաղաքագլուխն այն անձն էր, ով տեղյակ էր Կովկասում տիրող հեղափոխական տրամադրություններին և նույնիսկ կովկասյան հեղափոխական կուսակցությունների գործունեությանը: Ինձանից առաջ Թիֆլիսի քաղաքագլուխն էր վրացի իշխան Չերկեզովը, և կարող ենք ասել, որ հենց ինքն է սկսել առաջինը հանդես գալ որպես միջնորդ իշխանությունների և կուսակցությունների միջև: Ես այդ գիծը շարունակեցի անընդհատ տաս տարիների ընթացքում՝ մինչև երկրորդ ռուսական հեղափոխությունը և Ռուսաստանից

²⁰ Հուլիսի հեղինակը, հավանաբար, նկատի ունի 1580-1640 թթ. Պիրենեյան թերակղզում գործող «Պիրենեյան միությունը (թագերի ունիան)», երբ Իսպանիան և Պորտուգալիան, ամեն մեկը պահպանելով իր որոշակի ինքնուրույնությունը, միասին գտնվում էին նույն՝ Իսպանական Հաբսբուրգների թագի հովանու ներքո:

Կովկասի պոկվելը: Այդ ժամանակահատվածը չափազանց հետաքրքրական է: Նա վկայում է, որ հենց այդ տարիներին (1907-1917 թթ.) “Դաշնակցություն” կուսակցությունը և “Վրացական մենշևիկյան սոցիալ-դեմոկրատներ” կուսակցությունը ամբողջապես տիրել էին իրենց ժողովուրդների գաղափարները: Իշխանությունները դա գիտեին: Այդ մասին գիտեր նաև բուրժուազիան: Գիտեր նաև բնակչությունը: Հենց դրա շնորհիվ էր, որ 1917թ., երբ իշխանությունը ընկավ Ռուսական միապետության ձեռքից, Կովկասում այն միանգամից անցավ այդ կուսակցությունների ձեռքը: Ես չեմ կարող մանրամասնորեն կանգ առնել կովկասյան քաղաքական կյանքի այդ տասնամյակի վրա, սակայն կաշխատեմ բերել մի քանի փաստեր, որոնք կարևոր են իմ թեմայի լուսաբանման և, առհասարակ, խիստ բնութագրական են այն ժամանակվա համար:

Ընդհանուր առմամբ, ռուսական պետական իշխանությունը ձգտում էր ձգվել կովկասյան ժողովուրդների զարգացումը: Նա արհեստականորեն արգելակում էր այդ զարգացումը բոլոր միջոցներով: Կովկասյան մտավորականության պաշտոնական ցանկությունները երեքն էին. զեմստվոների²¹ հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություն Կովկասում, երդվյալ ատենակալների դատարան: Այդ պահանջները տասնյակ անգամներ առաջ են բերել Կովկասյան քաղաքների դումաները, Թիֆլիսի և Քութայիսի ազնվականների ժողովները, մամուլը, գիտական ընկերությունները, բոլոր համագումարները: Ես անձամբ, որպես քաղաքագլուխ, տասնյակ անգամներ մի շարք հիմնավորումներով ներկայացրել եմ այդ ցանկությունները Ռուսաստանի մինիստրներին, ինչպես նաև 1914թ. Թիֆլիս ժամանած Ռուսաստանի միապետ Նիկոլայ II-ի առաջ արտասանած իմ ճառում: Ռուսաստանյան մինիստրները ու Ռուսաստանի պետական Դուման պարզապես մերժում էին այդ համեստ և տարրական պահանջները: Մինչդեռ հայերը այդ պահանջների իրականացման մեջ տեսնում էին իրենց զարգացման երաշխիքները: Օրինակ՝ զեմստվոների ստեղծումը տալիս էր գյուղատնտեսության զարգացման հեռանկարներ Էրիվանի նահանգի համար, որտեղ կենտրոնաց-

²¹ **Ձեմստվոն** ցարական Ռուսաստանում հասկացվում էր որպես խիստ սահմանափակ հնարավորություններով տեղական ինքնակառավարում:

ված էր հայ գյուղացիության մոտ 600.000-ը: Դա, իր հերթին, աշխատատեղեր կատեղծեր այն հայ բժիշկների, ինժեներների համար, որոնց չէին վերցնում պետական ծառայության: Բարձրագույն ուսումնական հաստատությունն անհրաժեշտ էր հայերին, որպեսզի ունենան մատչելի բարձրագույն դպրոց, քանզի հայ ուսանող երիտասարդության շատ մեծ տոկոսը սովից ու ռուսական ցրտերից Ռուսաստանում հիվանդանում էր թոքախտով: Երդվյալ ատենակալների դատարանը համապատասխանում էր ժողովրդական լեզվին, հոգեբանությանը և խղճի պահանջներին: Գործող դատարանների օրոք ժողովուրդը չէր հասկանում ոչ իր դատավորներին, ոչ էլ դատապաշտպաններին: Որպես Թիֆլիսի քաղաքագլուխ էս Կովկասում բարձրագույն դատարանի անդամ էի և հիշում եմ բազում օրինակներ, երբ այդ դժբախտ գյուղացիները տարիներով բանտ էին նստում միանգամայն թյուրիմացաբար՝ ցուցմունքների սխալ թարգմանության պատճառով: Երբ էս գնում էի Պետերբուրգ և ներկայացնում այդ պահանջները, նկարագրեմ, թե ինչ պատասխան ստացա, օրինակ՝ Կովկասում բարձրագույն կրթական հաստատության բացման վերաբերյալ: Մինիստր Կասսոն²² իր մոտ հրավիրեց մինիստրների տեղակալների խորհրդակցություն: Ես մասնակցում էի այդ նիստին: Կովկասում բարձրագույն ուսումնական հաստատություն բացելու հարցի վերաբերյալ ներքին գործերի մինիստրի կարծիքը ներկայացնում էր Ոստիկանության դեպարտամենտի տնօրեն Ջուլը: Նա ասաց հետևյալը. Ներքին գործերի մինիստրը դեմ է Կովկասում բարձրագույն կրթական հաստատության բացմանը, քանի որ կովկասյան երիտասարդությունը զանգվածաբար հեղափոխականներ են: Ռուսաստանի տարբեր քաղաքներում անկարգությունների մասնակից կովկասցիների տոկոսը չափազանց մեծ է: Իսկ եթե համալսարան բացվի Թիֆլիսում, ապա բոլոր հեղափոխականները կհավաքվեն այնտեղ և դա կլինի հավերժական մի հրաբուխ: Մինիստր Կասսոն հարցը դրեց քվեարկության և 7 դեմ ձայներով 2 կողմի դիմաց հարցը ձախողվեց: Դա էլ նշենք, որ Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովը կողմ էր այդ հաստատության բացմանը և, ի վերջո, շնորհիվ ցար

²² **Կասսոն Լև Արիստիդովիչ** (1865 -1914): Ռուսական կայսրության ժողովրդական լուսավորության մինիստր 1910-1914թթ.:

Նիկոլայ II-ի մոտ ունեցած իր անձնական ազդեցությամբ, հասավ նրան, որ իրավունք տրվեց Կովկասում բացել պոլիտեխնիկում: Այն պայմանով, որ կովկասցիներն իրենց միջոցներով կիրականացնեն հաստատության կառուցումը և նրա պահպանումն ու գործունեությունը: Թիֆլիսը տրամադրեց հողը և մոտ 1 միլիոն ռուբլի գումար, Բաքուն էլ՝ 500.000 ռուբլի, ինչի համար ես անձամբ գնացի Բաքու: Սակայն մենք հասցրել էինք ընդամենը հիմքը զցել, երբ բռնկվեց պատերազմը:

Ձեմաստվոների հարցի վերաբերյալ ես զեկուցել եմ անձամբ Մինիստրների Խորհրդի նախագահ Ստոլիպինին: Նա ինձ ասաց. ”Ես դեմ եմ: Եվ դեմ եմ լինելու, քանզի զեմաստվոների հաստատությունների միջոցով դուք ձեր համար կստեղծեք ազգային ինքնավարություն²³: Մեզ բավական է զեմաստվոների հեղափոխական գործիչները Ռուսաստանի կենտրոնում”: Ես գնացի Ստոլիպինի մոտից և աջակցության համար դիմեցի Պետական Դումայի նախագահ Ալեքսեյ Գուչկովին: Նա ինձ ասաց հետևյալը. “Մենք չենք կարող օժանդակել այդ ամենին, ինչը որ դուք ցանկանում եք: Մեզ անհրաժեշտ է Կովկասում ուժեղացնել ռուսական տարրը: Մենք պետք է զեմաստվոներին վերաբերող նախագծում հաստատենք մի կետ, ըստ որի զեմաստվոյի հաստատության բոլոր ծառայողների ½ պետք է լինեն ռուսներ: Դուք դա չեք ընդունի: Իսկ առանց այդ կետի էլ մենք չենք կարող: Այնպես որ, ավելի լավ կլինի ձեզ ոչինչ էլ չտալ՝ ոչ մի զեմաստվոներ”: Եվ չտվեցին:

Երդվյալների դատարանի հարցի վերաբերյալ արդարադատության մինիստր Շչեգլովիտովը (հետագայում բոլշևիկները սպանեցին նրան) ինձ հետևյալ պատասխանը տվեց. “Ձեզ չի կարելի տալ ժողովր-

²³ Հետաքրքրական ենք համարում այստեղ բերել Ռուսաստանի այդ օրվա վարչապետ (1906-1911թթ.) **Պ.Ա. Ստոլիպինի** (1862-1911) ընդհանրական կարծիքը հայ ազգի մասին. <<Այդ սեմիտական ցեղը (?! -Վ.Հ.) մշտապես իր մեջ քաղաքական անարխիայի սաղմեր է կրել: Կործանելով սեփական պետականությունը, այդ ցեղերը, ցրված լինելով աշխարհի երեսին, ճակատագրորեն հիվանդածին մանրեի դեր են տանում իրենց ապաստան տված ամեն մի առողջ ցեղի մարմնի վրա>>: Տե՛ս, Дякин В.С., Национальный вопрос во внутренней политике царизма (XIX – начало XX в.в.), Санкт-Петербург, изд-во “ ЛИСС” , 1998, с. 745.

դական դատավորներ, քանզի հայ երդվյալ ատենակալը կարդարացնի հային, թաթարը՝ թաթարին: Ձեզ անհրաժեշտ է ռուսական հիմնարար դատարան”: Եվ մեզ մերժեցին: Ահա թե ինչու հայ գյուղացին՝ զրկված քաղաքական և տնտեսական զարգացման հնարավորություններից, այդքան հետ է մնացել: Բայց ոչ թե ռուս գյուղացուց, այլ՝ եվրոպացի գյուղացուց: Մինչդեռ տեղական բարձրագույն իշխանությունը՝ ի դեմս Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովի, հասկանում էր, որ ժողովրդին անհրաժեշտ է տալ իր պահանջների բավարարում: Նա վերին աստիճանի խելացի, նուրբ և խորամանկ պետական գործիչ էր: Ես նրա հետ հանդիպել եմ հարյուրավոր անգամներ, զրուցել եմ երկար ժամերով և հարկ եմ համարում իմ գրառումներում նրա բնութագրմանը հատկացնել անհրաժեշտ մի հատված, քանզի նա մեծ ազդեցություն ուներ Կովկասի հայ բնակչության հոգեբանության վրա:

Երբ կոմս Վորոնցով-Դաշկովը հասնում էր բնակչության ինչ-ինչ պահանջների բավարարմանը, ապա նա դրան հասնում էր զուտ ցարի մոտ ունեցած իր անձնական ազդեցության շնորհիվ: Ստոլիպինը կոմսի հակառակորդն էր՝ թե՛ անձնական, թե՛ քաղաքական և քաջատեղյակ էր նաև արքունիքում վերջինիս ունեցած ազդեցության մասին: Կոմս Վորոնցովն ինձ մի քանի անգամ ասել է. “Իմ կողմից ես տեսնում եմ մեկ մատուցած ծառայություն, որ կարողացել եմ մատուցել Կովկասի ժողովուրդներին. ես նրանց չեմ տվել որևիցե դրական բան, բայց պաշտպանել եմ նրանց շատ ու շատ բացասական բաներից: Ես ձգտել եմ արդարամիտ լինել Կովկասի ժողովուրդների և Ռուսաստանից եկող բացասական արձագանքների միջև”:

Երբ Ստոլիպինը տեսավ, որ հայերը և վրացիները Կովկասում կազմակերպել են իրենց կուսակցությունները՝ “Դաշնակցությունն” ու մենշևիկյանը և միավորվում են նրանց շուրջ, նա որոշեց արմատախիլ անել այդ կուսակցությունները: Հայտնի հոգեխանգարված-կեղծարար քննիչ Լիժինի ձեռամբ հազարավոր հայեր կալանավորվեցին, տարիներով պահվեցին բանտերում, հարյուրներով դատվեցին, իսկ մասամբ էլ դատապարտվեցին՝ մասամբ պատիժը կրելու Էրիվանի նահանգում, մասամբ էլ՝ տաժանակրության Ռուսաստանի խորքերը: Դատավարությո-

յունը արհեստականորեն էր կազմակերպված հենց Կառավարության կողմից²⁴: Կոմս Վորոնցովը, ում ես քանիցս դիմել էի այս կամ այն կալանավորի վիճակը թեթևացնելու խնդրանքով, Կառավարությանը նամակ էր հղել, որտեղ նշում էր, որ այդ դատավարությունն ինքը համարում է սխալ: Նա ինձ ցույց է տվել ցարին հղած իր գեկուցագիրը, որտեղ գրված էր.՝ “Դաշնակցությունը” մեծ ուժ է հայ ժողովրդի մեջ, սակայն այդ կուսակցությունն, իմ կարծիքով, մեր պետականությանը դեմ ուժ չէ, նա ոգեշնչված է թուրքահայերի ազատագրման գաղափարով, ինչն ամեննին չի հակասում մեր շահերին: Իսկ հայ ժողովուրդը, որը ծնունդ է տվել այդ կուսակցությանը, սիրում է երեք բան. Եկեղեցի, դպրոց և նյութական բարիքներ ու նման հակվածության պարագայում նա չի կարող լինել Ռուսաստանի համար վտանգ ներկայացնող հակապետական տարր: Ինչպես և իր ամենաուժեղ՝ “Դաշնակցություն” կուսակցությունը”: 1908թ. արտահայտած այդ միտքը կոմսը կրկնեց նաև 1914թ.՝ հայկական կամավորական ջոկատների կազմակերպման կապակցությամբ:

Բայցևայնպես, դատավարությունն ընթանում էր, դառնալով համառուսաստանյան իրադարձություն: Ես, որպես վկա, մեկնեցի Պետերբուրգ և Սենատում²⁵ Սենատի անդամների և ամբաստանյալների դեմը կանգնած երեք ժամանոց ելույթով ապացուցում էի, որ “Դաշնակցություն” կուսակցությունը 1905-1906-1907թթ. իրականացրել է ընդամենը հայ բնակչության պաշտպանությունը թաթարական բանդաներից, որոնց կազմակերպել և ուղղորդել էր ռուսական վարչակարգի միջի տականքը: Համենայնդեպս, կուսակցությանը հասցվեց շատ ուժեղ հարված: Բայց նա չկոտրվեց: Ընդամենը կրկին անցավ ընդհատակ և այնտեղ ավելի ամրացավ:

Վրացիների՝ սոցիալ-դեմոկրատների դեմ, իշխանությունը պայքարում էր անվերջանալի դատավարությունների, արտաքսումների և ձերբակալությունների միջոցով: Հարյուրներով կարելի է հաշվել այն դիմում-

²⁴ Այդ դատավարությանն առնչվող մանրամասներին ու վավերագրերին ծանոթանալու համար տե՛ս, օրինակ, **Ա.Ա. Հարությունյան**, ՀՅ Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները. Վավերագրեր, ՎԷՄ, 1 (126), էջ 2-209, 2009 թ.:

²⁵ Այդօրվա Ռուսաստանի Գերագույն դատարանը:

ները, որոնք ես հղել եմ փոխարքային, նահանգապետին, ժանդարմերիայի վարչությանը, որպեսզի ինչ-որ չափով թեթևացվի ձերբակալվածների, աքտորվողների, տարբեր պատժաչափերի՝ ընդհուպ մինչև մահապատժի, դատապարտվածների վիճակը: Որպեսզի պարզ դառնա, թե որչափ էին տարբերվում միմյանցից ժողովրդի և իշխանությունների աշխարհընկալումները, ներկայացնեմ հիշողությանս մեջ մեխված երկու հիշարժան փաստ: Հայտնի վրացի հեղափոխական Իսիդոր Ռամիշվիլին գտնվում էր աքտորավայրում: Մահանում էր նրա դուստրը: Ռամիշվիլին ինձ խնդրել էր, որ ես փոխարքայից թույլտվության կորզեմ, որպեսզի աքտորյալը երեք օրով գա աղջկան տեսակցելու: Ընդ որում, նա խոսք էր տալիս, որ այդ երեք օրերի ընթացքում իր կողմից որևիցե հակակառավարական քարոզչություն չի իրականացվելու: Փոխարքան ինձ պատասխանեց. “ Ես թույլ եմ տալիս: Սակայն չեմ հավատում, որ նա կվերադառնա իր աքտորավայրը: Չեմ հավատում ոչ նրա համար, որ չեմ վստահում իրեն և իր տված խոստմանը, այլ նրա համար, որ հեղափոխականը հիշեցնում է մանրէ-բացիլի: Ինքը իր էությամբ է պարտավոր խմորումներ առաջ բերել, ուստիև, որպես բացիլ չի կարող խոսք տալ, որ խմորում չի իրականացնի: Այնպես էլ հեղափոխականի կամքից դուրս է խմորումներ առաջ բերել, թե չբերելը”:

Այնպես որ, իր հետապնդումների մեջ իշխանությունն անողոք էր: Կոմս Վորոնցովն ընդամենը մեղմացնում էր մարդկանց բաժին ընկած տառապանքները, դրանով իսկ համբավ վաստակելով բնակչության շրջանում: Բայց ժանդարմները անողոք հետապնդում էին թե՛ հայերին, թե՛ վրացիներին՝ ինչի հետևանքն էր բնակչության մոտ անհատակ ատելության կուտակումն իշխանությունների նկատմամբ: Այդ ամենը անհրաժեշտ է հաշվի առնել, երբ փորձում են բացատրել 1917թ. դեպքերը և հակաիշխանական ելույթները:

Ես հիշում եմ, թե ինչպես երկու հայ գյուղացի՝ երկաթուղու աշխատողներ, ինժեների սպանության համար դատապարտվել էին մահապատժի: Դատապարտյալների ընտանիքները եկան ինձ մոտ, աղերսելով դատապարտվածների կյանքը: Ես գնացի փոխարքայի մոտ: Նա լսեց ինձ և ասաց. “Լավ, բայց մեկն ու մեկի պատիժը անհրաժեշտ է ի կատար

ածել: Ես ներում կշնորհեմ միայն մեկին: Ինձ համար միննույնն է, թե ում: Մինչև երեկո դուք ինքներդ որոշեք, որովհետև առավոտյան ես պետք է դատավճիռներ ստորագրեմ”: Ես վերադարձա և ընկա մտատանջության մեջ. “Այդ երկուսից ո՞ր մեկին փրկել”: Մեկն ամուսնացած չէր, մյուսը՝ երեք երեխաների հայր: Ես որոշեցի փրկել ընտանիքավոր դատապարտյալի կյանքը: Այդպես էր նայում դեպքերին իշխանությունը: Բայց բնակչությունը ամբողջովին դատվողների կողմն էր: Հենց դրանում էր կայանում իշխանության ողբերգությունը: Օրենքն ու իշխանությունը ժողովուրդն ընկալում էր որպես իրեն թշնամիների: Իսկ դրանց թշնամիներն ու օրինազանցները դիտվում էին որպես արդարության և ժողովրդի բարեկամներ: Այդպես էր դատում ժողովուրդը: Հիշում եմ, մի անգամ բարձրագույն աստանի դատարանում դատում էին հենց հանցանքի վայրում ձերբակալված անձանց՝ ձեռքներին էլ “դժոխային մեքենան”: Այդ մեքենայի միջոցով պետք է պայթեցվեին խուզարկություն իրականացնող ժանդարմներն ու ոստիկանները: Դատարանի կազմում, բացի Թագի դատավորներից, ես էի՝ որպես քաղաքագլուխ և Մցխեթի գյուղական ավագը: Երբ սկսվեց “մեղավոր են” եզրույթին առնչվող հարցադրումը, գյուղի ավագը պատասխանեց “մեղավոր չեն”: Նախագահող սենատոր Կոչուբեյը երեք անգամ կրկնեց հարցը. “Ինչպե՞ս թե մեղավոր չեն: Չէ՞ որ նրանք բռնվել են “դժոխային մեքենան” ձեռքներին:

- Այո, պատասխանեց գյուղի ավագը: - Բայց չէ՞ որ այդ մեքենան նախատեսված է եղել ոչ թե ժողովրդին, այլ ժանդարմներին վնասելու համար: Այդ գյուղի ավագի մասին գաղտնի կերպով հաղորդել էին երկրամասի վարչությանը և նրան՝ որպես անվստահելի անձի, աքսորեցին Միբիր: Ահա թե ինչ բևեռների վրա էին տեղակայված իշխանությունն ու ժողովրդի խիղճը: Հայերը, ինչպես և Ռուսաստանի շարքային քաղաքացիները, տառապում էին համընդհանուր քաղաքացիական իրավազրկության պատճառով, իսկ լրացուցիչ, որպես “այլաձիներ”՝ նաև անջատողականության մեջ մշտական ու առանձնակի կասկածանքի տակ լինելու պատճառով:

Այսպիսով, հայ բուրժուզիան նյութապես ամրապնդվում էր հատկապես Վրաստանում (Թիֆլիսում, Բաթումում), Բաքվում, Ելիզավետ-

պոլում, դրանով իսկ գրգռելով վրաց ազգայնականներին, հողատեր ֆեոդալներին: Հայ մտավորականությունը տեղավորվում էր Թիֆլիսում և Բաքվում, մրցակիցը դառնալով այլ ազգությունների ներկայացուցիչ բժիշկներին ու ինժեներներին: Իսկ Էրիվանի նահանգի հայ բնակչությունը մնում էր տգիտության ճիրաններում և առանց դույզն ինչ քաղաքական դաստիարակության: Ժողովրդի քաղաքական դաստիարակության բացակայությունն ու դրա խոտանները փաստորեն, հանդիսանում էին հեղափոխական կուսակցությունների՝ հայերի մոտ “Դաշնակցության”, վրացիների մոտ՝ մենշևիկների համալրող գործոն: Երբ հայ բուրժուզիան ֆիզիկական սպառնալիքի վտանգ էր զգում, ապա օգնության խնդրանքով դիմում էր կուսակցությանը՝ առաջարկելով գումար և զենք: Երբ իրավիճակը հանդարտվում էր, բուրժուազիան հայտարարում էր, թե անհրաժեշտ է թուլացնել կուսակցությունը, քանզի զգուշանում էին աշխատավորների շրջանում կուսակցության ազդեցության աճից: Ես քանիցս բացատրել եմ բուրժուազիային նման անկայունության և ոչ հաստատական պահվածքի անտրամաբանական լինելը:

Այդ տասնամյակի ընթացքում տեղի են ունեցել տրամվայի և երկաթուղագծի աշխատողների, հացագործների, փողոց մաքրողների, բեռնակիրների և այլ արհեստավորների և արտադրական ոլորտի բանվորների մեծ թվով գործադուլներ: Եվ գրեթե ամեն անգամ ինձ վիճակվել է միջնորդ դատավոր լինել բանվորների կողմից: Եվ պետք է ասել, որ քաղաքագլխի դերն ու կարգավիճակը շատ դեպքերում կանխում էր ընթացումները: Այդ օրերին բնակչության մոտ առկա էր վստահությունը Թիֆլիս քաղաքի գործիչների նկատմամբ: Այն պահպանվեց նաև 1917թ. հեղափոխության ժամանակ: Ինչպես և ամբողջ Ռուսաստանում, Կովկասում նույնպես, քաղաքների ղեկավարությունը քաղաքական կուսակցությունների գործիչների հետ ռեակցիայի տարիներին հայտնվեցին առաջին պլանում: Պետք է ասել, որ այդ դժվարին տարիներին քաղաքների ղեկավարությունն ու կուսակցությունների ներկայացուցիչները հաճախակի էին շփվում միմյանց հետ: Մասնավորապես Թիֆլիսում, Բաքվում հայերն իրենց զգում էին ինչպես տանը: Եվ չափազանց ծանր էր տեսնել իրենց այդ զգացողությունը վիրավորված ու ոտնահարված Վրաստանի

և Ադրբեջանի անկախ հանրապետությունների ստեղծման օրերին: Հայերի թիվը Թիֆլիսում հասնում էր 180.000-ի: Թվաքանակով Թիֆլիսում նրանք առաջինն էին: Ամբողջ Վրաստանում հայերի թիվը մոտ 450.000 էր, ինչը կազմում էր Վրաստանի ամբողջ բնակչության 25 % -ը: Բաքվում կար մոտ 60.000 հայ, այսինքն բնակչության մեկ երրորդը: Ամբողջ Կովկասում բնակվում էր 1.800.000 հայ, իսկ նրանց տնտեսական կապերը Ռուստովի միջով ձգվում էին դեպի Նիժնի Նովգորոդ, Մոսկվա և Պետերբուրգ: Պետական պաշտոնյա հայերի քանակը շատ քիչ էր: Դրանց մեջ էին Կովկասի սահմաններից դուրս` Լեհաստանում, Սիբիրում ծառայող մի քանի գեներալներ, քաղաքացիական մի քանի պաշտոնյաներ Պետերբուրգում, և մեկ-երկու խոշոր պաշտոնյա` Թիֆլիսում: Դրանցից մեկն իմ հայրն էր, որն իր կյանքի վերջին տարիներին ինձ բողոքում էր, որ ինքն իրեն բարոյապես վատ է զգում, տեսնելով ռուսական իշխանությունների վերաբերմունքը իր և, առհասարակ, հայերի հանդեպ: Բայց ռուս ժողովուրդը հայերի հանդեպ չունեւ ո՛չ չարություն, ո՛չ էլ ասելություն: Ընդհանուր առմամբ, նա անտարբեր էր հայերի նկատմամբ, նույնիսկ կարելի է ասել, ինչ-որ տեղ` նույնիսկ բարյացկամ: Վրացիներն, օրինակ` ունենալով ազնվական այրեր և ազնվական իշխանուհիներ, անկասկած, կարողանում էին ավելի շատ իրենց կողմը գրավել իշխանությունների համակրանքը, քան ինքամիտի ու խոժոռադեմ հայերը: Մյուս տարրերը ճարպկորեն կերակրում ու կաշառում էին ծախու չինովնիկներին: Այդպես էր ընթանում կյանքը Կովկասում:

Հայերը քաղաքական կյանքում ապրում էին թուրքահայության ազատագրման գաղափարներով: Այդտեղ էին նրանց իդեալները: Եվ, հանդիպելով հայ ժողովրդի ամենատարբեր տարրերի հետ, ես կարող եմ ասել, որ միայն “Դաշնակցություն” կուսակցության անդամներն էին, որ չինայելով կյանքն ու առողջությունը, զրկվելով կյանքի հարմարավետություններից և ծառայողական վերելքից, ակտիվորեն կյանքի էին կոչում այդ իդեալները: Այդ գաղափարն իր հետևից էր տանում զանգվածները: Ես հիշում եմ, թե ինչպես, դեռևս տղայական տարիքում ես ներկա եմ եղել Կու-

կունյանի²⁶ դատավարությանը: Կուկունյանը առաջիններից էր, ով փորձել էր անցնել Թուրքիա՝ այնտեղի հայ եղբայրներին օգնելու նպատակով: Նրան և իր ամբողջ խմբին ռուս կազակները գցել էին տեղատարապ համազարկերի տակ: Խմբի մի մասը սպանվել էր, մյուս մասը դատվեց և արտրվեց տաժանակիր աշխատանքների: Ես կարող եմ պնդել, որ ռուսական իշխանության կողմից նման վերաբերմունքի դրսևորումը պահպանվեց ընդհուպ մինչև 1914թ.՝ մինչև պատերազմը սկսվելը:

Ռուսական իշխանությունը երբեք չի խրախուսել հայերին Թուրքիա անցնել հանուն հայկական շահերի: Հանուն ռուսական շահերի՝ այո, համեցեք: Եվ կրկնվում էին այն պատկերները, որոնք մեզ լավ հայտնի են. զանգերի դողանջը, խաչը ձեռքին տերտերը և աղ ու հացը ձեռքին՝ “ռուս քրիստոսասեր գորականությանն” ընդառաջ գնացող հայությունը: Դե հայերը միշտ համարել են՝ հատկապես լայն զանգվածներում, որ ռուսական իշխանությունը գնում է “հատկապես” հայերին ազատագրելու համար:

Հաջորդ գլխում մենք մանրամասն կանգ կառնենք այն ամենի վրա, թե այդ առնչությամբ ինչը և ինչպես տեղի ունեցավ Մեծ պատերազմի ժամանակ: Բայց, համենայնդեպս, անհրաժեշտ է վերահաստատել, որ 1900-1914թթ. ժամանակահատվածում ռուսական իշխանությունը առաջնորդվում էր Լոբանով-Ռոստովսկու²⁷ սկզբունքով. “Մեզ Հայաստանը պետք է առանց հայերի”: Ես անվերջ անգամներ այդ կապակցությամբ զրուցել եմ ռուսաստանյան բարձրաստիճան պետական պաշտոնյաների հետ: Եվ նրանք չեն էլ թաքցրել, որ Հայաստանը Թուրքիայում իրենց պետք է ռազմավարական նպատակների համար: Հատկապես՝ Էրզրու-

²⁶ Մարգիս Մովսեսի Կուկունյան (սկզբնապես՝ Մարգիս Ավետիսյան, հունվարի 23, 1863, Նիժ, Նուխիի գավառ, Բաքվի նահանգ, Ռուսական կայսրություն – նոյեմբերի 26, 1913, Օրյոլի բանտ, Օրյոլ, Ռուսական կայսրություն), հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ:

²⁷ Իշխան Լոբանով-Ռոստովսկի Ալեքսեյ Բորիսովիչ (1824-1896): Ռուս պետական գործիչ, դիվանագետ: Եղել է Ռուսաստանի դեսպանը Թուրքիայում, Անգլիայում, Ավստրո-Հունգարիայում, Գերմանիայում, Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր (1895-1896թթ.): 1878թ. Ռուսաստանի պատվիրակության կազմում մասնակցել է Բեռլինի Համաժողովին:

մը: Նրանք բացատրում էին, որ Հայաստանը Ռուսաստանին պետք էր Ալեքսանդրետով դեպի տաք ծով ելք ապահովելու համար, դեպի Մոսկու-Բաղդադ ճանապահ ունենալու՝ Անգլիային սպառնալու համար: Հայաստանը պետք էր Արևելքում Ռուսաստանի դարավոր խնդիրներին լուծումներ տալու համար: Ի դեպ, այդ նպատակներն այժմեական են նաև այսօր: Բայց ...այդ դեպքում հայերն էլ ակամա ազատագրվում էին: Նրանք թվապես ուժեղանում էին, ամրապնդվում ֆիզիկապես և հարստանում: Գրեթե ամբողջ Կովկասը՝ Ալեքսանդրապոլով, Կարսով, Բաքվով լցված էր Ալաշկերտից, Էրզրումից, հիմա էլ՝ Վանից Կովկաս եկած հայերով: Ռուսական իշխանությունը դա համարում էր “հայկական բռնաճնշում” և ամենալավ հողերը Կովկասում հատկացնում էր ռուս վերաբնակիչներին և թաթարներին, որոնց էլ համարում էր միապետության հենասյուներ: Հայերին քշում էին դեպի վատագույն վայրերը: Նույնիսկ ոռոգումն արգելված էր իրականացնել հայկական կապիտալի միջոցով: Հայկական էներգիան ծլարձակում – ելնում էր, ինչպես խոտի ծիլերը սալապատ ճանապահի քարերի արանքից ու ճեղքերից: Հայկական կապիտալն ազատ էր միայն քաղաքներում՝ եկամտաբեր տներում, բանկերում: Եվ այդ ուղղությամբ էր հոսում հայկական կապիտալի էներգիան՝ հայկական գյուղից հեռու: Նույնիսկ համակովկասյան նախահաշվում հայկական գյուղի կարիքների համար հատկացվում էին գրոշներ, թեև տարեկան 8.000.000 ռուբլի եկամուտի զգալի մասը գալիս էր Էրիվանի նահանգից: Զանգեզուրն ու Ղարաբաղը իրենց զավակներին ուղարկում էին Բաքու արտահանության, Նախիջևանն ու Բայազետը՝ Վրաստան, իսկ Ալեքսանդրապոլից թողնում-գնում էին նույնիսկ Ամերիկա: Այսպիսով, Էրիվանյան գյուղացիությունը՝ Հայկական Հանրապետության ապագա կորիզը, գնալով տկարանում էր, հայկական բուրժուազիան ամրանում էր Հայաստանից դուրս, հայ մտավորականությունը ձգտում-նետվում էր դեպի Բաքու և Թիֆլիս: Բայց գաղափարական տեսանկյունից ազգային-քաղաքական վերածննդի մասին գաղափարը հուրհրում էր ուղեղներում, կուսակցությունների ծրագրերում և գրականության մեջ: Այդպիսի իրադրության մեջ Կովկասում և, առհասարակ, ամբողջ Ռուսաստանում, հայերին գտավ ու նրանց այցելեց 1914 թվականը...

ԳԼՈՒԽ II

Մեծ պատերազմի առաջին շրջանը (օգոստոս 1914թ.-մարտ 1917 թ.)

1914թ. հունիսին, օգտվելով Թիֆլիսի քաղաքապետին տրամադրվող երկամսյա արձակուրդից, ես կնոջս հետ մեկնեցի արտասահման՝ Գերմանիա: Բաթումով ես հասա Կոստանդնուպոլիս, այնտեղից՝ Սերբիայով Վիեննա և բնակվեցի Գերմանիայի Բադեն առողջարանում: Երբ ես մեկնում էի Ռուսաստանից, այնտեղ տիրում էր «քաղքենիական տաղտկություն»: Բոլորը դժգոհ էին կյանքի պայմաններից, քաղաքական իրավիճակից, վարչակազմի ճնշումներից: Այնպիսի մթնոլորտ էր, ասես երկնքում կախված լիներ անագե ծանր մի ամպ: Բոլորը՝ մարդիկ, թերթերը կրկնում էին ամենուրեք. «Այսպես ապրել այլևս հնարավոր չէ»: Բայց պատերազմ ոչ ոք չէր սպասում: Հայկական հարցի առնչությամբ բոլորը տեղյակ էին հանձնակատարների նշանակումից և սպասում էին հայկական վիլայեթներում բարեփոխումների իրականացմանը²⁸: Երբ ես հասա Կոստանդնուպոլիս, տեսնվեցի հրապարակախոս Խաժակի, փաստաբան Զոհրապի, հայ պատգամավորների հետ, այցելեցի Պառլամենտ: Պառլամենտի նիստերի ծանրությունից հետո մենք նստեցին պատուհաններով դեպի Բոսֆորը նայող նրա սրահներից մեկում, սկսեցինք զրուցել Ռուսաստանի և Թուրքիայում սպասվելիք հայանպաստ բարեփոխումների մասին: Փաստաբան-պատգամավոր Զոհրապն ասաց հետևյալը.՝ Ես նախընտրում եմ բարեփոխումները, թեև չեմ հավատում

²⁸ 1912-1914 թթ.՝ դիվանագիտական երկար քննարկումներից հետո սուլթան Ռաշիդը (Մահմեդ 5-րդ) կարգադրում է ստորագրել Արևելյան Անատոլիայում (Արևմտյան Հայաստանում) կատարվելիք բարենորոգումների ծրագիրը: Ծրագրի իրագործմանը հետևելու և այն վերահսկելու համար թուրք պատասխանատու պաշտոնյաների կողքին պետք է գործեին նաև քրիստոնյա, մեծ տերությունների կողմից ընտրված և Թուրքիայի հավանությանն արժանացած օտարերկրացի գլխավոր երկու տեսուչ-հանձնակատարներ: Որպես այդպիսիք, 1914 թ. ապրիլի 2-ին հաստատվում են հոլանդացի **Լ. Վեսթենենկը** և նորվեգացի **Ն. Հոֆը** (տե՛ս Ա.Հարությունյան, Լ.Միմոնյան, Ա.Բայան, Ն.Հոֆի գործունեությունը Վանում, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2017 № 3 (24), էջ. 47-63):

դրանց: Թուրքիայում մենք, համենայնդեպս, պահպանում ենք ազգային ոգին, լեզուն և հույսեր: Իսկ Ռուսաստանը, ֆիզիկապես պահպանելով հայերին, նրանց մեջ սպանում է ազգային ոգին և իր հզոր մշակույթով մարում հայկական մշակույթը: Բոլորն սկսեցին խորհել այդ խոսքերի վրա:

Հաջորդ օրը ես անցնում էի Սերբիայով: Երեկոյան մեր վագոնում և ամենուր բոլորը հուզված էին, փսփսում էին՝ հավանաբար ինչ-որ առանձնահատուկ բան էր տեղի ունեցել: Պարզվեց, որ լուր է ստացվել այն մասին, որ սերբի ձեռքով սպանվել է ավստրիական թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդը: Գնացքի սերբ ուղևորներից մեկն ասեց. “Աղետ է լինելու...”:

Անցավ մոտ հինգ շաբաթ: Գերմանական խաղաղ առողջարանում ասես ամեն ինչ միանգամից կանգ էր առել: Այնպիսի լռություն էր, ինչպիսին լինում է ամպրոպից առաջ: Տղամարդ գերմանացիք անհետացել էին: Պատերազմ էր... Ես Կովկաս էի վերադառնում մեծ դժվարություններով: Երբ մոտենում էինք Կոստանդնուպոլսին, բրիտանական ռազմականավերի լուսարձակների հզոր ճառագայթները լուսավորեցին մեր նավը: Պարզվեց, փնտրում էին գերմանական «Բրեսլաու» և «Հեբեն» հածանավերը, բայց նրանք հասցրել էին այդ գիշեր անցնել Սև ծով: Թուրքիան դեռևս պատերազմում պաշտոնապես չէր մասնակցում:

Ճանապարհին մեզ հանդիպող հայերը խիստ հուզված էին: Մենք Թիֆլիս հասանք սեպտեմբերի կեսերին և ես, որպես Թիֆլիսի քաղաքագլուխ, միանգամից հայտնվեցի պատերազմական աշխուժությամբ եռացող Կովկասի մայրաքաղաքի թիկունքային բուռն կյանքի կենտրոնում: Դեռևս չի եկել այն ժամանակը, որ հնարավոր լինի մամուլին հանձնել պատերազմի թարմ շրջանի բոլոր տպավորությունները, քանզի փաստերը դեռևս չեն կորցրել իրենց սրությունը, իրադարձությունների մասնակիցներից շատերը ողջ են, իսկ բարեկամներն ու թշնամիները դեռևս գործում են: Ըստ այդմ էլ, ընթերցողը կհասկանա որոշ փաստերի և իրադարձությունների ներկայացման ու լուսաբանման հետ կապված իմ կողմից ցուցաբերվող անհրաժեշտ զսպվածությունը:

Պատերազմը խորապես ցնցեց հասարակական տրամադրություն-

ները: Իր ազգային էությամբ զուտ ռուսական հոսանքն իր մեջ ներքաշեց ու միանգամայն անկեղծորեն իր հետ տարավ նաև բազմաթիվ հայերի: Բնականաբար, աճում ու զարգանում էր այն զգացողությունը, որ, էթե հաղթեն Ռուսաստանը, Անգլիան ու Ֆրանսիան, ապա Ռուսաստանի, այդ թվում, նաև, հայազգի քաղաքացիների կյանքը կվերափոխվի դեպի լավը: Բացակայում էին այն “ պարտվողական” տրամադրությունները, որոնք նկատվում էին 1904-1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի օրերին, երբ մեծ թվով ռուսներ տենչում էին ռուսական զորքի պարտությունը, համարելով այն պաշտոնական, ցարական-բյուրոկրատական Ռուսաստանի պարտություն: Հույս ունենալով, որ նման պարտությանը անխուսափելիորեն, կհետևեն բարեփոխումներ:

Պետք է իմանալ ու հասկանալ, և դա շատ կարևոր է հենց այսօր էլ Ռուսաստանում կատարվող շատ բաները հասկանալու համար, որ արդեն երրորդ անգամն է, երբ խոշոր փոփոխություններն այդ երկրում` բարեփոխումներ, հեղափոխություններ, հաջորդում են ռազմական անհաջողություններին:

Այդ իրողությունից ելնելով էր, որ ռուս հեղափոխականներն ու ազատականները (լիբերալները), պետք է ասել, ի զարմանս եվրոպական դիտորդների և վերջիններիս կողմից նման մոտեցումը միանգամայն անընդունելի համարվելու պարագայում, հենց Ռուսաստանի ռազմական պարտությունների մեջ էին տեսնում բարօրություն իրենց հայրենիքի համար: 1905թ. մի հայտնի ռուս գրող Նայդյոնովն ինձ ասում էր. “ Անհնար է նույնիսկ հասկանալ ռուս գրողի հոգում փոթորկվող ողբերգությունը, երբ հուզմունքով, թաքնված ցանկությամբ ու անհամբեր սպասում ես հակառակորդի հաղթանակին: Բայց դա էլ պետք է ասել, որ ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ Յուսիմայում և Մուկդենի մոտ ռուսների կրած սարսափելի պարտություններն ասես տանեին ռուսաստանյան հին վարչակարգը: Ես անձամբ դա տեսել և զգացել եմ: Ասես փոթորկից անց լինեք, երբ ահարկու ավերածություններից հետո սպասում ես ծիածանի թարմացման ու վերափոխման: Եվ այդ թարմացումն ու վերափոխումներն, իրոք որ, ի հայտ էին գալիս. այդպես էր Ղրիմի պատերազմից հետո` 1857թ., այդպես էր նաև Ճապոնական պատերազմներից հե-

տո: Այսինքն, պատերազմը Ռուսաստանում առաջ էր բերել սպասումներ և հույսեր: Հայերը, բացի ամենից, բարեփոխումների էին սպասում նաև ազգային կյանքի բնագավառում՝ Ждали реформ армяне и в области национальной жизни: Իսկ ընդհանուր առմամբ, բարեփոխումների անհրաժեշտության մասին մենք արդեն խոսել ենք: Իրոք, պատերազմին նախորդող ժամանակներում իրավիճակը Ռուսաստանում չափազանց տաղտկալի էր: Տիրում էր ծանր մթնոլորտ: Մարդիկ թախծում էին, տրտմում: Ռեակցիայի և հիասթափության ժամանակաշրջան էր: Մարդիկ դոփում էին տեղում: Ամեն ասելիքն արդեն ասված էր, բոլոր ցանկությունները՝ ձևակերպված: Համագումարներն արդեն խմբագրել էին բոլոր առաջարկվող բարեփոխումները: Հրապարակախոսները, գիտնականները, բոլոր բնագավառների մասնագետներն արդեն արտահայտվել էին Ռուսաստանի զարգացման համար անհրաժեշտ բոլոր միջոցառումների վերաբերյալ: Բայց կյանքը շարունակում էր տեղում դոփել, իսկ ռեակցիան էլ այն նույնիսկ հետ էր տանում: Մտավորականությունը տանջահար վիճակում էր, ժողովրդավարությունը խեղդամահ էր արվում: Մամուլը խոսում էր Եզոպոսյան լեզվով: Եվ ահա պայթեց պատերազմի ամպրոպը: Ի հայտ եկան փոփոխությունների հույսեր: Մալոռուսները մի ասացվածք ունեն. «Թեկուզև ավելի վատը լինի, բայց այլ կերպ լինի»:

Այդպես էր մտածում նաև բովանդակ հայ մտավորականությունը: Այդտեղից էլ սնվում և ի հայտ էր գալիս նրա աշխուժությունը: Այդ աշխուժությունը դրսևորվում էր, նախևառաջ, նրանով, որ մարդիկ առանց պարտադրանքի ձգտում էին դեպի գործը. հայությունը մոտ 200.000 զինվոր տվեց գործող բանակին: Ռազմաճակատի կարիքների համար արվում էին առատաձեռն նվիրատվություններ: Օրիորդները գնում էին ծառայելու վիրավորներին ընդունած լազարեթներում: Թերթերը լիակատար ուրախանում էին դաշնակիցների հաջողություններով: Այդ տրամադրությունը դրսևորվում էր ամենուր: Ես դա անձամբ են տեսել: Եվ շատ-շատ անգամներ անձամբ ես, որպես քաղաքագլուխ, հանդիսացել եմ այդ տրամադրությունների արտահայտողը՝ մեկ Դումայում ճառ արտասանելիս, մեկ՝ հրապարակներում գումարված հանրահավաքներում, մեկ՝ գորախումբը ռազմաճակատ ճանապարհելիս, մեկ՝ տոնելով ռուսա-

կան գենքի հաղթանակները: Եվ դա ես արել եմ անկեղծորեն: Եվ ես զգացել եմ, որ ինձ ունկնդրող և ծափահարող հազարավոր մարդիկ հոգով համամիտ էին իմ արտասանած ճառերի հետ: Դա հայերի կողմից ռուսական քաղաքացիական զգացմունքներին մատուցվող տուրքն էր: Նույնիսկ կայուն ատելությունը վարչակարգի նկատմամբ ժամանակավորապես մոռացության էր տրվել. ենթադրում էին, թե միապետությունն ու ամբողջ վարչակազմը անխուսափելիորեն պարտավոր կլինեն փոխել իրենց կառավարման կուրսը: Այսպիսիք էին այդ օրերի հույսերը:

Անցան պատերազմի առաջին երկու ամիսները՝ 1914թ. օգոստոս-սեպտեմբերը: Իրականացվեց զորակոչը, սահմաններում բռնկվեցին առաջին ճակատամարտերը, և ընկան մի քանի ամրոցներ, ու զգացվեց, որ Կովկասում, հայերի միջավայրում, ի հայտ եկան նոր զգացումներ և նոր սպասումներ: Դրանք պայմանավորված էին Թուրքիայի հետ պատերազմ սկսելու հնարավորությամբ: Այդտեղից էլ ծնվում էին հայկական վիլայեթներում դարավոր հայկական հարցի լուծման հետ կապված վառվռուն հուսերն ու երազանքները: Նշենք, որ պատերազմ բռնկվելու պատճառով 1913թ. բարեփոխումների իրականացումը հետաձգվել էր, իսկ դրանց ենթադրյալ իրականացումը վերահսկող կոմիսարներն էլ հեռացել էին Թուրքիայից:

Դաշնակիցների կողմից հնչեցվում էին բոլորին հիացականորեն գմայլեցնող “փոքր ազգերի ինքնորոշման” մասին ազնվաբար թեզեր ու կարգախոսներ: Հայերը բռնկվում էին նորանոր ոգևորությամբ. նրանց աչքի առաջ գալիս էր պատերազմ նաև Թուրքիայի հետ, որն անխուսափելիորեն հաղթական ավարտ կունենա դաշնակիցների համար, իսկ դրա հետ էլ կապվում էր թուրքահայերի ազատագրումը: Այդ միտքը Էլեկրական հոսանքի նման անցավ հայ ժողովրդի ուղեղներով: Ես իմ աչքերով եմ տեսել, թե ինչպես այդ գաղափարը ընդգրկեց հայ բնակչության բոլոր շերտերը, բոլոր հոսանքներն ու կուսակցությունները: Այդ միտքը, այդ գաղափարը ոչ ոք էլ չէր քարոզում կամ տարածում: Հակառակը, եթե լինում են ինքնաբուխ ժողովրդական շարժումներ, ապա 1914թ. աշնանը մենք ականատեսն էինք այդպիսի տարերային, գուտ ժողովրդային շարժումներից մեկի ծագմանն ու զարգացմանը: Այն, որ այդ շարժումը ձևա-

վորվում ու սկսում էր թևածել ժողովրդի հավաքական մտքի և ոգևորության շնորհիվ, ամենից լավ երևում էր հետևյալ փաստից. այդ հոսանքը ոգևորեց ու իր հետևից տարավ նույնիսկ այն անձանց, որոնք դրանից դեռևս 2 ամիս առաջ ամուր կանգնած էին այդ պատերազմում հայերի լիակատար չեզոքության դիրքերում: Այն է. թուրքահայերը Թուրքիայում կատարում են իրենց քաղաքացիական պարտքը Թուրքիայի հանդեպ, իսկ ռուսաստանահայերը՝ Ռուսաստանի հանդեպ: Այդպիսին էր հայ դեմոկրատիայի գաղափարախոսական տեսակետը: Սակայն դեմոկրատիան դուրս պրծավ այդ բանաձևի շրջանակներից և իր հետևից տարավ նաև առաջնորդներին: Երբ մենք գիտակցեցինք այդ շարժման ուժը և երբ արդեն անհրաժեշտ էր այդ “գարնանային հոսքի” շիթերն ուղղել դեպի հոսքի ճշգրիտ հունը, գումարվեց ռուսահայության համագումար, որն ընտրեց “Ազգային բյուրո” ու հանձնարարեց նրան ղեկավարել կամավորական ջոկատների կազմակերպման աշխատանքները և աչալուրջ լինել հայերի քաղաքական պահանջների կատարմանը: Սկզբում ես ընդգրկվեցի այդ կազմակերպության բյուրոյի կազմում, իսկ հետո դարձա նրա նախագահը և իրականացնում էի բոլոր անհրաժեշտ գործառույթները ռազմական իշխանությունների և Կովկասյան բանակի շտաբի միջև: Ստացանք զգալի քանակի միջոցներ: **Սկսվեց կամավորական ջոկատների կազմակերպումը: Նրանք պետք է հանդիսանային Թուրքիայի հայ բնակչության պաշտպանը և ուժեղացնեին Կովկասյան ռազմաճակատը, ինչպես նաև լինելու էին Թուրքիայի ազատագրված հայկական վայրերում կազմակերպվելիք հայկական միլիցիայի կորիզը** (*ընդգծումը մերն է- Վ.Ն.*):

Առաջին իսկ օրվանից Թիֆլիսի թեմի առաջնորդ, եպիսկոպոս Մեսրոպը և բարեգործական միության նախագահ Սամսոն Հարությունյանը²⁹ կազմեցին մի կոլեգիա, որը դարձավ զանգվածների տրամադ-

²⁹ **Հարությունյան Սամսոն Ստեփանի** (1869թ., Ելիզավետպոլի նահանգ, Ռուսական կայսրություն – 1943թ., Թբիլիսի, ԽՍՀՄ): Ավարտել է Մոսկվայի կայսերական համալսարանը իրավագիտություն մասնագիտությամբ: Հայ պետական, քաղաքական և հասարակական գործիչ, Առաջին աշխարհամարտի տարիներին՝ հայկական կամավորական շարժման կազմակերպիչներից մեկը: Կովկասի հայոց բարե-

րության արտահայտողը և մենք այդ կարգավիճակում շփումներ էինք իրականացնում Ռուսաստանի հայկական գաղութների և Կովկասի բարձրագույն իշխանության հետ: Կամավորները գալիս ու կուտակվում էին մեծ զանգվածներով. աշակերտներ, գյուղացիներ, զինապարտությունից ազատվածներ, ծագումով Թուրքիայից հայեր, Ամերիկայից, Բուլղարիայից եկածներ: Այդ բոլոր առվակները միանում ու դառնում էին մի հզոր հեղեղ:

Անհրաժեշտ էին նաև ճանաչված ու հանրահայտ ղեկավարներ: Այդ անձինք, մեծամասամբ լինելով հեղափոխականներ և համարվելով ոչ հուսալի, կամ գտնվում էին ընդհատակում, կամ Ռուսաստանից դուրս: Ռուսական իշխանությունը անհապաղ նրանց բոլորին հնարավորություն տվեց վերադառնալ, անձնագրեր տրամադրեց և նրանք կարճ ժամանակ անց հայտնվեցին Թիֆլիսում: Անձամբ ինձ հայտնի է մի դեպք, երբ Թիֆլիսում ցարական ժանդարմերիայի մի գնդապետ համառորեն առիթ էր փնտրում մի չափազանց խիզախ հեղափոխականի հետ ծանոթանալու համար, որպեսզի նրան խնդրեր հանձն առնել իրականացնել մի կարևոր ռազմա-հեղափոխական բնույթի հանձնարարություն, սակայն հայ գործիչը հրաժարվել էր իրեն ընձեռած այդ “պատվից”:

Առաջին առաջնորդները, ում հետ ես հանդիպեցի նրանց Թիֆլիս ժամանելուն պես, եղել են Անդրանիկը և Համազասպ Սրվանտձյանը: Վերջինս գնդակահարվել է բոլշևիկների կողմից 1921թ.՝ Էրիվանում³⁰:

գործական ընկերության նախագահ (1906-1918թթ.), 1906թ.-ից՝ կադետ, 1917թ.՝ Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիրներից մեկը, կուսակցության փոխնախագահ: Ազգային բյուրոյի նախագահ (1912-1914թթ.), Հայոց ազգային խորհրդի անդամ(1917-1918թթ.), 1918 -1919թթ.՝ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարար – Գլխավոր դատախազ: Խորհրդային կարգերի հաստատումից հետո կարճ ժամանակով ձերբակալվել է (1921-22թթ.): Հետագայում բնակվել է Թիֆլիսում:

³⁰ Սրվանտձյան Համազասպ Խաչատուրի (հունիսի 5, 1873, Վան, Օսմանյան կայսրություն - փետրվարի 18, 1921, Երևան, Հայկական ԽՍՀ), հայ ազգային-ազատագրական շարժման ակնավոր գործիչ, ՀՀԴ անդամ: 1908 թվականին, ՀՀ Դաշնակցական մի շարք գործիչների հետ, ձերբակալվել է ցարական կառավարության կողմից, դատապարտվել մահվան, սակայն այն փոխարինվել է 15 տարվա տաժանակրությամբ: 1913 թվականին փախել է բանտից, անցել Եվրոպա, ապա՝ Կ.

Համագասպը փախել էր աքսորից և եկել էր Թիֆլիս: Ես նրա հետ ծանոթ էի դեռևս 1906թ., երբ հայ-թաթարական կոտորածների օրերին նրա հետ միասին մեկնել էինք Ելիզավետպոլ: Այդ օրերին նա կազմակերպել էր Ելիզավետպոլի հայ բնակչության պաշտպանությունը: Հետո ես նրան տեսել էի Սենատում՝ դաշնակցականների դատավարության ժամանակ: Իսկ սա արդեն մեր երրորդ հանդիպումն էր:

Ես մոտենում էի իմ բնակարանին և նկատեցի, ինչ-որ մեկը զգուշավոր, գլխարկը հանած, մոտենում է ինձ: Ես նրան չճանաչեցի: Ինքն այդ օրերին Թիֆլիսում գտնվում էր դեռևս ոչ լեզալ վիճակում: Նա ցածր ձայնով ներկայացրեց իրեն: Ես նրան հրավիրեցի տուն և նա ներս մտավ: Հուզված ձայնով նա սկսեց խոսել այն մասին, որ պատերազմը Թուրքիայի հետ անխուսափելի է, որ ինքը իրեն դնում է ռուսական ռազմական իշխանության տրամադրության տակ և խնդրում է տալ իրեն , թեկուզ չափազանց վտանգավոր, բայց բանակի համար կարևոր և օգտակար որևիցե հանձնարարություն: Նրա միանգամայն անշահախնդիր առաջարկը ընդունվեց, նա ստացավ և կատարեց կարևոր մի հանձնարարություն: Հետո Համագասպը դարձավ կամավորական հատուկ ջոկատի հրամանատար, որն ընդգրկված էր գեներալ Բարատովի գործախմբում, ումից ես քանիցս՝ գրավոր և բանավոր փայտուն կարծիքներ եմ ստացել Համագասպի ռազմական գործունեության վերաբերյալ (տե՛ս Գր. Չալխուշյանի կազմած Կարմիր Գիրքը): Հենց որ Անդրանիկը ժամանեց Թիֆլիս, նրան

Պոլիս: Առաջին Աշխարհամարտն սկսվելուց հետո նշանակվել է 3-րդ հայկական կամավորական ջոկատի հրամանատար: Ռուսաստանում 1917 թվականի Փետրվարյան հեղափոխությունից հետո նշանակվել է Ալաշկերտի շրջանի զինվորական ոստիկանության հրամանատար (մինչև ռուսական զորքերի կողմից Կովկասյան ռազմաճակատը լքելը): 1918 թվականին, **Մտ.Շահումյանի** և ՀՀԴ միջև գործող պայմանավորվածության համաձայն, Հայկական բրիգադի (3000 զինվոր ու սպա) հրամանատարն էր, որը կռվել է Բաքվի կոմունայի համար: 1918թ. Վերադարձել է Հայաստան և նշանակվել Նոր Բայազետի շրջանի գործախմբի հրամանատար, մասնակցել է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը, 1920 թվականի Մայիսյան ապստամբության և թուրք-թաթարական խռովությունների ճնշմանը: Իրականում, **Համագասպը** ոչ թե գնդակահարվել, այլ 1921թ. Փետրվարի լույս 18-ի գիշերը հայ բոլշևիկների հրահանգով երկու տասնյակ այլ ճանաչված հայորդիների հետ կացնահարվել է Երևանի բանտում:

շատ շտապ տեսնելու ցանկություն հայտնեցին զինվորական իշխանությունները: Ես անձամբ նրան ուղեկցեցի փոխարքայի ռազմական գծով օգնական գեներալ Միշլանսկու մոտ: Թուրքիայի հետ պատերազմը դեռևս չէր սկսվել և նրանք մոտ երկու ժամ զրուցում էին սեղանին փռած քարտեզի շուրջ: Այդ զրույցից հետո գեներալ Միշլանսկին, որը նախկինում եղել էր ամբողջ Ռուսաստանի Գլխավոր շտաբի պետը, ինձ ասաց հետևյալը. “Պարոն Անդրանիկը գերազանց հասկանում է ռազմաճակատի դրությունը, նա շոշափեց հակառակորդի կենսականորեն կարևոր կետերը և հոյակապ գիտի ձմեռային կամպանիայի պայմանները”: Այդկերպ հաստատվեցին հարաբերությունները: Հայերը կրկին բոցավառվեցին հույսերով: Երբ գործի կազմակերպումն արդեն հունի մեջ ընկավ, եպիսկոպոս Մեսրոպը, Հարությունյանը և ես եղանք փոխարքայի մոտ: Մենք ներկայացրինք նրան գործերի ընթացքը, տրամադրություններն ու սպասելիքները: Փոխարքան մեզ պատասխանեց հետևյալ խոսքերով. “**Ես միշտ էլ կարծել եմ, որ հայերը գերազանց գիտակցում են Ռուսաստանի դերը իրենց ճակատագրում: Եվ կյանքի տրամաբանությունը դա ապացուցել է: Ես հայերին հովանավորում եմ ոչ թե իբրև իրենց բարեկամ, այլ որպես Ռուսաստանին հավատարիմ լավ ռուսական պաշտոնյա: Մենք պետք ենք միմյանց: Ես կարծում եմ, որ այն ամենալավը, ինչը թուրքահայերը պետք է ստանան մեր հաղթանակից հետո, դա պետք է լինի Միրիայում Լիբանանյան Սահմանադրության օրինակով մի Սահմանադրություն: Ես այդպես էլ գրել եմ ցարին (ընդգծումը մերն է- Վ.Ն.)”:** Այնուհետև ես այցելեցի Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ Յուդենիչին³¹, որը համարում էր հայ կամավորական ջոկատների մասնակցությո-

³¹ Թեև փոխարքա **Ի.Ի. Վորոնցով - Դաշկովն** էր պաշտոնապես հանդիսանում Կովկասյան բանակի և ռազմաճակատի գլխավոր հրամանատարը, սակայն պատերազմը սկսվելուց հետո այդ պարտականություններն իրականում կատարում էր շտաբի պետ, գեներալ **Ն.Ն. Յուդենիչը** (1862թ.,- Մոսկվա, Ռուսական կայսրություն - 1933 Կանն, Ֆրանսիա): **Յուդենիչը** Առաջին աշխարհամարտում ռուսական բանակի ամենահաջող պատերազմող գեներալներից էր: Նրա գլխավորությամբ ռուսական զորքը գրավեց գրեթե ամբողջ Արևմտյան Հայաստանը: Միաժամանակ, որպես Ռուսական կայսրության շահերի երդվյալ պաշտպան և հետևորդ գեներալ **Յուդենիչը** գրավված Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի

յունը Կովկասյան բանակում չափազանց կարևոր՝ հատկապես հետախուզության, բեռնափոխադրումների և կապի ծառայության հատվածներում: Մեկը մյուսի հետևից գործի մեջ էին մտնում Դրոն, Վարդանը, Քենին, Իշխանը: Ուսանողները թողնում էին իրենց դպրոցները, զիմնագիտները՝ իրենց դասերը... Սակայն անհրաժեշտ է շեշտել, որ կամավորական ջոկատները համալրվում էին բացառապես չքավոր ընտանիքներից՝ հասարակ ժողովուրդ, արհեստավորներ: Բուրժուազիան այդ գործընթացում բացակայում էր: Բուրժուազիան տրամադրում էր գումարներ: Վաճառականներից ոմանք էլ իրենց անձնական ներդրումն էին անում կամավորականների համար հագուստ պատրաստելու գործում: Ոգևորությունը գալիս էր գուտ ժողովրդական շերտերի կողմից: Զոհեր տալիս էին հենց այդ շերտերը:

Քիչ ժամանակ անց փոխարքայի անունով նամակ ստացվեց Ռուսաստանի արտգործնախարարից, որտեղ շարադրված էին թուրքահայերի համար բարեփոխումներ իրականացնելու խոստումները: Փոխարքան այդ նամակն ուղարկեց Կաթողիկոսին, սակայն այդ նամակն իր ճամպրուկում տեղափոխող հատուկ անձնավորությունը՝ պ-ն Գ-ն փաստեց, որ Ալեքսանդրապոլ կայարանում իր ճամպրուկը գողացել են և ճամպրուկի հետ անհետացել է նաև այդ նամակը: Ես անձամբ պ-ն Գ-ից

կողմից շուտափույթ գաղութացնելու, ռուսական տարրով բնակեցնելու, երկրամաս հայերի վերադարձը և այնտեղ նրանց վերաբնակեցումը կանխելու հետևողական և համոզված կողմնակիցն ու իրագործողներից էր: Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի պաշտոնը թողնելուց հետո էլ (7 մայիսի 1917թ.) **Յուդենիչը** մնաց որպես «հզոր, միացյալ ու անբաժանելի» Ռուսաստանի գաղափարի համոզված կողմնակից ու կրող: Որպես զինվորական անձ, Յուդենիչը գնահատում էր ռազմաճակատում մարտնչող հայ զինվորականների վաստակը: Բերենք պաշտոնանկությունից օրեր առաջ գրված իր վերջին նամակներից մեկը, որը հասցեագրված է Անդրանիկ Օզանյանին. «Милостивый государь, господин Андраник! С началом войны Вы были привлечены к боевой деятельности на Кавказском фронте. Сформировав 1-ю армянскую дружину, вы с ней принимали участие в ряде боев, в которых проявили личную храбрость, умение разобратся в боевой обстановке и искусное ею управление. Считаю приятным для себя долгом выразить Вам за Вашу деятельность мою искреннюю признательность. Примите уверение в совершенном моем уважении и таковой же преданности. Георгиевский крест второй степени № 25255, которым Вас награждаю, при сем посылаю. Н. Юденич». Տե՛ս, Шишов А.В., Досье без ретуши: Юденич, стр 281, Москва, Вече, 2004

եմ լսել այդ պատմությունը, սակայն այդպես էլ անհայտ մնաց, թե ով է գողացել այդ ճամպրուկը, և հատկապես ի՞նչն է գայթակղել թալանողներին՝ հենց ինքը՝ նամա՞կը, թե՞ ագրոնոմ պ-ն Գ-ի ճամպրուկի համեստ պարունակությունը Ինչնիցե, կարող ենք փաստել, որ հայկական պոռթքման ալիքը կազմակերպվեց և իր ձևավորումն ստացավ հայկական կամավորական ջոկատների բարեկազմ համակարգի տեսքով: Ռուսական իշխանությունը դրան պատասխանեց թրքահայության համար բարեփոխումներ իրականացնելու խոստումներով (*ընդգծումը մերն է-Վ.Ն.*):

Թեև պատերազմը Թուրքիայի հետ դեռևս չէր սկսվել, բայց այն սպասվում էր: Ռուսաստանի կառավարությունն այդ պատերազմին կողմ չէր: Նա Արևմտյան ռազմաճակատ էր ուղարկել լավագույն զորամասերը: Բայց նրա կամքից չէր կախված Կովկասյան ռազմաճակատի ճակատագիրը: Սանիտարական գումակները, տեխնիկական զորամասերը՝ այդ ամենը պահանջվում էր արևմտյան ուղղությամբ: Փոխարքան չափազանց անհանգիստ էր: Նա ինձ ասում էր, որ իր պարտքն է օգնել Արևմտյան ռազմաճակատին, բայց միաժամանակ, Կովկասյան ռազմաճակատի մերկանալը նրան խիստ մտահոգում էր: Այդ մասին ես գրուցել եմ նաև գեներալ Միշլանսկու հետ: Նա նույնպես համառորեն պահանջում էր ամրացնել Կովկասը: Ընթանում էր հեռագրերի արագացված փոխանակում...

Գնալով, հայերի մոտ տեղի էր ունենում կենսական էներգիայի կուտակում, արթնանում էին հույսեր, և այդ էներգիան ու հույսերն ուղղվում էին դեպի Թուրքիա, դեպի հայկական ազդեցիկ շրջաններ: Կեսօրից հետո իմ բոլոր ժամերը ես տրամադրում էի “Ազգային բյուրոյին”: Բոլոր հայկական կուսակցությունները համախմբվել էին ազգային հոսանքի շուրջ: Լերմոնտովյան փողոցի վրա, նույն սեղանի շուրջ, հավաքվում էին դաշնակցականները, կադետները, վաճառականները, գրողները, հարևան սենյակում՝ խմբապետները, կամավորականները: Եռում էր նախապատրաստական աշխատանքը: Մենք ամեն օր մնում էինք այդտեղ, մինչ խորը գիշեր: Բանավեճերն առնչվում էին զուտ գործի տեխնիկական կողմին: Սկզբունքների շուրջ որևիցե անհամաձայնություն չկար:

Բոլորը հավատում էին, բոլորը ձգտում էին ավելացնել կամավորական ջոկատների քանակը, հոգ էին տանում, որպեսզի ընտրվեն լավագույն հրամանատարները:

Մյուս հոսանքը, որտեղ ես, որպես Թիֆլիսի քաղաքագլուխ, զբաղեցնում էի կենտրոնական դիրք, դա նոր ծնունդ առնող “Կովկասյան քաղաքների միություն” կազմակերպությունն էր: Այդ միությունը 1915-1916-1917 թթ. ընթացքում ահռելի դերակատարում ունեցավ հայ փախստականներին օգնելու հարցում, Կովկասյան ռազմաճակատին սատարելու, հիվանդ և վիրավոր զինվորների խնամքն ու բուժումը կազմակերպելու գործում:

Քանի որ հայերը մեծ քանակի էներգիա, աշխատանք ու գիտելիքներ ներդրեցին այդ “Քաղաքների միության” կազմակերպման և գործունեության համար, ինձ թույլ տամ մի քանի խոսքով անդրադառնալ այդ միության ստեղծմանն ու գործունեությանը: Հենց որ սկսվեց պատերազմը Գերմանիայի հետ, Ռուսաստանում սկսվեց միանգամայն բնական մի շարժում. Մոսկվայի քաղաքագլխի հրավերով Ռուսաստանի զանազան քաղաքների և զեմստվոների գործիչներ հավաքվեցին Մոսկվայում, ստեղծեցին քաղաքների և զեմստվոների միություններ ու երկրի ղեկավարությանն իրենց ծառայություններն առաջարկեցին հիվանդ և վիրավոր զինվորների բուժման ու օգնության հարցերում: Առաջարկությունն ընդունվել էր: Այդ հրավերից անկախ, 1914 թ. սեպտեմբերին արդեն իմ հրավերով Թիֆլիսում հավաքվեցին Կովկասի 44 քաղաքների (այդ թվում նաև հայաբնակ Էրիվան, Կարս, Ալեքսանդրապոլ, վրացական՝ Բաթում, Քութայիս, Փոթի, իսառը բնակչությամբ՝ Թիֆլիս, Բաքու, Հյուսիսային Կովկասի քաղաքներ, լեռնականների քաղաքները՝ Գրոզնի, Մայկուպ, Վլադիկավկազ և այլն) ներկայացուցիչներ և որոշում կայացրին “ Կովկասյան քաղաքների միություն” ստեղծելու մասին: Ինձ ընտրեցին այդ միության Գլխավոր լիազոր և Գլխավոր կոմիտեի նախագահ: Իշխանությունները մեզ մեկ միլիոն ռուբլի (ինչն այն ժամանակ կազմում էր 3 միլիոն ֆրանկ) գումար տրամադրեց և մենք անհապաղ անցանք աշխատանքի: Առաջ անցնելով ասեմ, որ 3 տարվա ընթացքում մենք ստեղծեցինք 32000 մահճակալով միանգամայն նոր լազարեթներ, 5 սանիտարա-

կան քարավան, որոնք ուղարկվում էին Թուրքիայի խորքերը և այդ 3 տարվա ընթացքում զինվորներին ու փախստականներին սննդով ապահովելու համար ծախսեցինք 120 միլիոն ռուբլի, ինչն այն օրերի փոխարժեքով կազմում է մոտ 350 միլիոն ֆրանկ: Այդ Միության ինչպես Գլխավոր կոմիտեն, այնպես էլ ծառայողների երկու երրորդը կովկասցիներ էին: 1914թ. վերջին “Կովկասյան միությունը” անցավ Համառուսաստանյան Միության կազմի մեջ և սկսեց կոչվել “Քաղաքների համառուսաստանյան միության Կովկասյան բաժանմունք”: Պատերազմի ամբողջ ընթացքում ես եղել եմ նրա անփոփոխ նախագահը: Այնպես որ, հայերի կորուրդը ներհուսեց նաև քաղաքների այդ միության մեջ: Դա երկրորդ հզոր հոսանքն էր: Միությունում ծառայողների թիվը 19.000 էր: Տրամադրությունը Միությունում հայտնի էր. բոլորը ռազմական հաղթանակի կողմն էին: Այդ միության գործիչների թվում էին Դրոն, Համո Օհանջանյանը՝ հետագայում Հայաստանի կառավարության նախագահ, Հովհաննես Քաջավունին՝ հետագայում նույնպես Հայաստանի կառավարության նախագահ, դոկտոր Բաբայանը³², Կարճիկյանը³³ (բոլորն էլ հետագայում

³² **Բաբայան Արտաշես Ադամի** (1886թ., Շուշի, Ռուսական կայսրություն - 1959թ. - Թեհրան, Իրան), հայ անվանի բժիշկ, հասարակական-քաղաքական գործիչ, հրատարակիչ, դաշնակցական կուսակցության անդամ: Ավարտել է Ժնևի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1915 թվականին մտել է Սարգիս Մեհրաբյանի (Խանասորի Վարդան) հրամանատարած հայ կամավորական զնդի մեջ, եղել դրա բժշկապետը և զնդի հետ միասին հասել Վան: 1915 թ. մայիսի 7-ին Վանն ազատագրելուց հետո այդտեղ հիվանդանոցներ է կազմակերպել: Համագործակցել է Վանի ժամանակավոր կառավարության հետ և նշանակվել ժամանակավոր կառավարության առողջապահության բաժնի պետ ու քաղաքապետության անդամ: **Հայաստանի Հանրապետության** կառավարության անդամներից մեկը, 1918-1919թթ.՝ Հայաստանի առաջին և երկրորդ խորհրդարանների անդամ: 1919 թվականի **հոկտեմբերի 31**-ից մինչև 1920 թվականի **մայիսի 5**-ը՝ խնամատարության և վերաշինության նախարար, ապա՝ մինչև հոկտեմբերի 30-ը՝ փոխնախարար: 1920 թվականի մայիսին **Ղարաքիլիսայում** մասնակցել է բոլշևիկյան ապստամբության ճնշմանը: 1920 թվականի սեպտեմբերին սկսված թուրք-հայկական պատերազմին, ՀՀ կառավարության որոշումով, **Սիմոն Վրացյանի** հետ ուղարկվել է **Կարս-Սարիղամիշի ռազմաճակատ**՝ կառավարության լիազոր ներկայացուցչի իրավունքներով: 1920 թ. հոկտեմբերի 30-ին, Կարսի անկման ժամանակ, **թուրքերին**՝ գերի է ընկել: 1920-1921 թվականներին արգելափակվել է **Կարսի**, ապա **Կարինի** բանտերում: 1921 թվականին հոկտեմբերին գերությունից ազատվե-

Հայաստանի կառավարության անդամներ): Երկրորդ աստիճանի ծառայողների մեջ հանդիպում էին Վրաստանի ապագա մինիստրներ (օրինակ՝ Կարծիվաձեն), Պառլամենտների ապագա անդամներ: Այսինքն, իրոք, ժողովրդի ներուժը, նրա նախաձեռնությունը իրենց դրսևորումն էին գտնում կամավորական շարժման և «քաղաքների միությունում»: Խոսքն, իհարկե, լեզալ գործող կազմակերպությունների մասին է: Իսկ հեղափոխական ավյունը գործածության մեջ էր դրվում արդեն զուտ կուսակցական կազմակերպություններում:

Եթե ավելացնենք նաև Սիմոն Վրացյանի անունը (հետագայում նույնպես Հայաստանի կառավարության նախագահ), ով աշխատանք էր

լուց հետո անցել է **Թավրիզ**, քանի որ Հայաստանն արդեն խորհրդայնացվել էր: 1943 թ. սեպտեմբերին խորհրդային զորքերի՝ Իրան մուտքից հետո ձերբակալվել է: 1943-1945 թվականները անցկացրել է բանտում: 1945 թվականի հունիսի 4-ին ազատվել է բանտից: 1945 թվականին և հետագա տարիներին ընտրվել է Թեհրանի գործակալական ժողովի անդամ, ապա՝ Եկեղեցական վարչության ատենապետ, այսինքն՝ Թեհրանի թեմի Պատգամավորական ժողովի անդամ և Թեմական խորհրդի փոխնախագահ, ապա՝ նախագահ: Այնուհետև ընտրվել է **Հայոց ազգային խորհրդի** նախագահ: Երկու անգամ մասնակցել է ՀՀԴ ընդհանուր ժողովներին: 1959 թվականին Կահիրեում հրատարակել է հուշերի գիրք:

³³ **Կարճիկյան Խաչատուր Հովհաննեսի** (1880թ., Վաղարշապատ, Ռուսական կայսրություն - 1918թ., Էրիվան, Հայաստանի Հանրապետություն), հայ պետական, քաղաքական և կուսակցական գործիչ, ՀՀԴ Արևելյան բյուրոյի անդամ: Ավարտել է Գևորգյան ճեմարանը և Սանկտ-Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Որպես դատապաշտպան, մասնակցել է «Դաշնակցության գործի» դատավարությանը: Առաջին աշխարհամարտի տարիներին՝ հայկական կամավորական շարժման կազմակերպիչներից էր: Ձբադվել է Կովկասում արևմտահայ գաղթականության տեղավորման հարցերով: 1917 թվականի նոյեմբերին նշանակվել է Անդրկովկասյան կոմիսարիատի ֆինանսների մինիստր, իսկ 1918 թվականի փետրվարին՝ Անդրկովկասյան սեյմի պատգամավոր: Ձբադեցրել է նաև Հայոց Ազգային խորհրդի փոխնախագահի պաշտոնը: 1918 թվականի հուլիսից՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Հովհաննես Քաջազնունու կառավարության կազմում: 1918 թվականի հոկտեմբերին եղել է Քաջազնունու ձևավորած կոալիցիոն կառավարության կազմում հանրային խնամատարության մինիստր: 1918թ. նոյեմբերի 14-ին իր աշխատասենյակում գնդակահարվել է իր կուսակից, հայկական բանակի կապիտան Եգոր Տեր-Մինասյանի կողմից: Դատի ընթացքում մարդասպանը բացատրել է իր արարքի՝ զուտ քաղաքական հիմքեր ունեցող շարժառիթները:

տանում կամավորական ջոկատներում, ապա տեսնում ենք, որ մինչև Հայաստանի Հանրապետության կազմավորումը նրա ապագա բոլոր 4 վարչապետներն էլ նախապատրաստական աշխատանքներ են իրականացրել պատերազմական շրջանի Կովկասյան կազմակերպությունների շարքերում ու դրանց շրջանակներում: Այնպես որ, Հայաստանի Հանրապետության ապագա հիմնադիրներն ու ղեկավարները այդ տարիների ընթացքում ձեռք էին բերում և կուտակում մարդկային մեծ զանգվածների ղեկավարման ու կառավարման անհրաժեշտ փորձառություն և հմտություններ: Ապագա պետական գործիչներն անցնում էին անհրաժեշտ չորս դպրոցներից մեկը, կամ նույնիսկ՝ դրանցից միանգամից երկուսը, կամ երեքը. կուսակցության դպրոցը, բանակի, կամ կամավորական շարժման դպրոցը, պետական ծառայության, կամ քաղաքների միության դպրոցը և տեղական ինքնակառավարման դպրոցը: Մյուսները սերում էին ուսուցչական համակազմից: **Ըստ այդմ էլ արմատապես սխալ է այն պնդումը, թե միանգամայն անպատրաստ տարրը զբաղեցրեց Հայաստանի Հանրապետության կառավարման աթոռները: Միանգամայն սխալ է նաև այն պնդումը, թե նրանց մեծամասնությունը չէր տիրապետում հայերենին: Հայերեն չհմացողները փոքրամասնություն էին կազմում և գտնվում էին Բանակի շարքերում՝ իսկ անհրաժեշտությունից էլնելով (ընդգծումը մերն է- Վ.Հ.):** Իսկ զինվորականության մի մասի հայերեն չիմանալու հիմնական պատճառն այն էր, որ Ռուսաստանի կառավարությունը հնարավորություն չէր տալիս հայ զինվորականությանը ծառայողական առաջխաղացում ունենալ Կովկասում և մեր ապագա գեներալներ Նազարբեկով³⁴, Հախվերդով³⁵, Սիլիկով³⁶, Խանկալամով³⁷ ստիպված

³⁴ **Նազարբեկյան Թովմաս Հովհաննեսի** (1855թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն – 1931թ., Թիֆլիս, ԽՍՀՄ): Թիֆլիսի նահանգի ազնվականներից, անկուսակցական, ցարական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի հրամանատար, սպարապետ: Հայաստանի խորհրդայնացումից շատ քիչ ժամանակ անց հայկական բանակի մոտ 1500 սպաների հետ ձերբակալվել է, պահվել Բաքվի և Մոսկվայի բանտերում, ապա քշվել է Ռյազանի համակենտրոնացման ճամբար: Ազատվել է 1921թ. Ապրիլին (Տե՛ս Ա.Ա. Григоров, А.И. Григоров, *Заклученные Рязанского губернского концлагеря РСФСР 1919-1923гг.*, Москва, 2013, էջ 389, հետախու՝ А.А. Григоров, А.И.

Григоров, Заключенные...Վ.Հարությունյան, Մարտական գործողությունները Կարս-Ալեքսանդրապոլ ուղղությամբ, Երևան, 2019, էջ 15, հետայսու՝ Վ.Հարությունյան, Մարտական գործողությունները... , А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне Первой мировой войны. Офицеры армии Республики Армения, Ереван, 2022, с.859, հետայսու՝ А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне...): Ազատվելուց հետո բնակվել է Թիֆլիսում: Մոսկվայի զինվորական Օկրուգի դատախազության որոշմամբ հետմահու արդարացվել է:

³⁵ **Հախվերդյան Հովհաննես Բարսեղի** (1873թ., Սանկտ-Պետերբուրգ – 1931թ., Մոսկվա): Ծագումով ազնվական, անկուսակցական, ցարական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ: Հայաստանի Հանրապետության առաջին Ռազմական նախարար, հետագայում՝ նաև ՀՀ զինված ուժերի հրամանատարի շտաբի պետ, Ռազմական նախարարի տեղակալ: Խորհրդային կարգերի հաստատվելուց հետո ձերբակալվել է, պահվել է Բաքվի և Մոսկվայի բանտերում: Ազատվել է 1921թ. ապրիլին, կարճ ժամանակով ծառայել է Կարմիր բանակում: Բնակվել է Լենինգրադում: 1923թ-ից կանգնած է եղել հատուկ հաշվառման: 1930թ. Լենինգրադյան այսպես կոչված «Վեննա» գործի շրջանակներում ձերբակալվել է խորհրդային հատուկ ծառայությունների կողմից և դատապարտվել է գնդակահարության: Հետմահու արդարացվել է 1989թ. (տե՛ս Վ.Հարությունյան, Մարտական գործողությունները..., էջ 67, А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне... էջ 234):

³⁶ **Միլիկյան Մովսես Բարսի** (1862թ., գ.Վարդաշեն, Նուխիի գավառ, Ռուսական կայսրություն – 1937թ., Երևան, ԽՍՀՄ) , ազգությամբ ուղի է, ցարական բանակի գեներալ-մայոր, հայկական բանակի գեներալ-լեյտենանտ, անկուսակցական, ՀՀ զինված ուժերում վարել է մի շարք բարձր հրամանատարական պաշտոններ, եղել է Մարդարապատի ռազմաճակատի ընդհանուր հրամանատարը, Ալեքսանդրապոլ-Կարս ուղղության ռազմաճակատի հրամանատարը: Հայաստանի խորհրդայնացումից հետո, տարբեր պատճառաբանություններով չորս անգամ ձերբակալվել է և ի վերջո՝ բոլշևիկյան «արդարադատության» համակարգում հայտնի «ետյակի» որոշմամբ 1937-ին գնդակահարվել: Հետմահու արդարացվել է 1987թ.: (տե՛ս Վ.Հարությունյան, Մարտական գործողությունները..., էջ 16, А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне... էջ 1050):

³⁷ **Խանքալամյան Գևորգ Եսայու** (1867թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն – 1937թ., Երևան, ԽՍՀՄ): Անկուսակցական, ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, եղել է բրիգադի հրամանատար, Դիլիջան-Իջևան ուղղության գորախմբի հրամանատար: Հայաստանի խորհրդայնացումից հետո կարճ ժամանակ ծառայել է Կարմիր բանակում, 1921թ. վերջերին ազատվել է զինվորական ծառայությունից: Հետագայում վարել է քաղաքացիական աննշան պաշտոններ և այդ աշխատանքից էլ ազատվել է 1923թ. օգոստոսի վերջերին: 1937թ. Բոլշևիկյան իշխանության որոշմամբ ձերբակալվել է և գնդակահարվել (տե՛ս А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне... էջ 1265):

են եղել երեք տասնամյակ զինվորական ծառայությունն անցկացնել Կովկասից դուրս: Հայաստանյան մյուս գեներալները (Փիրումով³⁸, Հոսեփյանց³⁹, Կազարով⁴⁰ և այլն) հայերենին տիրապետում էին:

³⁸ **Փիրումյան (Փիրումյանց) Դանիել-բեկ Աբխաղովի** (1861թ., Նախիջևանիկ, Ելիզավետպոլի նահանգ, Ռուսական կայսրություն – 1922թ., Երևան, Խորհրդային Հայաստան): Ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, գեներալ-լեյտենանտ: Մարդարապատի ճակատամարտում իրականացրել է ճակատի այդ հատվածի զորքերի հրամանատարությունը: Հետագայում Հայաստանի Հանրապետության բանակում զբաղեցրել է մի շարք հրամանատարական պաշտոններ: 1919թ. ապրիլից՝ Կարսի զինվորական պարետ: Իրեն ենթակա զորախմբի չկովելու պատճառով Կարսի բերդը թուրքերին հանձնելու ժամանակ գերի է ընկել: Գերությունից վերադառնալուց հետո արդեն խորհրդայնացված Հայաստանում հաշվառման է կանգնեցվել որպես պահեստագորային: Մահվան տարեթվերի և հանգամանքների վերաբերյալ տարբեր աղբյուրներում առկա են տարբեր հակասական տեղեկություններ: Գեներալ Փիրումյանի մահվան վերաբերյալ համապատասխան գրանցումը կատարվել է Երևանի սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցում (15 հոտեմբերի, 1922թ.): Սակայն չափաբերական մատյանի այն թերթը, որտեղ գրանցվում են մահացածի մահվան պատճառն ու հուղարկավորության վայրը, արխիվային փաստաթղթում բացակայում է: Խորհրդային տարիներին վարկած էր պտտվում, թե արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանցի ջանքերով գեներալը ժամանակին հուղարկավորվել է Էջմիածնի սբ Գայանե եկեղեցու բակում, սակայն գերեզմանն անհայտ էր: 1989թ. եկեղեցու հյուսիսային պատի մոտ հայտնվեց մի հուղարկավորություն, որտեղ տեղադրված էր գեներալ Փիրումյանի անվամբ շիրմաքար՝ մահվան սխալ տարեթվով (1921թ.): Ո՛չ գիտական, ո՛չ հասարակական մամուլում մինչ օրս չեն հրապարակվել նաև տեղեկություններ, որոնք համոզիչ կերպով հավաստեն, որ այդ վերաթաղված մասունքները, իրոք, գեներալ-լեյտենանտ Դանիել-բեկ Փիրումյանին են (տե՛ս Վ. Հարությունյան, Առաջին Հանրապետություն. Կարսի վերջնախաղը, Երևան, 2018, էջ 171, հետայսու՝ Վ. Հարությունյան, Կարսի վերջնախաղը...):

³⁹ **Հովսեփյան (Հովսեփյանց) Հարություն Գրիգորի** (1872թ., Դաղետ-Խաչեն, Թիֆլիսի նահանգ, Ռուսական կայսրություն – 1921թ., Ալավերդի, կամ Մանահին, Խորհրդային Հայաստան): Ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր: Հայաստանի Հանրապետության բանակում զբաղեցրել է տարբեր հրամանատարական պաշտոններ, 1919-ի ապրիլից՝ Կարսի մարզում տեղակայված հայկական զորաջոկատի՝ 2-րդ հետևակային բրիգադի հրամանատար: Հ. Հովսեփյանը Կարսի պարետ Դ. Փիրումյանի հետ միասին ի գորու չեղան իրենց ենթակա զորամասերը հասցնել և պահել պատշաճ մարտունակ վիճակում, անկարող եղան կանխել զորքերում բոլշևիկյան քայքայիչ քարոզչությունը, ինչն էլ հանգեցրեց զորամիավորման շարքերի բարոյալքմանը, զորքի հրաժարումը դիմադրել իրենից ամենին ոչ ուժեղ թշնամուն, և որպես արդյունք՝ Կարսի անփառունակ անկումն ու

44 քաղաքներից յուրաքանչյուրում “Միությունն” ուներ իր կոմիտեն: Հաջորդ տարի (1915թ.) և 1916թ. “քաղաքների համագումարները” սկսեցին ձեռք բերել քաղաքական երանգավորում և այդտեղ ես ներկայացնում եմ բոլորին, որոնց մասին կիսովի առաջիկայում: Այդպիսով, հայերն ունեին մեկ ռազմաճակատ, մեկ ոզի ու մեկ ուղղություն՝ լինել դաշնակիցների հետ և նրանց հաղթանակի միջոցով տեսնել սեփական իդեալների իրականացումը: Այդ հոգեբանության շրջանակներում էին ծնվում հայերի առաջին հույսերը: Այդ հոգեբանությունն այժմ ենթարկվում է կոշտ և միանգամայն արդարացի քննադատության: Բայց այն ժամանակ այդ մտտեցումը ոչ ոք չէր վիճարկում, չէր սատեցնում սեփական կասկածանքներով: Հակառակ տրամադրությունը բարձրանում էր , էներգիան էլ գնալով կուտակվում: Բոլորը կրկին սպասում էին ամպրոպի առաջին որոտներին *(ընդգծումը մերն է –Վ.Հ.)...*

ընդհանուր պարտություն պատերազմում: Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո՝ որպես բոլշևիկյան կարմիր զորաջոկատի հրամանատար մասնակցել է Լոռվա, ապա Վրաստանի խորհրդայնացմանը, ինչից հետո՝ Հայաստանում փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբության ճնշմանը, ինչի համար էլ արժանացել է Խորհրդային շքանշանի: Շատ կարճ ժամանակ՝ մինչ մահանալը, զբաղեցրել է Լոռու զինվորական կոմիսարիատի զինղեկի պաշտոնը (տե՛ս Վ.Հարությունյան, Մարտական գործողությունները..., էջ 26, 99, А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне... էջ 885):

⁴⁰ Ղազարյան Հովհաննես Գրիգորի (1866թ., Քութայիս, Ռուսական կայսրություն – 1923թ., Թիֆլիս, ԽՍՀՄ): Ցարական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր: 1918թ. մայիսին Բաքվի կոմունայի ենթակայության գորամիավորման հրամանատար: 1919թ. մայիսից ծառայել է Հայաստանի Հանրապետության բանակում, հրամանատարական պաշտոններ զբաղեցրել Զանգեզուրի զորաջոկատում: Կարսի անկումից օրեր առաջ նշանակվել է Կարսի ուղղությամբ գործող զորամիավորման հրամանատար, սակայն <<հասցրել է>> ընդամենը գերի ընկնել թուրքերի ձեռքը: Գերությունից վերադառնալուց հետո՝ ծայրահեղ չքավորության մեջ, բնակվել է Թիֆլիսում: Անկարող լինելով պայքարել կյանքի ծանր պայմաններին, 1923թ. Հովհաննես Ղազարյանը ինքնասպան է լինում՝ իրեն նետելով Կուր գետը Թիֆլիսի Միքայելյան կամրջից (տե՛ս Վ. Հարությունյան, Կարսի վերջնախաղը..., էջ 172, А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне... էջ 547):

1914 թ. հոկտեմբերյան մի օր, վաղ առավոտյան, մոտ ժամը 7-ին իմ առանձնասենյակ ներս վազեց հուզված Յակով Չավրիևը⁴¹ և հայտնեց, որ քաղաքում լուրեր են տարածվում, թե երեկ թուրքերը ռմբակոծել են Սև ծովի առափնյա քաղաքները՝ Թեոդոսիան և Նովոռոսիյսկը: Եվ հավելեց, որ լուրերը դեռևս «խուլ» են և անհրաժեշտ է դրանց հավաստիությունը ճշտել Պալատում և Շտաբում: Ես անհապաղ զեկուցեցի Շտաբ և այնտեղից «խիստ» խորհրդապահական տեղեկություն ստացա, որ լուրերը, ի-

⁴¹ **Չավրյան Հակոբ Քրիստափորի** (1866թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն - 1920թ., Մոսկվա, Խորհրդային Ռուսաստան), ազնվական, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայտնի բժիշկ, ՀՀԴ կուսակցության անդամ: 1892 թվականին ավարտել է Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան: Ուսանող տարիներից զբաղվել է հայ ժողովրդի ազատագրության հարցերով: 1902 թվականին աշխատանքի է անցել Բաքվում՝ որպես Բալախանիի շրջանի հիվանդանոցի գլխավոր բժիշկ, որտեղ էլ մտերմացել է Հովհաննես Քաջազնունու և Նիկոլ Դումանի հետ: Մեծ դժվարություններով բազմիցս անցել է Արևմտյան Հայաստան, Մուշում կարողացել է հիմնել հիվանդանոց, բուժօգնություն կազմակերպել ժողովրդի համար, քարոզել ազատագրական գաղափարներ: Հետապնդվելով թուրքական իշխանություններից, անցել է Եվրոպա, կատարել դիվանագիտական հանձնարարականներ: Բալկանյան պատերազմների ժամանակ (1912-1913) Փարիզում, Պետերբուրգում և Լոնդոնում փորձել է եվրոպական կառավարությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է հայկական կամավորական շարժմանը, կռվել Անդրանիկի ջոկատում: 1917 թվականին եղել է ռուսական զորքերի կողմից պատերազմի իրավունքով գրավված տարածքների (Վան, Խնուս, Էրզրում, Տրապիզոն) կոմիսար Ավերյանովի տեղակալը քաղաքացիական գծով: Լուծելով բուժական, վարչական, տնտեսական և պաշտպանական հարցեր, տեղում կազմակերպել է զինված խմբեր (ավելի քան 3-4 հազար մարդ): 1918թ. ամռանը (Լ. Նազարյանցի և **Ռ. Դարբինյանի** հետ) Մոսկվայում բանակցություններ է վարում Ռուսաստանի բոլշևիկյան կառավարության հետ՝ հայ-բոլշևիկյան համագործակցության շուրջ: Սակայն այդ օրերին Բաքվի կոմունան տապալվեց և դրա ամբողջ մեղավորությունը բոլշևիկները բարդեցին Դաշնակցության վրա: Խորհրդային Ռուսաստանում այդ կուսակցությունը հայտարարվեց օրենքից դուրս և թշնամի, իսկ Հ. Չավրյանն էլ, որպես այդ կուսակցության անվանի գործիչ, Մոսկվայում ներկայվում է և հարկադիր աշխատանքի նշանակվում ինֆեկցիոն հիվանդանոցում: Այստեղ էլ վարակվում է բժավոր տիֆով և կնքում իր մահկանացուն (տե՛ս Վ.Ն.Ղազախեցյան, Դաշնակցական պատանդները Խորհրդային Մոսկվայում, ՎԷՄ, 2 (46), 2014, էջ. 209-215):

րոք, ճիշտ են, սակայն պատերազմ դեռևս հայտարարված չէ: Անհրաժեշտ է դիմել բնակչությանը և հանդարտության կոչ անել: Ամբողջ օրն իմ առանձնասենյակը լցված էր մարդկանցով: Փոխարքան անընդհատ կապի մեջ էր Պետերբուրգի հետ: Զորքերին զորանոցներում մնալու հրաման էր իջեցվել:

Գիշերվա ժամը 12-ին ինձ իր մոտ հրավիրեց քաղաքացիական գծով փոխարքայի օգնական Պետերսոնը և ինձ փոխանցեց մատիտով գրված հետևյալ բովանդակությամբ գրությունը. “Քաղաքագլուխ Խատիսովին: Թուրքերը մեր դեմ ռազմական գործողություններ են սկսել: Ես հրամայել եմ մեր զորքերին հարձակվել բոլոր ուղղություններով: Կոմս Վորոնցով”: Ես վերադարձա քաղաքապետարան և հեռախոսով ինձ մոտ կանչեցի իմ աշխատակիցներին: Օրվա վերջում և ամբողջ գիշեր մենք քննարկում էինք այն բոլոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ էր իրականացնել դպրոցների, հյուրանոցների շենքերում լազարեթներ ծավալելու, բնակչությանը մթերքով անխափան ապահովելու համար: Քաղաքի գլխավոր հրապարակում նշանակեցինք աղոթքի ժամ: Հաջորդ առավոտվանից բոլորն արդեն զբաղված էին ընդհանուր աշխատանքով: Մեր կամավորական ջոկատները մեկնում էին ռուսական զորքերի հետ միասին: Թիկունքում կուտակված էներգիան ասես լայնորեն բացվեց: Աղոթքի հավաքվեց մոտ տասը հազարանոց ամբոխ՝ նաև իշխանությունը լրիվ կազմով, փոխարքայի գլխավորությամբ: Մի խոսքով, եկան այն բոլորը, ում կարող էր այդ պահին տալ Կովկասի մայրաքաղաքը: Հարթակի բարձունքից, Ռուսաստանի դրոշը ձեռքիս, ես ճառով դիմեցի ժողովրդին, կոչ անելով “բացել պողպատյա զսպանակի կուտակված էներգիան”: Եվ զսպանակը բացվեց: Հերոսական երթով զորքերն անցան սահմանը: Մեր կամավորական ջոկատները նրանց հետ էին: Գրավվեցին Բայազետը, Ալաշկերտի հովիտը, Քեփրի-Քյոյը: Գնալով, պատերազմը սաստկանում էր: **Ռուսական զորքերը առաջ էին շարժվում, Թուրքիան նահանջում էր: Երեք օր անց փոխարքան ինձ իր մոտ հրավիրեց և ասաց, որ ինքը շատ գոհ է հայկական ջոկատներից, Թիֆլիսի բնակչության տրամադրություններից և, որ հայերի ազատագրման օրը մոտենում է: Թվում էր, թե**

փոխադարձ վստահությունը գնալով աճում է (*ընդգծումը մերն է –Վ.Հ.*):
Ռազմաճակատից ստացվում էին փայլուն զեկույցներ:

Անցնում էր արդեն նոյեմբերը: Սկսեցին վիրավորներ բերել: Մի քանի օր անց փոխարքան կրկին ինձ հրավիրեց իր մոտ և հաղորդեց, որ Թիֆլիս և Կովկասյան ռազմաճակատ է գալիս կայսր Նիկոլայ II-ը: Նա ասեց. «Ահա, կոմս Վորոնցով, շուտով հրաշալի առիթ է ընձեռվում ցույց տալ Ռուսական կենտրոնական իշխանությանը, որ թիկունքի կազմակերպման և ռազմաճակատին օգնելու հարցերում Կովկասը հետ չի մնում իր ռուսաստանյան համաքաղաքացիներից և ցարին ցուցադրել կովկասյան բնակչության իրական զգացումները: Ես խնդրել եմ իմ օգնականներին՝ գեներալ Միշլանսկուն և հոֆմայստեր Պետերսոնին քննարկել Ձեր և ազնվականության առաջնորդ իշխան Աբխազի⁴² հետ ցարի՝ Թիֆլիսում անցկացվելիք ժամանակի հետ կապված հարցերը»: Երեկոյան կայացավ այդ խորհրդակցությունը: Ինձ հարցրեցին, թե որպես քաղաքագլուխ և ճողովրդին մոտ կանգնած ուն հեղափոխական կուսակցությունների տրամադրություններին ծանոթ անձնավորություն, կարող եմ ասել, թե արդյոք վտանգավոր չէ՞ ժողովրդի զանգվածներին շատ մոտ

⁴² Իշխան **Աբխազի Կոնստանտին Նիկոլայի** (1867թ., Սոնախի գավառ, Թիֆլիսի նահանգ, Ռուսական կայսրություն-1923թ., Թիֆլիս, ԽՍՀՄ): Տոհմիկ ազնվական, Թիֆլիսի նահանգի ազնվականության առաջնորդ: Վրացական պետական և քաղաքական, ռազմական գործիչ: Ցարական բանակի և Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության բանակի գեներալ-մայոր: Վրաստանի Ազգային Ժողովրդավարական կուսակցության հիմնադիրներից մեկը, 1921-ից՝ նախագահը: Ստորագրել է Վրաստանի Անկախության Հռչակագիրը (26 մայիսի, 1918թ.), 1917-1918թթ՝ Վրաստանի Ազգային խորհրդի անդամ: Վրաստանի խորհրդայնացումից և երկիրը Խորհրդային Ռուսաստանին բռնակցելուց հետո անդամագրվել է «Վրաստանի անկախության կոմիտեին», ղեկավարել դրա Ռազմական կենտրոնը, 1921-1923թթ. կազմակերպել և ղեկավարել է հակախորհրդային պարտիզանական ջոկատներ Վրաստանում: 1923թ. Մարտին, Ռազմական կենտրոնի մյուս անդամների հետ, ձերբակալվել է խորհրդային Արտակարգ Հանձնաժողովի կողմից (ՉեԿա) և մայիսին գնդակահարվել: Սերունդներին է հասել իշխան Աբխազի խոսքերը գնդակահարությունից առաջ. «Ես հպարտ եմ, որ զոհվում եմ հանուն Վրաստանի անկախության: Իմ մահը հաղթանակ կբերի Վրաստանին» (տե՛ս Ministry of Internal Affairs of Georgia (April 2008), *The Archival Bulletin*, #1, p. 14):

թողնել ցարին, և, ընդհանրապես, կարող եմ ինձ վրա պատասխանատվություն վերցնել, որ հեղափոխական կուսակցությունները ցարի վրա մահափորձ չեն կազմակերպի: Որպեսզի ստույգ նկարագրեմ այդօրվա տրամադրությունները, ես պետք է ասեմ, որ այդ հարցին առանց տատանումների պատասխանեցի հետևյալը. “Որքան որ ես հասկանում եմ հասարակական տրամադրությունը, մահափորձից վախենալու որևիցե հիմքեր չկան և ավել լավ կլինի, եթե ցարը լինի ժողովրդի միջավայրում: Այդպես էլ արեցինք: Այն չորս օրվա ընթացքում, երբ մենք շրջում էինք քաղաքով՝ այդ թվում նաև արվարձաններով, այցելում հիվանդանոցներ, ամեն ինչ ընթացավ միանգամայն բարեհաջող: Որպես կանխարգելիչ միջոց, ինչը շատ էր կիրառվում նախորդ տարիներին, չէր ձեռքակալվել և ոչ մի քաղաքական գործիչ: Պատերազմը ձևավորել էր հատուկ հոգեբանություն և վարչակարգի դեմ պայքարն այդ պահին առաջնահերթ չէր և ոչ մեկի համար: Ես ուղեկցում էի ցարին քաղաքային հաստատություններ այցելելու ժամանակ և բացատրություններ էի տալիս: Իմ հիշողության մեջ հատկապես տպավորվել է այն պատկերը, թե ինչպես ես ցարին ներկայացրի մեր հայ հերոս, հեղափոխական գործիչ, կամավորական ջոկատի հրամանատար Դրոյին: Ցարի Թիֆլիս գալուց մեկ շաբաթ առաջ Դրոն Բայազետի մոտ կրծքից գնդակով վիրավորում էր ստացել: Մենք նրան տեղավորեցինք Արամյանցի հիվանդանոցի մի հատուկ սենյակում: Երբ ցարը ծանոթանում էր հիվանդանոցին, ես, որպեսզի առավել ընդգծած լինեմ հայ կամավորականների դերը ռազմական գործողություններում, նրան տեղեկացրի, որ հատուկ սենյակում պառկած է կամավորական ջոկատի վիրավոր հրամանատարը և կցանկանա՞ր արդյոք ցարը տեսակցել նրան: Ցարը համաձայնություն տվեց: Մենք սենյակ մտանք երեքով. Ցարը, ռազմաճակատի շտաբի պետ գեներալ Յուդենիչը և ես: Յուդենիչը Դրոյին բնութագրեց որպես փայլուն ռազմական մի տաղանդ: Ցարը թեքվեց դեպի Դրոն և հարցրեց. “Որտե՞ղ եք Դուք ստացել այդպիսի ռազմական դաստիարակություն”: Դրոն պատասխանեց. “Հեղափոխական աշխատանքում, Ձերդ Գերագանցություն”: Ցարը շփոթվեց: Դրոն, հավանաբար, նկատելով ցարի շփոտվածությունը, հավելեց. “Մեր աշխատանքն առնչվում էր Թուրքիայի հետ”: Ցարը հանդարտվեց և Դրոյի

շապիկին կայրեց Գեորգիկյան խաչը: Այդ նույն օրը քաղաքային իշխանությունները ցարին ողջունելու համար կազմակերպեցին ընդունելություն: Ներկա էին մոտ 800 հրավիրվածներ: Այդ հանդիպմանը ես ցարին ներկայացրի Դումայի բոլոր պատգամավորներին, որոնց ճնշող մեծամասնությունը հայեր էին: Ցարը մանրամասնորեն հարցնում էր նրանց ծառայության, գործերի ընթացքի, իրենց դրության մասին: Ինչպես հետո ինձ ասաց կոմս Վորոնցովը, ցարն իրեն ասել էր, թե ինքը տեսնում է, որ հայերը տարբեր բնագավառներում շատ ջանք են թափել երկրամասի մշակութային և արդյունաբերական զարգացման համար: Գիշերն էլ մի մեծաքանակ ամբոխ՝ մոտ 20.000 մարդ, ոստիկանապետ Աբելյանի առաջնորդությամբ, մոտեցան Պալատին և սկսեցին ինձ խնդրել, որպեսզի ժողովրդի մի պատվիրակություն ուղեկցեմ ցարի մոտ: Պատվիրակության կազմում էին նաև մի քանի կինտոներ, որոնք եկել էին թաբաղները ձեռքներին՝ մեջքներին խնձորներով՝ հսկա բուրգեր շարած և ցանկանում էին այդ թաբաղները ձեռքներին ցարի առջև լեզգինկա պարել: Պահակախմբի պետը և ցարի շքախումբը այս անգամ էլ բավականին անհանգստացան: Նրանք վախեցած նայում էին թաբաղներում շարած խնձորե բուրգերին և հարցրեցին, թե արդյոք ես վստահ եմ, որ խնձորաբուրգի տակ թաքնված չէ ումբ, իսկ խնձորներն էլ լցոնած չեն պայթուցիկով: Ես այս անգամ էլ վճռականություն ցուցաբերեցի և հավաստիացրեցի նրանց, որ խնձորներն անմեղ հասկությամբ են: Ժողովրդից մոտ հարյուր հոգի ներս մտան Պալատ, պարեցին իրենց պարը և ամեն ինչ ունեցավ բարեհաջող ավարտ: Այս ամենը ցույց է տալիս, թե ինչպիսին էր ժողովրդի տրամադրությունը:

Այդ նույն օրերին Կաթողիկոսը եկավ ցարի մոտ և խնդրեց նրան հոգ տանել թրքահայության ապագայի մասին: Ցարը պատասխանեց նրան, որ հայերին սպասում է փայլուն ապագա (ընդգծումը մերն է-Վ.Հ.):

Իշխան Աբխազին՝ վրացական ազնվականության առաջնորդը, ցարի պատվին նույնպես ընդունելություն կազմակերպեց: Իշխանը շատ խելացի և լուրջ անձնավորություն էր: Վերջերս (23 մայիս, 1923 թ.) Թիֆլիսում նա գնդակահարվեց բոլշևիկների կողմից: Վրացական կողմի ընդունելությունն ավելի զուսպ էր: Ընդունելությանը մասնակցել էին գլխա-

վորապես վրաց ազնվականությունն ու երևելիները: Ցարի ռազմաճակատ մեկնելուց և Ռուսաստան վերադառնալուց հետո ռազմական հաջողությունը երես թեքեց ռուսական բանակից: Դեկտեմբերին, Էնվեր փաշայի հրամանատարությամբ, երեք թուրքական կորպուս անցան սահմանը, գրավեցին Արդահանը, իրականացրին շրջանցում և Սարիղամիշում մտադրված էին շրջապատել ու գերեվարել մի ամբողջ ռուսական բանակ: Մեզ էր սպառնում: Հենց որ Թիֆլիսում լուրեր ստացվեցին, թե թուրքերը վերցրել են Արդահանը և շարժվում են դեպի Ախալքալաք և այնտեղից էլ սպառնում են Թիֆլիսին, Թիֆլիսում սկսվեց մի սոսկալի խուճապ: Բոլորն սկսեցին փախչել դեպի Հյուսիսային Կովկաս: Այդ օրերին ես պարզեցի շատ գործիչների գինն ու արժեքը: Նրանք բոլորը ողջ են և չեն ցանկանում բերել նրանց անունները, սակայն նշեմ, որ փախուստի դիմելիս նրանք բախտի քմհաճույքին էին թողել հասարակական հաստատություններն ու հսկա գումարներ: Հիշում եմ, որ գիշերը ժամը 1-ին ինձ Կովկասյան բանակի շտաբ հրավիրեց գեներալ-կվարտիրմայստեր (թիկունքի պետը) գեներալ Վեսելովգորովը և գլուխը կորցրած, խուճապահար, խնդրում էր ինձ մինչ առավոտ հավաքել 10.000 կամավոր, որոնց ինքը կզինի: Մյուս 10.000-ը պետք է Թիֆլիսի շուրջը խրամատներ փորեին: Ես թերահավատորեն մոտեցա այդ միջոցներին, բայց և այնպես, հավաքեցի գիշերն իմ ծառայողներին և հրահանգեցի մարդ հավաքել: Առավոտյան, սակայն, այդ նախագիծը մի կողմ դրվեց, իսկ քանի որ հետո թուրքերին ջախջախեցին, ամեն ինչ հանդարտվեց:

Սակայն այդ օրերին կոմս Վորոնցովի ծառայողները կարողացան նրան օգտագործել: Նրանք կոմսին ստորագրել տվեցին Թիֆլիսի տարահանման մասին հրաման և, համաձայն ռուսական օրենքների, ամեն մեկը Թիֆլիսից մեկնելու համար ստացավ 2 ամսվա աշխատավարձ: Դա իրականացվեց 2 ժամվա ընթացքում և պետական գանձարանին մեկ միլիոն ռուբլու (ոսկով) վնաս պատճառվեց: Դրանցից և ոչ ոք Թիֆլիսից չմեկնեց և փողերն էլ չվերադարձրեց: Այդպես էին Ռուսաստանում վերաբերվում գանձարանի գումարներին: Փոխարքային վախեցնում էին և խորհուրդ էին տալիս թողնել Թիֆլիսը: Նա իր որդուն գիշերը ուղարկեց

հետախուզության, որը վերադարձավ, հանգստացրեց հորը, և կոմսը տեղից չշարժվեց:

Թուրքերին ջախջախելուց հետո սկսվեց բժավոր տիֆի համաճարակ, որն իրենց հետ բերեցին թուրք գերիները: Թուրքերին և քրդերին նստեցնում էին վագոնները, կնքում դրանք և Թիֆլիսում իմ ներկայությամբ վագոնները բացում: Ես անձամբ եմ տեսել, թե ինչպես են այդ վագոններից, ուր խցկված էր 50 գերի, դուրս էին բերում 10-12 դիակ: Այդ դեպքերի մասին տեղեկությունները տարածվեցին Թիֆլիսի մահմեդականների շրջանում: Նրանց մոտ հուզումներ նկատվեցին և, որպեսզի նրանց հանգստացնեն, վագոններն արդեն սկսեցին անցնել Թիֆլիսից՝ դեպի Սիբիրի ուղղությամբ: Պետք է ասել, որ այդ օրերին մահմեդականների նկատմամբ, հատկապես Կարսի մարզում, կիրառվում էին բավականին կոշտ միջոցներ: Պատճառն այն էր, որ մահմեդականները մեծ ուրախությամբ պատրաստվում էին դիմավորել թուրքական զորքի գալստյանը: **Թաթարները հայերի նկատմամբ թշնամանք էին պահել, քանզի վերջիններիս համարում էին ռուսների կողմնակից** (ընդգծումը մերն է-Վ.Ն.):

Կոմս Վորոնցովի կինը ցուցադրաբար շատ ջերմ ընդունում էր եպիսկոպոս Մեսրոպին, սակայն իրեն ընդգծված սառն էր պահում իշխան Աբխազիի հետ: Այդ մասին ինձ հետ, որպես գործընկեր, քանիցս կիսվել է հենց իշխանը: Բսկ թաթարների ներկայացուցիչ պր-ն Ասադուլանին իմ ներկայությամբ կոմսուհին հարկ չհամարեց անգամ ձեռք մեկնել:

Այն ամենը, ինչ տեղի ունեցավ 1915թ., իր ծիլերն ու պտուղները տվեց 1917-1918թթ. հայ-թաթարական բախումների և պատերազմների տեսքով: Ես հիշում եմ, թե ինչպես փախստականների օգնության կոմիտեի նիստում մահմեդական բարեգործական միության ներկայացուցիչ պր-ն Ասադուլանը այլուր խնդրեց թաթար փախստականների համար: Կոմսուհին, ով կոմիտեի նախագահն էր, շատ կտրուկ հայտարարեց. «Թաթարների մեջ փախստականներ չկան, նրանց մեջ կան դավաճաններ»: Եվ թաթար փախստականները այլուր չստացան: Թաթարները լռում էին, սակայն կուտակում էին ատելությունն ու թշնամանքը: Այդպի-

սին էր իրադրությունը թիկունքում: Բանակի համար հանգանակություններ էին արվում, ռազմաճակատ նվերներ էին ուղարկվում: Իսկ ռազմաճակատում ռուսական զորքերը գրավել էին Մուշը, Վանը, Բիթլիսը...

1915., երբ Վանը պաշարված էր և Արամը իրականացնում էր նրա հերոսական ինքնապաշտպանությունը, ինձ մոտ եկավ մի գյուղացի: Նրա շապիկում կարած էս Արամից մի գրություն գտա, որտեղ նա խնդրում էր օգնել իրեն, ինչի համար անհրաժեշտ էր խնդրելով համոզել փոխարքային, որպեսզի նա հրահանգի զորախումբ շարժել դեպի Վան: Ես գրությունը փոխանցեցի անձամբ փոխարքային և այն ունեցավ հետևանքներ. փոխարքան հեռագրել էր, որ անհրաժեշտ է շտապել դեպի Վան⁴³: Այդպես էր անցնում 1915 թվականը: Թիֆլիսում արդեն ուրվագծվում էր ազատագրված Արևմտյան Հայաստանը: **Երբ 1915թ. վերջերին ռուսական զորքն ու կամավորական ջոկատները գրավեցին հսկայական տարածքներ, իշխանությունների մոտ միտք ծագեց Թուրքիայի հայությանը դիմել մի կոչով, որտեղ շեշտվի, որ հայկական վիլայեթներին ազատություն է տրվում: Ինձ ու [...] հրավիրեցին փոխարքայի մոտ այդ կոչի նախագիծը կազմելու համար: Փոխարքան նախագծին իր հավանությունը տվեց, սակայն այդ կոչը առարկությունների հանդիպեց զուտ ռուսազգայնական շրջանակներում: Այդտեղ նախատեսում էին իրականացնել շատ կտրուկ շրջադարձ, որը հայերի օգտին չէր և դեմ էր հայկական գործոնի ազդեցության ընդլայնմանը(ընդգծումը մերն է-Վ.Հ.):** Որպեսզի կարողանանք հասկանալ այդ շրջադարձը, անհրաժեշտ է հիշել որոշ դրվագներ այդ օրերի համառուսաստանյան կյանքից: Նիկոլայ II-ի կնոջ, թագուհի Ալեքսանդրա Ֆյոդորովնայի նամակներից (2 հատոր, հրատարակվել են՝ 1921-1922 թթ.) պարզ երևում է, որ նախապատրասվում էր Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլանիչին զրկել Գերագույն Գլխավոր Հրամա-

⁴³ Վանի ուղղությամբ հարձակումը իրականացնելու նպատակով 1915 թ. Առաջին ամիսներին շատ շտապ կազմավորվեց Արարատյան զորաջոկատ գեներալ Նիկոլանի հրամանատարությամբ: Ձորաջոկատի կազմում էին նաև 2-րդ, 3-րդ և 4-րդ հայկական կամավորական գնդերը՝ Դրոյի, Համազասպի և Քեռու հրամանատարությամբ: Արդեն 1915թ. ապրիլի վերջերին զորաջոկատը տեղակայված էր Բայազետի շրջանի Դիզա գյուղում, որտեղից էլ շարժվեց դեպի Վան: Տե՛ս Փ.И.Елисеев, Казаки на Кавказском фронте 1914-1917, стр.85, Москва, Военное издательство, 2001.

նատարի կոչումից, պաշտոնանկ անել Կովկասի փոխարքա կոմս Վորոնցովին : Նիկոլայ II ցարն ինքն իր վրա էր վերցնելու Բանակի Գերագույն Առաջնորդի պարտականությունները: Ցարը զգուշանում և վախենում էր Նիկոլայ Նիկոլանիչի ունեցած ազդեցությունից, Ռասպուտինն էլ իր հերթին ցարին տրամադրում էր Մեծ Իշխանի դեմ: Եվ ցարը որոշեց ասպարեզից հեռացնել Նիկոլայ Նիկոլանիչին: Բայց ո՞ւր և ինչպե՞ս: Եվ ահա որոշվեց նրան դարձնել Կովկասի փոխարքա: Դրա համար պետք էր նախ հեռացնել պաշտոնից կոմս Վորոնցովին: Ահա թե ինչպես դատելի ունեցավ. 1915թ. սեպտեմբերին փոխարքայի օգնական Պետերսոնը ինձ հաղորդեց, որ կոմսը ցանկանում է ինձ տեսնել: Կոմսը վատառողջ էր և գտնվում էր Բորժում իր ամառանոցում: Ես մեկնեցի Բորժում: Տեսակցեցի կոմսին, որն իր առանձնասենյակում միայնակ էր՝ գրառումներով լի թղթակույթի առաջ: Ինքնազգացողությունը լավ չէր: Նա գունատ էր, հագում էր: Կոմսուհին ինձ ասեց, ար կոմսն ամբողջ գիշեր ինչ-որ բան էր գրում: Կոմսը բարևեց ինձ և խոսեց. “Տասը տարի ես գիտեմ Ձեզ: Տասը տարի Դուք անկեղծորեն արտահայտել եք ինձ մոտ ժողովրդի ցանկությունները և ես արել եմ այն ամենը, ինչ կարողացել եմ: Ես հեռանում եմ փոխարքայի պաշտոնից: Ես սիրում էի Կովկասը և վստահել եմ ժողովրդին: Ես ցանկանում եմ, որ Ձեր միջոցով հետագայում իմանան, թե ինչու այս ամենը տեղի է ունեցել և ինչպես: Ես Ձեզ կընթերցեմ ցարի նամակը, որ բերել է գեներալ Նախիջևանսկին”: Փոխարքան ընթերցեց ցարի նամակը, որտեղ վերջինս գրում էր, որ “Ռուսաստանի գերագույն շահերը պահանջում են, որպեսզի ինքն իր վրա վերցնի Բանակի Գերագույն հրամանատարի պարտականությունները: Բայց դա պետք է անել այնպես, որպեսզի ստացվի ճարպիկ և ոչ վիրավորական: Իսկ այդ ամենն իրականացնելու համար ինձ կարող է օգնել միայն ու միայն Վորոնցովը: Դուք, -գրում էր ցարը,- ծառայել եք իմ պապին, ծառայել եք իմ հորը: Ծառայեցեք նաև Ռուսաստանին և ինձ: Ազատեցեք փոխարքայի տեղը և այդ տեղը ես կտամ Նիկոլայ Նիկոլանիչին”: Կոմսն ընթերցեց ինձ ցարի նամակը և ասաց. “Ես պատասխանել եմ ցարին: Ես Ձեզ կընթերցեմ իմ պատասխանը: Պատասխանը խորը մտածված էր և չափազանց խիզախ:

Կոմս Վորոնցովը ցարին գրում էր, որ ինքը կկատարի ցարի ցանկությունը, սակայն իր պարտքն է համարում ասել ցարին, որ իրեն տանում են դեպի իր, իր դինաստիայի և Ռուսաստանի խորտակումը: Վորոնցովը գրում էր, որ Ռուսաստանին անհրաժեշտ է ազատություն, որ ժողովուրդը աճել, դուրս է եկել խնամքի տակից և որ ոչ թե Ռասպուտինն ու վարչակազմն են օգնելու ցարին, այլ՝ հասարակությունն ու ժողովուրդը: Վորոնցովը հորդորում էր ցարին վստահել ժողովրդին և նրան տալ իրական Սահմանադրություն: Վորոնցովն ընթերցեց ցարին հասցեագրված այդ նամակը և ասաց. “Երբ կգա պահը, Դուք կարող եք հրապարակել այն ամենը, ինչը որ այսօր լսեցիք: Ես կմեկնեմ, սակայն կասեմ Նիկոլայ Նիկոլաևիչին, որպեսզի նա Ձեզ անվերապահորեն հավատա”:

Ես մեկնեցի Բորժոմից: Երբ մեկնում էի, տեղեկացա, որ կոմսուհին՝ այդ մեծ կինը չի ցանկացել տեսնել խան Նախիջևանսկուն և դուրս չի եկել նրան ընդառաջ: Իսկ Նախիջևանսկու համհարզ Չերմոնը, որը հետագայում դարձավ Լեոնական Հանրապետության կառավարության նախագահ, հետագայում ինձ պատմեց, որ այդ օրը խան Նախիջևանսկին բավականին տուժել է անուշադրության մատված լինելու պատճառով: Իսկ անձամբ ինձ կոմսուհին ասաց. “Ինչպիսի անտակտություն. նման նամակն ուղարկել մահմեդականի հետ”:

Որպեսզի հասկանալի լինի, թե ինչպես էր վերաբերվում փոխարքան ցարական մինիստրներին, ես հիշեցնեմ մի դրվագ. երբ ես վերադարձա Պետերբուրգից և կոմսին փոխանցեցի իմ տպավորությունները խիստ հետադիմական լուսավորության մինիստր Կասսայի վերաբերյալ, կոմսն ասաց. “ Դե, ինչ ասես: Դրանք ավագակներ են մեծ ճանապարհից”:

Կոմս Վորոնցովը հեռացավ: Վրացիները ցուցադրաբար անտեսեցին նրան: Թաթարները ճանապարհեցին շատ սառը:

Կոմսին փոխարինեց նոր փոխարքան՝ Նիկոլայ Նիկոլաևիչը: Փոխվեց ռազմական գծով օգնականը՝ հայտնվեց գեներալ Յանուշկևիչը: Նրան հետագայում սպանեց իրեն ձերբակալող բոլշևիկ զինվորը: Քաղաքացիական գծով օգնական նշանակվեց գեներալ Օռլովը:

Կովկասում ռուսական նոր իշխանության հաստատումից հետո, երբ նվաճվեց Թրքահայաստանը և ընկավ Էրզրումը, 1916թ. կեսերից շրջադարձ սկսվեց Թուրքիայում Հայկական հարցի նկատմամբ և, առհասարակ, հայերի հանդեպ դրսևորվող ամբողջ վերաբերմունքի մեջ (*ընդգծումը մերն է Վ.Հ.*): Այդ շրջադարձը միանգամից չսկսվեց: 1916թ. գարնանը հայերը դա դեռևս չէին զգում: Էրզրումի գրավումից հետո Թիֆլիսի գլխավոր հրապարակում կայացավ աղոթք-մաղթանք: Անհավատալի քանակությամբ մարդ էր հավաքվել: Ներկա էր անձամբ Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչը: Հայերը ցնծության մեջ էին, վրացիները՝ զուսպ: Թաթարները լռում էին:

Երբ ռուսական զորքերը գրավեցին Էրզրումը, Տրապիզոնը և այլ վայրեր, թվում էր, թե հայկական հարցը Թուրքիայում մոտենում է իր հանգուցալուծմանը (*ընդգծումը մերն է Վ.Հ.*): Գարնանը Մոսկվայում կայացավ ամբողջ Ռուսաստանի քաղաքային գործիչների համագումարը: Ես Կովկասյան քաղաքների ներկայացուցիչն էի: Այդ կարգավիճակում ես զեկուցեցի Կովկասյան քաղաքներում վիրավորների խնամքին ուղղված գործունեության մասին և անցա Կովկասյան կյանքի քաղաքական կողմին: Իմ հիմնական միտքը Կովկասի և Ռուսաստանի անքակտելիության մասին էր: Ես խոսում էի շատ հզոր և եռանդուն: Նախագահում էր Մոսկվայի քաղաքագլուխ Չելնոկովը, ներկա էր մոտ 800 մարդ: Իմ ելույթն ընդունվեց պատվազուրկ: Բոլորը կանգնեցին: Ինչպես գրում էր “Русское Слово” թերթը, դահլիճը դրդում էր ծափողոյններից: Ծափահարում էին իմ այն հայտարարությանը, որ Կովկասում բացակայում է անջատողականությունը: Մյուս օրը Մոսկվայի բոլոր թերթերը հողվածներ նվիրեցին իմ այդ ելույթին: Հաջորդ օրը այդ նույն թեմայով ես հրապարակային դասախոսություն կարդացի և կրկին՝ հաջողություն: Ես պահպանել եմ մի ամբողջ ալբոմ ռուսական թերթերի հողվածների, որոնցում առկա են բազմաթիվ հիացական արձագանքներ իմ այդ ճառի վերաբերյալ: Մոսկվայի քաղաքագլուխն էլ ինձ մի գավաթ նվիրեց: Կովկասից հետևեց համաձայնության արձագանքը. Ալեքսանդրապոլի, Վլադիկավկազի, Էրիվանի քաղաքային Դումաներն ինձ ուղարկեցին ողջույնի հեռագրեր: Այնպես որ, միանգամայն ընդունելի էր դարձել հետևյալ հաղթանակող գաղափարը. Թուրքա-

հայաստանի ազատագրում և Կովկասի սերտ համաձուլումը մնացյալ Ռուսաստանի հետ: Ինձ հրավիրեցին այդ ելույթով հանդես գալ Ռուսաստանի տարբեր քաղաքներում, բայց զբաղվածության պատճառով դա չիրականացվեց և ես վերադարձա Թիֆլիս իմ գործերին:

1916թ. ամռանը, երբ ես վերադարձա Թիֆլիս, իր ողջ սրությամբ կանգնած էր հայ փախստականների հարցը: **Ռուսական զորքի մշտական հարձակումներն ու նահանջները ստիպում էին Վանի, Ալաշկերտի տարաբախտ բնակիչներին տասնյակ հազարներով հեռանալ Թուրքիայից և հետո նորից վերադառնալ այդտեղ (ընդգծումը մերն է-Վ.Հ.):**

Ամառվա սաստիկ շոգեր էին: Ես մեկնեցի Էրիվան: Սկսվել էր տիֆը: Մարդիկ մահանում էին հարյուրներով: Նույնիսկ հուղարկավորելու տեղ չկար: Ես եկա Էջմիածին: Ես երբեք իմ կյանքում չեմ մոռանա այն, ինչ տեսել եմ այնտեղ: Վանքի կողքի պուրակում, լճակի ափին հավաքվել էին մոտ 15.000 փախստականներ. գրեթե բոլորը մերկ ու հիվանդ, նրանք թավալվում էին սեփական արտաթորանքի մեջ, թառանչում էին ու մեռնում: Նրանց օգնող բժիշկների մեջ էր Հայաստանի ապագա վարչապետ Համո Օհանջանյանը: Մահացածներին թաղող չկար: Դիզենտերիայից և խոլերայից ամիս ու կես ժամանակահատվածում մահացել էր 8.000 մարդ: Իսկ դիմացը՝ հանդարտ ու վեհապանծ, հավերժ ձյունածածկ Արարատը ասես միտք էր անում: Այդպես ալիք ալիքի հետևից Թուրքիայից առհուսում էր փախստականների զանգվածը: **Ռուսական զորքի ամեն մի նահանջ որպես հետևանք, առաջ էր բերում տասնյակ հազարավոր փախստականների մի նոր ալիք (ընդգծումը մերն է-Վ.Հ.):** Փախստականների զանգվածները գալիս ու գալիս էին դեպի Ռուսաստանի սահման, դեպի Ռուսահայաստան: Մենք արդեն տեղյակ էինք կոտորածների սարսափներից: Եվրոպայում սաստիկ պատերազմ էր և գաղթականության այդ ալիքը Կովկասում էր հավաքել մոտ 350.000 հայ փախստականներ Թուրքիայից: 1916թ. աշնանն արդեն թվում էր, թե գրավված վիլայեթներում արդեն հաստատվել էր կայուն ռուսական իշխանություն: Բայց միաժամանակ աճում էին նաև հայերի հանդեպ անբարյացկամ վերաբերմունքի դրսևորման նշանները:

Այն հիացական գովեստների փոխարեն, որ 1914-1915 թթ. շոայրորեն ուղղվում էին հայկական կամավորական ջոկատներին, սկսեցին հնչել քննադատական կարծիքներ: Ինձ հրավիրեցին խորհրդակցության գեներալ Յանուշկևիչի մոտ, որտեղ ներկա 8 գեներալները զեկուցում էին, որ հայազգի զինվորները դասալիքներ են, խուսափում են ծառայությունից, դիմում են ինքնավնասման: Նշվեց նաև դասալքության պատճառով մի քանի հայերի նկատմամբ մահապատիժ իրականացնելու մասին: Ռազմաճակատ ուղարկվեց հանձնաժողով՝ եպիսկոպոս Մեսրոպյն ու ... : Տրամադրվածությունն ընդդեմ հայկական կամավորական ջոկատների աճում էր: Նրանց ենթարկեցին ընդհանուր հրամանատարության, տեղափոխեցին թիկունք վերաձևավորման և վերածեցին հրաձգային գումարտակների: Նոր կամավորական խմբերի ձևավորումն արգելեցին: Հայերի ձեռքից վերցրեցին նոր տեսակի հրացանները և փոխարենը նրանց սկսեցին զինել հին “բերդանկա” տեսակի հրացաններով (*ընդգծումը մերն է՝ Վ.Հ.*):

Այդ բոլոր տեղեկությունները գնում էին ու հասնում հասարակությանն ու ժողովրդին: Սկզբից դա առաջ էր բերում տարակուսանք, բայց հետագայում՝ արդեն գրգռվածություն, զայրույթ ու վրդովմունք: Ես բողոքով գնացի փոխարքայի մոտ⁴⁴: Նա ամեն ինչ “շուտ տվեց” Ջորակայանի վրա: Ազգային բյուրոն այդ հարցի վերաբերյալ իմ առջև իր բողոքը ներկայացրեց, իսկ իշխանություններն ամեն ձևերով խույս էին տալիս հարցի քննարկումից: Այդ ամենին զուգահեռ, գեներալ Պեշկովի գլխավորած գրավյալ տարածքների Քաղաքացիական Կառավարչությունում բացահայտորեն անտեսում էին հայկական շահերը: Իրենց բնակավայր վերադարձած հայ փախստականներին թույլ չէր տրվում տեղավորվել իրենց հողերի վրա: Վերադարձած հայերից սկսեցին ինչ-ինչ փաստաթղթեր պահանջել: Սկսեց շրջանառվել “Եփրաթի կազակություն” հիմնելու գաղափարը: Այն է՝ Հյուսիսային Կովկասից 6000 կազակական ընտանիք-

⁴⁴ Տե՛ս օրինակ՝ Докладная записка епископа Мерона (*Месропа*- Վ.Հ.), Хатисова и Арутюнова гр. Воронцову-Дашкову о неправильных действиях русского командования в Армении (ГАРФ, ф.579, оп.1, д. 1960).

ներ բերել և վերաբնակեցնել Արևմտյան Հայաստանում: *(ընդգծումը մերն է-Վ.Հ.):*

Եկան մռայլ օրեր: Ես գգում էի, որ ռուսական իշխանությունը գնում է դեպի ինչ-որ անդունդ: Թվում էր, թե Կենտրոնում, Մոսկվայում, Պետերբուրգում գահի շուրջ մի բաքոսատոն է ընթանում: Ես շատ կհեռանայի իմ բուն թեմայից, եթե սկսեի մանրամասնորեն նկարագրել այն ամենը, ինչ տեղի էր ունենում այդ նախահեղափոխական օրերին: Երբ բանակը մնաց առանց արկերի և սննդի, երբ գնացքներն այլևս դադարեցին շարժվել չվացուցակով, երբ արքունիքում հայտնվեցին Ռասպուտինի՝ Ռուսաստանի այդ անթագակիր թագավորի դրածոները, երբ վերջապես բոլորը հասկացան, որ Ռուսաստանը գնում է դեպի իր խորտակումը: Այդ ժամանակ Կովկասում սկսվեց հետապնդվել ու հալածվել ոչ ռուսական ամեն բանը: Հայերից սկսեցին խուսափել: Զուտ ազգային բնույթի հալածանքին սկսեցին գումարվել նաև արդեն համառուսական և քաղաքացիական ոլորտներում ճնշելն ու նեղելը:

Մինիստրները թոչում էին իրենց տեղերից: Ռուսաստանը խեղդվում էր իշխանությունների ամենաթողությունից, կաշառքների խրախճանքը հասել էր անպատկերացնելի սահմանների: Թիֆլիսի փողոցներում կանայք խռովություններ էին իրականացնում, խանութներ ավերում: Ուշադրությունն իրենցից շեղելու համար իշխանությունները ամբոխին տրամադրում էին ընդդեմ մտավորականության ու վաճառականների: Որպես քաղաքապետ, ես այդ ամենի վրա փորձում էի հրավիրել իշխանությունների ուշադրությունը, խնդրում էի սանձել փողոցային խռովությունները, սակայն պարզորոշ տեսնում էի, որ իշխանությունը հենց ինքը ամբոխի հետ է: Վրա հասան մռայլ օրեր: Այդ պայմաններում Մոսկվայում կրկին հրավիրվեց քաղաքային գործիչների համագումար: Դա 1916թ. դեկտեմբերի սկզբներին էր: Ես մեկնեցի համագումար: Համագումարները հաջորդում էին մեկը մյուսին: Բոլորի պահանջը մեկն էր. ստեղծել պատասխանատու նախարարություն: Թվում էր, դրանում է կայանում Ռուսաստանի փրկությունը: Մեր համագումարը հավաքվեց իշխան Դոլգորուկիի տանը: Բայց հենց նախագահողն սկսեց իր ելույթը,

ներս մտան ոստիկաններն ու զինվորները. համագումարը փակեցին, իսկ մեզ էլ ցրիվ տվեցին, քշեցին: Դա ցերեկը ժամի 3-ն էր...

...Ինձ խնդրեցին երեկոյան ժամը 11-ին լինել համառուսաստանյան հողային միության նախագահ, իշխան Լվովի տանը: Ինձ հրավիրեցին որպես Կովկասի քաղաքների ներկայացուցիչ: Ես գնացի: Իշխան Լվովի տանը հավաքվել էին Մոսկվայի քաղաքագլուխ և Ռուսաստանի քաղաքների միության նախագահ Միխայիլ Չելնոկովը, նախկին առևտրի մինիստր Ֆյոդորովը, Չելնոկովի օգնական Կիշկինը և Մոսկվայի ապագա քաղաքագլուխ Աստրովը: Քննարկում էին գործերի դրությունը: Խորհրդակցությունը տևեց գրեթե ամբողջ գիշեր: Իշխան Լվովը հաղորդեց, որ իրավիճակը ռազմաճակատում սարսափելի է: Բանակը հասկանում է, որ ինքը կործանման նախաշեմին է, քանզի չկան պարեն և արկեր: Մի շարք գործառնասեր պահանջում են, որպեսզի ցարը հեռացվի և բանագնացներ են ուղարկել: Նշվեցին այդ գործառնասերը: Արքունիքում դժգոհություն է: Տասնվեց Մեծ իշխաններ պահանջում են ցարից շրջապատից հեռացնել Ռասպուտինին: Նրանք ցարին գրություն են ներկայացրել: Դումայում պահանջում են իրենց պաշտոններից հեռացնել մինիստրներին: Բոլորը զգում են կառավարման ձևի փոփոխման անհրաժեշտությունը, քանզի կառավարման հենց ներկա ձևն է հանդիսանում բոլոր չարիքների արմատը: “Պատասխանատու կառավարություն” – ահա փրկությունը: Առավոտվա կողմ և օրվա ընթացքում համագումարի բոլոր մասնակիցները իրենց համաձայնությունը հայտնեցին, որպեսզի իշխան Լվովը նշանակվի Կառավարության նախագահ: Այն պայմանով, եթե ստեղծվի “պատասխանատու մինիստրություն”: Ինձ հանձնարարվեց անձամբ պարզել Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչի վերաբերմունքը այդ հեղաշրջման նկատմամբ և, վերջինիս իրականացման դեպքում, կհամաձայնվի՞ նա արդյոք ընդունել ցարի թագը: Դեռևս չի եկել այդ խոսակցության մասին ամբողջը շարադրելու ժամանակը, բայց կասեմ միայն, որ Մեծ իշխանը ձեռնպահ մնաց ակտիվ գործողություններին համաձայնություն տալուց...

Մոսկվայից ես գնացի Պետերբուրգ, որտեղ տեսա վրացի սոցիալ-դեմոկրատ, խորհրդարանի անդամ Չխեիձեին⁴⁵, որը հետագայում դարձավ բանվորական դեպուտատների Համառուսաստանյան Խորհրդի նախագահ, իսկ ավելի ուշ՝ Վրաստանի Սահմանադիր Ժողովի նախագահ: Ես նրա հետ զրուցեցի Հեղափոխության հնարավորության մասին: Նա դա բացառում էր: Նա նույնիսկ ինձ խնդրեց փոխանցել Վրաստանի մենշևիկներին, որ Հեղափոխությունը Ռուսաստանում դեռևս շատ ու շատ հեռու է:

Բայց Հեղափոխությունը բռնկվեց ընդամենը 2 ամիս անց և Չխեիձեն նրանում զբաղեցրեց կենտրոնական տեղ: Ես տեսնվեցի Ռուսաստանի ապագա Արտաքին գործերի մինիստր Միլուկովի հետ: Նա գտնում էր, որ Ռուսաստանը գլորվում է դեպի անդունդ: Այդ օրերին սպանեցին Ռասպուտինին: Ես փողոցում էի, երբ իմացա նրա սպանության մասին: Բոլորի մոտ թեթևության շունչ զգացվեց: Մարդիկ շնորհավորում էին միմյանց: Դեկտեմբերի վերջին ես վերադարձա Թիֆլիս:

Փախստականների վերադարձը Թուրքահայաստան արդեն ամբողջապես արգելված էր (ընդգծումը մերն է-Վ.Հ.): Հայերի գրգռվածությունը շատ ուժեղ էր: Փախստականները շարժվում էին դեպի Հյուսիսային Կովկաս, լցվեցին Էրիվանի նահանգի գյուղերն ու քաղաքները: Այլուրը մա-

⁴⁵ Չխեիձե Նիկոլայ (Կարլո, Նիկոլոզ) Միմոնի (1864թ., Քութայիսի նահանգ, Ռուսական կայսրություն – 1926թ., Լևիլ-սյուր-Օրժ, Ֆրանսիա): Վրաց ազնվական, պետական, քաղաքական ու կուսակցական գործիչ: ՌՍԴԲԿ անդամ (1898թ.), մենշևիկ (1903թ.), հետագայում՝ Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ: Ռուսաստանի III և IV Պետական Դումաների պատգամավոր, մենշևիկյան խմբակցության նախագահ: 1917թ. փետրվար-սեպտեմբեր ամիսներին՝ Պետրոգրադի բանվորական և զինվորական պատգամավորների Խորհրդի նախագահ, հունիս-նոյեմբեր ամիսներին՝ Համառուսաստանյան Կենտգործկոմի նախագահ, 1918թ. փետրվարի 23-ից մինչև մայիսի 26-ը՝ Անդրկովկասյան սեյմի նախագահ, նաև՝ Վրաստանի Սահմանադիր ժողովի նախագահ: Վրաստանի պետական անկախության Հռչակագիրը ստորագրողներից մեկը (26 մայիսի, 1918թ.): 1919-ից՝ Փարիզի Վեհաժողովում Վրաստանի ներկայացուցիչ: Վրաստանի անկախության ոչնչացումից և երկիրը Խորհրդային Ռուսաստանի կողմից բռնազավթելուց հետո տարագրվել է Ֆրանսիա, եղել վրացական տարագրության երևելի գործիչներից մեկը: Թորախտով մահամերձ հիվանդ Չխեիձեն 1926թ. ինքնասպանություն է գործել (տե՛ս NIKOLOZ (KARLO) CHKHEIDZE, MEMORIAL ALBUM, Institute for Development of Freedom of Information, 2019, 133p.)

տակարարվում էր անկանոն: Ես անձամբ գնում էի կայարան, ամեն օր հասնում նրան, որ վագոններ տրամադրվեն, բայց ամեն ինչ անկման էր գնում: Չկար իշխանություն, չկար կարգ ու կանոն: Հայերը Կովկասում համախմբվում էին Ազգային բյուրոյի շուրջ: Վերջինս ամեն ձևով ձգտում էր բարձր պահել տրամադրությունները: Թեև ասենք, որ դա վատ էր հաջողվում: Եկավ 1917թ. հունվարը: Այդ բոլոր տրամադրությունները գնալով ավելի ու ավելի էին խտանում: Փետրվարը մեզ տանում էր դեպի ավելի վատ մտքերի: Փետրվարի 27-ին ես նստած էի Թիֆլիսի քաղաքապետարանի իմ աշխատասենյակում: Հնչեց հեռախոսի զանգը: Վերցնում եմ հեռախոսափողը և այնտեղից հնչում է. «խոսում է Մեծ իշխանը: Խնդրում եմ շատ արագ Պալատ գաք»: Գնում եմ: Ինձ անմիջապես ուղեկցում են Մեծ Իշխանի մոտ: Նա կողպեց դռները և ասաց. « Պետերբուրգում հեղափոխություն է: Ինձ հենց նոր հաղորդեցին ուղիղ կապով: Ես միշտ էլ փոփոխությունների կողմնակից եմ եղել: Խնդրում են Ձեզ նկատի ունենալ դա և խնդրում եմ շրջեք բոլոր գորանոցներով»: Ասեմ շատ կարճ. Հեղափոխությունը սրբեց-տարավ Միապետությունը և հույսերը, որ ազատականության կողմնակից Մեծ իշխանը կկարողանա Ռուսաստանում հաստատել Սահմանադրական Միապետություն, չարդարացան: Հանդիպման վերջում Մեծ իշխանն ինձ խնդրեց գրույցի համար իր մոտ հրավիրել Հեղափոխական կուսակցությունների առաջնորդներին: Ես իր մոտ ուղեկցեցի այդ պահին Թիֆլիսում առկա չորս գլխավոր հեղափոխական գործիչների: Ընթացավ գրույց, ինչից պարզ դարձավ, որ Մեծ իշխանը նպատակ ուներ սկիզբ առած շարժումը տեղափոխել օրինական շրջանակների մեջ: Զարմանալի բան: Ուղիղ 12 տարի առաջ, երբ 1905թ.՝ Առաջին Հեղափոխության օրերին իշխանությունը նույնպես երերաց, փոխաբքա կոմս Վորոնցովի խնդրանքով ես իր մոտ բերեցի Հեղափոխության երկու հայտնի գործիչների՝ մեկը պ-րն Ռ-ն էր, վրացի մենշևիկ, մյուսը՝ պ-րն Ս-ն՝ դաշնակցական: Փոխաբքան նրաց 500 ռուբլի տվեց քաղաքի բնակչությանը թաթարական գազանություններից պաշտպանելու համար և միաժամանակ խնդրեց, որ իր պալատի պահակությունն էլ իրականացնեն հենց հեղափոխական կուսակցությունները: Ըստ երևույթին, պատմությունը կրկնվում է: Միապետության նոր անկումից և Մեծ իշխանի մեկնումից հետո Կովկա-

սում ստեղծվեց ժամանակավոր իշխանություն՝ տրիումվիրատ-եռապետություն. Ժորդանիա⁴⁶-Խատիսյան-Պոպով: Սա բավականին հատկանշական կոալիցիա էր. մենշևիկ Ժորդանիան՝ ժողովրդավարների կողմից, Խատիսյան՝ քաղաքի ազգաբնակչության կողմից, զինվորական սպա Պոպովը՝ բանակի կողմից: Մենք, փաստորեն, ընդունեցինք փոխարքայի ձեռքից ընկած իշխանությունը:

Սակայն իմ ճակատագիրը կարող էր միանգամայն այլ ընթացք ունենալ: Հեղափոխությունից երկու շաբաթ առաջ փոխարքայի օգնականը ինձ հրավիրեց իր մոտ և տեղեկացրեց, որ, հավանաբար, Ցարն իմացել է իշխան Լվովի մոտ կայացած նիստի մասին և Մեծ Իշխանի ականջին հասել է, որ մտադրություն է եղել իրեն որպես փոխարքա տեղափոխել Հեռավոր Արևելք՝ Վլադիվոստոկ, իսկ ինձ՝ որպես Թիֆլիսի քաղաքագլուղ՝ արտաքսել Կովկասից: Մինչև այդ հրահանգներն իրականացնելու համար ընթանում էին նախապատրաստումները, բռնկվեց հեղափոխությունը:

Մինչ Հեղափոխությունը երկու- երեք ամսով Կովկաս էին այցելել Գուչկովը՝ Ռուսաստանի ապագա պաշտպանության մինիստրը, Կերենսկին՝ Ռուսաստանի ապագա դիկտատորը և ինձ հետ վարած զրույց-

⁴⁶ **Ժորդանիա Նոյ Նիկոլայի** (1868թ., , **Քութայիսի նահանգ, Ռուսական կայսրություն - 1953թ., Փարիզ, Ֆրանսիա**), վրաց քաղաքական, պետական և կուսակցական գործիչ, ՌՄԴԲԿ (1898թ.), մենշևիկ (1903թ.), հետագայում՝ Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ: 1906թ. ընտրվել է Ռուսաստանի 1-ին Պետական Դումայի պատգամավոր, 1907-1912թթ.՝ Համառուսաստանյան Կուկուսի Կենտկոմի անդամ: Դումայում՝ սոցիալ-դեմոկրատական խմբակցության ղեկավար, 1917թ. դեկտեմբերից՝ Վրաստանի Ազգային խորհրդի նախագահության նախագահ: Ժորդանիան Վրաստանի պետական անկախության Հռչակագիրը ստորագրողներից մեկն է (26 մայիսի, 1918թ.), ինչից հետո գլխավորել է Վրաստանի ժամանակավոր խորհրդարանը: Կարողացել է հասնել Գերմանիայի հետ որոշակի պայմանավորվածության, ինչի շնորհիվ Վրաստանը զգալի չափով զերծ է մնացել 1918թ. Թուրքիայի կովկասյան էքսպանսիայից: 1918թ. հունիսի 24-ից մինչև 1921թ. մարտի 20-ը եղել է **Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության (1918-1921 թթ.) կառավարության** ղեկավարը: Վրաստանի անկախության ոչնչացումից և երկիրը Խորհրդային Ռուսաստանի կողմից բռնազավթելուց հետո տարագրվել է Ֆրանսիա, որտեղ (1921-1953 թթ.) գլխավորել է անկախ Վրաստանի վտարանդի կառավարությունը (տե՛ս, Noy Jordania. Father of Modern Georgia, Driftwood Press, East Hampton, NY Distributed by Amazon, Copyright 2018, Redjeb Jordania, 42 p):

ներում իրենք բոլորն էլ մատնանշում էին Կովկասի մեծագույն կարևորությունը Ռուսաստանի համար: Նախ, որպես Ռուսաստանը վառելանյութով ապահովելու բազա, և ապա՝ որպես թշնամու դեմ կռվելու անհրաժեշտ առողջ ոգու շտեմարան ու հենարան:

Այդպես ավարտվեց Միապետությունը: Երբ Մեծ Իշխանը պետք է մեկնեք Թիֆլիսից, որպեսզի կրկին ընդունեք Ռուսական Բանակի հրամանատարությունը, նա խնդրեց, որպեսզի ես, որպես եռապետության կառավարիչներից մեկը, երաշխավորեմ իր ազատ ելքը Թիֆլիսից դեպի բուն Ռուսաստան: Այդ երաշխիքները նրան տրվեցին:

Ես հրաժեշտ տվեցի իր ընտանիքին, նրանք հավաքվել էին Պալատի սրահում և առավոտյան ժամը 5-ին, բնակչության համար աննկատ, մեկնեցին Թիֆլիսից: Դա 1917թ. մարտի առաջին կեսերին էր: Մեծ Իշխանի հետ մեկնեցին նրա օգնականները, շքախումբը: Փոխարքայի Պալատը դատարկվեց: Մենք ներս մտանք Պալատ, շրջեցինք բոլոր սենյակներով: Եվ հատուկ պետք է նշեմ, որ այդ օրերին դրսևորվեց Կովկասի բնակչության զարմանալի բարեկրթությունը: Ամբողջ քաղաքում տիրում էր իդեալական կարգ ու կանոն: Ես քաղաքի ոստիկանապետ նշանակեցի քաղաքային վարչության անդամ Աթաբեկովին: Քաղաքը և ամբողջ երկրամասը նոր իշխանությանն ընդունեց հանգիստ և խաղաղ: Ես շրջեցի բոլոր գորանոցներով: Ամենուրեք հայտնեցի կատարված փոփոխությունների մասին: Զինվորները մեզ հիացմունքով էին դիմավորում: Հեղափոխության գարուն էր: Քաղաքապետարանի դիմաց շարքով գորք էր անցնում: Ես դուրս էի գալիս բոլոր գորամասերին ընդառաջ և բոլորի առջև ելույթ ունենում:

Կովկասի բոլոր քաղաքներ մենք հեռագրեր հղեցինք առ այն, որ անհրաժեշտ է ստեղծել համապատասխան կոմիտեներ և նախկին չինովնիկներից ընդունել իշխանությունը: Ամենուրեք իշխանությունն անտրտունջ հանձնվում էր ժողովրդի ընտրյալներին, իսկ Պետերբուրգում իրականացավ մեր առաջարկը՝ իշխան Լվովը դարձավ պրեմիեր-մինիստր: Սկսեցին ստեղծվել դեմոկրատական օրենքներ: Դուման քանդվում էր: Սկսեցին խոսակցություններ պտտվել Մահմանադիր Ժողովի մասին: Կովկասում ամեն ինչ շարունակում էր մնալ հանգիստ: Պատերազմի արդյունքում նոր նվաճված երկրամասը դեռևս կայուն էր,

սակայն Հեղափոխության ոգին թարմացրեց մթնոլորտը նաև այդ մասում: Ազգային նկրտումները կրկին կյանք առան: Թուրքական ռազմաճակատի Կառավարման կազմում սկսեցին ներգրավվել հայեր՝ Յակով Չավրիևը, իմ եղբայր Գեորգին⁴⁷, գրավյալ տարածքների խորքերը սկսեցին այցելել “Քաղաքների Միության” գործիչները, կուսակցական գործիչները: Սկսեց հորդել նոր ոգին, արթնացան նոր մտքեր, սակայն անջատողականություն, որպես այդպիսին, չկար, չէր երևում: Սպասում էին կենտրոնից թելադրվող իշխանական քայլերին:

ԳԼՈՒԽ III

Ժամանակավոր Կառավարությունը և հայերը (1917 թ. մարտ-նոյեմբեր)

1917թ. գարնանը Թիֆլիս ժամանեցին Ժամանակավոր Կառավարության որոշմամբ ստեղծված “Հատուկ Անդկովկասյան Կոմիտեի”, կամ, ինչպես այն անվանում էին “ՕԶաԿոմ”⁴⁸-ի նշանակված անդամները: Իշ-

⁴⁷ **Խատիսյան Գևորգ Հովհաննեսի** (1876թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն – 1935թ, Խարկով, ԽՍՀՄ), հայ անվանի իրավաբան, փաստաբան, քաղաքական և պետական գործիչ, ՀՀԴ անդամ: Ստացել է գյուղատնտեսի և իրավաբանի բարձրագույն կրթություն: Մասնակցել է «Դաշնակցության գործով» դատավարությանը որպես դատապաշտպան, պաշտպանել է **Համազասպին, Հ. Թումանյանին**: Մեծ աշխատանքներ է տարել կամավորական շարժման կազմակերպման հարցերում: Հայաստանի Հանրապետության կառավարության քարտուղար (1918թ.), գործերի կառավարիչ (1918-1919թթ.), Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի 2-րդ գումարման պատգամավոր (1919-1920 թթ.): Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումից և Ռուսաստանի կողմից բռնագավթվելուց հետո եղել է Թիֆլիսի համալսարանի դոցենտ: Ալեքսանդր Խատիսյանի և Կոնստանդին Խատիսյանի կրտսեր եղբայրն է: (տե՛ս Մ.Բաբայան, Հուշամատյան անկախության, Երևան, 2019, էջ 200-201) :

⁴⁸ **Անդրկովկասյան հատուկ կոմիտե, Օզակոմ** (ռուս.՝ *Особый Закавказский комитет*, 1917թ. մարտ-1917թ. նոյեմբեր): Փետրվարյան հեղափոխությունից հետո կայսերական փախարքայության փոխարեն ստեղծված Ռուսաստանի ժամանակավոր կառավարության Անդրկովկասի երկրամասային մարմինը, որի վրա դրվեց նաև Կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով ռուսական գործերի գրաված մարզերի քաղաքացիական կառավարումը: Օզակոմի օրոք Արևմտյան Հա-

խանության այդ նոր մարմինը դիմավորեցին հիացական կերպով: Դրա նախագահն էր կադետների կուսակցությունից Դումայի անդամ, կազակ Վ.Ա. Խառլամովը, անդամները. հայ Մ.Ի. Պապաջանյանը, վրացի Ա.Ն.Չխենկելին⁴⁹ և թաթար Ջաֆարովը⁵⁰:

“ՕջաԿում”-ի այդ կազմն ասես արդեն իսկ ցույց էր տալիս, որ այնտեղ առկա է ազգային հատկանիշը. այդ կարգադրությունն արդեն իսկ նախանշում էր Կովկասում տարբեր ազգային շահերի առկայությունը: Կենտրոնական իշխանությունն ասես ինքն էր առաջարկում այն հենքը, որի շուրջ պետք է գործվեր ազգային շահերի հյուսվածքը: Մյուս կողմից՝ Կովկասի ժողովուրդների մեջ, իր հերթին, սկսեցին շարժվել նոր զգացո-

յաստանում սահմանվեց քաղաքացիական կառավարման Գերագույն կոմիսարի պաշտոն:

⁴⁹ **Չխենկելի Ակակի Իվանի** (1874թ., Թիֆլիսի նահանգ, Ռուսական կայսրություն – 1959թ., Փարիզ, Ֆրանսիա): Վրաց ազնվական, քաղաքական, պետական և կուսակցական գործիչ, ՌՄԴԲԿ անդամ (1898թ.), մենշևիկ (1903թ.), հետագայում՝ Վրաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ: Ռուսաստանի Պետական IV Դումայի պատգամավոր: Փետրվարյան հեղափոխությունից հետո Օգակովի անդամ, Տրապիզոնում Անդրկովկասի և Թուրքիայի միջև վարվող բանակցություններում Անդրկովկասյան պատվիրակության նախագահ (1918թ. մարտ-ապրիլ): 1918թ. ապրիլ-մայիսին՝ Անդրկովկասյան սեյմի կառավարության՝ Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ, 1918թ. մայիս-1918թ. նոյեմբեր ամիսներին՝ Վրացական Դեմոկրատական Հանրապետության արտաքին գործերի մինիստր: Վրաստանի անկախության ոչնչացումից և երկիրը Խորհրդային Ռուսաստանի կողմից բռնազավթելուց հետո տարագրվել է Ֆրանսիա, որտեղ կարևոր դերակատարում է ունեցել վրաց տարագիրների շրջանում: (տե՛ս A. Kacharava, A. Daushvili, *The Democratic Republic of Georgia: Struggle for Independence 1918-1921*, Published 2021 by Artanuji Publishing. 148p.):

⁵⁰ **Ջաֆարով Մամեդ-Յուսիֆ Հաջի-բաբա օղլի** (1885թ. Բաքու, Ռուսական կայսրություն -1938 Բաքու, ԽՍՀՄ): Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության քաղաքական և պետական գործիչ, <<Մուսավաթ>> կուսակցության անդամ: Ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, ընտրվել Ռուսաստանի Պետական IV Դումայի պատգամավոր, 1917թ. մարտ-նոյեմբերին՝ Օգակովի անդամ: Ադրբեջանի Անկախության Հռչակագրի ստորագրողներից մեկն է: Անկախ Ադրբեջանում վարել է արդյունաբերության և առևտրի, հետագայում՝ արտաքին գործերի մինիստրի ու խորհրդարանի փոխխոսնակի պաշտոնները: Ադրբեջանը Խորհրդային Ռուսաստանին բռնակցելուց հետո որոշ ժամանակ խորհրդային համակարգում զբաղեցրել է խորհրդատվական ինչ-ինչ պաշտոններ:

դություններ: Ճիշտ է, դեռևս բավականին խուլ և աղոտ, բայց ակնհայտորեն՝ ազգային առաջնորդների համար:

Սկսեցին գումարվել ազգային համագումարներ: 1917թ. սեպտեմբերին գումարվեց հայ ազգային համագումարը: Դա արդեն Հեղափոխության համար չափազանց աջ հայտարարված իշխան Լվովին փոխարինելու եկած Կերենսկու կառավարության օրոք էր: Այդ ժամանակաշրջանի պատմությունն արդեն նկարագրված է Պ.Ն. Միլյուկովի „К истории русской Революции” գրքերում:

Զուգահեռաբար, համընդհանուր ընտրությունների համակարգի կանոններով, սկսվեցին քաղաքային հասարակական կառավարման մարմնի թեկնածուների ընտրությունները: Եվ այստեղ երևաց, որ բնակչության լայն շրջաններում արթնացել են ազգային զգացմունքները: Այնպես որ, զգացմունքների այդ նոր՝ ազգային շիթը անմիջապես դուրս պրծավ դեպի մակերես: Հատկապես հայկական շրջանակներում ազգային զգացմունքների վերելքը շատ մեծ էր, քանզի այն գրգռվում ու բարձրացվում էր նաև հայկական կամավորական ջոկատների օժանդակությամբ ռուսական զենքի տարած հաղթանակներով: Այդ առնչությամբ 1916թ. շատ առատ էր. Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչը՝ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարը, զորքերի հրամանատար զեներալ Յուդենիչը տարան մի շարք կարևոր հաղթանակներ, որոնք, ըստ հայ ժողովրդի կարծիքի, մոտեցնում էին հայկական իղձերի և երազանքների իրականացման պահը: Անգլո-ֆրանսիական նավատորմը արգելափակել էր Միջերկրական ծովի ափերը և պաշտպանում էր Սուեզի ջրանցքը, բրիտանական բանակը շարժվում էր դեպի Բաղդադ, իսկ ռուսական բանակը՝ 1916թ. ցրտաշունչ ձմռանը՝ 1916թ. փետրվարի 16-ին վերցրեց Էրզրումը, իսկ ապրիլի 18-ին՝ Տրապիզոնը, հետո՝ Վանը, Բիթլիսը, Մուշը և սպառնում էր Դիարբեքիքին ու Մոսուլին: Այդ նույն ժամանակահատվածում զեներալ Բարատովի էքսպեդիցիոն կորպուսը շարժվում էր դեպի հարավ՝ Բաղդադի ուղղությամբ, որպեսզի օգնություն ցույց տա անգլիական զեներալ Թաունդսենին և միացավ անգլիացիներին Քութել-Ամազի մոտ: Սակայն զեներալ Թաունդսենը գերի հանձվեց թուրքերին և զեներալ Բարատովի զորա-

խումբը սսկեց ետ շարժվել: Բայց 1917թ. մարտի 19-ից հետո, երբ անգլիական զեներալ Միդը գրավեց Բաղդադը, ռուսները կրկին շարժվեցին դեպի Բաղդադ, մարտի 8-ին ջարդեցին թուրքերին Համադանի մոտ և մարտի 17-ին գրավեցին Հանեքենը: Մարտի վերջերին զեներալ Բարատովի գորամասի առաջավոր հեծելազորային ջոկատը կապի մեջ մտավ անգլիացիների առաջապահ ուժերի հետ: Եվ կապի գիծ հաստատվեց Կովկասից մինչև Պարսից ծոց:

Հենց այդ ժամանակ, երբ այդ հաղթանակների ազդեցության շնորհիվ տրամադրություններն Արևելքում բարձրանում էին, պայթեց 1917թ. մարտյան⁵¹ Ռուսական Հեղափոխությունը:

“Քաղաքների Միությունը” ռուսական բանակին նշանակալից օգնություն էր ցուցաբերում: Ես ստացել եմ Էրզրումի գրավումից հետո զեներալ Յուդենիչից, իսկ դեպի Բաղդադ շարժվելիս էլ՝ զեներալ Բարատովից շնորհակալական հեռագրեր այն օգնության համար, որը “Քաղաքների Միության” կառույցները ցուցաբերել էին ռուս զինվորներին: Երկու ուղղություններով էլ այդ օգնությունը հավասարապես հզոր էր և անհրաժեշտ. Թե Էրզրումի բարձրավանդակում, որտեղ փետրվարյան սառնամանիքին զինվորները ցրտահարվում ու մահանում էին հարյուրներով, թե Պարսկաստանում, որտեղ մարդիկ մեռնում էին տիֆից ու դողերոցից: Զինվորները մեծաքանակ կորուստներ էին տալիս՝ ոչ այնքան մարտերից, որքան կախված ռազմաճակատի տեղանքից ու բնույթից, սառնամանիքներից և շոգերից: Էրզրումի գրավումն իրականացվեց զինվորների հերոսական ջանքերի շնորհիվ. նրանք իրենց ուսերին տեղափոխում էին հեռահար թնդանոթները, բարձրացնելով դրանք 10000 ֆուտ բարձրությամբ լեռները, անձնագոհ կերպով անցնելով կիսասառցակալած լեռնային գետակները: Ես անձամբ քանիցս եղել եմ ռազմաճակատին մոտ և անձամբ եմ տեսել զինվորների այդ սխրանքները:

Զորքի առաջ շարժվելու հետ զուգահեռ, մյուս ճանապահներին, կազակները իրենց մոտ էին վերցնում ճանապահին հանդիպած հայ որբ փախստական երեխաներին և կերակրելով ու տաքացնելով նրանց բե-

⁵¹Մարտյան՝ նոր տոմարով:

րում հանձնում էին «Քաղաքների Միության» և հայկական այլ բարեգործական ընկերությունների աշխատակիցներին:

Նշված բոլոր տարածքների գրավումից հետո «Քաղաքների Միությունը» ավելի ընդլայնեց իր գործունեության ծավալները. 1916-ին ու 1916-17թթ. ձմռանը և 1917թ ընթացքում «Քաղաքների Միության» 19000 ծառայողներ, սկսած թիկունքում գտնվող զինվորական հոսպիտալներից, վերջացրած Ուրմիայում, Վանում, Մուշում և Էրզրումում տեղակայված լագարներից ու սննդի բաշխման կետերից, կերակրում, բուժում ու հանգրվան էին տալիս հազարավոր հայ փախստականների: Դա, փաստորեն, ռուսական զորքի կողմից գրավված հայկական վիլայեթներում հայկական ինքնակառավարման սաղմնավորումն ու սկիզբն էր:

«Քաղաքների Միության» գործիչների շարքերում էին հասարակ ժողովրդի և աշխատավոր շերտերից եկած հարյուրավոր անձնագրի հայ երիտասարդներ: Այդ աշխատակիցներից էին Ռուբեն Տեր-Մինասյանը, հետագայում Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարը, բժիշկ Բաբայանը՝ հետագայում Հայաստանի խնամատարության նախարարը, թուրքերի ձեռքով հետագայում սպանված Կոստյա Համբարձումյանը⁵², Դրոն, Մարգարյանը, Մանդինյանը, Եղիազարյանը⁵³ (Վա-

⁵² **Համբարձումյան Կոնստանտին (Կոստյա, Կոստի) Սահակի** (1882թ., Շուշի, Ռուսական կայսրություն - 1918, Սային կալա (այժմ **Իրաքում**)): Բելգիայում ստացել է բարձրագույն գյուղատնտեսական կրթություն: Ազգային-ազատագրական շարժման գործիչ: ՀՀԴ կուսակցության անդամ: Կազմակերպել է զենքի առաքում Պարսկաստանով՝ հայ ազատագրական շարժման մարտիկներին զինելու նպատակով: 1915 թ. մտել է Վանի գրավման նպատակով ստեղծված **Արարատյան ջոկատ**, դարձել գնդի գումակի պետ, 1915 թ. մայիսին մասնակցել **Վանի** ազատագրմանը: 1917 թ. աշնանը, երբ ռուսական զորքերը սկսել են հեռանալ Վանից, Համբարձումյանը դարձել է Վանի հայկական ժամանակավոր կառավարության ղեկավար: 1918 թ. թուրքական զերակշիռ ուժերը հարձակվել են Վանի վրա, և հայերը Համբարձումյանի ու **Լևոն Շադոյանի** գլխավորությամբ հարկադրված գաղթել են: Համբարձումյանն իր զինական ուժերով ապահովել է գաղթականների անվտանգությունը: Սպանվել է թուրքական ուժերի դեմ վարած մարտում: Ղարաբաղի խորհրդայնացման կազմակերպիչներից և նրա առաջին կոմունիստ ղեկավար, բոլշևիկ Սարգիս Համբարձումյանի եղբայրն էր:

⁵³ **Եղիազարյան Հեղինե Բարսեղի** (1892թ., Էրիվան, Ռուսական կայսրություն-1983թ., Բեյրութ, Լիբանան): 1905-1906-ին անդամակցել է Հայ հեղափոխական դաշնակ-

հան Փափագյանի⁵⁴կինը), դաշնակցական երիտասարդության մի ստվար զանգված, մեծ թվով վրացիներ և փոքրաթիվ ռուսներ:

ցության Աշակերտական միությանը, Կարմիր խաչ գաղտնի կազմակերպությանը և երկսեռ երիտասարդության կազմակերպությանը: Ավարտել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1916թ. Թիֆլիսում ամուսնացել է **Վահան Փափագյանի (Կոնս)** հետ: Կամավորական շարժման ակտիվ մասնակիցներից էր: Եղել է 1918թ. վիրավոր զինվորներին և փախստականներին բժշկական օգնություն կազմակերպող և իրականացնողներից մեկը: 1919-ից մասնագիտական գործունեություն է ծավալել Հայաստանի Հանրապետությունում: Հայաստանի պետականության ոչնչացման և երկիրը Ռուսաստանի ու Թուրքիայի միջև բաժանելուց հետո Փափագյանները 1922թ. հաստատվում են Փարիզում: Մինչև մահանալը ակտիվորեն մասնակցել է տարբեր հայկական բուժական, բարեգործական և ազգային-մշակութային կազմակերպությունների ստեղծմանն ու գործունեությանը:

⁵⁴ **Փափագյան Վահան Մեսրոպի (Կոնս, Բժիշկ) (1876թ., Թավրիզ, Իրան - 1973թ., Բեյրութ, Լիբանան):** Արմատներով վանեցի, հայ ազատագրական շարժման հայտնի առաջնորդներից և ՀՀԴ ակնավոր ներկայացուցիչներից մեկը, քաղաքական գործիչ, անվանի հայ գրող Վրթանես Փափագյանի կրտսեր եղբայրը: Սկզբից հարել է Հնչակյան կուսակցությանը, հետագայում՝ անդամագրվել Դաշնակցությանը: Մասնակցել է Արևմտյան Հայաստանի ֆիդայական շարժմանը, 1905-1906թթ.՝ Արևելյան Հայաստանում հայ-թաթարական զինված բախումների ժամանակ հայերի ինքնապաշտպանական կոիվների մասնակից և կազմակերպիչ: Թուրքիայում երիտթուրքերի իշխանության գալուց հետո ընտրվել է թուրքական խորհրդարանի երեսփոխան (1908-1914 թթ), մասնակցել է Պողոս Նուբարի հետ Արևմտյան Հայաստանում բարեփոխումների ծրագրի վերջնական տարբերակի մշակմանը: Առաջին աշխարհամարտի սկսվելու օրերին դեմ է արտահայտվել Ռուսահայաստանում հայկական կամավորական ջոկատների ստեղծմանը, համարելով դա խիստ զրգրող հանգամանք թուրքական կողմի համար: Որոշ ժամանակ Թուրքիայում ի պաշտոնե մասնակցելով պատերազմական ժամանակաշրջանի կազմակերպչական աշխատանքներին, անցնում է Կովկաս և այստեղ զբաղվում հայերի ինքնապաշտպանական միջոցառումների կազմակերպմամբ: 1919թ. ընտրվում է Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ: Հետագայում մեկնում է Փարիզ, ուր մասնակցում է տեղի Վեհաժողովում հայկական պատվիրակության աշխատանքներին: Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին ընդգրկված է եղել այն հայերի խմբում, որոնք հույսեր էին տածում Հայաստանը բոլշևիկյան լծից ազատագրելու Գերմանիայի օգնությամբ: Երկրորդ աշխարհամարտից հետո, մինչև կյանքի վերջը բնակվել է Բեյրութում: Հայտնի բոլշևիկ, Հայաստանի անկախության մոլի հակառակորդ և թշնամի Արտաշես Կարինյանի (Գաբրիելյան) մորեղբայրն էր: (տե՛ս Մ.Բաբայան, Հուշամատյան անկախության, Երևան, 2019, էջ 417) :

Ես այցելում էի աշխատանքի վայրերը, բայց, ցավոք սրտի՝ ոչ այնքան հաճախակի, քանզի իմ հիմնական աշխատանքը Թիֆլիսում շատ ժամանակ էր իլում: Ես միաժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխն էի, «Քաղաքների Միության» և «Ազգային Բյուրոյի» նախագահը:

Բայց «Քաղաքների Միության» նման դերակատարումն ու արդյունավետ գործունեությունը ռուսական ազգայնականորեն տրամադրված շրջանակների մոտ առաջ բերեց չարացածություն ու զազագություն: Միության նկատմամբ սկսվեցին բացահայտ հալածանքն ու հետապնդումները: Մի կողմից համառուսաստանյան տեսակետից կովկասյան «Քաղաքների Միությունը» սկսեցին կասկածել հեղափոխականության մեջ, մյուս կողմից՝ այդ «Միությանը» մեղադրում էին իր գործունեության ընթացքում հատուկ հայկական ուղղվածություն դրսևորելու մեջ: Սկսվեցին մատնագրերի տարափր, սահմանափակումները, ճնշումներն ու հալածանքները: Արդյունքում, հայ գործիչներին վարկաբեկելու և արատավորելու նպատակով նշանակվեց ստուգող հանձնաժողով՝ գեն. Վորոնովի գլխավորությամբ:

Մի կողմից՝ ճնշումներ ու հալածանքներ սկսվեցին հայկական կամավորական ջոկատների նկատմամբ, մյուս կողմից՝ ցանկություն կար խիստ սահմանափակել ու կրճատել «Քաղաքների Միության» աշխատանքները: Տեսնելով այս հոսանքները, ես անձամբ զեկուցեցի Մեծ իշխանին՝ կատարվածի պատճառով մեր դառնացած լինելը: Մեծ իշխանը շրջապատված էր հայերի նկատմամբ թշնամաբար տրամադրված շքախմբով ու գեներալներով՝ գեն. Յանուշկևիչ, գեն. Վոլսկի, ոստիկանության պետ Զդանովսկի, գրավյալ տարածքների գեներալ – նահանգապետ Պեշկով, հերթապահ գեներալ Բոլխովիտինով, Բաթումի նահանգապետ գեն. Լյախով: Դրանք բոլորն էլ «Հայաստանը Ռուսաստանին պետք է առանց հայերի» տեսության կողմնակիցներ ու իրագործողներ էին: Ես զրուցել եմ այդ բոլոր «աշխարհներ» հետ էլ: Մեկնել եմ Բաթում, Էրիվան, Ելիզավետպոլ, մասնակցել եմ տարբեր նիստերի, և ամենուրեք

պարզորոշ զգացվում էր, թե ինչպես էր աճում բաժանարար պատը մեր ու ռուսական իշխանությունների միջև:

Մեծ իշխանը գեն. Վորոնովին հանձնարարեց ստուգումներ անցկացնել, ինչն ավարտվեց մեր օգտին: Այդ ստուգումները հնարավորություն տվեցին որոշ չափով ժամանակ ձգելու համար: **Այդ ժամանակամիջոցում մենք սկսեցինք Ուրմիա և Վան լճերի վրա նավեր կառուցել: Այդ լճերի վրա բեռներով արդեն նավարկում էին մեր լաստանավերը (ընդգծումը մերն է - Վ.Ն.):** Այդ ամենը կարգավորվում էր, սակայն չափազանց բարդ քաղաքական փոխհարաբերությունների պայմաններում: Սակայն մարտյան Հեղափոխությունից հետո պատկերը սկսեց փոխվել մեկ այլ իմաստով. «Քաղաքների Միության» շրջանում արդեն սկսեցին դրսևորվել ազգայնական միտումներ: Մինչ 1917թ. մարտը առկա էր կառավարական՝ զուտ ռուս ազգայնական քարոզչությունը, սակայն «Միության» ներսում ամեն ինչ ամուր էր, խաղաղ ու հանդարտ. աշխատանքներն ընթանում էին միայն մեկ՝ խիստ որոշակի ուղղությամբ: Սակայն, մարտյան Հեղափոխությունից հետո, այստեղ նույնպես ի հայտ եկավ ազգային, ասենք ավելին՝ ազգայնական ոգի: Այսպիսով, օրինակ, միտում առաջ եկավ «Միության» Բաթումի շրջանում ծառայողների մեջ ուժեղացնել վրացական տարրը, իսկ Բաքվի շրջանում՝ թաթարականը: Որոշ շրջանների շուրջ վեճեր էին ծագում: Հատկապես Կարս-Արդահան-Օլթի ուղղությամբ. ազդեցության համար վիճում էին հայերը, վրացիները, թաթարները: Փոխադարձ վստահություն չկար, բացակայում էր:

Այսպիսով, 1917թ. ամռան նախաշեմին Կովկասի կառավարման հարցի առնչությամբ ի հայտ եկան ազգային միտումներ, որոնք արտահայտվեցին թե՛ Հատուկ Կովկասյան Կոմիտեի կազմում, թե՛ «Քաղաքների Միության», թե՛ նաև ազգային համագումարների առնչությամբ: Ազգայնամոլությունը սկսեց բացահայտ գլուխ բարձրացնել, քանզի չկար արդեն այն իշխանական ուժը, որն ի վիճակի էր ուժով հարթեցնել այդ ասպարեզում բույն դրած տարաձայնությունները: Սակայն բացակայում էր համերաշխությունը նաև իշխանությունն իր ձեռքը վերցրած դեմոկրատիայի շարքերում: Արտաքնապես թվացյալ ու զուսպ բարեհաջողության քողի ներքո սկսվում էր խորը ու անզիջում պայքար ազդեցության

համար: Դա վերաբերում էր հատկապես Վանի, Էրզրումի և Մուշի վարչակազմերին. ազդեցիկ մահմեդականները՝ թաթարները, սկսեցին իրենց մասնաբաժինը պահանջել այդ շրջանների կառավարման մարմիններում: Ազդեցիկ մահմեդականներ՝ դր. Սուլթանովը, Վեհիլովը, Խան-Խոյսկին⁵⁵ նախկին փոխարքայի Պալատում սկսեցին գրգռիչ ու սադրիչ ճառեր արտասանել և այդ Պալատը հետզհետե վերածվեց խարդավանքների մի օջախի:

Թեև Հեղափոխությունից հետո սկսվեց պետական և զինվորական ծառայողների գտումը վտանգավոր քառու և հետադիմական տարրերից, սակայն դրանցից շատերը, համենայնդեպս, մնացին իրենց տեղերում և հրահրում էին փոխադարձ թշնամանք և ատելություն, ձգտելով նման քայլերով թուլացնել հեղափոխական շարքերը, ժողովրդավարության ուժը և կովկասյան ժողովուրդների միասնությունը: Ռուսական վարչակազմի այդ հատվածի դերը Կովկասում միշտ էլ եղել է շատ ուժեղ և շատ բացասական: Հաճախակի նրանք իրականացնում էին երկակի խաղ, վարում երկդիմի քաղաքականություն: Մեկ սիրաշահում էին հայերին, մեկ՝ վրացիներին, մեկ էլ՝ թաթարներին: Դրանց մեջ առանձնանում էին, օրինակ, «թաթարների բարեկամ», Ելիզավետպոլի նահանգապետ Կովալյովը, որը միասնական էր թաթարների հետ և նրանց հետ համատեղ իրականացնում էր հետապնդումները հայերի նկատմամբ, «հայերի բարեկամ» և «թաթարների թշնամի» Կարսի նահանգապետ Պողոսյանին, ա-

⁵⁵ **Տաթարի խան Իսգենդեր օղլի Խոյսկի** (7 դեկտեմբերի 1875թ., Շաքի, Ելիզավետպոլի նահանգ, Ռուսական կայսրություն – 19 հունիսի, 1920, Թիֆլիս, Վրաստանի Դեմոկրատական Հանրապետություն), ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության քաղաքական և պետական գործիչ, Ռուսական կայսրության Երկրորդ Պետումայի անդամ, Անդրկովկասյան կոմիսարիատին (1917-1918) առընթեր հանրային կրթության հանձնակատար, Անդրկովկասյան Դեմոկրատական Ֆեդերատիվ Հանրապետության (1918) արդարադատության մինիստր: Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության հռչակումից հետո դարձել է այդ երկրի մինիստրների խորհրդի առաջին նախագահը: Աշխատել է նաև է որպես Ադրբեջանի Հանրապետության ներքին գործերի, արդարադատության (1918) և արտաքին գործերի մինիստր (1918-1919 և 1919-1920):

ռանձնակի՝ հենց աջարացիների հակառակորդ, Բաթումի նահանգապետ գեն. Լյախովը և այլք: Իր հավասարագոր մոտեցումներով մյուսներից տարբերվում էր քսան տարի էրիվանի նահանգապետի պաշտոնը զբաղեցրած կոմս Տիգենհաուզենը: Հեղափոխությունը բոլոր այդ անձերին սրբեց-տարավ, սակայն մնացին նրանց ցանաձի սերմնահատիկները:

Որպեսզի ցույց տանք, թե ինչպես էին նրանք խաղում երկու ճակատների ուղղությամբ, պետք է վերհիշել փոխարքա կոմս Վորոնցովի ու իմ, եպ. Մեսրոպի և Հարությունյանի հայտնի նամակագրությունը և, միաժամանակ, իմ և Վանում ռուսական զորքերի հրամանատար գեն. Նիկոլանի միջև նամակագրությունը: Ի դեպ, այդ ամենի վրա մանրամասնորեն իր „Zelivrerouge (Pariz-1919 ր.)” գրքում կանգ է առնում Գր. Չալխուշյանը, որտեղ ներկայացնում է նաև այդ ժամանակաշրջանի նամակագրությանը վերաբերող բոլոր փաստաթղթերը:

1915թ. ամռանը ես ստանում եմ գեն. Բոլխովիտինովից մի նամակ, որտեղ ինքը գրում է, որ համաձայն Վանից ուղարկված գեն. Նիկոլանի հաղորդման, “Վանում հայ կամավորականները կրակ են բացել ռուսական զորքի վրա և այդ իսկ պատճառով այնտեղ ստեղծվել է ռազմա-դաշտային դատարան”: Նույն թվականի հուլիսի 17-ին ես, եպ. Մեսրոպը և Հարությունյանը այդ մասին տեղեկացնում ենք կոմս Վորոնցովին, բողոքում ենք և ներկայացնում գեն. Նիկոլանի նամակը, որն ինձ էր գրվել ի պատասխան նախկինում՝ գեն.Բոլխովիտինովի ինձ ուղղված նամակի կապակցությամբ իմ հարցմանը: Գեներալ Նիկոլանը ինձ գրում էր. “Ի պատասխան Ձեր հունիսի 5-ի նամակի տեղեկացնում եմ, որ արդեն երկու ամիս է, որ երեք հայկական կամավորական ջոկատներ գործում են իմ զորաջոկատի կազմում և ես կարող եմ հավաստիացնել, որ բացի անկարգապահ պահվածքի մի քանի տխրալի դեպքերի, ես հիմքեր չեմ ունեցել անկարգապահության համար մեղադրելու հայկական ջոկատները ամբողջովին վերցրած: Գեներալ Նիկոլան”:

Միաժամանակ մենք տեղեկացնում ենք փոխարքային, որ 1916թ. մարտի 16-ին Գլխավոր Շտաբից գեն. Յակովլևի ստորագրությամբ ստացվել է նամակ, որում թեև նշվում է, որ “...հայկական զորաջոկատ-

ների բոլոր սխրանքներն ու հաջողությունները իրենց տեղը կգտնեն ռազմազեկույցներում” , սակայն մինչ օրս հայկական զորաջոկատների մասին դեռևս ոչինչ չի գրվում”: Հակառակը, մենք փոխարքային հայտնում ենք, որ ռազմա-դաշտային դատարանը մահապատժի է դատապարտել հայ զինվորի և դատավճիռն ի կատար է ածվել այն հիմնավորմամբ, որ հայ զինվորը Բեդրինալում կրակ է բացել քրդերի ուղղությամբ, որոնց հետ եղել են նաև ռուս կազակներ: Մեր այդ նամակին փոխարքա Վորոնցովը պատասխանեց հուլիսի 19-ի նամակով, որտեղ գրում է, որ զեկուցագրի երկակիության և պր-ն Խատիսովին գեներալ Նիկոլանի հղած նամակի կապակցությամբ “ ինքը հրամայել է հետաքննություն անցկացնել”, իսկ այն հանգամանքը, որ “բացակայում են զեկույցներ հայկական զորաջոկատների ռազմական հաջողությունների մասին”, պայմանավորված է նրանով, որ “գլխավոր հրամանատարի հրամանով արգելված է զեկույցներում նշել աչքի ընկած զորամասերի անունները, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի են ունեցել բացառիկ բնույթի գործողություններ”:

Այս դեպքերը պարզորոշ ցույց են տալիս, թե ինչպես ռուսական բանակի և շտաբի խորքերում բնակալել էին խարդավանքները հայկական զորաջոկատների նկատմամբ: Նույն բանը նշում էր նաև Արամը՝ արդեն որպես Վանի նահանգապետ (ընդգծումը մերն է – Վ.Հ.):

Դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ ռուս չինովնիկական շրջաններում զգալի թիվ էին կազմում “քրդական կողմնորոշման” կողմնակիցները: Նրանք քրդերին համարում էին Թուրքիայում ուժեղ տեղական տարր, ինչպես որ թաթարներին ու թուրքերին համարում էին ուժեղ տարր Կովկասում, և համարում էին, որ ճիշտը կլինի հենվել հենց այդ տարրերի վրա: Այդ չինովնիկները սաղորում էին կովկասյան թաթարական գործիչներին, իսկ այնտեղից էլ սաղորիչ ու գրգռող ազիտացիան տեղափոխվում էր դեպի լայն մահմեդական զանգվածները:

Նույնը չէ՞ր արդյոք 1905թ. Բաքվում, որտեղ նահանգապետ իշխան Նակաշիձեն հավաքել էր տեղի թաթարներին և նկարագրում էր նրանց հայկական կոտորածի օգտակարությունը: Նույնը չէ՞ր արդյոք Ելիզավետպոլում, որտեղ ռուս չինովնիկները հայկական կոտորածից հետո

թալանում էին հայերի խանութներն ու կրպակները: Ելիզավետպոլում ռուս զինվորներին ուղղված իմ այն հարցին, թե ինչու՞ նրանք չեն կրակում թաթարների ուղղությամբ, երբ նրանք այրում ու ավերում են հայերի տները, սպանում նրանց, անձամբ ես բազմիցս լսել եմ նույն պատասխանը. ”Մենք նման հրաման չունենք”:

Այդ ամենի մասին ես հենց այդ ժամանակ գրել եմ թերթերում և պատմել անձամբ փոխարքային: Իմ տասը տարվա պրակտիկայից ելնելով, կարող եմ բերել օրինակների մի անվերջանալի շարք, երբ ռուս չինովնիկները՝ տարբեր նկատառումներից ելնելով, հրահրում էին Կովկասի ժողովուրդների միջև ազգային կրքեր: Բազմիցս բարձրացվել է փոխարքա, կոմս Վորոնցովի դերակատարման հարցը Կովկասում ազգամիջյան ընդհարումներ հրահրելու մեջ: Հայերի հանդեպ նրա ժամանակավոր հովանավորությունը, նրա տիկնոջ ընդգծված ուշադրությունը նրանց նկատմամբ, փախստականներին ցուցաբերվող մեծ օգնությունը՝ մի կողմից, և միաժամանակ հայ-թաթարական կոտորածների երկարատև ընթացքը, հայերի հալածանքները և նման պարագայում գորքի ու ոստիկանության անգործությունը մյուս կողմից, գրգռում էին շատերի հետաքրքրությունը: Ես շատ անգամ եմ զրուցել կոմսի հետ այդ երևույթների վերաբերյալ և իմ անձնական տպավորությունն այն է, որ կոմսը այդ բոլոր իրադարձություններում կանգնած էր ռուսական-պետական տեսակետի վրա, ինչպես որ ինքը այն հասկանում էր: Եթե հայերը շահագրգռված էին ռուսական զենքի հաջողություններով, կոմսը հովանավորում էր հայկական կամավորական զորաջոկատներին, փախստականներին, հայկական բուրժուազիային: Եթե հեղափոխական կուսակցությունը այս պահին որևիցե բան չի նախատեսում ու չի ձեռնարկում ընդդեմ իշխանության, նա ձգտում էր հաշտ լինել կուսակցությունների հետ: Քանի որ կոտորածները թուլացնում էին ընդդիմության և հեղափոխության ուժերը, նա չէր խոչընդոտում կոտորածներին: Եվ այդ ամենը լողովում-հարթվում էր իր անձնական հմայքի, խորը մտքի և դիտողականության շնորհիվ: Ավելի մանր տրամաչափի անձինք շատ շուտ էին բացահայտում իրենց խարդավանքները և գործում էին ավելի կոպիտ:

1916թ. գարնանը, երբ Լոնդոնում և Պետերբուրգում արդեն կայացան համաձայնությունները Թուրքիան ազդեցությունների գոտիների բաժանելու մասին⁵⁶ և Էրզրումը, Վանը, Բիթլիսն ու Տրապիզոնը հայտնվեցին Ռուսաստանի ազդեցության գոտու ներսում, հակահայկական կուրսի դրսևորումը դարձավ արդեն Ռուսաստանի պետական քաղաքականություն (ընդգծումը մերն է – Վ.Հ.): Հայտնի է գեն. Յուդենիչի զեկույցը (5 ապրիլի 1915 թ.), որտեղ նա ուղղակիորեն առաջարկում է “ Ալաշկերտի, Դիադինի և Բայազետի շրջանները բնակեցնել Դոնի և Կուբանի կազակներով: Կոմս Վորոնցովն այդ զեկույցը հաստատեց, և դա իր ժամանակին մեծագույն գաղտնիք էր:

Դա էլ ասենք, որ նման վերաբերմունք հայերի հանդեպ դրսևորում էին իշխանության հետադիմական ներկայացուցիչները: Կար նաև այլ մոտեցում: Օրինակ՝ Դումայում կադետների առաջնորդ Միլյուկովը 1916թ. մարտին Դումայում արտասանած իր ճառում անհամաձայնություն հայտնեց հայկական տարածքների ռուսիֆիկացման այդ միտումներին: Մենք ձգտում էինք հզորացնել մեզ համակրողների ձայները: Մենք Միլյուկովին հրավիրեցինք Բաքու և Թիֆլիս, որպեսզի նա տեղում դասախոսություններ կարդա հայկական հարցի վերաբերյալ: Ես անձամբ եմ կազմակերպել այդ դասախոսությունները: Բայց Բաքվում թաթարները ցույց կազմակերպեցին ընդդեմ Միլյուկովի, իսկ Թիֆլիսում դասախոսության թույլտվությունը կարողացանք ստանալ մեծ դժվարությամբ: Այսպիսով, մենք՝ հայերս, տալիս էինք զոհերը, հույսեր էինք փայփայում, իսկ իրականում՝ մեծ դժվարություններով, քայլ առ քայլ նվաճում էինք մեր իրավունքները և պաշտպանում սեփական տեսակետները:

Ահա այդպիսի պայմաններում Կովկասի ժողովուրդները ժամանակավոր Կառավարության օրոք՝ սկզբից իշխան Լվովի, իսկ հետո՝ Կերենսկու նախագահությամբ, պետք է նոր պայմաններում կազմակերպեին իրենց համատեղ կյանքը: Այդ ժողովուրդները ազատություն էին ստանում առանց որևիցե նախնական փոխադարձ պայմանավորվածությունների: Նրանք, իշխանությունների կողմից գրգռված, միմյանց

⁵⁶ Խոսքը, հավանաբար, <<Սայբու-Պիկոյի համաձայնագիր>> կոչվող փաստաթղթի մասին է:

հետ չբանակցած ու չպայմանավորված, իսկ շատ հաճախ էլ՝ միանգամայն հակառակ ձգտումներով և միշտ՝ հակառակ գաղափարներով և նպատակներին հասնելու ընտրած եղանակներով: Մի մասը երազում ու ապավինում էր գերմանացիների օգնությանը, մյուսները՝ թուրքերին, երրորդը՝ allies (դաշնակիցների), չորրորդը՝ Ռուսաստանի օգնությանը, անկախ նրա քաղաքական-պետական վարչակարգից: Մտքերի, նենգության ու համակրանքի այդ խառնաշփոտի մեջ պետք է փնտրել վերջին տարիներին Կովկասը պատուհասած բոլոր դժբախտությունների պատճառները: Վերջերս, վրացի ինելամիտ գործիչներից մեկը՝ Չխենկելին, ինձ ասում էր. “ Որքան շատ բաներ կան, որ դեռևս մոտ անցյալում ինձ թվում էին չափազանց կարևոր, ինչպես ասենք, այս կամ այն սահմանագիծը, այս կամ այն ապտակը, ինձ այսօր ներկայանում են արդեն որպես մի դատարկ բան, և ինչքան շատ ու շատ բաներ մենք կորցրեցինք մանրուքների համար ծագող մեր դատարկ վեճերից”:

Դա միանգամայն ճիշտ է ասված: Ինչպես հետագայում կտեսնի ընթերցողը, ոչ մի ընդհանուր կարիք, ոչ մի, նույնիսկ ամենասարսափելի վտանգ, երբևիցե անկեղծորեն չեն միավորել Կովկասի ժողովուրդներին: Դժվարին պահերին նրանք ոչ միայն միասին չեն եղել, այլ եղել են նույնիսկ ընդդեմ միմյանց: Չի եղել փոխհամաձայնության և փոխզիջման ուղի: Բոլորը հանդես են եկել մաքսիմալիստական դիրքերից:

Ահա զանգվածներին տիրող նման հոգեբանության պայմաններում 1917թ. ամռանն իր աշխատանքներն սկսեց Կովկասյան Հատուկ Կոմիտեն: Նա չկարողացավ միավորել կովկասյան ժողովուրդներին: Հայերը գալիս էին Պապաջանյանի առանձնասենյակ, վրացիները՝ Չխենկելու, թաթարները՝ Ջաֆարովի մոտ: Իսկ ինքն իսառլամովին բոլորն էլ օտար էին: Ես հիշում եմ, թե ինչպես էր Խարլամովը կիսվում ինձ հետ. “Ես ի՞նչ անեմ, ես չեմ կարողանում և ոչ մի հարցի շուրջ համաձայնություն ապահովել իմ Կոմիտեում: Բոլորը տարբեր կողմեր են քաշում: Ամեն մեկի հետևից մի ժողովուրդ է կանգնած՝ իրեն հատուկ պահանջներով ու տեսակետներով”: Այդ ընթացքում կրկին սկիզբ առան հայ-թաթարական ակտիվ ընդհարումները և Կոմիտեի անդամները ստիպված եղան մեկնել Էրիվանի նահանգ՝ այնտեղ բնակչությանը հանդարտեցնելու համար:

Այդպիսին էր կառավարական մարմնի վիճակը երկրամասի կառավարման կենտրոնում:

Քաղաքային ինքնակառավարման մարմիններում աշխատանքներ էին ընթանում Կովկասի քաղաքային Դումաների ընտրությունների նախապատրաստման ուղղությամբ: Առաջին անգամ կիրառվելու էր ուղիղ և գաղտնի համընդհանուր ընտրությունների սկզբունքը: Բայց ամենը այդպես էր զուտ արտաքինապես: Իրականում ժողովուրդը բաժանվեց տարբեր կուսակցությունների համակրող ու կողմնակից խմբերի: Իսկ կուսակցությունները դեպի ընտրություններ թեև գնում էին կուսակցական դրոշների ներքո, սակայն միաժամանակ այդ կուսակցությունները խիստ ազգային էին. մենշևիկները՝ վրացիներ, դաշնակցականները՝ հայեր, մուսավաթականները՝ թաթարներ:

Թիֆլիսում ընտրությունների ընթացքը ես էի համակարգում: Մեծամասնությունն ստացան մենշևիկները՝ վրացիները, ռուսներն ու հայերը: Այդ մեծամասնությունը որպես քաղաքագլուխ առաջարկեց պրիստավ Էլիավային:

Ես թողեցի Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը, սակայն գրեթե նույն օրերին՝ 1917թ. օգոստոսին ընտրվեցի Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ: Այդ ընտրությունները հայերի համար բազմանշանակ էին. չորս հարյուր հազար բնակչությամբ Թիֆլիսի քաղաքագլուխը տեղափոխվում է քառասուն հազարանոց Ալեքսանդրապոլ: Խորհրդանաշակյան էր և, նույնիսկ մարգարեական այն հեռագիրը, որով ինձ հրավիրում էին զբաղեցնել Ալեքսանդրապոլի քաղաքագլխի պաշտոնը: Ինձ հեռագրում էին. «Դուք, հեքիաթի հերոսի նման, ոտք դնելով հայրենի հողի վրա, միանգամից Ձեզ կզգաք հզոր և նոր դարաշրջան կբացեք Ձեր ժողովրդի զարգացման համար»: Եվ իրոք, վեց ամիս անց Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը դարձավ անկախ Հայկական Հանրապետության Արտաքին գործերի նախարարը:

Ես Ալեքսանդրապոլ տեղափոխվեցի 1917թ. սեպտեմբերի սկզբներին՝ Թիֆլիսում 17 տարի աշխատելուց հետո: Թիֆլիսում աշխատելու 17 տարիների ընթացքում, -իսկ այդ պահին ես 43 տարեկան էի,- ես վրացիների և Վրաստանի հետ արդեն ստեղծել էի մի շարք ամուր կապեր: Դա

հետագայում ինձ շատ օգնեց և հեշտացրեց նրանց հետ՝ որպես հարևան երկրի ղեկավարների հետ շփվելու հարցում: Թիֆլիսում ես պահպանեցի իմ բնակարանը և հաճախակի էի գնում Թիֆլիս:

Ալեքսանդրապոլում ինձ դիմավորեցին շատ հանդիսավոր: Իմ գործընկերներն էին Վահան Նավասարդյանը⁵⁷՝ Հայաստանի պառլամենտի ապագա նախագահ և մշտապես ինձ ընդդիմություն, ու Ալեքսանդր Շարաֆյանը - հետագայում Արամի օգնականը և պարենավորման նախարարի տեղակալը: Մենք եռանդով գործի անցանք: Դումայում մենք ունեինք շատ լավ գործիչներ և քարոզիչներ, ինչպիսիք էին դաշնակցականներ Արշ. Ղազարյանը և Տերտերյանը, քաղաքային Դումայի նախագահ Հովակիմ Բուդաղյանը⁵⁸, հասարակ դասակարգի մի շարք ներկայացուցիչներ, թաթարների ձեռքով հետագայում սպանված հաճելի մենշևիկ Ասրիբեկովը, բոլշևիկ Ղարիբջանյանը⁵⁹, ով 1920-ին գնդակա-

⁵⁷ **Նավասարդյան Վահան Բեգլարի** (1886թ., Շուշի, Ռուսական կայսրություն-1956թ., Կահիրե, Եգիպտոս): Հայ հասարակական, քաղաքական, պետական և կուսակցական գործիչ, հրապարակախոս, ՀՀԴ անդամ: Կրթությունը՝ Սանկտ-Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտ: Ալեքսանդրապոլի փոխքաղաքապետ (1917-1918թթ.), քաղաքապետ (1918թ.), Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի պատգամավոր (1919-1920թթ.): Բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի կողմից Հայաստանի անկախությունը ոչնչացնելուց հետո ձերբակալվել է բոլշևիկների կողմից, սակայն կարողացել է բանտից փախչել և տարագրվել: 1922-ից բնակվել է Կահիրեում: Շուրջ 23 տարի անընդմեջ (1933-1956թթ.) եղել է ՀՀԴ Բյուրոյի անդամ (տե՛ս Մ.Բաբայան, Հուշամատյան անկախության, Երևան, 2019, էջ 383):

⁵⁸ **Բուդաղյան Հովակիմ Հարությունի** (1873թ., Կողբ, Սուրմալու, Ռուսական կայսրություն – 1928թ., Փարիզ, Ֆրանսիա): Հայ պետական և քաղաքական գործիչ, ՀՀԴ անդամ, կրթությունը՝ Վարշավայի և Օդեսայի կայսերական համալսարաններ, իրավաբան: 1917-1918թթ. եղել է Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի նախագահը, 1919-1920թթ.՝ Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի պատգամավոր: Հայաստանում բոլշևիկյան կարգեր հաստատվելուց հետո տարագրվել է Փարիզ, հետագայում՝ Փարիզ: (տե՛ս Մ.Բաբայան, Հուշամատյան անկախության, Երևան, 2019, էջ 306):

⁵⁹ **Ղարիբջանյան Բագրատ Բեգլարի** (1890թ., Բահադլու, Սուրմալու, Ռուսական կայսրություն – 1920թ., Երևան, Հայաստանի Հանրապետություն): Հայ բոլշևիկ, 1920թ. հակապետական Մայիսյան խռովության պարագլուխներից մեկը: Խռովության տապալումից հետո ձերբակալվել, դատապարտվել է մահապատժի, բայց

հարվեց Հայաստանի կառավարության հեղափոխական դատարանի վճռով: Առկա էր նաև կադետների միակ ներկայացուցիչը՝ Աղաբաբյանը: Այսպիսով, Հայաստանում, Ալեքսանդրապոլում, առաջին անգամ նշմարվեցին այն կուսակցությունները, որոնց վիճակված էր ունենալ կարևոր դերակատարում Հայաստանի պատմության մեջ:

Միաժամանակ, 1917թ. սեպտեմբերին Թիֆլիսում գումարվեց հայերի համառուսաստանյան համագումարը: Համագումարում քննարկվեց իրավիճակը, ընտրվեց Ազգային խորհուրդ: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիս Ահարոնյանը՝ հետագայում Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահը: Համագումարն իր վստահությունը հայտնեց Կերենսկու կառավարությանը: Միաժամանակ, այդ օրերին ես ընտրվեցի Թիֆլիսի քաղաքային Դումայի պատգամավոր և պահպանեցի իմ տեղը «Քաղաքների Միության» կազմում:

1917թ. աշնանից պարզ դարձավ, որ ազգային պահը սկսում է ժայթքել ու հորդել: Ես համարում եմ, որ հատկապես 1917թ. աշնանը, թեև դեռևս չէր արտասանվել և ոչ մի բառ Հայաստանի, կամ Հանրապետության մասին, սակայն օդում սկսեցին սավառնել ու թևածել նոր մտքեր, նոր գաղափարներ. առաջին անգամ խոսվեց ազգային տարածք ունենալու իրական հնարավորության մասին (ընդգծումը մերն է – Վ.Հ.):

Հետագայում ես կրկին կանդրադառնամ այդ հարցին, սակայն հենց այստեղ նշեմ, որ այդ ուղղությամբ տեսական մեծ աշխատանք էին տանում այսօր արդեն լուսահոգի Շահատունին, իմ եղբայր Գեորգին, իսկ գործնական առումով, բուն էրիվանում՝ Դրոն ու Արամը: Էրիվանի քա-

դատավճռի ի կատար ածումը հետաձգվել է: Սակայն, 1920թ. օգոստոսի 2-ին Գորիսի բանտում, դաշնակցական հայտնի գործիչներ, երկրի խորհրդարանի պատգամավորներ Վահան Խորենու, Արշակ Շիրինյանի և Զանգեզուրի այլ դաշնակցականների բոլշևիկների ձեռքով սպանվելուց հետո, ՀՀ իշխանությունները որոշում կայացրեցին ի կատար ածել հակապետական ելույթի մի քանի մասնակիցների, այդ թվում նաև Բ.Ղարիբջանյանի դատավճիռը:

ղաքագլուխն էր Սմբատ Խաչատրյանը⁶⁰՝ Հայկական պառլամենտի ապագա պատգամավորը:

Հայկական մտավորականության հայացքը Թիֆլիսից ու Բաքվից աստիճանաբար սկսեց շրջվել դեպի Երիվան: Դա վաղուց էր կանխատեսել իմ ավագ եղբայր Կոնստանտինը⁶¹, որ դեռևս պատերազմից առաջ Բաքվում հիմնել էր “Մշակութային միություն”: Այդ կազմակերպության գործունեության ուղղություններից էր, մասնավորապես՝ Երիվանի նահանգում հողատարածքների ձեռքբերումն ու դրանց ոռոգումը, այդ նահանգում միջին տեխնիկական դպրոցների հիմնումը, դեպի Երիվանի նահանգ մտավորական երիտասարդության հրավիրելն ու այնտեղ բնակեցնելը: Կառուցվել էր նույնիսկ Խաչատուր Աբովյանի արձանի համար նախատեսվող պատվանդանի հիմքը: Եղբայրս ժամանակին հաճախակի ինձ կշտամբում էր, թե իմ բոլոր ուժերն ու կարողությունները ես վատնում եմ Թիֆլիսի զարգացման համար, որ այնտեղ եմ հրավիրում ներդնել խոշոր հայկական նվիրաբերությունները: Այժմ ես հասկանում եմ, որ իմ եղբայրն իրավացի էր և այդ օրերին կանխատեսում էր շատ ու շատ բան, ինչը մեր համար այդ ժամանակ դեռևս անհասկանալի էր և անըմբռնելի: **Այսինքն, որ հատկապես հենց Երիվանում է դրվելու հայերի քաղաքական ազատագրման հիմքը (ընդգծումը մերն է – Վ.Հ.):**

Ինչպես կարող է տեսնել ընթերցողը, 1917թ. աշնանն արդեն սկսեցին ի հայտ գալ ազգային հոսանքի ձևավորված առվակներ: Նրանք ինքնա-

⁶⁰ **Խաչատուրյան Սմբատ (Մումբատ) Հարությունի** (1863թ., Երիվան, Ռուսական կայսրություն – 1937-ից հետո, Խորհրդային միություն): Հայ պետական և քաղաքական գործիչ, ՀՀԴ անդամ: Կրթությունը՝ Լազարյան ճեմարան, Մոսկվայի կայսերական համալսարան, իրավաբան: 1915-1917թթ.՝ Երիվանի քաղաքագլուխ, 1918-1920թթ.՝ Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի պատգամավոր: 1922թ. Ջամալ-փաշայի սպանության կապակցությամբ ձերբակալվել է, հետո ազատ արձակվել: Խորհրդային կարգերի օրոք բոլշևիկյան իշխանությունների որոշմամբ 1937թ. Մոսկվայում ձերբակալվել է և արտրվել Սիբիր: Հետագա ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ բացակայում են: (տե՛ս Մ.Բաբայան, Հուշամատյան անկախության, Երևան, 2019, էջ 299):

⁶¹ **Խատիսյան Կոնստանտին Հովհաննեսի** (1864թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն – 1913թ., Բաքու, Ռուսական կայսրություն): Հայտնի հայ գործարար, բարեգործ, կուսակցական, ազգային և հասարակական գործիչ: Մասնագիտությամբ՝ քիմիկոս, լեռնային ինժեներ:

կազմակերպվեցին “Ազգային խորհուրդների” շուրջ: Մասնավորապես, պատերազմի ժամանակ գործող “Ազգային բյուրոն”, որը կազմակերպել էր կամավորական շարժումը և մերժում էր հայկական վիլայեթների կազմակերպման գաղափարը, իր տեղը զիջեց “Ազգային Խորհրդին”, որ ընտրվել էր արդեն Ռուսաստանի ողջ հայության կողմից: “Ազգային Խորհրդի” առաջնային խնդիրներից մեկը եղավ Հայկական կորպուսի ստեղծումը՝ գեներալ Նազարբեկովի հրամանատարությամբ: Հայաստանի նորագույն պատմության լավագույն գիտականներից մեկը՝ ֆրանսիացի կապիտան Պուադեբարը, նույն ինքը՝ ճիզվիտ քահանա և Ֆրանսիայի հոգևորական առաջնորդը Հայաստանում, հրատարակել է գրքերի մի շարք, որը նվիրված է Կովկասի, Պարսկաստանի և Հայաստանի պատմությանը 1917-1923թթ. ընթացքում: Այդ գրքերում ընթերցողը նշված ժամանակաշրջանին վերաբերող մեծ թվով տվյալներ կարող է գտնել: Անձամբ ես Պուադեբարին տրամադրել եմ մեծ թվով տեղեկություններ և փաստեր, ուստիս այստեղ կրկնվելու կարիքը չեմ տեսնում

Իսկ բուն Ռուսաստանում այդ ժամանակամիջոցում զարգանում ու հզորանում էր բոլշևիկյան քարոզչությունը: 1917թ. հուլիսին տեղի ունեցավ հեղափոխության առաջին “փորձարկումը”, սակայն այն ճնշվեց կառավարության կողմից: Եղավ ընդդեմ բոլշևիկների ուղղված Կոռնիլովյան շարժումը, սակայն վերջինս էլ ճզմվեց Կերենսկու կառավարության կողմից: Այդ շարժումը ես այսօր էլ չեմ համարում հակահեղափոխական: Պարզապես, այն օրերին բոլորն այնքան էին հիացած ու շլացած Կերենսկու Ժամանակավոր Կառավարությունով, որ անպարկեշտ էր համարվում անգամ խորանալ գեներալ Կոռնիլովի նկատառումների էության մեջ: Բոլշևիկների կողմից ժողովրդի և բանակի մեջ նետվել էր հետևյալ կոչը. “Իսադադություն առանց բռնանվաճումների և ռազմատուգանքների”: Այդ կոչը թուլացրեց զանգվածների ուժն ու կորովը: Հանուն ինչի՞ կռվել, եթե ամենը վերադառնալու են իրենց տեղերը: Հանուն ինչի՞ արյուն թափել, եթե չկա իրական թշնամի:

Հայերը շատ մտահոգ էին և հուզված, կարծելով, որ այդ կոչերի ազդեցության տակ Ռուսաստանը կլքի Թուրքիայից գրաված տարածքները:

Իրականում, հենց այդ կոչերն էլ սկիզբ դրեցին ռուսական բանակի քայքայմանը:

Մեպտեմբեր ամիսն էր: Փողոցներում բացեիքաց ընթանում էր բոլշևիկյան ազիտացիան: Այդ քարոզչությունը խաղում էր մարդկանց ամենապարզունակ զգացմունքների վրա: Քարոզողները մոտենում էին չունևոր մարդկանց, նրանց ցույց էին տալիս շեն-շեն տները և ասում. “Ա՛յ, այս հրաշալի տանն ապրում է ընդամենը երկու մարդ, իսկ դուք՝ պրոլետարներդ, տասը հոգով բնակվում եք մի սենյակում: Դա արդարացի չէ: Բոլշևիկները կվերացնի այդ անարդարությունը”: Դա ազդեցություն էր թողնում ամբոխի վրա: Բանակի շարքերի մեջ նետվել էր մյուս կոչը. “դեպի տուն՝”: Զինվորների համար էլ դա էր հասկանալի: Նրանք սկսեցին լքել բանակի շարքերը և ճանապարհ ընկնել դեպի տուն: Գյուղացիներին ասում էին. “ամբողջ հողը ժողովրդին”: Եվ բոլշևիկները նվաճում էր իր համար անհրաժեշտ հենարան: Այդ բոլոր կոչերը հենց բնում սպանում էին ռուսական բանակի ուժերով Թուրքիայից նվաճված Արևմտյան Հայաստանի տարածքները պահելու բոլոր հնարավորությունները: “Հայոց Ազգային խորհուրդը” դիմեց Կերենսկուն, որպեսզի հնարավորություն տրվի Արևմտյան ռազմաճակատի հայազգի զինվորներին գալ Կովկաս և այդ ուժերով Կովկասյան ռազմաճակատում ստեղծել հատուկ հայկական կորպուս: Կերենսկին դանդաղում էր: Կորպուսը ձևավորվում և համարվում էր Թիֆլիսում:

Այդ օրերին ես հեռագիր ստացա, որ անհրաժեշտ է մեկնել Մոզիլյով՝ Ռուսական Բանակի Գերագույն Գլխավոր Հրամանատարի Զորակայան, որտեղ խորհրդակցություն պետք է անցկացվեր Կովկասի “Քաղաքների Միության” հետ առնչվող հարցերի շուրջ: Մասնակցելու էի նաև Մոսկվայում և Պետերբուրգում կայանալիք համագումարներին:

Ես Ալեքսանդրապոլից մեկնեցի հոկտեմբերի սկզբներին և հասա Մոսկվա: “Քաղաքների միության” համագումարը նոր բնույթ էր կրում: Իմ ճանաչած նախկին, 1916թ. գործիչների փոխարեն ես տեսա նոր դեմքեր, որոնք ընտրվել էին համընդհանուր ընտրությունների միջոցով: Համագումարում թագավորում էր սոցիալ-հեղափոխականների կուսակցությունը: Նրանք մեծամասնություն էին: Պատահում էին նաև հատու-

կենտ բոլշևիկներ՝ Ցարիցինի քաղաքագլուխ հայտնի բոլշևիկ Մինինի գլխավորությամբ: Նրանք չափազանց ամբարտավան էին, սակայն բոլորը նրանց ծաղրում էին:

Առհասարակ, 1917թ. աշնանից բոլշևիկներին կարելի էր տեսնել ամենուր: Ես հիշում եմ, երբ Թիֆլիսից ավտոմեքենայով մեկնեցի Վլադիկավկազ, ինձ հետ մեքենայում էր նաև բոլշևիկ բժիշկ Օրախելաշվիլին՝ Վրաստանի այսօրվա բոլշևիկյան կառավարության նախագահը: Նա հավատացած էր, որ բոլշևիկներին իշխանությունից բաժանում են ընդամենը մի քանի ամիս: Ինձ մոտ ծառայում էր նաև հայտնի հայ բոլշևիկ Նազարեթյանը⁶²: Նրա ինքնավստահ դեմքը հիմա էլ այժիս առաջ է: Ասեմ, որ չափազանց աշխատող էր: Բայց բոլորից շատ հիշում եմ Ստեփան Շահումյանին: Նա գաղափարական բոլշևիկ էր և գերազանց անձնավորություն: Նա հավատում էր իր գաղափարներին, ապրում էր այդ գաղափարների համար: Դեռևս 1905 թ. ես և Երզնկյանը՝ Հայաստանի ներկայիս հողագործության նախարարը և Սպանդարյանը, ով մահացավ աքսորից ազատվելուց հետո, քանիցս միասին եղել ենք միջնորդական դատարանների կազմում և ես լավ եմ հիշում, որ Շահումյանի համար փաստերի գնահատման միակ չափորոշիչը արդարությունն էր: Շահումյանը սպանվեց 1918թ.: Ես հիշում եմ ևս մի քանի անձերի այդ ճամբարից: Այդ ժամանակ արդեն նրանք մոլեռանդ էին, ֆանատիկոս: Ասենք, «Քա-

⁶² **Նազարեթյան Հմայակ Մարգարի** (17 նոյեմբերի, 1889թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն - 1937թ., ԽՍՀՄ), հայազգի կուսակցական և պետական գործիչ, ՌՄԴԲԿ անդամ 1905 թվականից, բոլշևիկ: Ընդհատակյա կուսակցական գործունեություն է ծավալել Կովկասում, անձնական մտերմություն է ունեցել Ի.Ստալինի հետ, որը շարունակվել է մինչև Խորհրդային կարգերի հաստատման առաջին տարիները: 1919թ. Վրաստանում ապստամբություն է կազմակերպել այդ անկախ երկրի օրինական իշխանությունների դեմ, հետագայում գործուն մասնակցություն է ցուցաբերել այդ երկրի անկախության տապալման և նրա խորհրդայնացման հարցերում: Խորհրդային տարիներին զբաղեցրել է տարբեր պետական և կուսակցական պաշտոններ Խորհրդային Վրաստանում և Խորհրդային Ռուսաստանում: 1937թ. բոլշևիկյան իշխանությունների կողմից ձերբակալվել է և գնդակահարվել:

դաքնների Միությունում” ծառայող Աթարբեկովի⁶³ նման, ով հետագայում հանրահայտ դարձավ Աստրախանում ու Կիսլովոդսկում իր կազմակերպած ու անմիջական մասնակցությամբ իրագործած զանգվածային տեռորով, իսկ այժմ Անդրկովկասյան Ֆեդերացիայի փոստի և հեռագրակապի մինիստրն է։ Կային և ավելի ցածր կարգի բոլշևիկներ, բայց նրանք էլ էին առանձնանում մոլեռանդությամբ։ Ես հիշում եմ, Ֆիլիպ Մախարաձեին, հետագայում վրացական բոլշևիկյան կառավարության նախագահ, ով 1917-ի գարնանը իմ գլխավորած գործադիր կոմիտեի քարտուղարն էր, ում բոլոր, անգամ ամենաչնչին զանցանքի համար գոյություն ունեւ միայն մեկ պատժամիջոց՝ կախաղան։

Քանի դեռ նրանք իշխանության չէին եկել ամուր, անշեղորեն կանգնած էին մնում իրենց դիրքերին։ Նպատակն արդարացնում է միջոցները։ Այդպիսին էր նրանց նշանաբանը։

Ես եկա Մոսկվա, համագումարի։ Մոսկվայում համագումարը նույնպես վստահություն հայտնեց Կերենսկու կառավարությանը։ Նրա համագումարը շատ դժգույն էր։ Ճառերն արտասանվում էին առանց ոգևորության։ Ժամանակավոր կառավարությունը թույլ էր։ Նա խոսում, խոսում, անվերջ խոսում էր։ Ճառերը թերևս, կառավարման միակ միջոցներն էին։ Ես Կերենսկուն կյանքիս ընթացքում տեսել եմ մի քանի անգամ։ Տեսել եմ նրան Մենատում, դատավարության ժամանակ, երբ նա

⁶³ **Աթարբեկյան Գևորգ Ալեքսանդրի** (1892թ., Վաղարշապատ, Ռուսական կայսրություն - 1925թ., Թիֆլիս, ԽՍՀՄ)։ Հայ բոլշևիկ, Հայաստանի անկախության երդվյալ ու մոլի թշնամի։ ՌՄԴԲԿ անդամ 1908-ից։ Ավարտել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ 1917թ. Փետրվարյան հեղափախությունից հետո բոլշևիկյան քարոզչություն և կազմակերպչական գործունեություն է ծավալել Հայաստանի տարածքում։ Ռուսաստանում Հոկտեմբերյան հեղափախությունից հետո և քաղաքացիական պատերազմի օրերին մի շարք ղեկավար պաշտոններ է գրավել Աստրախանի և Հյուսիսային Կովկասի Արտակարգ հանձնաժողովներում (ՉեԿա), այդ տարածքներում գործող Կարմիր բանակի զորամիավորումների Հատուկ բաժիններում։ Աչքի է ընկել Խորհրդային իշխանությանը ոչ լոյալ տարրերի նկատմամբ մարդկային բանականության մեջ չտեղավորվող կիրառված դաժանությամբ, որոնց բերել է իր անմիջական մասնակցությունը։ Հայաստանի բռնի խորհրդայնացումից հետո գործուղվել է Հայաստան, որտեղ տեղի Հեղկոմի հետ սկսել է կիրառել իրեն հարազատ գործելաոճը։ 1925թ. ինքնաթիռը, որում գտնվում էին Գ.Աթարբեկյանն ու Ա.Սյաննիկյանը, օդում պայթել է։

պաշտպանում էր դաշնակցականներին, տեսել եմ իմ տանը, երբ նա եկել էր Կովկաս, տեսել եմ տարբեր դերերում, տեսել եմ նրան և միշտ էլ համարել եմ, որ սա ամեննին այն խառվածքն ու կերպարը չէ, որ տանում ուղղորդում է պետությունը: Բայց այն ժամանակաշրջանի Ռուսաստանը ճառեր շատ էր սիրում: Իսկ բանվորական պատգամավորների խորհուրդներում մշակվում էին բանաձևեր: Ճառեր և բանաձևեր,- ահա թե ինչ էր զգացվում օդում, օդը լեցուն էր դրանցով:

Իսկ ժողովուրդը խաղաղություն էր ուզում, հող և հաց: Հասունանում էր ընդհարումը ժողովրդի և իշխանության միջև: Բոլշևիկները դիպուկ էին և խփում էին ճշգրտորեն նշանակետին: Իշխանությունը նրանց դեմ չէր պայքարում: Կերենսկին մտադրված էր բոլշևիկներին հաղթել հայրենասիրական ճառերով: Նա խուսափում էր կտրուկ միջոցներ կիրառելուց:

Մոսկվայից ես մեկնեցի Գերագույն Գլխավոր Հրամանատարի Ձորակայան: Գեներալ Դուխտնինը⁶⁴ մեզ հրավիրեց խորհրդակցության: Բայց Ձորակայանում ամեն ինչը ինձ չափազանց տարօրինակ թվաց. Զինվորականների շրջանում այլևս չկար նախկին կարգապահությունը: Գեներալը՝ ամբողջ Ռուսաստանի բանակի հրամանատարը, խոսում էր անվստահ և մի տեսակ անաղմուկ: Սպասում էին, որ երեք օր հետո Ձորակայան է ժամանելու Կերենսկին: Բայց նա չեկավ: Մենք մշակեցինք “Քաղաքների Միության” գործունեության հետագա ծրագիրը: Մոզիլյովում ես մնացի երեք օր և բնակվում էի հյուրանոցում՝ Կերենսկու կառավարության նախկին արդարադատության մինիստր, երդվյալ հավատարմատար, ռուսաստանյան “Քաղաքների Միության” գործիչ Պերևերզևի հարևանությամբ: Պերևերզևը չափազանց զայրացած էր Կերենսկու վրա: Նա Կերենսկուն մեղադրում էր, որ վերջինս ձեռքից բաց թողեց Լենինին և Տրոցկուն, որոնց Պերևերզևը կարգադրել էր ձերբակալել և անհրաժեշտ էր համարում, որ նրանք պետք է մնան կալանքի տակ: Նա ասում էր, որ Կերենսկին, իր անհեռատեսության պատճառով, կործանվե-

⁶⁴ Գեներալ-լեյտենանտ **Նիկոլայ Նիկոլանիչ Դուխտնին**, 1917թ. Նոյեմբերի 3-ից մինչև — 20 նոյեմբերի 1917թ.՝ Ռուսաստանի Գերագույն գլխավոր հրամանատարի պարտականությունների կատարող կամ պաշտոնակատար:

լու է հենց նրանց ձեռքով: Այդ տարաձայնության պատճառով էլ, ասաց Պերևերզևը, ինքը դուրս է եկել Կառավարության կազմից:

Այդ ամենից մեկ օր անց ես մեկնեցի Պետերբուրգ: Տարօրինակ բա՛ն: Ես եկա Պետերբուրգ հոկտեմբերի 22-ին: Փողոցներում ամեն ինչ սովորական էր: Հսկա քաղաքը ապրում էր իր առօրյա կյանքով: Ես տեսակցեցի իմ ընկերոջը՝ ռուսական Պառլամենտի անդամ Աճեմովին: Հանդիպեցի նաև բժիշկ Յակով Զավրիսին՝ մեր ընտիր, անձնագրի ընկերոջը:

Մինիստրություններն զբաղված էին իրենց հերթական գործերով: Հոկտեմբերի 23-ը և 24-ը ես անցկացրեցի Ալեքսանդրապոլի հարցերով տարբեր մինիստրություններ այցելելով և նույնիսկ հոկտեմբերի 27-ի համար գնեցի երկաթուղով մեկնելու տոմար:

Հոկտեմբերի 25-ի առավոտյան, ժամը 10-ին ես անցնում էի մայրաքաղաքի գլխավոր փողոցով՝ Նևսկի պողոտայով, և ինձ զարմացրեցին ինչ-որ տարօրինակ անձինք. Նրանք քաղաքացիական հագուստներով էին, բայց հրացաններով: Եվ նրանց ոնց որ թե ոչ ոք չէր կանգնեցնում: Ես նույնիսկ չէի հասկանում, թե ովքե՞ր են արդյոք այդ մարդիկ: Անցորդներից ոմանք հետաքրքրասիրությամբ դիտում էին նրանց, ոմանք էլ կողքերով անցնում էին առանց նայելու: Ես հասա Նևսկի պողոտայի և Մոյկայի անկյունը ու այնտեղ տեսա զինված անձանց արդեն մի ամբողջ խումբ: Ինչ-որ տեղից լսվեց կրակոց...Կեսօրին՝ ժ.12-ին, ես հասա այն շենքի մոտ, ուր նիստն էր վարում, այսպես կոչված՝ Պետական նախախորհրդարանը: Դա մի հաստատություն էր, որն իրենով այդ պահին փոխարինում էր Պառլամենտը և Սահմանադիր ժողովը: Ես ներս մտա Նախախորհրդարան և սկսեցի լսել ելույթները: Ելույթներն արտասանվում էին ճոխ ու առատորեն: Խոսում էր Կերենսկին, խոսում էին էսեռները, մենշևիկները, կադետները: Խոսակցությունների թեման հենց այն էր, ինչը ինձ զարմացրել էր դրսում. անսովոր տրամադրություններ քաղաքում, հրացանավոր մարդիկ, կրակոցներ...Լսվում է Կերենսկու ձայնը. “Ես խռովարարներին կճնշեմ հրով ու սրով: Ազատ Ռուսաստանը չի հանդուրժի բռնություն և օրինական իշխանության բռնի տապալում”: Հնչեցին ծա-

փահարություններ: Խմբակցությունների ներկայացուցիչներն իրենց ելույթներում աջակցություն էին խոստանում գործող կառավարությանը:

Ելույթներից հետո հայտարարվեց ընդմիջում: Բուֆետում ես նույն սեղանի շուրջ հայտնվեցի պրոֆեսոր Կուզմին-Կարավանի հետ, ով ինձ տեղեկացրեց, որ գորանոցներում խմորումներ են ընթանում, որ բոլշևիկները որոշ գնդերում հաջողության են հասնում և, որ կառավարությունը անպայման կճնշի այդ խմորումները: Նիստը վերակսվեց: Մակայն մի քանի րոպե էլ չանցած, նիստերի դահլիճ ներս մտան հրացանները ձեռքներին մի քանի նավաստիներ և բոլորին առաջարկեցին ցրվել: Լսվեցին բողոքի և անհամաձայնության ձայներ, բայց ի վերջո բոլորը ցրվեցին: Ոչ մի դիմադրություն, ծեծկոտուք և միջադեպեր տեղի չունեցան: Ես նույնպես դուրս եկա և կրկին անցնելով Նևսկի պողոտայով նկատեցի դեպի Չմեռային պալատ ընթացող հրացանավոր զինվորներով լիքը ավտոմոբիլներ: Ես նորից եկա Աճեմովի մոտ և նրան պատմեցի իմ տեսածը: Աճեմովի մոտ նստած էր իր զարմիկը՝ Լյայյա Աճեմովը, 17 տարեկան մի պատանի, մոլի բոլշևիկ, որը 1921թ. սպանվեց Էրիվանում՝ հակաբոլշևիկյան ապստամբության ժամանակ: Նա մեզ ասաց, որ բոլշևիկներն այսօր կվերցնեն իշխանությունը և կրկին շտապեց դեպի Սմոլնի՝ ինստիտուտի շենք, ուր այդ պահին իր նիստն էր անցկացնում բոլշևիկյան Խորհուրդը՝ Լենինի և Տրոցկու գլխավորությամբ: Այն մասին, թե ինչ էր կատարվում այդ ճամանակ Սմոլնիում, մանրամասնորեն իր հատուկ գրքում շարադրել է Տրոցկին: Հանկարծ հնչում է հեռախոսի զանգը: Պարզվեց, որ գեներալ Բագրատունին⁶⁵, որ այդ պահին զբաղեցնում էր Պետերբուրգի զինվո-

⁶⁵ Իշխան **Բագրատունի Հակոբ Կարապետի** (1879թ., Ախալցխա, Ռուսական կայսրություն - 1943, Լոնդոն, Միացյալ Թագավորություն): Ռուսական և հայկական բանակների գեներալ, ռազմական ու պետական գործիչ, դիվանագետ: Ծագումով՝ ազնվական, կրթությունը՝ Կիևի առաջին ռազմական ուսումնարան (1900թ.), Կայսերական Գլխավոր շտաբի Նիկոլայան ակադեմիա (1907թ.): Մինչև 1917թ. վարել է տարբեր հրամանատարական պաշտոններ ռուսական կայսերական բանակում, հասել գնդապետի աստիճանի: 1917 թվականի **հունիսից** ծառայել է ռազմական և ծովային մինիստր Ալեքսանդր Կերենսկու կառավարությունում: 1917 թվականի **հուլիսի 12**-ից եղել է Պետրոգրադի ռազմական օկրուգի շտաբի պետ: 1917 թվականի **օգոստոսի 30**-ից՝ գեներալ-մայոր է: Ժամանակավոր կառավարության համաձայնությունից հետո եղել է ռուսական բանակում հայկական զորամասերի

րական օկրուգի հրամանատարի պաշտոնը, գտնվելով Ձմեռային պալատում, տեսել էր մոտեցող, զինվորներով լցված ավտոմոբիլները և, գիտակցելով իր բաժին պատասխանատվությունը, ցանկացել էր խորհրդակցել իմ ու Յաշա Չավրիևի հետ: Նա խնդրեց մեզ արագ գալ Ձմեռային պալատ: Ես ու Չավրիևը գնացինք նրա մոտ: Աշխատասենյակում էր նաև Բագրատունու շտաբի պետ գեներալ Տիգրանյանը: Պատուհանից պարզ երևում էր, որ գորքը սկսում է շրջապատել Ձմեռային պալատը: Բագրատունին մեզ բացատրեց, որ օկրուգի 40000 զորքի մի մասը բոլշևիկների կողմն է, մի մասն էլ պահպանում է չեզոքություն: Կառավարության կողմն են միայն յունկերները և 800 հոգանոց կանանց գումարտակը: Ինչ պետք է ինքն անի: Կերենակին էլ մեկնել է ռազմաճակատ թարմ զորամասեր Պետերբուրգ բերելու հույսով: Մենք, միմյանց հետ խորհրդակցելով, որոշեցինք գեներալին ասել, որ Ձմեռային Պալատի պաշտպանության դրությունն անհույս է, որ մենք, որպես իրադրության ակնատեսներ ու վկաներ, տեսնում ենք, որ այս պահին հրամանատարն անգոր է: Մենք դուրս եկանք շենքից: Ձմեռային պալատն արդեն ամբողջական շրջապատման մեջ էր: Ինձ ու Չավրիևին հնարավորություն տրվեց հեռանալ

ստեղծման առաջին կազմակերպիչներից մեկը: 1917թվականի օգոստոսին, միաժամանակ շարունակելով ռազմական օկրուգի շտաբի պետի պաշտոնը, ընտրվել է Հայկական զինվորական կոմիսար և Հայկական ռազմական խորհրդի նախագահ: Ակտիվորեն զբաղվել է Հայկական կորպուսի կազմավորմամբ: 1917թ. նոյեմբերի 7-ին նշանակվել է Պետրոգրադի ռազմական օկրուգի հրամանատար: Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ բոլշևիկների կողմից ձերբակալվել է և ազատ է արձակվել 1917թ. դեկտեմբերի 15-ին: Հետագայում մասնակցել է Բաքվի պաշտպանական կռիվներին՝ ընդդեմ թուրքական զորքերի, եղել է Բաքվի Հայոց ազգային խորհրդի անդամ: Քաղաքն ընկնելուց հետո հեռացել է Պարսկաստան, 1918-ի նոյեմբերին վերադարձել է Բաքու և կրկին վերընտրվել Ազգային խորհրդի կազմում:

1919 թվականին ընդգրկվել է Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայաստանի պատվիրակության կազմի մեջ՝ որպես խորհրդատու: 1919 թվականի օգոստոսից եղել է Հայաստանի ռազմական պատվիրակության նախագահ, ուղարկված ԱՄՆ՝ բանակցելու պաշտպանական ոլորտում համագործակցելու համար: Պատվիրակության առաքելության ավարտից հետո վերադարձել է Ֆրանսիա, 1920 թվականին նշանակվել Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպան, որտեղ էլ շարունակել է ապրել մինչև կյանքի վերջ: (տե՛ս А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне..., с.268):

և մենք դժվարությամբ անցանք ջրանցքը նավակների վրայով: Գեներալ Բագրատունուն ձերբակալեցին, իսկ ռազմական մինիստրի օգնական գեներալ, իշխան Տումանովին զինվորները փորձել էին ձերբակալել, նա դիմադրել ու պաշտպանվել էր, զինվորներն էլ նրան սպանել էին, մարմինն էլ նետել Մոյկայի ջրանցքը: Ես վերադարձա տուն: Անցնելով գետի կողքով ես տեսնում էի, թե ինչպես Նևայում կանգնած “Ավրորա” հաճանավից կրակում էին Ձմեռային Պալատի ուղղությամբ: Ընթանում էր Ձմեռային Պալատի գրոհը, ուր դեռ նիստ էին անում մինիստրները: Կրակում էին հրացաններից, թնդանոթներից և գնդացիներից: Մի շարք փողոցներ արգելափակված էին: Ես անցնում էի Դումայի մոտով և նկատեցի, թե ինչպես Դումայի շենքից մի թափոր է դուրս գալիս Թիֆլիսի քաղաքապետարանում իմ նախքին օգնական և իմ լավ բարեկամ իշխան Ալեքսանդր Արդուտինսկի-Դոլգոռուկիի գլխավորությամբ: Նրանից հետո, երբ ես թողեցի Թիֆլիսի քաղաքագլխի պաշտոնը, և տեղափոխվեցի Ալեքսանդրապոլ, իշխանը տեղափախվեց Պետերբուրգ և այստեղ ընտրվեց Պետերբուրգի քաղաքագլխի օգնական: Պատգամավորները, գրական ու կուսակցական գործիչները գնում էին դեպի Ձմեռային Պալատ, որպեսզի դադարեցնեն գրոհը: Բայց նրանց արհամարհեցին և գործն ընթացավ իր նախատեսված կարգով: Ձմեռային Պալատը վերցված էր, մինիստրները՝ ձերբակալված: Հասարակական հաստատությունն ընկավ բոլշևիկների ձեռքը: Իրականացվեց բոլշևիկյան հեղափոխությունը՝ մարտյան հեղափոխության ավարտական փուլը: Հաստատվեց կոմունիստների իշխանությունը: Հաջորդ օրը քաղաքը մի տեսակ ամայացած էր:

Մեկ օր անց ես գնացքով մեկնեցի Կովկաս: Մոսկվայում, սակայն, լսվում էին հրետանու կրակոցներ: Մոսկվայում փողոցային մարտեր էին ընթանում: Մեկնելով Պետերբուրգից, ես անձամբ տեսնում էի, թե ինչպես է իշխանությունը ձեռքից ձեռք անցնում: Իշխանությունը, պարզապես, ընկավ Կերենսկու ձեռքից, ինչպես որ մարտին ընկավ ցարի ձեռքից և անցավ իշխան Լվովի ձեռքը: Հեղափոխությունը, հավանաբար, գտնում էր զանգվածների համար առավել հաճելի և դուրեկան կոչեր ու կարգա-

խոսներ: Հին իշխանությունը ոչ ոք չէր ցանկանում պաշտպանել իր կյանքի և արյան գնով:

1917թ. հոկտեմբերի վերջին օրը ես հասա Թիֆլիս: Թիֆլիս եկավ նաև բժիշկ Ջավրիևը: Թիֆլիսում իշխանությունը բոլշևիկների ձեռքը չէր անցել և այն զավթելու համար նրանց կողմից լուրջ փորձեր չէին էլ արվել: Ես գնացի իմ բնակարանը և հոջորդ օրը ինձ մոտ եկան Յաշա Ջավրիևն ու Ստեփան Շահումյանը: Ջավրիևի համար բոլոր իրադարձություններն ունեին մեկ արժեք: Արժեք՝ հայկական հարցի, թուրքական լծից հայերի ազատագրման տեսանկյունից: Ջավրիևի գաղափարախոսությունը հետևյալն էր. հայ ժողովուրդն իր ազատությունը պետք է նվաճի ինքը՝ զենքի ուժով, իսկ Ռուսաստանը՝ անկախ իր պետական ու քաղաքական համակարգից, կօգնի և, նույնիսկ՝ պե՛տք է օգնի հայերին: Այդ գաղափարի մոլեռանդ կրող ու դրան հավատացող, մեծ հոգու և բյուրեղյա մաքրության մարդ, ով հանուն իր ազգին ծառայելու թողեց տունը, աշխատանքն ու հեռանկարը, նա թերևս լավագույնն էր հոգու մաքրության տեսակետից այն բոլոր մարդկանց մեջ, ում ես հանդիպել եմ իմ ճանապարհին: Նրան խորթ էին ինքնագովազդը, տպավորիչ երևալը: Նա ամբողջովին այրվում էր իր ժողովրդի ցավերով: Նրան սիրում էին բոլորը, նրան վստահում և հավատում էին: Ինքը քանիցս ինձ մոտ ստուգում էր հայերին Ռուսաստանի կողմից օգնություն ցուցաբերելու թեզը և խնդրում էր իր տեսակետը հերքող փաստարկներ ներկայացնել իրեն, որպեսզի ինքն ավելի ամրապնդվի իր այդ պատկերացումների և հավատամքի մեջ: Բոլշևիկների իշխանությունը իր պատկերացումներում այն ռուսական իշխանությունը չէր, որը պետք է փոխեր իր հիմնական պատկերացումներն ու տեսակետները հայության ճակատագրում Ռուսաստանի դերակատարման վերաբերյալ: Եվ, դրանից ելնելով էր նա իր մոտ թաքցնում էր բոլշևիկ Շահումյանին, որին օրվա կովկասյան իշխանությունը փնտրում էր ձերբակալելու նպատակով: Նա Շահումյանին մեր տուն բերեց և ներկայացրեց այն Մանիֆեստի նախագիծը, որն, իր կարծիքով, պետք է ստեղծեր Լենինը Թուրքահայաստանը ինքնավար երկիր հռչակելու համար՝ “Ազգերի ինքնորոշման” սկզբունքին համապատասխան: Շահումյանը հավանություն տվեց տեքստին և հանձն առավ ու-

դարկել այն Պետերբուրգ: Եվ իրոք, բոլշևիկները նույնիսկ իրենց հիմնական սահմանադրության տեքստում ներառեցին Հայաստանի ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև Ռուսաստանից անջատվելու իրավունքով:

Թիֆլիսում ես դասախոսություն կարդացի Պետերբուրգում տեղի ունեցած հեղաշրջման մասին և հայտարարեցի, որ բոլշևիկներն, ըստ երևույթին, բավականին ամուր և հիմնովին են վերցրել իշխանությունը: Բոլշևիկյան հեղափոխությունը Կովկասը չէր շոշափել, այլ կանգ էր առել լեռնաշղթայից այն կողմ, որտեղ հետագայում սկսվելու էր Դենիկինի, Կոլչակի, Յուդենիչի, Վրանգելի քաղաքացիական պատերազմը: Իսկ Կովկասում իր տեղում մնաց Կովկասյան Հատուկ Կոմիտեի իշխանությունը Խառլամովի գլխավորությամբ: Բայց, քանի որ նրանք հաստատվել էին Ժամանակավոր Կառավարության կողմից, որն արդեն տապալված էր, ապա նրանց դրությունը գնալով ավելի ու ավելի երերուն էր դառնում: Իշխանությանն անհրաժեշտ էր նոր ակունք, նոր աղբյուր: Եվ ահա այդպիսի ակունք հանդիսացան ամեննին ոչ թե ազգային որևիցե մարմին՝ ընդհարուր ամպրոպի պայմաններում, միառժամանակ լռեցին ազգամիջյան անհարթություններն ու տարաձայնությունները, այլ բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդները և քաղաքական կուսակցությունները: Նրանք ստեղծեցին Անդրկովկասյան Կոմիսարիատը, որը թեև կազմված էր կուսակցական ներկայացուցչության սկզբունքով, սակայն նրա կազմում հավասարաչափ ընդգրկված էին հայերը, վրացիները, թաթարները, և արդյունքում ստացվեց ազգային – կուսակցական մի ներկայացուցչական մարմին: Կովկասյան Հատուկ Կոմիտեն զիջեց իշխանությունը և հեռացավ: Իշխանությունն իր ձեռքը վերցրեց Անդրկովկասյան Կոմիսարիատը՝ հանուն միասնական Ռուսաստանի: Կովկասն իրեն հայտարարեց Ռուսաստանի մի մաս, սակայն այնպիսի մաս, որը չի ճանաչում Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունը: Կովկասի կյանքում սկսվեց փաստացի, բայց ոչ իրավական անկախության դարաշրջանը: Իսկ Կովկասյան բանակի ռազմաճակատում սկիզբ առավ կատարյալ փլուզում՝ զորքերը թողնում էին դիրքերը և հեռանում Ռուսաստան, - դեպի տուն: Ռազմաճակատը մերկացավ...

ԳԼՈՒԽ IV

Անդրկովկասյան Կովկասիատը և Թուրքիայի հետ առաջին բանակցությունները Տրապիզոնում (1917թ. հոկտ.25 - 1ապր. 1918թ.)

1917 թ. հոկտեմբերի 25-ից, այսինքն Պետերբուրգում և ապա՝ ամբողջ Ռուսաստանում բոլշևիկյան հեղափոխության իրականացման պահից մինչև 1918թ. մայիսի 28-ը, այսինքն, Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման օրը ընկած ժամանակահատվածը, չափազանց կանոթ է և հետաքրքիր Հայաստանի Հանրապետության ստեղծման դիվանագիտական պատմության ուսումնասիրման համար: 1918թ. մայիսի 28-ից հետո ընթանում է արդեն բուն Հանրապետության զարգացման պատմությունը, իր սահմանների և Եվրոպայի կողմից ճանաչված լինելու համար նրա պայքարի, երկրի բնակչության համար պարեն գտնելու և տեղ հասցնելու, երկրի քաղաքացիական զարգացման և Թուրքիայի հետ նրա պատերազմների պատմությունը: Իսկ մինչ 1917թ. հոկտեմբերի 25-ը մենք ունեցել ենք համառուսաստանյան պատմության հետ կապված կայսրության Կովկասյան ծայրամասի մի պատմություն: Մենք տեսանք, թե ինչպես հայերը՝ Ռուսաստանի խաղաղ և սովորական քաղաքացիները, մինչև 1917թ. մարտյան հեղափոխությունը ապրել, ոգևորվել ու տառապել են ամբողջ Ռուսաստանի հետ, և ինչպես 1917թ. մարտից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակամիջոցում, աստիճանաբար համակվում էին Կովկասում ազգային ինքնուրույնության գաղափարով: Սակայն, միշտ նկատի ունենալով Ռուսաստանի հետ իրավական և փաստացի կապերի անվիճելի անհրաժեշտությունը, ինչը և դրսևորվեց իշխան Լվովի և Կերենսկու ժամանակավոր կառավարությունների օրոք: Այդ կառավարությունների օրոք Ռուսաստանից անջատվելու խնդիր չկար և չէր էլ բարձրացվում:

1917թ. հոկտեմբերի 25-ի իրադարձությունը՝ բոլշևիկյան ապստամբությունը, հանդիսացավ առաջին այն ահեղ հարվածը, որն առաջին ճաքերն առաջացրեց այդ միասնության մեջ: Կովկասը չընդունեց բոլշևիկ-

յան իշխանությունը և սկսեց ապրել Ռուսաստանից մեկուսացած իր ինքնուրույն կյանքով: Ճիշտ է, այդ մեկուսացում-անջատումը կրում էր փաստացի, բայց, դեռևս, ամենևին ոչ իրավական բնույթ: Կովկասի հետ մեկտեղ, Ռուսաստանից անջատ ու մեկուսի կյանքով սկսեցին ապրել նաև կովկասահայերը, նրանց հետ էլ՝ Թուրքիայից գաղթած արևմտահայ փախստականները: Ընդամենը՝ մոտ 2 միլիոն հայ բնակչություն (1 միլիոն էրիվանի նահանգում, Կարսի մարզում և Ելիզավետպոլի նահանգում, 400.000՝ Թիֆլիսում, Բաթումի մարզում և Քուբայիսի նահանգում, 300.000՝ արևմտահայեր, 200.000 Բաքվի նահանգում և Հյուսիսային Կովկասում):

Այդ ժամանակաշրջանի դիվանագիտական պատմությանը ծանոթանալու համար լավագույն աղբյուր է հանդիսանում 1919թ. Թիֆլիսում ռուսերեն տպագրված „Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии“, 512 стр., (период 25 окт. 1917 г. по 12 янв. 1919 г.) դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն: Որքան որ ես տեղյակ եմ, այդ հույժ կարևոր և հետաքրքիր հրատարակությունից Եվրոպայում կա ընդամենը երկու օրինակ: Այդ ժողովածուն պարունակում է 261 միավոր փաստաթուղթ, առանց որի հետ ծանոթանալու անհնար է հասկանալ Անդրկովկասյան Հանրապետության ստեղծումը, նրա տրոհումը երեք հանրապետությունների՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ու վերջիններիս կողմից 1918թ. մայիսի վերջերին իրենց անկախության հռչակումը:

Ես անձամբ այդ կարճատև, սակայն արյունալի բախումներով և այրող իրադարձություններով լի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ 1917թ. հոկտեմբերից մինչև 1918թ. մայիս, կանգնած եմ եղել իրադարձությունների կենտրոնում, և, իմ տպավորությունների հետ մեկտեղ ներկայացրել եմ նաև բնագիր փաստաթղթեր, որոնք հայ ընթերցողին գրեթե ծանոթ չեն:

1917թ. հոկտեմբերի 25-ից մինչև 1918թ. ապրիլի 1-ը և 1918թ. ապրիլի 1-ից մինչև մայիսի 28-ը դա առաջին շրջանն է՝ Անդրկովկասյան Կոմիսարիատ, բանակցություններ Թուրքիայի հետ Տրապիզոնում: Երկրորդ շրջանը՝ պատերազմ Թուրքիայի հետ, 1918թ. ապրիլի 9-ին Անդրկով-

կայան Հանրապետության անկախության հռչակումը, Բանակցությունները Բաթումում, Անդրկովկասյան Հանրապետության տրոհումը, Հայաստանի անկախության հռչակումը և Բաթումում ստորագրված խաղաղության պայմանագիրը: Հետո արդեն՝ սկսած 1918թ. հունիսի 4-ից՝ Հայաստանի և Թուրքիայի միջև Բաթումի խաղաղության պայմանագրի ստորագրման օրվանից, սկսվում է Հայաստանի Հանրապետության նոր պատմության շրջանը: Սույն գլխի բովանդակությունն առնչվում է առաջին շրջանին:

Հաջորդ՝ հինգերորդ գլխում, ընդգրկված է մինչև 1918թ. հունիսի 4-ն ընկած ժամանակահատվածը, իսկ վեցերորդ գլխից սկսվում է բուն Հայաստանի Հանրապետության պատմությունը, այդ պետության առաջին քայլերը և 1918թ. հուլիսից մինչև նոյեմբեր Կոստանդնուպոլսում կայացած հայ-թուրքական բանակցությունները: Նման կերպ կանոնակարգելով պատմական տարեթվերն ու օրերը, այստեղի շարադրանքում ես կմեկնեմ այն օրվանից, երբ Թիֆլիսում լուր ստացան այն մասին, որ Պետերբուրգում Ժամանակավոր կառավարությունը տապալվել է և բոլշևիկները գավթել են իշխանությունը:

Ես արդեն գրել եմ, որ Պետերբուրգից Թիֆլիս ժամանեցի այդ իրադարձությունից մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 3-ին: Ինչ խոսք, հետաքրքրությունը կատարվածի նկատմամբ չափազանց մեծ էր: Թիֆլիսում ես Պետերբուրգում տեղի ունեցած հեղաշրջման առաջին և, թերևս, միակ ակնատեսն էի: Ինձ բառացիորեն “հարցախեղդ” էին անում, ես մասնակցում էի կուսակցական խորհրդակցություններին, բայց լսարանը ծարավ էր ստույգ տեղեկությունների: Հետաքրքրությունն այդ հարցի նկատմամբ այնքան մեծ էր, որ ես, խիստ զբաղված լինելով հանդերձ, արդեն նոյեմբերի 5-ի երեկոյան զեկուցում նշանակեցի: Առանց մամուլի հայտարարությունների, լուրը իմ զեկուցման մասին տարածվեց շատ արագ, և երբ ես երեկոյան Ժ. 8-ին եկա դասախոսության վայր, հսկա դահլիճում այնքան մարդ էր հավաքվել, որ ես մեծ դժվարությամբ կարողացա հասնել ամբիոն: Երկժամյա զեկուցումից հետո ես պատասխանեցի մի շարք հարցերի: Ես լավ հիշում եմ հարցերի բովանդակությունը: Դրանք պտտվում էին երկու հիմնական թեմաների շուրջ. ինչպիսի՞ն է իմ տպավորությունը:

նը՝ արդյոք բոլշևիկները երկար կպահեն՞ իշխանությունը, և երկրորդը՝ ինչպե՞ս Պետերբուրգն ընդունեց նոր իշխանությունը: Առաջին հարցին ես պատասխանեցի, թե իմ անձնական տպավորությունն այնպիսին է, որ բոլշևիզմի գոյությունը Ռուսաստանում կձգվի բավականին երկար ժամանակով: Երկրորդ հարցին պատասխանեցի, որ Պետերբուրգը իշխանափոխությունն ընդունեց բավականին պասսիվ, իսկ դատելով փողոցի զանգվածի պահվածքից՝ նաև բավականին անտարբեր: Այդպիսին էին իմ անձնական տպավորությունները: Անցել է արդեն յոթ տարի: Ենթադրում եմ, որ առաջին հարցի վերաբերյալ իմ տպավորությունը ճշմարտացի էր: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ապա այն մասամբ բխում է եվրոպական երկրներում կոմունիստական վարչակարգերի կյանքի շատ կարճ տևողությունից՝ ինչպես հայտնի է, այդտեղ այդ վարչակարգերը շատ արագ տապալվեցին:

Ես չեմ ցանկանում այստեղ խորանալ այն պատճառների բացատրությունների մեջ, թե ինչի շնորհիվ է, որ բոլշևիզմը Ռուսաստանում արդեն յոթը տարի կայուն է և չի երերում: Փաստն ինքնին առկա է և իր էությունամբ վիճարկելի չէ: Ես անհրաժեշտ եմ համարում ընդգծել այդ հանգամանքը, քանզի Կովկասի մի շարք քաղաքական և հասարակական գործիչներ իրենց հետագա անելիքներն ու վարքագիծը ցանկանում էին համաձայնեցրած տեսնել 1917-ի հոկտեմբերի 25-ին հաջորդող հնարավոր զարգացումների կանխատեսումների լույսի ներքո: Բայց մի բան անվիճելի էր. բոլշևիզմը միանգամայն անընդունելի էր Կովկասի ժողովուրդների թե՛ ռազմական, թե՛ քաղաքացիական հատվածների համար:

Անկախ բոլշևիզմի հանդեպ ունեցած վերաբերմունքից, անհնար է չտեսնել, որ առկա և մնայուն են փաստերը, իսկ փաստերը հնարավոր չեն ենդափոխել: Կովկասյան ռազմաճակատի բանակը պարզապես ցանկանում էր գնալ-ցրվել իրենց տները: Չէ՞ որ բոլշևիզմը, ինչպես և ցանկացած շատ բարդ երևույթ, իր մեջ պարունակում է շատ և շատ դրվագներ, որոնք գրավում ու ձգում են տարբեր դիրքի և մտածելակերպի շատ անձանց: Մի մասը կողմ էր բոլշևիզմին, քանի որ իրենց համար բոլշևիզմը նշանակում էր պատերազմի վերջ, մյուսներին բոլշևիզմը խոստացել էր հող և հաց, երրորդ դեպքում՝ դա նշանակում էր Ռուսաստանի հզորությո-

յուն և պաշտպանում թուրքական հարձակումներից, չորրորդ խմբին նա գրավում էր Ռուսաստանից անջատվելու հնարավորության իրավունքն ընձեռեղով, հինգերորդի համար բոլշևիզմի հաստատումը սոցիալական արդարության խնդիրների լուծման միջոց էր, վեցերորդ խմբի համար նա Արևելքի ժողովուրդներին բերում էր ազատագրում Անգլիայի գաղութային լծից և այլն: Կովկասյան ժողովուրդներին բոլշևիզմը ոչինչ էլ չէր բերում, հատկապես այն ժամանակ, երբ թվում էր, թե թուրքերը ջախջախված են և Կովկասի ժողովուրդների, այդ թվում հայերի ու վրացիների համար որևիցե վտանգ չեն ներկայացնում: Ռուսաստանից անջատվելու ցանկությունն ու ձգտում չկար, սակայն, միաժամանակ, բացակայում էր նաև բոլշևիկյան բռնապետությանը ենթարկվելու ցանկությունը: Դա անվիճելի դրույթ է: Եվ դրանում ոչ մեկին համոզելու կարիք ու անհրաժեշտություն չկար: Բոլորն էլ մտածում էին նույն ձևով, անկախ քաղաքական կուսակցությունների միջև եղած տարբերություններից ու տարաձայնություններից: Բացառություն էին, իհարկե, մի քանի գաղափարական հին բոլշևիկներ, որոնց մենք գիտեինք անուն-ազգանուններով մեկ առ մեկ:

Մեծ էր անհանգստությունը ռազմաճակատում գտնվող զորամասերի համար: Գործադրվում էին մեծագույն ճիգեր զորամասերը ռազմաճակատում պահելու համար: Հայերի մոտ, բնականաբար, այդ ցանկությունը չափազանց բուռն ու գերակայող էր մնացած բոլոր այլ դատողությունների համեմատ: Եվ այդ ամենն այնքա՞ն հասկանալի էր: Ռուսական բանակի գնալուց հետո փլուզվում էին Թրքահայաստանի հետ կապված բոլոր հույսերը, այդ բանակի հեռանալուց հետո առաջ էր գալիս դեպի Կովկաս թուրքական արշավանքի սպառնալիքը, թուլանում էր կովկասյան ժողովուրդների միասնությունը: Մի խոսքով, ռուսական բանակն այդ պահին հայության հույսն էր: Նույն ձևով, կամ, գրեթե նույն ձևով, մտածում էին նաև վրացիները: Նրանք չէին ցանկանում, որ ռուսական բանակը հեռանա ռազմաճակատից:

Մահմեդականների մի մասը մտածում էր այլ կերպ: Ընդհանրապես ասած, նրանք հարցերին ցուցաբերում են չափազանց դիվանագիտական մոտեցում, սակայն ամեն ինչից զգացվում էր, որ ռուսական բա-

նակի հեռանալն իրենց համար այնքան էլ անհաճո չէր: Այդ հարցի շուրջ սկսվեց խուլ մրցակցություն: Այդ մրցակցությունն իր էությամբ շարունակությունն էր այն ազգային հակասությունների, որոնք ասպարեզ էին եկել մարտյան հեղափոխությունից հետո: Հայկական շրջանակներում սկսեցին բացահայտ խոսել հայերի անվտանգության և նրանց պաշտպանությունն ապահովելու միջոցների մասին: Հատուկ հայկական գործախմբի ստեղծման գաղափարն սկսեց բուռն կերպով դառնալ իր լուծումը պահանջող առաջնային խնդիր: Դեռևս համակովկասյան համարվող հայկական գործը պետք է աշխատեր արևմտահայ տարածքների պահպանման ուղղությամբ: Ամեն դեպքում, ինչպես որ Ազգային բյուրոն, իսկ հետո էլ՝ Ազգային խորհուրդը հետագայում ստեղծեցին հայկական կառավարությունը, այնպես էլ Ազգային խորհրդի կողմից ստեղծված Հայկական կորպուսը հիմք հանդիսացավ գեներալներ Նազարբեկովի, Սիլիկովի, Հովսեփյանցի, Փիրումովի, Արարատյանի⁶⁶ գլխավորությամբ հայկական գործի ստեղծման համար: Հայկական գործի գլուխ էին կանգնած նաև հերոս կամավորականները՝ Դրոն, Սեպուհը⁶⁷, Անդրանիկը, ով

⁶⁶ **Արարատյան Խաչատուր (Քրիստափոր) Կարապետի** (1876թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն – 1937թ., Երևան, ԽՍՀՄ): Անկուսակցական, ռուսական բանակի գնդապետ, հայկական բանակի գեներալ-մայոր, Սարդարապատում հայկական զինուժի հրետանու հրամանատար, մի շարք հրամանատարական պաշտոններ է զբաղեցրել Հայաստանի Հանրապետության բանակում, Հայաստանի Հանրապետության ռազմական նախարար (27.03.1919թ.-3.04.1920թ.), հետագայում բանակի հրետանու տեսուչ: 1920թ. հոկտեմբերի 30-ին, հայկական բանակի դիմադրության բացակայության պայմաններում Կարսում գերի է ընկել, գերությունից վերադարձել 1921-ի հոկտեմբերին: Արդեն խորհրդայնացված Հայաստանում ծառայության է անցել Կարմիր բանակում, եղել գնդի, ապա դիվիզիայի հրամանատար: 1926-1934 թվականներին եղել է Խորհրդային Հայաստանի բոլոր բուհերի զինղեկը: 1937թ. բոլշևիկյան իշխանության որոշմամբ ձերբակալվել է և դատապարտվել գնդակահարության: Հետմահու արդարացվել է 1989թ. (տե՛ս А.Ви́рабян, С.Ми́рзоян, Офицеры-армяне... էջ 172):

⁶⁷ **Ներսիսյան Արշակ Ներսեսի (Սեպուհ)** (1872թ., Բաբերդ, Օսմանյան կայսրություն – 1940թ., ԱՄՆ): Հայ ազատագրական շարժման հայտնի գործիչ, Հնչակյան, ապա՝ ՀՀԴ անդամ: Առաջին աշխարհամարտի ժամանակ կռվել է հայ կամավորական ջոկատի կազմում, հետագայում՝ 1918թ., մասնակցել է Բաքվի պաշտպանությանը թուրքական զորքերից: 1919-1920թթ.՝ Հայաստանի Հանրապետության խորհրդարանի անդամ: Միաժամանակ, առանց զինվորական կոչման, ծառայել է ՀՀ զինված

հետագայում չճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, Սմբատը և շատ ուրիշներ: Այդպիսին էր տրամադրությունը կովկասյան ղեկավար շրջաններում 1917թ. հոկտեմբերի վերջին:

Արտահայտելով այդ տրամադրությունները, Կովկասյան բանակի զինվորական պատգամավորների Երկրամասային Խորհուրդը հին տոմարով հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 7-ին) հրապարակեց Կովկասյան բանակին ուղղված հետևյալ բովանդակության դիմումը. Երկրամասային Խորհուրդը շատ վճռականորեն ու կտրուկ դատապարտում էր իշխանությունը զավթելու նպատակով բոլշևիկների ելույթը և կոչ էր անում բանակին պահպանել հանգստություն: Նախագահ՝ Դոնսկոյ:

Ի դեպ, ազգությամբ հրեա այդ բժիշկը, որն այդ ժամանակահատվածում նշանակալից դերակատարում ուներ սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության կովկասյան բաժանմունքում, հետագայում ձերբակալվեց բոլշևիկների կողմից և [Տիմակովի] ու Գոցի հետ միասին դատապարտվեց Մոսկվայում մեծ դատավարության միջոցով, որտեղ նրանց պաշտպանում էր [Վանդերվելյան] և այժմ նրանք բանտում են, կամ սիբիրյան աքսորում:

Այդ դիմումին հոկտեմբերի 26-ին Էրզրումում իր բանաձևով արձագանքեց կովկասյան բանակի Բանակային կոմիտեն: Այդ բանաձևում Կոմիտեն գրում էր, որ տեղեկանալով Պետերբուրգում գործերի ընթացքի մասին և իմանալով, որ բոլշևիկները ոտնձգություն են թույլ տվել Ռուսաստանյան Հանրապետության գերագույն իշխանության գրավման համար, բանակային Կոմիտեն գտնում է, որ. 1) բոլշևիկների նման ոտնձգությունը հակառակ է ժողովրդի համապետական կամքին, որով իշխա-

ուժերում, 1919թ. հուլիսին նշանակվում է 4-րդ հայկական հետևակային բրիգադի հրամանատար: Վճռական դերակատարում է ունեցել 1920թ. մայիսին բռնկված բոլշևիկյան հակապետական խռովությունը ճնշելու գործողություններում: 1920թ. աշնանը մասնակցել է Կարսի, Ալեքսանդրապոլի, Ջաջուռի շրջաններում մղված մարտերին: Բոլշևիկյան Ռուսաստանի կողմից Հայաստանի բռնազավթումն իրականացնելուց հետո տարագրվել է, բնակվել Բուլղարիայում և ապա՝ ԱՄՆ-ում, որտեղ էլ մահացել է: 2014թ. Ջորավար Սեպուհի աճյունը վերահուղարկավորվել է Երևանի զինվորական պանթեոնում՝ Եռաբլուրում:

նությունը տրված է Կերենսկու կառավարությանը, 2) Կերենսկու կառավարությունը, և միայն նա՝ հեղափոխական ժողովրդավարության հսկողության ներքո իրավասու է ժողովրդի անունից կառավարել երկիրը, 3) ցանկացած այլ կառավարություն, ինքնագլուխ կերպով կանգնելով իշխանության ղեկի մոտ, կրեթի հեղափոխության բոլոր նվաճումների կործանմանը, պետությունը կներքաշի քաղաքացիական պատերազմի արհավիրքների մեջ և, ի վերջո, երկիրը կհանձնի զրահապատ գերմանական իմպերիալիզմի իշխանությանը: Ըստ այդմ էլ Կովկասյան բանակի բանակային Կոմիտեն որոշում է. “1) որպես Ռուսաստանյան Հանրապետության կառավարություն ճանաչել Կերենսկու կառավարությունը, 2) ինքնագլուխ ինշխանության ղեկի մոտ հայտնված ցանկացած կառավարություն համարել Հեղափոխության գործին վնասակար և ամեն կերպ հակադրել նրա ավերիչ գործունեությանը, 3) կոչ անել բոլոր բանակային կազմակերպություններին՝ պահպանել կարգ ու կանոն, բարձր պահել բանակի մարտունակությունը, նկատի ունենալով, որ հեղափոխական ժողովրդի բոլոր հույսերը կապված են բանակի հետ և հենց վերջինս է հանդիսանում երիտասարդ ազատության վերջին պատվարը, 4) Սահմանադիր ժողովի ընտրություններին առնչվող բոլոր աշխատանքները պետք է ընթանան անխափան, քանզի միայն Սահմանադիր Ժողովն է հանդիսանալու ժողովրդի անվիճելի ձայնը, որն իրավասու կլինի իր ձեռքը վերցնել մեր թանկագին Հայրենիքի Ճակատագիրը”: Կազմված է Էրզրումում: Այդ փաստաթղթերն, անշուշտ, արտացոլում էին ընդհանուր տրամադրությունները:

Սոցիալիստ-հեղափոխականների և սոցիալ-դեմոկրատների կուսակցությունները նույն բնույթի բանաձևեր ընդունեցին, սակայն ավելացրած, որ պետք է “խաղաղ եղանակով չեղարկել ապստամբությունը”: Նույն ոգով իր դիրքորոշումն արտահայտեց նաև “Դաշնակցություն” կուսակցությունը: Այսպիսով Կովկասում ստեղծվեց և կայացավ միասնական քաղաքական ճակատ: Անհրաժեշտ էր կազմակերպել իշխանությունը: Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից, ժամանակավորապես՝ մի քանի օրվա հեռանկարով, կազմեցին “Հասարակական անվտանգության կոմիտե”, որը նոյեմբերի 11-ին Ժողովրդական

Տանը Թիֆլիսում առկա բոլոր քաղաքական, հասարակական և զինվորական կազմակերպությունների ավելի քան 400 ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրեց մի հսկա խորհրդակցություն: Իրավիճակի քննարկումից հետո այդ խորհրդակցությունն ընդունեց հետևյալ փաստաթուղթը. նկատի ունենալով միասնական, բոլորի կողմից ընդունելի հանդիսացող կենտրոնական իշխանության բացակայության հանգամանքը, երկրում ահագնացող անիշխանության փաստը, ինչը կարող է տարածվել նաև Անդրկովկասի վրա և հաշվի առնելով մի շարք հասարակական, տնտեսական ու ֆինանսական անհետաձգելի հարցերի առկայությունը, որոնց լուծումից է կախված մեր երկրամասի տեսանելի ապագան, խորհրդակցությունը որոշում է.

1) Սկսած այս պահից և մինչև Անդրկովկասից և Կովկասյան ռազմաճակատից Սահմանադիր Ժողովի պատվիրակների ընտրության ավարտը, երկրամասի կառավարումը հանձնել հասարակական անվտանգության Կոմիտեին, որը կազմված է Անդրկովկասի բոլոր հեղափոխական-դեմոկրատական, կենտրոնական, հասարակական, պաշտոնական և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից:

2) Սահմանադիր Ժողովի ընտրությունների ավարտից հետո՝ ժողովրդի քաղաքացիական և ռազմական հատվածների ընտրյալներին հանձնարարել երկրամասում և ռազմաճակատում ժամանակավոր իշխանության ձևավորումը, որի կազմը, բնույթը և լիազորությունները որոշվելու են հետևյալ պայմաններից. ա/ մարզային քաղաքականությունն անհրաժեշտ է վարել համապետական խնդիրների լուծման ուղղությամբ, հետևելով համառուսաստանյան ժողովրդավարական սկզբունքներին, բ/ ինքնուրույն-ինքնավար բնույթի լուծումներ տալ միայն տեղային-ընթացիկ հարցերին, գ/ երկրամասը նման կառավարման եղանակով հասցնել մինչև համընդհանուր ճանաչում ստացած կենտրոնական հեղափոխական-ժողովրդավարական իշխանության ստեղծումը, կամ էլ մինչև համառուսաստանյան լիիրավ Սահմանադիր Ժողովի բացումը, դ/ գործունեության ընթացքում հիմնվել բանվորական, զինվորական, գյուղացիական, երկրամասային և տեղական Խորհուրդների ու տեղական ինքնակառավարման մարմինների վրա:

Խորհրդակցությունը գրեթե միաձայն ընդունեց այդ բանաձևը, որի հիման վրա 4 օր անց՝ նոյեմբերի 15-ին, նոր իշխանությունն անցավ իր պարտականությունների կատարմանը: Կովկասյան այդ նոր բարձրագույն իշխանությունը ստացավ Անդրկովկասյան Կոմիսարիատ անվանումը:

Նոյեմբերի 15-ին Կոմիսարիատը հրաման հրապարակեց իր կազմավորման մասին: Դրա կազմում ընդգրկվեցին հետևյալ անձինք. Կոմիսարիատի նախագահ՝ Գեգեչկորի, նույն ինքը՝ արտաքին գործերի կոմիսար, վրացի, ներքին գործերի կոմիսար՝ Չխենկելի,-վրացի, ռազմական և ծովային գործերի կոմիսար,- բժիշկ Դոնսկոյ, հրեա, ֆինանսների կոմիսար՝ Կարճիկյան,- հայ, հետագայում սպանվեց Էրիվանում, արդարադատության կոմիսար Մեսխիս, - վրացի, արդյունաբերության և առևտրի գործերով կոմիսար Ջաֆարովը,- թաթար, երկաթուղու և հաղորդակցության գծերի գործերով կոմիսար՝ Մելիք-Ասլանով, թաթար, [...] գործերով կոմիսար՝ Ներուչև,- ռուս, պարենավորման գործերով կոմիսար՝ Տեր-Ղազարյան ,- հայ, խնամատարության կոմիսար՝ բժիշկ Օհանջանյան, - հայ, և պետական վերահսկող՝ Իսա-Մամեդով,- թաթար:

Երեք օր հետո Կոմիսարիատը հրապարակեց Անդրկովկասի ժողովուրդներին ուղղված մի հրովարտակ, որտեղ հանգստության և աշխատանքով զբաղվելու կոչ էր արվում ու նշվում էր ամենաառաջնային երեք հարցերը, որոնցից յուրաքանչյուրը հետագայում ստացան իրենց ուրույն, մասամբ էլ՝ ողբերգական լուծումները: Այդ հարցերն էին. համառուսաստանյան Սահմանադիր Ժողովի ընտրությունները, Անդրկովկասում ազգային հարցի շատ արագ ու արդարացի լուծումը և Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի անհապաղ կնքելը: Սրանք էին այն երեք արմատական հարցերը, որոնք ընդգրկում էին Կովկասի շահերը. խաղաղություն, ազգային հարց, համառուսաստանյան Սահմանադիր Ժողով:

Ես կարող եմ հավաստել, որ ամբողջ Անդրկովկասն արձագանքեց Կոմիսարիատի կոչին: Կոմիսարիատի կազմի մեջ մտան ազդեցիկ քաղաքական կուսակցություններ. դաշնակցականները, մենշևիկները, մուսավաթականները, սոցիալիստ- հեղափոխականները: Բայց պետք է նշել

նան, որ այդ մարդիկ և կուսակցությունները իրենց հետ բերեցին նաև իրենց հատուկ ցանկությունները, կողմնորոշումներն ու զգացողությունները: Դա ի հայտ եկավ հենց առաջին օրերից: Հայերը ցանկանում էին պահպանել Թրքահայաստանը հենց հայերի համար: Թաթարների մի մասը ցանկանում էր վերադարձնել այն Թուրքիային: Վրացիները ցանկանում էին խաղաղություն և բարեկամություն թուրքերի հետ ու բարիդրացիական հարաբերություններ թաթարների հետ: Հենց վրացիներն էին կանգնած Կառավարչության զագաթին՝ նրանց ձեռքում էին հիմնական և գլխավոր պաշտոնները: Իշխանության մարմինների ձևավորումից հետո ես մեկնեցի իմ աշխատավայր՝ Ալեքսանդրապոլ: Կոմիսարիատին զուգահեռ ավելի ու ավելի ազդեցություն էր ձեռք բերում հայերի Ազգային խորհուրդը, որը դեռևս շարունակում էր իր նստավայրը պահպանել Թիֆլիսում:

Առաջին Գլխում իմ կողմից ընդգծված այն փաստը, որ հայկական բոլոր հաստատությունների կենտրոնը հանդիսանում էր Թիֆլիսը, այժմ էլ մնում էր անփոփոխ: Հայկական կորպուսի շտաբը գտնվում էր ոչ թե Էրիվանում, այլ Թիֆլիսում: Եվ ի վերջո, հենց Թիֆլիսում է հռչակվել Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այդ վարքագիծը չափազանց բնութագրական է. այն ցույց է տալիս, որ հայերը, ամեն ինչ տեղափոխելով Թիֆլիս, փաստորեն ուժասպառ էին արել իրենց սեփական հայրենիքը: Այդ օրերին հայկական քաղաքական մտքի ծանրության կենտրոնը Թուրքիայից տեղափոխվում էր Կովկաս, սակայն ոչ թե հայկական, այլ վրացական տարածաշրջան, այն է՝ Թիֆլիս:

Կոմիսարիատի հրովարտակ-հռչակագրում նշված երեք կարևորագույն հարցերից առաջնային դարձան հետևյալ երկուսը. խաղաղությունը Թուրքիայի հետ և Սահմանադիր Ժողովի ընտրությունները: Ընտրություններն ընթանում էին կանոնավոր կարգով: Պարզ էր, որ առավել ազդեցիկ կուսակցությունները՝ դաշնակցականները, մենշևիկները, մուսավաթը և էսեռները վերցնելու են բոլոր տեղերը: Այդպես էլ ստացվեց: Կարելի է ասել, որ հայերը, վրացիները և թաթարները հատկացված տեղերը կիսեցին իրենց ազգային կուսակցությունների միջև: Հայերն իրենց բոլոր ձայները տվեցին “Դաշնակցության” օգտին:

Սակայն այդ ընտրությունները ոչ մի արդյունք չտվեցին, քանի որ Սահմանադիր Ժողովը բոլշևիկները ցրեցին նրա առաջին իսկ նիստի օրը և դա արդեն վերջնականորեն հաստատեց Կովկասի՝ Ռուսաստանից անջատ գոյություն ունենալու փաստը: Փաստացի, բայց դեռևս ոչ իրավաբանորեն, Կովկասն անջատվեց Ռուսաստանից: Այդ անջատման պատճառը, - և ես դա պարտավոր եմ հաստատել, ելնելով քաղաքական ազնվության սկզբունքից, - ոչ թե Ռուսաստանից հեռանալու որոշակի ցանկությունն էր, այլ, պարզապես, բոլշևիկներին ենթարկվելու ցանկության բացակայությունն էր:

Խաղաղության հարցը ահավոր բարդ էր: Այն ունեցավ ողբերգական ճակատագիր և կանխորոշեց Անդրկովկասի ամբողջ հետագա պատմությունը: 1917թ. նոյեմբերի 21-ին Կոմիսարիատը որոշում կայացրեց սկսել բանակցությունները Թուրքիայի հետ՝ խաղաղության շուրջ:

Մինչ բանակցություններին անցնելը, ես կցանկանայի անդրադառնալ այն անձանց, որոնք վճռական դերակատարում ունեին այդ օրերին: Առհասարակ, ես համարում եմ և դա ասում, օգտվելով առիթից, որ այն ամենը, ինչ մենք արել ենք 1917-1925թթ. ընթացքում, ամեննին էլ ներդրում չէ պատմության արխիվի համար: Կանգ առնելով այն օրերի գործունեության և դատողությունների վրա, մենք պետք է ծրագրեր կառուցենք մեր վաղվա աշխատանքների վերաբերյալ: **Չէ՞ որ մենք գտնվում ենք պատմության հնոց-խառնարանում: Այսօրը՝ դա երեկվա շարունակությունն է: Եվ, հետևաբար, նկարագրել այն ամենը, ինչը տեղի է ունեցել ընդամենը հինգ-վեց տարի առաջ, նշանակում է՝ երեկվա աշխատանքում գտնել ցուցումներ այսօրվա և վաղվա աշխատանքների համար (ընդգծումը մերն է- Վ.Հ.):**

Կոմիսարիատի բոլոր անդամներին ես շատ լավ ճանաչում էի և կյանքում նրանց հետ շփվել եմ տարբեր հարթակներում՝ լինի դա տեղական ինքնակառավարման, բարեգործական, կուսակցական, թե “Քաղաքների Միության” ներսում: Նրանցից մի մասը՝ հատկապես վրացիները, Ռուսաստանի Պետական Դումայի պատգամավորներ էին: Եվ պետք է մատուցել նրանց արժանին՝ նրանք չափազանց ճկուն էին: Նախևառաջ, նրանց մեջ ներկա էին տարբեր կողմնորոշումներ ունեցող անձինք, ինչ-

պէս որ դա ընդունված է եվրոպական քաղաքական շրջաններում: Չխենկելին համարվում էր թուրք-գերմանական շրջաններին մտերիմ անձնավորություն: Գեգեչկորին ավելի մոտ էր ռուսական միտումներին: Նրանց միջև առկա էր կտրուկ տարբերակում: Նրանց ետևում էր իրենց երկարամյա գործնական աշխատանքը կուսակցությունում և Դումայում: Նրանք շատ լավ խոսում էին, շատ հաջող բանավիճում, շատ արագ հարմարվում: Հայերին բոլորից մտերիմ էր և այդպիսին էլ մնաց Գեգեչկորին: Ինքն անձամբ մտերիմ էր Կարճիկյանի հետ: Երկուսն էլ միմյանց մասին ինձ շատ դրական բաներ են ասել:

Թաթարները բացահայտ ձևով թուրքերի կողմն էին և ոչ մի կերպ չէին կիսում հայերի հավակնությունները ո՛չ Թրքահայաստանի, ո՛չ էլ Կովկասում հայկական տարածքների հանդեպ: Հայերը չէին վստահում այդ կողմերից և ոչ մեկին: Թաթարները ծածկամիտ էին, ունեին բարձրագույն կրթություն. երկու իրավաբան, մեկ ինժեներ: Իրենց կուսակցությունը ժողովրդի մեջ դեռևս արմատներ չունեին: Նրանք այդ կուսակցությունը ստեղծեցին շատ հապճեպորեն: Ունենալով բացահայտ համակրանք թուրքերի նկատմամբ, նրանք ամենևին չէին թաքցնում, որ հայերի ձգտումների իրականացումը կնշանակի թուրքական տարածքների զջլումը հոգուտ հայերի, ինչին իրենք չեն կարող սատարել:

Կոմիսարիատի կազմում ընդգրկված հայերն առավել անբիծ և հարգված գործիչներից էին: Համո Օհանջանյանը լայն ճանաչում ուներ հեղափոխական շրջաններում, որպես աքսորն անցած շիտակ ու ինքնագոհ գործիչ, իսկ երիտասարդ իրավաբան Կարճիկյանը շատ արագ տիրապետեց հարցերին լուծումներ տալու հնարքներին և մոտեցումներին: Բայց իրենք երկուսն էլ, ավաղ, զբաղեցնում էին ոչ մարտական պաշտոններ: Այդ պահին, սակայն, ֆինանսներն ու հասարակական խնամատարությունը չէին, որ հանդիսանում էին Կովկասի նյարդերը: Հայերը դրանից դժգոհ էին: Եվ իրոք, ճանապահներն ու երկաթուղին թաթարների ձեռքում, արտաքին և ներքին քաղաքականությունը՝ վրացիների ձեռքում, իսկ ռազմական գործը՝ հրեաների ձեռքում: Այդպես էր բաշխվել իշխանությունը Անդրկովկասյան Կոմիսարիատում: Կարճիկյանն ինձ հաճախակի բողոքում էր, որ ինքն իրեն զգում է ճնշումների ներքո և չի

կարողանում անցկացնել ու առաջ տանել այն ամենը, ինչը որ ցանկանում ու անհրաժեշտ էր գտնում: Օհանջանյանն ու Կարճիկյանը Հայոց Ազգային խորհրդում հայտարարում էին, որ նրանք Կոմիսարիատում չեն կարողանում կոտրել թաթարների դիմադրությունը հայերին թուրքերից պաշտպանելու հարցում: Վրացիները ձգտում էին հավասարակշռություն պահպանել: **Նման անկայուն հավասարակշռության պայմաններում սկսեցինք բանակցել խաղաղության շուրջ և ստացանք պատերազմ** (ընդգծումը մերն է – Վ.Հ.):

Բայց դա տեղի չունեցավ միանգամից: Սկսվեցին բանակցություններ զինադադարի վերաբերյալ: Զինադադարը կնքվեց 1917թ. դեկտեմբերի 5-ին Էրզինջանում: 1918 թ. հունվարի 1-ին թուրքական ռազմաճակատի գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշան Անդրկովկասի կառավարությանը փոխանցեց Էնվեր-փաշայի չափազանց հետաքրքրաշարժ հարցումը առ այն, թե **“ինչ է մտածում Անդրկովկասի անկախ կառավարությունը** (ընդգծումը մերն է – Վ.Հ.) խաղաղության պայմանների մասին” և, որ Էնվեր-փաշան մտադրված է “Անկախ Կովկասյան Կառավարության մայրաքաղաք պատվիրակություն ուղարկել խաղաղության պայմանագիր ստորագրելու համար”: Ես ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում երկու անգամ կրկնվող **“անկախ Կովկասյան Կառավարություն”** եզրույթին: Թուրքերը ակնհայտորեն ցանկանում էին մեզ հասցնել այն միտքը, որ իրենք անհրաժեշտ են համարում գործ ունենալ բացառապես Կովկասի “անկախ” կառավարության հետ: “Անկախ Կովկասը” թուրքերի համար ցանկալի պատվար էր իրենց և Ռուսաստանի միջև: Թիֆլիսում դա հասկացան, սակայն իրենց՝ Ռուսաստանից անկախ ո՛չ զգում էին, ո՛չ էլ ցանկանում էին հայտարարել: Դրա մասին ես շատ եմ լսել հենց նրանցից, ովքեր հետագայում հանդես էին գալիս որպես անկախության մոլի կողմնակիցներ: Այդ հանգամանքը, սակայն, չափազանց կարևոր է. **Ռուսաստանից Կովկասի անկախացման գաղափարը առաջին անգամ եկավ Թուրքիայից** (ընդգծումը մերն է – Վ.Հ.):

Կոմիսարիատը մի քանի նիստեր նվիրեց թուրքերին պատասխան մշակելուն: Զգձգման նպատակն այն էր, որ ճիզեր էին գործադրվում պայմանավորվել Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի հետ միասնա-

բար գործելու համար, որպեսզի, մի կողմից, ընդգծվեր Կովկասի կապը Ռուսաստանի հետ, իսկ մյուս կողմից՝ Թուրքիայի հետ բանակցելիս ավելի հզոր երևալ:

1918թ. հունվարի 15-ին Անդրկովկասի կառավարությունը թուրքական կողմին տեղեկացրեց, որ ինքը պատասխանը կներկայացնի 3 շաբաթ հետո, քանզի անհրաժեշտ է համարում բանակցել “Ռուսաստանյան Հանրապետության մի քանի ինքնավար տարածքային միավորների հետ”: Եվ, իհարկե՝ ոչ մի խոսք Կովկասի անկախության մասին: Եվ Անդրկովկասյան Կոմիսարիատը հեռագրերով տեղեկացրեց Ուկրաինայի Ռադային, Դոնի, Կուբանի, Աստրախանի և Ուրալի կազակական կառավարություններին թուրքերի առաջարկության մասին ու իր կողմից առաջարկեց այդ կառավարություններին մասնակիցը լինել թուրքերի հետ սպասվելիք բանակցություններին:

Թուրքերն այդ միջոցին քնած չէին: Նրանց ամենևին չէր հրապուրում Կովկասի սահմանների վերաբերյալ Ռուսաստանի հետ բանակցելու հեռանկարը: Նրանք հեռագրերի մի ճոխ շարքով տեղեկացնում էին Անդրկովկասյան կառավարության գործերի հրամանատարին թուրքերի հանդեպ հայերի կատարած բռնությունների մասին: 1918թ. հունվարի 30-ին Վեհիք-փաշան տեղեկացրեց, որ մահմեդական “բնակչությանը պաշտպանելու համար ինքը ստիպված անցնում է հարձակման”:

Եվ վերսկսվեց պատերազմը: Թուրքական ուժերը, ծանր պարտություններից հետո, հավանաբար, ուշքի եկան: Այդ օրերին ռուսական զորքերը զանգվածաբար, տասնյակ հազարներով, անկանոն շարքերով լքում էին ռազմաճակատը: Ես երեք ամիսների ընթացքում տեսել եմ այդ հետշարժը: Երեք ուղղություններից եկող զորքերի ալիքները միախառնվում էին Ալեքսանդրապոլում: Այդ երկաթուղային հանգույցում են միանում պարսկական ուղղությունից Երևան-Ջուլֆա և արևմտյան ուղղությունից Կարս-Էրզրում երկաթգծերը, ինչպես նաև խճուղով՝ Ելենովկայից⁶⁸: Եվ ձևահյուսի նմանվող այդ ամբողջ զանգվածը անցնում էր Ալեքսանդրապոլով: Զինվորականները վաճառում էին իրենց զենքերը, նույ-

⁶⁸ Այժմ՝ Սևան քաղաքը:

նիսկ սրբապատկերները, գորամասի կառքը, գորամասի շարային շարժական եկեղեցին, մի խոսքով՝ այն ամենը, ինչի համար որ կարող էր գնորդ հայտնվել: Նրանք իրենց համարում էին բոլշևիկ և հայտարարում, որ իրենք “Դեպի տուն” կուսակցությունն են: Զինվորները տարերայնորեն փախչում էին ու շտապում օր առաջ հասնել իրենց տները, քանզի իմացել էին, որ այնտեղ կալվածատերերին պատկանող հողերը բաժանում են գյուղացիներին և նրանք չէին ցանկանում ուշանալ: Ալեքսանդրապոլում նրանք ինքնադատաստան իրականացրեցին երեք հայի նկատմամբ, ովքեր սպանել էին մի ռուս զինվորի: Ես գնացի զինվորների մոտ և սկսեցի համոզել, որպեսզի մարդասպաններին հանձնեն մեզ, նրանց նկատմամբ սկսենք օրինական դատավարություն, սակայն իմ բռնոր հորդորներն իզուր անցան: Զինվորները քարերով ակնթարթորեն արյան շաղախի վերածեցին այդ երեք մարդասպաններին...

Այդ պայմաններում հայկական կորպուսը պետք է պահեր ռազմաճակատի մի ահռելի գիծ: Ո՛չ թաթարները և ո՛չ էլ վրացիները հայերին որևիցե օգնություն չէին ցուցաբերում: Հայերի կողմից այդ ճակատային գծի պաշտպանությունը գերազանց ձևով նկարագրված է կապիտան Պուադեբարի “Հայերի ռազմական դերակատարումը Կովկասյան ռազմաճակատում 1917, 1918թթ.” գրքում: Այդ նույն թեմային են նվիրված նաև գերմանացի գեներալ Լյուդենդորֆի գրքի էջերը:

Տեսնելով, որ ռուսական զորքերը լքել են ռազմաճակատը, իսկ թուրքերն էլ պատրաստվում են անցնել հարձակման, հայկական կորպուսն իր ձեռքը վերցրեց ռազմաճակատի պաշտպանությունը՝ Էրզինջանից մինչև Վան: Դա չափազանց դժվարին մի խնդիր էր: Ես ականատեսն եմ եղել, թե ինչպիսի դժվարությամբ հունվարյան և փետրվարյան սառնամանիքներին, դատարկված ու ամայացած հսկայական տարածություններով, հայկական կորպուսի զորքերը տեղափոխվում էին Էրզրում և Վան: Տարվա եղանակը՝ ցրտաշունչ ձմեռ, տարածությունները՝ ահռելի, պարենավորումն ու սնունդը՝ տկար ու թույլ, հաղորդակցության ուղիներ՝ ոչ մի հատ: Ալեքսանդրապոլում մենք անում էինք ամեն հնարավորը ռազմաճակատի մատակարարման և հայ զինվորներին ռազմաճակատ ուղարկելու համար, իսկ մյուս կողմից՝ ընդունում էինք

ռազմաճակատից փախչող ռուսական զորքերը և առանց հապաղելու նրանց ուղարկում Ռուսաստան: Այդ երկու հոսանքները հանդիպում էին Ալեքսանդրապոլում և մենք ձգտում էին հեռու պահել հայկական զորամասերը ռազմաճակատից փախչող բարոյալքված ռուսական զորքերի քայքայիչ ազդեցությունից:

Ամբողջովին վերցրած, գործը, իրոք, չափազանց դժվար էր: Շատ ու շատ բան արված էր հապճեպ, կիսատ, թողնված անավարտ: Թուրքերի և հայերի ուժերն անհավասար էին: Եկեք տեսնենք, թե ինչպես էր Թիֆլիսում կազմավորվում հայկական կորպուսը և ինչպես էր այն ուղարկվում ռազմաճակատ: 1917թ. դեկտեմբերի և 1918թ. հունվարի ընթացքում ես հաճախակի էի ուղևորվում Թիֆլիսից Ալեքսանդրապոլ: Թիֆլիսում ես այցելել եմ Հայոց Ազգային խորհուրդ, Անդրկովկասյան Կոմիսարիատ, մասնակցել եմ դրանց նիստերին և կարող եմ տալ այդ օրերի աշխատանքի բավականին սպառիչ նկարագրումը:

1917թ. սկզբներին, երբ կարելի էր ասել, որ ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում հանդարտվեցին, հայկական կամավորական ջոկատները լուծարվեցին, հայերի Ազգային բյուրոյի գործունեությունն ավարտվեց: Ես բոլոր հաշիվները ներկայացրեցի զինվորական շտաբ, իսկ հաշմանդամներին էլ վերցրեցին խնամքի հաշվառման: Հայկական կամավորական ջոկատները լուծարվեցին և դրանց զինվորներն ու սպաները սկսեցին աստիճանաբար համալրել հայկական կորպուսի շարքերը: Ռուսաստանի հայերի աշնանային համագումարից հետո Ազգային բյուրոն լուծարվեց արդեն պաշտոնապես, ուստի նախարեց նաև կամավորական ջոկատների կազմավորման գործընթացը: Սակայն կյանքի կոչվեց Հայոց Ազգային խորհուրդը: Հայ ժողովուրդը սկսեց խմբավորվել դրա շուրջ և Ազգային խորհրդից կես տարի հետո ծնունդ առան Հայաստանի Հանրապետության կառավարությունն ու Հայաստանի Խորհուրդը: Ազգային խորհրդին զուգահեռ, որպես Անդրկովկասի միացյալ իշխանական մարմին, գործում էր նաև Անդրկովկասյան Կոմիսարիատը:

Հայոց Ազգային խորհրդի գլխավոր և, թերևս, միակ խնդիրը փառապանծ գեներալ Նազարբեկովի հրամանատարությամբ հայկական

կորպուսի ստեղծումն էր և Թրքահայաստանի ու ռազմաճակատի պաշտպանությունը: Սակայն պետք չէ անտեսել, որ նման առաջնահերթ ինդիք ու պարտականություն դրված էր նաև Անդրկովկասյան Կոմիսարիատի ուսերին: Հայկական կորպուսի ձևավորման գործընթացին զուգահեռ, ձևավորվում էին նաև թաթարական և վրացական ազգային կորպուսներ: Բայց հենց դրանում էր ողբերգությունը, որ ամբողջ Անդրկովկասի իշխանական մարմին Անդրկովկասյան Կոմիսարիատի ներսում թաքնված, սակայն չափազանց կտրուկ ձևերով պահպանվում էին ազգային տարաձայնությունների կենսունակ սերմերը: Նոր գորամիավորումները կազմավորվում էին Թուրքիայի դեմ պայքարելու նպատակով, իսկ թաթարները, քանի որ իրենք Թուրքիայի փաստացի կողմնակիցն էին, հարձակվում էին հայկական զորագնդերի, երկաթուղու վրա: Եվ միանգամայն բնական է, որ Անդրկովկասյան Կոմիսարիատի, հատկապես նրա մահմեդական հարտվածի, և Հայոց Ազգային խորհրդի միջև սկիզբ առավ խուլ, սակայն շատ ուժեղ պայքար:

Անհրաժեշտ է նշել, որ, նախևառաջ, Անդրկովկասի կառավարությունում ռազմական հատվածը հայերի ձեռքում չէր: Անդրկովկասյան Կոմիսարիատը համատարած զորակոչի թույլտվություն չէր տալիս և չէր էլ ցանկանում այն իրականացնել: Թաքնվելով ձևական և մտացածին պատճառաբանությունների հետևում, Կոմիսարիատը վիժեցնում էր հայերի ազգային զորակոչը: Եկավ պահ, երբ հայերը պատրաստ էին, առանց Կոմիսարիատի թույլտվության, ինքնակամ իրականացնել կովկասահայության զորակոչը: Վերջապես, ամիս ու կես տևած համառ պայքարից հետո, Անդրկովկասյան Կոմիսարիատը համաձայնվեց տալ նման թույլտվություն: Բայց, քանի որ երկաթուղագիծը նույնպես հայերի ձեռքում չէր, դիտավորյալ չէին տրամադրում վագոններ, որպեսզի խափանվի հայկական զորքի մեկնումը ռազմաճակատ: Հայոց Ազգային խորհրդի նախագահը 48 ժամ անցկացրեց Թիֆլիսի կայարանում, մինչև որ կարողացավ ստանալ Էրիվան մեկնող մի գնացք: Իսկ Էրիվան-Ջուլֆա հատվածում, որպեսզի խափանվի հայկական զորքերի տեղաշարժը, թաթարները պայթեցրել էին երկաթուղային կամուրջը: Մինչդեռ թուր-

քերն ունեին իրենց ապահով թիկունքը, գորքերը կուտակում էին որոշակի շրջաններում և հետո շարժվում դեպի Կովկաս:

Այսքանի հետ մեկտեղ, մեծ դժվարությունների հետ էր կապված նաև հենց կորպուսի կազմավորումը: Ո՞վ էր գալիս համալրելու հայկական զորամիավորումը: Գյուղացիները և հատուկենտ քաղաքային բնակիչներ: Հատկապես քաղաքի բնակիչները դեռ մի կերպ համաձայնվում էին ծառայել հեծելազորի կազմում, իսկ հետևակը համալրվում էր բացառապես հասարակ ժողովրդի զավակներով: Բուրժուազիան փող չէր տալիս: Անհրաժեշտ էր նրանց բանտ նստեցնել, որպեսզի նրանք որոշակի ներդրում իրականացնեն: Ձորքը համալրվում էր Զանգեզուրի, Բայազետի, Էրիվանի հայկական շրջանների հայերով: Թիֆլիսեցի գրեթե չկար: Այդպիսով հայկական զորք էր ներհոսում հայկական հողի բույրը, հայկական հողի աղը, և հենց դրանով էր պայմանավորված հայկական զորքի ազգային մարտական ոգին: Ինչպես այդ դժվարին պահին, երբ Անդրկովկասը պետք է հետ մղեր թուրքական արշավանքի կրկին բարձրացող ալիքը, այնպես էլ հետագա տարիներին և 1920-ին, երկրորդ հայ-թուրքական պատերազմի ժամանակ, հայկական գյուղը, հայ գյուղացիությունը գնում էր իր գլուխը դնել հանուն իր հայրենիքի, քաղաքների և գյուղերի, հանուն իր ժողովրդի: Հատկապես այդ եզրով էր դրսևորվում Հայաստանի Հանրապետության խորը ժողովրդավարությունը, որը ոչ շինծու էր, ոչ էլ մտացածին, այլ գալիս էր ռեալ իրականությունից:

Ճիշտ է, նկատվում էին նաև հարուստ ընտանիքների զավակներ, բայց դրանք մատների վրա հաշվելի քանակ էին կազմում: Ես հիշում եմ Յուզբաշևին, Մելիքյանին, վարչապետի որդիներին ⁶⁹, Խորհրդարանի

⁶⁹ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ **Հովհաննես Քաջազնունու** չորս որդիներից ավագ երեքը՝ Արամը, Աշոտն ու Ռուբենը, դեռևս Առաջին աշխարհամարտի օրերին կամավոր զինվորագրվել են և մեկնել ռազմաճակատ: Հետագայում Աշոտը զոհվել է 1918-ին Ղարաքիլիսայի ճակատամարտից հետո, ընկնելով թուրքական շրջապատման մեջ: Արամը զոհվել է 1920-ի ամռանը Զանգիբասարի կռիվներում, իսկ Ռուբենը զերի է ընկել 1920-ի հոկտեմբերի վերջերին Կարսում: Ըստ որոշ տեղեկությունների, **Քյազիմ Կարաբեքիրի** մոտ մի ֆրանսահայ զերու հետ եղել է վարորդ: Թուրք զորահրամանատարը, իմանալով, որ Ռուբենը Հայաստանի նախկին վարչապետի որդին է, սակայն վերջինս ոչ մի տարբերակում չի

նախագահ Սահակյանի որդիներին և այլ ընտիր երիտասարդներին, որոնք, ինչպես կասեր պոետը “ թողեցին տաքուկ անկյունների բարեկեցությունն ու ապահովությունը” հանուն պատերազմի վտանգների: Նրանցից շատերը գոհվեցին ծաղկուն հասակում: Սակայն քաղաքի հարուստ ընտանիքների երիտասարդության հիմնական մեծ զանգվածը չէր համարում գորքը, փոքրոգորեն դասալքում էին, կամ տեղավորվում էր թիկունքային գրասենյակներում: Այդ ամենը մեծ դժգոհության ալիք բարձրացրեց բանակը համարած գյուղացի զինվորների շարքերում: Գյուղից եկած զորակոչիկներն ուղղակի հայտարարում էին, որ անարդարացի է միայն գյուղի հաշվին իրականացնել զորակոչը, որ անհրաժեշտ է քաղաքացիների բալիկներին էլ բերել զորաշարք կանգնեցնել:

Անհերքելի է այն փաստը, որ հենց հայկական գյուղն է կռել Հայաստանի Հանրապետության հիմքերն ու հիմնասյունները: Եվ հենց դրանով է պայմանավորված այդ պետության ծագումնաբանության ժողովրդավարությունը: Հայաստանի Հանրապետության հռչակումից դեռևս 6-7 ամիս առաջ, այն ճակատամարտերը՝ Սարիղամիշի, Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Էրիվանի տակ տալիս ու հաղթում էր շինել հազած հենց հայ գյուղացիությունը և դրա համար էլ հենց նրան՝ հայ գյուղացիությանն են պատկանում Հայկական Պետության իրական հիմնադիրների իրական պատիվն ու փառքը:

Դիվանագիտությունն ընդամենը ձևակերպում է փաստերը: Իսկ բուն փաստերը, իրականությունը ստեղծում է ժողովուրդը, նրա որոշակի դասակարգերը: Հայերի մոտ այդ դասակարգը առաջնորդների և մտավորականների ուղղորդմամբ շարժվող գյուղացիությունն էր: Այն առաջնորդների, որոնք, աննշան բացառությամբ, նույնպես սերված էին գյուղացիությունից: Ես սերվել եմ ծառայողի, չինովնիկի ընտանիքից, ուստի և անխռով կերպով այդ դափնե պսակը կարող եմ հանձնել գյուղա-

դում իր որդու և մյուս հայ գերիների միջև ու որևիցե միջնորդությամբ հանդես չի գալիս: Հարգելով վերջինիս նման պահվածքը, ինքը ազատ է արձակում Ռուբենին: Կամավոր ռազմաճակատ է մեկնել նաև ՀՀ երրորդ վարչապետ **Համո Օհանջանյանի** ավագ որդին՝ Համագասպը (Մոնիկը), ով գոհվել է Ղարաքիլիսայի ճակատամարտում: Հայկական զինուժին զինվորագրված են եղել նաև Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի նախագահ **Ավետիք Սահակյանի** երկու որդիները:

ցիությանը: Գյուղացիությանը, որին տեսել եմ գործի մեջ, արյան մեջ, տառապանքի ու դժբախտության մեջ և անկախության գաղափարի ցնծության մեջ:

Ոչ միայն մարտի դաշտում, այլ նաև հենց Թիֆլիսում, այդ գյուղացիները բարձրացնում էին մարդկանց ոգին ու տրամադրությունը: Երբ 1917-ի դեկտեմբերին Թիֆլիսում բոլշևիկյան բռնկման վտանգ էր զգացվում և անհրաժեշտ էր հուսադրել բնակչությանը, ապա գավառից՝ Էրվանից Թիֆլիս կանչեցին 3-րդ գունդը: Ես գնացի նրանց ընդառաջ և խնդրեցի, որ իրենց առնական տեսքով և տրամադրությամբ նրանք դրականորեն ներազդեն թիֆլիսեցիների վրա: Եվ նրանք եկան ու ներազդեցին:

Հայոց Ազգային խորհրդից գատ, Թիֆլիսում գործում էր նաև թուրքահայերի Կոմիտեն: Այդ օրերին նրա մոտ դեռևս բացակայում էր “-Միացյալ Հայաստանի” գաղափարը: Ազգային առվակները մոտենում էին միմյանց, բայց, դեռևս չէին միախառնվում: Նրանց մոտ գերիշխում էր առանձին Թուրքահայաստանի ազատագրման գաղափարը: Նրանք հատուկ գնդեր էին կազմավորում՝ հիմնականում Անդրանիկի հրամանատարությամբ: Նրանց հետ աշխատում էր անգլիացի գնդապետ Պարքը, ով հետագայում սպանվեց բոլշևիկների կողմից Վլադիկավկազում: Պարքի միջոցով Ազգային խորհրդին էր փոխանցվել 4 մլն. ռուբլի: Այդ երկու հայկական կոմիտեները երբեմն անցկացնում էին համատեղ նիստեր, սակայն, ինչպես նշեցինք, չէին միաձուլվում:

Մեր աչքի առաջ, օր-օրի հայության շրջանում բարձրանում էր Ազգային խորհրդի հեղինակությունը: Հենց նրա շուրջ էին խմբվում ռուսահայության շահերը և ի հայտ գալիս ու զարգանում Կովկասում անկախ հայկական պետական տարածքի գաղափարը: Միտքը միանգամայն նոր էր և գնալով ավելի ու ավելի տարածում էր գտնում: Բայց այդ միտքը ի հայտ էր գալիս ամեննին ոչ դատարկ տեղից, այլ ծնունդ էր առկա իրականության:

Հայկական կորպուսը ձևավորվում էր և նրա գորամասերը մեկնում էին ռազմաճակատ: Ես չեմ կարող ասել, որ դա մի հզոր ուժ էր: Այդ գորքը շարժվում էր դեպի հսկայական երկայնքով ռազմաճակատ և այն-

տեղ տրոհվում մանր մասերի: **Դրոն, որին ես համարում եմ խոշոր ռազմական տաղանդ, ասում էր, որ մեր զինվորական ուժերի նման բաշխումը սխալ էր: Նա կողմնակից էր ճակատային զծի կրճատման և ուժերը մի բռունցք հավաքելու տարբերակին (ընդգծումը մերն է – Վ.Ն.):** Դրա փոխարեն մեր զինուժը մասնատվում էր և պատերազմում էր մաս-մաս: Միաժամանակ շատ վատ էր մեր համար իրադրությունը թիկունքում: Մահմեդականները երկաթզծի երկայնքով հարձակվում էին դեպի ռազմաճակատ շարժվող գնացքների վրա, արդեն նույնիսկ Թիֆլիսի մոտակայքում՝ Աշանա, Սերայի, Սանդար կայարաններում: Ստիպված էինք մաքրել նման խցանումները և դեպի ռազմաճակատ բաց թողնել զորքերը: Ես հիշում եմ մի դեպք Ալեքսանդրապոլում, որը շատ ծանր ու վարկաբեկիչ էր մեզ համար: Ալեքսանդրապոլի մոտ կա Մոլլա-Մուսա անունով մահմեդական մի գյուղ: Այդ գյուղի բնակիչները հարձակվել էին հայ զինվորների վրա, սպանել նրանցից մի քանիսին, խլել զենքերը: Մինչև պատժիչ ջոկատ ուղարկելը, Ալեքսանդրապոլից դեպքի վայր մեկնեց մի զինված խումբ՝ մի համակրելի երիտասարդ, Ալեքսանդրապոլի զինվորական պատգամավորների խորհրդի նախագահ, երիտասարդ մենջնիկ Ասրիբեկովի գլխավորությամբ: Նրա հետ էին նաև քաղաքային Վարչության անդամները: Երբ այդ պատվիրակությունը մոտեցել է գյուղին, այնտեղից հնչել են կրակոցներ և Ասրիբեկովը սպանվել է: Քաղաքի հայ բնակչությունը հուզված էր: Սկսվեցին խմորումներ, ինչը տեղափոխվեց քաղաքի կայարան, ուր ժամանում էր Թիֆլիսից եկող գնացքը: Հայ զինվորները, ի հատուցումն մահմեդականների կատարածի, բռնեցին վագոնից դուրս եկող մի մահմեդականի, քարշ տվեցին կայարանից դուրս ու այնտեղ սպանեցին: Եվ դա անվանում էին Կովկասը թուրքերից պաշտպանելու “միասնական ճակատ”:

Մինչդեռ թուրքերը, տեսնելով, որ ռուսական զորքերը լքել են ռազմաճակատը, ռազմաճակատում սկսեցին դիմել սադրանքների: Նրանք հեռագիրը հեռագրի հետևից էին ուղարկում Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Օդիշելիձեին, որոնցում հայերին մեղադրում էին թուրք-քրդական բնակչության նկատմամբ անասելի բռնություններ իրականացնելու մեջ: Նրանց բողոքները զարհուրելի էին: Իմ աչքի առաջ են

1918թ. հունվարի 9-ի, հունվարի 19-ի, հունվարի 29-ի, հունվարի 30-ի հեռագրերը: Դրանք լցված են բողոքներով հայերի կատարած բռնությունների վերաբերյալ:

Ես անհրաժեշտ եմ համարում, ընդհանուր առմամբ, հիշեցնել, ամեն մի կոտորածից, բռնությունից և հարձակումից առաջ թուրքերը նախապես այդ ամենի իրագործման համար հող են նախապատրաստում, մեղադրելով հայերին մահմեդականների հանդեպ բռնություններ իրականացնելու մեջ: Ես հիշում եմ, թե անցած տարի, Լոզանի Համաժողովի նախօրեին, թուրքերն իրենց լրատվամիջոցներում հաղորդագրություն էին տեղադրել, թե Ահարոնյանը, [...] քաղաքում ահաբեկչություն էին նախապատրաստում թուրքերի դեմ, մինչդեռ այդ անձինք այդ ժամանակ խաղաղ ու հանգիստ նստած էին Լոզանում: Հենց երեկ եմ ես կարդացել, որ բացահայտվել է “հայերի դավադրություն, որոնք փորձ են արել հրդեհել Կոստանդնուպոլիսը”: Նման հաղորդագրությունները ունեին հստակ նպատակ, և դրանք այդ նպատակին հասնում էին՝ սկսվում էին հուզումներ կովկասյան թաթարների միջավայրում: Եվ քանի-քանի չուսումնասիրված, չճշտված հարցերի շուրջ մենք անպտուղ վեճեր ենք ունեցել 1918թ. ձմռան ու գարնան ընթացքում Բաքվի գործիչների՝ Սուլթանովի, Ցեփիլովի, Խան-Խոյսկու, Ջաֆարովի, Խասամեդովի հետ իրենց պահանջների վերաբերյալ: Նրանք պատ էին կառուցում մեր ու իրենց միջև և համերաշխության ստվերը փախչում էր մեզանից:

1918թ. գարնանը հայերն ու կովկասյան մահմեդականներն ավելի ու ավելի էին հեռանում միյանցից, և պատճառը թուրքերն էին: Միաժամանակ, Կովկասի թաթարները հարձակվում էին դեպի Ռուսաստան, դեպի տուն գնացող ռուսական զինվորական գնացքների վրա: Կա շատ հայտնի դեպք, երբ թաթարները Շամքոր կայարանում հարձակվել էին տուն գնացող ռուս զինվորների գնացքի վրա, ինչի արդյունքում վազոններում կենդանի այրվել էին մոտ 1000 ռուս զինվորներ, իսկ գնացքում եղած հրացաններն ու հրետանին թաթարները տարել էին Ելիզավետպոլ: Ես հիշում եմ, թե ասելության ինչպիսի պոռթկում առաջ բերեց ռուս զինվորների մոտ այդ հարձակումը: 1921թ., երբ Ելիզավետպոլում ապստամբեց թաթարական մի զորամաս, բոլշևիկները վրիժառու եղան թաթարներ-

րից այդ հարձակման համար, դաժանորեն ճնշելով այդ ապստամբությունը: Դրա կապակցությամբ թաթարները մեղադրեցին հայերին, որոնք, իբր հիշելով իրենց նեղացածությունը թաթարներից, սատարել են բուլղարներին թաթարներից վրեժխնդիր լինելու հարցում:

...Ընթանում էր 1918թ. հունվար ամիսը: Թուրքական ուժերի ճնշման տակ հայկական զորքը թողնում էր քաղաքները, հայկական բանակի հետևից գալիս էին փախստականների շարանները: Ընկան Էրզինջանը, Վանը, ռազմաճակատը մոտենում էր 1914թ. հին ռուս-թուրքական սահմանի գծին: Թուրքիայի և Անդրկովկասի միջև 1917թ. դեկտեմբերի 5-ին կնքված զինադադարը թե՛ իրավաբանորեն և թե՛ փաստացի, ըստ էության, անէականացավ:

Կրկին արյուն, կրկին փախստականներ, ցրտահարված մարդիկ... Այդպիսին էր այդ օրերին իրավիճակը Կովկասում: Ինձ հեռագրով կանչեցին Էրզրում: Այնտեղ իրադրությունն անհանգիստ էր: Հունվարի վերջին ես պատրաստվում էի մեկնել Էրզրում, երբ ստացա մեկ այլ՝ կուսակցությունից ուղարկված հեռագիր, որով ինձ առաջարկվում էր շտապ մեկնել Թիֆլիս: Դա փետրվարի առաջին օրերին էր: Ես նոր էի վերադարձել Դիլիջանից, ու գնացել էի Քարավան-Սարայի շրջանի զեմստվոյի խորհրդակցությանը մասնակցելու համար: Դիլիջանից Ղարաքիլիսա վերադառնալիս ճանապարհին ինձ ողջունում էին: Հեծյալները քառատրոփ ընթանում էին ավտոմոբիլի հետևից: Նկատվում էր, որ վրացական ու թաթարական շրջանների հետ սահմանակից այդ հայկական շրջանում նույնպես արթնանում էր սեփական հայկական տարածքներ ունենալու գաղափարը: Ես դեռևս ընդամենը Ալեքսանդրապոլի քաղաքազլուխն էի, բայց ինձ նայում էին որպես համահայկական շահեր ներկայացնող անձի:

Ես ժամանեցի Թիֆլիս և հասկացա, որ ինձ Թիֆլիս կանչելու թեման դա Թուրքիայի հետ խաղաղ բանակցություններն սկսելն է: **Պարզ հասկացվում էր, որ Թուրքերը ցանկանում են կամ պայմանագիր ստորագրել հենց Անդրկովկասի հետ, կամ Ռուսաստանի հետ՝ Անդրկովկասի վերաբերյալ (ընդգծումը մերն է – Վ.Հ.):** Այս պահին ես կարող եմ պնդել, որ մենք ուշացել էինք: Ինչպես ես գրել եմ, Անդրկովկասն ուզում

էր թուրքերի հետ բանակցել Ուկրաինայի և Կազակոյթյան հետ համատեղ: Իսկ թուրքերը դա չէին ուզում: Մյուս կողմից, ռուս բոլշևիկները, քայքայելով բանակը և կորցնելով մարտունակությունը, մտածում էին ռուս ժողովրդի “աննկունության” և խաղաղության մասին: 1918թ. հունվարի 3-ի նամակով թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշան Անդրկովկասի ներկայացուցիչներին հրավիրում էր գալ Բրեստ-Լիտովսկ, որտեղ տեղի էր ունենալու “կենտրոնական տերությունների կողմից Անդրկովկասի անկախության ճանաչումը”: Անդրկովկասյան կառավարությունում այդ հրավերն առաջ բերեց, ճիշտ է, թույլ, բայց, համենայնդեպս, որոշ տարաձայնություններ:

Կովկասյան գործիչների ճնշող մեծամասնությունը դեմ էր Բրեստ-Լիտովսկ գնալուն: Վեհիբ-փաշայի այդ նամակը Թիֆլիսում ստացել էին 1918թ. փետրվարի 1-ին: Վրաց ազգայնականները կողմ էին Բրեստ-Լիտովսկ գնալուն, քանզի նրանք շտապում էին ժամ առաջ անջատվել Ռուսաստանից: Հայերը և վրաց մենշևիկները դեմ էին: Պետք է նշել, որ կառավարությունից զատ, Անդրկովկասում կար նաև օրենսդրական մարմին՝ Սեյմը: Այն բաղկացած էր Անդրկովկասից Ռուսաստանի Սահմանադիր Ժողովի ընտրված պատգամավորների եռապատիկ թվով անձերից: Սեյմի նախագահը վրացի Չխեիձեն էր, իսկ նրա տեղակալները՝ Տիգրանյանը⁷⁰, -հայ և թաթար Աղակը, ով հետագայում սպանվեց Թիֆլի-

⁷⁰ Միրակյան Թադևոսի Տիգրանյան (1875թ., Ալեքսանդրապոլ, Ռուսական կայսրություն - 1937թ., Երևան, ԽՍՀՄ), հասարակական-քաղաքական և պետական գործիչ, ՀՀԴ անդամ: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Ընտրվել է Ռուսաստանի Երկրորդ պետական Դումայի պատգամավոր: Դուման ցրելուց հետո շնորհագրկվել է, ապա աքսորվել, որտեղից փախել է: Ընտրվել է Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի պատգամավոր, Անդրկովկասյան Սեյմի օրոք Եղել է Սեյմի նախագահի տեղակալ: 1918 նոյեմբերի 4-ից մինչև 1919 ապրիլի 27-ը եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության Արտաքին գործերի նախարարը, Հովհաննես Քաջազունու կառավարության կազմում: 1918-1920 թթ. ՀՀ-ում զբաղեցրել է պետական տարբեր պաշտոններ՝ Արտաքին գործերի նախարար, ՀՀ հանրային կրթության և արվեստի նախարար, Ազգային ժողովի պատգամավոր, Ազգային ժողովի փոխնախագահ: Հայաստանի անկախության վերացումից հետո տեղափոխվել է Իրան, հետո՝ վերադարձել Հայաստան, որտեղ դասավանդել է տարբեր ուսումնական հաստատություններում: Բոլշևիկյան իշխանությունների կողմից ձեր-

սում: Մեյմը ամբողջովին վերցրած արտահայտում էր Անդրկովկասի երեք հիմնական կուսակցությունների քաղաքական մոտեցումները և երբևիցե ու ոչ մի հարցում միաձայնություն չէր ցուցաբերել: Առանձնակի դիրքորոշում էին Մեյմում զբաղեցնում ռուս կադետները (Մեյմոնով) և առանց ազգության տարբերության, ռուսոֆիլ էսեռները (Լ.Թումանով. Բերյոզով): Ես Մեյմի անդամ էի և կարող եմ ասել, որ Մեյմի կուլիսների հետևում կարևոր հրահանգները տալիս էին կուսակցությունների գլխավոր կոմիտեները:

Փետրվարի 1-ին Անդրկովկասի կառավարությունն առաջին անգամ լրջորեն մտածեց խաղաղ բանակցությունների կազմակերպման մասին: Այդ ժամանակ Բրեստ-Լիտովսկի բանակցություններն ընդհատվել էին բոլշևիկների կողմից, իսկ գերմանացիներն ու թուրքերը ավելի էին ուժեղացել և շարժվում էին առաջ: Իսկ մենք թիկունքում ունեինք լարված հայ-թաթարական հարաբերություններ: Այդպիսին էր այդօրվա իրադրությունը երկրի ներսում: Իսկ ռազմաճակատում, ինչպես դա հետևում էր կառավարությանը հղած գեներալ Լևանդովսկու զեկույցից, ասորիներն իրենց ազգի պաշտպանության համար կազմավորել էին վեց գումարտակ: Պարսկաստանում Սիմկոն անցել էր թուրքերի կողմը, Մակուի սարդարը փակել էր իր խանության տարածքով անցնող ճանապարհը, իսկ մյուս սարդարը՝ Ջուլֆայից մինչև Թավրիզ ճանապարհը: Քրդերը թալանել էին Ջուլֆայից դեպի վերև երկաթուղին և շարժվում էին դեպի Դավալու⁷¹ կայարան: Այսինքն՝ դեպի Էրիվան:

Իսկ Անդրկովկասյան կառավարությունը շարունակում էր բանակցությունները Հյուսիսային Կովկասի հետ համաբոլշևիկյան Ռուսաստանի ընդհանուր իրավիճակի մասին: Կովկասյան զինվորական իշխանությունները անհրաժեշտ էին համարում միանալ բանակցություններին, որպեսզի, բացի ամենից, հնարավոր լինի փրկել զենքի և հանդեր-

բակավել է 1924թ. և 1933թ., սակայն կարճ ժամանակ անց ազատ է արձակվել: Վերջնական ձեռքակալվել է 1937 թ. և ձերբակալումից օրեր անց՝ գնդակահարվել: Արդարացվել է հետմահու 1958թ.:

⁷¹ Այժմ՝ Արարատ:

ձանքի Տրապիզոնի միլիոնավոր պահեստները: Քննարկելով բոլոր պարագաները, Անդրկովկասի Կառավարությունը փետրվարի 1-ին որոշում կայացրեց խնդրել Անդրովկասյան Սեյմին հաստուկ՝ հանձնաժողովի միջոցով մշակել խաղաղության պայմանագրի պայմանները, իսկ Կոմիսարիատին՝ հոգավ պատվիրակություն ձևավորելու հարցը:

Երբ խաղաղ բանակցություններ վարելու հարցն արդեն դարձավ առարկայական, ինձ Ալեքսանդրապոլից կանչեցին Թիֆլիս: Իմ քաղաքական բարեկամները անհրաժեշտ էին համարել ներգրավել ինձ կայանալիք բանակցություններին և խաղաղության պայմանների մշակման գործընթացին:

Սեյմը պետք է հավաքվեր հին տոմարով փետրվարի 10-ին: Այդ պահից ինձ մոտ սկսվեց խաղաղ համաժողովների շարքը. Տրապիզոն, Բաթում, Կոստանդնուպոլիս, ինչը տևեց 1918թ. հունվարի վերջից մինչև 1918թ. նոյեմբեր:

Մինչ այս մենք ծանոթացանք նրա հետ, թե ինչպես, քայլ առ քայլ ստեղծվում և աճում էր Կովկասում ազգային տարածքների միտումը, ինչպես էր կյանքի կոչվում այդ միտման ռազմական բաղադրիչը և ինչպես, սկզբից՝ Ազգային Բյուրոյի, իսկ հետո՝ Ազգային Խորհրդի շուրջ կենտրոնանում ու խտանում էին ազգային գիտակցությունը և ազգային ուժը: Այստեղ մենք տեսնում ենք այն սկզբնական աղբյուրները, որոնք ուժ հաղորդեցին Կովկասյան Հայաստանի ստեղծման գաղափարին: Խաղաղության համաժողովի ընթացքում այդ առաջնային աղբյուրներն աստիճանաբար վերաճում են պետականության հիմքերի և մայիսի վերջին ի հայտ են գալիս արդեն Պետության տեսքով: Համաժողովը այդ ամենին տվեց իրավական ձևակերպում և առարկայական շոշափելիություն:

1918թ. փետրվարի ընթացքում իր մի շարք նիստերում քննարկում էր խաղաղ բանակցությունների թեման: Փետրվարի 10-ին Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետը զեկուցում էր որ, “պատերազմը շարունակելու համար բավարար զինուժ այլևս չկա”:

Հայերը ցանկանում էին արագացնել այդ բանակցությունները: Այդ մասին փետրվարի 1-ին և փետրվարի 10-ին հայտարարեցին կադետ

Պապաջանյանն ու դաշնակցական [...]. Ես ինքս նույնպես բանակցությունների սկիզբը արագացնելու կողմնակից էի: Ռուս գործիչները չէին շտապում: Նրանք ցանկանում էին իրականացնել Անդրկովկասյան Կոմիսարիատի մտադրությունը: Այն է, բանակցությունները վարել Կովկասի և Ռուսաստանի այլ ինքնավար մասերի անունից:

Համաժողովի տեղի ընտրության հարցը առաջ բերեց տարբեր կարծիքներ: Ընտրության էր դրված երեք քաղաքների թեկնածություն. Թիֆլիս, Բաթում, Տրապիզոն: Թիֆլիսն ու Բաթումը մերժվեց, որպեսզի թուրքերին չբերենք մեր միջավայր և չցուցադրենք նրանց, թե ինչ է կատարվում մեր տանը: Կանգ առանք Տրապիզոնի վրա, համարելով, որ այն չեզոք քաղաք է: Առավելևս, որ այդ որոշումն ընդունելու պահին Տրապիզոնը դեռևս ռուսների ձեռքում էր:

Հաշվի առնելով, որ Ուկրաինայից և Հյուսիսային Կովկասից այդպես էլ ոչ մեկը չեկավ, Անդրկովկասի կառավարությունը մեկ անգամ ևս տեղեկացրեց Ուկրաինայի Կենտրոնական Ռադային թուրքերի հետ Տրապիզոնում կայանալիք խաղաղ բանակցությունների մասին և, որ պատվիրակությունները կհանդիպեն Տրապիզոնում հին տոմարով 1918թ. փետրվարի 17-ին:

Այդ ժամանակ ես Մեյմում կարծիք արտահայտեցի, որ մեզ անհրաժեշտ է մերձենալ Թուրքիայի հետ, քանզի ես տեսնում և զգում էի, որ ճակատագիրն ու հանգամանքները տանում են մեզ Թուրքիայի հետ մերձենալու ճանապարհով: Իմ այդ ելույթը դուր չեկավ ռուսական շրջաններին: Նրանք հիշում էին իմ ելույթները Մոսկվայում, սակայն մոռանում էին, որ Ռուսաստանը բավականին երկար ժամանակ է, ինչ շեղվել էր մեզանից, և, որ իրականում ոչ թե մենք ենք հեռացել Ռուսաստանից, այլ Ռուսաստանն է հեռացել մեզանից (*ընդգծումը մերն է – Վ.Հ.*):

Փետրվարի 16-ն Մեյմն ընտրեց Տրապիզոն մեկնող պատվիրակության կազմը: Պատվիրակության կազմում էին. նախագահ Ակակի Չխենկելի (վրացի), անդամներ՝ վրացիներ Աբաշիձե (մահմեդական վրացի), Գվադավա, Լասխիշվիլի, հայեր՝ Ռուբեն, Քաջագնունին և ես, թաթարներ՝ Գյանջինսկի, Ղանդարով, Մեխտիև, Խաս-Մամեդով, Ուլլ-Իսլամով: Պատվիրակության կազմում ընդգրկված էին Անդրկովկասի ե-

րեք ժողովուրդների և բոլոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները⁷²:

Այդ փաստը պետք է համարել Անդրկովկասի ժողովուրդների կյանքում առաջին ինքնուրույն քայլը: Անցկացնելով ամբողջ Մեծ պատերազմը միասին, ռուսական զորքերի հետ համատեղ արյուն թափելով, կապելով Կովկասի ճակատագիրը Ռուսաստանի ճակատագրի հետ և Արևմտյան Հայաստանի նվաճելը համարելով ռուսական զենքի հաղթանակ, անդրկովկասյան զործիչները, երկար տատանվելուց հետո, վճռեցին դիմել ինքնուրույն քայլի: Բայց անհրաժեշտ է ընդգծել, որ այդ քայլը թելադրված չէր ամենևին Ռուսաստանից քաղաքականապես անջատվելու և անպայման որպես ինքնուրույն պետություն հանդես գալ ցանկությամբ, այլ հետևանքն էր ստեղծված իրադրության: Այդ պահին Թուրքիան շարժվում էր դեպի Կովկասի սահմանները, իսկ Ռուսաստանը հեռանում էր: Ուստիև, անհրաժեշտ էր թուրքերի հետ լեզու գտնել, ինչի մասին էլ 1918թ. փետրվարի 13-ին Անդրկովկասյան Սեյմում արտասանած իր ճառում շատ պարզ արտահայտվեց Անդրկովկասյան կառավարության նախագահ Գեգեչկորին: Հայերն ամբողջովին կիսում էին այդ տեսակետը:

Անդրկովկասի սահմաններում վերը նշված ազգային ինքնորոշման գործընթացն ընթանում էր, բայց դեռևս չէր վերաճել Ռուսաստանից քաղաքականապես անջատվելուն: 1918 թ. փետրվարին Անդրկովկասի անկախացման հարցը դեռևս հասունացած չէր:

Թուրքերը համաձայնվել էին բանակցությունները վարել Տրապիզոնում, ինչի մասին էլ փետրվարի 10-ին հեռագրով տեղեկացրել էին Անդրկովկասի կառավարությանը: Թեև նրանք գերադասում էին բանակցել Բաթումում, սակայն համաձայնվել էին Տրապիզոնի տարբերակին:

Ես չթողեցի Ալեքսանդրապոլի քաղաքապետի պաշտոնը և ժամանակավորապես իմ պարտականությունները հանձնեցի իմ տեղակալ Ալեքսանդր Շարաֆյանին: Ես ամբողջապես ինձ նվիրեցի խաղաղության պայմանագրի պայմանների ուսումնասիրմանը: Մեր՝ հայերիս պատկե-

⁷² Ավելի մանրամասն տե՛ս ТРАПЕЗУНДСКАЯ И БАТУМСКАЯ МИРНЫЕ КОНФЕРЕНЦИИ Февраль - Май 1918 года, ДОКУМЕНТЫ И МАТЕРИАЛЫ Первое издание, Ответственный редактор Ир. ЯКОБАШВИЛИ, Тбилиси, 2018, 466с.

րացմամբ, այդ պայմանագրի կենտրոնական հարցը դա Արևմտյան Հայաստանի հարցն էր: Այդ հարցը ես ներկայացնում ու պաշտպանում էի Մեյմի ընտրած հանձնաժողովում, որի անդամների մեծ մասը հետագայում ընդգրկվեց բանակցություններին մեկնող պատվիրակության կազմում: Թաթարներն ու վրացիները, բնականաբար, կանխագգում էին, որ այդ, բանակցություններում երկու պատվիրակությունների միջև հենց Արևմտյան Հայաստանի հարցն է լինելու գլխավոր վիճելի կետը: Բայց առանց այդ կետի Անդրկովկասի պատվիրակության կողմից հնարավոր չէր լինի շարադրել իր պայմանները:

Որպեսզի ընթերցողին ավելի պարզ դառնա, թե հատկապես որ պատմական փաստերը հիմք ընդունելով որոշում կայացվեց սկսել թուրքերի հետ խաղաղ բանակցություններ, ես ամբողջությամբ կներկայացնեմ Անդրկովկասյան Կոմիսարիատի նախագահ Եվգենի Գեգեչկորիի ճառը, որը նա արտասանել է Մեյմում փետրվարի 13-ին: Այդ ելույթը ծրագրային է և արտահայտում էր նաև “Դաշնակցություն” կուսակցության տեսակետը:

Ընդհանրապես, ես Գեգեչկորիին համարում եմ Վրաստանի պետական գործիչներից մեր տեսակետներին ու տրամադրություններին առավել մոտ կանգնած անձնավորություն: Նա անցել էր շատ լավ ռուսական քաղաքական դպրոց, Ռուսական Պետական Դումայի երևելի անդամներից էր և տիրչապետում էր խոսքի շնորհին: Նա մեզ հետ անկեղծ է եղել իշխանության կազմում մեր եղած ամբողջ ժամանակահատվածում և անկեղծորեն ձգտում էր հասնել կովկասյան ժողովուրդների մոտ համերաշխ աշխատանքի և նրանց միջև խաղաղ համակեցության: Այժմ նա Փարիզում է՝ Վրաստանի վտարանդի կառավարության կազմում: Նոյ Ռամիշվիլիի, Ակակի Չխենկելիի և Նոյ Ժորդանիայի հետ միասին նա հանդիսանում է վրացական երիտասարդ քաղաքական օրգանիզմի առավել ուժեղ ու պայծառ կերպարներից մեկը: Եթե նրանց ավելացնենք նաև Ծերեթելուն⁷³ և Չխեիձեին, որոնք հրապարակ եկան նախահեղա-

⁷³ Ծերեթելի Իրակլի (Կակի) Գեորգիի (20 նոյեմբերի, 1881թ., Գորիսա -21 մայիսի, 1959, Նյու Յորք, ԱՄՆ), վրացի սոցիալ-դեմոկրատ, Ռուսականի և Վրաստանի քաղաքական գործիչ, մենշևիկ: Եղել է II Պետական դումայի պատգամավոր, սո-

փոխական և հեղափոխության առաջին ամիսների շրջաններում, ապա մենք մեր առջև կունենանք ժամանակաշրջանի առավել կարևոր վրացական գործիչներին:

Պատմական այն ժամանակաշրջանում, երբ Ռուսաստանում 1917-ի հոկտեմբերին բռնկվեց բոլշևիզմը և մինչև Տրապիզոնի համաժողովի ավարտը, դեպքերի առաջին գծում էին վրացի Գեգեչկորին, իսկ հայերից՝ Կարճիկյանն ու Համո Օհանջանյանը: Տրապիզոնից հետո Գեգեչկորին հայտնվեց սովերում և ասպարեզ եկավ Չիենկելին: Նա ավելի ճկուն է, խորամանկ, ինտելիգենտ և նուրբ, արևելյան ոճի քաղաքական գործիչ է: Նա ռուսական կողմնորոշում չունի և ռուսական դպրոցի ներկայացուցիչ չէ: Նա հենարան է փնտրում Արևելքում, թուրքերի և Կովկասում մյուս հարևանների հետ հարաբերություններ կառուցելու միջոցով: Նա նույնպես անցյալ ունի Ռուսական Պետական Դումայի կազմում: Հռետորական տաղանդով նա զիջում է Գեգեչկորիին, սակայն ավելի փորձված է ավելի նուրբ քաղաքական հաշվարկներ կառուցելու հարցերում:

Թաթարներից մեր պատվիրակության կազմում առանձնանում էր Բաքվի քաղաքային վարչության նախկին անդամ, ինժեներ Մամեդ-Հասան Գյանջինսկին, ով այսօր էլ Բաքվում աշխատում է բոլշևիկների հետ: Նա զգույշ, մտածող և լուրջ գործիչ է: Վերջինս հավատում էր, որ թուրքերը մեր հետ պայմանավորվելու հաշվարկներ են անում:

Հայկական պատվիրակության կազմում որպես ոչ պաշտոնական խորհրդականներ ընդգրկվել էին Ռուբեն Տեր-Մինասյանը՝ ապագայում Հայաստանի Հանրապետության ռազմական նախարարը և պատմաբան Լեոն՝ Առաքել Բաբախանյանը:

ցիալ-դեմոկրատական խմբակցության ղեկավար, II Բնտերնացիոնալի գործկոմի անդամ: Երկրորդ Դուման ցրելուց հետո ձերբակալվել է, արքայրվել Սիբիր: 1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո վերադառնում է Պետրոգրադ, զբաղեցնում տարբեր ղեկավար պաշտոններ պետական ներկայացուցչական և գործադիր մարմիններում: 1918թ. Մայիսի 26-ին Վրաստանի Անկախության հռչակագիրն ստորագրողներից մեկն է, հանդիսացել է վրացական պետության և վրացական մենշևիկյան կուսակցության ընդգծված առաջնորդներից մեկը: Վրաստանի անկախության ոչնչացումից հետո տարագրվել է:

Պատրաստվելով մեկնել Տրապիզոն, ես շտաբից ինձ հետ վերցրեցի աշխարհագրական մի քարտեզ: Հետագայում նա հայտնվում էր բոլոր համաժողովներին՝ ընդհուպ մինչև Լոզան: Եվ այդ քարտեզի վրա հետագայում Էնվեր-փաշան, Ռաուֆ-բեյը, Բեքիր Սամի-բեյը⁷⁴ հերթով գծել են Հայաստանի սահմանները: Բացի Սեյմի հրահանգներից, անհրաժեշտ համարելով ունենալ նաև արևմտահայության Խորհրդի կարծիքը, ես խնդրեցի այդ Կոմիտեի անդամ Վահան Փափազյանին մեզ ներկայացնել նաև Հայաստանի այն սահմանները, ինչպես որ դրանք տեսնում է արևմտահայությունը: Նա գծեց այդ սահմանները և դրանք գրեթե նույնությամբ համընկնում են Հայաստանի այն սահմանների հետ, որոնք 1920-ի նոյեմբերին որոշել է Վիլսոնը:

Որպեսզի ավելի մոտ կարողանանք հասկանալ, թե ինչ մղումներ էին դրված այն Տրապիզոն մեկնող պատվիրակությանը տրված հրահանգների հիմքում, ես ներկայացնում եմ նաև Սեյմում հնչեցրած խաղաղության հանձնաժողովի զեկույցը: Այդ հանձնաժողովն ընտրվել էր Սեյմի կողմից: Նրա նախագահն էր վրացական սոցիալ-դեմոկրատիայի առավել հզոր հեղափոխական գործիչներից մեկը՝ Նոյ Ռամիշվիլին:

ՔԱՂՎԱԾՔ „Документы и Матерьялы по Внешней Политикѣ Закавказья и Грузии. ” ԳՐՔԻՑ

Անդրկովկասյան Կոմիսարիատի Նախագահ Ե.Պ. Գեգեչկորու ելույթը Անդրկովկասյան Սեյմի երկրորդ նիստին (13/26/ փետրվարի, 1918թ., սղագրված ձեռագրից)

ԳԵԳԵՉԿՈՐԻ. Քաղաքացիներ Սեյմի անդամներ: Ելույթ ունենալով Ձեր առջև որպես ներկայացուցիչը այն իշխանության, որը Անդրկովկասի բոլոր հեղափոխական կազմակերպությունների կամքով իր ձեռքը վերցրեց մեր երկրամասի կառավարումը և որը այս ծանրագույն, ես կա-

⁷⁴ **Բեքիր Սամի-բեյ** (1865-1933): Թուրք պետական և քաղաքական գործիչ, դիվանագետ: Քեմալական կառավարության առաջին Արտաքին գործերի մինիստրը (կոմիսարը): 1920թ. ամռանը Մոսկվայում բոլշևիկյան իշխանությունների հետ բանակցելիս գլխավորել է թուրքական կողմը և հասել ակնհայտ հաջողությունների: Այդ բանակցությունների արդյունքում Մոսկվայից Անկարա ուղարկվեց ոսկու և զենքի առաջին խոշոր խմբաքանակը:

սեի՝ տանջալից պայմաններում իր ուժերի ներածին չափով իրականացնում է որոշակի աշխատանք, ես չեմ թաքցնի Ձեզանից, այս պահին խորը շփոթմունք եմ ապրում: Դա բացատրվում է, նախևառաջ, նրանով, որ մեր իշխանությունը, ըստ էության, խորհրդային իշխանություն էր, հեղափոխական կազմակերպությունների իշխանություն: Քաղաքացիներ Սեյմի անդամներ, այն զարհուրելի վիճակի, այն համընդհանուր քանդուցքի և պետական կառավարման համակարգի կազմալուծման, գոյության միջոցների բացակայության պայմաններում, որոնք տիրում էին ռուսաստանյան հանրապետության ամբողջ տարածքում՝ վերևից ներքև, այստեղ, մեր մոտ՝ Անդրկովկասում, իրականացվեց քաղաքացիական իրավակարգի վերականգնման առաջին փորձը: Մինչդեռ, հենց մեր մոտ էլ նման քայլի իրականացման համար բացակայում էին ամենատարրական պայմաններն ու հիմքերը:

Ես ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել այն իրադարձություններին, որոնք ծավալվում են ամբողջ Եվրոպայում և, մասնավորապես՝ Անդրկովկասում: Ես խոսում եմ այն տանջալի հարցի մասին, որն այսօր բոլորի շուրթերին է: Ես խոսում եմ խաղաղության հարցի մասին: Դուք լավ գիտեք, քաղաքացի Սեյմի անդամներ, թե ինչպիսի ծանր փորձությունների հնցով է անցել այդ հարցը: Դուք հրաշալի գիտեք և հիշում եք այն կոչը, որով հանդես եկավ այդ հարցի կապակցությամբ ռուսաստանյան հեղափոխությունը՝ “խաղաղություն առանց բռնանվաճումների և ռազմատուգանքների, ազգերի ինքնորոշման հիմքի վրա”: Դուք լավ գիտեք այդ հարցը պարուրող բոլոր բարդությունները: Ես չեմ ցանկանում հապաղեցնել Ձեր ուշադրությունը, նշեմ միայն, որ այն խաղաղությունը, որ ստորագրել է Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, իրենից ներկայացնում է գերմանական իմպերիալիստների հաղթահանդես: Դուք գիտակցում եք, որ այդ արատավոր խաղաղության միջոցով փակվում է այն դագաղը, որի մեջ են ուզում խցկել մեր հեղափոխությունը: Ամեն ինչ կախված է նրանից, թե կկարողանանք մենք արդյոք մեր մեկուսի շարքերը միավորել մեր կոչերի շուրջ, կկարողանանք արդյոք ապացուցել ամբողջ աշխարհին, որ կա դեռևս վառող մեր վառո-

դատուփում⁷⁵, որ դեռևս կան ուժեր, որոնք կպաշտպանեն հեղափոխությունը:

Այժմ մենք կանգնած ենք մի տրտմազին փաստի առաջ. խաղաղությունը ստորագրված է, և դրանով կապանքներ են դրված ամբողջ Ռուսաստանի վրա, որը վերածվել է Գերմանիայի գաղութի: Ռուսաստանը ստրկության ու տնտեսական կախվածության է հանձնված գերմանական իմպերիալիզմին: Եվ այդ փաստը պարզորոշ երևում է պայմանագրի նույնիսկ այն կետերից, որոնք մենք ունենք մեր աչքի առաջ: Այդ տնտեսական կախվածությունը կբերի և պարտադիր բերելու է նաև քաղաքական կախվածության: Եվ այժմ Ձեր առջև կանգնած է այն հարցը, թե ինչպես փրկել, - եթե ոչ ամբողջ Ռուսաստանը, քանզի Անդրկովկասյան ժողովրդավարության մեր հեղափոխական բանակը ընդամենը մի ջոկատ է երբեմնի հզոր և մեծ համառուսաստանյան հեղափոխական բանակի, - [այլ գոնե մեր երկրամասը]: Եթե մեզ, մեր երկրամասի տարածքում եթե ոչ ամբողջությամբ, այլ գոնե մասամբ հաջողվի կասեցնել և կատվածահար անել դեպի մեզ ուղղված հարվածը, ապա Անդրկովկասյան Սեյմն իր պարտքը կատարած կլինի, և ես դրանում համոզված եմ, ես հավատում եմ դրան:

Հենց նոր ես մի փաստաթուղթ եմ ստացել, որը ցուցանում է, որ զինադադարի և խաղաղության հարցերի գլխին ահեղ ամպեր են կուտակվում: Անդրկովկասյան Կոմիսարիատը՝ ի դեմս ինձ, հայտարարում է, որ առաջին հարցը, որի քննարկմանը պետք է անդրադառնա Սեյմը, դա խաղաղության հարցի հետ կապված ի հայտ եկած բարդացումների վերացումն է: Թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել այն ամենի վրա, ինչն այդ առնչությամբ իրականացվել է մեր կողմից:

Անցած տարվա նոյեմբերի 17-ին Կովկասյան ռազմաճակատի զորքերի Գլխավոր հրամանատարը 3-րդ թուրքական բանակի հրամանատար Ֆերիկ-Վեհիբ-փաշայից զինադադարի առաջարկության մի նամակ ստացավ: Ելնելով Ռուսաստանում ստեղծված քաղաքական իրադրությունից և հաշվի առնելով դեռևս նամակը ստանալուց առաջ ռուս-

⁷⁵ Ն.Վ.Գոգոլի «Տարաս Բուլբա» վեպից հայտնի արտահայտությունն է. «Есть еще порох в пороховницах!»:

ավստրո-գերմանական ռազմաճակատում սկսված բանակցությունների փաստը, այդ օրերին կազմակերպված Անդրկովկասյան Կոմիսարիատը, Երկրամասային Կենտրոնի և գորքերի Գլխավոր հրամանատարի հետ համաձայնեցված, միանգամայն ընդունելի ու ժամանակին համապատասխանող համարեց թուրքական բանակի հրամանատարի առաջարկությանն ընդառաջ գնալը: Այդ պահին միասնական, բոլորի կողմից ճանաչված Կենտրոնական Կառավարության բացակայության և Գլխավոր Գերագույն հրամանատարի Զորակայանի փլուզման պայմաններում, Կոմիսարիատը իր վրա վերցրեց այդ հարցի լուծումը, ենթադրելով, որ զինադադարի ժամանակ կգումարվի Համառուսաստանյան Սահմանադիր ժողովը, որը և կմշակի խաղաղության բոլոր պայմանները: Այդ ամենը նկատի ունենալով, Կովկասյան գորքերի Գլխավոր հրամանատարը նամակով դիմեց Վեհիբ-փաշային, որտեղ առաջարկում էր դադարեցնել ռազմական գործողությունները, չիրականացնել գորքերի ռազմավարական որևիցե վերադասավորումներ և մնալ զբաղեցրած դիրքերում մինչև զինադադարի կնքումը:

Միաժամանակ, Միջագետքում անգլիական բանակի հրամանատարին տեղեկություն հաղորդվեց, որ արվելու է ամեն ինչ, որպեսզի թուրքերն ընդունեն այնպիսի պայմաններ, որոնցով կբացառվեն Միջագետքի թուրքական գորքի համալրումն ու հզորացումը Կովկասյան ռազմաճակատում զբաղված թուրքական զինուժի հաշվին: Զինադադարի վերաբերյալ բանակցություններ վարելու համար ընտրվել էր պատվիրակություն, ուր ընդգրկված էին Զինվորական, Բանվորական և Գյուղացիական Խորհուրդների թվով երեք ներկայացուցիչներ, ու Գլխավոր հրամանատարի երկու ներկայացուցիչ:

Թուրքական հրամանատարության հետ երկկողմ համաձայնությամբ, կովկասյան և թուրքական պատվիրակությունների հանդիպումը կայացավ 1917թ. դեկտեմբերի 2-ին Էրզինջան քաղաքում: Քանի որ բոլոր կետերով առկա էր կողմերի համաձայնությունը, զինադադարը ստորագրվեց արդեն դեկտեմբերի 5-ին: Ընդ որում, հաստատվել էին նաև սահմանաբաժան գծերը: Համաձայն զինադադարի մասին այդ պայմանագրի, վերջինս գործող է համարվում մինչև վերջնական խաղաղության

մասին պայմանագրի ստորագրումը և հատուկ նշված է, որ կողմերից մեկը կարող է այն դրժել միայն մյուս կողմին ռազմական գործողությունները վերսկսելու մասին 14 օր առաջ տեղեկացնելու պայմանով /կետ I /: Իսկ Ռուսաստանյան Հանրապետության և Կենտրոնական Տերությունների միջև ընդհանուր զինադադար կնքելու պարագայում դրա բոլոր կետերը պարտադիր են դառնում նաև Կովկասյան ռազմաճակատի համար: Քանի որ զինադադարի ստորագրման օրը տեղեկություն էր ստացվել, որ զինադադար է հայտարարվել բոլոր ռազմաճակատներում, ապա ռազմական գործողությունները դադարեցվել էին ոչ միայն թուրքական Յրդ քանակի տեղակայման վայրերում՝ Սև ծովից մինչև Վանա լճի հարավային ափերը, այլ նաև ամբողջ Կովկասա-Պարսկական ճակատում և Սև ծովում: Ընդ որում, Կովկասյան ռազմաճակատի համար երկու կողմերի համաձայնությամբ, սահմանվել էր թվով հինգ վերահսկող հանձնաժողովներ: Թուրքերի համաձայնությամբ, որոշվել էր առաջնորդվել ոչ թե Բրեստի, այլ հենց Էրզինջանի զինադադարի դրույթներով՝ որպես ավելի ուշ կնքվածի:

1918թ. հունվարի 1-ին Կովկասյան Բանակի Հրամանատար գեներալ Օդիշելիձեն տեղեկացրեց, որ իրեն է հասել Վեհիբ-փաշայի նոր նամակը, որտեղ վերջինս, դիտարկելով Անդրկովկասյան Կոմիսարիատը որպես անկախ Կառավարություն, Թուրքիայի քանակի Գլխավոր Գերագույն Հրամանատար Էնվեր –փաշայի անունից խնդրում է տեղեկացնել թուրքական կողմին, թե ինչ եղանակով է հնարավոր շփումների մեջ մտնել Կովկասյան կառավարության հետ՝ երկու կողմերի միջև խաղաղ հարաբերություններ հաստատելու համար: Իսկ հունվարի 15-ին Վեհիբ-փաշան տեղեկացրեց, որ Բրեստ-Լիտովսկում հավաքված Կենտրոնական Տերությունների պատվիրակությունները պատրաստեն իրենց բոլոր ջանքերը գործադրել Անդրկովկասի Կառավարության անկախությունը ճանաչելու համար և, որ վերջինս, լիակատար համոզված կարող է լինել հաջողության համար և վստահաբար կարող է իր պատվիրակությունն ուղարկել Բրեստ-Լիտովսկ:

1918թ. հունվարի 15-ի նիստում քննարկելով թուրքերի առաջարկությունը և ելնելով այն անհրաժեշտությունից, որ խաղաղության վերա-

բերյալ մեր քայլերը պետք է համաձայնեցնել Անդրկովկասի հետ հավասարապես այդ հարցով մտահոգված Ռուսաստանի մյուս ինքնավար միավորների տեսակետներին ու կարծիքներին: Անդրկովկասյան Կոմիսարիատը, Երկրամասային կենտրոնի և Ազգային խորհուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ մշակեց թուրքական հրամանատարությանն ուղղված նամակի տեքստը, խոստանալով թուրքական կողմին ըստ էության պատասխան ներկայացնել երեք շաբաթների ընթացքում, նշելով, որ այդ ժամանակահատվածն անհրաժեշտ է մյուս ինքնավար միավորների հետ տեսակետները համաձայնեցնելու համար: Նույն օրվա նիստի որոշմամբ Անդրկովկասյան Կոմիսարիատը փետրվարի 1-ին համաժողով հրավիրեց Ուկրաինայի և Հարավ-Արևելյան միության մասնակցությամբ, որոնք հավասարապես շահագրգիռ էին Թուրքիայի հետ խաղաղության հասնելու հարցում: Այդ համաժողովում պետք է կայացվեր որոշում թուրքական առաջարկին ըստ էության պատասխանելու համար և թուրքերին տրվեր վերջնական պատասխան: Սակայն Ուկրաինայի Ռադայից, ուր հրավերը փոխանցվել էր ուղիղ կապով հունվարի 23-ին, որևիցե պատասխան առհասարակ չստացանք, իսկ Հարավ-Արևելյան Միության Կառավարությունը, թեև սրտացավորեն ընդունեց համաժողովի գաղափարը, սակայն ոչ գրավոր պատասխան, ոչ էլ ներկայացուցիչներ համաժողով չուղարկեց:

Ելնելով ստեղծված իրավիճակից, Անդրկովկասյան Կոմիսարիատը իր փետրվարի 1-ի նիստին, Երկրամասային կենտրոնի, Ազգային Խորհուրդների ներկայացուցիչների և Գլխավոր հրամանատարի հետ մտքերի փոխանակման արդյունքում որոշեց տեղեկացնել Վեհիբ-փաշային խաղաղության հարցով նախնական բանակցություններ սկսելու մեր համաձայնության մասին և խնդրեց տեղեկություններ տրամադրել պատվիրակությունների հանդիպման ժամանակի, վայրի և կազմի վերաբերյալ: Իսկ խաղաղության պայմանների վերաբերյալ հիմնական դրույթների մշակումը պատկանում է Անդրկովկասյան Սեյմին:

Համապատասխան հեռագրահաղորդումը Վեհիբ-փաշային ուղարկվել է փետրվարի 3-ին, իսկ փետրվարի 10-ին ստացվել է պատասխանը, որի միջոցով տեղեկացվում էր, որ համաձայն թուրքական առա-

ջարկության, թուրքական խաղաղության պատվիրակությունը մեկնելու է Կոստանդնուպոլսից: Անդրկովկասյան Կոմիսարիատը որպես հանդիպման վայր նշել էր Տրապիզոնը, ուր փետրվարի 17-ին մեկնում է Կովկասյան պատվիրակությունը:

Ինչ վերաբերում է Կովկասյան ռազմաճակատում տիրող ընդհանուր իրավիճակին, ապա այն նկարագրվում է հետևյալ կերպ. Ռազմաճակատի զորքերի մեծ մասը, դեռևս մինչ զինադադար կնքելը, դուրս էր եկել հրամանատարության ենթակայությունից և սկսել որոշակիորեն արտահայտվել տուն վերադառնալու օգտին / դեռևս 1917թ. հոկտեմբերի 20-ին հայտնի 39-րդ դիվիզիայի դրսևորած կեցվածքը/: Այդ շարժումը, որը համառորեն ուռճացվում ու հրահրվում էր անպատասխանատու տարրերի կողմից, զինադադարի ստորագրումից հետո ստացավ տարերային բնույթ և զորքը զանգվածաբար նետվեց դեպի թիկունք՝ նվաճված տարածքներում բախտի քմահաճույքին թողնելով ժողովրդական ունեցվածքը: Զորքի հետ քաշվելու պատճառով իրավիճակը ռազմաճակատում չափազանց բարդացավ: Արդեն 1917թ. դեկտեմբերի 16-ին Կովկասյան ռազմաճակատի զորքերի Գլխավոր հրամանատարը Վեհիբ-փաշայից մի նամակ է ստանում, որտեղ ասվում է, թե Թուրքական բանակի Գերագույն Գլխավոր հրամանատար Էնվեր-փաշան ուշադրություն է հրավիրում այն փաստի կապակցությամբ, թե իբր գրավյալ տարածքներում թուրք բնակչության նկատմամբ բռնություններ են կիրառվում և խնդրում է միջոցներ ձեռք առնել նման բռնությունների դադարեցման ուղղությամբ: Մինչդեռ, հունվարի կեսերին սաստկանում են քրդերի և թուրքերի հարձակումները ռուսական բանակի գումակների և շրջիկ զորաջոկատների վրա, ինչի պատճառով տեղի են ունեցել բազմաթիվ ընդհարումներ մեր պահակախմբերի և թուրք-քրդական հրոսակախմբերի միջև:

Ըստ Էրզինջանի զորաջոկատի հրամանատարի հաշվարկների, տուժածների քանակը միջին հաշվով չի գերազանցել 200 անձ: Այդ միջադեպերը տեղի են ունեցել հունվարի 15-ին, 16-ին: Հունվարի 23-ին մենք մի շարք հեռագրեր ենք ստացել Վեհիբ-փաշայից, որոնցում վերջինս, հղում անելով իր ստացած զեկույցներին, նկարագրում էր, օտտոմանյան բնակչության հանդեպ իրականացվող բռնությունները և պահանջում էր մի-

ջոցներ ձեռք առնել մեղավորներին պատժելու համար: Ի պատասխան նշված հեռագրերի, Կովկասյան բանակի հրամանատար գեներալ Օդիշելիձեն, երկու անգամ՝ հունվարի 31-ին և փետրվարի սկզբին, տեղեկացրեց Վեհիբ-փաշային, որ վերջինիս ստացած տեղեկությունները մեծապես չափազանցված են, որ, թեև Էրզինջանի և Տրապիզոնի շրջաններում որոշ միջադեպեր իրոք նկատվել են, սակայն իրենց ծավալով միանգամայն չեն համապատասխանում թուրքական հրամանատարության տեղեկություններին և պայմանավորված են բացառապես թուրք և քուրդ ավազակախմբերի հարձակումներով: Ընդ որում, գեներալ Օդիշելիձեն բացատրել է, որ ձեռք են առնվում բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի ավազակախմբերի նկատմամբ պատժիչ գործողություններ իրականացնելու ժամանակ հանկարծ չտուժի խաղաղ բնակչությունը: Դրանից հետո, քանի որ թուրքական հրամանատարությունը առաջ շարժվելու հրաման էր արձակել, Գլխավոր հրամանատարի պաշտոնակատար գեներալ Լեբեդինսկին⁷⁶ իր հերթին դիմեց Վեհիբ-փաշային, տեղեկացնելով նրան իր կողմից իրականացրած հետաքննության մասին, որը բացահայտեց Վեհիբ-փաշայի ներկայացրած տեղեկությունների ոչ իրական լինելը: Այդ ամենով հանդերձ, թուրքերը գրավեցին մեր ձեռքում եղած մի քանի քանի բնակավայրեր, այդ թվում նաև Էրզինջանը: Կայագորը, համաձայն ստացված հրամանի, առանց մարտի բռնվելու, հետ քաշվեց, ոչնչացնելով այնտեղ եղած ռազմական ունեցվածքը: Թուրքերը գրավեցին նաև Արդասուն /Գյումուշ-խանեից 20 կմ. դեպի հյուսիս-արևմուտք/: Տրապիզոնում բանակցություններ են ընթանում տեղի Ռազմա-Հեղափոխական կոմիտեի և թուրք չետնիկների⁷⁷ միջև՝ քաղաքը թուրքերին հանձնելու վերաբերյալ: Փետրվարի 6-ին գեներալ Օդիշելիձեին է հանձնվել Վեհիբ-փաշայի հեռագիրը, որտեղ թուրք հրամանատարը նշում է որ, թեև ինքը հանդիսանում է երկու կողմերի համար էլ պատվավոր խաղաղության ջատագով, բայց նայնպես, մահմեդական բնակչության ան-

⁷⁶ Գեներալ-մայոր **Լեբեդինսկի Եվգենի Վասիլևիչ**, 1918թ. հունվարի 5-ց մինչև մայիսի 5-ը՝ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար:

⁷⁷ Տվյալ դեպքում՝ ոչ կանոնավոր զինված խումբ:

վտանգությունն ապահովելու համար ստիպված է առաջ շարժել իր գորքերը մինչև ռուսական զորքերի հետ շփման գծին հասնելը:

Այսպիսով, քաղաքացի Սեյմի անդամներ, սույն հարցը շատ շտապ է, շատ այժմեական: Անդրկովկասյան Կոմիսարիատին կից արդեն ստեղծված է հանձնաժողով, որը նախապատրաստում է նյութեր ըստ հարցի էության և այդ նյութերը փոխանցվելու են այն հանձնաժողովին, որը Դուք ստեղծելու եք Սեյմին կից: Մեր համոզմամբ, այս հարցն անհետաձգելի է, փետրվարի 17-ին Ձեր հանձնաժողովը պետք է մեկնի Թիֆլիսից:

Խաղաղության հանձնաժողովի զեկուցումը Անդրկովկասյան Սեյմի փետրվարի 16-ի/ մարտի 1-ի/1918թ. նիստին / նիստի սղագրության ձեռագրից/:

Նախագահում է ՉԽԵԻՁԵՆ, քարտուղարությամբ՝ Ա.Կանտեմիրովի:

Նիստը սկսվում է կեսօրին՝ ժամը 1-ն անց 33 րոպեին:

ՆԱԽԱԳԱՀ. խոնարհաբար խնդրում եմ բոլորին զբաղեցնել իրենց տեղերը: Սեյմի նիստը հայտարարում եմ բացված: Դուք կամեցել եք ընտրել խաղաղության հարցի հանձնաժողով, և այժմ այդ հանձնաժողովը կներկայացնի իր զեկուցումը: Խոսքը տրվում է հանձնաժողովի նախագահ Նոյ ամիշվիլիին:

ԲԱՄԻՇՎԻԼԻ. Քաղաքացի Սեյմի անդամներ: Հարցը, որ ծառացած է մեր առջև, չափազանց լուրջ է և ունի մեզ համար առանձնակի նշանակություն: Ձեզ հայտնի է, որ հոկտեմբերյան հեղաշրջումից հետո մեր այս ծայրամասը կտրված է մեծ Ռուսաստանյան Դաշնային հանրապետությունից: Անդրկովկասը, փաստորեն, հայտնվեց ինքն իրեն տրամադրված ոչ միայն ներքին քաղաքականության ասպարեզում, այլ, ինչն առավել կարևոր է՝ նաև արտաքին քաղաքականության հարցերում: Ես նշում եմ նաև արտաքին քաղաքականության հարցերում, քանզի, ինչպես Ձեզ հայտնի է Անդրկովկասյան Կոմիսարիատի զեկուցումից, վերջինս ձեռնարկել է քայլեր, որոնք միտված են չեղարկելու ռազմական ընդհարումները մեր հարևանների հետ և միջոցներ ձեռնարկել միջազգային նշանակության կարևոր հարցի լուծման ուղղությամբ: Անդրկովկասն այդ ուղու վրա կանգնեց ոչ այն պատճառով, որ մենք այդ ամենը հենց այդպես էլ

ենթադրում էինք, այլ այն պատճառով, որ ստեղծվեցին այնպիսի պայմաններ, որ մենք, պարզապես, այլ ելք չունենք:

Ես չեմ ցանկանում ծավալվել այն մասին, թե ինչպես օր-օրի աստիճանաբար կտրվում էր Ռուսաստանյան Մեծ Հանրապետության հետ մեզ կապող թելը: Ձեզ բոլորիդ էլ այդ ամենը շատ լավ հայտնի է: Հայտնի է նաև արտաքին քաղաքական հարցերում կատարված այն իրողությունը, որը ստիպում է մեզ Թուրքիայի հետ խաղաղության կնքելու հարցը սեղանին դնել իր ամբողջ ծավալով:

Հարցը նրանումն է, ընկերներ, որ, ինչպես Ձեզ հայտնի է, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը,- չխոսենք այն մասին, թե այդ կառավարությունը հանդիսանում է արդյոք ամբողջ Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը, թե ոչ: Այդպիսին է նա, թե ոչ, ճանաչում ենք մենք նրան, թե ոչ, բայց, համենայնդեպս, հենց այդ կառավարությունն է ստիպողաբար բանակցել Գերմանիայի հետ խաղաղության հարցի շուրջ: Եվ, ինչպես հայտնի է, այդ կառավարությունը Գերմանիայի հետ ինչ-որ համաձայնության հասել է:

Ինչպես Ձեզ հայտնի է, Գերմանիան, գերմանական իմպերիալիզմը հրաժարվեց այն պայմանագրից, որը համաձայն էին ստորագրել Ժողովրդական Կոմիսարների ներկայացուցիչները: Կնքելով խաղաղության պայմանագիր Գերմանիայի հետ, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ամբողջապես շրջանցել է այն հարցը, որն այսօր կանգնած է Ձեր առաջ: Ես շեշտում եմ. շրջանցեց, և ամենևին էական չէ, կամովի՞ն է դա արվել, թե ոչ: Ավելի ճիշտ, նրանք ստիպված են եղել շրջանցել այն, քանզի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ներկայացուցիչների առջև այնպիսի սահմաններ են դրվել, որոնցից այն կողմ այդ ներկայացուցիչները պարզապես չէին կարող անցնել:

Ինչ վերաբերում է մյուս հարցերին, ապա Ձեզ հայտնի է, որ այն պայմանագրում, որը համաձայնվել են ստորագրել Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ներկայացուցիչները, մի խոսք անգամ չկա այն մասին, թե ինչ վիճակում է գտնվում Անդրկովկասը: Ճիշտ է, մի կետում՝ նոր տոմարով փետրվարի 19-ին ստորագրած պայմանագրի 5-րդ կետում, ասվում է/ ընթերցում է ռուսական թերթը/.”Ռուսաստանը պետք է

անի անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի ապահովի Թուրքիայի համար Անատոլիայի արևելյան սահմանները և չեղարկի Թուրքիայի կապիտուլյացիան՝: Եկեք աչքներս չփակենք, քանզի այստեղից պարզ երևում է, որ իրականում, այդ պայմանագիր կոչվածը ամենևին և ոչնչով չի առնչվում այն ծայրամասին, որի վերաբերյալ մենք այժմ խոսում ենք: Այստեղ խոսվում է այն մասին, որ Ռուսաստանը, իր ուժերի ներածին չափով պետք է նպաստի Անատոլիայի արևելյան սահմանների վերականգնմանը: Որպես և ցանկացած եվրոպական պետություն, նա նպաստելու է այս կամ այն հարցերի լուծմանը, որոնք առնչվում են մեկ այլ պետությանը: Այստեղից պարզ է, որ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, նրա լիազորված ներկայացուցիչները միանգամայն շրջանցել են Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման հարցը և այդ մասին ուղղակի ցուցումներ մենք կարող ենք գտնել այսօրվա թերթերում տպագրված հեռագրերում:

Այստեղից մի հետևություն. Ցանկացած քաղաքական կուսակցության, կամ ներկայացուցչական մարմնի համար, ինչպիսին հանդիսանում է մեր Սեյմը, Թուրքիայի հետ խաղաղ պայմանագիր կնքելու հարցը պետք է դառնա օրակարգային: Եվ դա հատկապես այն պատճառով, որ մեր ռազմաճակատը մերկացած է, սակայն ոչ քաղաքականության պատճառով, որը վարել են Անդրկովկասի ներկայացուցիչները, ոչ այն իշխանության պատճառով, որը հռչակվեց Անդրկովկասյան հեղափոխական զանգվածների կողմից, այլ այն քաղաքականության պատճառով, որը վարել է Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը: Ձեզ հայտնի է խաղաղության մասին նրանց հայտարարությունը, որով բոլշևիկյան կառավարությունը առաջ բերեց լիակատար զորացրման հարցը: Եվ այդ քայլը վերածվեց կատարյալ զորացրման: Այսպիսով, շնորհիվ այն քաղաքականության, որ վարում էր Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, ոչ միայն Կովկասյան ռազմաճակատը, այլև արևմտյան Ռուսաստանը հայտնվեց միանգամայն մերկացված վիճակում: Դա էլ նշենք, որ չնայած այդ ամենին, կովկասյան հեղափոխական ժողովրդավարությունը և Կոմիսարիատը իրենց առջև խնդիր էին դրել պաշտպանել այդ ռազմաճակատը: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մի կարևոր հանգաման-

քի վրա. մեր առջև կանգնած է Թուրքիայի հետ պատերազմը դադարեցնելու հարցը: Եվ այդ հարցն անհրաժեշտ է ներկայացնել նաև մյուս կողմով. Եթե Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ամբողջապես շրջանցել է Անդրկովկասի հարցը և Թուրքիայի հետ պատերազմը դադարեցնելու հարցը, ապա հարց է առաջ գալիս, ինչպե՞ս պետք է վարվի Անդրկովկասյան դեմոկրատիան, Անդրկովկասյան Սեյմը: Ձեզ հայտնի է, որ Թուրքիային մենք չենք պատերազմ հայտարարել: Եթե ռուսաստանյան իշխանության լիազոր և ոչ լիազոր ներկայացուցիչները անհրաժեշտ չեն համարում Թուրքիայի հետ պատերազմը դադարեցնելը, ապա պարզ է դառնում, որ պատերազմի չեղարկումը պետք է դառնա մեր խնդիրը, և անհրաժեշտ է արդեն հարց դնել, թե ինչ եղանակով մենք պետք է վերջ տանք այս պատերազմին: Մենք, որպես Անդրկովկասի ազգությունների և Անդրկովկասյան դեմոկրատիայի ներկայացուցիչներ, պետք է որոշենք, շարունակո՞ւմ ենք այս պատերազմը, թե՞ ոչ: Մենք չենք հայտարարել այս պատերազմը, և բոլոր ժողովուրդների առաջ մենք կարող ենք հայտարարել, որ ամենևին մեր շահերից չէ Թուրքիայի հետ այս պատերազմը շարունակելը:

Այստեղ հարցը ամենևին էլ ուժերի հարաբերակցության մեջ չէ: Ես կխնդրեի, որ դրա վրա ուշադրություն դարձնեք: Ես ենթադրում եմ, որ եթե իրականում, Թուրքիայի կառավարությունը մեզ ընդառաջ չգնա, չնայած նրան, որ պատերազմն, անշուշտ ծանր է, Անդրկովկասյան դեմոկրատիան բավականաչափ ուժ ունի, որպեսզի հարկ եղած դեպքում կարողանա հակառակորդին ցուցադրել արժանի դիմադրություն:

Տվյալ դեպքում, մենք ամենևին շահագրգռված չլինելով պատերազմը շարունակելու հարցում, ենթադրում ենք, որ Թուրքիան էլ կհասկանա այն դրությունը, որում մենք հայտնվել ենք: Երկու ժողովուրդների շահերն էլ թելադրում են մեզ վերջ տալ պատերազմին:

Ահա այն հիմնական դրույթները, որոնցով ղեկավարվել է հանձնաժողովը, որն ընտրել էք Դուք՝ Սեյմի անդամներդ: Հանձնաժողովը եկել է այն հիմնարար եզրահանգմանը, որ Անդրկովկասյան Սեյմի շահերից չէ պատերազմի հետագա շարունակությունը, և մենք բաց սրտով, միան-

գամայն գիտակցաբար, կարող ենք գնալ Թուրքիայի հետ խաղաղություն կնքելու քայլին:

Սակայն հարց է առաջ գալիս. իսկ լիազորված է արդյոք Անդրկովկասյան Սեյմը բանակցություններ վարել խաղաղության պայմանագիր կնքելու շուրջ: Քաղաքացի Անդրկովկասյան Սեյմի անդամներ, ես մատնանշել եմ, որ այն բանից հետո, երբ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և Գերմանիայի ներկայացուցիչները հնարավոր չհամարեցին խաղաղության հարցը դնել իր ամբողջ լայնությամբ, մենք անհրաժեշտ ենք համարում Թուրքիայի հետ պատերազմի դադարեցնելու հարցը մեր ձեռքը վերցնել: Այդ առնչությամբ մենք չենք հիմնվում այս կամ այն միջազգային համակցությունների վրա:

Քանի որ Թուրքիայի հետ պատերազմը դադարեցնելու հարցը անգամ չի էլ շոշափվել Ռուսաստանի կողմից, դա մեզ հնարավորություն է տալիս սկսել խաղաղ բանակցություններ Թուրքիայի հետ: Եվ Ռուսաստանյան դեմոկրատիան դրան կարող է տալ միայն մեկ պատասխան: Հանձնաժողովը, որը Դուք ընտրել եք համաձայն Անդրկովկասյան Սեյմի որոշման, իրեն իրավագոր է համարում Թուրքիայի հետ կնքել խաղաղության պայմանագիր: Ընդ որում, Հանձնաժողովում որոշ անձանց կողմից ենթադրություն է հնչել, որը թեքվում էր դեպի այն ուղին, որ մեզ անհրաժեշտ է քայլ անել դեպի միջազգային համախմբում և իբր թե միայն նման քայլը կարող է մեզ հնարավորություն տալ խաղաղություն կնքել Թուրքիայի հետ: Մենք այդ կարծիքը չենք կիսում, և Հանձնաժողովն ընդունեց այն բանաձևը, որն էլ ես Ձեզ ներկայացրեցի:

Այդ կապակցությամբ ես կանեմ մեկ հարցադրում. ինչպիսի՞ն է մեր՝ Անդրկովկասյան Սեյմի վերաբերմունքը խաղաղությանը վերաբերող այս անջատ բանակցություններին: Պարտավո՞ր ենք մենք արդյոք մեր բոլոր քայլերի վերաբերյալ վաղօրոք պայմանավորվել դաշնակից տերությունների հետ: Մենք գտնում ենք, որ այդ հարցը պետք է ստանա հենց այն լուծումը, որն արդեն Անդրկովկասյան Կոմիսարիատը արել է արտաքին քաղաքականության բնագավառում: Անդրկովկասյան Կոմիսարիատը, ինչպես հայտնի է, արտաքին քաղաքական իր բոլոր քայլերի մասին տեղեկացրել է դաշնակից տերությունների դեսպաններին և հյու-

պատասաններին: Այն վիճակում, որում մենք ենք հայտնվել, հարցի այլ լուծում չէր էլ կարող լինել:

Մենք գտնում ենք, որ դաշնային տերությունների ներկայացուցիչներն իրենց հետքին, չունեն այն լայն լիազորությունները, որ խաղաղ բանակցություններ վարեն թշնամական տերության հետ: Մյուս կողմից, մենք, տրամադրված լինելով ինքներս մեր ճակատագրին, մենք՝ կովկասյան ժողովուրդների և Կովկասյան դեմոկրատիայի ներկայացուցիչներս, զրկված ենք այս ամենը երկարաձգելու որևիցե հնարավորությունից և ստիպված ենք սկսենք պատերազմի դադարեցման գործընթացը:

Մոտ ապագայում, քաղաքացի Անդրկովկասյան Մեյմի անդամներ, չեն լինելու որևիցե հիմքեր փոխելու այն քաղաքականությունը, որը վարել է Անդրկովկասյան Կոմիսարիատը և որի կողմնակիցը լինելու ենք նաև մենք: Ինչպես Ձեզ հայտնի է, խաղաղ բանակցությունները լինում են երկու տեսակի. Պրեիմիսար, այսինքն՝ նախնական և վերջնական: Հանձնաժողովի առջև կանգնած էր հետևյալ հարցը. ձգտել՞ու ենք մենք արդյոք մեկընդմիջտ վերջ դնել Թուրքիայի հետ ունեցած բոլոր վիճելի հարցերին, թե մեր խնդիրը կայանում է նրանում, որ հասնենք երկարաժամկետ զինադադարի, ստորագրենք նախնական պայմանագիր և, սպասելով պարագաների փոփոխությանը, աստիճանաբար հասնել խաղաղության պայմանագրում հնարավոր փոփոխությունների իրականացմանը: Մենք ընդունեցինք, որ Անդրկովկասյան դեմոկրատիան և ոչ մի հիմքեր չունի գնալու այդ երկրորդ ճանապարհով: Դա գաղտնի դիվանագիտության ճանապարհն է, ճանապարհ, որը հղի է ամենալուրջ հետևանքներով մեր ծայրամասի համար: Եթե որևիցե մեծ տերություններ նպատակներ ունեն, օգտվել համաշխարհային քաղաքական իրադրության փոփոխություններից և, դրանց համապատասխան, հասնել այս կամ այն պայմանագրում ամրագրված դրույթների փոփոխմանը, ապա ժողովրդական երկրները նման բանում ամեննին շահագրգռված չեն:

Մենք պետք է գնանք այդ խաղաղ բանակցություններին լիովին համոզված, որ մենք՝ բանակցող կողմերս, երկու հակամարտող երկրների ներկայացուցիչներս, այն երկրների, որոնք պատերազմում են ամեննին ոչ մեր մեղքով և ոչ մեր կամքով, համենայն դեպս, ի վերջո, կկարո-

դանանք գալ վերջնական պայմանավորվածության և ի գորու կլինենք մեկընդմիջտ լուծել այն վիճելի հարցերը, որոնք կովախնձոր են հանդիսացել անդրկովկասյան ճողովուրդների և Թուրքական Կայսրության միջև:

Ըստ այդմ էլ, չդնելով մեր առջև որևիցե դիվանագիտական խնդրահարույց թեմաներ, մենք ասում ենք. այն խաղաղ պայմանագիրը, որը մենք ձգտում ենք կնքել, պետք է հանդիսանա վերջնական և, ըստ մեր կարծիքի, հետագայում չպետք է ենթարկվի որևիցե փոփոխման: Դա անշուշտ, համապատասխանում է ինչպես Անդրկովկասի, այնպես էլ Թուրքական Կայսրության շահերին: Եթե, իհարկե, Թուրքիան շահագրգռված է խաղաղություն կնքելուն: Ինչ վերաբերում է այդ ուղղությամբ մեր ձգտումներին, ապա այստեղ երկու կարծիք լինել չի կարող:

Ես ենթադրում եմ, և չեմ սխալվում, որ Անդրկովկասյան Սեյմում ներկայացված բոլոր կուսակցությունները, սողորված են մեկ ձգտումով՝ հնարավորինս արագ վերջ դնել այս սարսափելի պատերազմին, որը մեզ բերեց այդքան արհավիրքներ, և կարելի ասել նաև՝ այդքան հիասթափություններ: Եթե Թուրքական Կայսրությունը նույնպես ձգտում է խաղաղության, խաղաղության, որը պատվաբեր կլինի երկու կողմերի համար էլ, եթե ինքը չի հենվիելու իր ուժերի թվացյալ գերակշռությանը, ինչը հնարավոր դարձավ Կովկասյան ռազմաճակատի մերկացման պատճառով, եթե այսօրվա Թուրքական Կայսրությունը նույնպես շահագրգռված է մեկընդմիջտ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Անդրկովկասի հետ, ապա մենք ենթադրում ենք, որ խաղաղությունը կլինի վերջնական և այդ առումով հետագայում որևիցե անհրաժեշտություն չի լինելու նրա վերանայման համար:

Այժմ մենք ներկայացնում ենք այն հիմնարար դրույթը, որը պետք է դրված լինի մեր և Թուրքիայի միջև կնքվելիք խաղաղ պայմանագրի հիմքում: Ինչպես Ձեզ հայտնի է, քաղաքացի Անդրկովկասյան Սեյմի անդամներ, մենք՝ հեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչներս, ամենևին չենք հանդիսանում հին պետական սահմանների պահպանման երկրպագուներ, սակայն կա մի դրույթ, որը մեզ թելադրում է հատուկ զգուշավորությամբ մոտենալ այդ հարցին և այդ զգուշավորությու-

նը առանձնապես անհրաժեշտ է այս պահին: Մենք ենթադրում ենք, որ թե՛ ամբողջ Անդրկովկասը մի կողմից, և թե՛ Թուրքական Կայսրությունը մյուս կողմից, այն սահմաններում, որոնցում նրանք գոյություն են ունեցել մինչև 1914թ. պատերազմը, իրենցից ներկայացնում էին հայտնի մի ամբողջականություն և այդ առումով պետական սահմանների ցանկացած խախտում կրեբեր այնպիսի բարդությունների, որոնց հետևանքներն իրենց զգացնել կտան երկար տարիների ընթացքում: Այդ արդյունքները կարող են բավականին ողբալի լինել ինչպես մեր, այնպես էլ, հավանական է, նաև Թուրքական կայսրության համար: Մենք կարծում ենք, որ անդրկովկասյան ազգություններն այնքան են սերտաճել իրենց կենսական շահերով, որ թեկուզ մի աննշան տարածքի օտարումը կրեբի այնպիսի ցնցումների, որոնք հաստատապես բերելու են անդրկովկասյան ազգությունների խաղաղ համակեցության համար անցանկալի արդյունքների:

Անդրկովկասյան դեմոկրատիան, շահագրգիռ լինելով ազգային հարցի լուծումը տեսնել բոլոր ազգությունների համաձայնության գալու ոգով, շահագրգիռ է, առաջին հերթին, ոչ մի պարագայում չսրել հարաբերությունները, չշոշափել այնպիսի հարցեր, որոնք կարող են առաջ բերել նման բարդացումներ:

Մյուս կողմից, մենք ենթադրում ենք, որ Թուրքական Կայսրությունը նույնպես, թեև նա դարեր շարունակ ճնշել է այլ ազգություններին, այդ տեսակետից նույնպես պետք է նույն հարցի նկատմամբ ցուցաբերի շահագրգռվածություն: Բոլոր հեղափոխական կուսակցությունների համակրանքը միշտ էլ եղել է ճնշվածների կողմը և պետք է ասել, որ այդ նույն համակրանքով մենք միշտ էլ ընդունել ենք այն ճնշված ազգություններին, որոնք ձգտում են իրենց ազատագրմանը:

Սակայն մենք անհրաժեշտ ենք համարում նաև հայտարարել, որ մյուս կողմից, մենք հրաշալի հասկացել ենք նաև այն, որ շատ հաճախ, Թուրքական Կայսրության լծի տակ գտնվող ազգությունների ազատագրման կոչերի հետևում իմպերիալիստները թաքցնում էին իրենց գիշատչային նկրտումները, որոնք ուղղված էին Թուրքական Կայսրության մարմինը մասնատելուն: Սակայն ոչ նրա համար, որպեսզի ազատագրեն

Թուրքիայի լծի տակ գտնվող ճնշված ազգերին, այլ նրա համար, որպեսզի ընդլայնեն և ուժեղացնեն իրենց քաղաքական և տնտեսական ազդեցության ոլորտները:

Այդ առնչությամբ մենք պետք է հայտարարենք, քանզի բոլոր քաղաքական կուսակցությունների և անձամբ մեր համակրանքը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ճնշված ժողովուրդների կողմն է, որոնք սպասում են իրենց ազատ ինքնորոշմանը, ապա մենք վճռականորեն պետք է հանդես գանք ընդդեմ Ռուսաստանի և Թուրքիայի պետական սահմանների փոփոխմանը, ընդդեմ Թուրքական Կայսրության հանդեպ գոյություն ունեցող իմպերիալիստական նկրտումների, որոնց միջոցով մեծ տերությունները ձգտել են ուժեղացնել իրենց քաղաքական ազդեցությունը այդ խուլ ու հետամնաց և, փաստացի, եվրոպական տերություններից կախման մեջ գտնվող երկրում: Ահա այդ պատճառով է, որ Հանձնաժողովի համազմամբ, կնքվելիք պայմանագրի հիմքում պետք է դրված լինի Ռուսաստանի և Թուրքիայի պետական սահմանների վերականգնումը մինչև 1914թ. պատերազմի հայտարարելը: Ես պարտավոր եմ մեկ անգամ ևս կրկնել, որ մենք ամենևին չենք հանդիսանում ամեն գնով առկա սահմանների պահպանման կողմնակիցներ՝ անկախ տեղից և ժամանակաշրջանից, սակայն ստեղծված իրավիճակում ներկայացվող տարբերակը միակ էլքն է, միակ դրույթը, որ կարող է պաշտպանել Անդրկովկասյան դեմոկրատիան՝ ի շահ, ինչպես Անդրկովկասյան դեմոկրատիայի, այնպես էլ, անշուշտ, ի շահ թուրքական ազգությունների խաղաղ և առաջադեմ զարգացմանը:

Բայց ինչպե՞ս վարվել տվյալ դեպքում Ռուսաստանյան Մեծ Հեղափոխության առաջ բերած հիմնական կոչի՝ դեմոկրատիայի և ազգերի ինքնորոշման հիմքերի վրա հենված խաղաղության տեսանկյունից: Մենք ենթադրում ենք, որ հանդես գալով ընդդեմ բոլոր տեսակի թե՛ բացահայտ, թե՛ թաքնված, տարածքային բռնակցումների և ռազմատուգանքների, մենք պետք է հայտարարենք, որ այս պատասխանատու պահին Անդրկովկասյան դեմոկրատիան ունի բոլոր հիմքերը, որպեսզի վճռականորեն պահանջի՝ իրավիճակին և ժամանակին համապատասխան, Արևելյան Անատոլիայում բնակվող բոլոր ազգությունների ազատ

ինքնորոշվելու իրավունքի իրագործումը: Ես ասում եմ՝ Արևելյան Անատոլիայի, քանզի մեր առջև կանգնած է Թուրքիայի հետ խաղաղության պայմանագրի կնքման հարցը հենց Թուրքիայի շրջանակներում, իսկ քանի որ այդ ամենն առնչվում է Կովկասի սահմանների հետ, ուստիև, մենք ենթադրում ենք, որ մեր պատվիրակությունը պարտավոր է այդ իմաստով պահանջել հենց Արևելյան Անատոլիայի ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրագործումը: Ընկերներ, Ձեզ լավ հայտնի է, որ ինքը՝ Արևելյան Անատոլիան, բնակեցված է այն ցեղերով, որոնք տասնյակ, միգուցե և հարյուր տարիներով ձգտել են իրենց ազատագրմանն ու իրենց ճակատագրի կարգավորմանը՝ իրենց կամքին համահունչ: Ըստ այդմ էլ, առաջնային հարցը, որ կանգնելու է մեր պատվիրակության առջև, Անդրկովկասյան Սեյմի առջև, դա Թուրքահայաստանի ճակատագրի կարգավորման հարցն է:

Մենք այստեղ չէինք ցանկանա տարածվել այն մասին, թե իրականում ինչպիսին են այդ ազգի ինքնորոշման իրավունքները: Ես վստահ եմ, որ այդ իրավունքներն ամրագրված են հայ ազգի բազմադարյան պայքարով ընդդեմ այն ստրկացման, որին այդ ժողովուրդը ենթարկվել է Թուրքական Կայսրության սահմաններում դարեր շարունակ: Մենք պետք է հստակ հայտարարենք, հայ-թուրքական հարցը այն հարցն է, որի լուծման համար շահագրգիռ է ոչ միայն Թուրքական Կայսրությունը, այլ պակաս շահագրգիռ չեն նաև անդրկովկասյան ազգությունները:

Ձեզ հայտնի է, որ Թուրքիայում հայ բնակչության ցանկացած ելույթ և ընդվզում ամբողջապես արժանացել է արձագանքի Թուրքիայի սահմաններից դուրս, մասնավորապես՝ Անդրկովկասում: Եվ դա, քաղաքացի Սեյմի անդամներ, միանգամայն բնական է: Այստեղ գտնվող նրանց արյունակից եղբայրները չէին կարող այս կամ այն կերպ չարձագանքել իրենց ցեղակիցների վիճակին Թուրքական Կայսրությունում: Դա դեռ քիչ է: Թուրքական Կայսրությունում այդ հարցի ցանկացած սրացում բերել է ազգամիջյան հարաբերությունների բարդացմանը հենց այստեղ՝ Անդրկովկասում: Այդ առումով մատնանշենք ընդամենը մեկ փաստ. Վերհիշենք, թե ինչ արձագանք ունեցավ այստեղ 1885թ. Թուրքիայում բռնկված հայերի ապստամբությունը:

Ելնելով այդ ամենից, միանգամայն բնական է նշել, որ, որպես թուրքահայության իրավունքների պաշտպան նախկինում հանդես է եկել ոչ այն պետությունը, որը կարող էր հանդես գալ: Այն է՝ բռնապետական Ռուսաստանը, որն ինքը ոչ պակաս աստիճանի ճնշել և ստրկացրել է իրեն ենթակա ժողովուրդներին և միայն այս պահին է հանդես գալիս որպես ժողովրդավար երկիր: Եվ որպես այդ հարցի պաշտպան այսօր հանդես է գալիս ժողովրդավարական երկրի ներկայացուցչական մարմինը՝ Անդրկովկասյան Սեյմը:

Թուրքական Կայսրության շահերը թելադրում են մեկընդմիջտ լուծում տալ այդ ծայրահեղ բարդ և հիվանդագին խնդրին: Մենք ենթադրում ենք, որ Թուրքիայում կան հասուն պետական գործիչներ, ու ցանկանում ենք հավատալ, վստահ լինել, որ այդպիսիք այնտեղ, իրոք, կան: Եվ իրենք անձամբ կձեռնարկեն ամեն մի միջոց, որպեսզի մեկընդմիջտ լուծվի այն հարցը, որ մշտապես կովախնձոր է եղել հայ բնակչության և Թուրքական Կայսրության միջև: Եվ հիմք ընդունելով “Դաշնակցություն” կուսակցության հայտարարությունը, մենք լիահույս ենք, որ այդ հարցի լուծման դեպքում բոլոր անհարթությունները մեկընդմիջտ սպառված և ավարտված կլինեն:

Ես մանրամասնորեն կանգ չեմ առնի այդ հարցի վրա: Միգուցե առավել շահագրգիռ կողմերի ներկայացուցիչները հենց իրենք փորձեն տալ այդ հարցի հետագա առավել մանրամասն լուսաբանումը:

Հանձնաժողովն առաջ էր քաշել ևս մեկ հարց. ասորիների, կամ այսօրների հարցը, ինչպես նաև Լազիստանի հարցը: Առավել մանրամասնորեն Հանձնաժողովում կանգ է առնվել ասորիների վիճակի վրա: Պարզվում է, այդ ժողովուրդը բնակվում է մեկ սանջակի սահմաններում, ընդ որում սանջակի բնակչությունը կազմում է 80-90 հազար: Եվ այդ բնակչությունը, ներքաշված լինելով պատերազմի մեջ, հայտնվել է հայրենագուրկ վիճակում. Նա ստիպված արտագաղթել է Պարսկաստան և այժմ գրկված է իր սեփական օջախներից: Եվ այդ ազգության ներկայացուցիչները Հանձնաժողովի առջև հարց են դնում, որ հնարավորություն տրվի իրենց վերադառնալ իրենց հայրենիք և ինքնավար կերպով կազմակերպել իրենց կյանքը իրենց երկրում: Ե՛վ նախորդ, և՛ այս դեպքում,

Հանձնաժողովը գտնում է, որ Թուրքահայաստանին և ասորի ժողովրդին ինքնավարություն տրամադրելը պետք է իրականացվի բացառապես թուրքական պետականության շրջանակներում: Մենք գտնում ենք, որ ստեղծված պայմաններում այդ ազգություններն իրենց մեջ կգտնեն բավականաչափ ուժ ու եռանդ, որպեսզի, չխզելով կապերը թուրքական պետականության հետ, ստեղծեն պայմանների առավելագույնը, որոնք անհրաժեշտ են իրենց առաջընթացի և մշակութային զարգացման համար: Այդպիսով, պահանջելով այդ ազգությունների համար ինքնորոշման իրավունք, ես կրկնում եմ՝ Արևելյան Անատոլիայի ազգությունների համար, այլ ոչ թե համաթուրքական ամբողջ տիրույթով, քանզի մենք հանդիսանում ենք ժողովրդավարական Անդրկովկասի ներկայացուցիչներ, մենք նախևառաջ խոսելու ենք այն հետաքրքրությունների մասին, որոնք անմիջական առնչություն ունեն Կովկասյան իրականության հետ:

Այսպիսով, մենք պետք է մեր խաղաղության պատվիրակությանը զինենք այնպիսի հրահանգներով, որ պարզ լինի, թե մենք այդ ժողովուրդների համար ձգտում ենք հասնել ինքնավարության՝ ոչ մի կերպ չվնասելով թուրքական ինքնիշխանությանը:

Անձամբ ես, քաղաքացիներ, Մեյմի անդամներ, պատիվ ունեմ հայտարարելու, որ եթե Թուրքիան, իրոք, ունի պետական այրեր, իսկ մենք շատ ենք ուզում հավատալ, որ դա, իրոք, այդպես է, որոնք հասկանում և չափազանց լավ են հասկանում իրենց երկրի վիճակը, քայլեր կձեռնարկեն, որպեսզի բոլոր այս անիծյալ հարցերը մեկընդմիջտ ստանան իրենց վերջնական լուծումը:

Մենք ենթադրում ենք, որ այդ առնչությամբ կարելի է հույսեր ունենալ և մեզ հայտնի են որոշ տեղեկություններ մամուլից, ճիշտ է, դեռևս չստուգված,- Թուրքիայում լավագույն անձինք թեքվում են դեպի այն կարծիքը, որ եկել է ժամանակը, որպեսզի Թուրքական Կայսրությունը անցնի դաշնային սկզբունքով իր պետության կառուցվածքին, և ըստ այդմ էլ, մեր կարծիքով, պատվիրակությունը պետք է որ կարողանա հասնել այդ ազգերի ինքնորոշմանը թուրքական պետության սահմաններում, և մենք ենթադրում ենք, որ այդ հարցերի լուծման համար անհրաժեշտ պայմաններն առկա են:

Մենք համոզված ենք, որ մեր պատվիրակությանը տրվող այդ բոլոր ցուցումները այդ առումով ամեննին չեն հակասում թուրքական պետականության շահերին: Այդ հարցի վերջնական լուծման դեպքում Անդրկովկասի և Թուրքական Կայսրության միջև կհաստատվեն այնպիսի բարիդրացիական հարաբերություններ, որոնք անհրաժեշտ են երկու կողմերի ժողովուրդների ճիշտ զարգացման համար:

Մենք՝ Անդրկովկասյան Սեյմի անդամներս, Անդրկովկասի քաղաքացիներս, ելնելով երկու պետությունների քաղաքացիների շահերից, երկու դեմոկրատիաների շահերից, և դա չէր էլ մտնում մեր խնդիրների մեջ, չենք շոշափել այն ուժի հարցը, որի վրա հենվելու է մեր խաղաղության պատվիրակությունը: Հայտնի է յուրաքանչյուրիս, որ ուժ ասելով, հասկանում ենք այն իրական ուժը, որն իր մարմնավորումն է ստանում կանոնավոր բանակի տեսքով: Եթե մենք այդ տեսակետից մոտենանք հարցին, ապա կարող է թվալ, թե այդ առումով մենք անգոր ենք: Առաջին հայացքից, մենք չունենք այն զինուժը, որի վրա կարող է հենվել մեր պատվիրակությունը Թուրքիայի հետ բանակցելիս: Իրենց դա քաջ հայտնի է, և դա մեզ հաստատեցին նաև Ռուսաստանից, երբ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, ճարահատյալ, ստորագրեց բոլշևիկների, նաև ամբողջ Ռուսաստանի համար նվաստացուցիչ պայմանագիրը: Սակայն մենք ենթադրում ենք, որ կա մի անհաղթահարելի ուժ, որն ինքն է ի վիճակի հաղթահարել ցանկացած խոչընդոտ: Եվ այդ ուժը Անդրկովկասի բոլոր ազգությունների միասնականությունն է:

Եվ մենք, մեր հանձնաժողովում, մշակելով և որոշելով խաղաղության պայմանագրի գլխավոր պայմանները, ենթադրել ենք, եթե մենք կարողանանք համաձայնության հասնել այստեղ՝ Անդրկովկասյան Սեյմում, ապա մեր խաղաղության պատվիրակությունն իրենից կներկայացնի հենց այն ուժը, որի հետ հաշվի կնստեն, և որն ի վիճակի կլինի իրագործել այն բոլոր հանձնարարականները, որոնք դուք անհրաժեշտ կգտնեք հասցեագրել այդ պատվիրակությանը:

Մենք մշակել ենք խաղաղության պայմանները, ձգտել ենք նրան, որպեսզի հարթենք սուր անկյունները և ընդհանուր լեզու գտնենք: Ես, որպես հանձնաժողովի նախագահ, կարող եմ Ձեր առջև հավաստել, որ

միակարծությունը ձևավորված է / բազում ծափահարություններ/: Առկա է ընդհանուր լեզուն, դա այն ընդհանուր լեզուն է, որն ավելի կարևոր է քան կանոնավոր բանակի մի քանի կորպուսներ: Ընկերներ, եթե պատվավոր խաղաղության մտքով Թուրքիային ընդառաջ գնալիս, իր կողմից մենք հանդիպենք անհաղթահարելի արգելքների և եթե Թուրքիան մեզ ընդառաջ չգնա ու չհամաձայնվի դեմոկրատական խաղաղություն կնքել, ապա Անդրկովկասի բոլոր ազգայությունները և կազմակերպությունները՝ առանց բացառության, իրենց մեջ կգտնեն բավականաչափ ուժ, որպեսզի միասնական ուժերով պաշտպանեն Անդրկովկասի շահերն ու ընդհանուր նպատակները: Այդ պարագայում արդեն խաղաղության հարցն իր լուծումը կստանա ընդհանուր հարթության մեջ: Ամեն դեպքում, Անդրկովկասի ազգությունները, գնալով Թուրքիայի հետ պատվավոր խաղաղության կնքման, երաշխավորված կլինեն իրենց իրավունքները կրճատելուց և կկարողանան պաշտպանել իրենց շահերը/ հնչում են ծափահարություններ բոլոր տեղերից/:

№ 46.

Խաղաղության հարցի վերաբերյալ Անդրկովկասյան Սեյմի ընդունած
“ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ”

Ընդունված է միաձայն 1918թ, փետրվարի 16-ի/ մարտի 1-ի/ նիստում:

1/ Ստեղծված իրավիճակում Անդրկովկասյան Սեյմը իրեն իրավագոր է համարում Թուրքիայի հետ կնքել խաղաղության պայմանագիր:

2/ Անդրկովկասյան Սեյմը, սկսելով խաղաղ բանակցությունները, իր առջև խնդիր է դնում Թուրքիայի հետ կնքել հիմնարար խաղաղության պայմանագիր:

3/ Կնքվելիք խաղաղության պայմանագրի հիմքում պետք է դրված լինի Թուրքիայի և Ռուսաստանի միջև այն պետական սահմանների վերականգնումը, որոնք գոյություն են ունեցել մինչև 1914թ. պատերազմի հայտարարելը:

4/ Պատվիրակությունը հետամուտ է լինելու հասնել ինքնորոշման իրավունքի իրագործմանը Արևելյան Անատոլիայում, մասնավորապես՝

Թուրքահայաստանի ինքնավարությանը թուրքական պետականության շրջանակներում:

Երբ պատվիրակությունը վերջնականորեն կազմավորված էր, իսկ նրան տրվելիք հրահանգներն էլ որոշված, փետրվարի 17-ի գիշերը ժ. 12-ին նշանակվեց մեր մեկնումը դեպի Տրապիզոն: Մենք հավաքվել էինք Պալատում, Կոմիսարիատի Նախագահի առանձնասենյակում և միմյանց հետ փոխանակվում էինք վերջին նկատառումներով: Մեր զրույցի ընթացքում ռադիոհեռագծից բերեցին մի ռադիոհեռագիր, որի տակ դրված էր Բրեստ-Լիտովսկում բոլշևիկյան Ռուսաստանի պատվիրակության անդամներից մեկի՝ Կարախանի⁷⁸ ստորագրությունը: Մենք շտա-

⁷⁸ **Կարախան (Կարախանյան) Լևոն Միքայելի** (1889թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն - 1937թ., Մոսկվա, ԽՍՀՄ), հայազգի բոլշևիկ, հեղափոխական, պետական և քաղաքական գործիչ, **դիվանագետ**: Սովորել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, նույն մասնագիտությամբ ավարտել է Տոմսկի համալսարանը: 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջման օրերին եղել է **Պետրոգրադի** ռազմահեղափոխական կոմիտեի անդամ: 1917 թվականից անցել է դիվանագիտական աշխատանքի: 1917 թվականի **նոյեմբերին** և 1918 թվականի սկզբին Բրեստ-Լիտովսկում **Գերմանիայի** հետ բանակցությունների ժամանակ խորհրդային պատվիրակության քարտուղարն էր: 1918 թվականի մարտից՝ բոլշևիկյան Ռուսաստանի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ: Հետագայում վարել է մի շարք կարևոր և պատասխանատու դիվանագիտական պաշտոններ: 1937թ. Բոլշևիկյան իշխանությունների որոշմամբ ձերբակալվել է և գնդակահարվել: Ընթերցողի համար հետաքրքրական ենք համարում մի հատված ներկայացնել հավատավոր բոլշևիկ Լ.Կարախանի՝ իր ազգին առնչվող խոսքից, որ հնչեցվել է 1921թ. Վարշավայում, երբ այնտեղ բոլշևիկյան Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ եղած ժամանակ ընդունել է իր մոտ խնդրանքով եկած ազգային գործիչներ **Արշակ Ջամալյանին, Վահան Նավասարդյանին և Վահան Փափագյանին**. <<... *Դեսպանատան մեջ հայ բանագնացներ ընդունելով, Քարախանը՝ ի ներկայութեան Ստեփան Շահումեանի մեծ որդիին՝ Սուրենի, կայտարարեք անոնց. «Դուք պատասխանատու քաղաքական գործիչներ եք, անկեղծօրեն կարելի է խոսիլ ձեզի հետ: Դուք կ'ըսեք, որ մենք կ'օգնինք Թուրքիոյ զենքով, ոսկիով և մարզիչներով: Կարեւորագոյնը կ'մոռնաք: Մենք անոր կ'օգնենք նաեւ խոսքով... Դուք միամիտ չէք խորհելու համար, որ Խ.Ռուսիան և կամ Լենին թշնամական որեւէ զգացում ունին հայ ժողովրդի հանդէպ և կ'ուզեն զուր տեղը անոր արիւնը թափել: Մակայն նաեւ պէտք չէ միամիտ ըլլաք խորհելու համար – հոս միջինկ չէ, այլ լուրջ խոսակցութիւն ձեզի հետ, ուստի ևս զիս պարտաւոր կը զգամ այս բանը ըսելու ձեզի – որ եթէ վաղը մեր*

պեցինք ընթերցել այն, և այնտեղ գրված էր. “Նոր առաջարկը, փետրվարի 11-ի վերջնագրի հետ համեմատած, պարունակում է նաև վերջնագրային ժամկետ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, ինչպես նաև այն իրողությունը, որ գերմանացիները հրաժարվում են մինչև պայմանագրի ստորագրելը դադարեցնել ռազմական գործողությունները, մենք որոշեցինք ստորագրել պայմանագիրը, գտնվելով դեռևս նրա քննարկման փուլում և ստորագրելուց հետո մեկնել: Փետրվարի 21-ի պայմանների ամենալուրջ վատթարացումը դա ինքնորոշման անվան տակ Արդահանի, Կարսի և Բաթումի շրջանների օտարումն է Ռուսաստանից: Կարախան”:

Ստացված է Թիֆլիսում 1918թ. փետրվարի 17-ին (ն.տ. մարտի 2-ին) ցերեկվա ժ. 4.30 : Այդ հեռագիրը մեզ բուրքիս պարզապես, շանթահարեց կայծակի նման: Այն մեր անջատ առանձին կացության հետ կապված առաջին հիասթափությունն էր: Բուրքն իրենց զգացին շփոթված ու շվարած: Իրոք, երկարատև նիստերից և պահանջների ու զիջումների վերաբերյալ մանրամասն քննարկումներից հետո, մեկնելուց մի քանի ժամ առաջ, ի հայտ են գալիս սպառնալիքներ ոչ միայն հայկական պահանջների, այլ ամբողջ երկրամասի համար. Անդրկովկասի գրեթե կեսը՝ նրա անառիկ պատվարներ Արդահանով, Կարսով, Բաթումով հանձնվել է թուրքերին:

Հնչեցին մեկնելը հետաձգելու առաջարկություններ, սակայն մեկնելու անհրաժեշտության վերաբերյալ կասկածները արագորեն անցան և բուրքովս որոշեցինք մեկնել: Բայց ամեն մեկիս ներսում տեղ էր գտել անասելի մի ծանրություն: Առաջին հերթին ծառանում էր այն հարցը, թե որտեղ և ինչպես ենք մենք հիմնավորելու մեր պահանջները: Ի վերջո մենք պատրաստվել էինք մեկնել խաղաղ բանակցությունների, այլ ոչ թե կապիտուլյացիա ստորագրելու: Անհրաժեշտ էր ունենալ համապատասխան տրամադրություն և որոշակի ուժեր սեփական թիկունքում: Մենք

ընդհանուր շարժման շահը պահանջե՛ մեզմէ գոհել Անդրկովկասի բովանդակ հայությունը, մինչև վերջին հայր, մենք կրնանք ոչ իսկ մէկ վայրկեան տատանում ունենալ այդ գոհողութեան առջև”>>: (տե՛ս Յուսաբեր, 14 յուլիս, թիվ 88, հինգշաբթի, 1949թ.):

համարում էինք մեր պահանջների մեջ մեզ միանգամայն արդար, ուստիև Տրապիզոն էինք գնում այն համոզմամբ, որ մենք կկարողանանք առաջ տանել մեր տեսակետը: Մյուս կողմից՝ մենք պարտավոր էինք ընդհանուր լեզու գտնել թուրքերի հետ:

Եվրոպայից եկող տեղեկություններն ամենևին մխիթարիչ չէին: Կցկտուր տեղեկություններից մենք գիտեինք, որ Գերմանիան մոտենում է Փարիզին և գերմանական բանակը ֆրանսիականի նկատմամբ ունի առավելություն: Իսկ ժողովուրդը խաղաղություն էր ուզում: Եվ մենք որոշեցինք մեկնել: Այդ ընթացքում մեզ երբեմն թվում էր, որ, եթե մենք մասնակցեինք Բրեստ-Լիտովսկի բանակցություններին, գուցեև կարողանայինք պահպանել 1914թ. ռուս-թուրքական սահմանը: Բայց մենք չմեկնեցինք, քանզի առկա էր մեր հակաբոլշևիկյան կողմնորոշման հարցը: Բայց, միաժամանակ, մենք ձգձգում էինք Թուրքիայի հետ մեր անմիջական խաղաղ բանակցությունների սկիզբը, սպասելով, որ Անդրկովկասի պատվիրակությանը կմիանան նաև այլ ռուսաստանյան միավորների ներկայացուցիչներ: Սակայն այդպիսիք չհայտնվեցին: Այդպիսով, ակնհայտ է, որ Անդրկովկասը հապաղում էր, սպասելով Թուրքիայի հետ կայանալիք բանակցություններում ոչ բոլշևիկյան Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությանը: Մինչդեռ թուրքերը, օգտվելով Գերմանիայի հզորությունից և բոլշևիկյան Ռուսաստանի թուլությունից, հետ զավթեցին Կարսն ու Բաթումը:

Այդ նույն ժամերին՝ 1918թ. փետրվարի 17-ի գիշերը, Անդրկովկասյան Սեյմի նախագահ Չիեիձեն և Կառավարության նախագահ Գեգեչկորին աշխարհի բոլոր մայրաքաղաքներ հայտարարություն ուղարկեցին առ այն, որ Անդրկովկասը չի ճանաչում Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագիրը, և որ Անդրկովկասի պատվիրակությունը ուղևորվում է Տրապիզոն:

Իսկ թուրքական ուժերի գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշան հիմք ընդունելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, փետրվարի 25-ին պահանջեց “ամենակարճ ժամկետում” մաքրել “Կարսը, Բաթումն ու Արդահանը”: Նույն օրը՝ փետրվարի 25-ին, Վեհիբ-փաշային պատասխան էր ուղարկվել, որ “Մենք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չենք ճանա-

չում և նշված շրջանների տարհանումն իրականացնելու պահանջը համարում ենք որպես թուրքական կողմից բանակցելու ցանկության բացակայության դրսևորում, մինչդեռ այդ բանակցությունները վարելու համար Անդրկովկասյան Մեյմի պատվիրակությունն արդեն մեկնել է Տրապիզոն”:

Մեր այդ տեսակետն առավել ամրապնդելու նպատակով Անդրկովկասյան Կոմիսարիատի կառավարությունը փետրվարի 26-ին գումարեց Մեյմի հատուկ նիստ և կառավարության նախագահ Գեգեչկորին հանդես եկավ ծավալուն զեկուցումով, որտեղ ներկայացված էին Վեհիբ-փաշայի պահանջները, Կառավարության պատասխանը և պատվիրակության Տրապիզոն մեկնելը: Մեր Պատվիրակությունը Տրապիզոն հասավ փետրվարի 23-ին երեկոյան ժ. 8-ին:

Վերոնշյալ զեկուցման ժամանակ Անդրկովկասի կառավարության նախագահն առաջին անգամ բարձրաձայնում է, որ. “Անդրկովկասն իրեն դրսևորում է որպես միանգամայն ինքնուրույն միավոր”: Գեգեչկորին նույնիսկ իր զարմանքն է արտահայտում այն կապակցությամբ, որ թուրքերը, նախկինում խոստանալով Բրեստ-Լիտովսկում իրենց աջակցությունն Անդրկովկասին նրա “անկախության” հարցում, այժմ, չսպասելով Տրապիզոնի բանակցությունների ավարտին, Ռուսաստանի հետ սեպարատ պայմանագիր է կնքում “Անդրկովկասի տարածքների հաշվին”: Բնակչությունը սպասում է խաղաղության: Ավելին՝ այն ծարավ է դրան: Սակայն նա պետք է իմանա և գիտակցի, որ “խաղաղությունը վտանգված է, որ ինքը պետք է պատրաստ լինի ցանկացած պատահականությունների”: Անդրկովկասի կառավարությունն իր պարտքն է համարում պաշտպանել Անդրկովկասի սահմանները և իր համար ամեննին պարտադիր չի համարում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմանների կատարումը: Կառավարության զեկուցումից հետո արտահայտվեցին [...]՝ մենշևիկների անունից, Շահատունին՝ Դաշնակցության անունից, Լորդկիպանիձեն՝ սոցիալ-դեմոկրատների անունից, Խան-Խոյսկին՝ Մուսավաթի անունից և ռուս կադետների անունից՝ Մեյմոնովը: Բոլոր ճառերը, բացի Խան-Խոյսկու ճառից...[*տեքստը խզված է -Վ.Հ.*]: Խան-Խոյսկին շատ պարզ ակնարկում էր, որ Անդրկովկասի բոլոր տատանումները՝ ի-

րեն Ռուսաստանից անջատված ճանաչելու հարցում, թուրքերի համար տրամաբանական հիմք էին հանդիսանում Անդրկովկասը դեռևս Ռուսաստանի մաս ճանաչելու համար: Ուստիև, Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը պարտադիր է Անդրկովկասի համար: Խան-Խոյսկին կոչ էր անում դրսևորել հանգիստ ու սպասողական վարքագիծ և սպասել լուրերի Տրապիզոնից: Մտքերի փոխանակությունից հետո Մեյմը միաձայն ընդունեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջարկած հետևյալ բանաձևը. ...[*տեքստը խզված է-Վ.Հ.*]:

...Այսպիսով, շատ կտրուկ ձևով դրված էր Բրեստ-Լիտովսկի խաղաղ պայմանագրին վերաբերող հարցը: Կողմերի դիրքորոշումները չափազանց պարզ էին և տրամագծորեն միմյանց հակառակ: Թուրքերը պահանջում էին անհապաղ դատարկել Կարսը, Բաթումն ու Արդահանը: Մենք պահանջում էինք խաղաղ բանակցություններ՝ անկախ Բրեստ-Լիտովսկում ստորագրած պայմաններից: Իրադրության ծանրության կենտրոնը տեղափոխվեց Տրապիզոն:

Դա էլ նշենք, որ Անդրկովկասը հոգեբանորեն իրեն միայնակ էր զգում. Ռուսաստանից ոչ մեկը չէր արձագանքում նրա ազդակներին, և իրականացվում էր Անդրկովկասի փաստացի անջատումը Ռուսաստանից: Անդրկովկասն ուներ իր Կառավարությունը, իր Մեյմը, իբր իր սեփական բանակը, որը կազմված էր երեք ազգային կորպուսներից, և իր պատվիրակությունը: Բայց բացակայում էր պաշտոնական անջատումը Ռուսաստանից: Դիվանագիտական տեսանկյունից նրա դիրքորոշումը երկիմաստ էր. փաստացի, Անդրկովկասն ինքնուրույն էր, սակայն այն չէր հռչակել իր անկախությունը: Թուրքերը դա հոյակապ հասկանում էին և այդ փաստը բացատրում էին կովկասյան ժողովուրդների՝ գլխավորապես հայերի և վրացիների ռուսամետությամբ: Դա իրենց չափազանց դուր չէր գալիս:

Ռազմական տեսակետից, իհարկե, ինչպես և միշտ է եղել, առավել խոցելի էին հայերը: Ռազմաճակատում զորքերի տեղակայումը և հայերի դրությունը պատմական այդ պահին մանրամասնորեն նկարագրված է ֆրանսիական բանակի կապիտան Ա.Պուադեբարի “Role militada des Armeniens for le frant du Cancade aprei la defection le I’arme’e’Rune /December

1917 – novembre 1918.) Paris” գրքում: Մենք դեռ առիթ կունենանք վերադառնալ ռազմավարական իրավիճակի քննարկմանը, իսկ այս պահին մեկ անգամ ևս ընդգծենք, որ թեև առավել ծանրը հայերի վիճակն էր, բայց հենց հայերն էին ամենից շատ դիմադրություն ցուցաբերողը: Հայերի հայացքները նույնպես հառած էին դեպի Տրապիզոն:

Զգալով և գիտակցելով դրության ամբողջ ծանրությունն ու պատասխանատվության աստիճանը, մեր պատվիրակությունը, ես էլ նրա հետ, 1918թ. փետրվարի 17-ի գիշերը ժամը 12-ին Բաթումով մեկնեցինք Տրապիզոն:

ԳԼՈՒԽ V

Տրապիզոնի խաղաղության համաժողովը (23 փետրվարի – 1 ապրիլի, 1918թ.)

Տրապիզոն մեկնող պատվիրակության կազմը շատ բազմամարդ էր: 40 անձ զուտ պատվիրակության անդամներ. բանակցողներ, խորհրդականներ, քարտուղարներ, տնտեսության պատասխանատուներ, հանձնարարությունների գծով սպաներ և հիսուն յունկերներ, որոնց մենք վերցրել էինք որպես մեր անվտանգության պահակախումբ: Պատվիրակության նման “թանձրամարմին” կազմը մի կողմից խոսում էր նմանատիպ պատվիրակություններ կազմակերպելու մեր փորձի պակասի, մյուս կողմից՝ պատվիրակության կազմում ընդգրկված տարատեսակ անձերի միջև վստահության պակասի մասին. ամեն մի ազգի ներկայացուցիչ ցանկանում էր ունենալ իր խորհրդականները: Հետագայում, երբ մենք ժամանեցինք Տրապիզոն, թուրքական թերթերը շատ կծու կատակում էին, թե. “եթե ժամանել է ռազմական էքսպեդիցիոն ջոկատ, ապա այն շատ փոքրաթիվ է, իսկ եթե դա խաղաղ պատվիրակություն է, ապա չափից դուրս մեծաքանակ է”:

Տեղավորվելով հատուկ գնացքում մենք փետրվարի 17-ի կեսգիշերին մեկնեցինք Բաթում: Մինչև Բաթում հասնելը մեզ բոլոր կայարաններում դիմավորում էին: Չնայած որ խորը գիշեր էր, բայց Միխայլովո կայարանում, Սամուրեղիայում, և այլ կայարաններում, ամբողջ գիշերվա ընթացքում, գնացքի կարճատև կանգառների ժամանակ մեզ դիմավորում էին ժողովրդի խմբեր, կուսակցությունների տեղական ներկայացուցիչներ ու ազահորեն նորություններ էին խնդրում և օրհնում ու քաջալերում էին մեզ դեպի խաղաղության համաժողով: Մենք դուրս էինք գալիս գնացքից կառամատույց՝ գլխավորապես Չիսենկելին և ես, կարճ –կարճ ճառեր արտասանում և մեր գնացքն ընթանում էր առաջ, դեպի Բաթում: Մեղմ, աստղալից գիշեր էր: Ժողովուրդն ակնհայտորեն մտահոգված էր մեր առաքելության վերջնարդյունքի համար:

Ցերեկը մենք հասանք Բաթում: Բաթումի ամրոցի և գորքերի հրամանատարը գեներալ Ալեքս. Մդիվանին էր: Ինքը հիմա Փարիզում է: Նա շատ համակրելի զինվորական էր, շատ լավ էր տրամադրված հայերի նկատմամբ և բարեկամաբար իր կորպուսի կազմի մեջ էր ընդունել Համազասպի ջոկատը: Ժամանակին ես շատ դրական կարծիքներ եմ լսել Գեներալ Ալեքս. Մդիվանու վերաբերյալ և միաժամանակ գեներալ Մդիվանուց էլ գովեստի խոսքեր եմ լսել հայկական կամավորական ջոկատների մարտական գործողությունների մասին: Տեղի հայկական գաղութից մեզ դիմավորեց Մնդոյան ազգանունով տեղացի մի վաճառական, ով ամեն մի ազգայինի նկատմամբ արձագանքող անձնավորություն էր: Նա մտերիմ էր աջարացիների հետ, լավ գիտեր տեղի բնակչությանը և մեզ Տրապիզոն ուղարկելու հետագա գործողություններում ունեցավ ամենաեռանդուն մասնակցությունը: Գեներալ Մդիվանին, տեղական իշխանությունները և Մնդոյանը մտահոգված էին այն շոգենավի ընտրությամբ, որով մենք կկարողանայինք հանգիստ ու անվտանգ ուղևորվել մինչև Տրապիզոն: Մի մասը կողմնակից էին “ԿԱՐԼ” շոգենավն ընտրելուն, մյուսները խորհուրդ չէին տալիս ոտք դնել այդ նավի վրա: Սկզբից մեզ պարզ չէին ասում, թե ինչու մենք է հարցը, բայց մի քանի կցկտուր արտահայտություններից մենք հասկացանք, որ “ԿԱՐԼ” շոգենավի անձնակազմն առանձնակի վստահություն չէր նեշնչում, քանզի ուներ բոլշևիկյան հակումներ: Բայց մեկ այլ մեծ նավ այդ պահին Բաթումի խարսխակայանում պարզապես չկար: Խորհրդակցելով Բաթումի նավահանգստի պետ իշխան Ճավճավաձեի, Մդիվանու և Մնդոյանի հետ, մենք՝ ոչ առանց տատանումների, հրահանգեցինք պատրաստել շոգենավը և փետրվարի 22-ին, ճաշից հետո, հավաքեցինք խարսխիսը: Մեզ եկել էին ճանապարհելու տեղի իշխանությունները, և մենք մեծաքանակ ամբոխի աչքի առաջ դուրս եկանք բաց ծով: Շատ պարզ գիշեր էր: Զրուցելով ընդհանուր նավասենյակում և հեռագրով տեղեկացնելով Կոստանդնուպոլիս մեր դուրս գալու մասին, մենք գիշերվա ժամը 1-ի կողմերը ամեն մեկս անցանք մեր նավասենյակները:

Առավոտյան ժամը չորսի կողմերը իմ նավախցի դուռը թակեցին: Պարզվեց, որ թակողը պատվիրակության նախագահ Չխենկելու համ-

հարզն է, Չիւէիձէ ազգանվամբ: Հարցնում եմ. “Ինչումն է հարցը”: “Պարոն նախագահը խնդրեց, որպեսզի անմիջապես հազնվեք և ներկայանաք շատ կարևոր հարցի վերաբերյալ խորհրդակցության”: Ես հազնվեցի ու գնացի նավապետի սենյակը, ուր նստած էին Չիւենկելին, պահակախմբի պետը և նավապետը: Նավապետի բացատրություններից ես հասկացա, որ գիշերը Սևաստոպոլից, Սևծովյան նավատորմի բոլշևիկյան Կոմիտեից ռադիոգիր է ստացվել, որտեղ պահանջվում է, որ մեր պավիթակությունը տեղափոխող շոգենավը շրջվի ու շարժվի դեպի Սևաստոպոլ և տեղ հասնելուն պես հանձնել շոգենավն ու նրա վրա գտնվող պատվիրակությանը տեղի “կոմիտեին”... ..[*տեքստը խզված է –Վ.Հ.*]:

...[Նավապետը հակված չէր] այդ հրահանգը կատարելուն, սակայն որոշ չափով տատանվում էր. Մի կողմից նա վախենում էր այդ հրահանգը թաքցնել նավի անձնակազմից, մյուս կողմից, նա հանձն էր առել մեզ անվնաս հասցնել մինչև Տրապիզոն: Եվ, ի վերջո, ինչպես պարզվեց հետագայում, նա մի յուրահաստուկ նպատակ ուներ. մեզ հասցնել Տրապիզոն, ինչից հետո, առհասարակ, դուրս գալ Սև ծովից և շոգենավը վաճառել: Բայց այն պահին մենք մտածում էինք միայն մի բանի մասին. ինչպես առանց արկածների, հանգիստ հասնենք Տրապիզոն: Քանի որ ռադիոկայանի ծառայողները ստացված հաղորդագրության մասին սկսեցին խոսել անձնակազմի անդամների հետ, ապա ռադիոյով եկած այդ հաղորդագրությունը աստիճանաբար սկսեց տարածվել սպաների և նավի անձնակազմի շրջանում: Մեր առավել ճարպիկ և աշխույժ վարչական աշխատակիցների օգնությամբ մենք ձեռնարկեցինք մի քանի կանխարգելիչ միջոցներ. անձնակազմի առավել համաձայնվող անձանց միանվագ բաժանեցինք 60.000 ռուբլի և քանի որ մեզ անհրաժեշտ էր նավի վրայի ռադիոն, Տրապիզոնում ամեն մի օրվա կանգառի համար նշանակեցինք ևս 10.000 ռուբլի: Մեր մյուս աշխատակիցները անձնակազմի անդամներին հյուրասիրում էին Պալատի պահեստներից վերցրած ընտիր գինիներով, որոնք նախատեսված էին Տրապիզոնում ընդունելությունների ժամանակ հյուրասիրման համար: Երրորդների դեմ կազմակերպեցինք մեր պահակախումբը՝ յունկերներին: Այդ բոլոր քայլերը, ի վերջո, հանգեցրին դրական արդյունքի և մեր շոգենավը կրկին շրջվեց դեպի

Տրապիզոն: Պարզվեց, որ գիշերվա ընթացքում մեր շոգենավը մի պահ արդեն նույնիսկ ուղևորվել էր դեպի Սևաստոպոլ: Փետրվարի 23-ին երեկոյան ժամը 8-ին մեր նավը կանգնած էր Տրապիզոնի խարսխակայանում:

Գիշերվան մոտ երկնքում վառվեցին աստղերը: Շատ տաք, մեղմ եղանակ էր: Թափանցիկ օդը շոյում էր մեր դեմքերը: Գիշերվա հուզմունքներից հետո մենք հոգնած պառկեցինք քնելու և փետրվարի 24-ի առավոտյան արդեն տախտակամածի վրա էինք: Նայելով չորս կողմը, մենք չնկատեցինք որևիցե թուրքական նավ, որի վրա կարող էր լինել թուրքական պատվիրակությունը: Մինչդեռ մենք սպասում էինք նրանց հանդիպել Տրապիզոնում: Ափից լսվում էին ռազմական նվագախմբի հնչյունները և ինչ-որ գորամասեր քայլերթով անցնում էին առափնյա տարածքով: Մենք խարսխա էինք գցել ափից մոտ 2 կիլոմետր հեռավորության վրա: ...[տեքստը խզված է -Վ.Հ.]:

...Առավոտյան ժամը 10-ի կողմերը մենք ափ ուղարկեցինք մեր պատվիրակության քարտուղարին և պահակախմբի պետին, որպեսզի նրանք պարզեն, թե ինչ տեղեկություններ կան թուրքական պատվիրակության ժամանման վերաբերյալ: Երկու ժամ հետո մեր բանագնացները վերադարձան և հայտնեցին, որ թուրքական պատվիրակությունը Կոստանդնուպոլսից արդեն դուրս է եկել: Մեր նավը մնաց խարսխակայանում փետրվարի 24-ին, 25-ին՝ ոչ ոք չէր գալիս: Մենք սկսեցինք անհանգստանալ, մեր ինքնասիրությունը խոցված էր: Մենք տեղեկացրինք Թիֆլիս, որ թուրքերը դեռևս չեն հայտնվել: Փետրվարի 25-ի երեկոյան մեր շոգենավ եկավ Տրապիզոնի վային և հայտնեց, որ թուրքական պատվիրակությունը շուտով կժամանի: Մենք նրա պատվին ընդունելություն կազմակերպեցինք և նրա հեռանալուց հետո որոշեցինք. եթե թուրքական պատվիրակությունը հաջորդ օրն էլ չգա, մենք կվերադառնանք Բաթում: Նման հրահանգ տրվեց նավապետին:

Հաջորդ առավոտյան հորիզոնին ծուխ նշմարվեց: Երկու ժամ անց խարսխակայան մուտք գործեց թուրքական մի շոգենավ. ժամանել էր թուրքական պատվիրակությունը: Երեք ժամ հետո մեր շոգենավին մոտեցավ մի նավակ, որտեղից դուրս եկան և դեպի մեզ ուղևորվեցին երեք

անձ. Թուրքական պատվիրակության թիվ մեկ պատվիրակ Ռաուֆ-բեյը, Անգորայի կառավարության այժմյան նախագահը, „Hamidie” հաճանավի նախկին նավապետը, իրոխտ և լավագույն թուրքական ծովային սպա, Համիդ-բեյը՝ ծագումով բունիացի գնդապետը և երիտթուրքական կոմիտեի անդամ Բիզա-բեյը, ով 1914թ. մասնակցել էր դեպի Աջարիա իրականացրած արշավանքին: Նրանք այցելեցին մեր պատվիրակությանը և խնդրեցին մեզ ափ իջնել: Մենք պատասխան այցով գնացինք իրենց մոտ: Որոշվեց, որ երեկոյան մենք ափ ենք իջնելու: Մեր և թուրքերի միջև անհամաձայնություններ ի հայտ եկան այն հարցի շուրջ, թե արդյոք մենք իրավունք ունենք մեր հետ տանել մեր զինվորական պահակախումբը: Թուրքերն ուղղակի հայտարարեցին, որ Տրապիզոնը ոչ թե չեզոք, այլ թուրքական քաղաք է, և, համաձայն միջազգային օրենքների իրենք պետք է ապահովեն մեր անվտանգությունը: Որոշ տասանումներից հետո մենք համաձայնվեցինք մեր հետ պահել տասը յունկեր, իսկ մնացած 40-ը առաջին իսկ շոգենավով հետ ուղարկեցինք Բաթում:

Երեկոյան մենք ափ իջանք: Ափին մոտենալիս իմ աչքին ընկավ հրետանու արկերի պահեստի հսկա պայթյունի հետքերը: Հավանաբար, նահանջելիս, մի քանի օր առաջ, զինվորները անփութության հետևանքով առաջ էին բերել հրետանու պահեստի պայթյունը: Ասում եմ անփութության հետևանքով, քանզի իրենք՝ թուրքերը, ավելի քան շահագրգիռ էին իրենց ձեռքում հայտնված ռուսական ռազմական ունեցվածքի պահպանման հարցում: Տրապիզոնում նրանց ձեռքում էր հայտնվել մոտ 1000 թնդանոթ, 12.000 ձի, 30.000 հրացան և միլիոններով փամփուշտներ:

Երբ մենք ափ իջանք, մեզ դիմավորեց մի խղճուկ զինվորական նվազախումբ՝ վեց փողհար և երկու թմբուկ: Հրավառությունը ներկայացված էր այրվող ձթած տակառներով և այրվող նավթով լցված մի քանի ճաշամաններով: Հրավառությունից տարածվում էր հեղձուցիչ մի ծուխ, նվազախումբը ինչ-որ խառը բաներ էր նվազում, հավաքված ամբոխն էլ զարմացած մեզ էր նայում: Ափին մեզ սպասում էին կառապանները: Մենք հասանք մեզ համար վաղօրոք նախատեսված երկհարկանի շենքին, որի դիմաց գտնվում էր թուրք ասկյարների գորանոցը: Առավոտյան մենք դուրս եկանք քաղաք: Ամենուրեք անտանելի ցեխ էր և գրեթե

կատարյալ ամայություն, և ոչ մի հայ: Մենք մոտեցանք հայկական եկեղեցուն: Այնտեղ կանգնած էին ձիեր, հատակին՝ գոմաղբը: Խանութները դատարկ էին: Տեղ-տեղ հույները վաճառում էին միս ու կանաչեղեն:

Հաջորդ օրը տեղի ունեցավ մեր առաջին պաշտոնական հանդիպումը թուրքական պատվիրակության հետ: Պայմանավորվեցինք նիստերի անցկացման կարգի վերաբերյալ: Նախագահելու պարտականությունն իր վրա վերցրեց թուրք պատվիրակը, որը մեզ հրավիրեց ներկա լինել խաղաղության համաժողովի հանդիսավոր բացմանը: Դրանով իսկ կողմերը Տրապիզոնը ճանաչում էին որպես թուրքական քաղաք: Դա էլ ասենք, որ ռուսական զորքերի հեռանալուց հետո, ինչպես նաև խաղաղության վերաբերյալ մեր ունեցած պատկերացումների, մենք ամենևին չէինք էլ ցուցաբերում որևիցե հավակնություն Տրապիզոնի նկատմամբ:

Համաժողովի առաջին հենց օրը նշանավորվեց մեծագույն կարևորության երկու իրադարձություններով. 1918թ. փետրվարի 27-ին թուրքական զորքերը գրավեցին Էրզրումը, իսկ փետրվարի 28-ին վերջնականորեն ստորագրվեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ըստ որի Կարսը, Բաթումը և Արդահանը անցնում էին Թուրքիային: Նման պայմաններում էր սկսվում մեր համաժողովը: Էրզրումի գրավումը Տրապիզոնում ողջունվեց հրավառությամբ, իսկ մեզ տեղեկացրեցին չափազանց զգուշաբար, ուղարկելով պաշտոնական գործակալական իրազեկում:

Որպեսզի դիվանագիտական տեսանկյունից ավելի պարզորոշ պատկերացնեք մեր համաժողովի ընթացքը, անհրաժեշտ է վաղօրոք իմանալ, որ Տրապիզոնի համաժողովի ամբողջ ընթացքում / փետրվարի 27-ից մինչև ապրիլի 1-ը, այն է՝ 34 օր/ թուրքերը մշտապես մոտենում էին Կովկասի սահմաններին, իսկ մենք նահանջում էինք: Համաժողովի սկզբին հայկական զորքերի տեղաբաշխումը հետևյալն էր. Բաթումն ու Ճորոխի հովիտը զբաղեցնում էր վրացական կորպուսը: Էրզինջանի ուղղությամբ՝ Էրզինջանի գունդը, Էրզրումում՝ Էրզրումի գունդը և 1-ին ու 4-րդ գնդի զորամասերը: Կարսում՝ երեք գունդ: Խնուսից մինչև Վան՝ 2-րդ հայկական գունդը և ես երկու գունդ՝ Վանի և Խնուսի: Վանից դեպի հարավ՝ հինգերորդ հայկական գունդը և 1-ին, 2-րդ և 4-րդ գումարտակները, Վանից դեպի արևելք՝ Մակվի գունդը: Բացի դրանցից՝ Անդրանի-

կի հատուկ դիվիզիան, Մեպուհի, Մուրադի, Տեր-Ղևոնդյանի, Թորգոմի, Պանդուխտի ու այլոց ջոկատներով: Էրիվանում կանգնած էր գեներալ Միլիկյանի դիվիզիան, Ալեքսանդրապոլում՝ գեներալ Արեշևի դիվիզիան և գնդապետ Կորգանովի⁷⁹ հեծյալ բրիգադը: Գլխավոր զորակայանը և գեներալ Նազարբեկովը՝ Թիֆլիսում: Բաքվում՝ տեղի պահակազորը և 10.000 զինվորական հայ և ռուս, որոնցից 8.000-ը՝ հայ: Պարսկաստանում կանգնած էին գեներալ Ադա Պետրոսի և պատրիարք Մարդշիմուքի ասորական զորամասերը և Ստեփանյանի հայկական գումարտակը: Թուրք-գերմանական ընդհանուր ծրագիրը հետևյալն էր. գրավել Բաթում-Բաքու գիծը, տիրանալ Բաքվի նավթային միջոցներին, զորքեր տեղափոխել Թուրքեստան և այնտեղից սպառնալ Անգլիային: Իսկ թուրքերն էլ իրենց հերթին շարժվում էին դեպի Ալեքսանդրապոլ, որպեսզի այնտեղից էլ շաժվեն դեպի Բաքու, անցնեն Պարսկաստան և հետո՝ ավելի հարավ, մինչև Բաղդադ և այնտեղ նեղեն անգլիացիներին: Հասկանալի էր, որ Կովկասը դառնում էր ամբողջ գործողության կենտրոնը: Գերմանական զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Հինդենբուրգի գլխավոր շտաբի պետ գեներալ Լյուդենդորֆը պատերազմի մասին իր գրքում նշում է, որ հայերի հերոսական դիմադրությունը խիստ բացասաբար է ազդել այդ ծրագրի իրականացմանը: Հայերի դիմադրության պատճառով ուշացումով էր իրականացվում վառողի և բենզինը ստացումը Բաքվից, ինչն իր հերթին խափանում էր ավտոմոբիլների սպասարկումն ու շահագործումը:

Գերմանացիները 1918թ. ամռան սկզբներին Կովկաս ուղարկելու համար կենտրոնացրել էին մոտ 15.000 զորք: Իսկ Կովկասի համար նա-

⁷⁹ **Ղորղանյան (Կորգանով) Նիկոլայ Ադամի** (1878-1921)տոհմիկ ազնվական, ցարական բանակի հեծելազորի գնդապետ, Հայաստանի Հանրապետության բանակի գնդապետ, ռազմական նախարարության հանձնարարությունների գծով գեներալի պաշտոնակատար (դերակալ գեներալ): 1918-1920թթ. մասնակցել է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: Ղարաքիլիսայի ճակատամարտի առանցքային մասնակիցներից ու դերակատարներից է, պահել է ռազմաճակատի գծի կենտրոնական հատվածը: Հայաստանի անկախության ոչնչացումից և երկրի խորհրդայնացումից հետո ձերբակալվել է և 1921թ.փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը հայ բոլշևիկների ձեռամբ կացնահարվել է Երևանի բանտում::

խատեսված թուրքական գորքերը կազմում էին 30.000 և համալրված էին պաղեստինյան ռազմաճակատի լավագույն զորամիավորումներով: Այդ լավ զինված և կազմակերպված զորաբանակը կրում էր “Իսլամի Կովկասյան Բանակ” անվանումը: Այստեղ բախվեցին երկու ռազմական դպրոց՝ կովկասյանը, ավելի ճիշտ՝ հայկականը և թուրքականը:

Երգրումը թողնելուց հետո հայկական բանակը նահանջեց դեպի Սարիղամիշ, որն արդեն գտնվում էր բուն Անդրկովկասի տարածքում: Հայերի կողմից վարած տասնմեկօրյա դիմադրողական մարտերը հնարավորություն տվեցին, որպեսզի Թիֆլիսից թարմ ուժեր հասնեն ռազմաճակատ, բայցևայնպես, մարտի 23-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը: Հայերը, նահանջելով, հրդեհեցին քաղաքը, պահեստները և շարժվեցին դեպի Կարս: Իսկ այդ ընթացքում իր նիստերն էր գումարում Տրապիզոնի համաժողովը: Մենք միտումնավոր ենք զուգահեռաբար բերում ամսաթվերը Տրապիզոնի համաժողովից և ռազմաճակատային իրադարձություններից, որպեսզի պարզ լինի, թե որչափ դժվար էր համաժողովում պահանջներ ներկայացնել և պաշտպանել դրանք, երբ մեր զինուժը նահանջում է, իսկ հակառակորդը շարժվում ու շարժվում է առաջ, գրավելով ամրոցներ և քաղաքներ: Եվ ես դա զգում ու զիտակցում էի պարզ իրականության մեջ և այդ ամենը արտացոլվում էր նաև մեր նիստերի ընթացքի վրա: Նման իրավիճակում ես հետագայում հայտնվել եմ ևս երկու անգամ. նույն, 1918թ. մայիսին Բաթումում, և 1920թ. նոյեմբերին՝ Ալեքսանդրապոլում:

Թուրքերն, իհարկե, իրենց հաջողությունները ուռճացնում ու չափազանցնում էին, չափազանց հանդիսավոր հայտնում դրանց մասին և դրանով ոգևորում էին բանակին: Այդ պայմաններում մեկնարկեց Տրապիզոնի համաժողովը:

Ես չեմ մտադրվել քայլ առ քայլ պատմել այստեղ այդ համաժողովի բոլոր անակնկալների ու բարդություններ մասին, -մեծ թվով թղթեր մեր կողմից, մեծ քանակությամբ թղթեր գրվեց թուրքերի կողմից: Դրանցում շարադրվածը, իհարկե, շատ հետաքրքիր կլիներ, քանզի դրանք կցուցադրեին, թե ինչպես էինք մենք ձգտում հասնել մեր պահանջների իրականացմանը և ինչպես ամեն անգամ թուրքերը մերժում էին, որպես այդ

մերժման հիմնավորում բերելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Որպեսզի, համենայնդեպս, ընթերցողը կարողանա հետևել մեր բանակցությունների ընթացքին, ես այստեղ կներկայացնեմ այն պաշտոնական զեկույցը, որը մեր պատվիրակությունը ներկայացրել է Մեյմին նրանից հետո, երբ բանակցություններն ընդհատվելուց հետո մենք վերադարձանք Թիֆլիս և սկսվեց արդեն պատերազմը Թուրքիայի և Անդրկովկասի միջև:

Ես կաշխատեմ, հիմք ընդունելով զուտ անձնական տպավորությունները, լուսաբանել մեր բանակցությունների հիմնական պահերը: Համաժողովի առաջին օրը Ռաուֆ-բեյն արտասանեց մի ծաղկազարդ ճառ: Նա ֆրանսերեն չի խոսում, մի քիչ խոսում է գերմաներեն և լավ՝ անգլերեն: Նրա մեջ տեսնում ես ուժեղ կամք և հզոր ներուժ ունեցող մի անձնավորության: Իր հետ ունեցած զրույցներից նկատելի է, որ Թուրքիայի սպազայի առումով ինքը մեծ նշանակություն է տալիս Թուրքիայի և Անգլիայի մերձեցմանը: Ինքը Սուլտանի ծնունդ է, չերքեզ է ու հետաքրքրվում է իր ցեղակիցների դրությամբ Թուրքիայում և Կովկասում: Բալկանյան պատերազմի ժամանակ նրա հաճանավր իր մարտարշավներով ու անսպասելի հարձակումներով սարսափ էր սփռում հակառակորդի վրա: Ռաուֆ-բեյը անձամբ էր կազմել այդ հաճանավրի գծագրերը և, ինչպես ինքը ինձ պատմեց, անձամբ էր գնացել Անգլիա այդ ռազմանավր բերելու: Կովկասյան պատվիրակությանն ուղղված իր ճառում Ռաուֆ-բեյն ասաց, որ արևելքում ծագում է նոր աստղ՝ դա Անդրկովկասյան պետությունն է, որն ինքը ողջունում է, և, միաժամանակ, ողջունում է նաև “օտարված զավակների վերադարձը իրենց հարազատ մոր գիրկը”: Օտարված զավակների վերադարձ ասելով պետք է հասկացվեր Կարսի, Բաթումի և Արդահանի միացումը Թուրքիային:

Ռաուֆ-բեյն առաջարկում էր ներգաղթած 300.000 թուրքահայերին հավերժ թողնել Անդրկովկասի սահմաններում, իսկ նույն քանակով՝ 300.000 թաթարներ Անդրկովկասից վերաբնակեցնել Թուրքիա: Մենք կտրականապես դեմ էինք արտահայտվում այդ նախագծին, քանզի այն ուներ երկու խիստ բացասական կողմեր. նախ զրկում էր մեզ Արևմտյան Հայաստանը պահանջելու որևիցե հիմքերից, քանի որ այդ պարագայում

այստեղ այլևս, առհասարակ, հայ չէր մնում, իսկ երկրորդն էլ, այդ նախագիծը թրքացնում էր հայկական վիլայեթները և ընդամիջոց փոխում էր տարածքների բնույթը, դարձնելով դրանք մաքուր մահմեդական տարածքներ: Ուստիև, այդ նախագծի մասին մենք, առհասարակ, չէինք ցանկանում լսել և խոսել: Ի դեպ, այն օրերից անցել է յոթ տարի և այսօր, համենայնդեպս, այդ ծրագիրն իրագործված է տարերայնորեն՝ Թուրքիան կարողացավ իր կամքը փաթաթել հայերի և Եվրոպայի վզին: Երկրորդ նախագիծը չափազանց մշուշոտ էր, երբ էս և Քաջագնունին փորձում էինք պարզել մեր համար Թուրքիայում հայերի հնարավոր ինքնավարության բնույթը, Ռաուֆ-բեյը դուրս չէր գալիս ընդհանուր խոսքերի շրջանակներից: Նա այդ եղանակով, պարզապես, ցանկանում էր այդ հարցը հանել բանակցությունների հարթության օրակարգից և դարձնել զուտ Թուրքիայի համար ներքին հարց: Այսօրվա դրությամբ թուրքերը կարողացան իրականացնել նաև իրենց այդ նպատակը. այսօր /ես այս տողերը գրում եմ 1925թ./ թուրքերը ստորագրել են Լոզանի պայմանագիրը, որտեղ բացակայում է “հայ”, “Հայաստան” բառերի հիշատակումը և թուրքերի անթիվ հայտարարություններից Եվրոպան իմացավ և, ասես, հաշտվեց թուրքական այն դրույթի հետ, որ “հայկական հարց Թուրքիայում չկա”, որ “Օսմանյան հայազգի քաղաքացիների հարցը” բացառապես ներքին թուրքական հարց է: Այնպես որ, ո՛չ պաշտոնական նիստերի ժամանակ, և ո՛չ էլ անձնական գրույցների ընթացքում ինձ չէր հաջողվում հող գտնել Թուրքիայում հայկական հարցի լուծման համար: Իսկ ինչ վերաբերում է Անդրկովկասի անկախության հարցին, ապա թուրքերի դիրքորոշումն այստեղ չափազանց պարզ էր. նրանք ներշնչում էին մեզ Անդրկովկասյան Հանրապետության անկախությունը հայտարարելու միտքը, փնտրում ու սպասում էին այդ անկախությանը:

Ռաուֆ-բեյի ելույթը “օտարված զավակների մոր գիրկը” վերադառնալու վերաբերյալ մեզ, ճիշտն ասած, շփոթեցրեց: Մակայն մենք անդրդվելի մնում էինք մեր դիրքերի վրա: Եվ մարտի 7-ի մեր հռչակագրում մայր մասին նույնիսկ հայտարարեցինք թուրքերին: Մեր ունեցած գրույցներից՝ թե՛ պաշտոնական, թե՛ ոչ պաշտոնական, պարզ էր դառնում, որ թուրքերն իրենց համար դրել են երկու նպատակ. առաջինը՝ ի կատա-

րումն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի, Թուրքիային միացնել Կարսը, Բաթումը, Արդահանը, և երկրորդը՝ անկախ Անդրկովկասյան պետության միջոցով, որը պետք է անջատվի Ռուսաստանից թե՛ փաստացի, թե՛ իրավաբանորեն, մի պատնեշ ստեղծել Թուրքիայի և Ռուսաստանի միջև: Այդ նպատակի իրագործման եղանակն էլ ռազմական հարձակումն էր և ուժի միջոցով վիճելի տարածքների բռնագավթումը: Իսկ ինչ վերաբերում է Թուրքիայում հայկական հարցին, ապա այդ խնդրի վերաբերյալ թուրքերը որոշակի ծրագիր չունեին: Նրանց առջև հայկական հարցը գանգնած էր իր պատմական համատեքստում. Անցյալում նա զբաղեցնում էր եվրոպական հասարակական կարծիքը, իսկ այժմ՝ մոտ 300.000 հայ փախստականներ Թուրքիայից կերտրոնացված էին Էրիվանի նահանգի սահմաններում և Կովկասի տարբեր շրջաններում: Այդ զանգվածի նկատմամբ անհրաժեշտ էր ինչ որ քայլեր ձեռնարկել: Իրենք դա զգում էին:

Թուրքական պատվիրակության քարտուղարը ֆրանսերենին գերազանց տիրապետող, 35-ին մոտ մի շատ ընդունակ մարդ էր, անունը՝ Համի-բեյ: Կոստանդնուպոլսի իրավաբանական դպրոցի միջազգային իրավունքի պրոֆեսոր՝ ինչպես ինքն էր իրեն ներկայացնում: Իր հետ ունեցած բազմաթիվ անձնական զրույցներից ինձ համար պարզ էին դարձել թուրքական պատվիրակության տրամադրությունները. Նամի-բեյը շատ մտերիմ էր Ռաուֆ-բեյի հետ և վերջինիս հանձնարարությամբ հաճախակի էր գալիս ինձ և մեր քարտուղար գեներալ Թումանովի մոտ հատուկ հայկական հարցի շուրջ զրուցելու նպատակով: Ռաուֆ-բեյի և Համի-բեյի հետ զրույցներից ես եկա այն եզրակացության, որ իրենց մոտ առկա էր Թուրքիայում հայկական հարցի լուծման երկու նախագիծ. Բնակչության փոխանակում Թուրքիայի և Անդրկովկասի միջև, կամ տեղական ինքնակառավարման նման մի բան Ալաշկերտի, Վանի և Խնուսի շրջաններում՝ առանց Մուշի, Բիթլիսի և Էրզրումի: Բնականաբար, միայն ու միայն Թուրքիայի բացարձակ ինքնիշխանության ներքո:

Բացի դրանից, որքան համառորեն մենք մերժում էինք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, մատնանշելով Անդրկովկասի համար “Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի” ոչ պարտադիր լինե-

ընթացքներն առավել համառությամբ պնդում էին, որ Անդրկովկասը դեռևս չի հռչակել իր անկախությունը Ռուսաստանից: Կամաց-կամաց, մարտի վերջերին, այդ պայմանը ձևակերպվեց արդեն որպես թուրքական կողմի պահանջ: Հակառակ պարագայում, թուրքերը հրաժարվում էին շարունակել բանակցությունները: Անդրադառնալով մեր տարածքային զիջումներին, համաճողովի հնթացքում մենք սկսեցինք հասկանալ, որ մենք անհրաժեշտորեն պետք է թուրքերին զիջենք որոշ տարածքներ նաև բուն Անդրկովկասից: Երբ ամբողջ պատվիրակությունը համաձայնվեց, որ նման զիջումներն անխուսափելի են, պատվիրակության տարբեր խմբավորումների միջև սկսվեց խուլ պայքար այն հարցի շուրջ, թե հատկապես ո՞ր տարածքները զիջել: Վրացիներն ակնհայտորեն չէին ցանկանում ինչ-որ մի հատված զիջել Բաթումի մարզից, հայերը՝ Կարսի մարզից: Վրացիներն ամեն գնով ցանկանում էին իրենց ձեռքում պահել Բաթում քաղաքն ու նավահանգիստը, հայերը՝ Կարս քաղաքն ու ամրոցը: Դրանք էին անդրկովկասյան կողմի հիմնական ցանկությունները: Ավելին՝ մեր կենսական շահերը: Այդ զիջումների պահանջով թուրքերը պարզապես պատառոտում էին հայերի և վրացիների կենդանի մարմինը: Թաթարներն իրենց չեզոք էին պահում՝ բացառությամբ ”Հումիեթի” (սոցիալ-դեմոկրատ մենշևիկ մահմեդականներ) մի անդամի, ով բացահայտորեն հայերի և վրացիների կողմն էր: Նրա ազգանունը Շեյխուլիսլամով է, նա այժմ Փարիզում է, թաթար սոցիալ-դեմոկրատների պատվիրակն է II Ինտերնացիոնալում: Սակայն ինքը աննշան ազդեցություն ուներ իր միջավայրում:

Շուտով Տրապիզոն ժամանեցին նաև Պատվիրակության կազմում պաշտոնապես չընդգրկված Հյուսիսային Կովկասի լեռնականների երկու պատվիրակներ՝ Չերմոնը և Բամմաթովը: Առաջինը՝ ցար Նիկոլայ II – ի պահակախմբի նախկին փայլուն սպաներից, հետագայում՝ Հյուսիսային Կովկասի կառավարության նախագահ և պատվիրակության նախագահ Փարիզում, իսկ երկրորդը՝ փոխարքայի նախկին ընդունակ ծառայող աշխատակիցներից մեկը, այժմ՝ Հյուսիսային Կովկասի կառավարության Արտաքին Գործերի Մինիստրն է: Նրանք երկուսն էլ միացյալ Կովկասյան Դաշնության կողմնակից էին և նրանում էին տեսնում իրենց քաղա-

քական փրկությունը: Առհասարակ, Դադստանի լեռնականները թաթարների չափ թուրքական կողմնորոշում չէին ցուցաբերում: Նրանք համեմատաբար վերջերս էին կորցրել իրենց ինքնուրույնությունը (ապստամբել էին) անցած դարի յոթանասունականներին և հիշողությունը Դադստանի անկախության հերոս Շամիլի մասին դեռևս կենդանի էր նրանց մեջ: Լեռնականներն ի սրտե ձգտում էին մեզ օգնել: Նրանք առանձին խոսում էին Ռաուֆ-բեյի հետ, հիշեցնում նրան, որ ինքն էլ է ազգությամբ չերքեզ, Կովկասից է և պետք է օգնի կովկասյան գործիչներին՝ ի բարօրություն բոլոր կովկասյան ազգերի: Բայց նրանց միջնորդությունը արդյունք չտվեց:

Թուրքերն անդրդվելի էին իրենց պահանջներում, ինչի մասին էլ մեզ տեղեկացրին մարտի 21-ին: Մեր անզիջում լինելու ժամանակն անցավ: Պատվիրակության նախագահ պ. Չիսենկելին, տեսնելով, որ պատվիրակության կազմում տիրող այսչափ տարակարծությունների պարագայում բանակցությունները շարունակելը պարզապես դառնում է անիմաստ, պատվիրակության քննարմանը ներկայացրեց առաջարկ, որպեսզի այստեղից Թիֆլիս ուղարկվի մի հատուկ հանձնաժողով, որը տեղում բացատրեր Կառավարությանը դեպքերի ընթացքը և խնդրեր Կառավարությունից պատվիրակության նախագահի համար ինքնուրույն քայլեր կատարելու առումով ավելի լայն լիազորություններ: Հայերից այդ հանձնաժողովի կազմում ընդգրկվեց Քաջազունին: Նրանք մեկնեցին Թիֆլիս, ստեղծված իրադրության մասին զեկուցեցին Կառավարությանը իսկ վերջինս էլ մարտի 12-ին Սեյմից խնդրեց “արտակարգ կարգավիճակ” պ. Չիսենկելիի համար և հնարավոր համարեց Թուրքիային զիջել կովկասյան տարածքներից որոշ հատվածներ:

Թիֆլիսից հանձնաժողովի վերադառնալուց հետո պատվիրակությունը մարտի 23-ի նամակով թուրքական կողմին իրազեկեց, որ անդրկովկասյան պատվիրակությունը համաձայն է զիջել Կարսի մարզի մի մասը: Զիջվող տարածքների մեծ մասն ընկնում էր Կարսի մարզի արևմտյան հատվածի վրա՝ առանց ամրոցի և առանց հայաբնակ շրջանների: Թուրքերին այդ զիջումը չբավարարեց: Նրանք անշեղորեն պահանջում էին բավարարել իրենց բոլոր պայմանները:

Մարտի 23-ով թվագրված նույն թղթով անդրկովկասյան պատվիրակությունը տեղեկացվում էր, հայկական հարցը բերվում, հասցվում է ընդամենը “թրքահապատակ հայերի վերադարձի, ինչպես նաև փախստականների և պատերազմի պատճառով հարազատ վայրերից տեղահանված այլ ազգությունների հետագա ճակատագիրն ապահովող երաշխիքների մասին” ընդհանուր բնույթի հարցի քննարկմանը: Որպեսզի հստակ լինի “փախստականների և այլ ազգությունների” մասին հիշատակումը, անհրաժեշտ է իմանալ, հայերի կողքին պատերազմի ընթացքում շատ են տուժել նաև ասորիները, որոնք նույնպես ամբողջ պատերազմն անցկացրեցին մարտերում, ունեցան մեծաթիվ փախստականներ, կրեցին բազում տառապանքներ: Նրանք նույնպես խրախուսվում էին Մեծ տերությունների կողմից, ստանում էին խոստումներ, բայց, ի վերջո, նույն հայերի նման խաբված մնացին իրենց բոլոր սպասումներում: Բոլոր համաժողովներում, որտեղ հայտնվում էին հայերը, կարելի էր տեսնել նաև ասորիներին: Հատկապես՝ իրենց աշխարհիկ առաջնորդ, բոլոր Մեծ տերությունների շքանշաններով զարդարված Պետրոս Աղային: Որոշ դեպքերում մենք նրանց օգնում էինք նաև գումարով, ինչպես որ դա եղավ Փարիզի վեհաժողով գնալուց, նյութապես օգնում էինք նաև նրանց փախստականներին Հայաստանում ու Վրաստանում: Երբ մենք Թիֆլիսից Տրապիզոն էինք մեկնում, իրենք մեզ խնդրեցին, որպեսզի իրենց հարցը նույնպես բարձրացնենք: Եվ այսօր, խաբվելով Լոզանում իրենց ակնկալիքներում, նրանք իրենց հայրենի սարերում դեռևս պահում են չորս զինված գումարտակ: Իրենց հայրենիքը Վանի վիլայեթի Հեթկյարա սանջակն է: Լոզանում նրանք նույնիսկ խնդրում էին իրենց ինքնավարության սկզբունքով միացնել Հայաստանի Հանրապետությանը:

Չնայած մեր բոլոր փաստարկներին, թուրքերը համառում էին: Տրապիզոն եկավ Վեհիբ-փաշան, տեսնվեց նաև մեզ հետ, տեղեկացրեց իր հաջողությունների մասին: Բնակչությունը նրան դիմավորում էր նվազախմբով, կայացավ զորահանդես: Հավանաբար, թուրքերը պատրաստվում էին վճռական քայլի: Քաղաքում նույնիսկ նկատվում էր որոշակի իրարանցում: Եվ իրոք, 1918թ. մարտի 24-ի ուշ երեկոյան մեր պատվիրակությունը Ռաուֆ-բեյից ստացավ հետևյալ բովանդակությամբ մի նամակ.

“ Պարոն Նախագահ, Օթոտմանյան Կայսերական Կառավարությունը պնդում է 1918թ. մարտի 21-ի հռչակագրում շարադրածը և խնդրում է հարգելի անդրկովկասյան պատվիրակությանը այդ կապակցությամբ մեզ ներկայացնել վերջնական պատասխան մոտակա 48 ժամերի ընթացքում: Ռաուֆ-բեյ”: Այդ վերջնագրին հետևեց ռազմական գործողությունների վերսկսումը: Այժմ արդեն ժամանակն անցել էր: Այն ամենը, ինչին ես տեղյակ էի և տեսնում էի իմ շուրջ, նույնը և Քաջագնունին, մեզ ոչ մի հաջողություն չէր խոստանում: Մարտի 24- լույս 25-ի գիշերը կայացած պատվիրակության նիստի ընթացքում հնչեցին ձայներ, որ անհրաժեշտ է նահանջել՝ զիջել: Միաժամանակ հասկանալի էր, որ թուրքերին հանձնել Կարսն ու Բաթումը, կնշանակեր Անդրկովկասից պոկել լավագույն ու կարևորագույն քաղաքները: Մենք ձգտում էինք գոնե ինչ-որ մի բան փրկել: Մարտի 25-ի առավոտյան Չիենկելիին հեռագիր ուղարկեց Թիֆլիս, նշելով, որ զիջումների առավելագույնը ինքը համարում է “ամբողջ Կարսի մարզը, Կարս քաղաքը ներառյալ, շտկելով նրա արևելյան հատվածի սահմանները, որ բնակեցված են հայերով և Արդահանի շրջանի հյուսիսային հատվածը, իսկ Բաթումի մարզից՝ Արդվինի շրջանը, առանց Արդվինի տեղամասի”:

Իսկ մեր շրջապատում իր կողմից ավելացնում էր. “ Ես համոզված եմ, որ թուրքերը չեն զիջի նաև Բաթումը: Վեհիբ-փաշդան խիստ որոշակի արտահայտվեց այդ կապակցությամբ: Կարսի համեմատ տարբերությունն այն է, որ Բաթումի պարագայում, նրանք այդ միջոցով սակարկում են: Իսկ ինչ վերաբերում է Կարսին, ապա դիվանագիտական եղանակով այն պահելու համար չկա բացարձակապես և ոչ մի հնարավորություն: Թուրքերը պարզապես չեն էլ ցանկանում խոսել Կարսի մասին: Ես գիտակցում եմ, որ նման հարցադրումը սպառնում է Սեյմի և ինքնին Անդրկովկասի միասնությանը, բայց, դժբախտաբար, այլ ելք չկա: Թուրքերը չափազանց լրջորեն են մոտեցել պատերազմի վերսկսմանը”:

Գիշերը ես հանդիպեցի Չիենկելիի հետ և երկուսս էլ այն կարծիքին էինք, որ անհրաժեշտ է գնալ զիջումների: Մենք պատերազմ չէինք ուզում: Մենք հաջողության որևիցե սպասելիք չունեինք:

Այդ նույն ժամանակամիջոցին թուրքերը ներխուժեցին Անդրկովկասի սահմանները. Կարսի ուղղությամբ, նրանց զորամասերն արդեն Սարիղամիշում էին, իսկ Բաթումի ուղղությամբ անցել էին Բաթումի մարզի սահմանը: Ըստ այդմ էլ, մարտի 26-ին Անդրկովկասյան Կառավարությունը հեռագրեց պատվիրակությանը. “Անհրաժեշտ է հայտարարել թուրքական պատվիրակությանը, քանի որ թուրքական զորքերը ներխուժում են Անդրկովկասի տարածք, ապա խաղաղ բանակցությունները պետք է ընդհատվեն, ինչի մասին կտեղեկացվեն Անդրկովկասի ժողովուրդները”:

Սակայն, նույն օրվա երեկոյան, Կառավարությունն արդեն հաղորդում էր, որ ինքը համաձայն է Կարսի մարզն ու Արդվինի շրջանը զիջելուն և հավելում էր, որ հայերը համառորեն պնդում են, որ զիջվող շերտը չպետք է իր մեջ ներգրավի բուն Կարս քաղաքը:

Իսկ ժամանակը գնում էր: Պատվիրակությունը զգում էր, որ թուրքերն արագացնում են դեպքերի ընթացքը և մարտի 26-ին հեռագրեց Անդրկովկասի Կառավարությանը, որ իրադրությունն այնպիսին է, որ անհրաժեշտ է ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Պատվիրակությունը, իր վրա վերցնելով ամբողջ պատասխանատվությունը, մարտի 28-ին հայտարարեց օտթոմանյան պատվիրակությանը, որ ինքը՝ անդկովկասյան պատվիրակությունը ճանաչում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

Ես և Քաջագնունին անհրաժեշտ համարեցինք անձամբ մեր անունից ազդել “Դաշնակցության” խմբակցության դիրքորոշման վրա և մարտի 28-ին Գեգեչկորիին և ֆինանսների մինիստր Կարճիկյանին հեռագրեցինք հետևյալը. “Անհրաժեշտ ենք համարում ամենայն լրջությամբ դաշնակցական կուսակցության ուշադրությունը հրավիրել այն իրավիճակին, որ ստեղծված պայմաններում Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ճանաչումը համարում ենք չարյաց փոքրագույնը: 28 մարտի հ.տ. (12 ապրիլի ն.տ.): Պարենավորման մինիստր Խատիսով, Մինիստր Քաջագնունի”:

Պետք է նշել, որ այդ հեռագիրն ուղարկելուց մի շաբաթ առաջ Մինիստր-Նախագահ Գեգեչկորին ինձ և Քաջագնունուն առաջարկել էր մաս կազմել իր գլխավորած կառավարության, ինչին մենք տվել էինք մեր համաձայնությունը: Այդ իսկ հանգամանքից ելնելով էլ, մենք հեռագիրը

ստորագրեցինք որպես մինիստրներ և ուղարկեցինք երկու հասցեով. Կառավարության Նախագահ Գեգեչկորիին և ֆինանսների մինիստր Կարճիկյանին:

Իսկ թուրքերը, որպեսզի առավել ճնշում գործադրած լինեն մեր բարոյական վիճակի վրա, մեզ հաղորդեցին, թե իբր Վերդենի ամրոցն ընկել է և գերմանացիներն արդեն մոտենում են Փարիզին: Մարտի 30-ին թուրքերը Բաթումի պարետին վերջնագիր ուղարկեցին, պահանջելով հանձնել Բաթումի ամրոցը, բոլոր բերդամասերն ու ռազմապահեստներն իրենց պարունակությամբ: Միաժամանակ տեղեկացվում էր, որ հակառակ դեպքում ապրիլի 1-ին ժամը 4-ին թուրքերը կսկսեն ամրոցի գրոհը, ինչի արդյունքը կլինի “ավերածություններ, անմեղ արյուն և պաշտպանների գերեվարում”: Միաժամանակ Ռաուֆ-բեյը հաղորդեց մեր պատվիրակությանը որ “բարեկամության պայմանագրի բանակցություններին դաշնակիցներին (այն է՝ գերմանացիներին, ավստրիացիներին և բուլղարացիներին) նույնպես ներգրավելու համար, նախևառաջ անհրաժեշտ է, որպեսզի Անդրկովկասը հռչակի իր անկախությունը”:

Իսկ մենք սպասողական վիճակում էինք: Մենք սպասում էինք, որ ամեն պահի կարող է հեռագիր գալ Սեյմի համապատասխան որոշման վերաբերյալ: Անձամբ ես ցանկանում էի, որպեսզի Սեյմը ճանաչի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Մենք ենթադրում էինք, հենց այդպես էլ լինելու է: Մինչդեռ Թիֆլիսում զգացվում էր բավականին գրգռվածություն: Մեր հեռագրերը ստացվել էին և ընթանում էին քննարկումներ, թե ինչ անել: Մարտի 31-ին ցերեկվա ժամը 1.50-ին՝ Սեյմի նախագահ Չխեիձեի նախագահությամբ տեղի է ունենում բազմամարդ ժողով, որտեղ ներկա է եղել 26 մարդ՝ կառավարությունից, Սեյմի խմբակցություններից և Սեյմի Նախագահությունը: “Դաշնակցության” խմբակցությունից ներկա են եղել Վրացյանը և Մարտիրոս Հարությունյանը⁸⁰՝ հետագայում

⁸⁰ **Հարությունյան Մարտիրոս Հարությունի** (1875թ., Ալեքսանդրապոլ, Ռուսական կայսրություն- 1928-ից հետո, ԽՍՀՄ): Հայ քաղաքական և պետական գործիչ, դիվանագետ, ՀՀԴ անդամ: Կրթությունը՝ Գևորգյան ճեմարան և Բեռլինի համալսարան: Անդրկովկասյան սեյմի դաշնակցական խմբակցության անդամ (1918թ.), Հայաստանի Հանրապետության խորհրդարանի պատգամավոր (մինչև 1920թ. Դեկ-

մեր ներկայացուցիչը Բաքվում: Գեգեչկորին Կառավարության անունից ներկայացնում է հեռագրերը և ավելացնում, որ “Համաձայն հեղինակավոր կարծիքների, Բաթումի պաշտպանությունը գտնվում է անհրաժեշտ մակարդակի վրա”: Ծերեթեյին հայտարարում է, թե “գերադասելի է մարտում զոհվենք, քան Բաթումը հանձնելով մահացու հարված հասցնենք ինքներս մեզ”: Կարճիկյանը նույն բանն է հայտարարում: Բոլոր խմբակցությունների ներկայացուցիչներն արտահայտվում են նույն ոգով: Նիստն ավարտվում է ժամը 2.55-ին և փակվելուց առաջ կայացնում է հետևյալ որոշումը. առաջարկել Սեյմին հետ կանչել պատվիրակությունը, երկրի պաշտպանության հարցերին հետամուտ լինելու համար ընտրել արտակարգ լիազորություններով օժտված երեք անձից բաղկացած կոլեգիա և անհապաղ հրավիրել Սեյմի նիստ:

Բոլոր առաջարկներն անցնում են միաձայն: Նույն օրը ժամը 7.-ին գումարվում է Սեյմի նիստը: Ես իմաստ չեմ տեսնում փոխանցել այդ նիստում հնչած բոլոր ելույթները: Նրանք բոլորն էլ եղել են բոցաշունչ, լի երկրի տրամադրությունը բարձրացնելու ցանկությամբ, բոլորն էլ չափազանց պերճախոս: Համեմատաբար ավելի զուսպ են եղել մահմեդականները: Նրանք խոստացել են աջակցություն, սակայն ոչ ուղղակի մաս-

տեմբերի 2-ը), Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունում և Խորհրդային Ադրբեջանում ՀՀ ներկայացուցիչ, դեսպան (1920թ.): Դիվանագիտական դժվարին ու վտանգավոր աշխատանքի այդ ասպարեզում աչքի է ընկել իր վճռականությամբ և սկզբունքայնությամբ ու, միաժամանակ, ճկունությամբ, խորը և սպառիչ վերլուծություններ տրամադրել ՀՀ կառավարությանը: Ի դեպ ավելորդ չէ այստեղ նշել, որ, ինչպես վկայում են Ս.Վրացյանի անձնական արխիվի մի շարք փաստաթղթեր, մինչև Ադրբեջանի խորհրդայնացումը այդ երկրի Արտաքին գործերի մինիստրության և Էրիվանում նրա դեսպանատան գաղտնի գրագրության կողմը վաղօրոք հայտնի է եղել Հայաստանի Հանրապետության հակահետախուզական մարմիններին և մինչև Ադրբեջանի խորհրդայնացումը այդ <<խողովակով>> ամբողջ գրագրությունը, փաստորեն, անցել է ՀՀ համապատասխան ծառայությունների հսկողության ներքո: Այդ մասին 1920թ. ամռանը ՀՀ իշխանությունները հրապարակումներ են արել նույնիսկ բաց մամուլում:

Հայտնի է, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1928թ. Մարտիրոս Հարությունյանը ձերբակալվել է Մոսկվայում և արտրվել Միչուրինսկ քաղաք: Հետագա ճակատագիրը մեզ անհայտ է (տե՛ս Ս.Բաբայան, Հուշամատյան..., էջ 367):

նակցություն (ի նպաստ հայերի կամ վրացիների): Առավել կրքոտ խոսել են վրացիները. Ծերեթեղի, Ջուղելի: Հետո՝ հայերը: Հարությունյանը “Դաշնակցության” անունից հայտարարել է, որ հայերի համար ընտրության տարբերակ չկա: Թուրքիան, միևնույնն է, գնալու է առաջին հերթին հայերին, ինչից հետո՝ վրացիներին ոչնչացնելու ճանապարհով: Եվ ըստ այդ էլ, ասել է Հարությունյանը. “Մեր ամբողջ ժողովուրդը, ով որ ընդունակ է զենք կրել, կգնա ռազմաճակատ՝ մեր հողը պաշտպանելու: Եթե մեզ վիճակվի լինել պարտված և եթե մենք զոհվելու ենք, ապա մենք՝ հայերս, զոհվելու ենք զենքը ձեռքներիս”:

Սոցիալ- դեմոկրատական կուսակցության ղեկավար և նրա հիմնադիր Ժորդանիայի՝ Վրաստանի ամենաազդեցիկ սոցիալ-դեմոկրատի առաջարկությամբ, Մեյմը միաձայն ընդունել է երկու բանաձև: Առաջինը. “Հաշվի առնելով, որ որ Անդրկովկասի և Թուրքիայի միջև սահմանների վերաբերյալ խաղաղ համաձայնությունը չի կայացել, Անդրկովկասի պատվիրակությանն առաջարկվում է անմիջապես վերադառնալ Թիֆլիս”:

Համաձայն Ժորդանիայի թված բացատրության, այդ բանաձևն ընդունելով, մենք պաշտոնապես հայտնվում ենք Թուրքիայի հետ պատերազմական վիճակում, ինչից ելնելով, Անդրկովկասում անհրաժեշտ է հայտարարել ռազմական դրություն: Առաջարկությունն ընդունվում է և պատերազմը վարելու համար ընտրվում է արտակարգ լիազորություններով օժտված, երեք անձից բաղկացած կոլեգիա հետևյալ կազմով. Նախագահ, նույն ինքը, ռազմական մինիստր Գեգեչկորի, ներքին գործերի մինիստր Նոյ Ռամիշվիլի և ֆինանսների մինիստր Կարճիկյան:

Այսպիսով, Թուրքիան և Անդրկովկասը պատերազմի մեջ մտան: Լույս ապրիլի 1-ի գիշերը Կառավարության նախագահ Գեգեչկորին Տրապիզոն է ուղարկել հետևյալ հեռագիրը, որը մենք ստացանք ռադիոկապով ապրիլի 1-ին առավոտյան ժամը 10-ին. “Հաշվի առնելով, որ Անդրկովկասի և Թուրքիայի միջև սահմանների վերաբերյալ խաղաղ համաձայնությունը չի կայացել, Անդրկովկասի պատվիրակությանն առաջարկվում է անմիջապես վերադառնալ Թիֆլիս”:

Ստանալով այդ հեռագիրը, մենք որոշեցինք հրաժեշտ տալ թուրքական պատվիրակությանը և անմիջապես բռնել հետդարձի ճանապարհը:

Մենք հրաժեշտ տվեցինք թուրքերին, ընդ որում, պատվիրակության բու-
լոր անդամների համաձայնությամբ, Չիենկեյին փորձեց ներշնչել թուր-
քական կողմին, որ մենք չենք “խզում” բանակցությունները, այլ ընդամե-
նը “ընդմիջում ենք” դրանք: Թեև երկու կողմն էլ հրաշալի հասկանում
էին, թե բանն ինչու՞մն է, սակայն երկու կողմն էլ ընդունելի համարեցին
հենց նման բանաձևումը: Ստանալով այդ հեռագիրը, մենք շատ շուտ հա-
վաքվեցինք և հենց նույն օրվա երեկոյան էլ հավաքեցինք խարիսխը:
Մենք Տրապիզոնից դուրս եկանք ապրիլի 2-ի գիշերը, նպատակ ունենա-
լով լույսով հասնել Բաթում: Տրապիզոնում, երբ մենք մոտենում էինք նա-
վամատույցին, հավաքված ժողովուրդը լուռ ու մռայլ մեզ էր նայում: Բա-
րեբախտաբար, որևիցե հուզման նշաններ չկային: Իսկ տեղի զինվորա-
կան իշխանությունները մեզ բավականին սիրալիր ճանապարհեցին:
Երեկոյան ժամը 10-ին մենք դուրս եկանք բաց ծով: Տրապիզոնի համաժո-
ղովն ավարտված էր: Մենք տուն էինք վերադառնում շատ ծանր զգա-
ցումներով: Խաղաղության փոխարեն, մենք մեր ժողովուրդներին, ակա-
մա, պատերազմ էինք բերում: Թեև մենք՝ պատվիրակներս, ամեննին
պատերազմի կողմնակիցներ չէինք: Որպեսզի ներկայացրած լինեմ բա-
նակցությունների ամբողջական պաշտոնական պատկերը, ես այստեղ
ընթերցողի սեղանին կդնեմ Տրապիզոնի բանակցությունների վերաբեր-
յալ մեր պաշտոնական զեկուցումը:

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ
Անդրկովկասյան Սեյմի պատվիրակության գեկուցումը
Թուրքիայի հետ վարած խաղաղ բանակցությունների
վերաբերյալ

Անդրկովկասյան Սեյմը, 1918թ. փետրվարի 16-ի իր նիստում միաձայն որոշեց, Թուրքիայի հետ խաղաղություն հաստատելու նպատակով, բանակցություններ վարելու համար ընտրել հատուկ պատվիրակություն, որի կազմը որոշվեց հենց հաջորդ օրը: Պատվիրակության կազմում ընտրվեցին. Նախագահ Ա.Ի.Չիսենկելի և անդամներ Աբաշիձե, Գաջինսկի, Հայդարով, Գվազավա, Քաջագունի, Լասխիշվիլի, Մեհտին, Խաս-Մամեդով, Խատիսով, Շեյխ-ուլ-Իսլամով: Ըստ կուսակցական պատկանելության պատվիրակության կազմը հետևյալն էր. 2 սոցիալ-դեմոկրատ, 2 դաշնակցական, 2 մուսավաթական, 1 մուսավաթի սոցիալիստական բլոկի ներկայացուցիչ, 1 Հումիետ խմբի ներկայացուցիչ, 1 սոցիալ-ֆեդերալիստ, 1 նադամ Ռուսաստանի մահմեդականների կուսակցության անդամ, և 1 նացիոնալ-դեմոկրատ:

Պատվիրակության մեկնումը Տրապիզոն ձգձգվում էր այն պատճառով, փետրվարի 17-ին խաղաղ բանակցությունների ռուսական պատվիրակության քարտուղար Կարախանից ստացվել էր մի հեռագիր, որով տեղեկացվում էր, որ հաջորդ օրը կայանալու է Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրումը, համաձայն որի, Բաթումը, Կարսն ու Արդահանը անցնում են Թուրքիային:

Չունենալով որևիցե տեղեկություն Օտոմանյան Կառավարության դիրքորոշման վերաբերյալ, պատվիրակությունը ստիպված էր Թիֆլիսում սպասել այդ կապակցությամբ Տրապիզոն և թուրքական Ջորակայան ուղարկված հարցման պատասխանին: Միայն փետրվարի 22-ին Տրապիզոնի ամրացված շրջանի հրամանատար, գեներալ Կոլոսովսկուց տեղեկություն ստացվեց, որ այդ օրը սպասվում է թուրքական պատվիրակության ժամանումը Տրապիզոն: Նույն օրը պատվիրակությունը մեկնեց Բա-

թում: Այնտեղից էլ՝ “ԱՐՔԱ ԿԱՐԼ” հաճանավով դեպի Տրապիզոն, ուր հասավ փետրվարի 23-ի երեկոյան:

*) Ձեկուցման մեջ բոլոր տարեթվերը նշված են հին տոմարով:

Մինչև փետրվարի 27-ը պատվիրակությունը շարունակում էր մնալ “ԱՐՔԱ ԿԱՐԼ” նավի վրա: Պատճառն այն էր, որ Տրապիզոնի վալին պահանջել էր, որպեսզի մեր պատվիրակությանն ուղեկցող 50 հոգանոց պահակախումբը զինաթափվի: Թուրքերը համարում էին, որ մենք իրենց հյուրերն ենք և խաղաղության առաքելությամբ ժամանած պատվիրակությունը չպետք է ուղեկցվի զինված անձանցով: Մինչդեռ, Անդրկովկասյան պատվիրակությունը մնում էր այն տեսակետին, որ Տրապիզոնը չէզոք բնակավայր է, որն իրավաբանորեն չի պատկանում ո՛չ Ռուսաստանին և ո՛չ էլ Թուրքիային, ուստիև պատվիրակությունը չի կարող իրեն սահմանափակված համարել ինչ-ինչ պայմաններով: Հարցը մնաց բաց, մինչև փետրվարի 27-ին թուրքական պատվիրակության Տրապիզոն ժամանելը: Ճիշտ այն պահին, երբ Անդրկովկասյան պատվիրակությունը, երեք օր սպասելուց հետո, պատրաստվում էր արդեն վերադառնալ Բաթում և արդեն այնտեղ սպասել Կոստանդնուպոլսից թուրքական պատվիրակության ժամանմանը: Նույն օրը, ցերեկվա ժամերին, պատվիրակությունների ներկայացուցիչների փոխադարձ այցելություններից հետո, կայացավ նախագահների հանդիպումը, որի ընթացքում թուրքական կողմին գրավոր հարցում արվեց, թե Վեհիբ-փաշայի կողմից ուղարկված Կարսը, Բաթումը և Արդահանը դատարկելու պահանջը արդյո՞ք նշանակում է, որ թուրքական կողմը հրաժարվում է բանակցություններից: Չտալով գրավոր պատասխան, Օտոմանյան պատվիրակության նախագահը հայտարարեց, որ թուրքական պատվիրակության Տրապիզոն ժամանելը պայմանավորված է Անդրկովկասի հետ բանակցություններ վարելու Բարձր Դռան ցանկությամբ, իսկ Վեհիբ-փաշայի պահանջների մասին իրեն ոչինչ հայտնի չէ: Նույն օրվա երեկոյան Անդրկովկասյան պատվիրակությունը նավից տեղափոխվեց իրեն հատկացված շենք, իսկ պահակախումբը մնաց նավի վրա:

Համաժողովի բացումը տեղի ունեցավ մարտի 1-ին: Ընդհանուր առմամբ, համաժողովում կայացել է 6 լիազումար նիստ և 2 մասնավոր

խորհրդակցություն: Համաժողովում նախագահում էր Օտոմանյան պատվիրակության նախագահ Ռաուֆ-բեյը:

Մնալով իր այն կարծիքին, որ իրականում Տրապիզոնը չեզոք բնակավայր է և հայտարարելով, որ համաժողովում նախագահելը պետք է հերթով իրականացվի երկու պատվիրակությունների կողմից, Անդրկովկասյան պատվիրակությունը, այնուամենայնիվ, գիտակցելով իր առաքելության կարևորությունը, որոշեց հարցը չհասցնել ընդհարման և հանեց հերթով նախագահելու վերաբերյալ իր առաջարկությունը:

1/ Նախքան համաժողովի բացումը, նախագահների միջև կայացած կիսապաշտոնական գրույցներից պարզ դարձավ, որ թուրքական Կառավարությունը “ցանկանում է եղբայրական երկարատև խաղաղության պայմանագիր կնքել Անդրկովկասի հետ”, և, որ “այդքան վերքերից հետո պետք է գա ապաքինումը”, և, որ “թուրքական պատվիրակությունը Տրապիզոն է ժամանել խաղաղություն և հավերժ բարեկամություն կնքելու լիազորություններով և ցանկությամբ”: Սակայն, Օտոմանյան պատվիրակության նախագահի ներկայացրած պաշտոնական լիազորություններին վերաբերող փաստաթղթերում ընդամենն ասվում էր, որ իր գլխավորած պատվիրակությունով Տրապիզոն ժամանած Ռաուֆ-բեյը, համաձայն իրեն տրված հրահանգների, լիազորված է Կայսերական Կառավարության անունից Տրապիզոնում “ներկայանալ Կովկասի հանրապետական կառավարությանը”:

2/ Համաժողովի հենց առաջին նիստում Օտոմանյան պատվիրակությունը Անդրկովկասյան պատվիրակությանը ուղղեց հարցում, որտեղ, նշելով “Կովկասում ձևավորման ընթացքում գտնվող հանրապետության հետ” բարիդրացիական հարաբերություններ /չհիշատակելով խաղաղության մասին/ հաստատելու իրենց անկեղծ մտադրությունների մասին, խնդրվում էր իրենց ներկայացնել սպառիչ տեղեկություններ այդ Հանրապետության ձևի, բովանդակության, նրա վարչական և քաղաքական կազմակերպման ու կառուցվածքի վերաբերյալ: Երկրորդ նիստում Անդրկովկասի պատվիրակության ընթերցած պատասխան հայտարարությունում նշվում էր, որ բուլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում կազմավորվել է նոր ինքնուրույն կառավարություն, որը պատաս-

խանատու է Մեյմի առաջ և, որ Անդրկովկասն արդեն իսկ իրենից ներկայացնում է իրենից մի պետություն, որն արդեն իսկ մուտք է գործել միջազգային հարաբերությունների ոլորտ և իր բողոքն է արտահայտել Բրեստի պայմանագրի կապակցությամբ, որը կնքվել է առանց իր գիտության: Մեր կողմից նվել է նաև, որ այդ պետությունը դեռևս համապատասխան

2/Տե՛ս. № 56.

հայտարարությամբ հանդես չի եկել և անհրաժեշտ հայտագրերով իր անկախացման մասին Տերություններին դեռևս չի ծանուցել:

3/ Չբավարարվելով այդ բացատրություններով, Օտոմանյան պատվիրակությունը համաժողովի 3-րդ նիստում ներկայացրեց նոր հայտարարություն, որտեղ, չժխտելով, որ երկու պետությունների միջև կնքած պայմանագրերը չպետք է որևիցե ազդեցություն ունենան երրորդ պետության հանդեպ, ընդգծվում էր այն հանգամանքը, որ եթե Անդրկովկասը ցանկանում է օգտվել միջազգային իրավունքի այդ նորմից, պետք է քայլեր ձեռնարկի մյուս բոլոր տերությունների կողմից որպես անկախ պետություն ճանաչված լինելու ուղղությամբ: Ընդ որում, միաժամանակ տեղեկացվում էր, որ. “Ճանաչումը չի կարող ունենալ հետադարձ ուժ և, որ Անդրկովկասի Կառավարությունը հունվարի 23-ի իր հեռագրում հայտնելով իր գործողությունները Ռուսաստանյան Հանրապետության տարածքային միասնություն կազմող մյուս միավորների կառավարությունների հետ համաձայնեցնելու անհրաժեշտության մասին, և հրաժարվելով իր ներկայացուցիչներին ուղարկել Բրեստի համաժողով, դրանով իսկ իրեն համարեց ոչ թե անկախ պետություն, այլ՝ Ռուսաստանի Դաշնային Հանրապետության անդամ”:

Հիմնվելով այդ դատողությունների վրա, Օտոմանյան պատվիրակությունը Անդրկովկասի պատվիրակության հայտարարությունը այն մասին, որ Կովկասին առնչվող մասով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը անօրինական է, իր համար հայտարարեց անընդունելի: Միաժամանակ մեկ այլ հայտարարությամբ թուրքական պատվիրակությունը խնդրում էր պաշտոնապես ներկայացնել Անդրկովկասյան պետության կառավարման ձևը, նրա տածության սահմանները, պետական լեզուն և կրոնը, ինչ

պես նաև հստակ ներկայացնել Անդրկովկասի Կառավարության դիրքորոշումը Օտոմանյան Կայսրության հանդեպ:

Պատասխանելով այդ հայտարարությանը և չհամաձայնվելով Օտոմանյան պատվիրակության եզրակացությունների հետ, Կովկասի մասով Բրեստի պայմանագրի օրինական լինելու վերաբերյալ, Անդրկովկասյան պատվիրակությունը 4-րդ նիստում մատնանշեց, որ Օտոմանյան Կառավարությունը, հունվարի 1/14 իր

Յ/Տե՛ս. № 58.

հրամանատարության միջոցով դիմելով Անդրկովկասի Կառավարությանը՝ Անդրկովկասի հետ խաղաղ հարաբերություններ հաստատելու նկատառումներով, հենց ինքն էր անվանում այն անկախ: Իսկ հետագայում, պատասխանելով Անդրկովկասի Կառավարության այն հաղորդմանը, թե վերջինիս գործողություններն անհրաժեշտ է համաձայնեցնել Ռուսաստանի մյուս ինքնավար միավորների կառավարությունների կարծիքների և տեսակետների հետ, Օտոմանյան Կառավարությունը տեղեկացրել է, թե պատրաստ է իր պատվիրակներին ուղարկել “վերջնական խաղաղ բանակցությունների” և Վերջնական խաղաղության համաձայնագիր ստորագրելու համար”: Դրա հետ մեկտեղ Անդրկովկասյան պատվիրակությունն հայտարարել է, որ երկու պատվիրակությունների Տրապիզոնում գտնվելու փաստը ինքն իրենով արդեն հանդիսանում է ապացույց այն բանի որ երկու կողմերն էլ անընդունելի են համարում Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, և որ բանակցությունների ծանրության կենտրոնը պետք է տեղակայված լինի ոչ թե ձևական-իրավական բանավեճի տիրույթում, այլ գործի բուն էության մեջ: Առավել ևս, որ պայմանագրի վավերացման դեպքում, անկախ Անդրկովկասյան Կառավարությունը կիրականացնի միջազգային իրավունքի պահանջներից բխող ձևական բոլոր գործառույթները: Ըստ այդմ էլ, Անդրկովկասյան պատվիրակությունը պնդում էր, որպեսզի կողմերը կենտրոնանան այն կոնկրետ առաջարկությունների քննարկման վրա, որոնք, երկու պատվիրակությունների կարծիքով, պետք է ընկած լինեն Անդրկովկասյան և Օտոմանյան պետությունների միջև ամուր խաղաղության հիմքում:

5/ Միաժամանակ թուրքական կողմին ներկայացվեցին սեղմ տեղեկություններ Անդրկովկասի տարածքում կառավարման ձևի վերաբերյալ և այլն: Ի պատասխան, այդ նույն նիստում հետևեց Օտոմանյան պատվիրակության ընդարձակ գրավոր մի հայտարարություն: Օտոմանյան պատվիրակության կարծիքով, այն բողոքը, որ ներկայացվում է դեռևս պետությունների ցուցակ չմտած նոր կազմվող պետական օրգանիզմի կողմից ընդդեմ միջազգային ակտ հանդիսացող պայմանագրի պարտավորությունների նկատմամբ չի կարող ունենալ որևիցե իրավական ուժ,

5/ Տե՛ս. №65:

Անկախ նրանից, թե այդ բողոքը նախորդ[՞] ւմ, թե[՞] հաջորդում է պայմանագրի ստորագրմանը: Ի դեպ, թուրքական պատվիրակությունը հայտարարեց նաև, որ “տվյալ բանակցությունները սկսելը չի հետապնդում և որևիցե այլ նպատակ, բացի կողմերի միջև տնտեսական և առևտրային հարաբերությունների հիմքեր դնելը և դրանց տեխնիկական մանրամասները որոշելը, ինչը դուրս է մնացել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի հանձնառությունների շրջանակից և ինչը ամենևին չի նշանակում հրաժարումը այդ պայմանագրի նշանակությունից”:

6/ Սակայն, մնալով իր նախկին տեսակետին, Անդրկովկասյան պատվիրակության համաժողովի 5-րդ նիստին Թուրքական պատվիրակությանն առաջարկեց փետրվարի 17-ին Սեյմի մշակած սկզբունքների 4 կետերը և կրկնեց իր հայտարարությունն այն մասին, որ պայմանագիրը վավերացնելու դեպքում անկախ Անդրկովկասյան պետությունը կիրականացնի նման դեպքերում միջազգային իրավունքով նախատեսված բոլոր պաշտոնական գործառնությունները:

7/ Օտոմանյան պատվիրակությունը ամենաեռանդուն ձևով պայքարում էր ընդդեմ 4-րդ կետի /Արևելյան Անատոլիայի ինքնորոշում/, տեսնելով դրանում իրենց երկրի ներքին գործերին միջամտելու միտում և հայտարարեց, որ Կովկասյան հանրապետության պաշտոնական և վերջնական ճանաչումը կարող է տեղի ունենալ միայն ու միայն նախատեսվող պայմանագրում համապատասխան առանձին դրույթի առկայության դեպքում, և որ բանակցություններն այդ պայմանագրի շուրջ կա-

րող են սկսվել միայն Անդրկովկասի կողմից Կարսի, Բաթումի և Արդահանի սանջակների հանդեպ բոլոր հավակնություններից հրաժարվելու պարագայում:

8/ Այդ հայտարարությունից հետո, երկու կողմերի համաձայնությամբ, համաժողովի նիստերում հայտարարվեց ընդմիջում՝ մինչև համապատասխան կառավարություններից հետագա հրահանգներ ստանալը:

Նույն օրը, մարտի 22-ին, պատվիրակության մի մասը [տեքստը խզված է]... Անդրկովկասյան պատվիրակության նախագահը, հիմք ընդունելով պատվիրակության միաձայն որոշումը, պատասխանեց Ռաուֆ-բեյին, որ Անդրկովկասյան պատվիրակությունն ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

6/Տե՛ս № 66. 7/ Տես № 67. 8/ Տես № 68.

14/ Դրանից հետո, մարտի 31-ին, Ռաուֆ-բեյը հայտարարեց, որ Օսմանյան Կառավարությունը, տեղեկանալով, որ Անդրկովկասն ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, անհրաժեշտ է համարում դաշնակից ներին նույնպես մասնակից դարձնել այս «բարեկամության պայմանագրի» բանակցություններին, ինչի համար պարտադիր է, որպեսզի Անդրկովկասը հայտարարի իր անկախացման մասին:

15/ Ապրիլի 1-ի առավոտյան մեր պատվիրակությունը Կառավարության կողմից հետ է կանչվել, քանզի որևիցե համաձայնություն բանակցությունների արդյունքում չի գրանցվել:

16/ Նույն օրը պատվիրակությունը մեկնեց Թիֆլիս: Ընդ որում, Թուրքական պատվիրակությանը հրաժեշտ տալիս, մասնակի խորհրդակցության ժամանակ հաստատվեց, որ երկու պատվիրակություններն էլ ստեղծված իրավիճակը չեն համարում բանակցությունների խզում, այլ, ընդամենը, ընդմիջում համաժողովի նիստերում:

ԳԼՈՒԽ VI

Թուրքիայի պատերազմը Անդրկովկասի հետ և Բաթումի բանակցությունները (1ապր. -26 մայիսի 1918թ.)

Ապրիլի 2-ի կեսօրին մենք մոտենում էինք Բաթումին: Մենք ուշադիր ու հետաքրքրված հեռուն էին նայում: Հոգիներս անհանգիստ էր: Մենք գիտեինք, որ նախորդ օրը ներկայացվել էր Բաթումը հանձնելու վերջնագիրը, իսկ պատվիրակության հետ կանչելը նշանակում էր ռազմական գործողությունների վերսկսում: Պարզ, արևոտ օր էր: Թափանցիկ օդը հնարավորություն էր տալիս պարզորոշ տեսնել բավականին հեռուն: Մենք զինվեցինք հեռադիտակներով: Հանկարծ նավապետը մոտենում է ինձ ու Չխենկելուն և հուզված ասում. "Բերդի վրա թուրքական դրոշ է: Քաղաքը թուրքերի ձեռքում է: Մեզ չի կարելի մոտենալ նավահանգստին": Իրոք, մենք էլ նկատեցինք կիսալուսինն ու աստղը ամրոցի բերդամասերի վրա: Քաղաքը գրավված էր թուրքերի կողմից: Խորհրդակցելով, մենք որոշեցինք հանգրվանել Փոթիի նավամատույցում: Մի քանի ժամ հետո մենք կանգնեցինք Փոթիի նավամատույցում: Փոթիին մոտենալով մենք նկատեցինք մի շարք խոտանված նավեր, շարժիչներով նավակներ, փոքր առագաստանավեր, որոնք լցված էին Բաթումից փախած վրացի զինվորներով: Նավամատույցում, ժողովրդի մի հսկա զանգված՝ իրենց իրերով, տան պարագաներով ու ինչքով: Իրենց իրերի հետ այդտեղ հայտնված անձինք փախստականներ էին. մի մասը Փոթի էր փախել-էկել Բաթումից, մի մասը՝ Սամտրեդիից: Սովորական փախստական պատկեր. Մարդիկ փախչում են թուրքական արշավանքից: Փախստականների հետ խառնվել էին նաև վրացական բանակի զինվորները: Մենք նավից ափ իջանք: Մեզ միանգամից շրջապատեցին տեղի բնակիչները՝ հայեր, վրացիներ. վախեցած դեմքեր, անհանգստություն ապագայի համար: Պատերազմը մոտենում էր նաև այս մարդկանց: Մենք շտապում էինք հասնել Թիֆլիս, նստեցինք գնացք և մեկնեցինք: Երեկոյան կողմ

մենք մոտեցանք Բաթում – Թիֆլիս մայրուղու հանգուցային Սամտրեդի կայարանին: Սամտրեդիից դեպի Փոթի հատվածը ճյուղավորման երկրորդական գիծն է: Ժամանելով Սամտրեդի կայարան, մենք տեսանք, որ կայարանում մեծ հանրահավաք է: Հանրահավաքի մասնակիցները Բաթումից փախած զինվորներն էին: Նրանց առջև ելույթ էր ունենում Թիֆլիսից այստեղ ժամանած Ժորդանիան, որը հաստատում էր թուրքական հարձակման փաստը: Նրա հետ էր նաև “եռապետության” անդամ Նոյ Ռամիշվիլին և Սեյմի մի քանի անդամներ: Զինվորներին համոզում և հորդորում էին: Նրանց շուրջ կանգնած էր գյուղացիների մի զանգված: Պատկերը բավականին տխրալի էր: Իմ կասկածներն իրականանում էին: Թիֆլիսից ժամանածների հետ միասին մենք վերադառնում էինք Թիֆլիս: Վագոնում թիֆլիսեցիները մեզ մանրամասնորեն հարցնում էին թուրքական ուժերի վերաբերյալ մեր տպավորություններից, նրանց մարտունակության մասին: Ասում էին, որ հույս ունեն Բաթումի ուղղությամբ ամրացնել ռազմաճակատը: Ապրիլի 3-ի առավոտյան հասանք Թիֆլիս: Պարզվեց, որ ապրիլի 1-ի գիշերը թուրքերը Բաթումը գրավել են, փաստորեն, առանց կռվի: Եթե չեմ սխալվում, վրացիների կողմից եղել էր ընդամենը մեկ սպանված: Քաղաքի պատվիրակությունը դուրս է եկել թուրքական զորքին ընդառաջ՝ ողջունելով նրանց մուտքը քաղաք: Բաթումի ամրոցի պարետ, գեներալ Գեդեվանովն իր շտաբով և 1-ին վրացական դիվիզիայի հրամանատար, գեներալ Արտմելաձեն իր շտաբով գերի էին ընկել: Թուրքերը, գրավելով Բաթումը, սկսեցին շարժվել Օգուրգեթի ուղղությամբ: Ապրիլի 5,6, 7,8,9 –ին ոչ էական ընդհարումներ էին տեղի ունեցել Չոլախ գետի կարմջի և Օչխամուրի գետակի մոտ: Վուրչեթի քաղաքը թուրքերը նույնպես գրավել էին: Այստեղ նրանց էին միացել տեղի թաթարները և գրավել էին ամառային հայտնի առողջարան Աբասթումանը, որի բնակիչները փախել էին Թիֆլիսի ուղղությամբ:

Միաժամանակ Սարիդամիշի ուղղությամբ թուրքերը ստիպել էին նահանջել հայկական զորամասերին, իսկ ռուսական Պրոխլադնոյե և Բաշկադիքլար գյուղերի շրջաններում սկսել էին կազմավորվել քրդերի հրոսակախմբեր: Սկսվեց իսկական պատերազմ: Ապրիլի 3-ին, հենց որ պատվիրակությունը ժամանեց Թիֆլիս, նրա անդամներն սկսեցին ամեն

մեկը իր կուսակցությանը, քաղաքական գործիչներին և Մեյմի անդամներին ծանոթացնել Տրապիզոնում կայացած բանակցությունների ընթացքին: Անմիջապես տեսանելի դարձավ տարբեր ազգությունների և կուսակցությունների վերաբերմունքների տարբերությունը բռնկված պատերազմի նկատմամբ: Վրացիները չէին սպասում, որ Բաթումն այդքան շուտ կընկնի, և դա նրանց շատ էր շշմեցրել: Պատերազմը նրանց զանգվածներում “համբավ” չէր վայելում: Մահմեդականները,- ինչպես և Թուրքիայի հետ բոլոր պատերազմների ժամանակ,- հոգով ու սրտով թուրքերի հետ էին: Եվ կրկին դրության ամբողջ ծանրությունն ընկնում էր հայերի վրա: Հայերի գիտակցության մեջ սկսեց պարզորոշ դառնալ այն հանգամանքը, որ բռնկված պատերազմը չի լինելու պատերազմ Թուրքիայի և Անդրկովկասի միջև, այլ լինելու է գուտ հայ-թուրքական պատերազմ:

Նախևառաջ, անհրաժեշտ էր պարզել ու հասկանալ, թե հանուն ինչի է վարվելու այդ պատերազմը: Հայերի համար դա հավերժական հայ-թուրքական վեճի փուլերից մեկն էր և պայքար էր Կարսի համար: Վրացիների համար պատերազմը նշանակում էր փրկել Բաթումը: Նրա անկումով պատերազմը նրանց համար կորցնում էր իր իմաստը: Մահմեդականների համար, ինչպես և ցանկացած ռազմական ընդհարում իրենց ցեղակից ու հավատակից Թուրքիայի հետ, այդ պատերազմն ուներ կառուցողական նշանակություն: Նման պարագաներում հարկ էր լրջորեն մտածել հայերի և, մասնավորապես, “Դաշնակցություն” կուսակցության կողմից կայուն ու կարծր դիրքորոշում զբաղեցնելու մասին: Առավել ևս, որ հենց “Դաշնակցության” վրա էր միշտ ընկնում հիմնական պատասխանատվությունը, քանզի հենց այդ կուսակցությունները տարիներ շարունակ իրենց հետևից տարել են հայության զանգվածները, և այդ զանգվածների կողմից էր նա միշտ ստացել լիարժեք վստահություն:

Ռազմաճակատային իրադրությանը ծանոթանալու և կուսակցության հեղափոխական տարբեր գործիչների հետ խորհրդակցելու նպատակով, “Դաշնակցությունից” Մեյմի, կառավարության և պատվիրակության անդամները երկու օրով՝ ապրիլի 5,6-ին մեկնեցին Ալեքսանդրապոլ: Խորհրդակցությունում տիրում էր բավականին խրոխտ տրամադրությո-

յուն: Մեր ընկերները ռազմաճակատից ուղարկում էին բավականին հուսադրող լուրեր: Ես, որպես Ալեքսանդրապոլի քաղաքագույն, հրավիրեցի քաղաքային Դումայի արտահերթ նիստ, ծանոթացրեցի եղած իրադրության հետ և ապրիլի 7-ին մեկնեցի Թիֆլիս: Որոշվեց շարունակել դիմադրությունը և ուժեղացնել աշխատանքը ռազմաճակատի ամրապնդման ուղղությամբ:

Հասնելով Թիֆլիս, մենք այնտեղի տրամադրությունները տեսանք ավելի անկուսային, քան օրեր առաջ էր: Վրաց մենշևիկների միջավայրում սկիզբ էր առել անմիաբանությունը: Նրանք զգում էին, որ Բաթումի անկումից հետո վրաց զանգվածները, առհասարակ, չէին ցանկանում շարունակել պատերազմը: Սյուս կողմից, նրանք այլ միջոց էին գտել թուրքերից իրենց անվտանգությունն ապահովելու համար: Այդ միջոցը կայանում էր Գերմանիայի հետ համաձայնության հասնելու մեջ: Այդ գործոնը հսկայական դերակատարում ունեցավ դեպքերի հետագա զարգացման հարցում:

Գործը նրանում է, որ Տրապիզոնի համաժողովի օրերին Տրապիզոն ժամանեցին երեք խորհրդավոր գերմանացի սպա: Նրանք այցելեցին թուրքերին և տեսակցեցին Չիսենկելուն: Այդ տեսակցության մասին Չիսենկելին պատվիրակությանը պաշտոնապես չգեկուցեց, իսկ ինձ տեղեկացրեց, որ դրանք մասնավոր անձինք են, որոնք որոշակի հետաքրքրություն են ցուցաբերում Ճիաթուրայի մանգանի նկատմամբ: Ես քանիցս տեսել եմ այդ գերմանացիներին, բայց հետները չեմ զրուցել:

Թիֆլիս գալուց հետո Չիսենկելին, որպես Տրապիզոնյան պատվիրակության նախագահ, շարունակեց իր գործունեությունը, սակայն առանց Պատվիրակության անդամների որևիցե մասնակցության: Նախորդ գլխում ես արդեն հիշատակել եմ, որ Տրապիզոնից մեկնելուց առաջ պ-ն Չիսենկելին ջանում էր Ռաուֆ-բեյին հավատացնել, որ բանակցություններում տեղի է ունենում ընդամենը “ընդմիջում”: Պաշտոնական փաստաթղթում, որով մեր պատվիրակությունը տեղեկացնում էր Տրապիզոնից իր մեկնելու մասին, ասվում էր. “ Տրապիզոն, 1 ապրիլի 1918: Անդրկովկասյան պատվիրակությունը պատիվ ունի հայտնելու Օտոմանյան կայսերական պատվիրակությանը, որ համաձայն իր կառավարություն-

նից ստացած հրահանգների, ինքը անհրաժեշտաբար այսօր մեկնելու է Թիֆլիս: Անդրկովկասյան պատվիրակության նախագահ Ակ. Չխենկելի՝: Օգտվելով պատվիրակության նախագահի իր կոչումից և հիմնվելով այն հանգամանքի վրա, որ վերոնշյալ թղթի տեքստն ասում էր, որ պատվիրակությունն ընդամենը “մեկնում է” Թիֆլիս, Չխենկելին շարունակում էր իր շփումները թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշայի հետ: Այդ շփումներն ինքը իրականացնում էր, անկասկած, միայնակ: Այդ շփումների մասին շատ էր խոսվում Կովկասում, իսկ հայկական շրջանակներում շատ բուռն զայրույթ կար Կարսի հանձնման վերաբերյալ նրա ինքնուրույն արձակած հրահանգի կապակցությամբ: Ես կաշխատեմ ամենայն օրյեկտիությամբ այդ, այնքան էլ ոչ պարզ օրերի՝ 1918թ. ապրիլի 7-13 –ը դեպքերի ընթացքի մեջ տեղադրել այն ամենը, ինչը ես անձամբ գիտեմ և տեսել եմ:

Նախևառաջ, ինչ է տեղի ունեցել այդ չորս օրերի ընթացքում: Տեղի են ունեցել հետևյալ չորս իրադարձությունները:

Առաջինը՝ փոխվել է Կառավարությունը: Գեգեչկորու կառավարության փոխարեն, ապրիլի 13-ին Մելի առջև հայտնվեց Չխենկելու կառավարությունը: Ինչպես տեղի ունեցավ այդ փոփոխությունը:

Երկրորդը՝ Անդրկովկասը ապրիլի 9-ին հայտարարեց իր անկախությունը և անջատվեց Ռուսաստանից: Ինչո՞ւ և ինչպե՞ս դա տեղի ունեցավ:

Երրորդը՝ Չխենկելու հրամանով և հեռագրով Կարսը հանձնվեց թուրքերին: Ինչու և ինչպես կարող էր դա տեղի ունենալ:

Եվ չորրորդը՝ Չխենկելին և Վեհիբ-փաշան նամակներ էին փոխանակում խաղաղ բանակցությունները վերսկսելու վերաբերյալ, ընդ որում, ապրիլի 9-ին Վեհիբ-փաշան Տրապիզոնից տեղեկացնում է Չխենկելուն, որ ստացել է վերջինիս “հարգարժան” նամակը և հարցնում է խաղաղ բանակցությունները վերսկսելու միջոցների մասին: Ո՞ւմ անունից էին ընթանում այդ բանակցությունները:

Այս բոլոր չորս պարագայում էլ ինձ վիճակված է եղել ունենալ որոշակի դերակատարում, ուստիև կաշխատեմ լուսաբանել փաստերն այնպես, ինչպես որ ես դրանք տեսել եմ: Այս բոլոր հարցերը կապակց-

ված են միմյանց հետ՝ վրացիների մոտ պատերազմը շարունակելու հարցում տրամադրության անկման հանգամանքով: Այդ իսկ պատճառով եռապետության անդամներ Գեգեչկորին և Կարճիկյանը սկսեցին մի կողմ քաշվել, իսկ խաղաղության և Անդրկովկասի անկախության կողմնակից Չխենկելին սկսեց դառնալ կենտրոնական կերպար: Նա գլխավորեց Կառավարությունը, հրահանգավորեց, որպեսզի ի կատարումն ընդունվեն Բրեստ-Լիտովսկի պայմանագրի բոլոր պահանջները: Դրա ուղղակի հետևանք էլ եղավ Կարս քաղաքն ու ամրոցը հանձնելու նրա հրահանգը: Եվ դա նա կատարեց ավելի վաղ, քան նրա գլխավորած կառավարությունը կստանար Մեյմի վստահությունը: Այդպիսին է այդ օրերի իրադարձությունների հիմնականախար:

Վերադառնալով դեպքերի ժամանակագրական հաջորդականությանը, պետք է ասել, որ ռազմաճակատում ապրիլի 7-ի անհաջողություններից և հոգուտ Անդրկովկասի անկախացման և խաղաղության տարվող քարոզչությունից հետո, վրաց մենշևիկների ճամբարում հստակ նշանավորվեցին երկու հոսանքներ. Մեկը գլխավորում էին Գեգեչկորին և Ժորդանիան, մյուսը՝ Չխենկելին և Ռամիշվիլին: Առաջինները դեմ էին անկախություն հայտարարելուն և կողմ էին պատերազմը շարունակելուն: Երկրորդները կողմ էին անկախություն հայտարարելուն և դեմ էին պատերազմը շարունակելուն:

Դաշնակցությունում: դեմ էին անկախություն հայտարարելուն և կողմ էին արտահայտվում դիմադրությունը շարունակելու հարցում, այսինքն՝ կողմ էին պատերազմին, քանզի թուրքերի անարգել առաջխաղացումը կնշանակեր հայ ազգի կոտորվելը: Այսպիսիք էին հոսանքները: Վրաց մենշևիկների միջև բանավեճը հակառակն էր: Այդ բանավեճի կենտրոնը մենշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեն էր: Ձայները բաշխվում էին գրեթե հավասար: Այդ պահը ինչպես “Դաշնակցության”, այնպես էլ մենշևիկների համար, վճռական էր: Չէ՞ որ այդ երկու կուսակցությունները, որպես հայ և վրացի ժողովուրդների մտքերի տիրապետող, իրենց ծրագրերում միշտ էլ կողմ են եղել Կովկասի միասնությանը Ռուսաստանի կազմում: “Դաշնակցության” բանաձևը հետևյալն էր. “դաշնային Կովկասը դաշնային Ռուսաստանի կազմում”, բայց

ոչ երբեք՝ “անկախ Կովկաս”։ Վրացի մենշևիկները միշտ էլ եղել են մուլի կենտրոնամետ և կոշտ պայքար էին վարում այլ վրացական կուսակցությունների հետ հենց այդ հողի վրա։ Ինքը՝ կուսակցության հիմնադիր Ժորդանիան կենտրոնամետ էր, միասնական ժողովրդավարական Ռուսաստանի կողմնակից։ Հայերի մոտ “Դաշնակցության” բոլոր գործիչներն էլ Ռուսաստանի հաջողությունների հետ էին կապում ոչ միայն կովկասահայերի ճակատագիրը, այլ նաև ինքնին արևմտահայերի՝ թուրքի լծից ազատագրման հնարավորությունը։ Ես հիշում եմ, թե ինչպես 1906թ. Պալատում ես էլույթ ունեցա այդ թեմայով և համաձայնության բազմաթիվ ստացված հեռագրերը վկայում ու հաստատում էին, թե որքան խորն է այդ միտքը նստած հայերի գիտակցության մեջ։ Անցած տասներկու տարիների ընթացքում տեղի չէր ունեցել և ոչ մի իրադարձություն, որը մերժեր ու հերքեր այդ դրույթը։ Իսկ այժմ մեր առջև կանգնած էր Ռուսաստանից անջատվելու հարցը։

Կասկածից վեր է, որ իրականությունը, այն է՝ ռազմաճակատից ռուսական զորքի հեռանալը, Ռուսաստանում բոլշևիկյան վարչակարգի հաստատումը, թուրքերի համառությունը Անդրկովկասի անկախացման հարցում և գերմանական հովանավորությունը վրացիների նկատմամբ, դրանք փաստեր էին, որոնք ազդում էին մարդկանց գիտակցության վրա։ Ժորդանիայի կուսակցության վրացիների հայեցակարգը հետևյալն էր. Ռուսաստանի ներկայիս իրավիճակը ժամանակավոր բնույթ է կրում, նա շուտով կվերականգնվի և վրացական ու ռուսական դեմոկրատիաների գաղափարները կրկին կմիավորեն այդ ազգերը։ Կենտրոնամետության մեջ նրանք կգտնեն դասակարգային կարիքների և, միաժամանակ՝ դեմոկրատական զարգացումների պատասխանները։ Նրա հակառակորդներն ասում էին. Ռուսաստանը շատ երկար ժամանակով է գնացել Կովկասից։ Նա գտնվում է շատ խորը ճգնաժամում։ Իսկ ռազմաճակատում թուրքերն են, որոնք այսօր սպառնում են ժողովրդի ֆիզիկական գոյությանը։ Անհրաժեշտ է խաղաղություն։ Գերմանացիները խոստանում են իրենց հովանավորությունը։ Թուրքերին և գերմանացիներին անհրաժեշտ է ապացուցել, որ մենք ընդունակ ենք մեր սեփական կողմնորոշմանը, հետևաբար, անհրաժեշտ է իրավաբանորեն անջատվել Ռուսաստանից,

կնքել խաղաղության պայմանագիր և սկսել ապրել նոր, առանձնակի կյանքով: Երկու օր տևած թեժ վեճերից հետո, 9-ը ձայնով 7-ի դեմ մեծամասնությամբ Վրաստանի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության Կենտրոնական Կոմիտեն արտահայտվեց Անդրկովկասի անկախացման օգտին և, հետևաբար, այդ հոսանքի ղեկավար Չխենկելու իշխանության բարձունքին գտնվելու, ուստի՝ Թուրքիայի հետ բանակցությունները վերսկսելու օգտին:

“Դաշնակցություն” կուսակցության ներսում նման թեժ վեճեր չարձանագրվեցին: Այդ կուսակցության ուզածը մեկն էր. անդրկովկասյան ազգերի համերաշխություն, որպեսզի հայերը միայնակ չմնան թուրքերի հետ դեմ առ դեմ: Կուսակցությունը չէր ցանկանում իր վրա վերցնել Չխենկելու գլխավորած հոսանքի ընդունած որոշմանը հակառակվելու և հակադդելու ամբողջ պատասխանատվությունը, քանզի, հակառակ դեպքում նա ստիպված էր միայնակ վարել պատերազմը: Քաջ գիտակցելով, որ իր թիկունքում այլևս չկա Ռուսաստանը իր օգնությամբ, այլ կան թաթարները՝ թուրքերի ուղղակի կողմնակիցները: Իրավիճակի նման երկակիությունը մտատանջության մեջ էր գցել կուսակցության պատասխանատու գործիչներին: Եվ այդ տատանումները չվերածվեցին թեժ բանավեճերի, քանի որ գրեթե բոլորը մտածում էին նույնանման, բոլորին էլ համակել էին նույն վախերն ու տատանումները: Սակայն գերակշռեց համերաշխության զգացողությունն ու հարևաններից չհեռանալու ցանկությունը, և կուսակցությունը որոշեց իր ձայնը տալ Անդրկովկասի անկախացման օգտին: Բայց որոշվեց այդ ամենն անել անադմուկ, անկեղծորեն և առանց ոգևորման: Հենց այդպես այդ ամենն արեց Սեյմի անդամ Քաջազունին, հանդես գալով “Դաշնակցության” անունից հետևյալ բնույթի հայտարարությամբ. “ Քաղաքացիներ Սեյմի անդամներ: Դաշնակցության խմբակցությունը, հստակ գիտակցելով այն մեծ պատասխանատվությունը, որ իր վրա է վերցնում ինքը՝ պատմական այս պահին, միանում է անկախ Անդրկովկասյան պետության հռչակմանը”: Այդ հայտարարությունից չորս օր հետո Կարճիկյանը Սեյմի ապրիլի 13-ի նիստին հրաշալի զարգացրեց այդ տատանողական տրամադրությունը և ամբողջապես լուսաբանեց կուսակցության տեսակետը: Կարճիկյանի

այդ ելույթն ունեցավ շատ մեծ նշանակություն և ազդեցություն, ուստի ստորև մենք այն կներկայացնենք ամբողջությամբ:

Մահմեդականներն առանց տատանման հռչակեցին իրենց անջատումը Ռուսաստանից:

Այդպես տեղի ունեցավ այդ անկախության հայտարարումը, որը Սեյմը հռչակեց ապրիլի 9-ին: Հենց ապրիլի 9-ի այդ հայտարարությունում պետք է փնտրել հաջորդ՝ 1918թ. մայիսի 26-ի և 28-ի արմատները: Այն է՝ Անդրկովկասի երեք անկախ պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հռչակումը, քանզի, անկախ Անդրկովկասյան պետությունն իր խորքում արդեն իսկ պարունակում էր քայքայման նշաններ, ինչը ես ցույց տվեցի նախորդ տողերում:

Ապրիլի 9-ի Սեյմի նիստում շատ եռանդուն հանդես եկան մենշևիկները՝ Բաթումի քաղաքագլուխ Օնիաշվիլու, Գեորգաձեի /հետագայում ռազմական մինիստր/ շուրթերով և թաթար Ռասուլ-գադեն: Դեմ խուսեցին սոցիալիստ հեղափոխականներ, հայազգի Թումանյանը /հետագայում հայկական խորհրդարանի ղեկավար/ և վրացի Լորդկիպանիձեն: Բայց արդյունքում ամբողջ դահլիճի ծափողջույնների ներքո, անկախությունը հայտարարվեց:

Այդ որոշումից հետո Կառավարությունն հայտարարեց, որ Չխենկելին տեղեկություն կհաղորդի Տրապիզոնի համաժողովի աշխատանքի արդյունքների մասին: Զեկուցումից հետո, որն ընթերցողին ծանոթ է պաշտոնական փաստաթղթից, Սեյմը, առանց մտքերի փոխանակման, ընթերցեց հետևյալ բանաձևը. “Լսելով խաղաղության պատվիրակության զեկուցումը, Սեյմը առաջարկում է Կառավարությանը շարունակել խաղաղության բանակցությունները և միջոցներ ձեռնարկել ամենասեղմ ժամկետներում խաղաղության պայմանագիր կնքելու ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ Սեյմն առաջարկում է Կառավարությանը անհապաղ միջոցներ ձեռնարկել երկրի պաշտպանության կազմակերպման համար”:

Այն բանից հետո, երբ ապրիլի 9-ի իր նիստում Սեյմը հռչակեց Անդրկովկասի անկախությունը և առաջարկեց շարունակել խաղաղ բանակցությունները, Գեգեչկորու կառավարությունը համարեց այդ որոշումը որպես անվստահության արտահայտում իր քաղաքականության նկատ-

մամբ և իջավ բեմահարթակից: Այդ կառավարությունը փաստացի դադարեց գործել ապրիլի 9-ի լույս ապրիլի 10-ի գիշերը: Երբ ապրիլի 10-ին ժամը 10.00 ես գնացի Պալատ, հանդիպեցի Գեգեչկորուն, որ Պալատի աստիճաններով ուղևորվում էր դեպի ելքը: Ես հարցրեցի, թե ինչու է նա գնում: Նա հայտարեց, որ “Մեյմի որոշումից հետո այլևս չկա հին Կառավարությունը”: Ես առարկեցի նրան, թե նորն էլ դեռևս չկա: Անձամբ ես եղել եմ Գեգեչկորու գլխավորած կառավարության կազմի մեջ և համարում էի, որ մենք պետք է մնանք մինչև այն պահը, երբ Մեյմն իր վստահությունը հայտնի նոր Կառավարությանը: Այսօր էլ ես համարում եմ, որ Գեգեչկորին, Ռամիշվիլին և Կարճիկյանը ժամանակից շուտ թողեցին իշխանությունը, այսինքն, ապրիլի 10-ի առավոտվանից իրենց համարեցին գործից հեռացած: Այդ նույնը ես ասացի նաև Կարճիկյանին:

Ըստ էության, հաստատվեց անիշխանություն: Մինչև ապրիլի 13-ը ամբողջ իշխանությունը կենտրոնացված էր միանձնյա Չիենկելու մոտ: Ապրիլի 13-ին Մեյմը վստահություն հայտնեց Չիենկելու Կառավարությանը: Հետագա ծրագիրն էր. անկախություն և խաղաղություն:

Իսկ ի՞նչ արեց Չիենկելին այդ երեք օրերի ընթացքում՝ ապրիլի 10, 11, 12-ին: Նա շփման մեջ մտավ Վեհիբ-փաշայի հետ խաղաղության բանակցությունները վերսկսելու վերաբերյալ, առաջարկեց գեներալ Նազարբեկովին հանձնել Կարսի ամրոցը և քայլեր ձեռնարկեց իր գլխավորած կառավարության կազմում մինիստրներ հրավիրելու ուղղությամբ:

Իհարկե, նա իրավունք չուներ նման կարգադրություններ անել: Այդ կարգադրություններով նա ի հայտ բերեց ցամաքի մի փոթորիկ, որը սպառնում էր խոշոր բարդություններով: Հատկապես բորբոքված էին մեր երկու ընկերները՝ Տ-ն և Ռ-ն: Կուսակցությանն անհրաժեշտ եղավ մեծ ջանքեր գործադրել նրանց հանդարտեցնելու համար: Իսկ հանդարտեցնել անհրաժեշտ էր, որպեսզի կարողանայինք պահպանել ճակատի միասնությունը ընդդեմ հարձակման անցած թուրքերի:

Վերադառնամ, սակայն, փաստերին: Երբ ես տեսա, որ Գեգեչկորին դուրս եկավ Պալատից, ես ներս մտա Պալատ և Կառավարության նախագահի առանձնասենյակում հանդիպեցի սեղանի հետևում մենակ նստած Չիենկելուն: Մենք փոխանակվեցինք մի քանի ոչինչ չասող բա-

ներով և ես դուրս եկա: Նրա մոտ եկավ Կովկասյան ռազմաճակատի Գլխավոր հրամանատարը: Հաջորդ օրը՝ նույնը: Մինչդեռ իրադարձությունները զարգանում էին: Ես տեղյակ էի միայն, որ Մեյմի նախագահ Չիենկեյն նամակով առաջարկել էր Չիենկեյուն կազմել նոր Կառավարություն: Ապրիլի 12-ին, կեսօրից հետո Ավ. Սահակյանը (Հայաստանի Խորհրդարանի ապագա Նախագահը), Շ. Քաջազունին (Հայաստանի ապագա վարչապետը) և ես Չիենկեյուց առաջարկություն ստացանք համարել իր մինիստրների դահլիճը: Ես՝ որպես ֆինանսների մինիստր, Քաջազունին՝ որպես խնամատարության մինիստր, և Սահակյանը՝ որպես պարենավորման մինիստր: Ստանալով մեր կուսակցության համաձայնությունը, մենք ընդունեցինք առաջարկված պորտֆելները: Համարելով մինիստրների դահլիճն ամբողջությամբ, Չիենկեյին ապրիլի 12-ին երեկոյան ժամը 8-ին մեզ հրավիրեց նիստի, որպեսզի կազմենք նոր Կառավարության Հայտարարությունը, հավանություն տանք դրան և հաջորդ օրը ներկայացնենք այն Մեյմին, որն անպիջապես հավաքվելու էր Կառավարության կազմավորումից հետո:

Մենք հավաքվեցինք երեկոյան ժամը 8-ին: Պ-ն Չիենկեյին նիստը բացեց հետևյալ խոսքերով. “Պարոնայք, ես շնորհակալ եմ բոլորիցդ համագործակցության համար: Անդրկովկասի անկախացման և խաղաղ բանակցությունների վերսկսման վերաբերյալ Մեյմի որոշումներից հետո ես իմ վրա պարտականություն եմ վերցրել կազմել Անդրկովկասի նոր Կառավարությունը: Դրա համար, որպեսզի ժամանակ չկորցնեինք, ես, դեռևս սկսած ապրիլի 10-ից արել եմ մի շարք կարգադրություններ, որոնց մասին այժմ սեղմ կզեկուցեմ: Դրանք հետևյալն են. “Ապրիլի 10-ին ես տեղեկացրեցի Վեհիբ-փաշային, որ Մեյմն ընդունում է Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Նա ողջունեց պատվիրակության պահվածքը, իսկ ես հայտնեցի նրան, որ Կարսի տարհանման նպատակով ես հրամայել եմ բանագնացներ ուղարկել: Նույն օրը իմ կողմից հրաման տրվեց դադարեցնել ռազմական գործողությունները ամբողջ ռազմաճակատի երկայնքով: Ապրիլի 11-ին Վեհիբ-փաշան հրամայեց կանգնեցնել հարձակումը, իսկ Կարսի դիմաց թուրքական զորքերը կանգ կառնեն բերդա-

մասերի դիմաց 2 վերստ հեռավորության վրա: Վեհիբը խնդրում է պատվիրակությանը կրկին գնալ Տրապիզոն”:

Երբ Չիւենկելին արեց իր այդ հաղորդումը, մենք առաջին անգամ տեղեկացանք, որ իր և Վեհիբի միջև արդեն սկսված են շփումներ ու Կարս բերդաքաղաքը հանձնված է: Մենք ապշահար էինք այդ տեղեկություններից և հնարավոր չհամարեցինք մեր վրա վերցնել այդ կարգադրությունների պատասխանատվությունը: Մենք երեքս էլ՝ Քաջազնունին, Սահակյանը և ես հայտարարեցինք, որ նոր կառավարության կազմում ընդգրկվելու մեր համաձայնությունը հետ ենք վերցնում, մինչև նոր հաղորդումներ ստանալը, ու լքեցինք նիստերի սենյակը:

Ես անմիջապես զանգահարեցի դաշնակցական խմբակցության ղեկավար Կարճիկյանին և տեղեկացրի նրան իրադրության մասին: Նա անմիջապես եկավ Պալատ և այդ միջադեպի կապակցությամբ կապ հաստատեց մենշևիկյան խմբակցության նախագահության հետ: Երեկոյան ժամը 10-ի կողմերը իրադրությունը հետևյալն էր. Ժորդանիան, Ծերթելին, Գեգեչկորին և Ռամիշվիլին՝ մենշևիկների կողմից և Կարճիկյանը, Քաջազնունին, Օհանջանյանն ու ես՝ դաշնակցության կողմից, սկսեցինք խորհրդակցել, թե իր ինքնակամ գործողություններից հետո, որոնք հղի են մեծ անախորժություններով, կարո՞ղ է արդյոք Չիւենկելին շարունակել դիտվել որպես Կառավարության նախագահի թեկնածու:

Իսկ այդ ժամին Կարսից, ավելի ճիշտ՝ Ալեքսանդրապոլից, բայց գեներալ Նազարբեկովի հանձնարարությամբ, հարցում էին ուղղում Հայոց Ազգային Խորհուրդ՝ հանձնե՞լ արդյոք Կարսը և եղե՞լ է արդյոք Հայոց Ազգային Խորհրդի համաձայնությունը Կարսի հանձնման վերաբերյալ:

Համենայն դեպս, իր ապրիլի 12-ի հեռագրով գեներալ Նազարբեկովը պահանջում էր երկարացնել Կարսի տարհանման ժամկետները: Գեներալ Նազարբեկովը մատնանշում էր, որ ամբողջ քրիստոնեական բնակչությունը թողնում է Կարսը և նրանց լրիվ տարհանման համար անհրաժեշտ է մեկ շաբաթից ոչ պակաս ժամանակ: Նա նշում էր նաև, որ Կարսի մարզի սահմաններում գտնվող ալեքսանդրապոլյան բերդամասերի չնչացումը, փաստորեն, Ալեքսանդրապոլը հանձնում է թուրքերին

և դեռևս հայտնի չէ նաև, թե ով է հսկելու և պահպանելու Կարս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը:

Ստացվում էին մարդու հոգին ծվատող տեղեկություններ Կարսի տարհանումն ուղեկցող տեսարանների մասին: Դրանց վերաբերյալ Կարսի մարզային կոմիսար Չամոնը ապրիլի 14-ին հաղորդում էր պաշտոնապես: Նա հեռագրել էր հետևյալը. “ Մեզ բոլորիս համար անսպասելի և հապճեպ ձևով՝ Թիֆլիսից եկած հրահանգով Կարսը հանձնելու պատճառով, Անդրկովկասի այդ պատվար-հենարանը պաշտպանելու համակողմանի պատրաստված բնակչությունը ստիպված էր տառացիորեն թողնել ամեն ինչ և ապրիլի 12-ին երեկոյան ժամը 5-ին դուրս գալ կրակներով պատված Կարսից: Այրվում էին քաղաքի լավագույն շինությունները: Բնակչության նահանջի պատկերն աննկարագրելի է: Մարզային կոմիսար Չամոն”:

Ահա այսպիսի պայմաններում, Կարսի հանձման վերաբերյալ հրամանի հեղինակ Չիսենկելու թեկնածությունը, որպես Անդրկովկասի Կառավարության նախագահի, առաջարկելը թվում էր անհնարին: Մենք արտահայտվեցինք այդ կապակցությամբ: Մենշնիկները դրան պատասխանեցին հետևյալը. “ Մենք պատրաստ ենք հետ կանչել Չիսենկելու թեկնածությունը: Սակայն մեկ ուրիշ մենշնիկի թեկնածություն մենք չենք կարող առաջարկել: Մենք համաձայն կլինենք Քաջագունու թեկնածությանը: Թող ինքը լինի Կառավարության Նախագահ: Մենք մեր կողմից խոստանում ենք մեր համակողմանի աջակցությունն իրեն”:

Մենք սկսեցինք խորհրդակցել: Քաջագունին ինքը համարեց այդ առաջարկությունը բացարձակապես անընդունելի: Նա ասաց հետևյալը. “ Այս պահին, գործն արդեն արված է: Կարսը հանձնված է, այս պահին այն վերադարձնելն անհնար է: Պետք է հաշվի նստել փաստերի հետ, ուստիև միանգամայն անընդունելի է, որ մեր կուսակցությունը իր վրա վերցնի այն ամենի պատասխանատվությունը, ինչը տեղի է ունենալու վաղը: Այս պահին համաձայնվել գլխավորել Կառավարությունը, կնշանակի մարտահրավեր նետել մահմեդականությանը և գլխավորել պատերազմը թուրքերի դեմ: Մեր առկա ուժերի պայմաններում մենք իրավունք չունենք նման քայլի”:

Մենք մերժեցինք վրացիների առաջարկը: Կեսգիշերից հետո էր, արդեն խորը գիշեր, մենշնիկները կրկին եկան մեզ մոտ և հայտարարեցին, որ իրնք կրկնում են իրենց առաջարկը. Կամ Չիենկելին, կամ Քաջագունին: Մենք մեկ անգամ ևս քննարկեցինք իրավիճակը: Մենք գիտակցում էինք, որ հասարակական կարծիքը մեզ կդատապարտի Չիենկելու կառավարությունում տեղեր զբաղեցնելու համար: Բայց միևնույնն է, այդ պահին մենք ամենից վեր դասում էինք Անդրկովկասի ժողովուրդների միասնությունը, որքան էլ երևակայական լինի այն: Գիշերը ժամը 4-ին մենք եկանք այն եզրակացության, որ այլ ելք չկա, և սրտնեղելով, համաձայնվեցինք Չիենկելու թեկնածության և նրա գլխավորած կառավարության կազմում լինելու առաջարկության հետ: Եվ մենք տվեցինք մեր համաձայնությունը: Կուսակցական գործիչները ձեռնամուխ եղան զանգվածներին բացատրել վիճակի ճգնաժամային լինելը և այդ իրավիճակում մեր մարտավարությունը: Եվ դա հաջողվեց՝ կուսակցության լավ կազմակերպվածության և զանգվածների վրա նրա ունեցած ազդեցության շնորհիվ: Ստեղծված իրավիճակում կուսակցական կարգապահությունը շատ բարձր արդյունք տվեց:

Իսկ Հայ Ազգային խորհրդում՝ մերոնք, կադետները և սոցիալ-դեմոկրատներն ամեն միջոց գործադրում էին Ալեքսանդրապոլում փախստականներին ընդունելու և պաշտպանությունն ուժեղացնելու համար: Արդեն մոտենում էր այն պահը, երբ հայերը գիտակցեին, որ պատերազմը դառնում է զուտ հայ-թուրքական և ընթանում է զուտ հայկական տարածքների վրա: Արդեն պարզորոշ զգացվում էր, որ հեռու չէ այն ժամը, երբ տարբեր կողմնորոշումների պատճառով Կովկասի ժողովուրդների միջև հակասությունները կհասնեն գագաթնակետին: Վրացիները՝ Գերմանիայի, թաթարները՝ Թուրքիայի հետ: Եվրոպական դաշնակիցները հեռու էին, սակայն հոգով մենք նրանց հետ էինք: Ռուսաստանն, ասես, հորիզոնից առհասարակ էր հեռացել: Մենք կարծես, հայտնված լինեինք վանդակում, բանտախցում:

Կարսի տարհանմանն հետևող զեներալներ Նազարբեկովն ու Վեհիբ-փաշան մանրամասն զեկուցագրերով տեղեկացրեցին Կարսի հանձնման և այն գրավելու մասին: Վեհիբ-փաշան մեղադրում էր զենե-

րալ Նազարբեկովին, որ վերջինիս կողմից թուրքական գործերը հրետակոծելու հրաման է եղել, ինչը, ըստ իր կարծիքի, հակասում էր Կարսը հանձնելու պայմաններին: Իսկ գեներալ Նազարբեկովն էլ իր կողմից նշում էր, որ Կարսի բերդը կարող էր դիմադրել ևս մեկ ամիս, սակայն լուրերը սպասվելիք խաղաղության մասին և բանագնացներ ուղարկելը սպանեցին դիմադրության ոգին և ամրոցն արդեն ի վիճակի չէր դիմադրել: Այսպես թե այնպես, Կարսն ընկավ և մեր գործերը հետ քաշվեցին դեպի Ալեքսանդրապոլ: Ահա այդպիսի պայմաններում տեղի ունեցավ Անդրկովկասյան Կառավարության փոխարինումը. Հայտարարվել էր Անդրկովկասի անկախությունը, թուրքերին հանձնված էր Կարսը և առաջ էր եկել Թուրքիայի հետ խաղաղ բանակցություններ վերսկսելու հարցը: Կարելի է միանգամայն հանգիստ խղճով ասել, որ այն գերակայող դերը, որն այդ օրերին բաժին էր ընկել վրացիներին, նրանց կողմից իրականացվեց առանց որևիցե հաջողության արձանագրման: Նրանք բոցաշունչ ճառերով ողջունում էին պատերազմը, սակայն կարողացան դիմադրել ընդամենը 9 օր: Նրանք ցանկացան դադարեցնել պատերազմը, սակայն արդյունքում կորսվեց Կարս բերդաքաղաքը և ահավոր ձևի տուժեց բնակչությունը: Այդ պահից սկսած, ստացվեց այնպես, որ ամեն մի ժողովուրդ միայն ու միայն ինքը պետք է մտահոգվեր իր սեփական ճակատագրով: Սակայն ընդհանուր կովկասյան հոգեբանությունն ու համերաշխությունը դեռևս միասնություն էին պահանջում: Դրանցից սպասելիքներն ավելի մեծ էին առանձին անջատողական բնույթի ելույթներից: Օրինակ՝ ենթադրվում էր, թե միասնական մնալու պարագայում Կովկասի մահմեդականների մոտ հնարավոր կլինի դաստիարակել համակովկասյան համերաշխության զգացողությունը: Այդպիսիք էին միասնական Անդրկովկասյան Հանրապետության տեսությունները, ավելի ճիշտ՝ այդ ամենի տեսական նախադրյալները:

Եվ ահա ապրիլի 13-ին Չխենկելու կառավարությունը հենց այդպիսի ոգով էլ կազմեց իր հայտարարությունը և կանգնեց Սեյմի առջև: Կառավարության կազմը հետևյալն էր. Մինիստր-Նախագահ և արտաքին գործերի մինիստր՝ Չխենկելի, ներքին գործերի մինիստր՝ Ռամիշվիլի, ֆինանսների մինիստր՝ Ալեքսանդր Խատիսյան, հաղորդակցության ճա-

նապարհների մինիստր՝ Մելիք-Ասլանով (թաթար), արդարադատության մինիստր՝ Խան-Խոյսկի (թաթար, Ադրբեջանի ապագա մինիստրների խորհրդի նախագահ, հետագայում սպանվեց Թիֆլիսում 1921թ.), ռազմական մինիստր՝ Գեորգաձե, հողագործության մինիստր՝ Հումերիկա, ժովովրդական կրթության մինիստր՝ Ուսուբեկով (թաթար, հետագայում Ադրբեջանի մինիստր-նախագահ), Աշխատանքի մինիստր՝ Գանջինսկի (թաթար), պարենավորման մինիստր՝ Սահակյան (հետագայում Հայաստանի խորհրդարանի նախագահ), ինամատարության մինիստր՝ Քաջազնունի և պետական վերահսկիչ՝ Հակոբարով (լեռնական):

Ինչպես կարող է տեսնել ընթերցողը, Կառավարության կազմը շատ հզոր էր. այնտեղ ընդգրկված էին Կովկասյան հանրապետությունների բոլոր ապագա վարչապետները, ապագա մինիստրները և դեսպանները: Հայտարարությունը, որն ընթերցեց Չխենկելին, հռչակում էր հետևյալ ծրագիրը. Անկախություն և խաղաղություն: Բացի դրանից, նա հռչակում էր նաև կառուցողական ծրագիր. “անշեղորեն կյանքի կոչել ագրարային բարեփոխումների ծրագիրը, բանվոր դասակարգի վիճակի բարելավում, սեփական ֆինանսական համակարգի ստեղծում, պարենային գործի ամփոփացում, հաղորդակցման ճանապարհների վերականգնում, պետական հաստատությունների համակերպումը նոր համակարգին”: Եվ վերջում Կառավարությունը խնդրում էր վստահություն և աջակցություն: Հայտարարությունն ընթերցելուց հետո սկսվեցին պատգամավորական խմբակցությունների ներկայացուցիչների ելույթները: Ելույթ ունեցան երեքը. Մուսավաթի կողմից՝ Ռասուլ-գադեն, մենշևիկների կողմից՝ Ծերեթելին և Դաշնակցության անունից՝ Կարճիկյանը:

Ռասուլ-գադեն հատկապես ողջունում էր անջատումը Ռուսաստանից, Ծերեթելին՝ փայլուն հռետոր և հեղափոխական Ռուսաստանի ամենաականավոր գործիչներից մեկը, ով մի քանի տարի անցկացրել էր Ռուսաստանի տաժանակիր վայրերում, Ռուսաստանից անջատվելն արդարացնում էր երկու պարագաների առկայությամբ. Թուրքերի կողմից գործադրվող ճնշումով և Ռուսաստանում իշխանությունը բոլշևիկների ձեռքն անցնելուց հետո այդ երկրի հետ ընդհանուր քաղաքական կյանքով գոյատևելու անհնարինությամբ: Ծերեթելին գլխավորապես ու-

շաղրությունը սևեռել էր այն հանգամանքի վրա, որ վրացական սոցիալ-դեմոկրատիայի նպատակը ժողովրդին պահպանելն է, մինչդեռ, բոլշևիկները, ասում էր նա, այդ ժողովրդին հոգեպես կսպանեն, ինչպես որ սպանեցին ռուս ժողովրդին, հանձնելով նրան գերմանական իմպերիալիզմի հոշոտմանը: Մենշևիկների համար այդ քայլը բավականին ծանր էր ու դժվար: Եվ պետք է արժանին մատուցել՝ Ծերեթելին այդ խնդրի լուծումն իրականացրեց չափազանց հաջող կերպով: Ես հիշում եմ, որ իր ելույթը մեծ տպավորություն թողեց իր անկեղծությամբ: Ինքն անձամբ շեշտեց, որ թեև իր կուսակցությունը մշտապես իրենց ժողովրդի փրկությունը տեսել է հեղափոխական Ռուսաստանի հետ միասնական լինելու մեջ, սակայն, բոլշևիկների կողմից դեմոկրատական սկզբունքների մերժման և փոխարենը բռնության ու հոգեպան սկզբունքների հռչակման հետևանքով, այդ միասնությունն այսօր անհնարին է:

Կարճիկյանն ամբողջապես արտահայտեց հայության և կուսակցության տազնապալից տրամադրությունները: Նա խոսում էր, իհարկե, կուսակցության անունից: Ես հետագայում կներկայացնեմ նրա ելույթն ամբողջական տեսքով: Իսկ այստեղ կբերեմ նրա այն միտքը, որ Կառավարությունը ստիպված է լինելու հաղթահարել շատ ծանր արգելքներ այդ ուղղությամբ: Եթե Կառավարությունը կարողանա հաղթահարել այդ արգելքները, ապա այն կհանդիսանա Անդրկովկասին արժանի մի Կառավարություն: Ահա այս գլխավոր ուղղություններով մեր կուսակցությունը ամբողջապես կսատարի նոր Կառավարությանը, կցուցաբերի նրան բազմակողմանի աջակցություն, կաշխատի թեթևացնել Կառավարության հոգսը՝ զանգվածներին նոր պայմաններին նախապատրաստելու և երկրում վստահության մթնոլորտ ստեղծելու հարցերում: Հաջորդ օրը Կառավարությունը անցավ գործի: Ես գնացի ֆինանսների մինիստրություն և ստանձնեցի իմ պարտականությունները:

Ինչպես վերը նշել եմ, որ Մեյմում լավեց անկախ Անդրկովկասի Կառավարության Հայտարարությունը և դրա վերաբերյալ կայացավ մտքերի փոխանակում:

1918թ. ապրիլի 13-ին /26-ին/ կայացած Անդրկովկասյան Մեյմի նիստի աղագիր արձանագրությունից.

“Քաղաքացի Մեյմի անդամներ: Դաշնակցության խմբակցության անունից ես պետք է տեղեկացնեմ Ձեզ, որ այդ խմբակցությունը աջակցելու է այն քաղաքական ծրագրին, որը շարադրված էր Անդրկովկասի Կառավարության Հայտարարությունում: Ամենազլխավոր և ամենաէական հարցի, այն է՝ միասնական Անդրկովկասյան Հանրապետության անկախության ամրապնդման կապակցությամբ, մեր կարծիքով, Կառավարության առջև կանգնած են արտակարգ դժվարության խնդիրներ: Անդրկովկասի ժողովուրդների համար այս կարևորագույն և մահացու վտանգներով լեցուն պահին անկախության հայտարարելը ինքնին խոսում է այն մասին, որ այդ փաստն իրագործված է արտաքին ուժերի ճնշման ներքո: Այդ արտաքին ուժի գոյությունը ակներև է ի դեմս բոլշևիկյան Ռուսաստանի և արտաքին թշնամու կողմից: Եվ ահա, այդ արտաքին ուժերը, որոնք ստիպեցին այս պահին հայտարարել Անդրկովկասի անկախությունը, առաջ բերեցին նաև Անդրկովկասի ազգությունների և Անդրկովկասի դեմոկրատիայի որոշակի տատանումներ: Կա՞րողոք այդ ամենի մեջ փրկություն, չի տանում այդ ամենն արողոք դեպի կործանում... Այդ ամենը ստիպում է մտածել, որ Անդրկովկասի ազգությունների մեջ, իրոք, որ առկա են տատանումներ, և ավաղ, բացակայում է այն վստահությունը, որ պետք է արտահայտվեր այս հանդիսավոր պահին: Այդ փաստը պետք չէ անտեսել: Կասկածից վեր է, որ շատ, ոչ միայն քաղաքական խմբավորումներ և կուսակցություններ այդ հիմնական հարցի վերաբերյալ տարակարծիք են: Եվ ահա, Անդրկովկասի նոր Կառավարության առջև ծառայած է հարց՝ ներշնչել վստահություն, հասկացնել Անդրկովկասի դեմոկրատիային, որ այս ամենն իրականում բարիք է, որն էլ հանդիսանում է Անդրկովկասի փրկության ուղին: Այդ առումով Անդրկովկասյան Կառավարության առջև կանգնած են իրոք շատ դժվար խնդիրներ, և եթե Կառավարությունը հաղթահարի այդ խնդիրները, ներշնչի Անդրկովկասյան դեմոկրատիային, որ, իրոք, այս ամենն է նպաստելու Անդրկովկասի փրկությանը, որ այս պահին հենց անկախություն հռչակելն է փրկելու Անդրկովկասի ազգությունների կյանքը և ուղղորդելու է մեզ դեպի ազատ կյանք, ապա դա կլինի այս Կառավար-

րության մեծագույն վաստակը Անդրկովկասի հանդեպ: Քանզի, եթե լինելու են կասկածներ և տատանումներ, բացակայելու է վստահությունը, ոչ մի ուժեր չի կարողանալու ամրապնդել անկախությունը, չեն կարողանալու նոր պետական համակարգի համար ամուր հիմքեր գցել: Մյուս ծանր հարցը, որ կանգնած է Կառավարության առջև, դա խաղաղություն կնքելու հարցն է: Այն հանգամանքը, որ նոր Կառավարությունը գլխավորում է նախկին խաղաղության պատվիրակության ղեկավարը, արդեն ինքնին վկայում է, որ այդ կտրվածքով նոր Կառավարությանը կներկայացվեն բավականին խիստ պահանջներ: Այն պատվիրակությունը, որն այստեղ վերադարձավ Տրապիզոնից, համոզված էր, որ իրեն կհաջողվի կնքել խաղաղության պայմանագիր, որի միջոցով էլ կփրկվի Անդրկովկասը: Պատվիրակությունը ոչ միայն վերադարձավ այդ համոզմամբ, այլ այդ վստահությունը կարողացավ ներշնչել նաև զանգվածներին: Դա պարտավորեցնում է ոչ միայն պատվիրակությանը, այլ նաև Կառավարությանը. Կառավարությունը ստիպված կլինի հաշվետվություն տալ այդ պարտամուրհակով: Հենց այդ առումով Կառավարության առջև կանգնած խնդիրները չափազանց դժվար են և չափազանց ծանր: Կառավարության համար ոչ պակաս ծանր խնդիր է Անդրկովկասի տարածքային միավորի ստեղծումը: Կասկած չկա, որ առանց այդ արմատական հարցի լուծման, երկրամասում խաղաղության և հանգիստ կյանքի մասին խոսք անգամ լինել չի կարող”:

Անդրկովկասն ուներ իր փողերը՝ ընդհանուր փողեր ամբողջ Անդրկովկասի համար: Նրանց արժույթը բավականին պատկառելի էր՝ գրեթե 2 միավոր մեկ ռուբլու դիմաց: Ապրանքների գները նորմալ էին: Ինձ այցելեց վաճառականների պատվիրակություն՝ վաճառականների ավագ Ագիլովի գլխավորությամբ և վաճառականության անունից խոստացավ լիարժեք աջակցություն Կառավարությանը: Ես հրավիրեցի հին վարչակարգի փորձառու չինովնիկներին՝ Կելարովին, [...] և սկսեցի պատրաստել Անդրկովկասյան Հանրապետության բյուջեն: Ինձանից առաջ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ աշխատած Կամսարականին նշանակեցի Էրիվանում Պետական Պալատի Կառավարիչ և նախանշեցի ֆինանսական բարեփոխումների նախագիծ: Սակայն քաղաքականությո-

յունն ու թուրքերը հնարավորություն չէին տալիս հանգիստ զբաղվել իմ բուն գործով՝ ֆինանսներով:

Որպեսզի կարողանանք թուլացնել Կարսի կորստով ի հայտ եկած գրգռվածությունը, մենք, նախևառաջ, կատարեցինք փորձագիտական պարզաբանում, թե ինչքան կարող էր դիմանալ Կարսը, եթե Թիֆլիսից չլինեք այն հանձնելու հրամանը: Ռազմաճակատի Գլխավոր հրամանատարի շտաբի պետ գեներալ Լևանդովսկին ներկայացրեց հետևյալ գրավոր պատասխանը. “Ապրիլի 11-ին Կարսի դրությունն անհույս էր և նրա ժամերը հաշվված էին: Զորքի ոգին միանգամից անկում ապրեց, երբ թուրքերը շկմ մոտեցան բերդամասերին: Դժվար է Կարսի կողմից նույնիսկ մեկշաբաթյա դիմադրություն ցուցադրելու հույս ունենալ”: Իմ տրամադրության տակ են գտնվում Կարսի հանձնման հետ առնչվող բոլոր հեռագրերը՝ ինչպես Թիֆլիսից եկող, այնպես էլ Թիֆլիս ուղարկվող: Նրանք թվագրված են 1918թ. ապրիլի 10-ից մինչև 17-ը: Շատ երկար կլինեք դրանք բոլորն այստեղ ներկայացնելը, սակայն կարող եմ, համենայնդեպս, ասել, որ հենց այժմ էլ, դեպքերից յոթը տարի անց, վերընթերցելով դրանք, Կարսի նման հանձնումը, եթե ուզում եք՝ Կարսի հանձնման նման եղանակը, բացի ողբերգությունից, այլ կերպ հնարավոր չէ բնութագրել:

Քանի որ հասարակությանը շարունակում էր հուզել Կարսի հարցը, ապա 1918թ. մայիսի 9-ին Կառավարությունը հրապարակեց բավականին հանգամանակից “ Կարսի գրավումն ուղեկցող բոլոր հանգամանքների մասին” կառավարական հաղորդագրությունը: Մինչ Թիֆլիսում ծավալվում էին այդ իրադարձությունները, որոնք, բնականաբար, արձագանք էին գտնում ամբողջ Կովկասում, հայկական շրջաններում բոլորը զբաղված էին մարտական գործողություններով: Ապրիլի 16-ին մեր զորքերը մաքրեցին Կարսի մարզի տարածքը և կենտրոնացան Ալեքսանդրապոլում: Թուրքերը մոտեցան Արփաչային և կանգ առան Ալեքսանդրապոլից վեցը վերստ հեռավորության վրա: Փախստականները Կարսից, իսկ մյուս կողմից՝ Էրզրումից, Վանից ու Մուշից հեղեղել էին Էրիվանի գուբերնիան: Էրիվանում գործում էր իր Ազգային խորհուրդը՝ Արամի դիկտատուրայի և Դրոյի ռազմական ղեկավարության ներքո: Այս երկու

անձինք ներառում էին ամբողջ ռազմա-քաղաքական կյանքը: Էրիվանի ռազմաճակատում մեծ հեղինակություն էր վայելում գեներալ Միլիկովը, որն այսօր, որպես մասնավոր անձ, գտնվում է բոլշևիկյան Հայաստանում:

Էրիվանն ապրում էր իր ներքին կյանքով: Այնտեղ էր հասունանում հայկական ազգային կենտրոնը: Անցած ամիսների ընթացքում հենց այնտեղ էին զգում այն բոլոր հարվածները, որ տեղում էին հայության գլխին: Քանզի դեպի Էրիվան էին շարժվում փախստականները և Կարսի գրավումից հետո հենց այդ ուղղությամբ էին իրենց հարվածներն ուղղել թուրքերը: Մենք Էրիվան էինք ուղարկում գումար և փամփուշտներ: Այնտեղ Ազգային խորհուրդը գրեթե, կամ ամբողջապես չէր ընկալում Թիֆլիսի կենտրոնական Կառավարությունը և խորապես տարված էր ռազմաճակատի հոգսերով: Հատկապես 1918թ. մայիսի 15-ից հետո, երբ թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, երկաթուղային հաղորդակցումը Էրիվանի հետ ընդհատվեց և Էրիվանը սկսեց ապրել Կենտրոնից կտրված իր կյանքով:

Իսկ Թիֆլիսում մենք շարունակում էինք ամրապնդել անկախ Անդրկովկասյան Պետության գաղափարը: Հրապարակեցինք իշխանության բոլոր ճյուղերին ուղղված Շրջաբերական, առաջարկում էինք բոլորին շատ խիստ հետևել ժողովուրդների խաղաղ համագոյակցությանը, դադարեցնել կողոպուտն ու ազգամիջյան ընդհարումները, և ավետում էինք պանծալի ապագա նրանից հետո, երբ “անարխիան անխնա ճնշելուց հետո Անդրկովկասյան Հանրապետությունը, հիրավի, կդառնա անկախ և հզոր պետություն”: Նման ապագայի համար առկա էին բոլոր նախադրյալները. Երկրամասի բնական հարստությունները, վառելիքը, մտավոր ուժերի առկայությունը, սակայն բացակայում էր ներքին համախմբվածությունը: Թաթարները շարունակում էին հուզվել: Ամենուր, որտեղ հնարավոր էր, նրանք խանգարում էին հայերին նախապատրաստվել թուրքերի հարձակումները հետ մղելուն: Այդ ընդհարումների վայրեր միշտ հանձնաժողովներ էին մեկնում, բայց իսկական կրակը դեռ չէր բոցավառվել. Հաջողվում էր մեկուսացնել բռնկումները:

1918թ. մայիսի սկզբներին թուրքերին հաջողվեց դուրս մղել մեր գործառնաբերը Թուրքահայաստանի բոլոր հատվածներից: Փոխատականները բոլորը կուտակվեցին Էրիվանի գուբերնիայում: Գարուն էր, մարդիկ ապրում էին դրսում, սակայն կուտակվածությունը սարսափելի էր: Բնակչությունը կրում էր բազում զրկանքներ: Ոչ մի տեղից հացի ներմուծում չկար: Տարածվում էին հիվանդությունները: Այդ պայմաններում բոլորը շտապում էին կնքել խաղաղության պայմանագիրը:

...Բանակցությունները մոտենում էին ավարտին: Այս անգամ որպես համաժողովի վայր ընտրվեց Բաթումը, ուր Թիֆլիսից համեմատաբար հեշտ էր հասնել: Կրկին սկսեցին պատվիրակություն կազմել: Այս անգամ՝ ոչ այդքան բազմամարդ: Նախագահը կրկին Չխենկելին էր՝ Մինիստր նախագահ և արտգործմինիստր, իսկ հայերի կողմից՝ Քաջազունին և ես:

Այս անգամ մեր առաքելությունը չափազանց պարզ էր թվում. Պայմանագիր ստորագրել, որը հիմնված է լինելու Բրեստ-Լիտովսկի պայմանագրի դրույթների վրա: Այսինքն, մենք համաձայնություն էինք տալիս այն ամենին, ինչը թուրքերը համառորեն պահանջում էին մեզանից Տրապիզոնում: Մենք Թիֆլիսից դուրս եկանք մայիսի 9-ի առավոտյան և երեկոյան արդեն Բաթումում էինք: Պատվիրակության բոլոր անդամները տեղավորվեցին նույն՝ Hotel Imperial հյուրանոցում: Մեր խորհրդականն էր Միմոն Վրացյանը: Թաթարների կողմից պատվիրակներ էին Ուստուբեկովը, Գանջինսկին և Խան-Խոյսկին, խորհրդական էր Ռասուլզադեն: Վրացիների կողմից՝ Ավալով, Նիկոլաձե, Ռիսիլաձե: Թուրքերի կողմից պատվիրակության անդամներն էին. առաջին պատվիրակ՝ Արդարադատության մինիստր և Պետական Խորհրդի նախագահ Խալիլ-բեյը և Օսմանյան բանակների Գլխավոր Հրամանատար, գեներալ-լեյտենանտ Վեհիբ-Մեհմեդ-փաշան: Բոլոր պատվիրակներն իրենց զգում էին կարևորագույն խնդրի առջև կանգնած: Այն է՝ ստորագրել խաղաղության պայմանագիր: Ո՛չ դաշնակիցներ, ո՛չ ռուսներ ներկա չէին: Արտասահմանցիներից միակը Գերմանիայի ներկայացուցիչ, գեներալ ֆոն Լոստովն էր: Անցած այդ ամբողջ ժամանակահատվածում Ռուսաստանն, ասես, գոյություն չունեի, նրա ձայնը մենք չէինք լսել: Միայն մեկ անգամ, մար-

տի 31-ին /հին տոմարով/, Բաթումի գրավումից մեկ օր առաջ, մեր ուսուցիչները որոշեցին, որ Գերմանիայի կառավարությանն ուղղված Ռուսաստանի կառավարության հետևյալ հեռագիրը, որը շատ քչերին է հայտնի, բայց չափազանց ուշագրավ է.” Մոսկվայից: Թուրքական բանակը շարժվում է դեպի Բաթում, Կարս, Արդահան, ավերելով երկիրը և ոչնչացնելով գյուղացիական բնակչությանը: Հայերի հետագա ճակատագրի պատասխանատվությունն ընկնում է Գերմանիայի վրա, քանզի, հենց նրա հորդորով ռուսական զորքերը դուրս բերվեցին հայկական շրջաններից և այսօր հենց նրանից է կախված զսպել թուրքական զորքերը վրեժխնդրության և գազագոյության հողի վրա վայրագություններ իրականացնելուց: Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ այնպիսի բարձր մշակույթ ունեցող երկիրը, ինչպիսին է Գերմանիան, որն ունի իր դաշնակից Թուրքիայի վրա ազդելու հնարավորություն, թույլ կտա, որպեսզի Բրեստի խաղաղ պայմանագիրը ծառայի իր կամքից անկախ այս համաշխարհային պատերազմի մեջ ներքաշված հայ ժողովրդի համար անհաշիվ արհավիրքների աղբյուր: Ըստ այդմ Խորհուրդը (*նկատի ունի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը –Վ.Հ.*) համոզված է, որ Դուք կձեռնարկեք անհրաժեշտ և միայն Ձեզանից կախված միջոցներ ներագդելու թուրքական իշխանությունների վրա՝ խաղաղ բնակչության ոչնչացումը, ինչպես որ դա կատարվեց Արդահանում, կանխելու համար: Չիչերին, Կարախան”:

Ես շատ կուզենայի, որպեսզի Չիչերինն ու Կարախանը այսօր վերընթերցեն իրենց հեռագիրը և այնտեղից հանեն համապատասխան եզրակացություններ. Այն ամենը, ինչը նրանք այն օրերին սպասում էին Թուրքիայի դաշնակից Գերմանիայից, այսօր կարող է անել հենց ինքը՝ Թուրքիայի այսօրվա դաշնակից Խորհրդային Ռուսաստանը, որը Թուրքիային է զիջել Հայաստանի կեսը:

Մի խոսքով, այն օրերին Թուրքիան և Անդրկովկասը հայտնվեցին դամ առ դեմ: Երկու պայման, որ դրված էին մեր առջև Տրապիզոնում՝ Անդրկովկասի անկախացումը և Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը, այժմ նույնպես սեղանին էին: Սակայն կար և այլ հանգամանք, որը թուրքերը հաշվի էին առել. Կարսը և Բաթումն այժմ թուրքերի ձեռքում էին: Երբ մենք հասանք Բաթում, քաղաքն արդեն ընդունել էր լիովին

թուրքական տեսք. Ամենուրեք ասկյարները, ոչ մի առևտուր, արժեքավոր ամեն բան քաղաքից դուրս էր բերվում, գեշերները խանութները թալանվում էին զինվորականների կողմից: Քաղաքն, ասես, մահացած լիներ: Փողոցներում ամայություն էր: Այն հյուրանոցից ոչ հեռու, ուր մենք իջևանել էինք, գտնվում էր հնարժեք իրերի պահեստ: Գիշերը պահեստին մոտենում էին բեռնակառքեր, ուր բարձվում էր պահեստի պարունակությունն ու տարվում անհայտ ուղղությամբ: Հետագայում, զինադադար կնքելուց մի քանի ամիս հետո ես իմացա, որ այդ արժեքավոր ապրանքը թալանելու գործով դատվել էր գլխավոր հրամանատար Վեհիբ – փաշան:

Փողոցներով անցկացրեցին վրացի գերի զինվորների մի ամբողջ շարք: Համեմատաբար լավ էին զգում իրենց ռուսները, որոնց նկատմամբ թուրքերը ցուցաբերում էին ուշադրություն և ներողամտություն: Ռուս սպաներին թուրքերը աշխատավարձ էին նշանակել, ոմանց վերցրել էին ծառայության, բռնագրաված ամառանոցները վերադարձրել: Դա նշանակում էր, որ հետադիմական սպայակազմի շրջանում, որը դժգոհ էր Ռուսաստանի կազմից Անդրկովկասի դուս գալուց, թուրքերն առավել գրավիչ էին, քան անդրկովկասյան գործիչները: Բաթումում ես հանդիպեցի իմ նախկին պաշտոնական դիրքով շատ ծանոթների և վերոնշյալը ես կարողացա տեսնել անձամբ. Շատերն իրենց մոտ էին ընդունում թուրք սպաներին, օգտվում նրանց սիրալիրությունից: Քաղաքում գրեթե չկար հայություն՝ նրանք բոլորը մեկնել էին Թիֆլիս: Համեմատաբար շատ էին վրացիները:

Առաջին իսկ օրերին մեր պատվիրակությանն այցելեցին Արդվինից եկած ներկայացուցիչներ: Դեպքերի շատ արագ զարգանալու հետևանքով Արդվինում հայերը տեղում էին մնացել և չէին հասցրել թողնել քաղաքը...

...Բաթում հասնելով, մենք փոխադարձ այցելություններ ունեցանք թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ-բեյի և գերմանական ներկայացուցիչ գեներալ ֆոն Լոսսովի հետ: Խալիլ-բեյը՝ չափազանց գեր, լիքը դեմքով մի թուրք, լավ ֆրանսերեն էր խոսում: Նա ուներ փոխզիջումների կողմնակից թուրք քաղաքական գործչի համբավ: Նրա խոսքը հաշտվողական բնույթ ուներ: Նա զարգացնում էր Անդրկովկասի և

Թուրքիայի բարեկամության գաղափարները, ասում էր, որ հենց դա է հանդիսանում Թուրքիայի ամրության գրավականը: Հայտնի է, որ երիտթուրքերի հետապնդումների ժամանակ հանգուցյալ Ջոհրապը իր մոտ գաղտնի ապաստան է տրամադրել Խալիլ-բեյին, իսկ երբ 1915թ. Ջոհրապին (հայտնի դատապաշտպան, գրող և թուրքական խորհրդարանի անդամ) ձերբակալեցին և տարան, Ջոհրապի կինը անհույս դիմել է Խալիլին... Այդ պատմությունը ես անձամբ լսել եմ թուրքերի ձեռքով սպանված Ջոհրապի դստեր պատմածով: Խալիլ-բեյը առաջին պատվիրակն էր: Երկրորդ պատվիրակը ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար Վեհիբ-փաշան էր: Նա ուներ չափազանց ինքնավստահ կեցվածք, մարդամոտ ձայն, և ուղիղ երեսիդ նայելով ստելու զուտ արևելյան հատկություն: Ես ունեմ դրա դրսևորման մի քանի վառ օրինակներ: Երբ նա զարմանք էր հայտնում իր զորքերի որոշ գործողությունների կապակցությամբ, կարելի էր ենթադրել, թե այդ մարդը, իրոք, տեղյակ չէ իրեն հաղորդվող տվյալներից: Մինչդեռ հետագայում համոզվում էիր, որ ինքը ոչ միայն տեղյակ էր ամեն ինչից, այլ հենց ինքն էր հեղինակը այն բոլոր կարգադրությունների, որոնց կապակցությամբ ի սրտե հայտնում էր իր զարմանքը: Դա վերաբերում էր փախստականներին հետապնդելուն և նրանց ինչքը թալանելուն, անասնագործությանը և այլն, ընդհուպ մինչև կոտորածներն ու սրի քաշելը: Արտաքնապես չափազանց սիրալիր էր և քաղաքավարի: Ֆրանսերեն վատ էր խոսում, ավելի վարժ՝ գերմաներեն: Ես նրա հետ խոսում էի գերմաներեն:

Գեներալ ֆոն Լոստվը՝ բարձրահասակ, նիհար ծերունին, ով զայրացած էր թուրքական համակարգով և, բնականաբար, նվիրված էր գերմանական շահերին, համենայն դեպս ձգտում էր միջոցներ գտնել կովկասյան ժողովուրդներին սատարելու համար, և ասես միացնում էր այդ բոլոր շահերը միևնույն ուղղությամբ ու մեկ ճանապարհով:

Վրացիների նկատմամբ գեներալ Լոստոն ուներ որոշակի հրահանգներ. Նրանց միջև եղել էին նախնական շփումներ: Նրանք գտել էին ընդհանուր լեզու. Վրացիները Գերմանիային կոնցեսիաներ էին տրամադրում Փոթի նավահանգստի և մանգանի ու շինարարական անտառանյութի արտահանման համար: Ի հատուցումն այդ ամենի գերմանացիները ե-

րաշխավորում էին Վրաստանի սահմանների պահպանումը: Որպես զինվորական ծառայողներ Գերմանիայից գալու էին շարային հրահանգիչներ, իսկ շարքային համակազմը համալրվելու էր Թիֆլիսի գուբերնիայի գերմանական գաղութների բնակչությունից:

Հայերը նման նախնական բանակցություններ չէին վարել: Միայն այդ օրերին մոտ Հայոց Ազգային խորհրդի հատուկ պատվիրակությունը՝ Արշակ Ջամալյան⁸¹, Գևորգ Մելիք-Ղարազյոզյան⁸², Լիպարիտ Նազար-

⁸¹ **Ջամալյան (Բասահայան) Արշակ Ջամալի** (1884թ., Ելիզավետպոլ, Ռուսական կայսրություն-1940թ., Փարիզ, Ֆրանսիա): Հայ քաղաքական, պետական, կուսակցական և հասարակական գործիչ, հրապարակախոս, ՀՀԴ անդամ, 1914-1933թթ.՝ ՀՀԴ Բյուրոյի անդամ: Կրթությունը՝ Գևորգյան ճեմարան, Բեռլինի և Լայպցիգի համալսարաններ: Մասնակցել է 1905-1907թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայերի ինքնապաշտպանության կազմակերպմանը, ընդհարումներն հրահրող ցարական պաշտոնյաների սհաբեկմանը, քանիցս ձերբակալվել է: 1917թ. Հոկտեմբերից՝ Հայոց Ազգային խորհրդի անդամ, մասնակցել է Էրզինջանի (Երզնկայի) զինադադարի կնքմանը, Անդրկովկասյան սեյմի անդամ: 1918թ. Գ.Մելիք-Ղարազյոզյանի և Լ.Նազարյանցի հետ Բեռլինում բանակցություններ է վարել գերմանական կողմի հետ՝ հայերի հանդեպ թուրքական ագրեսիան գոնե որոշ չափով զսպելու նպատակով:

1918 թ-ին՝ Հայաստանի Հանրապետության դեսպանը Թիֆլիսում, 1919 թ-ից՝ Հայաստանի խորհրդարանի անդամ, Հայաստանի Հանրապետության զինահավաքման արտակարգ կոմիսար, 1920 թ-ին՝ հաղորդակցության ճանապարհների նախարար: 1920 թ.-ի օգոստոսի 10-ին Թիֆլիսիում Ա. Բաբայանի հետ միասին ստորագրել է Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև համաձայնագիր Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեզրանի հետ: - 1921 թ-ին մասնակցել է բոլշևիկների և դաշնակցականների միջև Ռիգայի բանակցություններին: Հայաստանի անկախության կործանումից հետո տարագրվել է, արտասահմանում 1918 թ-ին՝ Հայաստանի Հանրապետության դեսպանը Թիֆլիսում, 1919 թ-ին՝ Հայաստանի խորհրդարանի անդամ, զինահավաքման արտակարգ կոմիսար, 1920 թ.-ին՝ հաղորդակցության ճանապարհների նախարար: - 1920 թ-ի օգոստոսի 10-ին Թիֆլիսիում ստորագրել է զինադադարի համաձայնագիր Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեզրանի հետ: 1921 թ-ին մասնակցել է բոլշևիկների և դաշնակցականների միջև Ռիգայի բանակցություններին, շարունակել կուսակցական ու հրապարակախոսական գործունեությունը: (տե՛ս Մ.Բաբայան, Հուշամատյան..., էջ 108):

⁸² **Մելիք-Ղարազյոզյան Գևորգ բեկ Պողոս բեկի** (1873թ., Էրիվան, Ռուսական կայսրություն - 1940թ., Թբիլիսի, ԽՍՀՄ): Հայ պետական, հասարակական գործիչ, մանկավարժ: Կրթությունը՝ Հեյդելբերգի և Բեռլինի համալսարաններ, Բրյուսելի կոնսերվատորիա (ջութակի դասարան): Հայ ժողովրդական կուսակցության անդամ,

յան⁸³ մեկնել էր Գերմանիա: Այն անձինք, ովքեր հատուկ հետաքրքրվում են հայ-գերմանական հարաբերություններով և հայկական հարցի վերաբերյալ Գերմանիայի դիվանագիտական նամակագրությամբ, համապատասխան նյութեր կարող են գտնել 1919թ. հրատարակված „Deutschland und Armenien 1914-1918. Lammlung diplomatischer akxenstucke – herans detebenundein zeletelvonfrJahannes Zepsius” հատորում:

Ծանոթանալով թուրքական պատվիրակության հետ, մենք պայմանավորվեցինք նրանց հետ, որ առաջին նիստը կկայանա 1918թ. մայիսի 11-ին: Այդ նիստը կայացավ տեղական ակումբի շենքում, ցերեկը ժամը 4-ին: Միջազգային հարաբերություններում ընդունված կարգի համաձայն, քանի որ Բաթումը գտնվում էր թուրքերի ձեռքում, ուստի և հանդիսանում էր թուրքական տարածք, նիստին նախագահում էր Խալիլ-բեյը: Բա-

1918-1919թթ. եղել է Հայաստանի Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար, արտաքին գործերի փոխնախարար: Գ.Մելիք-Ղարապյոզյանը որպես Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչ մասնակցել է 1918թ. գարնանը Բեռլինում կայացած գերմանական կողմի հետ հանդիպումներին, հայ-գերմանական կանգնած է եղել մեր Համալսարանի ստեղծման ակունքներում: Հայաստանի խորհրդայնացումից հետո բնակվել է Թիֆլիսում: (տե՛ս Մ.Բաբայան, Հուշամատյան... , էջ 42; Դ.Պետրոսյան, ԳԵՎՈՐԳ ՄԵԼԻՔ-ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆԸ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ, Հայագիտության հարցեր, Հանդես, 2(17), Երևան, 2019, էջ. 3-11):

⁸³ **Նազարյանց Լիպարիտ Հովհաննեսի** (1877թ., Վաղարշապատ, Ռուսական կայսրություն -1947թ., Մարմինա,) Հայ քաղաքական, հասարակական, ազգային և գրական գործիչ: Կրթությունը՝ Մոսկվայի և Բեռլինի համալսարաններ, ՀՀԴ անդամ: 1918թ.՝ **Ստեփան Շահումյանի** հետ կազմած համատեղ գործունեության ծրագրի շրջանակներում Մոսկվայում հանդիպումներ է ունեցել Խորհրդային Ռուսաստանի տարբեր բոլշևիկ ղեկավարների հետ, սակայն ձերբակալվել է և միայն 1919թ. ազատ է արձակվել: Որպես լեզուների հմուտ գիտակ և թարգմանիչ 1918թ. գարնանը մասնակցել է Բեռլինում կայացած հայ-գերմանական հանդիպումներին, հետագայում՝ Մոդոնոն Թեհլիրյանին կալանքից ազատելու գործընթացին, Լոզանի համաժողովում իրականացրել հայկական պատվիրակության թարգմանչական ու գործավարական պահանջները: Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայրենիքից դուրս ապրած տարիների ընթացքում իրականացրել է բեղմնավոր գրական և հրապարակախոսական ծավալուն գործունեություն: (տե՛ս Վ.Ն.Ղազարյանցյան, Դաշնակցական պատանդները Խորհրդային Մոսկվայում, ՎԷՄ, 2 (46), 2014, էջ. 209-215; Խ.Թիլիբինճեան, Անմահներուն հետ, Կահիրե 1974թ.):

ցի Անդրկովկասյան Մեյմի անդամներից, երկու կողմերի համաձայնությամբ, ներկա էին նաև Հյուսիսային Կովկասի և Դադստանի ներկայացուցիչները: Խալիլ-բեյն արտասանեց ողջույնի խոսքը, -ինչպես ընդունված է, չափազանց ծաղկազարդ ձևով և լի ընտրյալ կեղծավորությամբ: Այդ ելույթից հետո Չխենկելին Անդրկովկասյան պատվիրակության անունից արեց երկու հայտարարություն. նա հայտնեց, որ Անդրկովկասն իրեն հայտարարել է անկախ,- ինչի մասին արդեն տեղեկացվել են բոլոր տերությունները և առաջինը,- հենց Թուրքիան, և, որը միանգամայն բնական է, որ բանակցությունների հիմքում պետք է դրվի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ինչի մասին Օսմանյան պատվիրակությունը պնդում էր Տրապիզոնում: Խալիլ-բեյը կատարեց մի տեսակ խուսափողական հարցում. իսկ առհասարակ, կա՞րոյոք անհրաժեշտություն, որպեսզի ապագա բանակցությունների հիմքում դրվի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Չխենկելին պատասխանեց. “Այո, մեր բանակցությունների հիմքում պետք է լինի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը”: Այդ պահին խալիլ-բեյը արեց հաջորդ հայտարարությունը, որը միանգամից բացահայտեց թուրքերի բոլոր նպատակները: Նա ասաց. “Հա, բայց Տրապիզոնի բանակցություններից հետո զինված պայքար է ընթացել թուրքական և Անդրկովկասյան զորքերի միջև և, դժբախտաբար, արյուն է թափվել: Այսպիսով, մեր հարաբերությունների բնույթը փոխվել է և, հետևաբար, ես չեմ կարող ընդունել, որպեսզի հենց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ճանաչվի այս բանակցությունների համար որպես բացառիկ հիմք”:

Այդ հայտարարությունը կանխորոշեց հետագա իրադարձությունների ամբողջ ընթացքը: Անձամբ ես սպասում էի դրան: Դրա համար էլ դեռևս Տրապիզոնից մենք հեռագրում էինք,- ընթերցողը գիտի իմ և Քաջազնունու հեռագրի մասին, որտեղ շեշտված էր, որ. “Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ընդունումը պետք է համարել չարյաց փոքրագույնը”: Դա ասվել էր մարտի 28-ին: Անցավ 44 օր: Մեր առջև հերթով անցան Մեյմուն արտասանած բոցաշունչ ճառերը, Բաթումի անփառունակ հանձնումը, վրացական դիմադրության ինն օրը, Կառավարության փոփոխությունը, Անդրկովկասի անկախացումը, Կարսի անկումը, քաղաքի հրդեհումն ու բնակչության կոտորածը, հայերի տառապանքները... Եվ այդ ամենը նրա

համար, որպեսզի մերժվեր Բրեստի պայմանագիրը: Եվ անհա, 44 օր անց, Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը մեր համար դարձավ “չարյաց փոքրագույնի” որոնման առարկա, սակայն այս անգամ արդեն թուրքերն այն մեզ չէին տալիս: Դա նշանակում է՝ ուշանալ քաղաքականության մեջ: Մեր պատմության վերջին յոթ տարվա ընթացքում մենք մի քանի անգամ ուշացել ենք: Դրա պատճառը՝ սեփական ուժերի գերազանահատումն է և հակառակորդի ուժերի թերազանահատումը:

Խալիլ-բեյի հայտարարությունից հետո սկսվեց մտքերի փոխանակում, ինչը Խալիլ-բեյը բնութագրեց որպես “անպտուղ”: Անելով հակադրվելու անպտուղ լինելու մասին հայտարարությունը, Խալիլը հայտնեց, որ իր մոտ կա պայմանագրի նոր նախագիծ, որը նա հանձնեց Չխենկելուն: Նախագիծը տեղադրված էր մի հաստ ծրարի մեջ, որը կնքված էր գմուռսե կնիքով:

Գերմանական ներկայացուցիչ ֆոն Լոսսովը⁸⁴ հայտարարեց, որ ինքն “Ի գիտություն է ընդունել Օսմանյան և Անդրկովկասյան պատվիրակությունների տեսակետների տարբերությունը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի վերաբերյալ և որ ինքը պատրաստ է ուսումնասիրել օսմանյան առաջարկվող նախագիծը՝ գերմանական շահերը պաշտպանելու նպատակով”: Այդքանով նիստն աավարտվեց: Երեկոյան ժամը 6 անց 35 րոպե էր:

Մենք մեր կացարան վերադարձանք մռայլ և խորը մտահոգությամբ: Բնականաբար, մեր առաջին գործը եղավ բացել փաթեթը և ծանոթանալ թուրքական փաստաթղթի բովանդակությանը:

Այսօրվա նման հիշում եմ այդ պահը. Ծրարն ինձ մոտ էր, մենք գտնվում էինք Քաջազնունու սենյակում: Ես բացեցի ծրարը և ազահորեն սկսեցի փնտրել սահմանները: Այն, ինչ ես ընթերցեցի, գերազանցում էր մեր բոլոր սպասելիքները. Բացի Կարսի մարզից, թուրքերը մեզանից խլել էին Ալեքսանդրապոլը, Սուրմալուի գավառը և երկաթուղագիծը: Մի խոսքով, Հայաստանը սեղմված էր երկաթյա աքցանով, որտեղ էլ նա պետք է խեղդվեր: Քաջազնունին եկավ, նստեց սեղանի առաջ, գլուխն ա-

⁸⁴ Օտտո Հերման ֆոն Լոսսով (1868-1938), այդ ժամանակ Գերմանիայի ռազմական կցորդը Թուրքիայում:

ռավ ձեռքերի մեջ և սկսեց լուռ տառապել: Տիրեց լռություն: Մի քանի րոպե անց թուրքական պահանջները հայտնի դարձան մեր ամբողջ պատվիրակությանը:

Առավել ուժեղ հարված հասցվում էր հայերին, բայց վրացիներն էլ փաստաթղթից հասկացան, վրացական հատվածում սահմանագիծը իրենցից վերցնում է Ախալցխայի գավառի մի մասը: Մեր զայրույթը սահման չունեք: Հաջորդ օրը ժամը 12.00-ին պատվիրակությունը հավաքվեց խորհրդակցության: Ընդհանուր կարծիքը ձևավորվեց շատ արագ. համառել Բրեստ-Լիտովսկի պայմանների ընդունման համար, հիմնվելով այն փաստի վրա, որ պայմանագիրը ստորագրել են Գերմանիան, Ավստրիան և Բուլղարիան: Վերջին երեքը, փաստորեն, ներկայացված էին միակ՝ գեներալ ֆոն Լոսսովի դեմքով, ըստ այդմ էլ մենք ուղևորվեցինք նրա մոտ, հայտնելով մեր բուռն բողոքը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի նման խախտման կապակցությամբ: Այժմ արդեն մենք եռանդագին պաշտպանում էինք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Ջուսպ, բայց չափազանց պարզ ձևով գեներալը մեզ հասկացրեց, որ իր տեսակետը համընկնում է մեր տեսակետի հետ, սակայն ինքն ականա պարտավոր է լինել շատ զուսպ: Հետագայում՝ փաստաթղթերի վերոնշյալ ժողովածուի հրապարակումից հետո, ես տեղեկացա, որ նույն գիշերը գեներալը վրդովված հեռագիր է ուղարկել Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանին և միաժամանակ՝ Գերմանիայի կառավարությանը: Այդ հեռագիրը թվագրված է. Բաթում՝ 13 մայիսի և Կոստանդնուպոլիս՝ 15 մայիսի:

Այդ հեռագրի բովանդակությունը ես կրեբեմ ստորև, իսկ այս պահին կասեմ, որ թուրքերն ամեն գնով հետաձգում էին գերմանական հեռագրերն ուղարկելը, ինչի վերաբերյալ գեներալ ֆոն Լոսսովն անձամբ ինձ է բողոքել:

Մայիսի 13-ին ֆոն Լոսսովը հեռագրում էր Կոստանդնուպոլիս գերմանական դեսպանորդ կոմս Բերխտորֆին հետևյալը. «ամեն չափերն անցնող թուրքական պահանջները՝ Ախալքալաքի, Ալեքսանդրապոլի և Էրիվանի գուբերնիայի մի մասի հայկական տարածքների նկատմամբ, ինչը մեծապես գերազանցում է Բրեստի պայմանագրով նախատեսվածը, ունեն պարզապես հայերին Անդրկովկասում ոչնչացնելու

նպատակ: Այսօր, առանց ինձ տեղեկացնելու, թուրքերը վերջնագիր են ներկայացրել հայերին, որպեսզի թուրքական զորքերին հնարավորություն տրվի անցնել Ալեքսանդրապոլ-Ջուլֆայով: Ես իմ բողոքն եմ արտահայտել նման գործողությունների դեմ”: Վերահասցեագրելով այս հեռագիրը Բեռլին՝ Կառավարությանը, Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանը մայիսի 15-ի իր հղած հեռագրում իր կողմից Կառավարությանը հորդորում է ընդունել երկու դրույթ. ա/ Թուրքիան, որպես հիմք պետք է ընդունի Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, բ/ որպեսզի դյուրին դարձվի թուրքերի նահանջը իրենց նոր նախագծից, անհրաժեշտ է ներշնչել թուրքերին իրականացնել հետևյալ փոխանակումը. Առաջարկել թուրքերին վերցնել Ախալցխայի գավառի թաթարական հատվածը և այն փոխանակել Բաթումի մարզի վրացական հատվածի և Կարսի մարզի հայկական (Շորագյալ-Կաղզվան) հատվածի հետ: Ընդ որում, Կարս ամրոցը կմնա թուրքերի ձեռքում: Կոմս Բերնդորֆն ավելացնում է, որ իր տեղեկությունների համաձայն, Խալիլ –բեյը և Վեհիբ-փաշան համաձայն են այդ փոխատեղմանը, սակայն Էնվեր-փաշան է համառում Անդրկովկասյան Հանրապետությանը անհապաղ վերջնագիր ներկայացնելուն: Բայց դա առաջ կրերի նոր արյունալի պատերազմ Կովկասում: Դրանից խուսափելու միակ միջոցը՝ հայտարարել Մեծ վեզիր Թալեաթին, որ նման քաղաքականությունը աջակցություն չի գտնի դաշնակիցների մոտ և, դաշնակիցների ընդդիմանալու պարագայում կվնասի Թուրքիայի շահերին: Այդպես էին մտածում և գործում գեներալ Լոստովը Բաթումում և դեսպանորդ, կոմս Բերիսդորֆը Կոստանդնուպոլսում:

Այդ օրերին, իսկ ավելի ճշգրիտ՝ 1918թ. մայիսի 15-ին Թիֆլիս է ժամանում գերմանական ռազմա-քաղաքական առաքելությունը գեներալ ֆոն Կրեսսի գլխավորությամբ: Այդ մասին մայիսի 21-ին Գերմանիայի արտաքին գործերի մինիստրի տեղակալ Soppert-ը Բեռլինում հայտնում է Հայկական Ազգային Խորհրդին՝ ի դեմս Լիպարիտ Նազարյանցի: Soppert-ը իր գրության մեջ նշում է, որ “թուրքերը ցանկանում են ընթրլայնել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի շրջանակները, ինչը առաջ կրերի նոր ընդհարումներ հայերի հետ: Գերմանական Կառավարությունը այդ ուղղությամբ բանակցում է Թուրքիայի կառավարության հետ: Իսկ մեզ

անհրաժեշտ է մեկնել Կովկաս և տեսնվել գեներալ ֆոն Կրեսսի և գեներալ ֆոն Լոսսովի հետ”։ Հետագայում մենք տեսնում ենք, որ հունիսի 9-ին գեներալ-ֆելդմարշալ Հինդենբուրգը հեռագրում է Էնվեր-փաշային. “Գերագույն հրամանատարության անունից խնդրում եմ Ձերդ Գերագանցությանը հրամայել, որպեսզի բոլոր թուրքական զորքերը դուրս բերվեն կովկասյան տարածքներից՝ բացառությամբ Կարսից, Արդահանից, Բաթումից։ Ֆելդմարշալ Հինդենբուրգի հրամանով՝ գեներալ Բեքեյմ”։

Գերմանական այդ բոլոր հակառակումները ունեին երկու պատճառ. նախ գերմանացիները ցանկանում էին մնալ իրենց նախագծած՝ Բրեստի պայմանագրի շրջանակներում, քանզի ամեն ինչի համար իրենք ունեին իրենց նախանշած ծրագիրը։ Իսկ երկրորդը՝ իրենք հրաշալի տեղյակ էին, որ թուրքերը խախտում են ընդհանուր ծրագիրը։ Այդ ամենի մասին նրանք տեղեկացված էին Բաթումի մեր զեկույցներից՝ գեներալ Լոսսովի և Բեռլինում՝ Հայոց Ազգային Խորհրդի միջոցով։

Գեներալ Լոսսովն ինձ ասում էր, որ ընդհանուր ծրագիրը պահանջում էր, որպեսզի թուրքերը ճնշում գործադրեն դեպի հարավ՝ Բաղդադի ուղղությամբ, որպեսզի կանխեն անգլիացիների առաջխաղացումը, նրանք, իրենց հատուկ պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու նպատակով, խախտելով ընդհանուր պլանը, շարժվում էին դեպի Բաքու և Հյուսիսային Կովկաս։ Այդ հողի վրա էլ տեղի էին ունենում բախումներ՝ դաշնակիցների ընդհանուր շահերի և թուրքական՝ առանձնակի շահերի միջև։ Դա ինձ բացատրեց Վեհիբ-փաշան։ Այնպես որ, այդ միտքը, փաստորեն, ես լսել եմ և՛ գեներալ Լոսսովից, և՛ Վեհիբ փաշայից։

Այստեղից պարզ է դառնում մի կողմից գերմանացիների որոշ հայանպաստ դիրքորոշումը, իսկ մյուս կողմից՝ թուրքերի անհազ ձգտումը դեպի Կովկաս։

Մենք փորձ արեցինք Բաթումի բանակցություններին ներգրավել նաև բուլղարացիներին, ինչի համար նաև էինք փնտրում Վառնա բանագնաց ուղարկելու համար։ Մեր պատվիրակության վարչական մասի աշխատակիցներից մեկը՝ մի ձեռներեց վրացի, հանձն առավ գտնել մի նավ, սակայն դեպքերի շատ արագ զարգացումը թույլ չտվին իրագործել այդ նախագիծը...

Թուրքական պատվիրակությունը, չստանալով պայմանագրի իրենց նախագծի պատասխանը, մայիսի 14-ին նոր պահանջ ներկայացրեց. թույլ տալ թուրքական զորքի տեղաշարժը Ալեքսանդրապոլից դեպի Ջուլֆա: Ինչպես խաղաղ պայմանագրի նախագծի, այնպես էլ այս պահանջի մասին մենք հաղորդեցինք Թիֆլիս: Այդ նպատակով ես գնացի Նաթանեբի կայարան և ուղիղ կապով կապվեցի Ահարոնյանի և Կարճիկյանի հետ, ինդրեցի, որ քննարկեն թուրքական կողմի առաջարկները և պատասխանեն: Մինչև եկավ պատասխանը, մայիսի 14-ի լույս 15-ի գիշերը կայացավ տեսակցություն՝ Խալիլ-բեյը, Վեհիբ-փաշան, Քաջազունին և ես: Տեսակցությունն ընթանում էր Խալիլ-բեյի բնակարանում՝ Չիլինգարյանների հոյակերտ հայկական տանը, որը զբաղեցնում էին թուրքերը: Մեր տեսակցությունը տևեց երկու ժամ: Խալիլ – բեյն ասում էր. ”Հասկացեք գործերի դրությունը: Ես և Վեհիբ-փաշան երիտթուրքական կոմիտեում ներկայացնում ենք խաղաղ ուղղությունը: Թալեաթը և Էնվերը ցանկանում են, առհասարակ ոչնչացնել հայկական տարածքները: Դուք օգնեք մեզ մեր դիրքորոշման մեջ: Գնացեք առաջարկվող բոլոր զիջումների, հնարավորություն սվեք, որ մենք երկաթգծով շարժվենք դեպի Ջուլֆա, Պարսկաստան, իսկ Ղարաբաղի խառնուրդով՝ դեպի Բաքու և Կովկաս: Հետագայում, պատերազմն ավարտվելուց հետո, մենք կգանք Ձեզ օգնության և կշտկենք այն ամենը, ինչ այսօր ձեզանից խլում ենք: Ապագայում մենք Ձեզ կոգնենք: Իսկ այսօրվ Ձեր դիմադրությունը միայն կվնասի Ձեզ և կրկին արյուն կթափվի:

Բացի դրանից, Խալիլն սկսեց վերհիշել այն բոլոր դեպքերը, երբ հայերն աշխատել են իր հետ և պնդում էր, որ ինքը հայերի համար եղել է շատ լավ խորհրդատու: Մենք Քաջազունու հետ մեր դառնությունն արտահայտեցինք առ այն, որ բացի հայերին ոչնչացնելուց, թուրքերը այլ քաղաքականություն հայերի հանդեպ չեն ունեցել, բայց նայնպես, որ մենք էլ ենք ուղիներ փնտրում համաձայնության գալու համար, սակայն իրենց անզիջում դիրքորոշմամբ թուրքերը հենց իրենք են մեզ դրդում ընդհարումների: Զրույցի արդյունքում մենք պայմանավորվեցինք, որ հայտնի երախշիքների դեպքում՝ այն է, որ զորքերը մենք բաց կթողնենք միայն

գերմանական հսկողության առկայության պարագայում և Թիֆլիս ուղարկեցինք համապատասխան հեռագիր:

Իսկ ինչ վերաբերում է պայմանագրի պայմաններին, ապա Խալիլը ինձ հայտնեց, որ զուտ իր խաղաղասիրությունն է, որ իրավիճակը դեռ պահպանվում է, քանզի վերջնագիրն իր գրպանում է, սակայն, չնայած Էնվերի համառ պահանջներին, ինքը հույս ունի, որ Անդրկովկասը առանց վերջնագրի էլ կլուծի վեճը՝ գնալով պահանջվող զիջումների:

Սակայն, Անդրկովկասյան Կառավարությունը իր մայիսի 15-ի հեռագրով պատվիրականությունը հրահանգում էր բանակցություններ սկսել թուրքական կողմի հետ Ջուլֆա-Ալեքսանդրապոլ երկաթգծի վերաբերյալ, իսկ մինչև համաձայնության գալը գեներալ Նազարբեկովին հրամայում էր “ պահել Ալեքսանդրապոլն ու երկաթգիծը զենքի ուժով”: Մինչդեռ մայիսի 15-ին թուրքերը կրկին հայտնեցին, որ միայն Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չէ, որ պետք է հիմք հանդիսանա վարվող բանակցությունների, և, միաժամանակ իրենք գտնում են, որ պայմանագիր հնարավոր է կնքել նաև առանց դաշնակիցների և որ նրանք հետագայում “կարող են միանալ” դրան:

Մինչդեռ, այն ժամերին, երբ մենք Բաթումում բանավիճում էինք թուրքերի հետ խաղաղության պայմանագրի պայմանների շուրջ, մայիսի 15-ին, ժամը 7.15-ին, թուրքերը, չսպասելով մեր բանակցությունների ավարտին, հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա: Նրանք առավոտյան ժամը 5-ին գեներալ Նազարբեկովին քաղաքը հանձնելու վերջնագիր էին ուղարկել, պատասխանի համար տալով 3 ժամ ժամանակ: Սակայն, առանց պատասխան ստանալու, հարձակվեցին և գրավեցին քաղաքը: Եվ կրկին հայտնի տեսարան՝ քաղաքն ու կայարանը հրետակոծվում են, խուճապ, փախչող բնակչություն, որը փրկվում է ոտքով Ղարաքիլիսա հասնելով: Կեսօրին Ալեքսանդրապոլն արդեն թուրքերի ձեռքում էր: Մայիսի 17-ին և 18-ին ընթանում էր լարված հեռագրային աշխատանք. Բաթումի և Թիֆլիսի միջև տեղի էր ունենում հեռագրերի փոխանակում: Մենք մայիսի 17-ին բողոքում էինք թուրքերի նման գործելակերպի կապակցությամբ: Սեյմի “Դաշնակցության” խմբակցությունը մայիսի 18-ի իր հեռագրով մեզ խնդրում էր երեք հարցերի վերաբերյալ. Որպեսզի գեր-

մանացիները հսկեն Ալեքսանդրապոլ-Չուլֆա երկաթգծի երկայնքով գտնվող երկաթգծի կայարանները, որպեսզի մեր զորքերը մնան իրենց դիրքերում, քանի որ թուրքերը պահանջում էին երկաթուղու երկու կողմում իրականացնել ապառազմականացում 25 կմ խորությամբ և, եթե խաղաղության պատվիրակությունը թուրքերից կստանա համապատասխան երաշխիքներ, կոչով դիմի բնակչությանը, որպեսզի հանգիստ մնան իրենց տեղում: Հեռագիրը ստորագրել էր Կարճիկյանը:

Մենք այդ երեք կետերի կապակցությամբ դիմեցինք գեներալ Լոսսովին և Խալիլին: Գեներալ Լոսսովը հասկացրեց, որ թուրքերը հաշվի չեն նստում իր բողոքների հետ, բայց, համենայնդեպս, խոստացավ շփման մեջ մտնել իր կառավարության հետ: Հալիլ-բեյն ու Վեհիբ-փաշան մեզ պատասխանեցին. “Ձեր ինչի՞ն են պետք գերմանացիները: Մենք ինքներս կարող ենք պայմանավորվել Ձեր հետ: Բնակչությունը թող մնա իր տեղերում”: Չստանալով երաշխիքներ, մենք որևիցե կոչով, որտեղ նշվեր, որ մարդիկ մնան իրենց տեղերում, բնակչությանը չդիմեցինք:

Տեսնելով, որ մեր և թուրքերի անմիջական շփումների միջոցով ուրևիցե հարց լուծում չի ստանում, և խաղաղ պայմանագիրը, որպես այդպիսին, նույնիսկ չի էլ դիտարկվում, գեներալ Լոսսովը մայիսի 19-ին Անդրկովկասյան պատվիրակությանն ուղարկեց հետևյալ հետաքրքիր նամակը. “Բաթումի բնակչություններում առաջընթաց չի արձանագրվում և անդրկովկասյան և օսմանյան ներկայացուցիչների միջև շփումները մինչ օրս հաջողություն չեն ունեցել (կամ հասել են իրենց ավարտին): Սակայն բոլոր կողմերի շահերից է բխում հնարավորինս արագ հասնել արդյունքի, ըստ այդմ էլ, պարոն մինիստր, ես պատիվ ունեմ առաջարկելու Ձեզ իմ բարի ծառայությունները որպես միջնորդ: Ես խնդրում եմ չմերժել, ինձ պաշտոնական պատասխան հղել, թե պատրաստ է արդյոք Անդրկովկասյան պատվիրակությունը ընդունել իմ առաջարկությունը: Ֆ.Լոսսով”: Նույն օրը, այդ առաջարկության քննարկման և պատասխան հայտնելու համար, երեկոյան ժամը 8.30-ին տեղի ունեցավ պատվիրակության նիստ: Ես և Քաջագնունին անմիջապես տվեցինք մեր համաձայնությունը: Վրացիները՝ նույնպես: Թաթարները՝ իրենց բոլոր պատվիրակները, Գյանջինսկին, Ռասուլ-գադեն, երկար ժամանակ չէին տալիս

իրենց համաձայնությունը: Նրանք առաջարկում էին նախ պարզել, թի ինչպիսին է այդ հարցի վերաբերյալ թուրքերի կարծիքը: Նրանք չէին ցանկանում անել մի քայլ, որը կարող է տհաճ լինի թուրքերի համար: Երկար խոսակցություններից հետո, վերջապես, նրանք էլ տվեցին իրենց համաձայնությունը, և գիշերը ժամը 12.00-ին մենք գեներալ ֆոն Լոստովին ներկայացրեցինք հետևյալ պատասխանը. “Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ Անդրկովկասյան պատվիրակությունը գոհունակությամբ ընդունում է միջնորդ լինելու Ձեր բարի ծառայությունների առաջարկը, ինչպես որ Դուք հարմար եք գտել ներկայացնել մայիսի 19-ի Ձեր նամակում”:

Իսկ այդ ընթացքում, թուրքերը, գրավելով Ալեքսանդրապոլը շարժվել էին առաջ: Հայկական կորպուսի հրամանատար, գեներալ Նազարբեկովը մայիսի 20-ին հեռագրել էր. “Չնայած հրադադարին, թուրքերը շարունակում են հարձակումը Ղարաքիլիսայի ուղղությամբ և դուրս են մղել մեր ուղեկալը Ավդիբեկ գյուղից: Նրանք շարժվում են Լոռվա ուղղությամբ, և, ակնհայտորեն, այնտեղից՝ դեպի Թիֆլիս, ինձ համար պարզ է, որ Ալեքսանդրապոլի և երկաթուղու գրավումն ընդամենը առիթ էր”:

Հայոց Ազգային Խորհուրդը, տեսնելով, որ ընթացող պատերազմն իր էության դարձել է զուտ հայ-թուրքական պատերազմ, Բաթում ուղարկեց Համո Օհանջանյանին, Բեկզադյանին⁸⁵ ու Զուրաբյանին՝ գեներալ Լոստովի միջոցով Գերմանիայի Կառավարությունից պաշտոնապես հովանավորություն խնդրելու համար: Մայիսի 20-ին Բաթում ժամանած Հայ Ազգային Խորհրդի անդամներին մենք բացատրեցինք, որ Բաթումում մենք փաստացի գտնվում ենք մեր համերկրացի՝ Անդրկովկասի քաղաքացիների թշնամական օղակում: Մահմեդական պատվիրակները ոչ միայն մեզ չեն աջակցում, այլ ուղղակիորեն վնասում են մեզ: Նրանից

⁸⁵ **Բեկզադյան Տիգրան Հարությունի (1873թ., Արցախ, Ռուսական կայսրություն-1942, Փարիզ):** Հայ պետական գործիչ, դիվանագետ, 1918-1921թթ. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Ադրբեջանում, ապա՝ Վրաստանում: Բուլշևիկների կողմից Հայաստանի և Վրաստանի անկախությունը վերացնելուց հետո տարագրվել է Եվրոպա և հաստատվել Ֆրանսիայում:

գատ, որ ամեն հարցում նրանք դրսևորում են թուրքական կողմնորոշում, նաև ստիպում են մեզ հրաժարվել մեր ազգային կեցության տարրական իրավունքներից: Օրինակ՝ երբ խոսքը մեր համար է, Ալեքսանդրապոլի գավառի մի հատվածը թուրքերից փրկելու մասին, նրանք հայտարարում էին, թե հայկական տարածքի, իսկ հետագայում՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր քաղաքը պիտի լինի Վաղարշապատ (Էջմիածին) գյուղը, քանի որ Էրիվանը պետք է անցնի Ադրբեջանին: Ուսսուբեկովի և Խան-Խոյսկու շուրթերով նրանք հայտարարում են, թե իբր Էրիվանը թաթարական քաղաք է և մահմեդականներն իրենց չեն ների, եթե իրենք Էրիվանը զիջեն հայերին:

Իսկ պատվիրակության հետևում եկել հավաքվել էին մահմեդականների ներկայացուցիչներ Ելիզավետպոլից և Ախալցխայից՝ Մուլթանով, Ռաֆիբեգով և այլք, որոնք անմիջականորեն իրենց երկիրն էին հրավիրում թուրքերին և շատ լավ ճանաչում էին Կովկասը: Այդ ամենը շատ ցայտուն երևաց նրանց կողմից ստորագրած մի թղթում, որով նրանք Ախալցխայի և Ախալքալաքի մահմեդականության անունից թուրքերին խնդրում էին Թուրքիային միացնել այդ գավառները: Մենք մեզ զգում էինք մեր վրա հարձակված թուրքերի դաշնակիցներով և մեր ուղղակի թշնամիներով շրջապատված:

Նման պայմաններում միակ հույսը մնում էր գերմանացիների միջամտությունը: Մենք կիսում էինք Ազգային Խորհրդի տեսակետները, նախապատրաստեցինք քարտեզներ, տվյալներ և որոշեցինք համատեղ զեկույց ներկայացնել գեներալ Լոսսովին: Որոշեցինք չհետաձգել և շտապել: Քաղաքականապես մենք հետևում էինք վրացիների օրինակին:

Ես և Քաջագուննին նրանց հետ միասին եղանք գեներալ Լոսսովի մոտ՝ մայիսի 21-ին: Բացատրեցինք նրան հայերի վիճակը: Նա խնդրեց մեր ասելիքը ներկայացնել գրավոր: Մայիսի 22-ին այն հանձնվեց գեներալին: Մայիսի 23-ին գեներալը բավականին հանգամանալից հեռագիր ուղարկեց Գերմանիայի կցորդին, որտեղ ներկայացնում էր հարցի էությունը: Հեռագրում նա նշում էր, որ “Հայ Ազգային Խորհրդի ներկայացուցիչները և պատվիրակության անդամ հայ մինիստրները իր հետ ունեցել են մի շարք զրույցներ և Գերմանիայից սպասում են օգնություն և իրենց

ողբերգական վիճակի փրկություն”։ Նա նկարագրում էր փախստականների վիճակը և թուրքերի պահանջների չափազանցված լինելը։ “Թուրքերի նպատակը,- ասում էր նա- միշտ էլ նույնն է. զավթել հայկական տարածքները և ոչնչացնել հայերին։ Էնվերի և Թալեաթի հակառակ պնդումները ոչ մի արժեք չունեն”։ Անցնելով կարծես թե գերմանական շահերին, գեներալն ասում էր, որ հայկական տարածքները գրավելու դեպքում հայերը կանցնեն պարտիզանական պատերազմի, կսկսեն հարձակվել երկաթգծով տեղափոխվող զորքերի վրա, և կովկասյան ռազմաճակատը կդառնա չափազանց ծանր ու վտանգավոր։

Խալիլը գտնվում էր հեռագրակապի մեջ Կոստանդնուպոլսի հետ և վստահեցնում էր մեզ, որ ինքը համոզում է Էնվերին ու Թալեաթին գնալ զիջումների, սակայն Երիտթուրքական Կոմիտեն չի ցանկանում գնալ և ոչ մի զիջման։ Իրավիճակն այսպիսին էր. գերմանացիներն ամրանում և ուժեղանում էին Թիֆլիսում՝ վրացիների տարածքներն ու շահերը պաշտպանելու համար, իսկ թուրքերը շարժվում էին հայկական տարածքներով և պատերազմը ընդդեմ թուրքերի մղում էին միայն հայերը։ Բաթումում հարցերը կանգ էին առել “սառելու կետում”։ Մայիսի 22-ին “Գյուլ Ջիմալ” շոգենավով Բաթում ժամանեց թուրքական ռազմածովային մինիստր Ջեմալ-փաշան։ Նա պաշտոնական այցով հանդիպեց մեր պատվիրակությանը։

Ես շատ լավ եմ հիշում այդ օրը. Մեր պատվիրակությունը Ջեմալ-փաշային դիմավորեց երեք ելույթներով. Վրացիների անունից խոսեց Չիսենկելին, հայկական կողմից՝ ես և թաթարական կողմից՝ Ռսուլ –գադեն։ Մենք համերաշխ խոսում էինք Անդրկովկասի շահերից, իսկ հետո էլ, ամեն մեկս առանձին-առանձին՝ մեր ազգային շահերի մասին։ Ելույթներում մենք շեշտում էինք Թուրքիայի և Անդրկովկասի համերաշխության անհրաժեշտությունը, նշում, որ արյուն հեղելու փոխարեն ավելի ճիշտ կլինի խաղաղություն հաստատել և ամեն մեկին հնարավորություն տալ շնչել ու ապրել, աշխատել և կերակրվել։ Ես, նկարագրելով փախստականների սարսափելի վիճակը, և առհասարակ, ամբողջ պատերազմի արհավիրքները, խնդրում էի վերադառնալ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի պայմաններին։

Ջեմալ-փաշան շատ սրտագին պատասխանեց Ռասուլ-գադեին: Ասաց, որ իրենք եղբայրներ են, որ իրենք հասկանում և սիրում են միմյանց, և որ թուրքերը գալիս են “ազատագրելու” իրենց: Հետո անցավ վրացիներին: Այս ելույթում նրա տոնը սիրալիր էր, սակայն վերջում, կարծես, նկատվեցին շղայնության որոշակի եզրեր: Նա ասաց, որ վրացիների հետ իրենք ունեցել են կարճատև թյուրիմացություններ, սակայն դրանք անցողիկ են և հետագայում իրենք միմյանց հետ կսերտանան: Պատասխանելով ինձ, նա դարձավ չափազանց կոշտ ու մռայ, խոսեց կամաց ու դանդաղ: Նրա դեմքն ինձ համար միշտ հակակրելի է եղել. նրա աչքերը մշտապես լցված էին ինչ-որ դաժանությամբ ու մռայլությամբ, դեմքը՝ չափազանց սև ու մազակալած, արևահարված, ասես երբևիցե տեսած չէր եղել եվրոպական նրբագեղություն: Նա ասում էր, որ թուրքերի և հայերի վեճը շատ հին է, որ հայերը ոչ մի քայլ չեն անում թուրքերի հետ խաղաղ ապրելու համար և որ դա հայերի համար դառնալու է նոր տառապանքների պատճառ: Նա սկսեց խոսել նաև Անդրանիկի անհաշտ դիրքորոշման մասին Ջանգեզուրում, հայերի և բոլշևիկների միջև կապերի մասին, հայերի կողմից մահմեդականների հանդեպ գործադրվող ճնշումների մասին: Զգացվում էր, որ խուլ ու բարձր մի պատ է առանձնացնում Ջեմալ-փաշային ու հայերին, և որ Ջեմալի մեջ եռում է ատելությունը հայերի հանդեպ, որոնք կանգնած են իրենց ճանապարհին: Հետագայում ես տեսել եմ Ջեմալին Կոստանդնուպոլսում, այնտեղ նրա խոսքն ավելի մեղմ էր, իսկ Բաթումում մեր հանդիպումը լի էր մռայլ թշնամությամբ ու անհաշտությամբ:

Այդ գրույցից հետո, հաջորդ օրը, թուրքական շոգենավի վրա Անդրկովկասյան պատվիրակության պատվին կայացավ հանդիսավոր ճաշկերույթ: Արտաքինից թուրքերը շոգենավը զարդարել էին անթերի. հատակներին փռել էին խալիներ, կախել էին դրասաններ, ամենուր դրված էին ծաղկեպսակներ, սեղանին շաղ էին տրված ծաղկաթերթեր, կարևոր կետերում կանգնած էին պատվո պահակներ, հյուրերին դիմավորում էին խոնարհվելով, և պատվի ու մեծարանքի զանազան դրսևորումներ ուղեկցում էին մեզ ամեն քայլափոխի: Սեղանի շուրջ ես նստած էի Ջեմալ-փաշայի և Բեհադդին Շաքիրի արանքում: Ես քաջ գիտակցում էի, թե որտեղ

եմ գտնվում և ովքեր են իմ անմիջական հարևան սեղանակիցները: Ես քաջատեղյակ էի, թե ինչ դերակատարում են ունեցել նրանք հայերի ճակատագրում: Բայց այդպիսին է դիվանագիտական ներկայացուցիչներին բաժին ընկած ճակատագիրը՝ նրանք պետք է իրենց մեջ ուժ գտնեն շփվել ցանկացած հասարակության հետ: Իմ քննադատներն ինձ շատ հաճախ կշտամբում էին, թե ես ընդունել եմ Նիկոլայ Երկրորդին, ճաշել եմ Էնվեր փաշայի հետ, զրուցել եմ Ջեմալ-փաշայի և իմ ազգի այլ թշնամիների հետ: Սակայն ես միշտ էլ ներողամտորեն եմ վերաբերվել նման քննադատությանը, անցել նրա կողքով, քանզի հասկանում էի, որ մարդկային զգացողությունը բնագոյաբար կարող է բորբոքվել նման հանդիպումներից, իսկ հարաբերությունների անխուսափելիության պարագայում քաղաքական պայմանականությունների գործոնին մենք դեռևս, պարզապես, չէինք ընտելացել: Իմ վարչական կյանքի 20 տարիների ընթացքում ինձ վիճակված է եղել նույն օրը նկուղում մասնակցել կուսակցությունների գաղտնի նիստերին, իսկ երեկոյան՝ այցելել ժանդարմներին, կամ ընթրել փոխարքայի մոտ: Եվ այդ ամենը նրանց բոլորին բաժին ընկած ճակատագիրն է, ովքեր զբաղեցնում են պատասխանատու պաշտոնական դիրք, բայց հոգով մնում իր կուսակցության անդամ և դեմոկրատիայի մշակ: Ահա թե ինչու էի ես ճաշում Ջեմալ-փաշայի կողքին և զրուցում հայկական կոտորածների կազմակերպիչ դոկտոր Բեհաեդդին Շաքիրի հետ: Վերջինս ինձ պատմում էր, թե ինչպես էր անձամբ մասնակցել դեպի Արդահան Էնվեր-փաշայի արշավանքին, թե ինչպես են գնդապետ Ռիզա-բեյի հետ կազմակերպել աջարական զինյալներին և համարում էր, որ ինքը հայերի ազնիվ հակառակորդ է: Նա ասում էր հետևյալը. «Հայերը հայտնվել են մեր սրբազան պանթուրքական և պանիսլամական գաղափարների իրականացման ճանապարհին, և մենք ակամա բախվում ենք նրանց հետ: Այդ ամենը վեր է և դուրս է մեր սուբյեկտիվ ցանկություններից ու տրամադրություններից: Մենք ստիպված ենք տարերայնորեն ջնջել երկրի վրայից նրանց, ովքեր խոչընդոտում են մեր սուրբ ու սրբազան ազգային գաղափարներին: Բացի դրանից, դուք միշտ ռուսների հետ եք: Դուք նրանց առաջապահն եք: Ռուսները մեր ռիսերիմ թշնամիներն են, պատմական հակառակորդները: Մտածեք այդ ամենի

մասին, փոխեք Ձեր հոգեբանությունն ու կողմնորոշումը: Դուք թշնամի եք, ես թշնամի եմ, մենք գործընկերներ ենք, մենք հասկանում ենք կենդանի օրգանիզմի կյանքը, և գիտակցում, որ նրանում չկա հումանիստություն, կամ էլ կամքի թուլություն: Ուժեղի և կենսունակի իրավունքը՝ ահա այն միակ իրավունքը, որի միջոցով կենդանի օրգանիզմը գոյատևում է: Այդպես է նաև ազգի կյանքում: Այստեղ տեղ չի կարող լինել սենտիմենտալությանը կամ զգացմունքներին, այստեղ գործում է զուտ ինքնապահպանության և նման տարրերի միավորման զգացողությունը”:

Ես, իհարկե, հակադարձում էի նրան, բայց մենք խոսում էինք տարբեր լեզուներով: Մենք միմյանցից բաժանվեցինք ոչ միայն միմյանց չհամոզելով, այլ նույնիսկ մի ընդհանուր հարթակ չգտնելով: Նրա միտքը չափազանց պարզ էր. ընդունեք, որ դուք թույլ եք, ուստի՛ն՝ ներհոսեք մեր մեջ, տվեք մեզ ձեր ուժը, մենք ձեզ կխնայենք և միասին կգնանք անզլիացիների դեմ: Հակառակ դեպքում, մենք ձեզ կոչնչացնենք: Այդ գրույցից հետո, տասն օր անց ես Էնվեր-փաշայից ստացա Թուրքիայի հետ պաշտոնական ռազմական դաշինք կնքելու առաջարկություն: Չեմ կարող ասել, արդյոք ճիշտ են վարվել, թե ոչ, բայց 1914թ. սկսած մենք նման առաջարկություններ քանիցս ստացել ենք և միշտ մերժել:

Ճաշկերույթն ավարտվեց ուշ երեկոյան: Մեզ ճանապարհեցին նույն հանդիսավորությամբ: Մենք տուն վերադարձանք տխուր տրամադրությամբ: Հետագայում, ամիսներ անց, ես տեղեկացա, որ Ջեմալ-փաշան Բաթումից իր հետ էր տարել մեծ քանակի թանկարժեք իրեր և այդ կապակցությամբ նրա դեմ նույնիսկ գործ էր հարուցվել: Հետագայում այդ գործը խլացվեց-անցավ: Հաջորդ օրը Ջեմալ-փաշան մեկնեց:

Իսկ դրա հաջորդ օրը Բաթումում ես հանդիպեցի կոմս Շուլենբուրգին՝ Թիֆլիսում գերմանական նախկին հյուպատոսին և թուրքերի հետ 1914թ. Կարսի արշավանքի մասնակցին: Նա հենց նոր էր Բեռլինից եկել Բաթում: Նա, անշուշտ, հետաքրքիր մարդ էր, Բաթում էր ժամանել գերմանական սպայի համազգեստով: Ես նրան ճանաչում էի վաղուց՝ դեռևս 1912թ.: Նա ցարական վարչակարգի օրոք գերմանական գլխավոր հյուպատոսն էր Թիֆլիսում: Հրաշալի կրթված, գերազանց տիրապետելով ռուսերենին և ֆրանսերենին, նա մշտապես շփվում էր թիֆլիսյան լավա-

գույն հասարակության շրջանակներում, լինում էր այն բոլոր տներում, որտեղ հնարավոր էր հանդիպել զինվորականների, հատկապես բարձրաշխարհիկ Նիժնեգորոդյան գնդի հեծելագործի ներկայացուցիչներին, բարձր դիրք ունեցող չինովնիկների և բարձրաշխարհիկ տիկնանց: Նա լինում էր Պալատում կազմակերպվող բոլոր ընդունելություններին, իր կողմից նույնպես կազմակերպում էր ճոխ ընդունելություններ և հյուրասիրություններ: Նա ճակատագրի և բարձրաշխարհիկ հյուրասարահների սիրելին էր ու ցանկալին: Շատ հաճախ էս հանդիպում էի նրան զինվորական հանդեսներին ու տոնակատարություններին, ձիարշավներին: Նա ամեն ինչ տեսնում էր, բոլորի հետ զրուցում ամեն ինչի մասին և անսահման սիրալիր էր: Նա ուներ սեփական ավտոմեքենա և որպես “գրոսաշրջիկ” շրջել էր ամբողջ Կովկասը, հատկապես՝ սահմանամերձ շրջանները: Լուսանկարչության սիրահար էր՝ ամենուր լուսանկարում էր “տեսարժան վայրերը”, գիտեր բոլորին և ամեն ինչ: Ես այդ ժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխն էի և աշխատանքի բերումով լինում էի այն բոլոր տեղերում, որտեղ որ հայտնվում էր կոմս Շուլենբուրգը: Նրա շուրջ միշտ մարդիկ էին պտտվում, փնտրում նրա հետ ծանոթանալու առիթ: Պատերազմից մի ամիս առաջ նա արձակուրդ մեկնեց: Դա 1914թ. հուլիսին էր: Իսկ 1914թ. նոյեմբեր-դեկտեմբերի թուրքական աշնանային արշավանքի ժամանակ, երբ Էնվեր-փաշան ու Իսհան-փաշան իրենց երեք կորպուսներով նետվեցին Արդահանի ու Սարիղամիշի վրա և սպառնում էին Կարսին, կոմս Շուլենբուրգը գտնվում էր Էնվեր-փաշայի շտաբում: Նա տեղյակ էր ամեն ինչից. Ճանապարհները, բնակչությունը, գորքի ուժն ու քանակը, հրամանատարները և, ըստ այդմ էլ, տալիս էր արժեքավոր խորհուրդներ: Ձմեռային այդ արշավանքում թուրքերի կրած պարտությունից հետո նա անհետացավ, թեև մեր զեներալները ցանկանում էին նրան գերի վերցնել: Բայց նա անհետացավ: Եվ ահա, 1918-ին նա հայտնվեց Բաթումում: Ես նրան հանդիպեցի և զրուցեցի հետը: Առանց որևիցե անձնապաստանության, ինքը շատ գործնական ձևով բացատրեց, որ իրեն, “որպես տարածաշրջանի և տեղի պայմանների լավ գիտակ” նշանակել են կովկասյան ռազմա-քաղաքական առաքելությանը կից փորձագետ: Ես նրա մոտ զարգացրի մեր ցանկությունները: Նա շատ

արագ ընկալեց դրանք և սկսեց դիտարկել գերմանական շահերի տեսակետից: Նա ասաց հետևյալը. “Մենք, գերմանացիներս, շահագրգռված ենք Անդրկովկասի անկախության ամրապնդմամբ, Վրաստանի բարգավաճմամբ, ինչպես նաև Բորչալուի գավառի գերմանացի բնակիչների բարեկեցությամբ: Եթե դուք, հայերդ, օգնեք գերմանացի պանրագործներին և գործարանատերերին Լոռու շրջանում, որը վիճելի է համարվում հայերի և վրացիների միջև, ապա մենք կօգնենք նաև ձեզ”: Պետք է ասել, որ ֆոն Կուչենբախ խոշոր ֆիրման և մի շարք ավելի մանր ֆիրմաներ Բորչալուի գավառի այդ վիճելի հատվածում, որը կես տարի անց հանդիսացավ հայ-վրացական պատերազմի պատճառ և հետագայում ստացավ “չեզոք գոտի” անվանումը, իրոք, ունեին խոշոր հետաքրքրություններ:

Այդպես էն բունադրվում և ծնվում խնամակալությունները, այլ ոչ թե պատմական հուշարձանների, կամ էլ վիճակագրական հաշվառումների շնորհիվ: Մենք այդ ժամանակ այդ ամենը վատ էինք հասկանում և ուշադրություն չէինք դարձնում քաղաքական դասավորությունների տնտեսական ենթադիրներին: Փոխանակ ընդունեինք կյանքը, ինչպես որ այն կար, մենք ձգտում էինք այն տեղավորել իդեալիստական պատկերացումների շրջանակների մեջ: Մենք քաղաքականապես մաքուր ու ազնիվ էինք, սակայն՝ չափազանց անփորձ: Այս փոքրիկ օրինակի վրա ես ցանկանում եմ ցույց տալ, թե ինչպես անասնապահների և պանրագործների շահերը կարող էին մեզ համար ավելի օգտակար լինել, քան բնակչության կազմը, որն ասում էր, որ վիճելի տարածքում բնակվում է 60000 հայ և ընդամենը 3000 վրացի և որ տարածաշրջանը լի է հայկական հուշարձաններով: Վերջին փաստարկները մեզ թվում էին սպառնիչ և չափազանց համոզիչ, իսկ առաջին՝ տնտեսական գործոնին մենք բավականաչափ լուրջ չէինք նայում: Մեր սխալը մենք գիտակցեցինք, բայց, ուշացումով: Վրացիներն այդ ամենը գիտակցեցին մեզանից շուտ: Որքան էլ ցավալի է, բայց դա այդպես է: Շատերը չեն կարողանում գտնել այդ երևույթի բացատրությունը: Ասում են, թե հայերն ուժեղ են անհատապես, սակայն թույլ են համախմբման տեսակետից: Վրացիները՝ հակառակ. Թույլ են անհատականորեն, բայց ուժեղ են համախմբման տեսանկյունից: Անձամբ ես, իմ մեծ անձնական փորձից ելնելով՝ լինելով Թիֆլիսի քաղա-

քաղաքում և տեսնելով շատ-շատ բաներ հայության ու Հայաստանի կյանքից, ընդհանուր առմամբ, այդ մտքի հետ համաձայն եմ: Միգուցե կա նաև մեկ այլ բացատրություն, սակայն վերը նշված դիտարկումը, համենայն դեպս, իմ կարծիքով, ճշմարտացի է:

Եվ այսպես, այդ նույն կոմս Շուլենբուրգը, ստանալով տեղեկություններ իրերի դրության վերաբերյալ, մայիսի 20-ին մեկնեց Թիֆլիս: Ֆոն Լոստովը, ստանալով մեր համաձայնությունը իր միջնորդական առաքելության վերաբերյալ, նույն առաջարկությամբ դիմեց թուրքերին և նրանցից մերժում ստացավ: Մայիսի 24-ին նա նամակով մեր պատվիրակությանը հաղորդեց հետևյալը. « մայիսի 19-ի թիվ 337 նամակով Դուք հարմար եք գտել հաղորդել ինձ, որ Անդրկովկասյան Հանրապետության պատվիրակությունն ընդունում է որպես միջնորդի, բարի ծառայությունների իմ առաջարկությունը: Նույն առաջարկությամբ ես դիմեցի Նորին գերագանցություն Խալիլ-բեյին և միաժամանակ նրան ներկայացրեցի քննարկվող հարցերի գործնական լուծման նախագիծը: Ցավոք սրտի, իմ այդ փորձը հաջողությամբ չպսակվեց: Ֆ.Լոստով»:

Հաջորդ օրը, մայիսի 25-ին, Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինը հաղորդում էր գերմանական Կառավարությանը, որ Ռուսաստանը համաձայն է բանակցություններ վարել Չիչենկելու Անդրկովկասյան Կառավարության հետ Անդրկովկասից ոչ հեռու գտնվող մի որևիցե քաղաքում, բացարձակապես չնախորոշելով Անդրկովկասի անկախության հարցը: Միաժամանակ Չիչերինը հայտնում էր, որ Ռուսական Կառավարության կողմից Անդրկովկասի անկախությունը ճանաչելու համար բանակցություններ վարելու նպատակով Անդրկովկասյան Կառավարությունը ուղարկում է քաղաքացի Մաքարելուն:

Մինչ Բաթումում փլուզվում էին Անդրկովկասի և Թուրքիայի միջև համաձայնության գալու հույսերը և գերմանական առաջարկները մերժվում էին թուրքերի կողմից, հայկական շրջաններում ընթանում էր իսկական պատերազմ: Ամենակարևոր և խոշոր՝ պատմական իրադարձություններն էին այդ օրերին մայիսի 24-29-ին Սարդարապատում՝ Երևանի մատույցներում և մայիսի 25-29-ին Ղարաքիլիսայում ծավալված ճակատ-

տամարտերն էին: Նրանք վճռական գործոն հանդիսացան իրադարձությունների հետագա զարգացման համար: Իմ նպատակների մեջ չի մտնում այս էջերում այդ ճակատամարտերի մանրամասն նկարագրելը, բայց այն ամենը, ինչն անձամբ ես գիտեմ, ինչ որ լսել եմ բնագավառի թուրքական, ռուսական և հայկական խոշոր հեղինակություններից, ինձ իրավունք է տալիս արտահայտել իմ անձնական տպավորությունը, որ դրանք հանդիսանում են 1918-1920թթ. ընթացքում հայկական զենքի ամենալուրջ և ամենափառավոր մարտերը: Սարդարապատի հերոսներն էին Դրոն և գեներալ Սիլիկովը: 1918-1920թթ. ընթացքում հայերի ռազմական գործողությունների վերաբերյալ կապիտան Պատուդեբարի գրքում Սարդարապատի ճակատամարտը բնութագրվում է հետևյալ ձևով. «Երկրորդ հայկական դիվիզիան՝ գեներալ Սիլիկովի հրամանատարությամբ, պաշտպանում էր Արաքսի հովիտը՝ Էրիվանից մի քանի վերստ դեպի հարավ: Շեֆքի-փաշայի ամբողջ բանակը կանգնած էր նրա դիմաց: Մայիսի 24-ին Սիլիկյանն այնպիսի թափով գրոհեց թուրքերին, որ նրանց մատնեց կատարյալ պարտության, իսկ նրա հեծելազորը հետապնդեց հակառակորդին մինչև Ալեքսանդրապոլի բարձունքները: Միայն արկերի պակասը դադարեցրեց այդ հետապնդումը»:

Այդ փայտուն ճակատամարտում փրկվեց Էրիվանը՝ Հայաստանի ապագա մայրաքաղաքը: Այս ճակատամարտում ծնունդ առավ հայկական զենքի փառքը: Այդ հաղթանակով հետագայում մենք ոգևորում էինք մեր զինվորներին նորանոր սխրանքների:

Գրեթե միաժամանակ, մայիսի 25-ին, թուրքական զորքերը, հյուսիսային ճանապարհով ձգտելով շարժվել դեպի Թիֆլիս, Ղարաքիլիսայի մոտ գրոհեցին հայկական առաջին դիվիզիան: Ճակատամարտը տևեց չորս օր: Հայերի դիմադրության համառությունը, թուրքական շտաբի վկայությամբ, անասելի էր և լավագույնն էր ամբողջ պատերազմի ընթացքում: Սակայն, շարունակում է Պատուդեբարը իր գրքում, կոտորվելով հակառակորդի հրետանու հարվածներից և մնալով առանց փամփուշտների, նրանք զիջեցին թուրքերի թվային գերակշռությանը: Առաջին դիվիզիայի մնացորդները Ղարաքիլիսայից նահանջեցին դեպի Էրիվան, իսկ թուրքերը Ղարաքիլիսայում սպանեցին 7000 խաղաղ բնակիչ և գերի:

...Ընթերցողն արդեն գիտի, որ մայիսի 28-ին Թիֆլիսում հայտարարվեց Հայաստանի անկախությունը: Այն ընթերցողները, որոնք ուշադիր հետևում են իմ շարադրանքի ընթացքին, տեսնում են, թե ինչպես, քայլ առ քայլ արարվում էին Պետության հիմքերը: Պետության տարրերից կերտվում էր ամբողջություն: Եվ եթե այդ տարրերն են տարածքը, բնակչությունը, ոգին և կամքը, բանակը, լեզուն, մշկույթը,- ապա Մարդարապատի ու Ղարաքիլիսայի ճակատամարտերում դրսևորվեցին անկախ պետության գոյությանը միտված կամքն ու ոգին: Վեհիբ – փաշան, որը պատերազմն անցկացրել էր Դարդանեյի մարտերում, անձամբ ինձ է ասել, որ իր համառությամբ, խիզախությամբ ու անվեհերությամբ Ղարաքիլիսայի մարտը հիշեցնում էր Դարդանեյի համառ մարտերից մեկը:

Մենք բոլորս տեսնում էինք, թե այդ պատմական օրերին ինչ էր կատարվում Բաթումում, հայկական հողերում և Թիֆլիսում: Սակայն պետք չէ երբևիցե մոռանալ, որ հայերի հոգին ու հույսերը միշտ կապված են եղել դաշնակիցների՝ Ֆրանսիայի ու Անգլիայի հաջողությունների հետ: Իսկ լուրերը ռազմաճակատից ամենևին ուրախ չէին, ծանր էին. Թիֆլիսում ռադիոն հաղորդում էր, որ “ մայիսի 27-ին գերմանացիները Champagne-ում առաջ են գնում, դաշնակիցները նահանջում են դեպի Chatean Thierry. Փարիզը ենթարկվել է հրետակոծման, նա ուղղակի վտանգի տակ է”:

Ղարաքիլիսայի ճակատամարտից հետո այլևս խոշոր մարտեր չեն եղել: Միայն Լոռու և Բորչալուի շրջանների թաթարները դաշտերում, կայարաններում կոտորածներ էին սարքում: Մեր պատվիրակության զինվորական խորհրդական գեներալ Կորգանովի աչքի առաջ մորթել էին քսան աշակերտի և ուսուցչուհուն, իսկ իրեն, շփոթելով ազգային հերոս, թուրքերի ուղղակի թշնամի Անդրանիկի հետ, քարշ էին տվել ու տարել անտառ: Եկատերինենֆելդ⁸⁶ գերմանական գաղթօջախի մոտակայքում թաթարները դաշտում շրջապատել էին 300 հայի և բոլորին սպանել: Այդ մասին մանրամասնորեն Գերմանական Կառավարության

⁸⁶ 1818-1921թթ.՝ Եկատերինենֆելդ, Կատարինենֆելդ, 1921-1944թթ.՝ Լյուքսեմբուրգ, 1944-ից՝ Բոլնիսի:

էր զեկուցում գերմանական հյուպատոս Վալկերը, իսկ նախկին գերմանական հյուպատոս Անդերսը մայիսի 14-ին Կարսից գրում էր Էրզինջան-Էրզրում-Կարս հատվածներում թուրքերի գազանությունների մասին: Ինքը անձամբ 1918թ. ապրիլ-մայիսին այցելել է այդ շրջանները և ամեն ինչ տեսել իր աչքերով: Այդ ամենի մասին ես իմացա Բաթումում: Ամենաթարմ նորությունները ինձ հաղորդեց գեներալ Կորգանովը, որը Բաթում էր հասել Ալեքսանդրապոլ-Կարս ճանապարհով: Նա ժամանեց մի սոսկալի վիճակում՝ նյարդայնացած, հիվանդ, պատառոտված զգեստով: Իմ խնդրանքով թուրքերը նրան Ալեքսանդրապոլից ճանապարհել էին Բաթում: Մայիսի 25-ին Բաթումում տիրում էր մի վճռական տրամադրություն. դա ողբերգական մի օր էր, ոչ թե արտաքին իրադարձություններով, այլ զուտ ներքին ապրումներով: Անձամբ ես հոգեբանորեն շատ բան վերապրեցի այդ օրերին: Նախևառաջ, գերմանացիների միջնորդությունը թուրքերի կողմից և մեր կողմից թուրքերի առաջարկած պայմանները մերժելուց հետո բանակցությունները մտան փակուղի: Միակ էլքը մնում էր այս անգամ էլ թողնել ու գնալ, ինչպես դա արեցինք Տրապիզոնում: Բայց թաթարներն ու վրացիները ոչ մի պարագայում չէին ցանկանում պատերազմ: Թաթարները պահանջում էին խաղաղություն: Վրացիներն ապահովագրված էին գերմանացիների կողմից: Մենք մարտնչում էինք Սարդարապատում ու Ղարաքիլիսայում: Ճանապարհներն ակնհայտորեն բաժանվում էին. Պատվիրակության ներսում բացարձակապես բացակայում էր ընդհանուր լեզու ասվածը: Օդում զգացվում էր, որ Անդրկովկասում միասնություն չկա և Հանրապետությունը տրոհվում է: Պարզապես, ինչպես որ ննջեցյալի տանը մահվան մասին չեն խոսում, այդպես էլ մեզանում, Անդրկովկասի տրոհում բառերը չէին արտաբերվում: Առավելևս, որ մենք, հայերս, այդ տրոհմանը ոչ պատրաստ էինք և ոչ էլ պատրաստվում էինք. պատերազմում էինք:

Առաջինը այդ մասին բարձրաձայնեց գեներալ Լոսսովը: Մայիսի 25-ին, երեկոյան ժամը 7-ին պատվիրակությանն ուղարկեց հետևյալ նամակը. «Պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ ես ստացել եմ հավաստի տեղեկություններ, համաձայն որոնց Անդրկովկասյան Հանրապետությունը և Անդրկովկասյան Կառավարությունը տվյալ պահին գտնվում են

տրոհման փուլում: Նման պարագաների ի հայտ գալը նախատեսված չէր և ես չունեմ նման իրավիճակում բանակցություններ շարունակելու հրահանգներ: Ես ունեմ միայն Անդրկովկասյան Համադաշնության Կառավարության հետ բանակցելու լիազորություններ: Իսկ տվյալ պարագայում, ես պետք է հայցեմ նոր լիազորություններ և հրահանգներ ու այդ նպատակով անհրաժեշտ է, որ ես անմիջական շփման մեջ մտնեմ գերմանական իշխանության պատկան ատյանների հետ: Որպեսզի ավելորդ ժամանակի կորուստ չլինի, ես որոշել եմ այսօր երեկոյան “Միննա Հորի” գերմանական շոգենավով մեկնել Բաթումից: Ֆ.Լոստով”:

Ուշ երեկոյան Քաջագունու հետ գնացինք “Միննա Հորի” շոգենավ՝ հրաժեշտ տալու գեներալին և խնդրել նրան, որպեսզի գերմանական կառավարության առջև ինքն աջակցություն ցուցաբերի մեր արդար պահանջներին, որպեսզի մենք ստանանք նվազագույն հնարավոր սահմաններ և մեր տանջված ժողովուրդն, ի վերջո, դադար ձեռք բերի: Գեներալը խոստացավ անել ամեն հնարավորը և խորհուրդ տվեց Բեռլին գործուղել մեր Ազգային Խորհրդի ներկայացուցիչներին: Նրան ճանապարհելու էին եկել նաև վրացիները: Գիշերը ժամը 12-ին շոգենավը հեռացավ նավամատույցից, նրա հետ էլ հեռացան մեր խնդիրներին կենտրոնական տերությունների ուշադրությունը հրավիրելու մեր հույսերը:

Վերադառնալով հյուրանոց, ես իմացա, որ երեկոյան Բաթում է եկել Վրացական Ազգային Խորհրդի նախագահ Ժորդանիան: Նա եկել էր ընդամենը մի քանի ժամով և նույն գիշերը Բաթումից վերադառնալու էր Թիֆլիս: Ես տեղյակ չէի նրա գալու իրական և ճշգրիտ նպատակների մասին, բայց մի քանի բոպե հետո ինձ հաղորդեցին, որ նա եկել է տեսնվելու Չիսենկելու հետ, որպես Անդրկովկասյան Կառավարության նախագահի և պարզի նրա հետ Վրաստանի անկախության հայտարարման հետ կապված հարցեր, ինչը տեղի էր ունենալու հաջորդ օրը՝ մայիսի 26-ին:

Ժորդանիան այն ժամանակ Վրաստանում ամենակենտրոնական կերպարն էր: Նա մենշևիկների կենտրոնական կոմիտեի նախագահն էր, միաժամանակ՝ Վրացական Ազգային Խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը: Ես նրան ճանաչում էի վաղուց՝ 1900թ., Թիֆլիս գալու իմ առա-

ջին օրերից: Ես նրան համարում եմ շատ խելացի մարդ, ժողովրդական հոգեբանության գիտակ, սոցիոլոգիական, սոցիալիստական թեմաների և հիմնախնդիրների հրաշալի տեսաբան և մարտավարության մեջ չափազանց փորձված անձնավորություն: Տեսականորեն նա ինտերնացիոնալիստ է, գործնականում՝ ազգայնական երանգով վրաց հայրենասեր: Նրա ազդեցությունը հսկայական է թե՛ կուսակցությունում, թե՛ զանգվածների շրջանում: Թեև նա խոսում է կակազելով, սակայն նրա ելույթները կառուցված են լինում հրաշալի: Նրա մոտ բացակայում է դիմախոսությունը և դեմքը հիշեցնում է եգիպտական քրմի դեմք՝ հին հրեայի կիսադիմային խիստ գծերով: Ծնունդով նա Գուրիայից է, որտեղից սերվում են սոցիալիզմի և հեղափոխության բոլոր ակտիվ գործիչները:

Մեր հարաբերությունները բավականին մտերիմ էին: Շատ անգամ, որպես Թիֆլիսի քաղաքագլուխ, նրա խնդրանքով ես դիմել եմ իշխանություններին՝ ժանդարմներին, փոխարքային, նահանգապետներին, միջնորդելով, որպեսզի թեթևացվի այս կամ այն քաղաքնապետարկյալի վիճակը և գրեթե միշտ հասել հաջողության: Իրենց կողմից մենշևիկները միշտ աջակցել են ինձ քաղաքագլուխ ընտրվելու հարցում: Իսկ ես իրենց ձայն էի տալիս Թիֆլիսում Պետական Դումայի ընտրությունների ժամանակ, որտեղ մենք չունեինք մեր կուսակցական սեփական թեկնածուն: Թիֆլիսում ընտրությունը գնում էր վրաց սոցիալիստների և ազգայնական ազնվականների միջև: Ես քվեարկում էի մենշևիկների օգտին, զգուշանալով մյուս կողմի շովինիզմից: Վրաց ազնվականները մի անգամ, երբ Դումայի անդամ ընտրվեց Չխեիձեն, բողոքել էին փոխարքա կոմս Վորոնցովին, որ ես, լինելով քաղաքագլուխ, նպաստում եմ սոցիալիստի ընտրությանը՝ ընդդեմ չափավոր-ազգայնական դեմոկրատ իշխան Անդրոնիկովի: Կոմսը՝ փորձառու և խորամանկ քաղաքական գործիչ, հանգստացրել էր նրանց և խոստացել, որ ինքը կհրավիրի ինձ և կազդի իմ վրա: Կոմսն ինձ հարվիրեց և ասաց հետևյալը. «Դուք շատ ճիշտ եք անում, որ ձայն եք տալիս Չխեիձեի օգտին: Դա լավ է և՛ Ձեր, և՛ ինձ համար՝ որպես փոխարքայի: Ձեր համար նա շովինիստ չէ և հարձակումներ չի գործի դեպի հայ բնակչությունը: Իսկ իմ պարագայում՝ նա կսկսի

ջախջախել Ռուսաստանի ընդհանուր վարչակարգը և հատուկ չի զբաղվի Կովկասյան իշխանության քննադատությամբ՝ վրացիների տեղային շահերի տեսակետից”։ Այդպես էր դատում այդ խորամանկ քաղաքական այրը, որը եղել էր արքունական մինիստր երեք ռուս ցարերի օրոք։ Ահա այն անցյալը, որը կապում էր ինձ վրաց մենշևիկների հետ։

Տեղեկանալով, որ Ժորդանիան եկել է Վրաստանի անկախության հայտարարման հարցերի վերաբերյալ պայմանավորվելու նպատակով և ցանկանալով պարզել, թե երբ և ինչպես է այդ որոշումն ընդունվել և ինչպիսի դիրքորոշում ունեն իրենք այլ ազգությունների, առաջին հերթին՝ հայերի նկատմամբ, ես շտապեցի հանդիպել նրան։ Պետք չէ մոռանալ, որ վրացիների նախաձեռնությունը իր հետևից անխուսափելիորեն բերելու էր հայերի կողմից այս կամ այն որոշում կայացնելու անհրաժեշտությունը։ Մենք կրկին գտնվում էինք նույն պետության կազմում, սակայն վարում էինք անջատ պատերազմ։ Բայց հայերի կողմից մղվող այդ անջատ պատերազմը, ըստ էության, այն ընդհանուր պատերազմն էր, որ վրաց մենշևիկների միաձայն աջակցությամբ որոշեց վարել Սեյմը իր մարտի 31-ի նիստում։ Ես, ով դեմ է եղել այդ պատերազմին, տեսնելով դրա անհույս լինելը, քանիցս մատնանշել եմ դրա մասին թե՛ Ժորդանիային, թե՛ Ռամիշվիլուն, որոնք հավատում էին հաջողությանը, այժմ ականատեսն էի, թե ինչպես, պատերազմի ամենաթեժ պահին, վրացիները ոչ միայն չեն օգնում մեզ, այլ գնում են կապերի խզման, որոշելով, փաստորեն, քանդել Անդրկովկասյան Հանրապետությունը։ Նման մտքերով լեցուն ես հանդիպեցի Ժորդանիային մեր հյուրանոցի դահլիճում։ Նրա հետ էր պետական իրավունքի վերաբերյալ մի քանի լավ աշխատությունների հեղինակ պրոֆեսոր Ավալովը, ում Կերենսկին ժամանակին նշանակել էր Սենատի անդամ։ Նա վրացական պատվիրակության խորհրդականն էր։ Հարցնելով Ժորդանիային Թիֆլիսում տիրող տրամադրությունների մասին, նրանից լսեցի, որ հայերը պատերազմում են թուրքերի դեմ, որ թուրքերը լկտիաբար առաջ են գալիս, որ թաթարները թուրքերի հետ են և, որ նման պայմաններում Վրաստանը փրկելու միակ միջոցը Անդրկովկասը հայտարարել քայքայված և հռչակել Վրաստանի անկախությունը։

- Ինչպե՞ս թե, - բացականչեցի ես, - այսպիսի պահին, երբ մենք բռնորս՝ մենք և դուք, գտնվում ենք պատերազմի մեջ՝ ընդհանուր պատերազմի մեջ, երբ մենք արյուն ենք թափում, դուք մեզ մենսա՞կ եք թողնում: Մի՞ թե դա ազնիվ է:

- Ազնիվն այն է, ինչն օգտակար է ժողովրդին,- պատասխանեց Ժորդանիան:

- Այո, - ասացի ես,- իսկ մե՞նք:

- Բայց մենք հո չե՞նք կարող կործանվել ձեզ հետ, -պատասխանեց նա,- մեր ժողովուրդը ուզում է փրկել գոնե այն ամենը, ինչը դեռ հնարավոր է: Եվ ձեզ էլ անհրաժեշտ է պայմանավորվել թուրքերի հետ,- ավելացրեց նա,- այլ ճանապարհ չկա:

Դրանով մեր զրույցն ավարտվեց: Մեկ ժամ հետո վրացական պատվիրակության մի քանի անդամների հետ նա մեկնեց Թիֆլիս:

Գիշեր էր: Կրկին մի անհավատալի ծանրություն իջավ սրտներիս: Մենք կանգնած էինք լիակատար մեկուսացման առաջ: Վրացիներն անցնում էին գերմանացիների պաշտպանության տակ, թաթարները մեր դեմ էին, Թուրքիան գրավել է մեր հողերը: Ամբողջ գիշերը մենք երեքով՝ Քաջագունին, Վրացյանը և ես խոսում էինք այն մասին, թե ի՞նչ ուղղություն ընտրել և եկանք այն եզրակացության, որ Անդրկովկասի տրոհումից և Վրաստանի անկախության հայտարարումից հետո միակ տրամաբանական լուծումն այն է, որ Հայաստանը նույնպես իրեն հայտարարի անկախ հանրապետություն:

Այդ ամիսներին, երբ թուրքերն իրենց տեր ու տիրական էին զգում Կովկասում, իսկ Եվրոպան էլ զբաղված էր մահուկենաց կռվով, արևմտահայկական տարածքներին տիրանալու մասին մտածելը նույնիսկ դժվար էր: Մենք այն համարում էինք մերը, բայց այն ստանալն ու նրան տիրանալը ուղղակիորեն պայմանավորված էր միայն պատերազմում Թուրքիայի պարտվելու դեպքում: Բացի ամենից էլ, այդ տարածքները գտնվում էին թուրքերի ձեռքում և զուրկ էին հայկական բնակչությունից: Այդ տարածքների ողջ մնացած ամբողջ բնակչությունը մեզ մոտ էր և մեզ հետ:

Մայիսի 26-ի առավոտյան թուրքական պատվիրակության նախագահից մենք ստացանք հաջորդ վերջնագիրը: Վրացիների գնալուց հետո մենք Բաթումում այլևս անելիք չունեինք: Մայիսի 29-ի երեկոյան ժամը 7-ին թուրքերը սպասում էին պատասխանի: Պետք էր շտապել Թիֆլիս: Բաթումից դեպի Թիֆլիս գնացքի մեկնումը նշանակված էր մայիսի 26-ի երեկոյան ժամը 7-ին: Մեկնում էր ամբողջ պատվիրակությունը: Այսօրվա նման հիշում եմ այդ պատկերը. հյուրանոցի շքամուտքի մոտից մեկնում էին կառքերը, որոնց մեջ խումբ-խումբ տեղավորվել էին պատվիրակները՝ ըստ ազգային պատկանելության: Թվում էր, թե ինչ-որ մի բան ֆիզիկապես պատառոտվում է ու մաս-մաս լինում: Քայքայվում էին շահերը, կողմնորոշումները: Մենակության մի ծանր զգացողություն էր տիրել մեզ: Երեկոյան ժամը 7-ին մեկնեցինք: Թուրքիայի և Անդրկովկասյան Հանրապետության միջև Բաթումի համաժողովն ավարտվեց:

Մայիսի 27-ի առավոտյան մենք ժամանեցինք Թիֆլիս: Ճանապարհին, կայարաններում կանգնած էին գերմանացի զինվորներ, իսկ սահմանին ծածանվում էր գերմանական դրոշը՝ վրացիներն իրենց ապահովագրել էին թուրքական արշավանքից:

Ստորև ընթերցողին է ներկայացվում Թուրքիայի կողմից Բաթումի համաժողովում մայիսի 26-ին Անդրկովկասյան պատվիրակությանը ներկայացված վերջնագիրը:

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՎԵՐՋՆԱԳԻՐԸ

“Անդրկովկասյան պատվիրակության նախագահին:

Ես ափսոսանքով արձանագրում եմ, որ դեռևս ոչ մի որոշակի պատասխան չեմ ստացել այն առաջարկությունների կապակցությամբ, որոնք ես պատիվ եմ ունեցել հաղորդել Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետության Պատվիրակությանը Կայսերական Օտոմանյան Կառավարության անունից մայիսի 11-ին կայացած Բաթումի համաժողովի առաջին նիստի ժամանակ չնայած նրան, որ անցել է բավական երկար ժամանակ՝ երկու շաբաթ, սկսած այն օրվանից, որ դրանք ձևակերպվել են: Մինչդեռ, ինչպես քաջ հայտնի է Ձերդ Գերագանցությանը, Կովկասի

դրությունը ավելի քան կրիտիկական, երկիմաստ և լուսաբանում է պահանջում առանց հետագա դանդաղելու:

Հարյուր հազարավոր թուրքեր և մահմեդականներ իրենց վրա են կրում անգութ բանդիտների, այսպես կոչված՝ հեղափոխականների արյունալի լուծը և անուղղելի աղետը, որ սպառնում է այդ դժբախտներին, դառնում է ավելի ու ավելի անխուսափելի: Թուրք և մահմեդական բնակչության ճակատագիրը Կովկասի մյուս մասերում, որտեղ ավարառուների և այլ չարանենգների կազմակերպած բանդաները սիստեմատիկ պատճառում են նրան օրեցօր աճող տարբեր բռնություններ, նույնպես հանգստացուցիչ չէ և պակաս արժանի չէ գրավել ամենալուրջ ուշադրություն:

Դուք ընդունում եք, սակայն, պարոն Նախագահ, որ ոչ մի Կառավարություն, որն արժանի է այդ անվանը, չէր կարող անտարբեր աչքով նայել, որ իր երկրի հետ սահմանակից տարածքում նման հանցագործությունները անպատժելիորեն բազմապատկվեն, և գիտակցում եք, որ Կայսերական Օտոմանյան Կառավարության դրությունը բավականին դյուրագգաց է Կովկասը ծվատող անարխիայի նկատմամբ, քանզի վերջինս, զլխավորապես, վերաբերում է նաև բնակչության այն հատվածի անվտանգությանը, որն ունի ամենասերտ ցեղային և կրոնական կապերը Կայսրության բնակչության հետ: Մյուս կողմից, համընդհանուր պատերազմի անխուսափելի պահանջները Կայսերական Կառավարության առջև պահանջ են դնում ապահովել զորքերի ազատ անցումը Կովկասով՝ նրանց հնարավորինս արագ ռազմական գործողությունների այլ թատերաբեմ տեղափոխելու համար: Դա պահանջում է նաև, որպեսզի՜ առանց հետաձգելու վերջ դրվի այս երկիմաստ իրավիճակին:

Ելնելով այդ ամենից, Օտոմանյան Կայսերական Կառավարությունը հարկ է համարում Անդրկովկասյան պատվիրակությունից անհապաղ պաշտոնական պատասխան ներկայացնել իրեն հաղորդվածի մասին, և միաժամանակ պատասխան տալ սահմանազատման և սահմանների ճշգրտման վերաբերյալ մեր արած առաջարկներին, ինչը ես պատիվ եմ ունեցել սույն նամակով ուղարկել Ձերդ Գերագանցությանը:

Այսպիսով, իմ Կառավարությունը համարելով, որ միայն Անդրկովկասյան Ֆեդերատիվ Հանրապետության կողմից վերոնշյալ առաջարկների անհապաղ և անվերապահ ընդունումը կարող է հանգեցնել մի իրավիճակի, որը բավականացնող կլինի Կովկասի համար և որ դրանց ընդունումն է միայն, որ ի վիճակի է ստեղծել կայուն իրավիճակ և միայն դա կարող է համարվել թուրքական և մահմեդական բնակչության անվտանգության բավարար երաշխիք, հանձնարարել է ինձ խնդրել Ձերդ Գերագանցությանը 72 ժամեր ընթացքում, սկսած այսօրվա երեկոյան ժամը 8-ից, ընդունում է արդյոք Անդրկովկասյան Հանրապետության Կառավարությունը Օտոմանյան առաջարկություններն իրենց ամբողջությամբ:

Ես պարտավոր եմ հավելել, որ այս երեք օրերի ընթացքում մեր Կառավարությունների միջև հարաբերությունները կարող են պահպանել բարեկամական բնույթ միայն այն պարտադիր պայմանում, որ թուրքական զորքերի գործողությունները Հարավային Կովկասում չեն հանդիպի որևիցե հակազդման: Ընդունեցեք: ԽԱԼԻԼ”

Բաթում, 26 մայիսի 1918թ., N 31էջ:

ԳԼՈՒԽ VI I

Անդրկովկասյան Հանրապետության տրոհումը, Հայաստանի անկախության հռչակումը: (26 մայիսի – 14 հունիսի 1918թ.)

Թիֆլիս ժամանելուց իսկույններթ ես և Քաջագունին ուղևորվեցինք մեր Ազգային Խորհուրդ: Այն տեղավորված էր Արամյանցին պատկանող մի հսկա շենքում, որը տեղակայված էր Գոլովինյան պողոտայի և Բարյատինյան փողոցի անկյունում: Մեզ սպասում էին անհամբերությամբ՝ մի կողմից Սարդարապատի և Ղարաքիլիսայի արյունալի մարտերի, իսկ մյուս կողմից՝ Վրաստանի զբաղեցրած դիրքորոշման պատճառով: Եվ այս իրադրության մեջ հայերը պետք է հստակեցնեին իրենց դիրքորոշումը:

Հենց այդ օրը՝ մայիսի 27-ի առավոտյան ես գեներալ Սիլիկյանից մի հեռագիր ստացա, որտեղ նա խնդրում էր իրեն ինչ-որ կերպ փամփուշտներ ուղարկել, քանի որ իր պաշարները վերջանում են: Նա դիմել էր մի քանի հասցեներով, հնչեցնելով միանգամայն արդարացի տագնապ: Ազգային Խորհրդում ընթանում էին լարված նիստեր: Զգացվում էր, որ բոլորի նյարդերը լարված են: Խորհուրդը կազմող կուսակցությունները տարբեր մոտեցումներ էին ցուցաբերում վրացիների կողմից իրենց երկրի հայտարարվելիք անկախությանը: Մի մասը ենթադրում էր, որ վրացիների կողմից կատարվելիք այդ քայլը չպետք է նույնաբովանդակ արձագանք ստանա հայերի կողմից, մյուսները գտնում էին, որ եկել է պահը ասելու, որ հայերն իրենց երկիրը հռչակում են անկախ Հանրապետություն: Ես և Քաջագունին մայիսի 27-ի երեկոյան մանրամասն զեկույց ներկայացրեցինք Բաթումում կատարված ամեն ինչի վերաբերյալ: Նախորդ օրը՝ մայիսի 26-ին, Վրաստանն արդեն հայտարարվել էր անկախ պետություն: Հիշեցնենք, որ դրան նախորդեց նույն մայիսի 26-ի Մեյմի նիստում ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ ընդամենը երկու “դեմ”-ի պարագայում, ընդունվեց հետևյալ բանաձևը. “Նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղության հարցերում ի հայտ եկան Անդրկովկաս-

յան Անկախ Հանրապետությունը ստեղծած ժողովուրդների միջև արմատական տարաձայնություններ, ինչի պատճառով անհնարին է դառնում Անդրկովկասի բոլոր ժողովուրդների անունից մեկ հեղինակավոր իշխանությամբ հանդես գալը, Սեյմն արձանագրում է Անդրկովկասի տրոհման փաստը և վայր է դնում իր լիազորությունները”:

Նույն օրը՝ ժամը 4.50-ին Վրաց Ազգային Խորհուրդը, Ժորդանիայի նախագահությամբ հրապարակեց Վրաստանի Անկախության Ակտը և ընտրեց Վրաստանի Հանրապետության կառավարությունը, որի նախագահն էր Նոյ Ռամիշվիլին, իսկ արտաքին գործերի մինիստրը՝ Ակակի Չխենկելին: Անկախության ակտը բաղկացած էր 7 կետից: Նույն օրը անկախություն հռչակելու մասին նույնաբովանդակ հեռագրեր ուղարկվեցին 18 տերությունների. “ Ի հետևություն այն փաստի, որ Անդրկովկասյան Սեյմը մայիսի 26-ին կեսօրից հետո ժամը 3-ին Դաշնային Անդրկովկասյան Հանրապետությունը հայտարարել է մասերի տրոհված և այլևս գոյություն չունեցող, Սեյմը վայր է դրել իր լիազորությունները և ինքն իրեն հայտարարել լուծարված: Տեղեկացնելով Ձեզ վերոշարադրյալի մասին, ես խնդրում եմ Ձեզ չմերժել և այս մասին տեղեկացնել Ձեր Կառավարությանը: Անդրկովկասյան Սեյմի նախագահ՝ Չխենիձե”:

Միաժամանակ մեզ հայտնի էր, որ մահմեդականները որոշել են հաջորդ օրը՝ մայիսի 28-ին, Ադրբեջանը հայտարարել անկախ Հանրապետություն:

Այդպիսիք էին արտաքին գործոնները, որոնց առկայությամբ Հայոց Ազգային խորհրդին վիճակված էր որոշում ընդունել: Երբ բոլոր հանգամանքները բացահայտված էին և կշռադատված, Հայոց Ազգային խորհուրդը մայիսի 27-ի երեկոյան հնարավորություն տվեց խորհրդի կազմի մեջ մտնող բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներին (Դաշնակցություն, կադետներ, սոցիալ-դեմոկրատներ) քննարկել հարցը կուսակցություններում և առավոտյան նիստին՝ ժամը 10-ին ներկայանալ իրենց որոշումներով: Հաջորդ օրը՝ ժամը 10-ին, Հայոց Ազգային Խորհրդի շենքում բոլոր կուսակցությունները դրական արտահայտվեցին անկախ Հայկական Հանրապետության հայտարարման հարցում: Ես ներկա էի այդ նիստին, արդեն անցել էինք այդ հայտարարության տեքստի խմբագրմանը: Տեքստի խմբագրմանը մասնակցում էին Ազգային խորհրդի նախա-

գահ Ավետիս Ահարոնյանը, Նիկոլ Աղբալյանը, Քաջագունին և ես: Կշռադատում էինք ամեն մի բառը, հաշվի առնելով մտքի նրբերանգները և այն հնարավոր կոնյուկտուրան, որը կարող էր իր հետ բերել այդ պահին դեռևս շատ մշուշոտ ապագան: Արդյունքում, կեսօրին՝ ժամը 12.00-ին հաստատվեց հետևյալ ակտը, որն իրենից ներկայացնում է Հայաստանի անկախությունը հռչակող պատմական փաստաթուղթը⁸⁷.

Ցայտարարություն


Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով եւ Վրաստանի ու Ազրբեջանի անկախության հռչակումով ստեղծուած նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարած է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւնը: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մօտիկ օրերում կազմել Հայոց ազգային կառավարութիւն՝ Ազգային Խորհուրդը ժամանակաւորապէս ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գաւառների քաղաքական ու վարչական դէկը վարելու համար:

Ստորագրված է՝ Հայոց Ազգային Խորհուրդ...

... Իսկ մեզ անհրաժեշտ էր շտապել Բաթում, քանի որ լրանում էր մայիսի 26-ին երեկոյան ժամը 8-ին թուրքական կողմից մեզ ներկայացված վերջնագրի ժամկետը: Անդրկովկասի տրոհման պատճառով կազմվեց նոր պատվիրակություն, որը ներկայացնում էր արդեն զուտ Հայաստանը: Կազմվեցին նաև առանձին պատվիրակություններ Վրաստանից, Ադրբեջանից և Հյուսիսային Կովկասից:

Հայկական պատվիրակությունը կազմված էր երեք անձից. Նախագահը՝ ի դեմս ինձ և երկու անդամների՝ Քաջագունին և Պապաջանյանը: Քանի որ ստեղծված իրավիճակում հնարավոր չէր տարածքային և այլ զիջումների վերաբերյալ մեզ տալ ճշգրիտ հրահանգներ, պատվիրակությանը տրվեց *carte blanche* և մենք մայիսի 28 - ին

⁸⁷ Մենք գերծ ենք մնացել Հայաստանի Անկախության Հռչակագրի տեքստի կրկնական թարգմանությունից և այստեղ ներկայացրել ենք, պարզապես, փաստաթղթի հայերեն բնագիրը: Ի դեպ, տվյալ դեպքում առկա է հուշերի հեղինակի կողմից նշված (28 մայիսի, 1918թ.) և փաստաթղթի թվագրման (30 մայիսի, 1918թ.) տարբերությունների միջև ակնհայտ անհամապատասխանություն:



Հայաստանի անկախութիւնը հայտարարող փաստաթղթի ձեռագիր բնօրինակը⁸⁸ գիշերը ժամը 12-ին մեկնեցինք Բաթում: Հաջորդ օրը կեսօրին, ժամը 12-ին մոտ մենք արդէն Բաթումում էինք:

Մինչ Բաթումի համաժողովին անցնելը, ևս կվերադառնամ Անդրկովկասյան Սեյմի այն վերջին նիստին (1918թ. մայիսի 26), որտեղ որոշվեց արձանագրել Անդրկովկասի տրոհումը: Այդ նիստում ելույթի համար խոսք խնդրեց հիմնականում Ծերերթելին: Նա ունեցավ երկու ելույթ: Հայերն, առհասարակ, չխոսեցին: Գրեթէ չէին խոսում նաև մահմեդականները: Դա միանգամայն բնական էր և հասկանալի: Անդրկովկասի տրոհման նախաձեռնությունն իրենց ձեռքն էին վերցրել վրացիները: Նրանք, գերմանացիների օգնությամբ, նախապատրաստել էին անկախ Վրաստանի գոյությունը, որի կառավարությունը de-facto ճանաչվել էր գերմանացիների կողմից և հենց գերմանացիներն էլ սկսել էին իրենց միջնորդությունը, որպէսզի Ռուսաստանը նույնպէս ճանաչի Վրաստանի անկախությունը: Եվ դրա համար էլ վրաց գործիչները՝ հատկապէս սկզբունքային կենտրոնամետ մենջևիկները, ձգտում էին բացատրել ու

⁸⁸ ՀՀԴ կենտրոնական արխիվ (Բոստոն), թղթածրար 1/1, թ.1:

այսպես ասած “արդարացնել” իրենց քայլերը: Ծերեթեյին, նախնառաջ, արձանագրում էր այն իրողությունը, որ Ռուսաստանի միասնությունը, առհասարակ, խախտվել էր իր ներսում տիրող անիշխանության պատճառով և Կովկասը հեռացել է Ռուսաստանից այն պահին, երբ ռուսական դեմոկրատիայի ներքին միասնությունը խախտվել է՝ անկախ նրա Անդրկովկասյան հատվածի կամքից: Իսկ Անդրկովկասի այսօրվա տրոհումը պայմանավորված է մահմեդականների կեցվածքով, որոնք հրաժարվեցին պաշտպանել իրենց պետությունը Թուրքիայի հարձակումից: Այդպիսով, վրաց ժողովուրդը՝ անդրկովկասյան նախկին միասնության մի հատվածը, մնացել է առանց միասնական իշխանության, առանց պատվիրակության և ստիպված է ստեղծել սեփական իշխանական ու ներկայացուցչական մարմիններ: Իր երկրորդ ելույթում Ծերեթեյին կապ էր հաստատում Վրաստանի ամենակենսական շահերի և նրա պետականության ձևի գոյության միջև: Նա արձանագրում էր այն դրույթը, որ ամենևին էլ բացարձակ անկախությունը չէ վրացական իդեալը, այլ այն, որ հենց անկախությունն է հանդիսանում Ռուսաստանի տարերային տրոհումից և Անդրկովկասի փաստացի քայքայումից հետո Վրաստանի համար գոյատևման անհրաժեշտ և լավագույն ձևը: Կարճ ասած, անկախությունը ոչ թե ինքնանպատակ է, այլ վրաց ժողովրդին պահպանելու միջոց: Մենշևիկների մեջ ամենաազդեցիկ և ամենահեղինակավոր, Վրաստանի զանգվածների համակրանքը վայելող գործչի շուրթերից հնչած հարցի նման դրվածքը հաշտեցնում էր զանգվածներին իրենց առաջնորդների հետ, որոնք կենտրոնամետների դիրքերից անցան անկախականների դիրքերը: Սակայն ես այստեղ պարտավոր եմ նշել, որ 1918-ից մինչև 1924թ. ընկած ժամանակահատվածում մարտավարական այդ բանաձևը դարձել է արդեն սկզբունքային և վրացիներն անդադար փորձում են պաշտպանել իրենց երկրի անկախությունը, որպես այդպիսին: Բայց այդ մասին՝ հետագայում:

Հայերն անկախությունն ընդունեցին որպես հասած մի պտուղ: Այն նախապատրաստված էր դեպքերի ամբողջ ընթացքով՝ սկսած 1917թ. մարտից մինչև 1918թ. մայիս: Այդ ժամանակահատվածի համար վստա-

հաբար կարելի է ասել. ինչքան քիչ ենք ապրել և ինչքան շատ ենք վերապրել:

Անկախությանն ամենից քիչ պատրաստ էին ադրբեջանցիները: Նրանց մոտ բացակայում էր անցյալում ունեցած պայքարի ու տառապանքների գաղափարախոսությունը:

Այսպես թե այնպես, մայիսի 29-ին Բաթումում կրկին հայտնվեցին պատվիրակություններ, բայց արդեն չորս տարբեր հանրապետություններից: Բաթումում ամեն մի պատվիրակություն Թուրքիայի հետ առանձին էր վարում բանակցությունները՝ որպես անկախ պետության ներկայացուցիչ:

Մենք տեղավորվեցինք նույն հյուրանոցում, ուր իջևանել էինք նախորդ անգամ: Նույն հյուրանոցում տեղավորվել էին նաև մահմեդականները: Վրացիներն իջևանել էին առանձին վայրում:

Այս անգամ մենք Բաթումում մնացինք ընդամենը 8 օր՝ մայիսի 29-ից մինչև հունիսի 5-ը ու այդ ամբողջ ժամանակահատվածում զբաղված էինք բացառապես խաղաղության պայմանագիրը կազմելու և ստորագրելու հարցերով: Դա անկախ Հայաստանի կողմից առաջին միջազգային ստորագրած պայմանագիրն էր: Մենք՝ պատվիրակության անդամներս, այդ ութ օրերի ընթացքում բազում չարչարանքներ կրեցինք և, թույլ տամ ինձ ասել, բազում նուրբ զգացմունքներ ներդրեցինք Հայաստանի անկախության գաղափարի հանդեպ ու մեծագույն չափով ձգտեցինք հնարավորինս ընդլայնել մեր անկախ պետության սահմանները: Պատվիրակությունն իր ներսում միանգամայն միաբան էր և աշխատում էր շատ համերաշխ:

Բաթում ժամանելուց հետո մեր առաջին գործը եղավ Խալիլ-բեյին տեղեկացնել Հայաստանի անկախության հռչակման մասին և , որ մենք համաձայն ենք թուրքական կողմի վերջնագրում նշված կետերի հետ: Որպես նախագահ, ես Խալիլ-բեյին նամակով տեղեկացրի այդ դրույթների մասին: Այդ նամակը ստացվել էր մայիսի 29-ի երեկոյան ժամը 7-ին՝ վերջնագրի ժամկետը լրանալուց մեկ ժամ առաջ: Հայաստանը նորանկախ հանրապետություններից առաջինն էր, որ սահմանված ժամանակի շրջանակներում պատասխանեց թուրքական կողմին:

Վրացիները, հույսները դնելով գերմանացիների վրա, այնքան էլ չէին շտապում: Նրանք Խալիլ-բեյի հետ առաջին անգամ շփման մեջ մտան մայիսի 31-ին, ինչը թուրքերի վրա բավականին վատ տպավորություն թողեց: Դրա մասին ես կհոսեմ ստորև: Նշեմ միայն, որ այդ պատճառով ես նույնիսկ ինչ-որ ձևով ներգրավվեցի և միջամտեցի Թուրքիայի ու Վրաստանի բանակցություններին:

Խալիլ-բեյն ինձ պատասխանեց նույն երեկոյան և մենք պայմանավորվեցինք հանդիպել հաջորդ օրը՝ մայիսի 30-ին ժամը 12-ին Ակումբի շենքում, որտեղ տեղակայված էր նիստերն անցկացնելու գրասենյակը: Մեզ օգնելու համար մեր գրասենյակի կազմում ներգրավվեցինք գիմնագիայի տնօրեն պարոն [Ջաչին...ին] ու տիկին Պոպովային, ով մեքենագրում էր պայմանագիրը և այլ պաշտոնական փաստաթղթեր:

Բանակցություններն ընթանում էին ֆրանսերեն: Առաջին իսկ նիստի ժամանակ, այն նույն քարտեզի վրա, որն ինձ մոտ էր Տրայիգոնում և որն ուղեկցում էր ինձ հետագայում Կոստանդնուպոլսում, Ալեքսանդրապոլում ու Եվրոպայում, և որը գծոված է Հայաստանի սահմանների գանազան տարբերակներով, և, հավանաբար, ժամանակին կհայտնվի Հայաստանի պատմության թանգարանում, առաջին անգամ Վեհիբ-փաշան անձամբ գծեց Հայաստանի սահմանը: Երբ մենք նայեցինք այդ սահմաններին, մեր մեջ ծփացին ու ալեկոծվեցին երկու զգացողություններ: Մեկը՝ անձանոթ, զարմանալի հգոր, մեծ և հպարտ, - մենք տեսանք մեր տեղն այս երկրագնդի վրա, - միլիոնավոր հերոսների ու զոհերի արյամբ ներկված, դարերի տառապանքի և զոհողությունների այդ արդյունքը: Այդ զգացողությունը ես երբեք չեմ մոռանա: Երկրորդը՝ դա վիրավորանքի և դառնության զգացողությունն էր, քանզի այն տարածքը, որի վրա պետք է տեղավորվեր մեր ամբողջ ժողովուրդը, ընդամենը 9.000 քառակուսի կիլոմետր էր⁸⁹...

Մեր առաջին նիստը մենք նվիրեցինք Հայաստանի սահմանների քննարկմանը: **Թուրքերը, ճիշտն ասած, չէին անդրադառնում Վրաստա-**

⁸⁹ Այդ կապակցությամբ հայտնի է Թուրքիայում Գերմանիայի դեսպան կոմս **Բերնսդորֆի** դառը կատակը, թե «Թուրքերը հայերին տեղ տվեցին Սևանում լողանալու համար, բայց դուրս գալու, չորանալու համար տեղ չտվեցին»:

նի և Ադրբեջանի հետ մեր սահմանների հարցերին: Նրանք ուշադիր էին միայն հայ-թուրքական սահմանագծին, մեզ հնարավորություն տալով, որպեսզի ինքներս որոշենք մեր ներքին սահմանները մեր հարևանների հետ (ընդգծումը մերն է-Վ.Հ.): Բայց այդ սահմաններն արդեն մեզանից խլում էին Ռուսահայաստանի կեսը. մեր հարևանների հավակնությունների մասին մենք քաջատեղյակ էինք: Վրացիները մոտենում էին Ղարաքիլիսային, իսկ ադրբեջանցիներն՝ Էրիվանին: Մեզ համար անվիճելիորեն բաժին էին հասնում Նոր Բայազետի անմարդաբնակ հողերը և Ալեքսանդրապոլի սարահարթային հատվածը, առանց որևիցե հաղորդակցման ուղիների՝ ընդամենը 13 կիլոմետր երկարությամբ: Երեք նիստ մենք նվիրեցինք մեր սահմաններին առնչվող գրույցներին, նման սոսկալի սահմանափակումների պատճառներին: Այդտեղ Վեհիբից և Խալիլից մենք լսեցինք շատ-շատ բաներ, ինչն այսօր առաջնահերթ նշանակություն ունի և վաղն էլ ունենալու է հայ ժողովրդի ճակատագրի համար:

Անդրադառնալով քարտեզին և նկարագրելով թուրքական նկրտումների ընդհանուր պատկերը, Վեհիբ –փաշան ասաց. “Դուք տեսնում եք, որ ճակատագիրը Թուրքիային ձգում է Արևմուտքից դեպի Արևելք. մենք գնացել ենք Բալկաններից, գնում ենք Աֆրիկայից և մենք պետք է տարածվենք դեպի Արևելք. այնտեղ է մեզ հարազատ արյունը, մեր հավատքը, մեր լեզուն: Այդ ձգտումը տարերային է՝ մեր եղբայրները Բաքվում են ու Դադստանում, Թուրքեստանում և Ադրբեջանում: Մենք պետք է ճանապարհ ունենանք դեպի այդ վայրերը: Իսկ դուք՝ հայերդ, ամենուրեք կանգնած եք մեր ճանապարհին. պահանջելով Վանը, դուք փակում եք մեր ճանապարհը դեպի Պարսկաստան, պաշտպանելով ձեր համար Նախիջևանն ու Ջանգեզուրը, դուք խանգարում եք մեզ իջնել Կուր գետի հովիտը և շարժվել դեպի Բաքու: Կարսն ու Ախալքալաքը փակում են ճանապարհը դեպի Ղազախ-Ելիզավետպոլ: Դուք պետք է մի կողմ քաշվեք և ճանապարհ զիջեք մեզ: Ահա մեր հիմնական վեճի առարկան: Մենք պետք է ունենանք երկու լայն ճանապարհ, որոնք պետք է ապահովեն բանակի տեղաշարժը և նրա պաշտպանությունը թևերից: Մի ճանապարհը՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախ,- դեպի Ելիզավետպոլ (Վեհիբի շուրթերով՝ Գյանջա), իսկ մյուսը՝ Շարուր-Նախիջևան-Ղարա-

բաղ,- դեպի Կուր գետի հովիտը: Դուք կարող եք մնալ արանքում՝ Նոր Բայազետի և Էջմիածնի շրջաններում”: Այդ խոսքերը և նրանց մեջ ներդրված մտքերը Վեհիքը հաստատեց նոր քարտեզի ցուցադրմամբ, որը նա համաարգին հրամայեց բերել իր շտաբից: Իրոք, բերեցին քարտեզը և մենք այնտեղ տեսանք կարմիր ներկով ներկված երկու լայն գոտիներ հենց այն շրջաններում, որոնց մասին խոսում էր Վեհիքը: Եթե ընթերցողը քարտեզի վրա տեղանշի այդ գոտիները, ապա կտեսնի, որ դրանց միջև մնում է հողի մի կողակ, որը թուրքերը նախատեսում էին Հայաստանի համար:

Մեր այն դիտողությանը, որ թուրքերը հաշվի չեն նստում հետևյալ երեք հանգամանքների հետ, այն է. առաջինը, որ այդ տարածքը հայ ժողովրդի համար անասելի քիչ է, երկրորդը, որ հայկական հարցը միջազգային հարց է և չի կարող պարզապես խեղդվել և երրորդը, որ նման սահմանների առկայությունը մշտապես սնուցելու է թշնամանք հայերի և թուրքերի միջև, Վեհիքը պատասխանեց. “Տարածքն այսօր քիչ է, քանի որ ձեր մոտ մեծ թիվ են կազմում մահմեդականները: Տվեք նրանց մեզ: Մենք նրանց կտեղավորենք Վանի և Էրզրումի այն շրջաններում, որտեղից ձեր մոտ են տեղափոխվել հայերը, նրանց թիվը մոտավորապես հավասար է՝ մոտ 300.000:

Այն, որ հայկական հարցը միջազգային է և դառնալու է վեհաժողովի օրակարգի հարց, մենք տեղյակ ենք, ու դրա համար էլ նրան լուծում ենք տալիս և հենց մեզ է պատկանում այն պատիվը, որ մենք լուծել ենք այդ հարցը և առաջինն ենք ճանաչել Հայաստանի անկախությունը: Իսկ ինչ վերաբերում է փոխադարձ զգացմունքներին, ապա բոլոր պետություններն էլ սկսել են քչից և հետո աստիճանաբար մեծացել: Թող մեր միջև հաստատվի բարեկամություն և մենք փոխադարձաբար կօժանդակենք մեկս մյուսին: Եվրոպայում մեզ անհրաժեշտ է հայերի կողմից հոգուս մեզ տարվող քարոզչություն”:

Հետագայում մենք համոզվեցինք, որ Խալիլն ու Վեհիքը անկասելի կանգնած էին իրենց առաջարկած սահմանագծի կողմը. թուրքերին էին անցնում Կարսի մարզն ամբողջությամբ, Ախալքալաքի գավառը, Ալեք-

սանդրապոլ քաղաքը, Համամլու⁹⁰- Էրիվան խճուղին, Սուրմալուի գավառը, Էրիվանի գավառի կեսը և Ղարաքիլիսա-Ուլուխանլու երկաթգիծն ամբողջությամբ: Մենք խնդրեցինք մեր բոլոր առարկություններն ու փաստարկները հեռագրով հաղորդել Կոստանդնուպոլիս և խնդրեցինք ընդլայնել Հայաստանի սահմանները: Հունիսի 2-ին ստացվեց պատասխանը, որ “ ի նշանավորումն սկսվող լավ հարաբերությունների” թուրքերը համաձայնվում էին հայերին զիջել Համամլու-Էրիվան խճուղին և սահմանը տանել Ալազյազ սարի գագաթով. Սահմանագիծը գալիս էր Ջաջուռից դեպի Ալազյազի գագաթը և իջնում դեպի Վաղարշապատ: Դատալիս էր մեզ մոտ 1000 քառ. վերստ տարածք: Դրանից այն կողմ թուրքերը որևիցե զիջումների չգնացին:

Անցնելով մեր բանակցությունների քաղաքական կողմին, Վեհիբը մեզ համոզում էր կնքել իրենց հետ ռազմական դաշինք, իրենց տրամադրել 10.000 զորախումբ և միասին շարժվել դեպի Բաղդադ: Այդ առաջարկը գալիս էր Էնվեր-փաշայից: Մենք ոչ մի տեսակետից չէինք կարող ընդունելի համարել այդ առաջարկը, ուստիև, որպես սպառնիչ փաստարկ բերելով մեր ազգաբնակչության հոգնածությունը, մերժեցինք այդ առաջարկը: Վեհիբը, սակայն, ավստասանքով հայտնեց, որ նման դաշինքը կվերացնեք մեր միջև առկա շատ թյուրիմացություններ:

Այդ օրը մեզ այցելեց Բաքվի „Kacniş” թերթի նախկին խմբագիր Ադանը և հանձն առավ պաշտպանել մեր մերձեցումը թուրքերի հետ: Այդ խոստման արդյունքները մնացին անտեսանելի:

Երբ սահմանների վերաբերյալ պայմանագրի տեքստը արդեն պատրաստ էր, Վեհիբն իր գրպանից հանեց գործվածքի մի կտոր՝ կարմիր խաչը սպիտակ դաշտի վրա և ասաց. “Ահա հայկական դրոշի իմ նախագիծը: Դուք քրիստոնիա եք, միշտ հպարտանում եք դրանով: Ես կարծում եմ, որ հենց այդ պատճառով էլ խաչը պետք է լինի ձեր խորհրդանիշը”:

Ընդհանուր առմամբ, բանակցությունների այդ հատվածը, հավանաբար, շոյում էր թուրքական ինքնասիրությունը. այն իրականացնում էր

⁹⁰ Այժմ՝ **Սպիտակ**:

նրանց նախագծերը և իբր լուծում էր տալիս հայկական հարցին, հնարավորինս դյուրին դարձնելով իրենց համար ապագա խաղաղության համաժողովը:

Ընդհանրապես, ես պետք է նշեմ, որ թուրքերը շատ էին վախենում հայկական հարցից, որպես գալիք խաղաղության համաժողովում իրենց համար դժվարություններ առաջ բերող թեմա: Ես լսել եմ այդ մասին Ռաուֆ-բեյից, Վեհիբ-փաշայից, Խալիլ-բեյից, Էնվեր-փաշայից և շատ այլ թուրք գործիչներից: Դրա համար էլ նրանք ցանկանում էին այդ հարցին լուծում տալ մինչև համաժողովը: Ես հետո իմացա, որ այն օրերին, երբ մենք նիստեր էինք գումարում Բաթումում, Կոնստանդնուպոլսում՝ երիտթուրքական կոմիտեում, թեժ վեճեր են եղել, առհասարակ, Կովկասում հայկական պետության ստեղծման նպատակահարմարության, կամ ոչ նպատակահարմարության հարցի շուրջ: Ինձ այդ մասին 1918թ. աշնանը Կոնստանդնուպոլսում պատմել է մեծ վեզիր Թալեաթ-փաշան: Նա այդ ամենը ինձ պատմել է հետևյալ բովանդակությամբ. “Էնվեր-փաշան համարում էր, քանի որ հայերը եղել են ու միշտ էլ լինելու են մեր թշնամիները, և երբևիցե հանգիստ չեն թողնելու Անատոլիայի վիլայեթների մեր տարածքները, ապա ավելի լավ կլինի Կովկասում ևս արմատապես ոչնչացնել հայերին, ինչպես դա արվեց Թուրքիայում: Մինչդեռ Կովկասում փոքր Հայաստանի ստեղծումը դառնալու է նրանց կողմից ընդլայնվելու մշտական պատճառ, իսկ դա էլ հանդիսանալու է մշտական սպառնալիք Թուրքիայի անվտանգության համար: Իսկ ես,- շարունակեց Թալեաթը,-պատասխանեցի, որ այդ ծրագիրն անիրագործելի է: Թեկուզ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այժմ դեռևս մնացել է 2 միլիոն հայ և դրանց արդեն անհնար է ոչնչացնել, ավելի ճիշտ կլինի բավարարել նրանց, քանզի, եթե աշխարհի երեսին մնա թեկուզ 100.000 հայ, նրանք մեզ հանգիստ չեն տալու երբեք, և, վերջապես, այս դեպքում մենք խաղաղության համաժողով կներկայանանք հայկական հարցը լուծած”: Թալեաթի տեսակետը հաղթել է. ստեղծեցին փոքր Հայաստան: Իսկ հետագայում Էնվերը ինձ մոտ ինքն իր հասցեին գովաբանումներ էր շոայլում, ասելով, թե “Ես լուծել եմ չափազանց դժվարին մի խնդիր՝ ստեղծել եմ Հայաստան, բավարարել եմ հայերի ազգային ձգտումները, բայց դա

արել եմ, չգոհաբերելով թուրքական ներքին տարածքներից և ոչ մի պատան»:

Ես, փոխանցելով թուրքական հոգեբանության ու իրենց կողմից իրենց շահերը հասկանալու և ընկալելու տեսակետից հետաքրքիր այս խոսակցությունները, ցանկանում եմ ներկայացնել Հայկական Հանրապետության ծագման հետ առնչվող բոլոր շարժառիթները: Անկախ Հայաստանը ստեղծվեց ոչ պատահականորեն և ոչ էլ դատարկ տեղը. ամեն մի պետություն, որը նպաստել, կամ խանգարել է նրա ծագմանը ունեցել է դրա մեջ իր համապատասխան շահերը: Անձամբ ես համոզված եմ, որ Թուրքիան իր շահերից ելնելով էր օժանդակում փոքր Հայաստանի ստեղծմանը: Այդ զգացողությունը ես ունեցել եմ 1918թ., ունեցել եմ 1920թ., երբ Սևրի պայմանագրից հետո ստորագրում էի Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Եվ Թուրքիայի կողմից խաղաղության բանակցություններին մասնակցող գործիչներն այդ նույն միտքը կրկնում էին նույն ձևակերպմամբ. մենք կողմ ենք Հայաստանի գոյությանը, բայց՝ թույլ և փոքր: Բայց նրանց ինչի՞ն էր պետք նման Հայաստանը: Այն պետք էր նրանց հետևյալ երեք նպատակների համար. առաջինը՝ թուրքերի երազանքն էր ունենալ Կովկասում, իրենց ազդեցության, իսկ ավելի ճիշտ՝ հովանավորության տակ գտնվող չորս հանրապետության (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան և Հյուսիսային Կովկաս) դաշնություն, որոնցով նա անջատված կլինեք Ռուսաստանից, որին համարում է իր ամենասարսափելի թշնամին: Երկրորդը՝ նրանք հաշվի են նստում, թեև այսօր Լոզանից հետո, կասեն, որ հաշվի նստել են Հայկական հարցի միջազգային լինելու հետ և մտածում էին վերջինիս տալ մի ինչ-որ լուծում՝ թեկուզ մի փոքրիկ Հայաստան ստեղծելու միջոցով: Եվ երրորդը՝ նրանք կուզենային ունենալ մի տարածք, ուր հնարավոր լինեք Թուրքիայից արտաքսել հայերին, իրենց կարիքների համար այնտեղ թողնելով արհեստավորների մի սահմանափակ քանակ, ինչպես այդ մասին ուղղակիորեն ասում էր Էնվերը: Ընդ որում, այն պայմանով, որ հայերի թիվը ոչ մի շրջանում չպետք է գերազանցեր ընդհանուր բնակչության 20 տոկոսը: Ըստ այդմ էլ, երբ ես լսում եմ զայրալից ձայներ, որոնք հնչում են ի պատասխան այն պնդման, որ թուրքերը հիմքեր ունեն չխանգարելու փոքր և

թույլ Հայաստանի ստեղծմանը, կցանկանայի, որ հաշի առնվեն վերոնշյալ դատողությունները:

Լոզանում, խաղաղության համաժողովի ժամանակ, չորս ամիսների ընթացքում Իսմեթ-փաշան⁹¹ 22 անգամ կրկնում էր տարբեր անձերի մոտ, որ Հայաստանի Հանրապետության ստեղծումով հայկական հարցը վերջնականորեն լուծված է: Դա իրենց այքերում ամենահզոր փաստարկն է: Ես լսել եմ այդ փաստարկը բազմաթիվ թուրք գործիչներից: Այն առարկությանը, որ այդ պետության տարածքը կենսունակ չէ, փոքր է իր չափսերով, ծովից կտրված է և ի վիճակի չէ կերակրել իր բնակչությանը, թուրքերը պատասխանում էին, թե այդ բոլոր հարցերը իրենց լուծումը կստանան հետագայում՝ «բարիդրացիական հարաբերությունների» զարգացմանը զուգընթաց:

Բացի սահմաններին վերաբերող կետերից հիմնական պայմանագրի տեքստում, որ բաղկացած էր 12 կետերից, ներգրավվեցին նաև պարտավորություններ իրենց տարածքներում չտեղակայել մյուս կողմին սպառնացող զինված միավորումներ, [...] պարտավորություններ, երկաթուղագծով բեռնափոխադրումների կանոններ և այլ սովորական թեմաներ: Այդ պայմանագրին կցվում էր երեք հավելված՝ տարանցիկ ուղիների, սահմանամերձ շրջաններում առևտրի կանոնների և կրոնական ու հոգևոր ոլորտներում փոխադարձ հարգանք ցուցաբերելու մասին: Հունիսի 3-ի երեկոյան բոլոր փաստաթղթերը պատրաստ էին և հաջորդ օրվա՝ հունիսի 4-ի ժամը 12-ին նշանակված էր պայմանագրի ստորագրումը: Այդ մասին ես հեռախոսով Կարս հաղորդեցի գեներալ Կորգանովին, որպեսզի ինքը այդ մասին հաղորդի Էրիվան՝ Դբոյին, գեներալ Սիլիկովին և ամբողջ բանակին:

Երկու կողմն էլ պայմանագրի ստորագրմանը ներկայացել էին շքահանդեսային համազգեստով: Թուրքական պատվիրակության քարտուղարը իրավաբանական խորհրդատու Մուքիթ-բեյն էր, ով անփոփոխ

⁹¹ **Մուսթաֆա Իսմեթ Ինյունյու** (1884-1973), թուրք գորահրամանատար, դիվանագետ, քաղաքական և պետական գործիչ, հանրապետական Թուրքիայի երկրորդ նախագահը, Աթաթուրքի ժառանգորդը: Լոզանի համաժողովում գլխավորել է թուրքական պատվիրակությունը:

ուղեկցում էր թուրքական խաղաղության բոլոր պատվիրակությունները: Ես նրա հետ հետագայում հանդիպել եմ 1920-ին Ալեքսանդրապոլում, 1921-ին Լոնդոնում և 1922-ին՝ Լոզանում: Փոխվում էին պայմանագրերը, սահմանները, պայմանները, իսկ խորհրդական Մուքիթ-բեյը անփոփոխ ձևակերպում էր հաղթանակների ու պարտությունների արդյունքները և ամեն անգամ ինձ ասում էր., որ “այսպես է ստեղծվում պետությունների պատմությունը, պետք չէ մտահոգվել, ոչ մի բան հավերժ չէ ու ամեն մի պայմանագիր՝ ժամանակավոր է”:

Երկու կողմերը ստորագրեցին պայմանագիրն ու հավելվածները: Ստորագրելուց հետո Խալիլ-բեյն ու ես արտասանեցինք մեր ողջույնի խոսքերը և միմյանց ձեռք սեղմեցինք: Ստորագրելու ժամանակի տեսակետից մեր պայմանագիրն առաջինն էր: Վրացիներն ու ադրբեջանցիները դեռևս չէին ստորագրում: Պատճառն այն էր, որ թուրքերն ու ադրբեջանցիները չէին շտապում, քանի որ մեր ստորագրած պայմանագրերը կանխորոշում էին Թուրքիայի և Անդրկովկասյան Հանրապետությունների միջև սահմանները: Իսկ վրացիներն իրենք էին ձգում, մտածելով հնարավորինս իրենց համար լավացնել պայմանագրի պայմանները: Ադրբեջանցիները ստորագրեցին հունիսի 4-ի երեկոյան: Վրաստանի հետ պայմանագիրը դեռևս մնում էր չստորագրված:

Իջավ երեկոն, երեկոյան ժամը 11-ն էր: Հանկարծ ինձ զեկուցում են, որ ինձ ցանկանում է տեսնել Վեհիբ-փաշայի համհարզը: Ես ընդունեցի նրան: Նա ինձ հաղորդեց, որ Վեհիբ-փաշան շատ կարևոր գործով ցանկանում է ինձ տեսնել: Ես խնդրեցի, որպեսզի նա այցելի ինձ: Կեսգիշերին ինձ մոտ եկավ Վեհիբ-փաշան և ասաց ինձ հետևյալը. “Քանի որ Դուք արդեն ստորագրել եք պայմանագիրը և մեր մեջ հաստատված է խաղաղություն, ես իմ պարտքն եմ համարում նախագրուշացնել Ձեզ, որ, կամ մենք այսօր պետք է ստանանք վրացական կողմի համաձայնությունը պայմանագիրը ստորագրել մեր ներկայացված պայմաններով, կամ այսօր առավոտյան ժամը 6-ին մեր զորքերը Բորչալուի գավառի Վորոնցովկա⁹² գյուղից կշարժվեն դեպի Թիֆլիս, ուր կհասնեն երեկոյան: Հրա-

⁹² Այժմ՝ **Տաշիք**: Խորհրդային տարիներին՝ **Վալինին**:

մանն արդեն տրված է: Դուք հասկանում եք, թե ինչպիսի խուճապ առաջ կբերի այդ ամենը Թիֆլիսում, ուր բնակվում է 200.000-ի չափ հայ: Բնականաբար, մենք կտանք հայերին ձեռք չտալու հրաման, բայց ավելի լավ կլինի, եթե Դուք անմիջապես բանակցեք վրացական պատվիրակության նախագահի հետ”:

Ես հասկացա, որ Վեհիբ-փաշան ցանկանում էր միաժամանակ երկու կողմից ազդել վրացիների վրա: Մի կողմից՝ դեպի Թիֆլիս շարժվելու սպառնալիքով, մյուս կողմից՝ Թիֆլիսում հայերի կոտորած թույլ չտալու համար վրացիների վրա մեր կողմից ճնշում գործադրելու հանգամանքով: Գիշերը ժամը 1-ի կողմ էս եկա վրացական պատվիրակության նախագահ Նոյ Ռամիշվիլու մոտ և նրան փախանցեցի իմ ու Վեհիբի միջև կայացած խոսակցությունը: Ռամիշվիլին չափազանց հուզված էր: Նա իր ձեռքում ուներ իր Կառավարության պաշտոնական որոշում՝ չստորագրել պայմանագիրը, եթե այնտեղ տեղ չգտնեն Ախալցխայի գավառով անցնող սահմանի հատվածին վերաբերող ճշգրտումներ: Վրացիները շատ էին ուզում իրենց ձեռքում պահել Աբաս-Թուման հայտնի առողջարանը և ևս մի քանի բնակավայր: Քանի որ առավոտվա ժամը 6-ը մոտենում էր, Ռամիշվիլին այլևս հնարավորություն չունեի հեռախոսով Թիֆլիսի հետ կապվելու: Բայց Թիֆլիսի գրավումը նա չէր ցանկանում և չէր էլ նույնիսկ նման հնարավորություն մտքով անցկացնում: Նրա մեջ ընթանում էր մի ներքին պայքար, սակայն Թիֆլիսի հնարավոր գրավման վախը գերիշխեց և նա գիշերվա ժամը 3-ին լիազորեց իր քարտուղարին նամակով գնալ Վեհիբ-փաշայի մոտ և հայտնել, որ վրացական կողմը համաձայն է ընդունել թուրքերի պայմանները, միաժամանակ հույս հայտնելով, որ ստորագրելիս թուրքերը կանեն որոշ զիջումներ: Հաջորդ օրը պայմանագիրը ստորագրվեց և թուրքերը Աբաս-Թումանը զիջեցին վրացիներին: Որպեսզի բոլոր պայմանագրերը լինեին միաժամանակյա, բոլորի վրա դրվեց նույն՝ 1918թ. հունիսի 4-ի ամսաթիվը:

Հունիսի 5-ի երեկոյան թուրքական պատվիրակությունը մեզ հրավիրեց հանդիսավոր ճաշկերույթի: Ակումբի սրահում սեղան էր պատրաստված հարյուր անձի համար: Ներկա էին բոլոր պատվիրակությունները, սպայությունը, [...] -ից եկած չինովնիկներ և լրագրողներ: Հնչեցին

կենսացներ ի պատիվ Հանրապետությունների, պատվիրակությունների ղեկավարների և սուլթանի: Խեղճ հեղափոխական գործիչ Ռամիշվիլուն բաժին ընկավ Կովկասյան կառավարությունների անունից բաժակ բարձրացնել և առաջարկել խմել “Նորին Մեծություն Սուլթանի” կենացը:

Համաժողովն ավարտված էր: Պայմանագրերի վավերացումը նշանակված էր մեկ ամիս հետո՝ Կոստանդնուպոլսում: Մայիսի 6-ին բոլոր պատվիրակությունները մեկնեցին Բաթումից: Մենք վերադարձանք Թիֆլիս, մեր հետ բերելով խաղաղության պայմանագիրը: Պայմանագրի բնօրինակը ես պահպանման փոխանցեցի Էջմիածնի թանգարան, իսկ պատճենները տպագրեցինք երեք լեզվով՝ ռուսերեն, ֆրանսերեն և հայերեն:

...Այդ նույն օրը՝ հունիսի 4-ին, մենք, երեք հանրապետությունների ներկայացուցիչներս և թուրքերը ստորագրեցինք նաև ամեն պետությանը պատկանող երկաթգծի երկարությանը համապատասխան շարժակազմի համամասնորեն բաժանելու մասին պայմանագիրը: Բնականաբար, այդ պայմանագիրն ամեն ինչ հատկացնում էր վրացիներին և թաթարներին, իսկ մեզ չէր մնում ոչ մի բան, քանզի վրացիների տարածքում կար 300 վերստ երկաթգիծ, թուրքերի ու թաթարների մոտ՝ մինչև 700, իսկ հայերիս մոտ՝ 13 վերստ: Սակայն այդ պայմանագիրն օրինական ուժի մեջ չմտավ հետագա զարգացումների ընթացքի հետևանքով: Բաքու-Բաթում նավթամուղի մասով մենք պայմանագրում մասնակցություն չունեինք: Համաձայնություն կնքվեց նաև գերիների փոխանակման վերաբերյալ:

Հատկանշական է, որ Թուրքիայի և Կովկասյան Հանրապետությունների միջև պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո օրակարգ էր մտնում անդրկովկասյան հանրապետությունների միջև փոխադարձ սահմանների հարցը: Եվ միանգամից ջրի երես ելան Լոռու, Ղազախի, Չանգեզուրի, Սևանա լճի և այլ ներքին հարցերը: Ավարտվեց մի հակամարտություն, անմիջապես ծլում էին նորերը:

Թուրքերը փորձեցին հայերին նվեր անել վրացիների հաշվին և իրենց միջնորդությունն առաջարկեցին ներքին լիցքաթափման հարցում: Քանի որ ադրբեջանցիները վրացիների հետ վեճեր ունեին Չակաթալայի շրջանի և Բորչալուի մի մասի համար, ապա հույսեր էին տածում, որ

թուրքերը կօժանդակեն իրենց: Մակայն հունիսի 4-ի նոտայով վրացիները թուրքերին խնդրել էին չմիջամտել անդրկովկասյան հանրապետությունների սահմանային վեճերին:

Հունիսի 7-ին ֆոն Լոսսովը Վրաստանի Կառավարությանը տեղեկացրեց, որ գերմանական պոստերին հրաման է տրված, որպեսզի թուրքերի նկատմամբ չցուցաբերվի թշնամական դրսևորում, բայց միաժամանակ հայտարարել թուրքերին, որ իրենք՝ գերմանացիք, այդ դիրքերում կանգնած են իրենց բարձրագույն հրամանատարության հրամանով: Այսպիսով, Գերմանիան իր պաշտպանության տակ վերցրեց Վրաստանի սահմանները և մայիսի կեսերին Թիֆլիս ժամանած գեներալ Կրեսսի առաքելությունը, փաստորեն, դարձավ իշխանության կենտրոն: Գերմանացիները սկսեցին միջամտել վրաց կալվածատերերի գործերին, իշխանության ու գյուղացիության հարաբերություններին և գերմանացիների ու վրացիների միջև նկատվեցին մի քանի ոչ էական տարաձայնություններ: Էրիվան նույնպես ուղարկվել էր 4 զինվորներով ուղեկցվող գերմանական առաքելություն:

Մեր պատվիրակության Թիֆլիս վերադառնալուն պես Հայոց Ազգային խորհուրդը անմիջապես ձեռնամուխ եղավ Հայաստանի Կառավարությունը կազմելու հարցին: Կառավարության նախագահի պաշտոնին առաջարկված էին երեք անձ, որոնք առաջարկվում էին տարբեր տեսանկյուններ հիմք ընդունելով, բայց մեկօրյա մտքերի փոխանակումից հետո, ելնելով մի շարք դատողություններից, ընտրությունը միարժեքորեն և միակարծիք կանգ առավ Քաջազունու թեկնածության վրա: Երկու մյուս թեկնածուները՝ Կարճիկյանը և Ես, ընդգրկվեցին Կառավարության կազմում՝ Ես, որպես արտաքին գործերի նախարար, Կարճիկյանը՝ ֆինանսների և խնամատարության նախարար: Կարճիկյանն ինձ ասում էր, որ ինքը ոչ մի պարագայում չի համաձայնվի վերցնել Կառավարության նախագահի պորտֆելը, քանզի ինքն իր հանդեպ զգում է մի անբացատրելի ընդդիմություն, որն իրեն մեղադրում է Կարսի հանձնման օրերին բավականին վճռական կեցվածք չցուցաբերելու համար: Ընթերցողը հիշում է, որ դա 1918թ. ապրիլի 10-ից 13-ն ընկած “գահաթափուրության” ժամանակաշրջանն էր, ինչի մասին Ես մանրամասն գրել եմ: Դրանից

վեց ամիս անց Կարճիկյանը Էրիվանում սպանվեց և մարդասպանի ձեռքը բարձրացել էր հենց այդ մեղադրանքի հիմքով՝ կապված Բաքվի բուշ-նիկների նկատմամբ Կարճիկյանի ունեցած դիրքորոշումով:

Քաջագնունու կողմից Կառավարության Նախագահի պաշտոնն ընդունելը գտավ մեծ համակրանք: Նա արժանիորեն օգտվում էր համընդհանուր հարգանքով, ուներ կայուն սկզբունքներ, տրամաբանող միտք և անցյալում եղել էր անբասիր մաքրությամբ գործիչ: Նա շատ լավ տիրապետում էր թե՛ խոսքին, թե՛ գրչին: Նրան հարգում էին բոլոր կուսակցություններում:

Քաջագնունին ինձ խնդրեց, որպեսզի ես օժանդակեմ իրեն Կառավարության կազմակերպման հարցում: Մենք խորհրդակցության հրավիրեցինք գեներալ Կորգանովին⁹³՝ նրան առաջարկելով ռազմական միսիստրի պաշտոնը, բայց վերջինս հրաժարվեց, իր կողմից առաջարկելով գեներալ Հախվերդովի թեկնածությունը, որ էլ ընդունեց արված առաջարկությունը: Գեներալ Հախվերդովը բավականին ականավոր անձնավորություն էր. գործի խորը գիտակ, գերազանց մարդ, կարգապահությամբ լեցուն և միաժամանակ իր ենթակաների համար գերազանց ընկեր: Նա անվերապահորեն նվիրված էր անկախ Հայաստանի գաղափարին, սակայն նրա դժբախտությունը, ինչպես և գեներալ Նազարբեկովի դեպքում, կայանում էր նրանում, որ նրանք երկուսն էլ, կյանքն անցկացնելով Կովկասից դուրս, չէին տիրապետում մայրենի լեզվին: Հայերեն չգիտեր նաև գեներալ Սիլիկովը: Այդ հանգամանքը դառնություն էր պատճառում, առաջին հերթին, հենց իրենց, բայց սովորելու համար արդեն ուշ էր: Ի դեպ, գեներալ Նազարբեկովը քիչ-միչ խոսում էր հայերեն:

⁹³ Խոսքն այստեղ գեներալ **Գաբրիել Ղորղանյանի** մասին է: **Ղորղանյան Գաբրիել Գրիգորի** (1880թ., Թիֆլիս, Ռուսական կայսրություն- 1954թ., Փարիզ, Ֆրանսիա): Ղորղանյանների ազնվական տոհմի ներկայացուցիչ, ցարական Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության բանակների գեներալ-մայոր: Շատ մեծ է գեներալ Ղորղանյանի ավանդը ՀՀ բանակի ստեղծման, կազմակերպման և կայացման գործում: Եղել է ՀՀ պատվիրակությունների ռազմական խորհրդական տարբեր համաժողովներում: Փարիզի վեհաժողովից հետո այլևս Հայաստան չի վերադարձել և բնակվել է Փարիզում: (տե՛ս А.Вирабян, С.Мирзоян, Офицеры-армяне..., с. 620):

Կառավարության կազմավորումից հետո՝ դեռևս երեք անձով, սկսեցին մտածել ժամանակավոր Խորհրդարանի մասին և կանգ առան այն մտքի վրա, որ պետք է կուսակցական սկզբունքով եռապատկել Թիֆլիսում գործող Ազգային Խորհրդի կազմը, ուժեղացնելով այն Էրիվանի Ազգային խորհրդի գործիչներով: Այդպիսով, կազմվեց Կառավարության միջուկը և Խորհրդարանի բջիջը:

Քաջազունին, առհասարակ, չէր ցանկանում Կառավարությունը վերջնական կազմավորել Թիֆլիսում, քանի որ համարում էր, որ Կառավարությունը պետք է կազմավորվի կոալիցիայի սկզբունքով, ուստիև մինիստրների թեկնածուներ անհրաժեշտ էր ունենալ նաև Էրիվանի տեղական գործիչներից:

Մինչ ընթանում էին այդ կազմակերպական աշխատանքները, թուրքական զորքերը Ղարաբիլիսայով անցնում էին դեպի Դիլիջան-Ղազախ և շարժվում դեպի Բաքու: Իսկ Բաքվում միավորվեցին հայերն ու բոլշևիկները, որոնք չէին ձանաչում Բաթումի պայմանագիրը: Մյուս կողմից Անդրանիկը ամրացել էր Ջանգեզուրում և որոշել էր թուրքերին թույլ չտալ անցնել Ղարաբաղով: Անդրանիկն ուզում էր գրավել Շուշին: Այսպիսով, Բաթումի պայմանագիրը չուժեց Կովկասում կուտակված խնդիրները և սկսեցին ձևավորվել լարվածության ու ընդհարումների նորանոր օջախներ: Գլխավոր օջախը հասունանում էր Բաքվում, ուր թուրքերն ուղարկեցին 15.000 զորք:

Իսկ Էրիվանում, Ալեքսանդրապոլում թուրքերի հետ Բաթումի պայմանագիրը կնքելուց հետո, նրանց հետ այլևս զինված ընդհարումներ տեղի չունեցան: Հակառակը, Միջազգետքի ռազմաճակատի հրամանատար Խալիլ-փաշան՝ Էնվեր-փաշայի արյունակից բարեկամը, եկել էր զորքերի տեսչական ստուգում անցկացնելու և գտնվում էր Էրիվանից ոչ հեռու: Գեներալ Նազարբեկովը, իմանալով Խալիլ-փաշայի ժամանելու մասին, ցանկություն էր հայտնել գնալ նրան տեսակցելու, քանի որ Խալիլը եղել էր Պարսկական ռազմաճակատում նրա հակառակորդը: Գեներալ Նազարբեկովը Դիլմանի մոտ Խալիլին ջախջախիչ պարտության էր մատնել և հետապնդել նրան մինչև Վան: Դա տեղի էր ունեցել 1915-1916թթ.: Խալիլ-փաշան, իմանալով գեներալ Նազարբեկովի մտադրությո-

յան մասին, խնդրում է նրան փոխանցել, որ. “Խալիլը երբևիցե թույլ չի տա, որ այն զինվորականը, որը միշտ հաղթել է իրեն, առաջինը գա իր մոտ”: Եվ Խալիլ-փաշան ինքը հունիսին ժամանեց Էրիվան, ներկայացավ գեներալ Նազարբեկովին, տեսակցեց Արամին, ում հետ վաղուց էին ճանաչում միմյանց ևր Էրիվանում թողեց Մեհմեդ-փաշային, ով ներկայացված էր Օսմանյան Կառավարության կողմից որպես դեսպանորդ:

Այդ օրերին Էրիվանի կապը Թիֆլիսի հետ չափազանց թույլ էր. երկաթգիծը գտնվում էր թուրքերի ձեռքում, սարքավորումներն ավերված էին, հեռագրակապը չէր գործում, երկաթգիծը նույնպես, գործնականում, չէր գործում: Անկախ հռչակված Հայաստանի Հանրապետությունը պետական ատրիբուտներից ուներ միայն գործք և սեփական Ազգային խորհուրդ: Վերջինս, մինչև 1918թ. օգոստոսին Քաջազնունու գլխավորած կառավարության Էրիվան ժամանելը, Թիֆլիսում իրականացնում էր կառավարության գործառույթները:

Իսկ այդ միջոցին Բեռլինում հայ և վրացի ներկայացուցիչները լծված էին գործի: Բաթումից մեր պատվիրակության գնալուց հետո, Թիֆլիսից Բեռլին մեկնեցին Համո Օհանջանյանը և Արշակ Զուրաբովը: Կովկասյան գործիչների ջանքերով և գեներալ ֆոն Լոստովի զեկույցով պետք է բացատրել այն փաստը, որ Բաթումից Թիֆլիս իմ վերադառնալուց հետո, հունիսի 12-ին գերմանական առաքելությունը մի շտապ հեռագիր էր ստացել Կոստանդնուպոլսից, որը Կովկասյան հանրապետությունների Կառավարություններին տեղեկացնում էր, որ հունիսի 25-ին Կոստանդնուպոլսում նշանակված է Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Բուլղարիայի և Անդրկովկասյան Հանրապետությունների համաժողով: Գերմանական գեներալ, կոմս Կրեսսը նույն օրը այդ հեռագիրը շտապ փոխանցեց Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանին՝ հանձնարարություններ տալու համար: Նույն օրը Ահարոնյանը շտապ խորհրդացություն հրավիրեց, որին մասնակից էր նաև նոր Կառավարությունը՝ դեռևս երեք գործող անձերով:

Զեկուցեցին հեռագրի բովանդակությունը: Ներկաները ոգևորվեցին, քանի որ հասկացվում էր, որ Գերմանիան ցանկանում է վերանայել Բաթումի պայմանագիրը և վերափոխել սահմանները Բրեստ-Լիտովսկի

պայմանագրին համապատասխան: Քանի որ մեր բնակչությունը բացարձակապես շնչահեղձ էր լինում մեր նեղ սահմաններում, մեր երևակայությունն արդեն տեսնում էր Սուրմալուն, Ալեքսանդրապոլն ու Ախալքալաքը Հայաստանին վերադարձված, ուստի, որոշվեց անմիջապես պատվիրակություն ընտրել և օր չկորցնելով, մեկնել Կոստանդնուպոլիս: Ընտրվեցինք Ահարոնյանը, ես և Միքայել Պապաջանյանը: Ահարոնյանը նշանակվեց պատվիրակության նախագահ, ես և Պապաջանյանը՝ անդամներ: Ես պահպանեցի արտաքին գործերի մինիստրի պաշտոնը, իսկ կառավարությունում այդ պարտականությունների կատարումը ստանձնեց Քաջագունին:

Մեզ հայտնի չէր նիստերի օրակարգն ու ծրագիրը, ուստիս մեզ տրվեցին ընդհանուր բնույթի հանձնարարականներ՝ պահանջել Հայաստանի սահմանների ընդլայնում:

Վրացիներն ու ադրբեջանցիները նույնպես պատվիրակություններ ընտրեցին: Վրացական պատվիրակության նախագահը Վրաստանի Արտաքին գործերի մինիստր Գեգեչկորին էր, ադրբեջանականինը՝ Խասմամեդովը⁹⁴: Մենք շատ արագ հավաքվեցինք: Հայկական կողմից երկու պատվիրակ էինք՝ Պապաջանովը ավելի ուշ ժամանեց: Մեզ հետ էին նաև երկու քարտուղար և ռազմական խորհրդատու, գեներալ Ղորղանյանը: Հուլիսի 14-ին մենք, վրացական պատվիրակության հետ, մեկնեցինք Թիֆլիսից, մայիսի 15-ին նստեցին Փոթիում մեզ սպասող գերմանական «Գեներալ» շոգենավը և ուղևորվեցինք Կոնստանդնուպոլիս:

Այս անգամ մեկնում էինք մեծ հույսերով: Մենք համարում էինք, որ եթե Կենտրոնական տերությունները համաժողով են գումարում, ապա, նվազագույնը, զոնե Բրեստի պայմանագիրը մեզ հնարավորություն կտա զոնե ինչ-որ չափով ընդլայնել մեր սահմանները: Երեք օր հետո մենք հա-

⁹⁴ Խալիլ բեկ Հաջիրբաբա օղլի Խասմամեդով (1873, Գանձակ, Ռուսական կայսրություն - 1945, Ստամբուլ, Թուրքիա), Ադրբեջանի Ժողովրդավարական Հանրապետության քաղաքական և պետական գործիչ, 1918 թվականին՝ Ադրբեջանի Դեմոկրատական հանրապետության արդարադատության և ներքին գործերի նախարար, 1920-ին՝ դեսպան Թուրքիայում:

սանք Կոնստանցա: Նավից իջանք քաղաք: Առաջինը, ինչը մեզ ապշեցրեց, դա նավահանգստում աշխատող ռումինացի ռազմագերիներն էին: Նրանց կողքին՝ մտրակները ձեռքներին կանգնած գերմանացի վերակացուներն էին, որոնք մտրակելով ստիպում էին հետ մնացողներին ավելի աշխույժ աշխատել: Գերիներն ունեին խիստ տանջահար տեսք: Քաղաքը բացարձակապես ամայացած էր: Միայն որոշ տներում լսվում էր բուլղարերեն և գերմաներեն խոսակցություն: Քաղաքում ոչ մի հայ չէր մնացել՝ բոլորը տարհանվել էին: Առափնյա հատվածում իմ ուշադրությունը գրավեց մի շքեղ առանձնատուն, որի ճակատին գրված էր. Մանիսալյան: Շենքում տեղակայված էր գերմանական փոստատունը: Մենք Կոնստանցայում մնացինք մեկ օր, լրացրինք ածուխի մեր պաշարները և ուղևորվեցինք դեպի Կոստանդնուպոլիս: Մեզ անհրաժեշտ էր գալ այդ քաղաք: Դեռ թարմ էին Թուրքիայում կոտորածների հետքերը և մեզ սպասում էին, անշուշտ, հանդիպումներ նաև այդ կոտորածների հեղինակների և ղեկավարների հետ: Մյուս կողմից, Կոստանդնուպոլսում դեռևս մնում էր մոտ 100.000 հայ բնակիչ: Շատ բարդ ու խառը զգացումներ տիրեցին մեզ, երբ հունիսի 21-ին մենք հեռվում տեսանք ափը և մտանք Բոսֆոր:

Բոսֆորը շողում էր իր հավերժ գեղեցկությամբ, ասես ոչինչ չէր փոխվել անցած չորս տարիների ընթացքում, որ վերջին անգամ անցել էի Բոսֆորը: Ցավով էր սեղմվում սիրտս, երբ հիշում էի, որ այն բոլոր գործիչները, ում հետ հանդիպել էի այն անգամ՝ Խաժակը, Զոհրապը, Ակնունին և այլք՝ բոլորը սպանված են:

Պատերազմի ընթացքում սպանվել և տանջամահ էին արվել 800.000 թուրքահայեր: Մենք մոտենում էինք Գալատա նավամատույցին: Առափնյա տարածքում ամեն ինչ արդեն պատրաստ էր մեզ դիմավորելու համար. կանգնած էին սպաներ և ֆեսը գլխին ոսկեգօծ համազգեստով մի պարոն: Դա Մուխթար-բեյն էր, որը նշանակված էր “մուհմանդար”⁹⁵, այսինքն՝ մեզ կցված անձ:

⁹⁵ Մուհմանդար, մեհմանդար՝ տվյալ երկրում անվանի ճանապարհորդին ուղեկցելու նպատակով պետական իշխանության կողմից հատուկ նշանակված պատասխանատու անձ:

ԳԼՈՒԽ VIII

Չորս ամիս Կոստանդնուպոլսում՝ Կենտրոնական տերությունների Համաժողովին սպասելիս (15 հունիսի – 1 նոյեմբերի 1918թ.)

Հենց որ իջեցրին նավասանդուղքը, Հունաստանում նախկին դեսպանորդ Մուխտար-բեյը, ով նշանակված էր մեզ ուղեկցելու, երեք սպաների ուղեկցությամբ բարձրացավ շոգենավ և գերազանց ֆրանսերենով ողջունեց մեզ իր Կառավարության անունից, շնորհավորեց բարեհաջող տեղ հասնելու համար և ներկայացրեց երկու սպայի, ովքեր նույնպես կցված էին մեր պատվիրակությանը. Նուրի-բեյ և Ահմեդ-բեյ: Վերջինս ծագումով արաբ էր:

Մեզ տեղեկացրեցին, որ մենք թուրքական Կառավարության հյուրերն ենք և մեզ տեղ է հասկացված Թոքաթյան հյուրանոցում, իսկ վրացիներին՝ Pera Palace-ում: Մենք ուշադիր ու զննող հետաքրքրությամբ մեկ առ մեկ դիտում էինք ափին խոնված մարդկանց դեմքերը, սակայն մեր աչքը չէր գտնում հայկական զոնե մեկ դեմք: Պարզապես, հայերից և ոչ մի մարդ համարձակություն չէր ունեցել բացահայտ ու ազատ գալ դիմավորելու Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչներին: Դա դեռևս չափազանց նոր էր, սարսափելի և վտանգավոր: Պատերազմը դեռ իր թեժ փուլում էր և նրա ելքը խիստ կասկածելի էր. ապագայում հնարավոր էր սպասել ամեն ինչի: Բոլորը չափազանց զգուշավոր էին: Ինչպես մեզ հետագայում հաղորդեցին տեղի հայերը, մեր՝ անկախ Հայաստանի ներկայացուցիչների Պոլիս ժամանելը իրենց թվացել է ինչ-որ անբնական և ֆանտաստիկ մի երևույթ: Նրանց հիշողությունից դեռևս չէին ջնջվել հայերի տեղահանումը, կոտորածներն ու սպանությունը և ահա՝ նրանց դիմաց կանգնած է Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց մինիստրը:

Ուղիղ երկու տարի հետո ես կրկին այցելեցի Կոստանդնուպոլիս և այս անգամ որոշ կանայք ինձ պատմում էին, որ մեր նախորդ այցի օրերին իրենք իրենց տներում ջերմեռանդ աղոթել են Աստծուն՝ Կոստանդնուպոլսում մեր անվտանգության ու բարեհաջող կեցության համար: Ն-

րանք մտահոգ էին մեր, մեր կյանքի համար, նրանց աչքի առաջ էին գալիս թունավորում, մահափորձ և այլ ոտնձգություններ անկախ Հայաստանի ներկայացուցիչների նկատմամբ:

Հյուրանոց ժամանելով, մենք տեսանք, որ մեզ համար արդեն պատրաստ է հրաշալի սպասքավորված մի սեղան:

Մեզ կարգի բերելով և մի քիչ “շունչ առնելով”, մենք պայմանավորվեցինք Մուխթար-բեյի հետ, որ առաջինը մենք կայցելենք արդարադատության Մինիստր, Բաթումի համաժողովի նախագահ Խալիլ-բեյին: Խալիլ-բեյը մեզ դիմավորեց չափազանց սիրալիր: Մեր խոսակցությունն առնչվում էր համաժողովի սկսվելու ժամանակին, նրա ծրագրին և Կովկասում՝ թուրքական զորքերի կողմից օկուպացված շրջաններում և, մասնավորապես, Հայաստանում հայերի վիճակի բարելավման անհրաժեշտության հարցերին: Մեր մտքի հիմնական թելն այն էր, որ բացարձակապես անհնար է Հայաստանի գոյատևումը Բաթումի պայմանագրով նախատեսված սահմաններում: “ Հայաստանը կամ պետք է գոյատևի, այդ դեպքում տրամադրեք նրան համապատասխան սահմաններ, իսկ եթե ոչ՝ ապա մեր բոլոր զրույցները աննպատակ են և անիմաստ”: Հետագայում չկրկնվելու համար ես պետք է այստեղ նշեմ, որ այդ երեք թեմաներն էին՝ կենսունակ Հայաստանի սահմանները (Armeniemable, ինչպես մենք արտահայտվում էինք ֆրանսերեն), Կոստանդնուպոլսի համաժողովը և Կովկասում հայերի անտանելի վիճակը, որ հանդիսանում էին մեր զրույցների ծրագիրը այն բոլոր աճանց հետ, ում մենք տեսել ու հանդիպել ենք Կոստանդնուպոլսում մեր անցկացրած այդ չորս ամիսների ընթացքում:

Եթե ես քայլ առ քայլ, օր առ օր փոխանցեմ մեր հանդիպումները, այցելություններն ու զրույցները բոլոր դիվանագետների, մինիստրների, լրագրողների և հասարակական գործիչների հետ, ապա կստացվեր մի հսկա հատոր, ինչպիսին էր Էրիվան վերադառնալուց հետո Հայաստանի կառավարությանը ներկայացրած մեր պատվիրակության զեկույցը: Ուստիև, շարադրանքի առավել պարզության համար ես ներկայացրել եմ մեր շփումները այն բոլոր խմբերի հետ, որոնց հետ մենք հարաբերվել ենք: Այդ խմբերը հետևյալն էին. Մինիստրների Խորհուրդը՝ մեծ վեզիր

Թալեաթ-փաշայի գլխավորությամբ, ռազմական Մինիստր, գեներալի-սինուս Էնվեր-փաշան և արտաքին գործերի Մինիստր Նեսիմի-բեյը, արտասահմանյան դեսպանորդներ, որոնք պատերազմող տերություններից երեքն էին. Գերմանիայից՝ կոմս Բերնադորֆը⁹⁶, Ավստրո-Հունգարիայից՝ մարկիզ Պոմյանկովսկին⁹⁷ և Բուլղարիայից՝ Կոլիշևը, չեզոք տերություններից՝ Պարսկաստանի դեսպանորդն ու շվեդական դեսպանորդը, երիտթուրքական, կոմիտեն, հայկական ու թուրքական մամուլը և թուրքական քաղաքական գործիչներ, ինչպես, օրինակ՝ Սենատի Նախագահ, հայտնի Ահմեդ Ռիզան և «Թաքինի» նախկին խմբագիր, Պատլամենտի փոխ-նախագահ Հուսեյն Ջահիդ-բեյը, ծովային մինիստր, Թուրքիայի Տրապիզոնյան պատվիրակության ղեկավար Ռաուֆ-բեյը և բազմաթիվ այլ անձինք Թուրքիայի Պատլամենտից: Բացի դրանից, Էնվեր-փաշան մեզ ներկայացրեց սուլթանին, ում հետ մենք զրույց ունեցանք հայկական հարցի շուրջ: Միաժամանակ, համաձայն ստացած հրահանգների, Հայոց Ազգային խորհրդի պատվիրակության անդամներ Համո Օհանջանյանն ու Արշակ Ջուրաբյանը, որոնք արդեն լիազորություններ էին ստացել նաև Հայաստանի Հանրապետության Կառավարությունից, անհրաժեշտ ամենը ներկայացնում էին Գերմանիայի Կառավարությանը, ինչպես նաև շփումներ էին ունեցել Գերմանիայում բոլշևիկյան Ռուսաստանի դեսպանորդ Իոֆֆեի⁹⁸ հետ: Ահա այն շրջանները, որոնց հետ չորս ամիսների

96 Կոմս Յոհան Հենրիխ Բերնադորֆ (նաև՝ Բեռնշտորֆ), Գերմանիայի դեսպանը Թուրքիայում 1917 թ. սեպտեմբերի 7 – 1918 թ. հոկտեմբերի 27:

97 Այդ ժամանակ Ավստրո-Հունգարիայի ռազմական կցորդը Թուրքիայում:

98 Իոֆֆե (նաև՝ Յոֆե) Ադուլֆ Աբրամովիչ (1883-1927), բոլշևիկյան Ռուսաստանի պետական և քաղաքական գործիչ, դիվանագետ, նշված ժամանակահատվածում՝ բոլշևիկյան Ռուսաստանի դեսպանորդը Գերմանիայում: Այդ օրերին Բեռլինում ընթացող հայ-գերմանական և հայ-բոլշևիկյան հանդիպումների և բանակցությունների մասին մանրամասն տե՛ս Ա. Հայրունի, Հայկական հարցը 1918 թ. Հայ-գերմանական և գերմանաթուրքական հարաբերությունների համատեքստում, Պատմա-բանասիրական հանդես, 2007, №1, 1518-35; Ա.Հայրունի, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918թ., Երևան, 2013, 192 էջ: Ա. Հայրունի, Հայաստանի Հանրապետության՝ Բեռլինի պատվիրակության գործունեությունը 1918 թվականին, Հայագիտության հարցեր, 2(14), էջ44-56, Երևան, 2018:

ընթացքում Կոստանդնուպոլսում հարաբերություններ ու շփումներ է ունեցել հայկական պատվիրակությունը:

Խալիլ-բեյի հետ մեր առաջին իսկ զրույցի ընթացքում մենք բախվեցինք այն առարկությանը, թե բոլոր պետություններն էլ իրենց գոյությունը սկսել են փոքր տարածքներից և զարգացել են ժամանակի ընթացքում: Հատկապես հաճախակի հիշատակվում էր Հունաստանը, որն իր գոյությունը սկսել էր 400.000 բնակչությամբ և Բելգիան, որն ուներ 6 միլիոն բնակիչ 30.000 քառ.կմ. տարածքի պարագայում:

Հակադարձելու համար մեզ անհրաժեշտ էին վիճակագրական տվյալներ և մեր առաջնահերթ աշխատանքն էր այստեղ պատրաստել մեր բնակչության համար անհրաժեշտ տարածքների մակերեսների հաշվարկները և երեք անդրկովկասյան հանրապետությունների բնակչության ու նրանց տարածքների վերաբերյալ համեմատական տվյալները: Այդ աշխատանքը պատվիրակության ղեկավարությամբ իրականացվեց ռազմական փորձագետ գեներալ Ղորղանյանի, մեր խորհրդատու, տնտեսագիտության պրոֆեսոր Բունիաթյանի և Կովկասի ու, մասնավորապես, Հայաստանի ազգագրության մասնագետ, իմ եղբայր Գեորգի Խատիսյանի կողմից:

Այդ աշխատանքները չափազանց կարևոր էին երկու տեսակետից. նախ նրանք ծառայեցին որպես հիմք և հանդիսացան տվյալներով հարուստ պատրաստի նյութ հետագայում՝ 1919-1920 թթ. Փարիզի Վեհաժողովում ներկայացնելու համար, իսկ երկրորդը՝ բացահայտեցին Կովկասում հայ բնակչության բաշխման իրական պատկերը, որը խիստ փոփոխության էր ենթարկվել պատերազմի ընթացքում և դրանից հետո:

Քանի որ այդ տվյալներն ունեն արտակարգ կարևոր նշանակություն և մենք չափազանց շատ ջանք ծախսեցինք, որպեսզի հիմնավորենք և ապացուցենք մեր անհերքելի իրավունքներն Ախալքալաքի, Լոռու, Զանգեզուրի, Նախիջևանի և Ղարաբաղի նկատմամբ, ես ինձ իրավունք կվերապահեմ իրականացնել մի փոքրիկ պատմական էքսկուրս դեպի մեր ոչ հեռավոր անցյալը՝ Կովկասում հայկական տարածքների հարցի վերաբերյալ: Այստեղ ես ստիպված եմ թեթևակի շեղվել. մինչև 1900թ. գործնականում, հարց, որպես այդպիսին՝ թե՞ հատկապես ո՞ր շրջանները Կով-

կատում համարել որպես “հայկական տարածք”, գոյություն չունեք: Ես շեշտում եմ “գործնականում”, քանզի հայկական շրջանակներից հղված բոլոր դիմումներն ու միջնորդությունները կրում էին կովկասյան էքստերիտորիալ՝ զուտ ներտարածքային բնույթ. խնդրանքներ եկեղեցական-ծխական դպրոցների իրավունքների մասին՝ անկախ նրանց տեղակայման վայրից, միջնորդություններ, որպեսզի հայ գորակոչիկներն իրենց ծառայությունն իրականացնեն Կովկասում՝ առանց նշելու, որ “այսինչ հայկական տարածքում”, պահանջում էին հայկական եկեղեցու ունեցվածքի վերադարձնելը՝ կայսրության որ մասում էլ այն խլված լիներ, պահանջում էին Կովկասյան հայ բարեգործական միության բաժանմունքներ բացել Կովկասում ամենուր, որտեղ բնակվում էին հայերը՝ սկսած Բաթումից և վերջացրած Վլադիկավկազով: Ամբողջ Կովկասով այդ միությունն ուներ մոտ 50 բաժանմունքներ: Նույն պատկերն էր և մյուս բնագավառներում. թատրոն, թերթեր, կուսակցությունների կոմիտեներ՝ այդ ամենը սփռված էր ամբողջ Անդրկովկասով: Բայց երբ 1905-1906թթ. Ռուսաստանում փչեցին նոր նախանշանների քամիներ, - հայերը սկսեցին խոսել “էքստերիտորիալ-ներտարածքային հայկական մշակութային ինքնավարության մասին”: Նպատակի նման ձևակերպումը պետք է համարել նորագույն շրջանում հայկական ինքնորոշման ճանապարհի առաջին լուրջ քայլը: Ես չեմ խոսում նախկին նախագծերի, Եկատերինա երկրորդի ժամանակաշրջանի, Ղարաբաղի մելիքների մասին: Այդ ամենը նորագույն հոսանքների նախանշանակներն էին: Ես խոսում եմ միայն այն երևույթների մասին, որոնք առանձնանում են վերջին երկու տասնամյակներում: Դրանց ծագումը հասկանալի է. դրանց արմատները պետք է փնտրել հեռավոր անցյալում: Ըստ էության, այդ “ներտարածքային ինքնավարությունը” մասամբ իրականացվում էր եկեղեցու, “Դաշնակցություն” կուսակցությամբ, իսկ վերջին ժամանակներում՝ ռուսահայերի համագումարների միջոցով: Այդ երեք ուժերը առաջին անգամ ցցուն ձևով առաջ քաշեցին հայերի ինքնակառավարումը համակարգող մարմնի ստեղծման անհրաժեշտությունը: Ճիշտ է, այդ ուժերի միջև երբեմն ընթանում էր ներքին պայքար, սակայն այդ պայքարը չհյուծեց հայ գիտակցության նշված գործոնները: Եղել են նաև նրանց սերտ համագոր-

ծակցության ժամանակներ. օրինակ՝ Կուսակցությունը մեծապես օժանդակեց եկեղեցուն վերադարձնել իր ունեցվածքը, այսինքն՝ եկեղեցու միջոցով վերադարձնել ազգի ունեցվածքը: Մյուս կողմից, եկեղեցին՝ ի դեմս Կաթողիկոսի, Նուբար-փաշային լիազորագիր հանձնեց, որպեսզի վերջինս ներկայանա Փարիզ և այնտեղ պաշտպանի հայերի ազգային իրավունքներն ու պահանջները: Այդպիսին էլ համագումարի ծնունդ Ազգային խորհուրդը, որը համագործակցում էր Կաթողիկոսի հետ:

Սակայն հայերի ազգային միտքը դրանով չսահմանափակվեց ու կանգ չառավ: 1910-ին ընդառաջ, ասպարեզ բերվեց նոր պահանջ. Կովկասում հայկական տարածքի գաղափար հիմնելու մասին, որտեղ անհրաժեշտ էր հաստատել հայկական զեմստվոյի ինքնակառավարում: Երբ 1909թ. փոխարքա Վորոնցովի կոչով Կովկասի նահանգներում զեմստվոների վերաբերյալ նախագծերի ստեղծման նպատակով առաջին անգամ սկսեցին գումարվել հանձնաժողովներ, առաջ եկավ այն հարցը, թե զեմստվոների ժողովներում ինչպե՞ս ապահովել հայերի մեծամասնությունը:

Այդ օրերին էր, որ առաջին անգամ, զեմստվոների հարցերով զբաղվող հայ գործիչները՝ Իշխան Գեորգի Թումանյանը, Ստ. Կամսարականը, Քրիստ. Վերմիշյանը, Արտ...յանը, Ավ. Շահատունին, Ալ.Քալանթարը, Գ.Խատիսովը և ես, թվերը ձեռքներին փնտրում էին հայկական տարածքներ Կովկասում: Մեր որոնումները բավականին տրտմագին էին. հայերը ցրված էին ամբողջ Կովկասով մեկ, սակայն, հո՞ծ զանգվածով, որտեղ նրանք թվապես կազմում էին մեծամասնություն, բաշխված էին ընդամենը վեց գավառներում. Շուշիի և Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազետի և Էջմիածնի, Ախալքալաքի և Էրիվանի գավառներում: Մյուս վայրերում հայերի հետ մեջումեջ բնակվում էին թաթարներ⁹⁹:

Իմ ավագ եղբայրը, կոռպերացիայի լեռնային ինժեներ Գեորգի Խատիսյանը շատ էր զբաղվել այդ հարցով և առաջին անգամ քարտեզ էր հրատարակել, որտեղ նշված էին Կովկասում հայերի բնակության տա-

⁹⁹ Սույն հարցի վերաբերյալ մանրամասներ կարելի է գտնել նաև Վ.Հարությունյան, 1918թ. Հայ- վրացական պատերազմը.Նյութեր և փաստաթղթեր, Երևան, 2014, էջ 6-14, 42-46:

րածքները: Քարտեզի վրա դրանք նշված էին կարմիր գույնով: Այդ գույնը առկա էր ամենուր և ամեն տեղ՝ մեծ ու փոքր կարմիր բծերի ու կետերի տեսքով: Ինքը բավականին լայն ծրագրեր ուներ Էրիվանի նահանգում հողատարածքներ գնելու և դրանք հայերով բնակեցնելու հեռանկարով:

Երբ 1916-ին Պալատում վերսկսվեցին զեմսովոներին առնչվող խորհրդակցությունները, հայկական տարածքների հարցը հայերի համար դարձավ օրախնդիր: Ես այդ խորհրդակցության անդամ էի: Մենք համառորեն ձգտում էինք ստեղծել խիտ հայկական բնակչությամբ տարածքներ: Դրան հասնելու միակ միջոցը վարչական վերաբաժանում իրականացնելն էր, այսինքն, նահանգների և գավառների սահմանների վերաձևումն էր: Այդ աշխատանքը, այսինքն, այդ հարցի տեսության նախապատրաստումը, իրականացրեց հետո մահացած մեր ընկեր Ա.Շահատունին: Նա հրատարակեց իր աշխատությունը՝ Կովկասում հայկական տարածների հարցը հասկանալու համար կարևոր ու տպավորիչ մի աշխատություն:

Հայկական տարածքների հարցի հիմնարար մշակման համար մենք ստեղծեցինք հանձնաժողով, որի կազմում էին Քրիստ. Վերմիշևը, Արտ. ...լովը, Շահաթունին և ես: Լևոն Մանթաշեն այդ աշխատանքների համար տրամադրեց 20.000 ռուբլի և մանրակրկիտ հետազոտություններից հետո աշխատանքը հասցվեց ավարտին: Սահմանների “վերաձևման” նախագիծը նահանգների սահմանների վերափոխմանը վերաբերող Պալատում ներկայացրած մեր բոլորիս, մասնավորապես, նաև՝ իմ ելույթների հիմքն էր հանդիսանում:

Մենք ձգտում էինք կտրել Լոռին ու Ախալքալաքը Թիֆլիսի նահանգից, Զանգեզուրը և Ղարաբաղը՝ Ելիզավետպոլի նահանգից, Կարսի ու Կաղզվանի շրջաններ՝ Կարսի մարզից, և այդ դեպքում ստեղծվում էր խիտ ու մեծամասնություն կազմող հայկական բնակչությամբ կուռ ազգային՝ հայկական տարածք: Այն, ինչ իրականացնում էին թուրքերը, արհեստականորեն նոսրացնելով հայկական բնակչության խտությունը 6 վիլայեթներում և հասնելով նրան, որ դրանցից և ոչ մեկում հայերը մեծամասնություն չկազմեն, նույնն անում էին նաև ցարական իշխանությունները Կովկասում: Թուրքերն այնպես էին բաժանել վիլայեթների սահ-

մանները, որ ոչ մի վիլայեթում հայերը հանկարծ բնակչության 38%-ից ավելի չկազմեն, ինչն էլ իրենց իրավունք էր տալիս պնդել, որ 6 վիլայեթներից և ոչ մեկում հայերը մեծամասնություն չեն կազմում: Դրա համար էլ հայկական տարածքների հարցը չափազանց ցավոտ էր. նրա լուծմանն ուղղված քայլերը հետագայում շատ արյուն արժեցան, բայց առանց այդ քայլերի չէր լինի Հայաստանի Հանրապետությունը՝ ոչ դեմոկրատական, և ոչ էլ Խորհրդային:

Հիմնական հայկական տարածքները,- դա Էրիվանի նահանգն էր, Կարսի մարզը և Ելիզավետպոլի նահանգի մի մասը: Էրիվանի նահանգն ուներ 1.114.498 բնակիչ, որոնցից հայերը՝ 669.871, Կարսի մարզը՝ 404.305 բնակիչ, որոնցից հայերը՝ 123.170, Ելիզավետպոլի նահանգում՝ 1.275.131 բնակիչ, որոնցից հայերը՝ 418.859. Թիֆլիսի նահանգի բնակչությունը 1.472.308 էր, որոնցից հայերը՝ 411.747: Հայերն ամենուրեք ներկա էին որպես հզոր տարր, սակայն բացարձակ մեծամասնություն (մոտ 60%) կազմում էին միայն Էրիվանի նահանգում, այն էլ՝ ոչ բոլոր գավառներում: Իսկ, առհասարակ, Անդրկովկասում մահմեդականները կազմում էին ընդհանուր բնակչության 42,02 % -ը, վրացիները՝ 20,89 % -ը, հայերը՝ 22,92 %-ը: Հայերի թիվն Անդրկովկասում կազմում էր 1.803.556 մարդ, վրացիներինը՝ 1.651.378 մարդ:

Փոփոխված սահմանների դեպքում՝ արդեն Հայաստանի Հանրապետության պարագայում, երբ մենք հաշվի չէինք առնում նախկին ռուսական նահանգների սահմանները, ստացվում էր լրիվ այլ վիճակագրական պատկեր. 1917թ. Հայաստանի Հանրապետության սահմաններում, ինչպես որ մենք տեսականորեն դրանք պատկերացնում էինք, պետք է որ գտնվեր 2.159.000 մարդ, որոնցից 66 %-ը, այսինքն՝ 1.416.000 հայ, 31 %-ը, այսինքն՝ 670.000՝ մահմեդական, 3%-ը՝ 73.000 մարդ՝ այլ ազգերի ներկայացուցիչներ: Նույնիսկ այդ դեպքում Հայաստանից դուրս՝ Վրաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասում դեռևս մնում էին ևս 494.000 հայեր: Բայց նման պատկեր ստանալու համար անհրաժեշտ էր իրականացնել վարչական սահմանների վերաձևում: Պալատում այդ մասին խոսվել է շատ հաճախ ու շատ երկար: Բայց 1916թ., Պալատում, Ցարական իշխանության օրոք, մենք չէինք խոսում “հայկական ազգային

տարածքի” մասին: Մենք խոսում էինք կլիմայական, տեղաշարժերի, գյուղատնտեսական և ոռոգմանը վերաբերող պատճառների մասին, որոնք անհրաժեշտություն են առաջ բերում գոյություն ունեցող վարչական սահմանները վերանայելու համար: Բոլորը լուռ հասկանում էին միմյանց, բայց ոչ ոք չէր պատրաստվում իրերն անվանել իրենց անուններով: Բայց պայքարը սուր էր և թեժ: Թաթարները դեմ էին սահմանների վերանայմանը, վրացիները՝ նույնպես: Բայց մեր մեջ այդ միտքը նստած էր շատ խորը: Չէ որ դեռևս 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ խուլ պայքար էր գնում հոծ ազգային տարածքների ստեղծման և նրանք միմյանց հետ ապահով ու անվտանգ ճանապարհներով կապելու ուղղությամբ: Ահա թե ինչու ես անհրաժեշտ համարեցի բերել այս կարևոր տեղեկությունները՝ սկսած 1905-ից և վերջացրած 1916թ., որպեսզի պարզ լինի, թի ի՛նչ սրությամբ 1917-1918թթ. դուրս ժայթքեցին այն հարցերն ու վեճերը, որոնք խուլ ու լռելյայն քննարկվում էին դեռևս տասը տարի առաջ: Եվ 1918թ. Կոստանդնուպոլսում մենք բազում անգամներ փորձում էինք այնպես գծել Հայաստանի սահմանները, որպեսզի կարողանանք նրանց շրջանակում տեղավորել հնարավորինս մեծ քանակով կովկասահայություն:

Դա էր մեր աշխատանքների հիմքն այստեղ: Հետագայում այդ հարցերին նվիրված աշխատություններն ավելի ընդլայնվեցին: Ներկայումս դրանք բոլորն էլ տպագրված են Փարիզում՝ Հայաստանի Հանրապետության պատվիրակության հրատարակության տեսքով՝ առանձին չորս հատորյակներով: Բայց թուրքերը տեղյակ էին մեր բոլոր նախագծերի մասին և գիտակցաբար հակազդում էին դրանց: Նրանք չէին ուզում կենսունակ Հայաստանի ստեղծումն ու կայացումը: **Նրանց պետք էր հենց ինքը՝ Ղարաբաղ-Ջանգեզուրը, որպեսզի Նախիջևանը կապվի Բաքվի հետ, նրանց անհրաժեշտ էր Ախալքալաք-Լոռին, որպեսզի Կարսից ու Ախալցխայից կարողանան գնալ դեպի Ղազախ-Ելիզավետպոլ (ընդգծումը մերն է-Վ.Հ.):** Այդ մրցակցության ընթացքում բուն ճշմարտությունը թաքցվում էր, քանզի թուրքերը չէին ցանկանում բացահայտել իրենց նախագծերն ու խաղաքարտերը: Սակայն, երբ մենք պատրաստել էինք արդեն մեր տվյալները, գծագրերն ու սահմանների նախագծերը, ին-

չի վրա ծախսվեց մոտ ամիս ու կես՝ հունիսից մինչև հուլիս, մենք տեսանք, որ վրացիներն ու թաթարները նույն շրջանները ներառել են իրենց սահմանների մեջ: Այստեղ արդեն հասունանում էր ներքին ընդհարում, ինչը հետագայում վերաճեց հայ-վրացական, հայ-ադրբեջանական, վրաց-ադրբեջանական պատերազմների: Այդ հակամարտությունն այսօր էլ ավարտված չէ: Պարզապես, այն ժամանակավոր անցել է ընդհատակ:

Միաժամանակ, Կովկասից եկող ամեն մի սուրհանդակ մեզ լուրեր էր բերում հայ բնակչության տուկալի վիճակի մասին Հայաստանից դուրս. ժողովուրդը մատնված էր սովի, ամենուր համաճարակ էր, թուրքերը բռնագրավում էին բերքը:

Հուլիսի սկզբին մենք սպասում էինք համաժողովի բացմանը, որին լիովին պատրաստ էինք. նախագծեր, քարտեզներ, պահանջներ, ներքին սահմաններ և բնակչության վիճակը, - ամեն ինչ պատրաստ էր և թղթին հանձնված: Բայց համաժողովը չգումարվեց: Նշանակվում էին բացման նորանոր ժամկետներ ու չեղարկվում: Պատճառը ֆրանկ-գերմանական, պաղեստինյան, Միջագետքի ռազմաճակատներում սկիզբ առած ու զարգացող անհաջողություններն էին: Որքան շատ Գերմանիան ու Թուրքիան կրում էին անհաջողություններ, այնքան քիչ էին խոսում համաժողովի մասին: Ի վերջո, այն այդպես էլ չկայացավ: Մենք սպասեցինք չորս ամիս, բայց այն այդպես էլ տեղի չունեցավ: Այնպես որ, մեր դիվանագիտական գործունեությունը Կոստանդնուպոլսում դրսևորվեց ընդամենը մեր դիմումներով թուրքական մինիստրներին և Գերմանիայի, Ավստրիայի ու Բուլղարիայի դիվանագետներին՝ արդեն նշված հարցերի առնչությամբ:

Իսալիլ-բեյին այցելելուց հետո, մենք նույն օրը այցելեցինք Թալեաթփաշային ու Էնվեր-փաշային: Դա հունիսի վերջն էր: Թալեաթը մեզ ընդունեց Բարձր Դռանը: Բնականաբար, առաջին իսկ հանդիպման ընթացքում նա փորձեց իր վրայից հանել հայերի նկատմամբ հալածանքներ կազմակերպելու մեղադրանքները: Ամբողջ պատասխանատվությունը նա բարդում էր ռազմական իշխանությունների, քրդերի վայրագությունների և տեղական մանր իշխանավորների կամայականությունների

վրա: “Դուք ինքներդ կտեսնեք ու կհամոզվեք,- ասում էր նա,- թե ինչպես պաշտոնյաները կամայականորեն նենգափոխել են մեր հրամանները”: Նա խոսում էր այն մասին, թե ինչպես պատերազմի առաջին իսկ օրերին խնդրել է Պառլամենտի անդամ Վարդգեսին¹⁰⁰ լինել Թուրքիայի կողմը, ինչին վերջինս պատասխանել է լռությամբ: “Մենք ունեինք թշնամի՝ ի դեմս ռուսների, -ասում էր Թալեաթը: Երբ ռուսներն էին կրակում մեր զինվորների վրա, այդ գնդակները դիպչում էին մեր զինվորների ոտքերին, բայց երբ կրակում էին թուրքահպատակ, իրենց հայրենիքին դավաճանած հայ զինվորները, այդ գնդակները կպչում էին մեր զինվորների սրտներին”, - պատկերավոր, արևելյան ոճով ասում էր Թալեաթը: Զրույցը մեր համար չափազանց տանջալի էր: Ահարոնյանը խոսում էր կրակոտ ու երկար: Պապաջանյանն ու ես ձտում էինք ավելի շատ անցնել այդ օրվա կարիքներից բխող ցավոտ հարցերին: Իսկ ընդհանուր առմամբ, մեր պատվիրակությունում դերերը միշտ էլ բաշխված էին լինում նախօրոք և ամեն մեկը զարգացնում էր իրեն հանձնարարած թեման: Թալեաթը բառերով մեզ լիովին կարեկցում էր, բայց կրկնում էր, թե բոլոր հարցերը իրենց լուծումը կստանան համաժողովում:

Թալեաթի արտաքին տեսքը ամենևին իր օգտին տրամադրող չէր. ամբողջ կեցվածքն ինքնավստահ, բավականին ոչ մտավորական դեմք՝ վառվռուն սև աչքերով, գեր իրան, մշտապես շինծու ձևով մտերիմ երանգների անցնելու ձգտող ձայն,- այդ ամենը խոսում էր քաղաքական հաշվարկի գոյության մասին: Մեր զրույցի ավարտին նա խնդրեց մեր բոլոր ցանկությունները շարադրել գրավոր, որպեսզի ինքը հնարավորություն ունենա այդ ամենի մասին զեկուցել Մինիստրների Խորհրդին և հորդորեց այդ ամենի մասին զրուցել նաև արտաքին գործերի Մինիստրի հետ:

¹⁰⁰ **Հովհաննես (Վարդգես) Մերենցյույան** (1871, Կարին, Էրզրումի վիլայեթ, Օսմանյան կայսրություն - օգոստոսի 2, 1915, Ուոհա, Հալեպի վիլայեթ, Օսմանյան կայսրություն), ուսուցիչ, մտավորական և հեղափոխական գործիչ, Օսմանյան խորհրդարանի անդամ և ազգային երեսփոխան: 1915 թվականի կոտորածների զոհերից է: Հայտնի էր նաև Զարմայր, Գիսակ և ավելի հաճախ՝ Վարդգես անուններով:

Մեր երկրորդ այցելությունը Էնվեր-փաշային էր: Նա մեզ ընդունեց Մերասկերարանում՝ Ռազմական Մինիստրությունում: Այն գտնվում էր Բայաթի հրապարակում, որտեղ կախաղան էին հանվել հնչակյան կուսակցության հեղափոխական անդամները: Երևում էր, որ գործ ունենք նոր ռազմական տերության՝ զինվորականների և դիվանագետների պետության հետ: Հենց որ մենք մտանք գորգերով և զենքով զարդարված սրահ-ընդունարան, մեր ուշադրությունը գրավեց ոսկե տառերով արված մի գրություն, որի տակ պատից կախված էին հարյուրավոր հազվագյուտ թրեր: Արաբերենով արված այդ գրությունն ավետում էր. ” թրերի հովանու ներքո կգտնես դու քո հանգիստը”: Հենց որ Էնվերին զեկուցեցին մեր գալստյան մասին, նա իսկույն ընդունեց մեզ: Միջահասակ, սլացիկ,- նա թողնում էր շփման մեջ շատ հասարակ, զուսպ և գրեթե ամոթխած մարդու տպավորություն: Դեմքը շատ խիստ էր և հանգիստ, աչքերը՝ խորաթափանց և խոհունակ, նա նույնիսկ ինչ-որ տեղ դիմացինին տրամադրում էր դեպի իրեն: Թուրքիայում նման մարդիկ են, որ հրապուրում են եվրոպացիներին. նույն անձի մեջ համատեղվում են կոտորածի, տասնյակ հազարներով քրիստոնյաների ոչնչացման ունակությունն ու ամենանրբագեղ հմայքը վարվեցողության և ոճաձևերի մեջ: Քանի անգամ եվրոպական դիվանագետները սաստել են մեզ. “Ինչպե՞ս թե; Դուք ենթադրում և՛ եք, որ NN-ը ընդունակ է կոտորածներ իրականացնել: Նա այնքան հմայիչ է և սիրալիր: Ո՛չ, նման բան հնարավոր չէ ենթադրել”: Անկողմնապահ լինելու համար պետք է ասել, որ հայերը բացարձակապես անընդունակ են նման հաճելի տպավորություն թողնել օտարերկրացու վրա՝ ոչ խոժոռ ու զուսպ գյուղացիության և ոչ էլ բուրժուազիայի ու մտավորականության կողմից: Քանի-քանի անգամ, ընդունելությունների, հանդիսավոր ճաշկերույթների ժամանակ ես խնդրել եմ քաղաքապետարանի և այլ գերատեսչությունների մեր աշխատակիցներին զբաղեցնել, զվարճացնել արտասահմանցի մեր հյուրերին: Չափազանց մեծ դժվարությամբ էր ինձ հաջողվում մեր հյուրերին “հարմար գրուցակից մատակարարել”: Նույնը և մեր հայ տիկնանց պարագայում. վրացուհիներն ու ռուսներն այդ առումով անփոխարինելի են: Հավանաբար, այդպիսին է մեր ազգային բնավորությունը՝ զուսպ և խոժոռ, ինչը, հավանաբար, դա-

րերի ընթացքում կրած տառապանքի ու դժբախտությունների արդյունքն է:

...Ներս մտնելով Էնվերի աշխատասենյակ, մենք միանգամից սկսեցինք խոսել մեր հարցերից, փախստականներ, սահմաններ, համաժողով: Էնվերը շատ զուսպ հակադարձեց. “Արտաքին նկատառումները հնարավորություն չեն տալիս թույլ տալ փախստականներին վերադառնալ մեր կողմից գրավված շրջաններ: Տեղի մահմեդականները չեն ցանկանում տեսնել նրանց: Ես չեմ կարող երաշխավորել նրանց անվտանգությունը: Թող անցնի որոշ ժամանակ, գուցե իրավիճակ փոխվի... Ի դեպ, հայերը շարունակում են պատերազմել մեր դեմ. Բաքվում նրանք զորք են կազմավորել, Ջանգեզուրում Անդրանիկն է մարտնչում մեր դեմ...”: Նույն պատասխանը նա տվել էր գերմանական դեսպան կոմս Բերնսդորֆին և գերմանական ֆելդմարշալ գեներալ Հինդենբուրգին: Մենք այդ ամենը կտեսնենք նրանց միջև հեռագրերի փոխանակումից: Ինչ վերաբերում է սահմաններին, ապա այդ հարցի կապակցությամբ Էնվերը մի միտք արտահայտեց, որը, հավանաբար, չափազանց խորն էր նստած նրա մեջ: Նա ասաց հետևյալը. “ Մենք չենք կարող մտածել հայկական սահմանների ընդլայնման մասին, քանի որ ինձ հաջողվեց անել այն, ինչը Թուրքիայի համար ներկայացնում է ահռելի կենսական կարևորություն. ես և իմ ընկերները ստեղծեցինք Հայաստան ու դրանով իսկ բավարարեցինք հայերի ազգային ձգտումները և դրանով իսկ լուծեցինք հայկական հարցը: Եվ միաժամանակ, մենք կարողացանք դա իրականացնել Թուրքիայից դուրս՝ ռուսական տարածքների վրա: Այդպիսով, ունենք երկու նվաճում. ստեղծված է Հայաստան պետություն և Թուրքիայի տարածքը մնացել է անձեռնմխելի: Միայն այդ գնով մենք համաձայնվել ենք անկախ հայկական պետության ստեղծմանը: Ինչպե՞ս է հնարավոր այժմ նոր տարածքներ պահանջել, երբ Կարսը, Արդահանն ու Բաթումը նոր-նոր են վերադարձել իրենց հին հայրենիքի գիրկը”: Տարածքների նկատմամբ ունեցած իրավունքների մասին մեր միանգամայն հասկանալի առարկություններին և մեր այն պնդումներին, որ մեր ժողովուրդը որոշել է հասնել իր օրինական պահանջների բավարարմանը, Էնվեր –փաշան բազմանշանակ բացականչեց. “Օ-օ-օ, ես շատ լավ գիտակցում եմ, որ մի ժողովուրդ, որը

ճաշակել է ազատության օդի քաղցրությունը, երբևիցե այլևս չի հրաժարվի դրանից”: Ինչևիցե, մեր առաջին գրույցը չունեցավ և ոչ մի գործնական արդյունք:

Մեր հաջորդ այցելությունները՝ արտաքին գործերի մինիստր Միսսիլիմ-բեյին և ներքին գործերի մինիստր Ջամփուլադ-բեյին, գրեթե ոչինչ չավելացրեցին նախկին տպավորություններին: Նույն սիրալիր ընդունելությունը, ոչ մի իրական խոստումներ և կրկին հավաստիացումներ առ այն, որ Թուրքիան ցանկանում է հայերի հետ ունենալ հավերժ և բարեկամական հարաբերություններ: Որպես առավել հզոր փաստարկներ, մեր գրուցակիցները սովորաբար մատնանշում էին անցյալից հայտնի փաստեր, երբ թուրքերը, գործերով ինչ-որ տեղ գնալիս իրենց երեխաներին վստահում էին հարևան հայերին և, բնականաբար, հակառակը: “Ո՞վ մեզ կովացրեց, ո՞վ պղտորեց հայերին”, - իրենք իրենց հարցնում էին մեր գրուցակից մինիստրները և իրենք էլ պատասխանում. “ Անգլիան և Ռուսաստանը: Ահա թե որտեղ են մեր ընդհանուր թշնամիները”: Իսկ էնվերը խոսեց ավելի որոշակի. “Նրանք պղտորեցին ջուրը և նրանում ձուկ էին որսում”:

Միանգամայն պարզ էր, որ իրենց տեսակետից, հայերը, որպեսզի իրենց հանդեպ ունենան թուրքերի վստահությունը, պետք է շոշափելի չափերով հեռանային դեպի ռուսը համակրանք դրսևորելուց, դեպի Ռուսաստանը կողմնորոշված լինելուց (*ընդգծումը մերն է-Վ.Ն.*): Դեպի այն Ռուսաստանը, որը համառորեն իրենց ներկայանում էր որպես Թուրքիայի ամենառիսկոս թշնամի: Դա կրկնում էին բոլորը:

Ես չգիտեմ, սակայն ասեմ փակագծերում, թե այդ ինչպես պատահեց, որ իրենց պատկերացումներում այդ “ռիսկոս թշնամին” դարձավ իրենց դաշնակիցը և դժվարին պահին փրկեց իրենց անհետացումից: Ի՞նչ են իրենք մտածում այժմ, - դա այն հարցն է, որ շատերն են իրենց ուղղում այսօրվա իրավիճակում: Բայց այն օրերին ես չեմ լսել և ոչ մի ձայն, ոչ մի երանգ, որտեղ համակրանք հնչեր Ռուսաստանի նկատմամբ: Հակառակը, մեզ էին միշտ կշտամբում Ռուսաստանի հանդեպ ունեցած համակրանքի համար: Այդ երանգներն առավել հնչեղ էին այն քաղաքական գործիչների շուրթերում, որոնց մենք հանդիպեցինք Կոստանդնուպոլ-

սում մեր մնալու առաջին ամսի ընթացքում: Հատկապես հետաքրքիր էին Հուսեյն Ջահիդ-բեյի և Ռաուֆ-բեյի մտքերը:

Տեսնելով, ինչպես ես նշեցի նախորդիվ, որ մոտ ժամանակներում համաժողովի աշխատանքների սկիզբը չի նախատեսվում, բայց միաժամանակ, դեռևս չի էլ չեղարկվում, մենք ձգտում էինք մեր օգտին տրամադրել հասարակական կարծիքը: Այն է՝ թուրք գործիչներին հասկացնել, որ հայերի հետ հարաբերությունների կարգավորումը օգտավետ է նաև թուրքերի համար: Մեր փաստարկները հետևյալն էին. մենք չէինք ժխտում մեր քարազյությունը Եվրոպայում, եվրոպական հայանպաստ գործիչների ելույթները, ճառերը Պատվամենտներում և այլն: Մենք ասում էինք, որ այդ ամենը շարունակվելու է, մինչև չլուծվի հայկական հարցը և, բնականաբար, թուրքերը այդ ամենից բարոյապես կնեղվեն: Սակայն միաժամանակ մենք խոստանում էինք իրենց հետ լոյալ համագործակցություն Թուրքիայի վերականգման բոլոր ասպարեզներում: Մենք նշում էինք, որ անկախ Հայաստանը՝ անկախ Վրաստանի և անկախ Ադրբեջանի հետ միասին Թուրքիայի հյուսիսային սահմանների անվտանգության ու ապահովության տեսակետից մի նոր դարաշրջան է բացում: Մեր բոլոր փաստարկները ունենում էին ազդեցություն, սակայն զգացվում էր, որ թուրքերի մտքերն աշխատում էին միանգամայն այլ ուղղությամբ. արևմտյան ռազմաճակատում ունեցած անհաջողությունները նրանց հայացքն ուղղում էին դեպի Արևելք: Կորուստները Բալկաններում, արաբական երկրներում բորբոքում էին նրանց երևակայությունը կենդանի ուժի և տարածքների փախհատուցման հնարավորություններով Կովկասում, Թուրքեստանում և Պարսկական Ադրբեջանում: Այլ հեռանկարներ նույնպես գալիս էին նրանց երևակայությանը: Ես կարող եմ իրապես պնդել, որ նման հեռանկարների հնարավորություն նրանց համար բավականին գունագեղ պատկերներով Բրեստ-Լիտովսկում ներկայացրել էր բուլղարական մինիստր-նախագահ Մալինովը: Այդ մասին ինձ ասել է բուլղարական դեսպանորդ Կոլիշևը, ում հետ Կոստանդնուպոլսում մենք տեսակցել ենք տասնյակ անգամներ: Այսպիսով, թուրքերի քաղաքական մտքերում հնարավոր էր հանդիպել հետևյալ երկու տարբերակի. կամ, հիմնվելով մահմեդական մեծամասնության վրա և ճնշելով ու

նվաստացնելով հայերին ու վրացիներին գույության նվազագույն աստիճանի, հպատակեցնել Կովկասը և, ընդլայնվելով դեպի Թուրքեստան ու Մակուի խանության վրայով՝ դեպի Շարուր-Ջուլֆա, իսկ այնտեղից էլ՝ դեպի երկու Ադրբեջաններ, կամ, երկրորդ գաղափարը՝ Կովկասում ստեղծել Կովկասյան պետությունների ուժեղ դաշնություն և դրանով սահմանազատվել հավերժ թշնամուց՝ Ռուսաստանից: Մեր զրուցակիցների մտքերը մշտապես թափառում էին այդ երկու հնարավոր հեռանկարների միջև: Ես նույնիսկ կարող եմ ասել, որ որոշ անձինք, օրինակ՝ ինչպես իսելացի և եվրոպական դաստիարակություն ունեցող Հուսեյն Ջահիդ-բեյը, ձգտում էին գալ փոխզիջման այդ երկու հնարավորությունների միջև: Այդ փոխզիջումն ուրվագծվում էր Կովկասյան դաշնության ստեղծմամբ, սակայն Թուրքիայի բարոյական հովանավորության ներքո: Այդ պարագայում շատերին գայթակղում էր այն իրողությունը, որ մահմեդականների՝ թաթարների և լեռնականների թվային գերակշռությունը հնարավորություն կտա Թուրքիային այդ ենթադրյալ դաշնությունում միշտ ուժեղ ազդեցություն ունենալ: Այդ ամիսներին ես դեռևս ծանոթ չէի Անկարայի Կառավարության ապագա արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի-բեյին: Հետագայում նա նույնպես զարգացնում էր նման գաղափարներ:

Այսպիսով, որոշ աստիճանի ծանոթ լինելով թուրքական մտավորական շրջանների նման հայեցակարգերին, մենք այցելեցինք Հուսեյն Ջահիդ-բեյին: Նրա մոտ մեզ ուղեկցում էր հայ հրապարակախոս Տիգրան Ջավենը: Տունը, բնակարանը, սպասավորները, իրադրությունը, վարվեցողությունը՝ ամեն ինչը խոսում էր տանտիրոջ միանգամայն եվրոպական կերպարի մասին: Բարձրահասակ, իսելացի դեմքով, անթերի հագնված, գերազանց ֆրանսերեն խոսող Հուսեյն Ջահիդը թողնում էր շատ լավ տպավորություն: Ես նրան վերջերս էլ եմ հանդիպել Լոզանում, համաժողովի ժամանակ՝ և տպավորությունը նույնն էր:

Մենք սովորական արտահայտություններով բացատրեցինք մեր մտքերն ու կարիքները: Հուսեյն Ջահիդը մեզ լրիվ հասկացավ, սակայն շեշտեց, որ ինքը կառավարական կուսակցության մարդ չէ, իսկ ընդդիմության ներկայացուցիչը հազիվ թե կարողանա մեզ գործնական օգուտ

տալ: Սակայն, որպես հասարակական գործիչ, ինքը գտնում է, որ անհրաժեշտ է բավարարել հայերի պահանջները: “Բայց,- ասաց նա,- դուք էլ ձեր հերթին պետք է ձեզ հաշիվ տաք մեր կենսական պահանջները բավարարելու հարցերում”: Եվ նա սկսեց շարադրել դրանք: Մենք նրա հետ անցանք իր հրաշալի, մեծ գրադարանով աշխատասենյակը: Նա հանեց քարտեզը և սկսեց զարգացնել մի տեսություն այն մասին, որ Թուրքիայում, պատերազմից հետո, չհաշված արաբներին (այդ օրերին դեռևս չէին խոսում Թուրքիայից արաբների անջատման մասին), կմնա 6 միլիոնից ոչ ավելի իսկական թուրք: “Մեզ կենդանի ուժեր են պետք”, - և հայերը չպետք է մեր առջև փակեն դեպի մեր եղբայրները տանող ճանապարհը: Եվ նա ցույց տվեց երկու մշտական ճանապարհ, որոնք ես արդեն հինգերորդ տարին է, ինչ տեսնում եմ մշտապես՝ Զանգեզուր-Ղարաբաղով և Ախալքալաք-Բորչալույով: “Սրանցից մեկը պետք է բաց լինի մեր համար”, - ասեց նա: Եվ հավելեց. “Բայց, դրան զուգահեռաբար, անհրաժեշտ է բավարարել նաև ձեզ”: Եվ նրա ուշադրությունը կենտրոնացավ այն շրջանների վրա, որտեղ հնարավոր էր բավարարել հայկական պահանջները: Նա խոստացավ իր բարոյական աջակցությունն ամենուր, որտեղ իր ձայնն ու կարծիքը ունեն նշանակություն:

Դրանից հետո ես այցելեցի Ռաուֆ-բեյին: Նա Զեմալ-փաշայից հետո զբաղեցնում էր ծովային մինիստրի պաշտոնը: Ես արդեն նշել եմ, որ Կոստանդնուպոլսում գտնվելու մեր առաջին ամիսներին իշխանության կազմում չէր, բայց հետո, երբ անգլիական ազդեցությունը և հաղթանակները սկսեցին իրենց զգացնել տալ, Ռաուֆ-բեյին տվեցին ծովային մինիստրությունը. նա համարվում է անգլոմետ, լավ նավաստի է և հրաշալի տիրապետում է անգլերենին: Ռաուֆ-բեյը երիտթուրքերի միջավայրում ունի չափավոր գործչի համարում և այդ պատճառով էլ այն օրերին դեռևս ազդեցություն չուներ: Սակայն Ռաուֆ-բեյը հանձն առավ բանակցել Էնվերի հետ՝ գլխավորապես փախստականների հարցի առնչությամբ: Նա կատարեց իր խոստումը, սակայն իր միջամտությունը որևիցե արդյունք չտվեց: Ռաուֆ-բեյը՝ երեկ Անգորայում Մինիստրների Խորհրդի նախագահ, արդեն իշխանության մեջ որևիցե համակրանք դեպի հայերը չցուցաբերեց: Նրա օրոք եղան Զմյուռնիայի դեպքերը, իսկ Կոս-

տանդնուպոլսում հայեր այսօր էլ ապրում են վախի առկայությամբ: Հավանաբար, իշխանական բուրգում գտնվելը,-ինչպես դա միշտ է լինում,-ամենին չի նշանակում այն բոլոր տրամադրությունների իրականացում, որոնք անձի մոտ նկատվել են նրա ընդդիմադիր եղած ժամանակ: Դա նկատվում է ն՛ Անգորայում, ն՛ Լոնդոնում, ն Փարիզում, մարդկային հոգեբանությունն, ի վերջո, ամենուրեք նույնն է: Ես լսել եմ մեր կովկասյան մահմեդականներից, որ Ռաուֆ-բեյը խոստացել է “զբաղվել Կովկասով” Լոզանի պայմանագիրը ստորագրելուց հետո: Այդ պահը եկել է, բայց թե ի՞նչ է նշանակում “զբաղվել Կովկասով” –դեռևս մութ է: Համենայն դեպս, մինչ այսօր, դեռևս ոչ մի լավ բան չի կանխագուշակել:

Մենք այցի գնացինք նաև գեներալ Վեհիբ-փաշայի մոտ: Նա Մուլթանի գեներալ-համհարզն էր և համարում էր, որ բացի “մանր” թյուրիմացություններից, ինչպիսիք են օրինակ փախստականների վերաբարդարձի հետ կապված հարցերը, այլևս մեր մեջ որևիցե վիճելի հարցեր չկան: Հատկանշական էր,- թեև անկե՞ղծ էր այդ ամենը, թե՞ ոչ, մնում է հարցական,- որ “հայ-թուրքական բարեկամությունը” անհրաժեշտ է նաև Թուրքիային: Ես հակված եմ ենթադրել, որ այդ ամենը, համենայն դեպս, ասվում էր անկեղծորեն, քանզի նրանք բոլորն էլ համոզված էին, որ գալիք համաժողովում “հայկական հարցը” իրենց համար լինելու է դժվարիններից մեկը. հայերի կոտորածների ուրվականը դեռևս իրենց բոլորի աչքի առաջ էր: Չոհերն ու նրանց հեղված արյունը դեռևս չէին հայտնվել մոսուլյան նավթի շերտի տակ և դեռևս ծածկված չէին փոքրասիական կոնցեսիաներից սպասվող եկամուտներով: Այժմ, Լոզանից հետո, թուրքերը շատ բան են հասկացել, - և այդ նույն թուրքական քաղաքական գործիչները հանդիմանանքով այսօր ասում են մեզ, որ մենք բաց ենք թողել պատեհ առիթը անմիջականորեն իրենց հետ համաձայնության գալու համար: Մեզ հետ ընդհանուր լեզու գտնելու այդ ցանկություն-զգացողությունը լուսարձակում էր նաև “Վակիտ” թերթի խմբագիր Էմին-բեյի հետ մեր հանդիպումների ժամանակ:

Էմին-բեյը ինքը առաջինը այցի եկավ մեզ: Դա մի համակրելի երիտասարդ էր, ով հետագայում հայտնվել էր Մալթայում, սակայն այսօր վերադարձել է Կոստանդնուպոլիս և շարունակում է զբաղվել հրապա-

րակախոսությամբ: Նա փնտրում էր հայ-թուրքական մերձեցման նոր ուղիներ: Նա իր թերթի էջերում բարեխղճորեն շարադրել էր մեր բոլոր ցանկությունները և գրում էր, որ պետք է ուղիներ գտնել մեզ բավարարելու համար՝ ”առանց թուրքական շահերը վնասելու”: Մամուլի մյուս օրգաններն, ինչպես, օրինակ Յուսուֆ-Վաղիի հրատարակող “Թեսֆիր-Էվքիարը”, Աղշամը՝ կտրականապես մեր դեմ էին: “Թեսֆիր- Էվքիարը” լկտի ձևով մի հարցազրույց էր հնարել ինձ հետ, վերագրելով ինձ միտք, իբր “հայերն իրենք են կազմակերպել հայկական կոտորածը, ինչը առաջ բերեց մահմեդականների զայրույթը”: Ես ստիպված եղա հերքում գրել: Թերթը տպագրեց այն:

Որպեսզի ավարտեմ այն անձանց շրջանակը, ովքեր համակրում էին մեզ, նշեմ նաև Ահմեդ Ռիզային: Նա ժամանակին երիտթուրքերի շրջանում հայտնի հեղափոխական էր, հետո եղել էր սենատոր, Մենասի նախագահ: Իր տեսքով նա ամենաներկայանալի և ամենահամակրելի թուրքն էր, ում մենք տեսել ենք այդ ժամանակ Կոստանդնուպոլսում. բարձրահասակ, սպիտակած մազերով, խելացի աչքերով, դեմքի տխուր և ազնվական արտահայտությամբ,- Թալեաթի անկման առաջին իսկ օրերին նա Մենաստում հրապարակայնորեն հայտարարեց հետևյալ թվերը. “800.000 սպանված հայեր” և 500.000 տանջամահ արած և կախաղան բարձրացրած արարներ: Մեզ հետ զրուցելիս նա դառնորեն բողոքում էր, որ երիտթուրքերը այնպես չօգտագործեցին ազատությունը, հանուն ինչի այդքան պայքար ընթացավ: Նա ողբում էր “միասնության և ազատության” իդեալների կործանման համար և ասում էր, թե քանի դեռ Թալեաթն ու Էնվերը իշխանության բարձունքին են, մեր բոլոր ճիգերն անօգուտ են: Ահա, ըստ էության, թուրքական այն բոլոր հասարակական-քաղաքական գործիչները, ովքեր այս կամ այն նկատառումներից ելնելով ցանկանում էին “երկու հարևան պետությունների՝ հայ – թուրքական համակեցության” հիմքերը դնել : Դրանցից այն կողմ արդեն խուլ պատ էր:

Այդ պատի այն կողմից մեզ ոչ մի լուր չէր հասնում. այնտեղ բույն էին դրել պատերազմում Թուրքիայի հնարավոր պարտության վախերը և ատամներ էին սրում մեր դեմ՝ դեմքին հաճելի ժպիտով և աչքերի քաղցրածոր արտահայտությամբ: Առավել բնութագրական էր այդ տեսակետից

նստիկանության նախկին տնօրեն Ազին-բեյը: Մի անգամ ես ու Ահարոնյանը նստած էինք Թալեաթ-փաշայի ընդունարանում և սպասում էինք, թե երբ է նա ազատվելու՝ նրա մոտ էր ավատրիական դեսպանը: Որպեսզի մենք չձանձրանանք, մեզ սուրճ մատուցեցին, իսկ Ազին-բեյը մեզ զբաղեցնում էր: Նա իր հիացմունքն էր արտահայտում Ահարոնյանին՝ հատկապես թուրքահայերին վերաբերող վերջինիս ստեղծագործությունների կապակցությամբ ու բացականչում էր. «Օ, օ, դա չափազանց պոետիկ է...»:

Ճիշտ է, մեզ կարելի է հանդիմանել, թե ինչու էինք ծեծում փակ դռները, ինչու էինք ժամերով խոսում հայերի կարիքների մասին այն անձանց հետ, ովքեր հենց իրենք են կազմակերպել և իրականացրել հայերի կոտորածը: Բայց մենք անհրաժեշտ էինք համարում, - և այսօր, հատկապես, շատերն են դա անհրաժեշտ համարում, - որ պետք էր թուրքական կյանքում գտնել հոսանքներ, որոնք կցանկանային մերձեցում հայերիս հետ: **Ի վերջո, քաղաքական գործիչները չեն կարող ղեկավարվել իրենց գործի զուտ բարոյական մասով՝ անհրաժեշտ է ասպարեզ հանել նաև մյուսների շահերը:**

Մենք՝ հայերս, այժմ պետք է հասկանանք, որ մենք դա չենք արել, իսկ եթե արել ենք՝ արել ենք չափազանց քիչ: Մենք միշտ խոսել ենք մեր գոհերի մասին, բայց երբևիցե չենք խոսել մեր երկրի բնական հարստությունների մասին: Դա մեր դիվանագիտական քաղաքական աշխատանքի և արտասահմանյան քարոզչության թույլ կողմն էր: Իսկ թուրքերն այդ կողմը շատ լավ հասկացել էին և հրաշալի օգտագործեցին՝ հատկապես Լոզանի համաժողովի շրջանում (*ընդգծումը մերն է-Վ.Հ.*):

Կիրառելով այդ դիտողությունը այն ժամանակաշրջանի համար, երբ մենք Կոստանդնուպոլսում՝ թուրքական շրջաններում քարոզչություն էինք վարում, մենք, իրոք, շատ էինք խոսում մեր բաղձանքների հումանիտար կողմի մասին և գիտակցաբար լռում էինք այն ամենի մասին, ինչը, իրոք, հետաքրքրում էր թուրքերին, քանի որ դա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման չափազանց սայթաքուն ճանապարհ էր, որն ըստ էության, ուղղված էր ընդդեմ Ռուսաստանի շահերի: Մեր հարևանները՝ վրացիներն ու ադրբեջանցիները, մեզ միշտ զգուշաց-

րել են, որ թուրքերը մեզ համարում են տարածաշրջանում ռուսական ազդեցության ջատագովներ: Այդ թեման միշտ էլ ցավոտ է եղել և միշտ է այդպիսին լինելու, նկատի ունենալով մեր աշխարհագրական դիրքը: Ցավոտ էր նա նաև Կոստանդնուպոլսում եղած մեր ամիսներին:

Կատարելով այցելություններ թուրք մինիստրներին և քաղաքական գործիչներին, մենք անցանք Կենտրոնական Տերությունների՝ Գերմանիայի, Ավստրիայի և Բուլղարիայի ներկայացուցիչների այցելությանը: Դրանց մեջ ամենակենտրոնական ու կարևոր կերպարն, անշուշտ, Գերմանիայի դեսպան կոմս Բերնսդորֆն էր՝ Գերմանիայի նախկին դեսպանորդը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ներկայիս գերմանական առավել ակննավոր քաղաքական գործիչներից մեկը: Մենք շատ անգամ եղանք կոմս Բերնսդորֆի մոտ, կարծում եմ՝ 20-ից ոչ պակաս: Նա բնակվում էր մի հրաշալի առանձնատանը՝ Բոսֆորի ափին, որ իջնում էիր մոնումենտալ աստիճանաշարով՝ դեպի ամբողջ քաղաքը բացվող գեղեցիկ տեսարանով: Հանուն արդարության պետք է շեշտել, որ Կոստանդնուպոլսում անցկացրած մեր ամբողջ ժամանակահատվածում Գերմանիայի դեսպանատանը մենք արժանացել ենք մեծ ուշադրության և գործնական օգնության: Մեր տրամադրության տակ էր ուղիղ հեռակապը Կոստանդնուպոլսի ու Բեռլինի միջև և ես մի քանի անգամ խոսել եմ Համո Օհանջանյանի հետ, գերմանական սուրհանդակները մեր փոստն էին տեղափոխում Բեռլին: Դեսպանության քարտուղար գեներալ Dikloff-ը զօր ու գիշեր մեր հեռագրերն ուղարկելու իր անփոփոխ պատրաստակամությամբ մշտապես առաջ էր բերում մեր պատվիրակության քարտուղարի հիացմունքը:

Իր կողմից կոմս Բերնսդորֆը, իրեն բնորոշ քաղաքավարությամբ լսելով մեզ և անմիջապես Բեռլին հաղորդելով մեր հեռագրերը, միշտ հավաստում էր նրանց բովանդակության միանգամայն արդարացի լինելը: Այդ ամենը հաստատում են հեռագրերը, որոնք հրապարակված են իմ կողմից արդեն նշված “Deutschland und armenien” աշխատությունում: Բացի հեռագրային հաղորդումներից, ինքն անձամբ քանիցս այցելել էր Թալեաթին, պաշտպանելով մեր պահանջները: Իսկ Գերմանիայի կառավարությանն ուղղված նրա դիմումների արդյունքը լինում էր Էնվեր-փաշա-

յին ուղղված գեներալիսիմուս Հինդենբուրգի դիմումները: Սակայն Էնվերին ու Թալեաթին ուղղված բոլոր դիմումները մնում էին անպտուղ:

Պետք չէ մոռանալ, որ այդ ժամանակաշրջանում թուրքերն արդեն սկսել էին անտեսել գերմանական խնամակալությունը և նույնիսկ ձգտում էին մասնակիորեն ազատվել դրանից: Նրանք, ի դեմս Գերմանիայի, մասնակիորեն այլևս չէին տեսնում այն հզոր ուժը, որը նախկինում Թուրքիային պահում էր իր լիակատար հպատակության ներքո: Անձամբ մենք այդ ամենը պարզորոշ տեսնում ու զգում էինք: Ես այստեղ կներկայացնեմ մի քանի առավել բնորոշ հեռագրեր այն ամբողջական փաթեթից, որն այժմ գտնվում է իմ սեղանին. նրանց բովանդակությունը նույնն է, ինչ որ մեր դիմումներինը:

Մինչ դրանց բովանդակությունը ներկայացնելը ես պետք է նշեմ, որ հայերի դրությունը Կովկասում այդ ժամանակահատվածում՝ 1918թ. հունիս-դեկտեմբեր ամիսներին, սարսափելի էր: Առավել աղետալի էր Ախալքալաքի գավառի բնակչության (մոտ 80.000 մարդ) վիճակը, որը ստիպված՝ թողած տուն ու տեղ, բերք, ապաստանել էր Բաքուրիանիում՝ 6000 ֆուտ բարձրության վրա՝ անտառում, բաց երկնքի, ձյան ու անձրևի տակ: Նրանց մոտ տարածվում էին սովը, տիֆը, խոլերան: Երեք ամիսների ընթացքում սովից ու հիվանդություններից մահացավ 25.000 մարդ:

Բաքուրիանիի այդ ողբերգական հարցը զբաղեցնում էր հայերի միտքը անդադար և շատ սուր ու այրող կերպով. դրա մասին գրում էին թերթերը, ամենուր հեռագրեր էին հղվում: Բաքուրիանի էին գնում տարբեր պատվիրակություններ: Թուրքերը գրաված էին պահում Ախալքալաքի գավառը և թույլ չէին տալիս, որ գյուղացիները վերադառնան իրենց տները: Ախալքալաքի-Բաքուրիանիի հարցը մշտապես մեր դիմումների առարկան էր: Հունիսի 14-ին և 19-ին գերմանական ներկայացուցիչներ, լեյտենանտ Վալկերը և կոմս Շուլենբերգը հեռագրել էին Կոստանդնուպոլիս թուրքերի վայրագությունների մասին: Հուլիսի 2-ին Համո Օհանջանյանը նոտա էր հղել հայ բնակչության ողբալի վիճակի, նրանց հնձող հիվանդությունների մասին: Վրաստանում գերմանական առաքելության ղեկավար, գեներալ ֆոն Կրեսսը հունիսի 10-ին հաղորդում էր իր կառա-

վարությանը, որ եպիսկոպոս Մեսրոպը Էրիվանից ձիով հասել է Թիֆլիս, որպեսզի գեներալ Կրեսսին ներկայացնի հայ բնակչության ահավոր վիճակը և ով աղաչում էր օգնություն ցուցաբերել իր հայրենակիցներին: Ֆոն Կրեսսն ամբողջովին հաստատում էր եպիսկոպոսի հայտնած տեղեկությունները: Հուլիսի 11-ին գեներալ Կրեսսը իր կառավարությանը կրկին վառ գույներով նկարագրում է իրավիճակը: Իր կողմից գեներալ Կրեսսը հավելում է. մենք պետք է միջոցներ ձեռք առնենք: Գերմանիան, որպես քրիստոնեական երկիր, պետք է օգնության գա հայերին: Հակառակ դեպքում կասեն, որ մենք չենք ցանկանում օգնել, կամ էլ՝ մենք անգոր ենք թուրքական բռնությունների դեմ: Թե մեկը, թե մյուսը, մեր համար ընդունելի չէ: Հեռագրի վերջում նա խնդրում էր հայերին հնարավորություն տալ հավաքել իրենց բերքը: Այդ դիմումների ընթացքին ավելացավ նաև Մյունխենում Հռոմի պապի նվիրակի դիմումը Գերմանիայի կառավարությանը, որտեղ Պապի անունից խնդրանք էր ներկայացվում օգնություն ուղարկել “ Թուրքիայի և Պարսկաստանի ասորա-քաղդեական բնակչությանը”: Մենք մեր կողմից նույնի համար խնդրանքով դիմել էինք Կոստանդնուպոլսում Պապի ներկայացուցիչ կարդինալ Դոդզիին:

Հուլիսի 15-ին Արտ. Զուրաբովը և Համո Օհանջանյանը գաղթականների մասին մեր զեկույցները ներկայացրել էին Գերմանիայի Կառավարությանը: Նույնը հուլիսի 16-ին հաղորդում էր գեներալ Կրեսսը:

Որպեսզի ավելի պարզ դառնա թուրքական հոգեբանությունը ես այստեղ կներկայացնեմ 1918թ. հունիսի 4-ին կնքած Բաթումի պայմանագրի կապակցությամբ հրապարակած թուրքական գեներալ Վեհիբ-փաշայի Ֆիրմանի՝ հանդիսավոր հրամանի թարգմանությունը: Ֆիրմանում ասված է հետևյալը. “Ելիզավետպոլ և Էրիվան կայարանների միջև երկաթուղային հաղորդակցման վերականգման նպատակով գործարկվելու են հատուկ գնացքներ, որոնցում գտնվելու են թուրք սպաներ: Այդ սպաներն իրենց մոտ ունենալու են Վեհիբ-փաշայի Ֆիրմանը, որն ավետում է թուրք-թաթարական բնակչությանը, որ այսուհետ խաղաղություն է և չեղարկվում է նրանց թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ինչպես նաև այսուհետ արգելվում է սպանել հայերին”: Հատկապես ողբերգական է վերջին արտահայտությունը, որը բացահայտում ու

բացատրում է շատ-շատ բան. Այսինքն, թույլատրված է եղել սպանել քո դեմը հայտնված ցանկացած հայի:

Այդ ամբողջ նամակագրությունը առաջ բերեց երեք լուրջ հետևանքներ. առաջինը՝ հարց բաձրացվեց, նույն հիմքերով, ինչպես որ գերմանացիները զբաղեցրել էին Վրաստանը, ավստրիական զորք ուղարկել Հայաստանի տարածքը զբաղեցնելու համար: Երկրորդը՝ Գերմանիայի գլխավոր հրամանատարությունը լուրջ զգուշացում է ներկայացրել թուրքական բանակի հրամանատար Էնվեր-փաշային և երրորդը՝ Հայաստանի և հայերի քաղաքական վիճակի նկատմամբ Գերմանիայի վերաբերմունքը կոմս Բերնսդորֆը առաջ մղեց որպես Գերմանիայի արտաքին գործերի մինիստրությունում քննարկման հարց:

Այդ հետևանքներից ամեն մեկն ունի իր համապատասխան գրակաևությունը և պատմական նշանակությունը: Քիչ հետո մենք կանդրադառնանք այդ հարցերին, իսկ այս պահին նշենք, որ կոմս Բերնսդորֆին դիմելուն զուգահեռ, մենք դիմել ենք նաև Ավստրիայի դեսպանին և Բուլղարիայի դեսպանորդին: Վերջինս հաճախակի էր գալիս մեզ մոտ հյուրանոց: Նրա հետ երբեմն գալիս էր նաև բուլղարական զեներալ Ստանչևը: Կենտրոնական տերությունների այդ ներկայացուցիչներին մեր դիմելու բովանդակությունը եղել է հայ փախստականների վիճակը և հայկական տարածքների նկատմամբ իրենց կողմից հովանավորության հնարավորությունը: Ավստրիական կառավարությունը սկզբից նախատեսում էր զորք ուղարկել Հայաստան, Արևմտյան Եվրոպայի ռազմաճակատներում անհաջողություններից հետո այդ մտքից հրաժարվեց:

Բուլղարացիները, ավստրիացիք ու գերմանացիները իրենց պատվիրակություններն ուղարկեցին Հայաստան: Նրանք եղան տեղերում, մանրագնին ուսումնասիրեցին իրադրությունը և տեղեկացրին իրենց կառավարություններին իրենց տեսածի մասին: Բուլղարացիներն ուղարկել էին զեներալ Բրասնին, ավստրիացիք՝ կոմս Ֆալքենշտայնին և գերմանացիները՝ զեներալ Կրեսսին, ով այժմ զեներալ ֆոն Լոսսովի հետ միասին դերակատարում ունի բավարական իրադարձություններում: Կոմս Ֆալքենշտայնը շատ հուզիչ նկարագրել էր Էջմիածնում և Բաքուրիանիում փախստականների վիճակի մռայլ պատկերները: Սակայն այդ

համակրանքի դրսևորումը որևիցե դրական արդյունք չտվեց: Մեր միջնորդություններին ընթացք տալու համար Համո Օհանջանյանը նույնիսկ գնաց Վիեննա: Իսկ Բեռլինում Օհանջանյանը տեսակցել էր Թալեաթին, ով իրեն խոստացել էր նոյեմբերի 1-ին Կոստանդնուպոլսում “հանդիսավոր կերպով” հայտարարել, որ թուրքերը հետ են գնում դեպի 1914թ. սահմանները և Ռուսահայաստանի ամբողջ տարածքը թողնում են հայերին:

Մի պահ մենք տեղեկացանք, որ Գերմանիան վրացիներին խոստացել է և պարտավորվել, որ Ռուսաստանից պահանջելու է ճանաչել Վրաստանի անկախությունը: Նշենք, որ Գերմանիան Վրաստանից ստացել էր Փոթու նավահանգստի, անտառների և մանգանի կոնցեսսիաները: Հայաստանի անկախության ճանաչման վերաբերյալ նման հարց առաջ քաշեց Օհանջանյանը, սակայն՝ ապարդյուն:

Տեսնելով, որ մեր բանակցությունները թուրքական կառավարության հետ ոչ մի արդյունք չեն տալիս, որ կոմս Բերնսդորֆի համառ հեռագրերը չեն ազդում Կովկասում ծավալվող ռազմական գործողությունների ընթացքի վրա, մենք մեր ուշադրությունն ուղղեցինք դեպի երիտթուրքական կուսակցական գործիչները՝ դեպի երիտթուրքական կոմիտե: Հարկ է հիշել, որ այդ նույն օրերին (սեպտեմբերի 15, 16 և 17-ին) թուրքերը գրավեցին Բաքուն, ինչն ուղեկցվեց հայերի սոսկալի կոտորածով, որի ընթացքում սպանվեց մոտ 30.000 հայ: Մեզ հասան իրավիճակի վերաբերյալ սարսափելի հեռագրեր և մեզ աղերսում էին Կոստանդնուպոլսում ինչ-որ քայլեր ձեռնարկել...

...Իսկ մինչ այդ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը տեղափոխվեց Էրիվան, օգոստոսի 4-ին Էրիվանում բացվեց Խորհրդարանը, սեպտեմբերի 9-ին Մեհմեդ-փաշան թուրքական դեսպանորդի կարգավիճակով ժամանեց Էրիվան... Մի խոսքով, թվում էր, թե հայթուրքական հարաբերությունները պետք է որ բարելավվեն և ընդունեն նորմալ բնույթ: Մինչդեռ Բաքվի կոտորածը և Ղարաբաղը ավերելու սպառնալիքը խիստ հուզեց Կովկասի հայ բնակչությանը և մենք որոշեցինք հարցը բավականին խստորեն ներկայացնել Էնվերին, Թալեաթին և երիտթուրքերի կոմիտեին:

Երիտթուրքական “Կոմիտեի” հատուկ շենքում մեզ դիմավորեց Ռի-
զա-բեյը՝ ցածրահասակ մի գնդապետ, ով մեզ ուղեկցեց նիստերի դահլիճ,
որտեղ մեզ սպասում էին դր. Բեհաեդդին Շաքիրը և դր. Նազիմը: Ես և Ա-
հարոնյանը նրանց հետ զրուցեցինք երկու ժամ: Զրույցը չափազանց
ծանր էր: Մենք շարադրեցինք մեր ամբողջ զայրույթը Բաքվում հայերին
կոտորելու և փախստականների հանդեպ բռնություններ կիրառելու կա-
պակցությամբ: Մենք իրենց խնդրում էինք ազդել թուրքական կառավա-
րության վրա: Մեր զրուցակիցներն ամբողջ մեղքը բարդեցին ասկյարնե-
րի հոգնածության վրա և պնդում էին, որ Բաքվում սպանվել է ոչ թե
30.000, այլ ընդամենը 300 հայ, այն էլ՝ փողոցային ընդհարումների արդ-
յունքում: Միաժամանակ նրանք մատնացույց էին անում, որ հայերը
միշտ էլ դեմ են եղել թուրքերին և ծառայություններ են մատուցել Թուր-
քիայի թշնամիներին: Նրանք հայտարարում էին, որ հայերի համար
միակ ճանապարհը՝ դաշինքն է թուրքերի հետ և նրանց ոչ երկիմաստ
համագործակցությունը. “Դուք ամենուր մեր դեմ եք, դուք ամբողջ Եվրո-
պան ու Ամերիկյան տրամադրել եք մեր դեմ, դուք անխնա տապալում եք
մեր հեղինակությունը, մենք ձեզ ոչնչացնում ենք ֆիզիկապես, իսկ դուք
մեզ՝ բարոյապես, ինչն ավելի ծանր է մեր համար”:

Այդ թեմայի շուրջ նրանք խոսում էին չափազանց ջերմեռանդ և
պարզ երևում էր, որ մեր ու իրենց միջև մի խորը անդունդ է: Նրանք պա-
հանջում էին, որ մեր կողմից ամեն ինչը պարզունակ մոռացության
տրվի, որ մեր կողմից իրենց հանդեպ դրսևորվեն համագործակցություն
և բարոյական աջակցություն ու դադարեցվի բոլոր տեսակի քարոզչույթ-
յունը ի նպաստ հայկական հարցի: Երբ մենք խոսում էինք մեր պահանջ-
ներից, սահմաններից, նրանց խոսքերը դառնում էին մշուշոտ ու լրոզ-
ված: Երկու ժամ տևած զրույցն ավարտվեց նրանով, որ Կոմիտեի ան-
դամները խոստացան Թալեաթի հետ քննարկել մեր դիմումների պատ-
ճառները: Երբ մենք դուրս էինք գալիս այն սենյակից, որտեղ կայացել էր
մեր զրույցը, մենք հանդիպեցինք Թալեաթին, ով նստած էր հարևան սեն-
յակում և սպասում էր մեր զրույցի ավարտին: Պարզվեց, մեծ վեզիրը ըն-
դունարանում սպասում էր Կոմիտեի անդամների հետ տեսակցության:

Հաջորդ օրը մենք եղանք Թալեաթի մոտ. Բաքվի սարսափների նույն ժխտումը, փողոցային ընդհարումներում նույն երեք հարյուր սպանված հայերը: Ակնհայտ էր, որ կա նախնական պայմանավորվածություն՝ պարզապես ժխտել փաստերը: Երբ խոսակցությունը թեքվեց Ղարաբաղի վրա թուրքերի հարձակվելուց մեր երկյուղելուն, Թալեատը մեր ներկայությամբ վերցրեց հեռախոսափողը և սկսեց Էնվերին բացատրել, որ հայերը խնդրում են հրաման տալ չհարձակվել Ղարաբաղի վրա”: Հավանաբար, Էնվերը սկսեց բացատրել նման հարձակման հնարավորությունը, այդժամ, Թալեաթը, ժպտալով ասեց. “Էնվեր, մի մոռացիր, որ բանագնացների հետ չես խոսում, - այստեղ նստած են Ահարոնյանն ու Խատիսյանը, որոնք ամեն ինչից հրաշալի տեղյակ են”: Խոսակցության վերջում Թալեաթը մեզ ասաց, որ ինքը հավաստում է, որ Ղարաբաղի ուղղությամբ ոչ մի հարձակում չի իրականացվի:

Թալեաթից հետո մենք, համենայն դեպս, ուղևորվեցինք դեպի Էնվերի նստավայրը: Էնվերն իր հերթին երաշխիքներ տվեց, որ գեներալներն իրենից հրաման են ստացել չգրավել Ղարաբաղը: Սակայն հաջորդ պահին, երբ խոսվեց Բաքվի կոտորածների մասին, նա արեց այնպիսի մի հայտարարություն, որը դանակի նման խրվել է իմ հիշողության մեջ. “Դուք ասում եք կոտորած (գրույցն ընթանում էր ֆրանսերեն), բայց չէ՞ որ պատերազմի ժամանակ էլ են սպանում և մեծ արնահեղության իրականացման համար ժողովուրդները գորավարներին արձաններ են կանգնեցնում: Բայց չէ՞ որ իմաստն ու էությունը նույնն է՝ մարդ են սպանում: Պատերազմներում սպանում են հրացաններով ու թնդանոթներով, իսկ այս դեպքում՝ դաշույններով ու սվիններով: Թուրքիայում հայերի կողմից մեզ սպառնում էր մահացու վտանգ և նրանց սպանությունը հավասարազոր էր պատերազմում թշնամու ոչնչացմանը”: Նման հոգեբանության և նման պատկերացումների պարագայում մեր բոլոր դիմումները որևիցե արդյունք չէին տալիս: Ինչ վերաբերում է երրորդ թեմային՝ Ախալքալաքի գավառում փախստականների վերադարձը իրենց նախկին բնակավայրերը, ապա Էնվերը այդ հարցն էլ ռազմական տեսակետից համարեց անհնար:

Թուրք գործիչները շատ պարտաճանաչ մեզ էին վերադարձնում քաղաքավարության արդեն իրենց այցելությունները. Մեզ այցելեցին „Kac-

ուի՞” թերթից հրապարակախոս Աղանը, ով հիմա Անգորայում քարոզչության ղեկավարն է, դր. Նազիմը, Ռաուֆ-բեյը, հատկապես՝ Համիդ-բեյը, Յունուս-նադին: Հոկտեմբերի ընթացքում, երբ արևմտյան ռազմաճակատում գերմանացիների հաջողությունները սկսեցին թուլանալ, նրանց այցելությունները դարձան ավելի հաճախակի, իսկ խոսակցության երանգներն էլ՝ ավելի զուսպ: Զգացվում էր, որ թուրքերի համար գալիս են ռազմաճակատում անհաջողությունների ժամանակները:

Այդ տրամադրություններով մեր մեհմանդար Մուխթար-բեյը հայտարարեց, որ մեզ հրավիրում է մասնակցել սեյամլիկին¹⁰¹, ինչից հետո մեզ կներկայացնեն սուլթանին: Երեք պատվիրակությունները՝ մենք, վրացականը և ադրբեջանականը գնացինք մզկիթ: Մզկիթում աղոթելուց հետո Էնվեր-փաշան մեզ ներկայացրեց սուլթանին: Անկախ Հայաստանի Հանրապետության անունից Ահարոնյանը ճառ արտասանեց և հույս հայտնեց, որ Հայաստանն ու Թուրքիան կդառնան բարեկամ պետություններ: Սուլթանը պատասխանեց, որ ինքը շատ երջանիկ է, որ հայերի և թուրքերի միջև դարավոր բարեկամական հարաբերությունները այժմ կվերաճեն արդեն քաղաքական բարեկամության Հայաստանի և Թուրքիայի միջև, ու հույս հայտնեց, որ վերադառնալով Հայաստան, պատվիրակության անդամները սուլթանի և ամբողջ Թուրքիայի անունից հայ ժողովրդին կփոխանցեն բարգավաճման մաղթանքները:

Դրանից հետո եղանք գահաժառանգի՝ այսօրվա Խալիֆի մոտ: Նա իր պալատում էր՝ մտավորական անձնավորություն, ջութակահար և նկարիչ ու թողեց միանգամայն հաճելի տպավորություն: Ասում էր, որ ինքը երբևիցե չի համակրել հայերին հալածելու քաղաքականությանը և ցանկանում է, որպեսզի Հայաստանը լինի երջանիկ երկիր: Նրա մոտ մենք հանդիպեցինք Լոնդոնում Թուրքիայի նախկին դեսպան Թահրիկ-փաշային, ով թախիծով կանխատեսում էր պատերազմի աղետալի ավարտը Թուրքիայի համար: Նա ասում էր. “Եթե Թուրքիան վեճի է բռնվում Անգլիայի հետ, Թուրքիային դժբախտություններ են սպասում”:

¹⁰¹ Հանդիսավոր երթով սուլթանի այցելությունը մզկիթ:

Մի քանի օր անց Էնվեր-փաշան մեզ իր մոտ ճաշի հրավիրեց: Արևելյան ամբողջ շքեղությունը ներկայացավ մեր աչքին. ոսկի, մետաքս, զառնավուխտ, չորս կողմը՝ մեղմ, հանդարտ երանգներ: Սեղանի շուրջ նստած էին գեներալ ֆոն Սեկթը՝ գերմանական բանակի այսօրվա գլխավոր հրամանատարը, Թալեաթը, Իզգետ-փաշան՝ հետագայում մեծ վեզիրը և մեր երեք պատվիրակությունները: Զրույցի բովանդակությունն առնչվում էր Կովկասյան երեք հանրապետությունների ապագային: Էնվերն, ի միջի այլոց, ասաց. «Լավ կլիներ, եթե Հայաստանը իրեն թագավոր հրավիրեր Ավստրիայի արքայազնին, Վրաստանը՝ գերմանական արքայազնին, իսկ Ադրբեջանը՝ թուրքական արքայազնին: Այդ դեպքում այդ երեք նորաստեղծ թագավորություններն էլ կկարողանային հաստատորեն ամրապնդվել այդ երեք թագավորական հարստությունների օժանդակման շնորհիվ»:

Ճաշից հետո, որի սեղանապետը մի անշարժ կանգնած թզուկ էր, հյուրերը սկսեցին դիտել մի հսկա կտավ Տրիպոլիտանիայի ռազմական պատմությունից¹⁰² և Էնվերն ասաց, թե իր զինվորականի ուղու վերելքը սկսվել է մարտի դաշտում, այնտեղ էլ ավարտվելու է. «Մարտից և պայքարից դուրս ես կյանքը չեմ հասկանում»: Նրա բառերից պարզորոշ հասկացվում էր, որ մեր կողմից արվող զիջումների շնորհիվ խաղաղ գոյակցության ծրագրերը ոչ մի արդյունք չէին տալու:

Անցնում էին շաբաթներ: Ֆրանս-գերմանական ռազմաճակատում տեղի էր ունենում բացահայտ բեկում: Եվ այդ բեկումը մենք ավելի շուտ զգում էինք, քան թե տեսնում: Մամուլը Կոստանդնուպոլսում ենթարկվում էր խիստ գրաքննության, բայց բոլորը խոսում էին Թուրքիայի համար դեպքերի ահեղ ընթացքի մասին: Վրացական պատվիրակությունը Վրաստանի արտաքին գործերի մինիստր Գեգեչկորուն ուղարկեց Գեր-

¹⁰²Թուրք-իտալական պատերազմ «Տրիպոլիտանիական պատերազմ», նաև Իտալիայում հայտնի որպես «Լիբիական պատերազմ»՝ զինված հակամարտություն Իտալիայի թագավորության և Օսմանյան կայսրության միջև 1911 թվականի սեպտեմբերի 29-ից մինչև 1912 թվականի հոկտեմբերի 18-ը: Պատերազմի արդյունքում Իտալիային անցավ օսմանյան Տրիպոլիտանիա վիլայեթը իր ենթակառուցվածքներով: Այս տարածքները հետագայում կոչվեցին Իտալական Լիբիա:

մանիա, ադրբեջանական պատվիրակությունը մատնված էր անգործության:

Օհանջանյանը Բեռլինից մեզ հայտնում էր, որ գերմանացիները կանխատեսում են ֆրանսիական կողմի հաջողությունների հնարավորությունը: Անգլիական օդաչուները սկսեցին շատ վտանգավոր օդային հարձակումներ գործել Կոստանդնուպոլսի վրա. ռումբերն ընկնում էին ուղիղ փողոցների վրա, զոհերը հաշվվում էին տասնյակներով, պարբերաբար անջատվում էր էլեկտրականությունը և մենք հայտնվում էինք բացարձակ մթության մեջ:

Թալեաթը հոկտեմբերի կեսերին շտապ մեկնեց Բեռլին: Հայերը դարձան ավելի աներկյուղ. եկեղեցում մեզ հայեր էին մոտենում ու զրույցի բռնվում մեր հետ: Հույներն սկսեցին բացահայտ խոսել ֆրանսիացիների հաջողությունների մասին: Տեղեկություններ ստանալու համար մենք գնացինք կոմս Բերնստորֆի մոտ: Նա մեզ ուղղակիորեն ասաց, որ ֆրանսիացիներն ու իրենց դաշնակիցներն արդեն հաղթում են: Նրա մոտ մենք հանդիպեցինք գեներալ ֆոն Լոստովին, որ մոռյլ նստած էր բազկաթոռին: Նա ինձ ասաց. “Մեր ժողովուրդը հոգնել է, մեր թշնամին տիրապետում է երեք տեսակի ուժի. բաց ծովը, սավառնակներ և սնունդ: Մենք այդ ամենը չունենք, ուստիս՝ պարտված ենք”: Ավստրիական ռազմական ներկայացուցիչ լեհ Պոմյանկովսկին դժվարությամբ էր թաքցնում իր ուրախությունը. նրա մեջ լեհը գերազանցում էր ավստրիական գեներալին: Դաշնակիցների հաջողությունները ռազմաճակատում անդրադարձան նաև թուրքական կառավարության վարքագծի վրա. համաժողովի մասին այլևս, առհասարակ, չէր խոսվում, նրա մասին բոլորը մոռացել էին:

Մեզ բերեցին և հանձնեցին ռուսական բանակի 60 գերի հայ զինվոր, ասելով, որ իրենք այսուհետ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, նրանց պետք է ուղարկել Հայաստան: Թալեաթը վերադարձավ Գերմանիայից՝ հետդարձին Բուլղարիայում հազիվ խուսափելով գերի ընկնելուց, քանի որ Բուլղարիան այդ օրերին արդեն լքել էր ճակատը և զինադադար էր կնքել: Թալեաթը մեզ հայտարարեց, որ Թուրքիան պատրաստ է Հայաստանին և Վրաստանին վերադարձնել 1914թ. սահմանները: Արտաքին գործերի մինիստր Նեսիմի-բեյն ինքն անձամբ եկավ

մեր մոտ՝ Hotel Tokatlian և հայտարարեց, որ ամեն ինչ կարգին է և մոտ ժամանակներս թուրքերը կթողնեն Կովկասը...

Դեպքերը զարգանում էին: Օդում զգացվում էր Թուրքիայի պարտության անխուսափելիությունը: Հույները սկսել էին արդեն բարձրաձայն արտահայտել իրենց ուրախությունը: Ֆետերը սկսեցին փոխարինել բոլորազլխարկներով: Կոստանդնուպոլսում սկսեցին խոսել Թալեաթի Մինիստրության անկման մասին: Եթե չեմ սխալվում հոկտեմբերի 20-ին մենք նրա մոտ էինք: Ցերեկը ժամի 4-ն էր: Նա մեզ ընդունեց կանգնած և ասեց հետևյալը. “Մի քանի ժամ հետո ես թողնում եմ իշխանությունը, հրաժարական եմ տալիս: Մենք պարտված ենք: Ես նախանձում եմ Ձեզ: Դուք հաղթողների ճամբարում եք, իսկ մենք՝ պարտված ենք և կորցնում ենք շատ բան: Բայց ձեզ մի բան ասեմ. պետք չէ մոռանալ, որ ապագան ոչ ոք չգիտի: Ես ճակատագրապաշտ եմ: Դուք, որպես դիվանագետներ, երիտասարդ եք, սպասեք մինչև վերջին վայրկյանը: Երբևիցե երեկոյան թղթեր մի ստորագրեք, եթե դրանք գնալու են հաջորդ առավոտյան: Ով գիտի, թե ինչ կկատարվի գիշերվա ընթացքում”: Քանի-քանի անգամ Լոզանում հիշել եմ այդ խոսքերը: Ո՞վ կարող էր այն ժամանակ մտածել, որ պատերազմում ջախջախված Թուրքիան ընդամենը հինգ տարի անց իր պայմաններն է թելադրելու իրեն հաղթած Տերություններին: Երեկոյան Թալեաթի Մինիստրությունն ընկավ: Մեծ վեզիր նշանակվեց Իզզեթ-փաշան:

Հաջորդ օրը մեր հյուրանոցում հայտնվեցին անգլիացի գեներալ Թաուզենտը, ով իր զարմիկի հետ բնակվում էր Հալքի կղզում և Ռամիբեյը: Նրանք ճաշում էին, զբաղեցնելով մեր հարևան սեղանիկը: Ինչպես պարզվեց երեկոյան, նրանք պատրաստվում էին անգլիական ծովակալ Կալդրեսայի հետ զինադադարի ստորագրմանը: Ուշ երեկոյան, ժամը 11-ին մոտ մեզ մոտ եկավ Ռաուֆ-բեյի համհարզը և խնդրեց գնալ նրա մոտ՝ ծովային մինիստրություն: Ջեմալ –փաշան, ում մոտ մենք եղել էինք ծովային մինիստրությունում, Թալեաթի հետ միասին հրաժարական էր տվել և Ռաուֆ-բեյը նշանակվել էր ծովային մինիստր: Դրանից մեկ օր առաջ մենք տեսնվել էինք ֆինանսների մինիստր Ջահիդի հետ, որը մեզ տեղեկացրեց Դաշնակիցների հաղթանակի և առաջիկա կնքվելիք զինա-

դադարի մասին: Ռաուֆ –բեյը իր մինիստրությունում էր: Նա միանգամից մեզ դիմեց հետևյալ ճառով. “Այս գիշեր ես գնում եմ անգլիական ծովակալի մոտ զինադադար կնքելու: Ես Ձեզ առաջարկում եմ գալ ինձ հետ: Թող անգլիացիները տեսնեն, որ մենք հաշտվել ենք: Գալիք համաժողովի համար չափազանց կարևոր կլինի, որ հայերն ու թուրքերը միմյանց միջև վեճեր այլևս չունեն”։ Հիշելով Տրապիզոնում Ռաուֆի հետ ունեցած զրույցներից, որ նա առավել անգիջումներից է, ես հարցրեցի նրան. “Իսկ որո՞նք են լինելու մեր սահմանները”։ Նա պատասխանեց. ”1914թվականինը, Բայց ճշգրտված Ալաշկերտի հովտով”։ Մենք, իհարկե, չէինք կարող համաձայնվել. Եվրոպան հաղթել էր և մեր բոլոր հույները կապված էին այդ հաղթանակի հետ: Մենք չգնացինք: Վերադարձանք շատ հուզված և մինչև առավոտ սպասեցինք զինադադարի տեքստին:

Հաջորդ օրը Ռաուֆ-բեյն ու Համիդ-բեյը եկան մեզ մոտ: Նրանք, ինչպես սառու են “մեռած էին ու թաղած չէին”։ Նրանք մեզ էին բերել զինադադարի տեքստը: Այն մեզ խորապես հիասթափեցրեց: Այդ պահին մենք հասկացանք, որ Հայաստանի ազատությունը հայտնվել է չափազանց ծանր կացության մեջ: Այդ զինադադարը չէր պահանջում դաշնակիցների գործ մտցնել Հայաստան, չէր զինաթափում Թուրքիային և իր մեջ էր պարունակում բոլոր այն դժբախտ հետևանքները, որոնք պայթեցին հետագայում հայերի և հույների գլխին: Զինադադարի անգլիական պայմանների շնորհիվ Թուրքիան փրկված էր: Հենց այդ պատճառով էլ այն ստորագրվել էր այդքան հապշտապ:

Այդ զինադադարից հետո Կոստանդնուպոլսում մեզ շատ քիչ անելիք էր մնում: Մենք պետք է նորանշանակ մեծ վեզիրից՝ Իզզեթ-փաշայից գրություն վերցնեինք Անդրկովկասում թուրքական զորքերի հրամանատար Շուքրի-փաշայի անունով, որի համաձայն թուրքերը պետք է թողնեին կովկասյան տարածքը, մեր հետ վերցնեինք գերությունից ազատված հայ զինվորներին, հավաքեինք մեր իրերը, մեկնեինք Բաթում և մտածեինք արդեն Եվրոպայում կայանալիք համաժողովի համար պատվիրակություն կազմելու մասին: Մենք այդպես էլ արեցինք:

Թալեաթն ու Էնվերը անհետացել էին Կոստանդնուպոլսից: Իզզեթ-փաշան կնքված ծրարի մեջ մեզ հանձնեց Շուքրի-փաշային ուղղված

հրամանը, որպեսզի Կարսն ու Ալեքսանդրապոլը դատարկվեն մինչև դեկտեմբերի 6-ը: Մենք հրաժեշտի այցելություններ կատարեցինք և նոյեմբերի 1-ին “Ռաշդ-փաշա” շոգենավով նշանակված էր մեր մեկնումը Կոստանդնուպոլսից Բաթում: Մեկնելուց առաջ մենք ընծայագրով մի սափոր նվիրեցինք Ավստրիայի ներկայացուցչին՝ մեզ օժանդակելու համար, Մուխթար-բեյին՝ ոսկյա ծխախոտատուփի և նոյեմբերի 1-ին բարձրացանք շոգենավ: Այդ օրը առաջին անգլիական ռազմանավը մտնում էր Դարդանեղ: Եվրոպայան հաղթում էր: Մեր հույսերը թևեր էին առնում:

Հայերից առավել սրտոտները եկել էին նավամատույց մեզ ճանապարհելու: Եկավ մի սպա, որը սուլթանի անունից մեզ բարի ճանապարհ մաղթեց: Մեր գերի զինվորները սկսեցին երգել հայկական օրհներգը՝ “Մեր Հայրենիքիը”, ասկյարները պատվի առան և նոյեմբերի 1-ին, ցերեկը ժամը 12.00-ին մենք Բոսֆորով ուղևորվեցինք դեպի Բաթում: Վերջին պահին շոգենավ բարձրացավ Խալիլ-փաշան՝ Էնվեր փաշայի բարեկամը, ով միջագետքի ռազմաճակատի թուրքական զորքի հրամանատարն էր, ում զեներալ Նազարբեկյանը ջախջախել էր Դիլմանի ճակատամարտում: Այսպիսով, Կոստանդնուպոլսում մեր չորս ու կես ամիս մնալը ավարտվում էր:

Մեզ հետ մեկնեցին նաև աղբբեջանական և վրացական պատվիրակությունները: Հաջորդ օրը մենք հասանք Զանգուլդակ: Այնտեղ մեզ հայտնեցին, որ մենք ածուխ չունենք և 6 օր կանգնած մնացինք Զանգուլդակում: Այնտեղ մենք տեսանք հայերի՝ մոտ 60 մարդ, և միայն նոյեմբերի 8-ին շարունակեցինք ճանապարհը: Մենք կանգ առանք Սամսունի մոտ, Տրապիզոնում ափ իջանք, այցով եղանք վալու մոտ, տեղեկացանք նրանից Տրապիզոնում մնացած փոքրաթիվ հայերի վիճակի մասին: Պարզվեց, որ այնտեղ կա մոտ 200 հայ կին, որոնց թուրքերը տարել են իրենց տները և որոնք հենց թուրքերի տներում էլ բնակվում են: Նոյեմբերի 13-ին մենք հասանք Բաթում:

Բաթումում դեռևս տիրակալ էր թուրքական իշխանությունը: Զանգուլդակից դեպի Բաթում գնալիս մեզ հասավ անգլիական ականակիրը և շչակի ձայներով մեզ հրամայեց կանգնել: Մեր շոգենավը կանգ առավ, չհասկանալով, թե ինչու՞մն է բանը: Ականակիրից մեր շոգենավ բարձրա-

ցան անգլիական նավաստիները , զբաղեցրին ելքերը, իսկ սպաներից մեկը մոտեցավ Խալիլ փաշային և հայտարեց , որ նա ձերբակալվում է և ենթակա է վերադարձվելու Կոստանդնուպոլիս: Խալիլ-փաշան ենթարկվեց պահանջին և լքեց նավը: Ինչպես մենք հետագայում իմացանք, Խալիլ-փաշան թուրքական այն գեներալների և քաղաքական գործիչների ցուցակում էր, որոնց պետք է դատեին: Սակայն հետագայում պարզ դարձավ, որ այդ ամենը դատարկ կատակերգություն էր. նրանց տարան Մալթա կղզի, որտեղից հետագայում ազատ արձակեցին: Դրանից հետո նրանք կազմակերպեցին հայտնի շարժումը¹⁰³ և Լոզանում նսեմացրին նրանց, ովքեր ցանկանում էին իրենց դատել:

Վերադառնալով Բաթում, չզգացինք, որ թուրքերն իրենց պարտված են համարում. Կոստանդնուպոլսի մթնոլորտը այստեղ չէր հասել: Բաթումի կայարանում թուրքերը ուզեցին բացել մեր ուղեբեռը և միայն մեր սպառնալիքները հեռագրել Կոստանդնուպոլիս, սթափեցրեց նրանց: Մենք զիջերեցինք Բաթումում և մյուս օրը մեկնեցինք Թիֆլիս և հասանք նոյեմբերի 14-ին երեկոյան ժամը 7-ին: Թիֆլիսում մնացի ընդամենը 6 օր: Այդ օրերի ընթացքում Ահարոնյանը, ես և Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանը հանդիպումներ ունեցանք վրացական կառավարությունում: Վրացիները մեզ համոզում էին իրենց զիջել Ախալքալաքի և Բորչալուի գավառները՝ նկատի ունենալով, որ մեր դաշնակիցների հաղթանակի շնորհիվ մեզ համար ապահովված են “վեց վիլայեթները”: Մենք մեզ շատ գուսպ էինք պահում. մեր կառավարությունն արդեն Էրիվանում էր և մենք անպայման պետք է տեսնվեինք նրա հետ: Նոյեմբերի 15-ին նստած էինք Ահարոնյանի մոտ, երբ Էրիվանից մի հեռագիր ստացվեց, որն ուղղակի շանթահարեց մեզ. “Էրիվանում սպանվել է մինիստր Կարճիկյանը”: Տարբեր ենթադրություններ էինք անում. հատկապես անհանգստացնող էր այն փաստը, որ սպանողը հայ է, այն էլ նույն կուսակցությունից, որի անդամ էր նաև ինքը՝ Կարճիկյանը: Մենք ծայր աստիճան հուզված՝ որոշեցինք շտապ կարգով հասնել Էրիվան: Նոյեմբերի 20-ին Ահարոնյանը, ես ու կինս, Պապաջանյանը և կաղետ-մինիստրները մեկնեցինք Էրիվան:

¹⁰³ Խոսքը քեմալական շարժման մասին է:

ԳԼՈՒԽ IX

Իմ Հայաստան գալը և մասնակցությունը Քաջագնունու դահլիճում

Ինչպես ընթերցողը հիշում է, Կովկասում իրադարձությունների նկարագրումը ես ընդհատեցի այն պահին՝ 1918թ. հունիսի 15-ին, երբ մենք մեկնեցինք Կոստանդնուպոլիս: Հայաստանում ձևավորվել էր կառավարություն՝ Հովհաննես Քաջագնունու նախագահությամբ: Կառավարությունը Էրիվան էր մեկնել հուլիսի վերջերին և վերջնականապես ձևավորվեց արդեն Էրիվանում, իր կազմի մեջ ընդունելով նաև Արամին՝ որպես ներքին գործերի մինիստր: Աշնան ընթացքում՝ մինչև հոկտեմբերի վերջը, Քաջագնունին վերակազմավորեց իր դահլիճը կոալիցիոն սկզբունքով. կառավարության հինգ անդամներ Դաշնակցությունից էին, չորսը՝ Ժողովրդական կուսակցությունից: Ես այդ կառավարության կազմի մեջ ընդգրկվեցի անմիջապես Էրիվան գալուց հետո, որպես պարենավորման և ժողովրդական առողջապահության մինիստր, փոխարինելով սպանված Կարճիկյանին:

Մեր գնացքով գալիս էին նաև Ժողովրդական կուսակցությունից նոր հրավիրված մինիստրները՝ Չումյանը, Վերմիշյանը, Էնֆիաջյանը: Մոտենալով Էրիվանին, մեր գնացքը Ուլուխանլու¹⁰⁴ կայարանի մոտակայքում՝ Էրիվանին 7 կիլոմետր չհասած, կանգ առավ թուրքական պահակակետի մոտ: Թուրք ասկյարները, հավանաբար որոշել էին օգտվել հարմար պահից,- արդեն երեկոյան ժամը 6-ն էր և մթնում էր,- և շահվել մեր ուղեբեռի հաշվին: Ուղեբեռի գնման պատրվակով նրանք բոլորիս առաջարկեցին դուրս գալ գնացքից, ուղեբեռը թողնելով գնացքում: Նրանք հայտարարեցին, որ կստուգեն մեր ուղեբեռը և հետո նոր բաց կթողնեն գնացքը: Մենք չէինք համաձայնվում: Սկսվեց վիճաբանություն: Ասկյարները վերցրեցին հրացանները և սպառնալից դիրք ընդունեցին: Մթնում էր: Գնացքում տակնապալի իրավիճակ ստեղծվեց: Այդժամ լոկոմոտիվով մեր գնացքին մոտեցան Էրիվանի կայարանում մեզ սպասող և

¹⁰⁴ Այժմ՝ Մասիս:

մեր ուշանալով խիստ անհանգստացած Էրիվանի պարետ կապիտան Շահատունին իր սպաների հետ: Նրանք բանակցեցին թուրք սպաների հետ, ինչից հետո մեր գնացքը բաց թողեցին և մենք մոտեցանք Էրիվանի կայարանին:

Արդեն երեկոյան ժամը 10-ն էր: Կայարանի շենքը բացարձակ չուսավորված: Տեղում էր հորդառատ անձրև: Բոլորի դեմքերը հոգնած ու խոժոռ: Կայարանում մեզ դիմավորեց ներքին գործերի մինիստր Արամը: Ես երբևիցե չեմ մոռանա այդ հանդիպումը: Արամը չափազանց տխուր էր և հոգնած: Ինձ ուղղած նրա առաջին բառերն էին. ”Օհ, ինչ ծանր է: Դժվար է աշխատելը, դժվար է, շատ դժվար”: Կայարանում ամայություն էր: Մենք գնացինք մեր համար նախապատրաստած բնակարանները: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 22-ն էր, մենք իմացանք, որ արևմտյան ռազմաճակատում զինադադար է կնքվել. Ըստ երևույթին, մոտենում էր վեհաժողովի անցկացման ժամանակը: Ես միանգամից ընկղմվեցի իմ հասանելիք ոլորտի հարցերի մեջ: Բայց առաջնահերթ հարցը՝ դա Կարճիկյանի սպանությունն էր ու նրա հուղարկավորումը: Նրա սպանողը՝ Եգոր Մինասյանը, բանտարկված էր: Դժբախտ կրակոցը մեզ զրկել էր մեծ գործչից: Հետագայում, դատի ժամանակ սպանողը հայտարարեց, որ սպանությունն իրագործել է, քանի որ Կարճիկյանին համարում էր մեղավոր այն հարցում, որ Կովկասյանն ու իշխանությունները զրկել էին Կովկասը ռուս-բուլղարական օգնությունից, ինչը թուրքերին հնարավորություն տվեց իրականացնել Բաքվում հայերի կոտորածը: Կայացավ Կարճիկյանի շատ հուզիչ թաղում:

Կյանքը մտավ հունի մեջ: Մեր առջև ծառայել էին մեծագույն կարևորության խնդիրներ. պատրաստվել Փարիզում կայանալիք վեհաժողովին, պատվիրակության ընտրությունը և համապատասխան հրահանգների մշակումը, - դա առաջինն էր: Երկրորդը՝ Վրաստանի հետ վիճելի հարցերի կարգավորումը և երրորդը՝ պայքար Հայաստանում մոլեգնող սովի և բժավոր տիֆի դեմ:

Դաշնակիցները Կովկասում առաջին անգամ հայտնվեցին նոյեմբերի 24-ին. անգլիացիները Էնզելիից մտան Բաքու և գեներալ Թոմսոնը հենց նոյեմբերի 24-ին ներկայացրեց իր դիմումը Ադրբեջանին: Անդրկով-

կայսյան հանրապետությունների պատմությունում բացվում էր նոր էջ, սկսվում էր նոր դարաշրջան:

Իմ առաջին տպավորություններն Էրիվանից չափազանց ծանր էին. ձմեռ, ձյուն, սառնամանիք, փողոցներում՝ անանցանելի ցեխ, բոլոր հրապարակներում կիսամերկ փախստականների զանգվածներ, հյուժված ու դժբախտ դեմքեր, փողոցներում՝ սովից ու բժավոր թիֆից մեռնող մարդիկ: Հացի և պարենամթերքի մեծածավալ պակասություն: Ճանապարհը դեպի Թիֆլիս փակել են թուրքերը, իսկ այն կողմ՝ տարբեր խոչընդոտներ, որ ստեղծում են վրացիք: Պետական կառավարման համար պիտանի և ոչ մի պատրաստված պաշտոնյաների բազմություն, քաղաքը՝ կիսավեր, իսկ յոթը վերստ այն կողմ՝ թուրքական պահակակետերը: Եվ այդ ամբողջ չքավոր ու կիսաստված բնակչության գլխին մի կառավարություն, որը ջերմորեն նվիրված է իր գործին և իր ամբողջ էությունը ներդնում էր Հայաստանի վերականգնման գործին: Ամենահզոր անձերը Արամն ու Դրոն էին, որոնք հսկայական հեղինակություն ունեին զանգվածների մոտ: Մենք լծվեցինք աշխատանքի և աշխատում էինք բառացիորեն զօր ու գիշեր: Մինչ ուշ գիշեր կուսակցական խմբավորման նիստերում քննարկվում էին ամենաթեժ հարցերը:

Մեր պատվիրակությունը զեկուցեց Կոստանդնուպոլսում իր կատարածի մասին:

Զինադադարի կնքման արդյունքում այն կորցրեց իր նշանակությունը: Թուրքերի մասին մոռացան. բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի Փարիզ: Պատրաստվում էին վեհաժողովին: Պատվիրակության ընտրությունները շատ քիչ ժամանակ խլեց. միանգամից մեր կուսակցության կողմից առաջադրվեց Ահարոնյանը: Կադետները կանգ առան Մ.Պապաջանովի թեկնածության վրա: Երբորդը նշվեց Համո Օհանջանյանի անունը, որ արդեն գտնվում էր արտասահմանում: Առաջարկություն եղավ պատվիրակության կազմում ընդգրկել նաև ինձ ու Արամին, սակայն, կառավարության նախագահ Քաջագնունու հորդորով որոշվեց, որ մենք անհրաժեշտ ենք հենց Հայաստանում աշխատանքներն առաջ տանելու համար: Մշակված հրահանգի էությունն այն էր, որ անհրաժեշտ է պահանջել ելք դեպի ծով (նավահանգիստը չէր նշվում) և վեց վիլայեթների տարածքնե-

րը՝ ներառյալ Էրզրումը: Կիլիկիայի մասին խոսք չկար: Պատվիրակությանը պարտավորեցվում էր համերաշխ աշխատել Նուբարի¹⁰⁵ հետ և, եթե անհրաժեշտ է, նրան տրամադրել պատվիրակությունում նախագահելու պատիվը, Ահարոնյանին թողնելով փոխ-նախագահությունը:

Այդպիսի հանձնարարականներով պատվիրակությունը ղեկտեմբերի 12-ին մեկնեց Էրիվանից: Հիշում եմ, որ տարածքային պահանջների առումով ամենաչափավորը վարչապետ Քաջագնունին էր և ապագա ռազմական մինիստր Ռուբեն Տեր-Մինասյանը: Քաջագնունին նույնիսկ գտնում էր, որ նավահանգիստ կարելի է և չպահանջել: Այսպիսով, վեհաժողովին պատվիրակություն ուղարկելու հարցը լուծված էր:

Երկրորդ հարցը՝ սովի և պարենամթերքի հարցը չափազանց սուր էր դրված: Թուրքերը տարել էին հացահատիկի ամբողջ պաշարը, փախստականները կրկնապատկել էին Հայաստանի Հանրապետության բնակչությունը: Նրանք եկել էին Թուրքիայից, Կարսից, Սուրմալուից, բնակչությունը բառացիորեն շնչահեղձ էր լինում: Բժավոր տիֆը հնձում էր հարյուրներով: Փողոցներով առավոտյան հայտնաբերում էին տասնյակներ, իսկ հետո՝ արդեն հարյուրներով տիֆից մահացածների դիակներ: Չէին հասցնում հավաքել: Տիֆով հիվանդացավ Արամը, իրենից հետո՝ պետական վերահսկիչ Բերբերյանը և Հայաստանի գլխավոր բժշկական տեսուչ բժիշկ Անդրեասյանը: Տիֆը դարձավ համաժողովրդական աղետ:

Ես ինձ վրա վերցրեցի երեք նախարարների պարտականություններ. իննամատարության՝ Կարճիկյանի փոխարեն, ֆինանսների և Արամի փոխարեն՝ ներքին գործերի: Տիֆը տարածողները՝ ոջիլները, թափանցում էին ամեն տեղ: Կինս և ես նրանց հայտնաբերում էինք ամենուր: Մի շարք հաստատություններ գրեթե չէին գործում, քանզի ծառայողների մեծ մասը պառկած էր՝ տիֆով հիվանդ:

Այդպիսին էր վիճակը երկրի ներսում: Ոչ ոք չգիտի 1918-1919թթ. աշնան-ձմռան ընթացքում տիֆից ու սովից մահացածների ճշգրիտ թիվը, բայց ես, բավականին համոզված կերպով կարող եմ ասել, որ այդ թի-

¹⁰⁵ Խոսքը Փարիզի Վեհաժողովում Ազգային պատվիրակության նախագահ **Պողոս Նուբարի** (1851-1930) մասին է:

վը հասնում է 150.000-ի¹⁰⁶: Բայցևայնպես, պետական կյանքը կանգ չէր առնում. դեկտեմբերի 6-ին Դրոն հայկական զորքի գլուխն անցած մտավ թուրքերից մաքրված Ալեքսանդրապոլ, ուր բնակչությունը ցնծությամբ դիմավորեց նրան: Մենք պահանջում էինք, որպեսզի թուրքերը դուրս գան նաև Կարսից, սակայն՝ ապարդյուն:

Հաց ստանալու համար մենք ռադիոկապով դիմել էինք Եվրոպային: Սակայն օգնությունը չէր գալիս. Վրաստանը մեր համար դժվարություններ էր ստեղծում երկաթգծի Թիֆլիս – Ղարաքիլիսա հատվածում ինչը և վիժեցնում էր դրսից օգնության հասնելը: Օգտվելով մեր դժվար կացությունից, մեր հարևաններտ ցանկանում էին այդ միջոցին լուծել մեր հետ ունեցած սահմանային վեճերը Ախալքալաքի և Բորչալուի գավառներում:

Այդպիսով, համապատասխան մթնոլորտ էր ստեղծվում հայ-վրացական հակամարտության ի հայտ գալու համար: Այդ հակամարտության առաջ գալու առիթները երկուսն էին. Հայաստանի ցանկությունը՝ ունենալ ազատ ելք դեպի Բաթում և նույն Հայաստանի ձգտումը պաշտպանել Լոռին՝ զուտ հայկական շրջանը, ինչպես նաև Ախալքալաքի՝ զուտ հայկական գավառը Վրաստանի կողմից զավթելուց: Իսկ Վրաստանը՝ իր ստեղծած մաքսային-տարանցիկ դժվարություններով ցանկանում էր Հայաստանին ավելի համաձայնվող դարձնել տարածքային հարցերում: Ես հատուկ ընդգծում եմ այս դրույթները, քանի որ մի շարք քննադատներ հայ-վրացական կոնֆլիկտի ծագման ակունքներում ցանկանում էին տեսնել այլ պատճառներ. ռուս սպաների կողմից հրահրած սադրանք և Դրոյի գլխավորությամբ “պատերազմի կուսակցության” ռազմատենչությունը: Դա այդպես չէ և արմատապես ոչ ճիշտ: Իրական պատճառները հենց նրանք են, որոնց մասին ես ասացի:

1918թ. ամբողջ երկրորդ կեսը մենք կլանված էինք այդ կոնֆլիկտով և, որպեսզի լինեմ անաչառ, խոսքը կտրամադրեմ փաստաթղթերին: Նրանք ամենից լավ կբնութագրեն այդ՝ բոլոր դեպքերում բավականին տխուր պատմությունը:

¹⁰⁶ Միմոն Վրացյանն իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում բերում է 180 000 թիվը:

Հենց որ դաշնակիցների հաղթանակների մասին լուրերը սկսեցին հասնել Կովկաս, վրացական կառավարությունը, որը նույնպես հույսեր էր կապում Եվրոպայի հետ, որը չէր ճաշակել ոչ սով, ոչ թուրքական շրջափակում և որն ուներ հզոր ռադիոկայան, որոշեց առաջինը միավորել Անդրկովկասյան Հանրապետությունների ջանքերը ընդհանուր շահերը պաշտպանելու համար: Այն ժամանակներում հայերի միջազգային տեսակարար կշիռը համարվում էր բավականին ծանրակշիռ: Վրացիք դա հաշվի էին առնում և ցանկանում էին իրենց հարցերն ավելի սերտորեն կապել հայկական հարցի հետ, որը շատ հանրահայտ էր Եվրոպայում արդեն բավականին երկար ժամանակ: Հայերն էլ էին գիտակցում իրենց հանրաճանաչ լինելը և մեզ՝ բանակցողներիս հետ մեծ հույսեր էին կապում:

Միաժամանակ ասենք, որ այդ օրերին ռուսահայերն առաջին անգամ զգացին, որ իրականում բնակեցված է միայն Ռուսահայաստանը, իսկ Թուրքահայաստանը հանդիսանում էր միջազգային իրավունքի օբյեկտ, այն օրերին սակայն՝ առանց բնակչության: Այդպիսով, հարց էր դրվում միավորել բնակչությամբ հզոր Հայաստանի ռուսական հատվածը, միջազգային իրավունքի տեսակետից հզոր թուրքական Հայաստանի հատվածի հետ: Հայաստանը միավորելու գաղափարը ծնվել է այդ սկզբունքների՝ տարածքայինի և միջազգայինի միավորումից:

Առաջին նոտան, որը հրավիրում էր անդրկովկասյան հանրապետություններին միավորվել իրենց շահերը Եվրոպայի առջև պաշտպանելու համար, դա հոկտեմբերի 28-ին Վրաստանի կառավարության կողմից ուղարկված նոտան էր:

Ահա դրա ամբողջական տեքստը.

Այդ նոտային Վրաստանում Հայաստանի ներկայացուցիչ Ջամալյանը պատասխանում է հետևյալ կերպ.

Վրաստանի արտաքին գործերի մինիստրը պատասխանում է.

Պարոն Ջամայանից պատասխան չստանալու պատճառով Վրաստանի կառավարության նախագահ Ժորդանիան հեռագրում է Էրիվան իր ներկայացուցիչ Մդիվանուն¹⁰⁷:

Մդիվանին պատասխանում է երկու հեռագրերով՝ նոյեմբերի 11-ին և 13-ին.

Այդ երկու հեռագրերին Վրաստանի արտաքին գործերի մինիստրը պատասխանում է նոյեմբերի 14-ին:

Մդիվանին դրան պատասխանում է.

Ցանկանալով արագացնել համաժողովի գումարումը, Գեգեչկորին ուղարկում է երկու հեռագիր.

Վրաստանի Կառավարության Նոտան Համաժողովի
գումարման վերաբերյալ:

Հայաստանում, Ադրբեջանում և Հյուսիսային Կովկասի
լեռնականների Միությանը կից Վրաստանի Կառավարության
քաղաքական ներկայացուցիչներին

“Համաշխարհային պատերազմը մոտենում է ավարտին և կասկածից վեր է, որ մոտ ապագայում գալու է այն պահը, երբ Համաշխարհային Վեհաժողովում որոշվելու են, ընդհանրապես, աշխարհի ժողովուրդների ճակատագրերը, այդ թվում և մասնավորապես՝ նախկին Ռուսական Կայսրությունից անջատվածների ապագան: Այդ վեհաժողովին ընդառաջ Կովկասի և Անդրկովկասի ժողովուրդները պետք է պատրաստ լինեն հանդես գալ միասնական ու համերաշխ, քանզի միայն այդ պարագայում է, որ մեր՝ փոքր ազգերի և նոր պետական գոյացությունների ձայները կարող են կշիռ և նշանակություն ունենալ:

Այդ առումով անհրաժեշտ է, որպեսզի Կովկասի և Անդրկովկասի Կառավարությունները պայմանավորվեն ինչպես նման համերաշխ ե-

¹⁰⁷ Միմեռն Մդիվանի՝ այդ ժամանակահատվածում Վրաստանի պատասխանատու լիազոր-ներկայացուցիչը Հայաստանում:

լույթի պայմանների, այնպես էլ միմյանց միջև փոխադարձ բարյացակամ, բարիդրացիական՝ փոխադարձ վստահության և միմյանց օգնության գալու ոգով ներթափանցված հարաբերությունների հաստատման վերաբերյալ:

Այդ նպատակով Վրացական Հանրապետության Կառավարությունն առաջարկում է Հայկական և Ադրբեջանական Հանրապետությունների Կառավարություններին, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի լեռնականների Միության կառավարությանը, նոյեմբերի 3-ին ժամը 12-ին Թիֆլիսում, Արտաքին Գործերի Մինիստրության շենքում /Երմոլովսկայա 9/ հավաքվել համաժողովի, ուղարկելով երկուական մասնակից՝ համապատասխան օրինական լիազորություններով:

Վրացական Հանրապետության Կառավարությունն այդ համաժողովի հաստատմանն է որոշել ներկայացնել հետևյալ հարցերը.

1. Այն պետությունների կողմից, որոնց Կառավարությունները հրավիրված են մասնակցելու համաժողովին, միմյանց անկախության փոխադարձ ճանաչումը:
2. Շահագրգիռ պետությունների կողմից համաձայնության գալու միջոցով՝ բոլոր վիճելի հարցերին լուծումներ տալը, չբացառելով նաև սահմանային վեճերը: Նշված համաձայնության բացակայության պարագայում լուծման հասնել իրավարար միջնորդության միջոցով:
3. Ստանձնել փոխադարձ պայմանավորվածություն՝ բացառել համաձայնության գալ որևիցե այլ պետության հետ՝ ի վնաս համաժողովին մասնակցող որևիցե ժողովրդի:
4. Համաշխարհային Համաժողովում հանդես գալ համերաշխ ու փոխօժանդակ ձևով, նպատակ ունենալով ճանաչել տալ մեր Հանրապետությունների անկախությունը և մեր շահերի պաշտպանումը:

Պատասխանի մասին խնդրում եմ ինձ տեղեկացնել վաղօրոք:

Արտաքին Գործերի Մինիստրի պաշտոնակատար՝
Ն.Ռամիշվիլի

Գրասենյակի տնօրեն՝ Լորդկիպանիձե՛:
27 հոկտեմբերի, 1918թ., № 1500, 1501, 1502.

“Ի պատասխան ա.թ. հոկտեմբերի 27-ի № 1500 Ձեր առաջարկությանը, պատիվ ունեմ տեղեկացնելու, որ համապատասխան հրահանգներ ստանալու համար նշված առաջարկության պատճենը սուրհանդակի միջոցով իմ կողմից ուղարկվել է Էրիվան:

Տեղեկացնելով այդ մասին և գիտենալով իմ Կառավարության մշտական ձգտումը հարևան պատռոթյունների և, մասնավորապես՝ Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, ես չեմ կասկածում, որ Ձեր առաջարկության մեջ շարադրված մտքերը կարժանանան Հայաստանի Կառավարության սկզբունքային և լիակատար հավանությանը: Սակայն, պարտք եմ համարում իմ կողմից ավելացնել, որ Ձեր կողմից առաջարկած գաղափարի իրականացումն էապես կշահեր, եթե կազմակերպվեին նախնական քննարկումներ Համաժողովի նիստերին դիտարկվելիք հարցերի, ինչպես նաև նրա անցկացման տեղի և ժամանակի վերաբերյալ, եթե նման քննարկում իրականում կայանար:

Վրաստանի Կառավարությանը կից Հայաստանի
Հանրապետության գործերի ժամանակավոր
հավատարմատար՝ Ա.ՋԱՄԱԼՅԱՆ՝:
31 հոկտեմբեր, 1918թ., № 1488:

Վրացական Հանրապետության Արտաքին Գործերի
Մինիստրի պաշտոնակատարի կարծիքը՝ հասցեագրված
Վրաստանի Կառավարությանը կից
Հայաստանի Հանրապետության գործերի
ժամանակավոր հավատարմատարին:

“Հոկտեմբերի 31-ի № 1488 գրության առնչությամբ պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ իմ՝ հոկտեմբերի 27-ի № 1500 նամակում նշված կայանալիք Համաժողովի աշխատանքներում քննարկվելիք հարցերի ծրագիրն ունի նախնական նախագծի բնույթ և Համաժողովի մասնակիցների ցանկության դեպքում նրանք ունեն լիիրավ իրավունք մեր կողմից նախագծված հարցերից բացի, քննարկման դնել նաև այլ հարցեր:

Ընդամին, հավատացած եմ, որ գործի շահերը կգերադասվեն ձևական բնույթի դատողությունների նկատմամբ և Անդրկովկասի ժողովուրդների համար այդքան անհրաժեշտ Համաժողովը կկայանա”:

Արտաքին Գործերի Մինիստրի պաշտոնակատար՝
Ե.ԳԵԳԵՉԿՈՐԻ:”

Նոյեմբեր, 1918թ., № 1599:

Վրաստանի Կառավարության Նախագահի հեռագիրը Էրիվանում Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցչին:

“Էրիվան: Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցիչ Միլվանուն: Ըստ Հայաստանի Հանրապետության գործերի հավատարմատար ՋԱՄԱԼՅԱՆԻ հաղորդման, Հայկական Կառավարությունը, կապի բացակայության պատճառով, դեռևս չի ստացել տեղեկություն նոյեմբերի 10-ին նշանակված Համաժողովի վերաբերյալ: Հանձնարարում եմ Ձեզ տեղեկացնել Հայաստանի Կառավարությանը, որ իրենց ներկայացուցչի և պատասխանի բացակայության պատճառով, Համաժողովի նիստերը հետաձգվում են ևս երեք օրով: Խնդրեք, որպեսզի Համաժողով գործուղեն լիազորագրերով օժտված երկու պատվիրակ:

Կառավարության Նախագահ՝ ԺՈՐԴԱՆԻԱ:”

10 նոյեմբերի, 1918թ.

Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցչի
պատասխան հեռագիրը

/Էրիվանից հեռագրի վերծանում/

“Արտաքին Գործերի Մինիստրին

Նոյեմբերի 8-ի ներկայացմամբ մանրամասն տեղեկացրել եմ Հայաստանի Կառավարության հետ բանակցությունների ընթացքի մասին, ընդ որում, միտք եմ արտահայտել, որ անհրաժեշտ է սպասել Համաժողովը գումարելու հարցում, մինչև պարզ չդառնան իմ կողմից վարվող բանակցությունների արդյունքները: Այսօր ստացել եմ Կառավարության Նախագահի հեռագիրը Համաժողովը նոյեմբերի 14-ին գումարելու մասին: Այդ ժամկետում Համաժողովը չի կարող կայանալ: Հայերը պատրաստ չեն: Բացի մեր հետ ունեցած վեճից, նրանք ցանկանում են իմանալ Լեռնական ժողովուրդների Համագումարի լիազորությունները և Համաժողովի նկատմամբ Ադրբեջանական Կառավարության վերաբերմունքի մասին: Ենթադրում եմ, որ գործի օգտին համապատասխանող և դրականորեն օգտակար կլինեն սպասել ևս երկու շաբաթ, կամ առնվազն՝ 10 օր: Հակառակը կարող էր հանդես գալ որպես խոչընդոտ Համաժողովի գումարման համար:

ՄԴԻՎԱՆԻ”

[...] նոյեմբերի 1918 թ.

№216

Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցչի հեռագիրը

“Թբիլիսի: Կառավարության Նախագահին:

Ձեկուցում եմ մեր կողմից գումարվելիք Համաժողովի նկատմամբ Հայաստանի Կառավարության տեսակետն արտահայտող նոտայի տեքստը, որն ստացել եմ այսօր Հայաստանի Արտաքին Գործերի Մինիստրից՝ շարադրված հետևյալ բառերով. “Սկզբունքորեն ցանկալի համարելով ընդհանուր շահեր շոշափող մի շարք հարցերի քննարկման համար Անդրկովկասի ներկայացուցիչների համաժողով գումարելը, Հայաստանի Կառավարությունը անհրաժեշտ է համարում բանակցություններ սկսել Վրաստանի Կառավարության հետ՝ կազմի և նիստերի ծրագրերի, հավասարապես՝ ենթադրյալ Համաժողովի անցկացման վայրի և ժա-

մանակի վերաբերյալ: Ինչ վերաբերում է Վրացական հանրապետության և Հայաստանի միջև պետական սահմանի հաստատմանը, ապա այդ հարցը պետք է լուծվի այդ երկու հանրապետությունների փոխադարձ համաձայնության միջոցով՝ մինչև վերոնշյալ Համաժողովի գումարումը”:

Նոտան ստորագրված է Արտաքին Գործերի Մինիստր ՏԻԳՐԱՆՅԱՆԻ կողմից:

12 նոյեմբերի 1918թ.

ՄԴԻՎԱՆԻ”

Ե.Պ ԳԵԳԵՉԿՈՐՈՒ հեռագիրը:

“Էրիվան: Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ ՄԴԻՎԱՆՈՒՆ:

Գաղտնի: Համաժողովի գումարման ձգձգելը բարդացնում է առանց այն էլ այն բարդ դրությունը, որում հայտնվել է մեր հանրապետությունը: Համարելով Հայաստանի մասնակցությունն այդ համաժողովում ծայրահեղ անհրաժեշտ, մենք որոշել ենք վերջին փորձն անել նրա ներկայացուցիչներին Համաժողովում ներգրավելու համար, որն այլևս չի կարող հետաձգվել նոյեմբերի 20-ի երեկոյան ժամը 8-ից այն կողմ:

Հետագան՝ պաշտոնակատ: Խնդրում եմ փոխանցել Հայկական Կառավարությանը, որ Վրացական Կառավարությունը, ծանոթանալով նրա պատասխանին և, գնալով ընդառաջ, խնդրում է Հայկական Կառավարությանը այդ նպատակով հնարավորինս սեղմ ժամկետում ուղարկել իր ներկայացուցիչներին:

Գաղտնի: Միաժամանակ Ձեզ հանձնարարվում է անմիջական բանակցությունների ժամանակ հասկացնել տալ Հայաստանի Կառավարությանը, որ իրենց պատվիրակների բացակայության դեպքում մենք ստիպված կլինենք, ելնելով անհրաժեշտությունից, Համաժողովի բացումն անել առանց իրենց մասնակցության:

Արտաքին Գործերի Մինիստր ԳԵԳԵՉԿՈՐՈՒ”:

Թիֆլիս, 14 նոյեմբերի, 1918թ.

Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցչի
հեռագիրն Էրիվանից:

Արտաքին Գործերի Մինիստրին

“ Տիգրանյանի հետ բառացի բանակցությունների միջոցով ինձ հաջողվեց հասնել նրան, որ ինքը սկզբունքորեն ընդունեց Հայաստանի պատվիրակների մասնակցությունը Համաժողովին նույնիսկ մինչև սահմանների վերաբերյալ հարցի լուծումը, բայց միայն այն պայմանով, որ այդ վերջին հարցն իր լուծումը ստանալու է ոչ թե այդ ընդհանուր Համաժողովին, այլ միայն շահագրգիռ պետությունների փոխհամաձայնության միջոցով: Հայաստանի ներկայացուցիչների կողմից արված այդօրինակ հայտարարությունը պետք է աջակցության արժանանա մեր կողմից”:

Էրիվան, 17 նոյեմբերի, 1918թ., № 38:

ՄԴԻՎԱՆԻ

Ե.Պ. ԳԵԳԵՉԿՈՐՈՒ հեռագրերը

II.

Էրիվան: Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցիչ
ՄԴԻՎԱՆՈՒՆ

“Մեր Համաժողովը տեղափոխված է ամսի 30-ին: Ահա ամենը, որ ես կարողացա անել: Այդ օրը սպասում եմ Ձեզ և Հայկական պատվիրակներին: Արտաքին Գործերի Մինիստր՝ ԳԵԳԵՉԿՈՐԻ”
Թիֆլիս, 22 նոյեմբերի 1918թ.

II.

Էրիվան: Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցիչ
ՄԴԻՎԱՆՈՒՆ

“Համաժողովը հետաձգված է: Ինչո՞ւ Հայաստանի Կառավարությունը չուղարկեց պատվիրակներ: Ես հնարավոր էի համարում հայերի հետ բանակցել նախօրոք, բայց եթե իրենց կողմից չդրսևորվի ընդառաջ գնալու ցանկություն, ապա այդ գաղափարը վարկաբեկված կլինի երկարատև ժամանակով:

Արտաքին Գործերի Մինիստր՝ ԳԵԳԵՉԿՈՐԻ”

Թիֆլիս, 2 դեկտեմբերի 1918թ.

Ինչպես ընթերցողը տեսնում է, հանրապետությունները չէին շտապում իրենց ներկայացուցիչներին հավաքել Թիֆլիսում խորհրդակցության: Ինքներս մեզանից չպետք է թաքցնենք, որ էրիվանում զգուշանում էին Թիֆլիսի վրա Բաքվի ազդեցությունից և ձգտում էին անմիջականորեն հենց վրացիների հետ վերջ դնել վիճելի հարցերին: Բացի դրանից, առկա էր զսպել այրող հարցերին լուծում տալու ցանկությունը և սպասել Փարիզի Վեհաժողովի ընթացքին: Այդպիսին էր այդ օրերի հոգեբանությունը: Հիմա այն արդեն չկա և դա պատմության դառը դասերից մեկն է: Մինչդեռ մթնոլորտը գնալով խտանում էր: Տարածքների սահմանազաման հարցը, որն այսօր էր Կովկասում դեռևս ցավոտներից է, գնալով ավելի ու ավելի կիզիչ էր դառնում: Մենք այդ հարցին շատ երկար ենք անդրադառնում միտումնավոր, քանզի այն հանդիսանում էր առավել <<կծող>> հարցերից թե՛ այն օրերին, թե՛ այսօր:

Ահա այդ հարցին առնչվող այն ժամանակաշրջանի պաշտոնական փաստաթղթերը.

Դրան Ջամալյանը պատասխանում է հետևյալ նոտայով.

Վրաստանի Ռազմական մինիստրը հեռագրում է Հայաստանի Կառավարությանը.

Հայաստանի Կառավարությունը՝ ի դեմս Կառավարության նախագահ Քաջազնունու և Վրաստանում Հայաստանի գործերի ժամանակավոր հավատարմատար Ջամալյանի պնդում են. պաշտպանել Ախալքալաքի գավառը, Հայաստանի Արտաքին Գործերի Մինիստրը հեռագրում է.

Էրիվանում Վրաստանի հավատարմատարը Փարիզ ուղևորվող հայկական պատվիրակության հետ մեկնում է Թիֆլիս: Բայց նրանք արգելափակվում են Ղարաքիլիսայում, քանզի այդ օրը վաղ առավոտյան Հայաստանի ու Վրաստանի սահմանին սկսվեցին ռազմական բախումները: Այստեղ առաջին անգամ, դեկտեմբերի 13-ին հայտնվում է առաջին

Ֆրանսիական սպան՝ Միջագետքի ռազմաճակատից ժամանած հեծելագործի հոգևորական, հայերեն խոսող ճիզվիտների ուխտի միաբան կապիտան Պուադեբարը: Նրա հետ մենք դեռևս հաճախակի կհանդիպենք:

Ահա նրան է ուղղում Մոլիվանին իր հեռագիրը.

Մինչդեռ Հայաստանի Արտաքին Գործերի մինիստր Տիգրանյանը հեռագրում է.

Պատերազմը բռնկվեց: Այդ կապակցությամբ Վրաստանի Արտաքին Գործերի Մինիստրը Վրացական Պառլամենտում հանդես եկավ հետևյալ հայտարարությամբ.

Միաժամանակ պ. Քաջագունին Հայաստանի Պառլամենտում հանդես եկավ ռազմական գործողությունների սկսվելուն վերաբերող հայտարարությամբ:

Ես ներկա եմ եղել այն պահին, երբ Մինիստրների Խորհրդի նիստից հետո, որը հավանություն տվեց Կառավարության Նախագահի գործողություններին, պ. Քաջագունին իր աշխատասենյակից գորքերի հրամանատար Դրոյին թույլ տվեց անցնել վճռական ռազմական գործողությունների: Սկսվեց մի պատերազմ, որն իր թույնով երկար ժամանակով թունավորեց հայ-վրացական հարաբերությունները: Թիֆլիսում հայերի նկատմամբ սկսվեց կատաղյալ մի որս: Հայերին հարյուրներով քստրում էին դեպի Քութայիս և Վրաստանի խորքերը: Էրիվանից դեպի ռազմաճակատ էին ուղարկում զինվորներին, այլուրի վերջին պաշարները: Սաստիկ սառնամանիքներ էին: Զինվորները չունեին տաք հանդերձանք: Բայց հայերի մոտ առկա էր հանուն արդար գործի պայքարի գաղափարը: Չնայած ցրտին և սովին, պատերազմը ժողովրդականություն էր վայելում: Հոգեբանորեն ժողովուրդը ցանկանում էր ելք բացել դեպի ծով, որը Վրաստանն արգելափակում էր: Այնտեղից հայերը սպասում էին հաց, արտաքին աշխարհի հետ կապեր ունենալու հնարավորություն: Պատերազմը վարվում էր բավականին փոքրաթիվ ուժերով՝ մենք ունեինք հագարից ոչ ավելի զինվոր: Բայց կռվում էր Բորչալուի գավառի ամբողջ բնակչությունը. նրանք ցանկանում էին միանալ Հայաստանի Հանրապետությանը: Ահա այն երկու շարժառիթները, որոնք այդ օրերին մեծ ժողովրդականություն էին վայելում հայության մեջ:

Մինչդեռ դիվանագիտական նամակագրությունն ընթանում էր իր հունով.

Ցանկանալով իրենց կողմը հրավիրել Բաթումից Թիֆլիս ժամանած Միության Տերությունների ներկայացուցիչների համակրանքը, Վրաստանի կառավարությունը նրանց դիմեց հետևյալ հայտարարությամբ.

**Նամակագրություն
հայկական գորամիավորումների Թիֆլիսի նահանգի
սահմանները մուտք գործելու հարցի վերաբերյալ**

I.

**Վրացական Հանրապետության Արտաքին Գործերի
Մինիստրի նոտան՝ հասցեագրված Վրաստանի
Կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության
գործերի ժամանակավոր հավատարմատարին**

“Վրացական Հանրապետության Կառավարությունն իրազեկված է, որ Թիֆլիսի նահանգի մի մասը՝ Քոբեթ կիսակայարանից մինչև սահմանային կամուրջը, ինչպես նաև Սանահինի մերձակա տարածքները, ս.թ. հոկտեմբերի 18-ին զբաղեցվել են հայկական կանոնավոր զորքերի, այն է՝ առաջին և չորրորդ հրաձգային գնդերի ստորաբաժանումների կողմից:

Վրացական Կառավարությունը, միշտ պատրաստակամ լինելով փոխադարձ պայմանավորվածությամբ կարգավորել սահմանների վերաբերյալ հարցերը բարեկամ Հայկական Հանրապետության հետ, իր պարտքն է համարում, սակայն, հայտարարել, որ քանի դեռ բացակայում է նման համաձայնությունը, հայկական գորամիավորումների մուտքը Թիֆլիսի նահանգի տարածք, Վրաստանի Կառավարության կողմից դիտվելու է որպես Վրաստանի հանդեպ Հայաստանի կողմից դրսևորվող բացահայտ թշնամական գործողություն”:

1918թ. Արտաքին Գործերի Մինիստրի Պաշտոնակատար՝
ԳՎԱՐՋԱԼԱՁԵ
Գրասենյակի տնօրեն՝ ԼՈՐԴԿԻՊԱՆԻՉԵ

Վրաստանի Կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարի նամակը՝ հասցեագրված Վրաստանի
Արտաքին Գործերի Մինիստրին

“Պատիվ ունեմ հայտնելու, որ Ձեր՝ հոկտեմբերի 19-ի № 4303 նոտան իմ կողմից փոխանցված է Էրիվան, իմ Կառավարությանը՝ հրահանգներ ստանալու համար:

Ձեզ հասցնելով շարադրված տեղեկությունները, պարոն Մինիստր, ինձ թույլ եմ տալիս հայտնել իմ հաստատ համոզումը, որ երկու Հանրապետությունների Կառավարությունների անկեղծ ձգտումը բարեկամական կապերի պահպանման ու ամրապնդման ուղղությամբ չի հապաղի որպես հետևանք դրսևորվել արագ և խաղաղ համաձայնագրի ստորագրման տեսքով՝ երկու եղբայրական ժողովուրդներին էլ բավարարելու իմաստով:

Օգտվելով առիթից, պարոն Մինիստր, խնդրում եմ ընդունել հավաստումը Ձեր հանդեպ տածած իմ բացառիկ հարգանքի:
Ա.ՋԱՄԱԼՅԱՆ՝ 21 Հոկտեմբերի, 1918թ., № 1303

Զուգահեռաբար Վրաստանի Ռազմական
Մինիստրը հրամայում է.

III.

Վրաստանի Ռազմական Մինիստրի Հրամանը.

Սանահին: Գնդապետ Ջախարիաձեին

“Հայաստանի Կառավարության Նախագահից առաջարկություն է ստացվել սահմանային հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու վերա-

բերյալ: Ըստ այդմ, հրամայում եմ մեր գորքերին կանգնել այն գծի վրա, որը զբաղեցնում էին գերմանացիները, իսկ հայկական գորքերը չպետք է անցնեն թուրքերի կողմից զբաղեցրած գիծը: Նրանց հետագա առաջխաղացման դեպքում, անպայման պաշտպանվել”:

Ռազմական Մինիստր ԳԵՈՐԳԱԶԵՆ”

23 հոկտեմբերի, 1918թ.

Վրաստանի Ռազմական Մինիստրի հեռագիրը:

Էրիվան: Հայկական Հանրապետության

Մինիստր-Նախագահ ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒՆ:

“Ի պատասխան Ձեր հեռագրի հայտնում եմ հետևյալը. Սանահինի ջոկատի հրամանատարին իմ կողմից հրաման է տրված, որ, ի պատասխան Ձեր զինված ուժերի կողմից Թիֆլիսի նահանգի մի մասի գրավմանը, ռազմական գործողություններ չսկսել: Հայաստանի զինուժի հետագա առաջխաղացման դեպքում իմ կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցներ: Հոկտեմբերի 1918-ին Ձեզ ուղարկված նոտայում Վրաստանի Կառավարությունը ինքն էր առաջարկել սահմանային հարցերը լուծել խաղաղ ճանապարհով: Ընդամին, անհրաժեշտ եմ համարում ձեռնամուխ լինել մեր կողմից արված և Ձեր կողմից ընդունված առաջարկության գործնական իրագործմանը:

Ի տեղի Մինիստր-Նախագահի, Ռազմական Մինիստր ԳԵՈՐԳԱԶԵՆ”:

23 հոկտեմբերի, 1918թ.

Իսկ պ. Ա.Ջամալյանին գրվում է հետևյալը.

Վրաստանի Արտաքին Գործերի Մինիստրի նոտան՝

հասցեագրված Վրաստանի Կառավարությանը կից

Հայաստանի Հանրապետության գործերի

ժամանակավոր հավատարմատարին:

“Համաձայն Ձեր Կառավարության Նախագահ պ. ՔԱԶԱԶՆՈՒՆՈՒՆ ինդրանքի, Ռազմական Նախարարը հրամայել է վրացական գորքերին

մնալ մինչ թուրքերի գնալը մեր կողմից զբաղեցրած Քորինջի-Օատեր գծի վրա, ներառյալ Կամենկա գետը և սպասել սահմանային հարցերի փոխադարձ համաձայնությամբ, խաղաղասեր լուծմանը: Մինչդեռ, հայկական զորքերը շարունակում են նվաճողական գործողություններ Վրաստանի նկատմամբ: Վրաստանի Կառավարությունը հենց նոր տեղեկություն է ստացել, որ հայկական զորքերը պահանջել են մաքրել Քորինջին, դրանից հետո ստիպել են այնտեղից ետ քաշվել նաև գերմանական ուղեկալին և զբաղեցրել են Քորինջի-Օատեր գիծը: Քննարկելով ստեղծված իրավիճակը, Վրաստանի Կառավարությունը հանձնարարել է ինձ տեղեկացնել Ձեզ այն մասին, որ, եթե հայկական զորամասերը չմաքրեն Քորինջի-Օատեր գերմանական գիծը և եթե առաջիկայում զբաղեցնեն որևիցե նոր տարածքներ Թիֆլիսի նահանգի սահմաններում, ապա Վրաստանի Կառավարությունը դա կհամարի որպես Վրաստանի դեմ ռազմական գործողությունների իրականացում Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից, որի վրա էլ կընկնի երկու Հանրապետությունների համար այդ ամենի կործանարար հետևանքների ողջ պատասխանատվությունը:

Վրաստանի Արտաքին Գործերի Մինիստրի պաշտոնակատար՝
ՌԱՄԻՇՎԻԼԻ:

Գրասենյակի Տնօրեն՝ ԼՈՐԴԿԻՊԱՆԻՁԵ”:

23 հոկտեմբերի 1918թ., №12130

Պ. Ջամայյանը պատասխանում է.

Վրաստանի Կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարի
նամակը՝ հասցեագրված

Վրաստանի Արտաքին Գործերի Մինիստրի
պաշտոնակատար Ռամիշվիլուն

“Ի պատասխան այսօր կեսօրին ժամը 1-ին ստացված Ձեր №12130 նոտայի, պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ Էրիվանի հետ կապի բացակայության պատճառով ես, ցավոք սրտի, զրկված եմ նոտան անմիջա-

պէս իմ Կառավարությանը փոխանցելու հնարավորությունից:

Ըստ այդմ և, նման կարևոր հարցի լուծումը ձգձգելուց խուսափելու համար, ես, պարոն Մինիստր պարտավորված եմ զգում դիմել Ձեզ խնդրանքով, որպէսզի հրահանգավորեք հենց այսօր սույն նոտան ռադիոյով ուղարկվի Էրիվան՝ Հայաստանի Կառավարությանը:

Հաշվի առնելով նաև ռադիոհեռագրակապի բացակայությունը Էրիվանի հետ և զգուշանալով, որ Հայկական գորամիավորումների տեղեկացված չլինելը կարող է առաջ բերել բախումներ՝ անկախ իմ Կառավարության կամքից, խնդրում եմ նաև իմ լիազորված անձանց՝ Մ. ԱՐԶՈՒՄԱՆՈՎԻՆ և Ա. ՇԱՀՄԱԶՅԱՆԻՆ տրամադրել արտահերթ գնացք՝ նշված նոտան հայկական առաջապահ գորամասերին հասցենելու և այնտեղից հեռագրակապով փոխանցելու համար:

Գիտենալով եղբայրական Վրաստանի հետ բարիդրացիական հարաբերությունների ոչ միայն պահպանման, այլ նաև սերտ համագործակցությամբ այդ հարաբերություններն ամրապնդելու իմ Կառավարության համակողմանի ձգտումը, ես չեմ կասկածում, որ իմ Կառավարությունը, տեղեկանալով սահմանային հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու Վրաստանի Կառավարության ցանկության մասին, որախությամբ ձեռք կառնի բոլոր միջոցները երկու բարեկամ Հանրապետությունների գորքերի միջև բախումը կանխելու համար:

Պարոն Մինիստր, խնդրում եմ ընդունել հավաստումը Ձեր հանդէպ տածած իմ բացառիկ հարգանքի: Ա.ՁԱՄԱԼՅԱՆ”:

24 հոկտեմբերի, 1918թ., №1477:

Վրաստանի Կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատարի նամակը՝ հասցեագրված

Վրաստանի Արտաքին Գործերի

Մինիստրի պաշտոնակատարին:

“Իմ Կառավարության հանձնարարությամբ պատիվ ունեմ փոխանցել հետևյալ հեռագիրը, որն ստացել եմ այսօր.

1. Հայաստանի Խորհուրդը, լսելով իմ հաղորդումը վերջնագրի տեսքով Շահալին մաքրելու վերաբերյալ Վրացական № 4303 նոտայի վերաբերյալ, ինչպես նաև Վրաստանի Կառավարության կողմից ձեռնարկված միջոցների մասին, որոշեց հավանություն տալ Կառավարության գործունեությանը և առաջարկել նրան պահպանել գործողությունների ընդունված ուղին:

2. Կառավարությանը պարտավորեցնել միջոցներ գործադրել հակամարտության խաղաղ լուծման ուղղությամբ, հույս ունենալով, որ Վրաստանը նույնպես զերծ կմնա հարձակողական գործողություններից և չի անցնի զբաղեցրած գիծը: Խնդրում եմ այս ամենի մասին տեղեկացնել Վրաստանի Կառավարությանը: ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ

Օգտվելով առիթից, պարոն Մինիստր, խնդրում եմ ընդունել հավաստումը Ձեր հանդեպ տածած իմ բացառիկ հարգանքի:

Վրաստանի Կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության գործերի ժամանակավոր հավատարմատար՝ Ա.ՋԱՄԱԼՅԱՆ “

25 հոկտեմբերի, 1918թ.

YIII.

Հայաստանի Հանրապետության Մինիստր-Նախագահ

ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ հեռագիրն, ուղղված Վրաստանի

Արտաքին Գործերի Մինիստր ՌԱՄԻՇՎԻԼՈՒՆ:

“Թիֆլիս՝ Վրաստանի Կառավարության Արտաքին Գործերի Մինիստր ՌԱՄԻՇՎԻԼՈՒՆ:

Ի պատասխան Ձեր՝ առանց ամսաթվի և ժամանակի նշման հեռագրի, որը էրիվանում ստացվել է հոկտեմբերի 25-ին ժամը 23-ին: Մեր գորքերին խիստ հրաման է տրված զբաղեցնել միայն այն դիրքերը, որոնք թողնվել են թուրքերի կողմից: Հրամանը կրկնված է: Մասնավորապես, հրահանգ է տրված թողնել Ծատեր-Քորինջին, որոնք գրավվել են, ակնհայտորեն, թյուրիմացաբար՝ Պաշտպանական նկատառումներով: Բարեհաճեցեք Ձեր կողմից, հրահանգել՝ դադարեցնելու ռազմական գործողությունները և մտահոգություն հարուցող վրացական գորքի տեղաշարժերը: Սահմանային հարցերի խաղաղ կարգավորման նպատակով առա-

ջարկում եմ հրավիրել հայ-վրացական համաժողով, № 539:

Մինիստր-Նախագահ՝ ՔԱՋԱԶՆՈՒՆԻՒՄ՝:

27 հոկտեմբերի, 1918թ., № 5277:

Հեռագիր Էրիվանից, 5 դեկտեմբերի 1918թ.:

Թիֆլիսում ստացված է դեկտեմբերի 6-ին:

Արտաքին Գործերի Մինիստրին:

“Այսօր ստացա հետևյալ բավանդակությամբ նոտա ՏԻԳՐԱՆՅԱՆԻՑ. Հայաստանի Հանրապետության Կառավարության հանձնարարությամբ խնդրում եմ Ձեզ հաղորդել Վրացական Հանրապետության Կառավարությանը, որպեսզի վերջինս գերծ մնա իր գորքերը Ախալքալաքի գավառի սահմանները մտցնելուց, մինչև նշված շրջանի վերբերյալ խաղաղ լուծում ստանալը:

ՄԴԻՎԱՆԻՒՄ՝

Էրիվան, 5 դեկտեմբերի, 1918թ., № 73.

Մրան Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրությունը պատասխանում է երկու հեռագրերով:

I.

7 դեկտեմբերի 1918 թ., Ե.Պ.ԳԵԳԵՉԿՈՐՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ:

Էրիվան, Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցիչ

ՄԴԻՎԱՆՈՒՆ:

“ Ի պատասխան Ձեր հեռագրերի, հայտնում եմ. Ախալքալաքը մեր գորգերի կողմից զբաղեցված է դեկտեմբերի 5-ին առավոտյան ժամը 10-ին: Մեր Կառավարության նման քայլը պայմանավորված է տեղի բնակչության շահերով, որը ենթարկվում էր անասելի բռնությունների ինչպես գավառում դեռևս մնացած թուրքական զորամասերի, այնպես էլ անպատասխանատու անձերի և զինված հրոսակախմբերի կողմից: Վրաստանի Կառավարությունն իր պարտքը համարեց առաջին իսկ հնարավորության դեպքում վերջ դնել իրերի անտանելի դրությանը, համարելով,

որ Վրաստանի Կառավարության կողմից Ախալքալաքի գավառի զբաղեցնելու հարցը ո՛չ պատմական, ո՛չ քաղաքական և ո՛չ էլ բարոյական տեսակետներից չի կարող համարվել վիճելի:

Ընդորում, Վրաստանի Կառավարությունը մնում է լիակատար այն համոզմունքին, որ այդ պարագան և ոչ մի չափով չի կարող ազդել տարածքային սահմանազատմանը վերաբերող մեր բանակցությունների ընթացքի վրա, որոնք վարվում են այդ հարցի վերաբերյալ երկու կողմերի համար էլ երկկողմանի համաձայնությամբ՝ ընդունելի պայմանների հասնելու նպատակով:

Արտաքին Գործերի Մինիստր ԳԵԳԵՉԿՈՐԻ”:

Թիֆլիս, 7 դեկտեմբերի, 1918թ., № 5447.

/Օանդություն. Էրիվանի հետ կապի բացակայության պատճառով հեռագիրն ուղարկվել է ուշացումով/:

II

9 դեկտեմբերի 1918 թ., Ե.Պ.ԳԵԳԵՉԿՈՐՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ:

Էրիվան, Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցիչ
ՄԴԻՎԱՆՈՒՆ:

“ Ի լրացումն № 5447 հեռագրի, տեղեկացնում եմ. հենց նոր Ռազմական Մինիստրությունից տեղեկություն ստացվեց, որ Սանահինի մոտ հայտնվել են հայկական 4-րդ հրաձգային գնդի զորամասերը փոխգնդապետ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍՈՎԻ գլխավորությամբ, որոնք գրգռում են տեղական բնակչությանը, ստեղծում են թյուրիմացություններ, որոնք, ի վերջո, այսօր դրսևորվեցին Սանահին կայարանի գնդակոծությամբ: Ախալքալաքից Ռազմական Մինիստրությունը տեղեկություն է ստացել, որ Բոզդանովկա գյուղում տեղանշվել է հայկական հեծելավաշտի ներկայություն: Հաղորդելով այս մասին, խնդրում եմ ձեռնարկել քայլեր, որոնք կապահովագրեն մեզ անցանկալի միջադեպերից: Կրկնում եմ, Ախալքալաքի գավառի գրավումը ամենևին չի սասանում այն հիմքերը, որոնք կարող են դրվել երկկողմանի համաձայնության հիմքում: Այդ կապակցությամբ Դուք կարող եք տալ որոշակի հավաստիացումներ:

Արտաքին գործերի Մինիստր ԳԵԳԵՉԿՈՐԻ”:

9 դեկտեմբերի:

Վրաստանի Դիվանագիտական Ներկայացուցիչ

Ս. ՄԴԻՎԱՆՈՒ հեռախոսագիրը Ղարաքիլիսայում գտնվող
Ֆրանսիայի Ներկայացուցիչ Կապիտան ՊՈՒԱԴԵԲԱՐԻՆ:

“Ահա արդեն երեք օր է, որ ես գտնվում եմ Ղարաքիլիսա կայարանում, ի վիճակի չլինելով ոչ միայն առաջ գնալ դեպի Թիֆլիս, այլ նույնիսկ կապվել հեռագրակապով, որպեսզի տեղեկացնեմ Կառավարությանը այստեղ ընթացող իրադարձությունների մասին, որոնք, ըստ իս, ընդունում են աղետալի ընթացք: Ես իմ կողմից արեցի ամեն ինչ, որպեսզի համոզեմ Հայկական Կառավարությանը զերծ մնալ այնպիսի քայլերից, որոնք կարող են մեկընդմիջտ խաթարել դարերի ընթացքում ստեղծված հայ-վրացական բարի հարաբերությունները: Ի հակասություն իմ բոլոր ջանքերի, այսօր Ղարաքիլիսայի-Լոռվա ջոկատի հրամանատար ԴԲՈՅԻՑ՝ գեներալ ՄԻԼԻԿՅԱՆԻ փոխանցմամբ ստացա Մինիստր – Նախագահ ՔԱՋԱԶՆՈՒՆՈՒ ստորագրությամբ Վրացական Կառավարությանն ուղղված մի նոտա, որով պահանջվում է Բորչալուի գավառն անմիջապես մաքրել վրացական զորքերից: Նման պահանջը ես համարում եմ Վրաստանի ներքին գործերին միջամտելու գործողություն և առիթ՝ հետագա բարդացումների համար, ընդհուպ մինչև զինված ընդհարման:

Մինչդեռ, գյուղացիների ապստամբության հողի վրա Բորչալուի գավառում ծավալվող իրադարձությունները Վրացական և Հայկական Հանրապետությունների կողմից պետք է կարգավորվեն խաղաղ միջոցների ներազդման եղանակով, իսկ այն անձանց նկատմամբ, ովքեր մեղավոր են գյուղացիների ապստամբության բռնկման հարցում, ինչպես գյուղացիների, այնպես էլ Վրացական կառավարության պաշտոնյաների կողմից, պետք է կիրառվեն պատժամիջոցներ, քանզի հակառակն անխուսափելիորեն կհանգեցնեն բոլշևիզմի, ինչի մասին համոզում է Վրաստանի Կառավարության փորձը, որը ճնշել է բոլշևիկյան ելույթներ իր երեք գավառներում:

Վերջին իրադարձությունների մասին զրույց եմ ունեցել Արտաքին Գործերի Մինիստր ՏԻԳՐԱՆՅԱՆԻ հետ, նրան առաջարկություն անելով պատվիրակներ ուղարկել Վրաստանի Կառավարության հետ բանակցելու և Բորչալուի գավառով շրջելու՝ ընթացող իրադարձությունների պատճառների բացահայտման համար, սակայն մինչ օրս ՏԻԳՐԱՆՅԱՆԻՑ չունենմ ոչ մի պատասխան:

Ըստ այդմ, խնդրում եմ Ձեզ, եթե Դուք ունեք հնարավորություն և հարմար կհամարեք Ձեր համար, ազդել Հայաստանի Կառավարության վրա, որպեսզի վերջինս զերծ մնա Բորչալուի գավառի այն սահմանի այն հատվածն անցնելուց, որը սույն թվի մայիսից, թուրքերի հետ մարտեր մղելով, զբաղեցված է վրացական զորքերի կողմից և Հայկական Կառավարության պատվիրակների հետ՝ ինձ հետ միասին մեկնել Թիֆլիս հականարտության խաղաղ կարգավորման համար: Վերոշարադրյալին հարկ եմ համարում ավելացնել, որ Հայաստանի տարածքում Թիֆլիսի հետ կապի ընդհատման պատճառով Վրացական Կառավարությունը չի ստացել Հայկական Կառավարության կողմից և ոչ մի նախնական բողոք, կամ հայտարարություն Բորչալուի գավառի առնչությամբ և այդ նույն պատճառով էլ նա չունի այն տեղեկությունները, որոնք ես բերում եմ ինձ հետ: Դա ինձ իրավունք է տալիս ենթադրել, որ իմ ժամանելուց հետո բազմաթիվ իրադարձություններ կստանան իրական և պաշաճ լուսաբանում և նույն կերպ էլ Հայկական Կառավարությունը ավելի լիարժեք տեղեկացված կլինի, ինչն էլ հնարավորություն կտա երկու Կառավարություններին գալու համաձայնության: ՄԴԻՎԱՆԻ”:

Ղարաքիլիսա, 13 դեկտեմբերի, 1918թ.:

Միաժամանակ պ.ԳԵԳԵՉԿՈՐԻՆ հեռագրում է Էրիվան՝

ՄԴԻՎԱՆՈՒՆ:

13 դեկտեմբերի 1918թ. Ե.Պ. ԳԵԳԵՉԿՈՐՈՒ հեռագիրը

Էրիվան. Վրաստանի Դիվանագիտական

Ներկայացուցիչ ՄԴԻՎԱՆՈՒՆ:

“Ռազմական Մինիստրության կողմից ստացվել են հավաստի տե-

ղեկություններ, որ Սանահինի շրջանում վրացական զորամասերի դեմ մարտական գործողություններում մասնակցում են նաև հայկական զորամասեր, ընդ որում նրանց մասնակցությունը կրում է միանգամայն կազմակերպված բնույթ: Սանահինի շուրջ բոլոր վայրերում տեղակայված են զինվորական շտաբներ, որոնք գլխավորում են Հայաստանի Հանրապետությունում ծառայություն անցնող շտաբ-սպաներ և օբեր-սպաներ:

Ոչ մի բռնակցությունից մտքով չանցկացնելով, որ այդ ամենն իրականացվել է Հայաստանի Կառավարության հրամանով, այս տխուր միջադեպի, որի գոհ արդեն դարձել են տասնյակ վրացի զինվորներ և սպաներ, հնարավոր ծավալման պատճառով, ճակատագրական հետևանքներից խուսափելու նպատակով խնդրում եմ Ձեզ քայլեր ձեռնարկել, որպեսզի Հայկական Կառավարությունը ներազդման անհրաժեշտ միջոցներ ձեռնարկի այն զորամասերի ու անձանց նկատմամբ, որոնք իրենց անպատասխանատու և հանցավոր գործողություններով խաթարում են երկու հանրապետությունների բարեկամական հարաբերությունները:

Արտաքին Գործերի Մինիստր՝ ԳԵԳԵՉԿՈՐԻ”:

Թիֆլիս, 13 դեկտեմբերի, 1918թ., № 5572

Ռադիոգիր Էրիվանից, 11 դեկտեմբերի 1918թ.

/ստացված է դեկտեմբերի 13-ին/

Радиограмма изъ Эривани отъ 11 декабря 1918 г.

/получена 13 декабря/

Թիֆլիս. Վրաստանի Արտաքին Գործերի Մինիստրին:

Պատճենը՝ Հայաստանի Դիվանագիտական

Ներկայացուցչին:

“Հաղորդում եմ հեռագիրը, որը շտապ ուղարկվել է դեկտեմբերի 9-ին, սակայն տեղ չի հասցվել կապի ընդհատման պատճառով. “Ղարաքիլիսայի-Լոռվա ջոկատը հաղորդում է, զալարցիք երկրորդ օրն է, որ գտնվում են վրացական զորքերի հրետանային և գնդացրային կրակի տակ, որ Լոռվա տեղամասի հյուսիսային հատվածի հայկական գյուղերը

այդ գորքերի կողմից ենթարկվում են թալանի ու բռնությունների: Հայաստանի Կառավարությունը հաստատակամորեն բողոքում է Հայաստանի տարածք հանդիսացող, սակայն վրացական գորքերի կողմից բռնի կերպով գրավված տարածքում վրացական գորքերի կողմից իրականացվող սանձարձակությունների դեմ: Եթե Ձեր կողմից ձեռք չառնվեն այդ ամենին վերջ դնելու միջոցներ, Հայաստանի Կառավարությունն իր վրայից հանում է հետևանքների պատասխանատվությունը:

Արտաքին Գործերի Մինիստր՝ ՏԻԳՐԱՆՅԱՆ՝:

Էրիվան, 11 դեկտեմբերի, 1918 թ., № 6913:

Իսկ Գեգեչկորին կրկին հաղորդում է.

Ե.Պ.ԳԵԳԵՉԿՈՐՈՒ Էրկրորդ հեռագիրը, 13 դեկտեմբերի, 1918թ., Էրիվան:

Հայաստանի Արտաքին Գործերի Մինիստրին:

Պատճենը՝ Վրաստանի Դիվանագիտական

Ներկայացուցչին:

“ Ի պատասխան Ձեր № 6913 ռադիոհեռագրի հայտնում եմ հետևյալը. Վրացական Հանրապետության Կառավարությունը մեկ անգամ ևս հաստատում է իր անշեղելի ձգտումը բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ համաձայնության հիման վրա: Քանի դեռ այդ վեճերը նշված եղանակով լուծված չեն, Վրաստանի Կառավարությունը անթույլատրելի է համարում որևիցե միջամտություն իր ներքին գործերին: Ինչ վերաբերում է Ղարաքիլիսայի-Լոռվա ջոկատի հրամանատարի զեկույցին, ապա Վրաստանի Կառավարությունը հայտարարում է, որ այն բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Նոյեմբերի 9-ից սկսած մինչ օրս որոշ հայկական զորամասեր՝ հայկական ծառայության շտաբի օբեր-սպաների հրամանատարությամբ ոչնչացրել են գրեթե ամբողջ վրացական սահմանապահ ծառայությունը, գերեվարելով ողջ մնացածներին: Զոհերը հաշվվում են տասնյակներով: Արնահեղությունը դադարեցնելու նպատակով, մենք նոյեմբերի 11-Մանահին ուղարկեցինք մի պատվիրակություն, որի կազմում էին նաև Հայոց Ազգային Խորհրդի և-

րեք անդամներ: Վրացական Կառավարությունն իր կողմից որոշակիորեն պնդում է, որ բարձունքները գնդակոծվել են միայն նոյեմբերի 13-ին ժամը 12-ին: Հանուն երկու եղբայրական ժողովուրդների խաղաղ համակեցության, Վրացական Կառավարությունը պնդում է, որ անհրաժեշտ է ձեռք առնել միջոցներ արյունահեղությունը դադարեցնելու և այդ տխուր իրադարձությունների հրահրման հարցում մեղավոր բոլոր անպատասխանատու անձանց պատժելու ուղղությամբ: Իր կողմից Վրացական Կառավարությունը հայտարարում է, որ անհապաղ հրաման կտրվի դադարեցնել ռազմական գործողությունները, հենց որ դադարեցվի վրացական զորամասերի գնդակոծումը բարձունքներին դիրքավորվածների կողմից: Հակառակ դեպքում, Վրաստանի Կառավարությունը բարոյապես իրավացի կլինի իր վրայից հանել հետագա հետևանքների պատասխանատվությունը:

Արտաքին Գործերի Մինիստր ԳԵԳԵՉԿՈՐԻ”:

Թիֆլիս, 13 դեկտեմբերի, 1918թ., № 5599:

**Վրաստանի Արտաքին Գործերի Մինիստր Ե.Պ.Գեգեչկորու
ելույթը Վրաստանի Պառլամենտում,
14 դեկտեմբերի, 1918թ.**

Ե.Պ.ԳԵԳԵՉԿՈՐԻ. Քաղաքացիներ, ես ինձ թույլ կտամ Ձեզ գեկուցել տեղեկություններ, որոնց տիրապետում է Արտաքին Գործերի Մինիստրությունը: Վրաստանի Կառավարությունը բոլորին ներկայացրել է մի անսասան փաստաթուղթ այն մասին, որ ինքը կանգնած է միջազգային համերաշխության և խաղաղության հիմքերի վրա: Ես խոսում եմ այն նոտայի մասին, որով Վրաստանի Արտաքին Գործերի Մինիստրը առաջարկում էր Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին՝ բոլոր վիճելի հարցերը լուծել համաձայնությունների գալու միջոցով: Նուտան ենթադրում էր մեր փոխհարաբերությունների պարզաբանման համար հիմք ընդունել իրավարարության սկզբունքները: Ես չեմ կարող այս պահին Ձեր ուշադրությունը չհրավիրել Արտաքին Գործերի Մինիստրության այն քայլերին, որոնք ձեռնարկվել են, որպեսզի մեր հոչակած խաղաղասիրության

սկզբունքը չլիներ ընդամենը մի պարզ հայտարարություն: Նոյեմբերի 13-ին մենք ստացել ենք Հայաստանի Կառավարությանը կից մեր դիվանագիտական ներկայացուցիչ ՄԴԻՎԱՆՈՒՑ հաղորդում այն մասին, որ Հայաստանի Կառավարությունը սկզբունքորեն հայտնել է իր համաձայնությունը մասնակցելու համաժողովին, սակայն անհրաժեշտ է համարում վաղօրոք պայմանավորվել համաժողովի ծրագրի, նրա անցկացման ժամանակի և վայրի վերաբերյալ: Պետք է ասեմ Ձեզ, որ այդ համաձայնությունը մեր իրականացրած այն քայլերի արդյունքն էր, որոնք ուղղված էին Անդրկովկասյան համաժողովի գումարման հետ կապված ի հայտ եկող թյուրիմացությունների պարզաբանմանը: Դուք երևի հիշում եք, որ ընդդեմ այդ համաժողովի գումարման, հայերը ներկայացրել էին ձևական բնույթ կրող առարկություններ: Հանուն գործի շահերի մենք ընդառաջ գնացինք Հայկական Կառավարության առաջարկներին և մեր դիվանագիտական ներկայացուցիչ միջոցով նրան հաղորդեցինք մեր համաձայնության մասին և խնդրեցինք, որքան որ հնարավոր է, շտապ ուղարկել իրենց պատվիրակներին: Մենք ենթադրում էինք, որ Հայաստանի Կառավարության առաջարկությունն ընդունելով, մենք ստացել ենք նրա համաձայնությունը համաժողովի գումարման վերաբերյալ:

Համաժողովի գումարման օր էր նշանակված նոյեմբերի 10-ը, սակայն այն տեղափոխվեց նոյեմբերի 14-ին: Քանի որ Հայաստանի Կառավարության վերոնշյալ սկզբունքային համաձայնությունը մենք ստացել էինք նոյեմբերի 13-ին, համաժողովը տեղափախվեց նայեմբերի 20-ին: Սակայն Հայկական Կառավարության պատվիրակները չժամանեցին նաև մինչև նոյեմբերի 20-ը, ուստի համաժողովը ստիպված տեղափոխվեց նոյեմբերի 30: Այդ ժամանակահատվածում մենք անընդհատ նոտաներ էինք փոխանակում:

Նոյեմբերի 17-ին համաժողովի գումարման վերաբերյալ ես մանրամասն զեկույց ներկայացրեցի Կառավարությանը: Նույն օրը ես ստացա Հայկական Կառավարության նոտան, որտեղ հաստատակամորեն ներկայացված էր համաժողովին մասնակցելու սկզբունքորեն համաձայն լինելը, չնայած, որ Հայկական Կառավարությունը թերահավատորեն էր

վերաբերվում համաժողովի միջոցով տարածքային վեճի լուծման հնարավորությանը:

ՄԴԻՎԱՆԻՆ խնդրում էր համաժողովի բացումը տեղափոխել նոյեմբերի 27-ին, մենք տեղափոխեցինք նոյեմբերի 30-ին: Միաժամանակ, նոյեմբերի 22-ին մենք տեղեկացրել ենք Հայկական Կառավարությանը, որ մեր կողմից գործի են դրվել բոլոր միջոցները համաժողովի գումարման համար և վստահություն ենք հայտնել, որ Հայաստանի Կառավարությունը կուղարկի իր պատվիրակներին: Դեկտեմբերի 2-ին և 7-ին մենք այնտեղ ենք ուղարկել նաև համապատասխան հեռագրեր: Էրիվանից ստացված հեռագրերը թվագրված են դեկտեմբերի 4-ին, 5-ին և 6-ին: Այդ հեռագրերն առնչվում են մեր գործերի կողմից Ախալքալաքը գրավելուն: Դեկտեմբերի 5-ի հեռագրում Հայկական Կառավարությունն իր բողոքը հայտնելով Ախալքալաքի գրավման վերաբերյալ, հաղորդում էր, Հայաստանի Արտաքին Գործերի Մինիստր ՏԻԳՐԱՆՅԱՆԸ գալիս է վիճելի հարցերին լուծումներ գտնելու համար:

Մենք ուղարկեցինք հիմնավորված պատասխան մի հեռագիր, ու նշել էինք, որ Վրաստանի Կառավարությունը, մնալով իր նախկին դիրքերում, անհրաժեշտ է համարում բոլոր վիճելի հարցերը լուծել համաձայնության գալու միջոցով և անհետաձգելի է համարում համաժողովի գումարումը: Դեկտեմբերի 8-ին Ռազմական Մինիստրը ինձ տեղեկացրեց Սանահինի տիրուր միջադեպերի մասին: Դեկտեմբերի 9-ին ես հեռագրել եմ ՄԴԻՎԱՆՈՒՆ այդ իրադարձությունների մասին, ընդ որում, հաղորդելով, որ ըստ մեր տեղեկությունների, միջադեպին մասնակցել են հայկական կանոնավոր զորամասեր: Այդ հեռագրի պատասխանը ես չունեմ, քանզի Սանահինից այն կողմ հեռագրակապը Էրիվանի հետ ընդհատված է: Սակայն մենք ունենք տեղեկություններ, որ ՄԴԻՎԱՆԻՆ հայկական պատվիրակության հետ մոտեցել է Սանահինին, սակայն ստիպված է եղել հետ դառնալ դեպի Ղարաքիլիսա: Երեկ ես ավելի կտրուկ բովանդակությամբ հեռագիր եմ հղել և խնդրել եմ Հայկական Կառավարությանը՝ համապատասխան միջոցներ ձեռք առնել: Բայց ես շատ քիչ հույսեր ունեմ, որ ռադիոհեռագիրը հասել է Էրիվան: Ընդ որում, տվյալ պարագայում անհրաժեշտ եմ համարում հայտարարել, որ ես որ-

կիցե հիմքեր չունեն ենթադրելու, որ Հայկական Կառավարության և Սանահինի դեպքերի միջև գոյություն ունի որևիցե կապ: Մենք խորապես համոզված ենք, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք այն անպատասխանատու խմբավորումների հետ, որոնք ոչ մի առնչություն չունեն Հայաստանի Կառավարության հետ /աղմուկ դահլիճի աջ մասում/: Ես չունեմ ո՛չ բարոյական և ո՛չ էլ քաղաքական իրավունք այս հատվածից պնդել հակառակը: Ես կասեմ ավելին: Մեր Կառավարությունը կձեռնարկի անհետաձգելի միջոցներ, որպեսզի կանխվի այն սահավիրքը, որ կախված է մեր, նաև հայ ժողովրդի գլխին, եթե շուտափույթ չվերացվի սանահինյան միջադեպը: Դրա հետ մեկտեղ, Վրաստանի Կառավարությունը հայտարարում է իր կողմից ձեռք են առնվել բոլոր միջոցները, որպեսզի բոլոր վիճելի հարցերի լուծմանը նվիրված համաժողովը կայանա: Այդ առնչությամբ մեր Կառավարությունն իր պարտքը կատարել է: Վրաստանի Կառավարությունը, անկեղծորեն կիսելով պատասխանատու հայկական կուսակցությունների այն քայլերը, որոնք միտված են Հայաստանի Հանրապետության անկախության ամրապնդման ուղղությամբ, ենթադրում է, որ նույնպիսին պետք է լինի նաև Հայկական Կառավարության վերաբերմունքը Վրաստանի անկախության նկատմամբ:

Մենք արել ենք այն ամենը, ինչ հնարավոր էր անել դիվանագիտական ճանապարհով, և, եթե այդ ճանապարհը մեզ չի բերելու միջադեպի վերացմանը, այդ դեպքում դիվանագիտությունը ստիպված կլինի լռել: /Ըստ Վրացական Հեռագրական Գործակալության հաշվետվության/:

№ 243.

Վրաստանի Պառլամենտի ընդունած

ԱՆՑՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ

14 դեկտեմբերի 1918 թ.

“Լսելով Սանահինի և Վորոնցովկայի մատույցներում ծավալված իրադարձությունների մասին կառավարական հաղորդումը, Պառլամենտը լիահույս է, որ Կառավարությունը ձեռք կառնի բոլոր միջոցները պետությունը թշնամիներից պաշտպանելու համար, որոնց միակ ցանկությո-

յունն է հրահրել արյունալի ընդհարում երկու հարևան ժողովուրդների միջև և անիշխանություն սփռել մեր երկրում, դրանով իսկ հող նախապատրաստել մեր անկախության և Դեմոկրատական Հանրապետության կործանման համար: Կառավարությունը պետք է անցնի իր հերթական անելիքներին”:

Հեռագիր Էրիվանից, 15 դեկտեմբերի 1918թ.:

Թիֆլիս: Արտաքին գործերի Մինիստրին: Պատճենը՝

Հայաստանի Դիվանագիտական Ներկայացուցչին:

“Հենց նոր ստացա Ձեր №5599 ռադիոհեռագիրը, որն ուղարկվել է ի պատասխան իմ հղած դեկտեմբերի 9-ի հեռագրին: Ամսի 12-ին իմ Կառավարության կողմից Ձեզ ուղարկվել է երկրորդ նոտան՝ առաջարկությամբ, անհապաղ դուրս բերել վրացական զորքերը Բորչալուի գավառի հայկական մասից: Հետագա արյունահեղությունը կանխելու համար դա միակ նպատակահարմար միջոցն է: Իմ Կառավարության առաջարկությունն ամեննին էլ չի հանդիսանում միջամտություն Վրաստանի ներքին գործերին, քանզի, ինչպես քանիցս տեղեկացրել ենք Ձեզ, այդ շրջանը, անտարակույս, չի մտնում Վրաստանի տարածքի մեջ, կազմելով Հայաստանի անկապտելի մաս, որը բռնի կերպով զբաղեցվել է վրացական զորքերի կողմից: Հայաստանի Կառավարությունը, ելնելով իր ծայրահեղ խաղաղասիրության դիրքորոշումից, ժամանակավորապես հաշտվել էր այդ իրավիճակի հետ, հույս ունենալով, որ Վրաստանի Կառավարությունը զերծ կմնա ագրեսիվ գործողություններից տեղի բնակչության նկատմամբ, որը չի ցանկանում միանալ Վրաստանին: Մինչդեռ, Վրաստանի Կառավարությունը ոչ միայն ընդառաջ չգնաց սահմանների հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու մեր ցանկությանը, այլ, իր կողմից գրաված ուրիշի տարածքն իր պետության կազմում ամրագրելու նպատակով, լայնածավալ արշավ սկսեց տեղական բնակչության նկատմամբ, ինչը զուգազգցվեց դաժան և արյունալի բռնություններով, ընդհուպ՝ մինչև հրետանային կրակով հայկական բնակավայրերի ավերումը: Հայաստանի Կառավարությունը չի կարող անհաղորդ դիտողի դերում մնալ, երբ

հարևան երկրի զորքերը վայրագություններ են սանձագերծում Հայաստանին պատկանող տարածքներում և գնդակահարում են Հայաստանի քաղաքացիներին: Իմ Կառավարությունը, ջերմորեն ցանկանալով կանխել հետագա բարդացումները, ցանկանում է հավատալ, որ Ձեր Կառավարությունը, հարգելով Հայաստանի բնակչության ցանկությունն ու իրավունքները, կշտապի սեփական նախաձեռնությամբ հեռացնել իր զորքերը և հնարավորություն կտա Ձեր պատվիրակությանը շփման մեջ մտնել մեր հետ, վերականգնել հեռագրակապը ու դրանով իսկ ամրապնդել երկու հարևան և բարեկամ պետությունների խաղաղ համակեցությունը:

Արտաքին Գործերի Մինիստր՝ ՏԻԳՐԱՆՅԱՆ”:

Էրիվան, 15 դեկտեմբերի, 1918թ., № 912:

ԳԵԳԵԶԿՈՐԻՆ պատասխանում է.

Ե.Պ. ԳԵԳԵԶԿՈՐՈՒ հեռագիրը, 15 դեկտեմբերի, 1918թ.:

Էրիվան, Հայաստանի Արտաքին Գործերի Մինիստրին:

Պատճենը՝ Վրաստանի Դիվանագիտական

Ներկայացուցչին:

“ Մենք Ձեզանից ստացել ենք միայն մեկ՝ № 6913 հեռագիրը, այլ հեռագրեր Վրաստանի Կառավարությունը չի ստացել: Մեր Կառավարությունն արել է ամեն ինչ, որպեսզի վիճելի հարցերը լուծում ստանան պայմանավորվածությունների հիման վրա: Այն հրավիրել է Հայաստանի ներկայացուցիչներին մասնակցել Անդրկովկասյան Համաժողովին, իսկ երբ , Ձեզ հայտնի պատճառաբանություններով, Համաժողովը դիտվեց որպես անընդունելի, Վրաստանի Կառավարությունը Ձեզ ընդառաջ գնաց և մեկ ամիս առաջ Հայաստանի Կառավարությանը տեղյակ պահեց, որ մենք համաձայն ենք նախնական բանակցություններ վարել Հայաստանի ներկայացուցիչների հետ բոլոր վիճելի հարցերի շուրջ: Եթե կողմերի պատվիրակները չեն հանդիպել, ապա դա ամեննին Վրացական Կառավարության մեղքով չէ: Ամբողջ աշխարհի առաջ Վրաստանի Կառավարությունը բացեիբաց հայտարարում է, որ եղբայրասպան ընդ-

հարումներին վերջ տալու նրա բոլոր ջանքերն անցան ապարդյուն՝ Հայկական Կառավարության կողմից անհասկանալի ձգձգումների պատճառով: Առանց որևիցե հիմքի, երկու ժողովուրդների եղբայրասպան պատերազմի հորձանուտի մեջ ներքաշվելու սահեղ վտանգի առաջ կանգնած, Վրաստանի Կառավարությունը վճռականորեն հայտարարում է, որ երկու բարեկամ ժողովուրդների միջև չկան այնպիսի հարցեր, որոնք չեն կարող չստանալ խաղաղ լուծում, Վրացական Կառավարությունը մեկ անգամ ևս առաջարկում է դադարեցնել թշնամական գործողությունները և, հաստատելով դեկտեմբերի 13-ի № 5599 հեռագիրը, հայտարարում է, որ ոչ հայկական գյուղերի գնդակոծում, մեր կողմից ոչ մի այլ ելույթներ, որոնց մասին Դուք հիշատակում եք № 912 ռադիոգրում, տեղ չեն գտել մինչև դեկտեմբերի 13-ը, երբ մենք ստիպված ենք եղել միջոցներ ձեռք առնել ընդդեմ դեկտեմբերի 9-ին սկսված հայկական զորամասերի հարձակողական գործողությունների: Միանգամայն որոշակիորեն հայտարարելով վերը շարադրվածի մասին, Վրացական Կառավարությունն իր պարտքն է համարում վերահաստատել իր առաջարկությունը թշնամական գործողությունների դադարեցման վերաբերյալ, զբաղեցնել հին սահմանները և վիճելի հարցերը համաձայնության միջոցով լուծելու համար հրավիրել հայ-վրացական համաժողով, իսկ նման համաձայնության չհասնելու պարագայում, դիմել իրավարար վճռի կայացմանը: Հակառակ դեպքում, Հայաստանի Կառավարության վրա է ընկնելու երկու հանրապետությունների համար աղետալի հետևանքների պատասխանատվությունը:

Արտաքին Գործերի Մինիստր ԳԵԳԵՉԿՈՐԻ”:

Թիֆլիս, 150դեկտեմբերի 1918թ., № 5627

Վրացական Կառավարության Ներկայացուցչի Դիմումը Համաձայնության Տերությունների Ներկայացուցիչներին

“Կառավարությանս հանձնարարությամբ պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնել հետևյալը. Դեկտեմբերի 9-ին մեր սահմանապահ պահակազորը, որ կանգնած է բարեկամ Հայաստանի հետ սահմանին՝ Սա-

նահինում և Վորոնցովկայում ենթարկվել է դավադիր հարձակման հայկական կանոնավոր զորամասերի կողմից: Սահմանապահ պահակազորը մասամբ ոչնչացված է, մասամբ գերեվարված, հեռագրային հաղորդակցումն ընդհատված է, երկաթուղային գծերը՝ քանդված: Մտքով անգամ չանցկացնելով, որ այդ ելույթներն իրականացվել են Հայկական Կառավարության տեղեկությամբ, առավելևս՝ համաձայնությամբ, Վրաստանի Կառավարությունը հեռագրակապով դիմել է Հայաստանի Կառավարությանը, առաջարկությամբ՝ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր արյունահեղությունը արնահեղությունը կանխելու համար, սակայն այդ միջոցները ոչ միայն ձեռք չեն առնվել, այլ ռազմական գործողությունները զարգանում են և մենք արդեն ստացել ենք Հայկական Կառավարության հայտարարությունները, որոնք վկայում են, որ այդ դավադիր հարձակումն իրականացվել է Հայկական Կառավարության ուղղակի ցուցումով: Դեպքի վայրն ուղարկած մեր պատվիրակությունը, որի կազմում էին նաև Վրաստանի Հայոց Ազգային Խորհրդի ներկայացուցիչները, քիչ էր մնում, որ ինքը դառնար ծավալված իրադարձությունների գոհ: Վրացական Կառավարությունը դեռևս մեկ ամիս առաջ առաջարկել էր բոլոր վիճելի խնդիրների լուծման համար հրավիրել Անդրկովկասյան Համաժողով, սակայն Հայկական Կառավարությունը խուսափում էր այդ համաժողովին մասնակցելուց՝ պնդելով նախնական հայ-վրացական համաժողովի գումարման վրա: Ընդառաջ գնալով Հայաստանի ցանկություններին, Վրաստանի Կառավարությունը համաձայնվեց այդ առաջարկությանը, բոլոր վիճելի հարցերի խաղաղ լուծման հիմքում դնելով համաձայնության գալը, կամ, եթե դա չի հաջողվում՝ միջազգային իրավաբար ատյանի միջոցով: Օր օրի մենք սպասում էին Հայաստանի պատվիրակության ժամանելուն, սակայն դրանք մինչ օրս դեռևս չեն եկել, իսկ դրա փոխարեն, մենք այժմ ունենք միջազգային նորմերի հետ ոչ մի աղերս չունեցող ուխտադրուժ մի հարձակում: Ընդունելով վերոնշյալին համաձայն, որ մեր կողմից սպառված են երկու բարեկամ և հարևան հանրապետությունների համար էլ ամոթալի ու կործանա-

րար արյունահեղությունը կանխելու բոլոր միջոցները, Վրացական Կառավարությունն իր պարտքն է համարում ի լուր աշխարհի հայտարարել, որ գործնական բողոքելով Հայկական Կառավարության գործողությունների դեմ, նա իր վրայից հանում է երկու եղբայր ժողովուրդների արյունը թափելու կործանարար հետևանքների պատասխանատվությունը, միաժամանակ շեշտելով այդ երկու ազգերի խաղաղ գոյակցությունը, հանդիսանալով երկու երկրների բարգավաճման գրավականը, դարերի ընթացքում մինչ օրս երբևիցե չի խաթարվել, և այսօրվա իրադարձությունների ամբողջ պատասխանատվությունը իր ողջ ծանրությամբ ընկնում է Հայկական Կառավարության վրա:

Արտաքին Գործերի Մինիստր՝ ԳԵԳԵՉԿՈՐԻ”:

Թիֆլիս, 15 դեկտեմբերի, 1918թ.:

...Իսկ ռազմական գործողությունները շարունակվում էին: Հայկական գորքերը շարժվում էին դեպի Թիֆլիս: Քանի դեռ ռազմական գործողությունները ծավալվում էին նեղ կիրճերում, վրացիների կողմից դիմադրությունը բացակայում էր: Վրացիները պատրաստվում էին հայկական գորքին դիմավորել հարթավայրում՝ Թիֆլիսից 3 ժամ ընթացքի հեռավորության վրա: Իսկ այդ միջոցին դաշնակիցների ներկայացուցիչները դիմեցին պատերազմող կողմերին և առաջարկեցին իրենց միջնորդական ծառայությունները: Հայաստանի իշխանությունն ընդունեց այդ միջնորդությունը: Այն ընդունեց նաև Վրացական Կառավարությունը: Ահա Վրացական Կառավարության ՈՐՈՇՄԱՆ տեքստը.

Վրացական Կառավարության Որոշումը

21 դեկտեմբերի, 1918թ.:

Վրացական Կառավարությունը, լսելով Կառավարության Նախագահի զեկուցումը նրա և Համաձայնության Տերությունների ներկայացուցիչների հետ ունեցած բանակցությունների վերաբերյալ, ծանոթանալով այն

հեռագրի տեքստի հետ, որն առաջարկվում է ուղարկել Էրիվանի Կառավարությանը, ՈՐՈՇԵՑ.

1. Վրացական Կառավարությունը միանգամայն բավարարված ընդունում է Դաշնակիցների ներկայացուցիչների նախաձեռնությունը Վրաստանի և Հայաստանի միջև եղբայրասպան պատերազմին վերջ դնելու համար:
2. Վրացական Կառավարությունը միանգամայն բավարարված ընդունում է առաջարկվող հեռագրի տեքստը հետևյալ փոփոխություններով.
 - A. Վրացական գորքերի կողմից մարտական գործողությունների դադարեցման վերաբերյալ հրամանը գորքերի հրամանատարին պետք է տա Վրաստանի Կառավարությունը:
 - B. Հենց որ երկու կողմից դադարեցվեն ռազմական գործողությունները, հայկական գորքերը պետք է մաքրեն Բորչալուի գավառում այն դիրքերը, որոնք նրանք զբաղեցնում են, այն պայմանով, որ որոշակի ժամկետներում այդ գորքերը պետք է զբաղեցնեն այն դիրքերը, որոնք նրանք զբաղեցնում էին մինչև մարտական գործողությունների սկիզբը, այդպիսով վերականգնելով երկու պատերազմող կողմերի...[տեքստը խզված է]..., միաժամանակ, Վրացական Կառավարությունն իր վրա պարտականություն է վերցնում երաշխավորել բնակչության անձնական և ունեցվածքային անվտանգությունը:
 - C. Խառը Հանձնաժողովը, որի ստեղծումը նախատեսվում է հեռագրում, այլ հարցերից զատ, պետք է որոշի, թե կողմերից որն է հանդիսանում հարձակվողը, որպեսզի այդ կողմն էլ, որպես մեղավոր, հատուցի մյուս կողմի կրած բոլոր վնասները և վերականգնի այն բոլոր ծախսերը, որ իրականացրել է վերջինս պաշտպանվելու անհրաժեշտությունից ելնելով:

Դեկտեմբերի 25-ին Կովկասում Դաշնային Տերությունների ներկայացուցիչների կողմից դիմում հղվեց երկու պատերազմող կողմերին:

Դաշնային Հանձնաժողովի Դիմումը հայկական և վրացական գորքերի Գլխավոր հրամանատարներին:
25 դեկտեմբերի, 1918թ.:

“Համապատասխան այն համաձայնության, որին այսօր՝ 1918թ. դեկտեմբերի 25-ին, եկել են Գեներալ-Մայոր Սըր Ուիլյամ Ռայքրոֆտը և Կովկասում Ֆրանսիական առաքելության հրամանատար, Գնդապետ Շարդինյին՝ Վրացական Հանրապետության Նախագահ պ-ն Ժորդանիայի ներկայությամբ, ՈՐՈՇՎԱԾ Է.

Ռազմական գործողությունները հայերի և վրացիների միջև անհապաղ պետք է դադարեցվեն և Խառը Հանձնաժողովը, որը կազմված է Բրիտանական և Ֆրանսիական բանակների սպաներից, Վրացական Կառավարության ներկայացուցիչների ուղեկցությամբ, մեկնում է ռազմաճակատ, որպեսզի բացատրի համաձայնության մանրամասները և հետևի դրանց կատարմանը՝ համաձայն այն հեռագրի, որն Էրիվան է ուղարկվել ներքոստորագրյալների կողմից:

Ստորագրված է Թիֆլիսում, 25 դեկտեմբերի, 1918թ.:

Ռայքրոֆտ՝ Գեներալ- Մայոր:

Ժորդանիա՝ Նախագահ:

Շարդինյի՝ Գնդապետ:

Պարտադիր պետք է թարգմանվի ֆրանսերեն և ռուսերեն: Ամեն լեզվով թարգմանված տեքստերի մեկական օրինակ պարտադիր պետք է ստորագրվի:

Պ-ն Ջամալյանը համաձայն չէ վրացական գորքերի կողմից Ախալքալաքի գավառը գրավելու հարցի հետ:

ՌԱՅՔՐՈՖՏ:

ՇԱՐԴԻՆՅԻ”:

Իրենց կողմից հեռագիր էր ուղարկվել Էրիվան:

Հեռագիր՝ Հայաստանի Հանրապետության ՆԱԽԱԳԱՀԻՆ:

“ Տվյալ պահին Թիֆլիսում գտնվող Մեծ Բրիտանիայի Գեներալ-Մայոր ՌԱՅՔՐՈՖՏԸ և Ֆրանսիայի ռազմական առաքելությունը գլխավորող

Գնդապետ ՇԱՐԴԻՆՅԻՆ, Համաժողովում՝ Վրացական Հանրապետության Նախագահ ԺՈՐԴԱՆԻԱՅԻ հետ համատեղ՝ Պարոն ԶԱՄԱԼՅԱՆԻ ներկայությամբ, որոշել են, որ ռազմական գործողությունները պետք է անհապաղ դադարեցվեն:

Չնայած Պարոն ԶԱՄԱԼՅԱՆԻ բողոքներին, Գեներալ ՌԱՅՔՐՈՖՏԸ, Գնդապետ ՇԱՐԴԻՆՅԻՆ և Վրաստանի Հանրապետության Նախագահ Պարոն ԺՈՐԴԱՆԻԱՆ որոշեցին, որ.

Խառը հանձնաժողովը, որի կազմում են անգլիական, ֆրանսիական և հայկական կողմերի ներկայացուցիչները, պետք է հնարավորինս արագ մեկնի ռազմաճակատ, որպեսզի կյանքի կոչի համաձայնության հետևյալ պայմանները.

Հանձնաժողովը որոշում է այն կայագրների թվաքանակը, որոնք պետք է լքեն վրացական զորքերը Բորչալուի գավառի հյուսիսային, իսկ հայկական զորքերը՝ հարավային մասերում, ինչպես նաև վրացիների կողմից՝ Ախալքալաքի գավառում: Կայագրները պետք է փոքրաթիվ լինեն: Վրացական զորքերը կկանգնեն այն գծի վրա, որը զբաղեցնում են սվյալ պահին, հայկական զորքերը պետք է նահանջեն դեպի Դսեղ-Ջալալ-աղլի թուրքական գիծը: Բրիտանական պահակակետերը կտեղակայվեն երկաթգծի երկայնքով՝ վրացական և հայկական զորքերի արանքում, այդ վիճարկվող տարածքի վարչակազմը կունենա խառը կազմ: Ախալքալաքի գավառում վրացական վարչակազմին հետևելու է Դաշնակիցների ստեղծած Հանձնաժողովը, որի կազմի մեջ ընդգրկվելու են տեղի հայ բնակչության և մահմեդականության ներկայացուցիչներ: Երկու պետությունների՝ Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչները մոտ ժամանակներում ուղևորվելու են Եվրոպա, որտեղ սահմանների վերաբերյալ ամբողջական հարցին լուծում են տալու Մեծ Տերությունները:

Իրականը ստորագրել են՝ ՌԱՅՔՐՈՖՏ, ՇԱՐԴԻՆՅԻ, ԺՈՐԴԱՆԻԱՆ”
Թիֆլիս, 25-ը դեկտեմբերի, 1918 թ.:

Իսկ Հայկական զորքի Հրամանատարի հետ տեսակցելու նպատակով, բախման վայր ուղարկված հանձնաժողովը հեռագրում էր Ղարաբաղի լիսայից.

ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՌԱԴԻՈԳԻՐԸ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ:

Թիֆլիս: Բրիտանական Առաքելությանը, Մինիստրների
Խորհրդի Նախագահին, Արտաքին և
Ռազմական Գործերի Մինիստրներին:

“Հայկական Կառավարությունը համաձայն է ռազմական գործողությունների դադարեցմանն ու գորքերի ետ քաշմանը, ինչպես որ դա որոշված է Գեներալ Ռայքրոֆտի կողմից: Պատերազմող երկրների ներկայացուցիչների համաձայնությամբ, ռազմական գործողությունները դադարեցվելու են 1918թ. դեկտեմբերի 31-ին ժամը 24-ին: Դեպի նոր զիծ Հայկական զորքի նահանջի օրը կորոշվի Թիֆլիսում: Հայկական Կառավարությանը մինչև վերջ պարզ չեն Գեներալ Ռայքրոֆտի առաջարկության որոշ կետեր, բայց սկզբունքորեն այն համաձայնվեց և ստորագրեց պայմանը: Նա ցանկանում է ստանալ ավելի հստակ բացատրություններ և դրա համար լիազորել է երկու պատվիրակի՝ մեկը քաղաքացիական, մյուսը՝ զինվորական, որոնք ինձ հետ գալիս են Թիֆլիս, որպեսզի տեղում Դաշնակիցներից ստանան վերջնական պարզաբանումներ այդ հարցերի վերաբերյալ:

Ուսումնասիրելով այդ հարցերը, ես միանգամայն համաձայն եմ Հայկական Կառավարության հետ, որ այդ հարցերի որոշ մանրամասներ կարիք ունեն առավել հստակ բացատրության, որպեսզի ապահովվի խաղաղ և արդյունավետ աշխատանքը Գեներալ ՌԱՅԲՐՈՖՏԻ առաջարկած պայմանների հիման վրա: Հայաստանի Կառավարությունը ցուցաբերեց շատ լայն մեծահոգություն և խաղաղության անկեղծ ցանկություն:

Դաշնային Տերությունների Հանձնաժողով:

Հանձնաժողովի նախագահ՝ ԴՈՒԳԼԱՍ:

Ղարաքիլիսա, 30 դեկտեմբերի, 1918թ.: Վիցերու-Կապիտան”:

Դեկտեմբերի 31-ի գիշերը պատերազմն ավարտվեց: Այն տևեց երկու շաբաթ: Երկու կողմերն էլ իրենց համարում էին հաղթանակած: 1919թ. հունվարի 5-ին Վրացական Պառլամենտը ընդունեց հետևյալ ԲԱՆԱ-

Ձե՛ՎԸ, որը վերջնականորեն ազդարարեց Հայաստանի հետ Վրաստանի ռազմական բախման ավարտը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԱՆՑՄԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ

5 հունվարի, 1919թ.

“Հայաստանի դեմ ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ Կառավարության զեկուցման առնչությամբ Վրաստանի Պառլամենտը արձանագրում է հետևյալը. պատերազմից խուսափելու և Հայաստանի հետ վիճելի հարցերի խաղաղ լուծման համար Կառավարությունը գործի դրեց իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները, սակայն, երբ Հայաստանի Կառավարությունը, չնայած մեր խաղաղ նպատակներին, փորձ արեց զենքի ուժով մեր վզին փայթաթել իր ցանկությունները և մեր երկրի վրա շարժեց հայկական զորքերը, Կառավարությունը կարողացավ ոտքի հանել ժողովրդի ամբողջ զինված ուժերը և արժանավոր ձևով դիմավորել մեր երկրի վրա հարձակված թշնամուն:

Հակառակորդին պարտության մատնելուց հետո, կոտրելով Հայաստանի Կառավարության բռնի նկրտումները և ստիպելով նրան ընդունել զորքերը դեպի հին սահմանագիծ ետ քաշելու պայմանները, Կառավարությունը, ճշգրիտ քաղաքական հաշվարկի ծիրում, ընդունեց ռազմական գործողությունների դադարեցման և խաղաղ բանակցություններ սկսելու առաջարկը՝ Վրաստանի Հանրապետության համար առավել նպաստավոր միջազգային հարաբերությունների և նրա դեմոկրատական քաղաքականության իրագործման պայմաններում: Հաշվի առնելով վերոնշյալը, Պառլամենտը ճիշտ է համարում Կառավարության գործունեությունը թե՛ պատերազմը վարելու, թե՛ ռազմական գործողությունների դադարեցման հարցերում և անցնում է իր հերթական գործերին”:

Մենք այստեղ միտումնավոր ներկայացրեցինք մի շարք փաստաթղթերի բնագրերը, որպեսզի դրանց միջոցով բնութագրենք Կովկասում ամենաբարեկամ հարևանների՝ վրացիների և հայերի փոխհարաբերությունները: Այդ փաստաթղթերից պարզ երևում է, թե ինչպիսի փոխադարձ

անվստահություն էր տիրում Անդրկովկասյան հանրապետությունների անկախ գոյության առաջին իսկ օրերից: Այդ անվստահությունը իրենով թունավորում էր Հայաստանի և Ադրբեջանի, Վրաստանի և Ադրբեջանի փոխհարաբերությունների պատմության հետագա ամբողջ ընթացքը: Այսպես թե այնպես, ռազմական բախումը Հայաստանի և Վրաստանի միջև ավարտվեց. Սկսվեց խաղաղ համաժողովը, որը ձգվեց ամիսներ:

Այսպիսով, երեք կարևորագույն հարցերից՝ Փարիզ մեկնող պատվիրակության կազմավորումը, հայ-վրացական պատերազմը և պայքարն ընդդեմ սովի ու համաճարակի, առաջին երկուսը ավարտված էին և Կառավարության ու Ազգային ժողովի ամբողջ ջանքերն ուղղված էին սովի և համաճարակի դեմ պայքարին: 1919թվականը սկսվեց չափազանց տխուր. հունվարի առաջին օրերին բժավոր տիֆից վախճանվեց Արամը: Աշնանը նույն տիֆից Թիֆլիսում վախճանվեց խոշոր հայ քաղաքական գործիչ Ռոստոմ Զորյանը: Կարճիկյան, Ռոստոմ, Արամ՝ հեռացան կառավարող կուսակցության ուժերը: Դա սուսկալի հարված էր մեր համար: Արամի թաղումը կրում էր համազգային սգի բնույթ: Ժողովրդական կրթության մինիստր Նիկոլ Աղբալյանը հզոր մի ճառ արտասանեց: Կառավարության անունից ես խոսեցի Պառլամենտի պատշգամբից: Արամի մահից հետո ես ստանձնեցի նաև նրա մինիստրության ղեկավարումը: Մեր բոլոր ջանքերը բաշխված էին երկու ուղղությամբ. կերակրել ու բուժել մեր ժողովրդին և մտածել մեր պետության սահմանների ընդլայնման մասին: Այդ երկու աշխատանքը կլանեցին մեր ամբողջ ուշադրությունը. Դրանք մեր ներքին կյանքի արմատական հարցերն էին: Արտաքին կյանքի հարցերից առաջնային էր հանդիսանում Հայաստանի համար անհրաժեշտ ապրանքներ՝ գլխավորապես հացի և ներտնային առարկաների ձեռք բերման համար Ամերիկա հատուկ առաքելություն ուղարկելու հարցը:

Մյուս կողմից, պետական կյանքի ամբողջ մեխանիզմը կազմակերպում էր պահանջում. փոստ, հեռագրակապ, երկաթգիծ, դպրոցներ, դատարան՝ դրանք բոլորը սպասում էին հաստատությունների, անձանց, օրենքների և շրջաբերականների: Սկսվում էր մեր պատմության կազմակերպական փուլը:

Անձամբ ես, լինելով կրթությամբ բժիշկ և կյանքիս ընթացքում տեսնելով տիֆի, խոլերայի, ժանտախտի շատ համաճարակներ, ու քանիցս մասնակիցը լինելով դրանց դեմ կազմակերպած պայքարի, կարող եմ կտրականապես հայտարարել, որ Հայաստանում 1918-1919թթ. մոլեգնած բժավոր տիֆի համաճարակը՝ սովի պատճառով ի հայտ եկած տիպիկ տիֆը, հանդիսանում է համաճարակների պատմության մեջ ամենասարսափելիներից մեկը: Պայքարը նրա դեմ չափազանց դժվար էր. օճառի, վառելիքի, հացի բացակայությունը ստեղծում էին անտանելի պայմաններ:

Բոլոր միևնույնությունները կազմեցին իրենց համար ամենաանհրաժեշտ իրերի ցուցակները, հանձնեցին դրանք Քաջագնունուն և այդ առաքելությունը, մարտ ամսին հրաժեշտ տալով Էրիվանին, ուղևորվեց դեպի Ամերիկա: Քաջագնունու մեկնելուց հետո ես ստանձնեցի նաև Մինիստր-Նախագահի պարտականությունները: Նույն թվի օգոստոսին ես ընտրվեցի Մինիստր-Նախագահ և այդ պաշտոնում մնացի մինչև 1920թ. մայիսի 5-ը: Այդպիսով, Մինիստր -Նախագահի պաշտոնում ես մնացի 14 ամիս: Հայաստանն իր անկախ կյանքով ապրեց ընդամենը 30 ամիս (1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. դեկտեմբերի 2-ը), որից ուղիղ կեսը ինձ բախտ վիճակվեց լինել իշխանության ղեկի մոտ:

Նախաբանում ես արդեն ասել եմ, որ չեմ պատրաստվում շարադրել Հայաստանի Հանրապետության ամբողջական պատմությունը: Ես պարզապես ձգտում եմ նկարագրել այն, ինչը ես անձամբ եմ տեսել, բայց կապակցվածության համար հիշատակում եմ նաև այն ժամանակահատվածները, որոնք միմյանց են կապում տարբեր իրադարձություններ, որոնցում ես ունեցել եմ անմիջական մասնակցություն:

Այսպիսով, իմ շարադրանքը մոտեցավ Հայաստանի պատմության ամենակարևոր ժամանակաշրջանին, երբ Կարսի մարզի ու Նախիջևանի գավառի միացնելու շնորհիվ ընդլայնվում էր նրա տարածքը՝ 11.000-ից մինչև 45.000 քառ. կմ., երբ բռնկվեցին ապստամբություններ՝ Ղարաբաղինը, երբ թաթարական շրջաններում խռովությունները ճնշելու և հնազանդեցնելու ուղղությամբ իրականացվեցին ծավալուն ռազմական գործողություններ: Ես օգտակար եմ համարում տալ փոքրիշատե համա-

կարգված շարադրանքը պետական բնույթ կրող այն միջոցառումների, որոնք 1920թ, ամռանը Հայաստանին տվեցին գրեթե բարեկարգ պետության տեսք ու բնույթ: Իրոք, անձինք, որոնք տեսել էին Հայաստանը 1919թ. սկզբներին, իսկ հետո էլ 1920թ. ամռանը, գտնում էին, որ այն զարգացել է հսկայական քայլերով:

Նման ընդհանուր տեսությունից հետո ես կանգ կառնեմ իմ ու իմ աշխատակիցների վրա առավել ուժեղ տպավորություն թողած առավել բնութագրական և ցցուն իրադարձությունների վրա. շարադրած փաստական տվյալների ֆոնին նրանք կլինեն առավել պարզ ու ընկալելի:

ԳԼՈՒԽ X

Անկախ Հայաստանի երկու տարիների կյանքը՝ մինչև Խորհրդային իշխանության կողմից նվաճվելը (28 մայիսի 1918թ. հունիսի – 2 դեկտեմբերի 1920թ.)

Նախորդ գլուխներում ընթերցողը տեսավ, թե ինչպես էր ստեղծվում և կազմավորվում Հայաստանի Հանրապետությունը և ինչպիսին էին նրա առաջին քայլերը: 1919թ. սկզբներից սկսվեց նրա պետական զարգացումը և դա առանց ընդհատման շարունակվեց մինչև 1920թ. վերջը, երբ Հայաստանը՝ հյուսիսից սեղմված լինելով բոլշևիկների, իսկ հարավից՝ թուրք-քեմալականների ուժերով, ընկավ բոլշևիկների իշխանության տակ և այդ վիճակը շարունակվում է մինչ օրս:

Մենք չենք պատրաստվում քայլ առ քայլ հետևել Հայաստանի հաստատությունների պետական զարգացման գործընթացին, սակայն կհիշատակենք կարևորագույն փաստերն ու նորամուծությունները: 1918թ. կուսակցությունների ներկայացուցչության սկզբունքով և 1919-ի ամռանը գաղտնի և համընդհանուր քվեարկության հիմքով ստեղծված Հայաստանի Խորհրդարանում ընդունվեց ընդհանուր օրենք, որը հռչակում էր, որ Ռուսաստանի (ժամանակավոր Կառավարության) բոլոր այն օրենքները, որոնք չեն չեղարկվել Հայաստանի Խորհրդարանի հատուկ որոշումներով, հանդիսանում են նաև Հայաստանում գործող օրենքներ: Սակայն հաջորդ երկու տարիների ընթացքում Խորհրդարանն անընդմեջ ընդունում էր հատուկ օրենքներ, որոնք հարմարեցված էին տեղական կոշտ պահանջներին ու կարիքներին:

Ստեղծվել էր երդվյալների դատարան, զեմստվոներ, քաղաքային ինքնակառավարում, ստեղծվել էին Համալսարանը Ալեքսանդրապոլում, հատուկ դպրոցներ, հիվանդանոցներ՝ մալարիայի, - այդ դաժան պատժի դեմ պայքարելու համար, բացվեցին նոր միջին և տարրական ուսումնարաններ: Հաղորդակցության ճանապարհների հատվածում նոր կյանք եռաց. կառուցվում էին նոր խճուղիներ, նորոգվում էր երկաթուղին, անց-

կացվում էին հեռագրա- և հեռախոսագծի կապեր, սկսեց ճշգրիտ գործել փոստային կապը:

Հողատիրության և հողագործության մշակույթի զարգացման բնագավառում նույնպես նոր կյանք եռաց. վերջապես սկսեցին կարգի բերվել և կազմվել 40.000 դեյաստին մակերեսով Սարդարապատի տափաստանի ոռոգման հսկայածավալ նախագծերը (քիմիկոս Ս.Օ. Ջավալիշինի արշավախմբի աշխատանքները), ի հայտ եկավ Հայաստանի համար նոր մշակաբույսի՝ ծխախոտի մշակումը, ի հայտ եկան ճահիճների՝ մալարիայի աղբյուրների և միաժամանակ մշակվող հողատարածքների պահուստային հատվածների չորացման նախագծեր: Հողը կանոնավոր կարգով բաժանվում էր գյուղացիներին, փախստականները կապվում էին հողին: Կարգի էին բերվում ավերված գյուղերը, ինչի նպատակով գյուղացիներին տրամադրվում էր հատուկ վարկ՝ ամեն մի ծխին 300 –ական ռուբլի, պետության կողմից գնվում և գյուղացիներին էր բաժանվում որոշակի անասնազլխաքանակ:

Նման միջոցառումների միջոցով սերմանվում էր որոշակի մշակույթ և ամուր քաղաքացիական կյանքի հիմքն էր դրվում Հայաստանում: Այդ ամենին զուգահեռ ամրացվում էր նաև բանակը, որը 1920-ի աշնանը հասավ մինչև 40.000-ոց լրակազմի: Այն անընդմեջ գլխավորում էր նախկինում ռուսական ծառայության մարտական գեներալ Ֆ.Ի. Նազարբեկովը (Թ.Հ. Նազարբեկյան), ինչպես նաև նրա շտաբի պետ, ռուսական գլխավոր շտաբի գեներալ Ի.Վ. Ախվերդովը (Հ.Բ. Հախվերդյանը) և ռուսական բանակի շարքերում իրենց բարի համբավը կերտած մի շարք այլ գեներալներ: Բանակի և նրա հրամանատարության ջանքերով՝ դաշնակիցների, ու առաջին հերթին՝ անգլիացիների օժանդակությամբ, Հայաստանին միացվեցին նրա անբաժանելի մասերը՝ Կարսի մարզը, Մուրմալուի գավառը, Շարուր-Նախիջևանի և Ջանգեզուրի գավառները: Ես անձամբ, որպես Հայաստանի Կառավարության Նախագահ, ով Խորհրդարանի կողմից այդ պաշտոնին ընտվել էր 1919թ. ամռանը, անձամբ այցելել եմ այդ վայրերը, մասնակցել աշխատանքներին և անձամբ տեղեկացրել բնակչությանը նոր իշխանության հաստատման մասին: Հայաստանի տարածքն ընդլայնվում էր և հասավ արդեն 45.000 քառ.կմ., մոտենալով

ընդհուպ Թուրքիայի 1914թ. սահմաններին: Մենք սպասում էինք Փարիզի Վեհաժողովի որոշմանը, որպեսզի անցնենք Թուրքիայի հետ Ռուսաստանի նախապատերազմյան սահմանը և ընդլայնենք Հայաստանի սահմանները:

Հայաստանի համար սահմանների ընդլայնումը խիստ անհրաժեշտ էր, քանի որ դեպի Հայաստան սկսվեց փախստականների նոր ներհոսք՝ Թուրքիայի տարբեր շրջաններից և Ադրբեջանից: Զուգահեռաբար, Հայաստանի Հանրապետության պատվիրակության կողմից տարվում էր դիվանագիտական աշխատանք Փարիզում, որն ավարտվեց 1920թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրի ստորագրմամբ, ըստ որի, համաձայն Միացյալ Նահանգների Նախագահ Վիլսոնի իրավարար վճռի, Հայաստանը ստանում էր Վանը, Մուշն ու Տրապիզոնը և ընդհանուրը պետք է ունենար 180.000 քառ.կմ. տարածք: 1920 թ. դեկտեմբերին օրակարգում դրված էր Հայաստանի՝ Ազգերի Լիգային անդամակցելու հարցը: Այսպիսով, թե՛ երկրի ներսում, թե՛ նրանից դուրս նորմալ ընթանում էր Հայաստանի Հանրապետության զարգացման գործընթացը:

Ճիշտ է, երկրի ներսում և նրա սահմաններին առկա էին թյուրիմացություններ, որոնք ունեին ի հայտ գալու երկու հիմնական պատճառներ. երկրի ներսում թաթարական բնակչությունը մշտապես գտնվում էր թուրքական գործակալների քարոզչության ազդեցության ներքո, որոնք սադրում էին խաղաղ թաթարական բնակչությանը ընդդեմ Հայաստանի Կառավարության իշխանության, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի հարևանները՝ Ադրբեջանն ու Վրաստանը, Հայաստանի հետ չէին կիսում նույն տեսակետները վերջինիս սահմանների վերաբերյալ, և այդ տարաձայնությունները Հայաստանին պատճառում էին բազմաթիվ հոգսեր:

Ամենագլխավոր տարաձայնություններն առնչվում էին Ղարաբաղի և Զանգեզուրի՝ դարեր շարունակ հայության համար պատվար հանդիսացող բուն հայկական այդ շրջաններին: Վրաստանի հետ կովախնձոր էին հանդիսանում երկու գավառներ՝ Ախալքալաքի գավառը, որն ամբողջապես բնակեցված էր հայերով (90.000 բնակչությունից 80.000 – հայեր էին) և Բորչալուի գավառը՝ իր հարավային մասի 60.000 հայ բնակչությամբ: Ադրբեջանի հետ հակասություններն առաջ բերեցին մի

շարք արյունալի ընդհարումներ՝ Շուշիի հրդեհը, հայերի կոտորածները Նուխի քաղաքում և Ադրբեջանի այլ շրջաններում, փախստականների նոր ալիք, աղքատություն ու որպես անխուսափելի վերջաբան՝ գրեթե անպտուղ համաժողով: Սակայն, չնայած Հայաստանի ներսում և նրա սահմաններին առկա այդ բոլոր բարդություններին, համենայնդեպս կովում էր Հայաստանի անկախությունը և դանդաղորեն կովկասյան ժողովուրդների գիտակցության մեջ տեղ էր գտնում տարաձայնությունների ու հակամարտությունների խաղաղ լուծման, իրավարարության կիրառման, համաձայնությունների գալու անհրաժեշտությունը:

Մեր պետության տարածքի ծայրահեղ սահմանափակության պատճառով, ժամանակավոր կառավարության իշխանությունը առավել նպատակահարմար կլիներ կառուցել կենտրոնացման սկզբունքով, սակայն, հարաբերակցելիս խոչընդոտներ ու դժվարություններ ի հայտ գալու պարագայում կարող են անհրաժեշտություններ ի հայտ գան, որպեսզի տեղական իշխանության մարմիններին տրվեն արտակարգ լիազորություններ, որոնք անընդունելի կլինեն փոքրիշատե նորմալ պայմանների դեպքում:

Ըստ այդմ, իշխանությունը պետք է լինի միասնական: Գործադիր իշխանությունը ամբողջապես պետք է կենտրոնացած լինի բացառապես կառավարության և նրա մարմինների ձեռքերում: Կառավարության կողքի հետ չպետք է գոյություն ունենա որևիցե մեկ այլ իշխանություն:

Այդպիսով, ոչ մի կուսակցական կամ ազգային մարմնի թույլ չի տրվելու միջամտել կառավարության գործերին:

Ես առանձնակի լուրջ նշանակություն եմ տալիս հայ-թաթարական հարաբերությունների կարգավորմանը ինչպես մեր պետության ներսում, այնպես էլ այդտեղից դուրս: Ներքին քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը դա պետության տարածքում հայերի և թաթարների խաղաղ համակեցությունն է: Ես համոզված եմ, որ հայերը կարող են, իսկ

զլխավորը՝ պարտավոր թաթարների հետ խաղաղ ապրել: Դա մեր պետության գոյության հիմնական պայմանն է: Անհրաժեշտ է, որ թաթարները Հայաստանը չդիտեն որպես մի աշխատանք, այլ ոչ թե որպես մի պետություն, որն ստրկացրել է իրենց և ուժի միջոցով պահում է իրենց վախի ու ենթակայության պայմաններում: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի իրենք Հայաստանում իրենց զգան որպես լիիրավ քաղաքացիներ: Իմ կողմից կազմակերպվող կառավարությունը անշեղորեն իրականացնելու է քաղաքացիների հավասարության սկզբունքը: Նա միշտ հիշելու է, որ հանդիսանում է ոչ թե հայկական կառավարություն, այլ Հայաստանի կառավարություն: Նա ձգտելու է իր թաթար քաղաքացիների համար ստեղծել այնպիսի մի դրություն, որի պայմաններում նրանք Հայաստանում իրենց զգան եթե ոչ ավելի լավ, ապա, համենայնդեպս, ոչ ավելի վատ, քան իրենց ցեղակիցները հարևան Թուրքիայում և Ադրբեջանում:

Մինիստրական պորտֆելների քանակի սահմանապակույթյան պատճառով (իմ ներկայացրած նախագծով ժամանակավոր կառավարությունը կազմված է լինելու ընդամենը չորս մինիստրություններից), հավանաբար, ես հնարավորություն չեմ ունենալու որևիցե մինիստրական պաշտոն տրամադրել թաթարներին, բայց ես ինձ պարտավորված եմ զգում թաթարներին ներգրավել բավարար թվով բաժինների տնօրենների և այլ պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու համար:

Արտաքին քաղաքականության ասպարեզում ինձ մոտ գործելու է մեկ գերակա սկզբունք. Բարիդրացիական հարաբերություններ հաստատել բոլոր սահմանակից պետությունների հետ, բոլոր միջոցներով խուսափել նրանց հետ առճակատումից: Այս դեպքում մեկնում եմ այն դրույթից, որ մեր ժողովրդին, մեր երկրին անհրաժեշտ է դադար, անհրաժեշտ է խաղաղություն՝ թեկուզև ոչ այնպիսի, ինչպիսին որ մենք կցանկանալինք: Մենք վերջնականապես հյուժված ենք, ուժասպառ և կազմալուծված: Մենք ընդունակ չենք ուժերի հետագա լարումի, մենք չենք դիմանա նոր փորձությունների: Ցանկացած մի նոր արտաքին բարդացում մեզ սպառնում է անխուսափելի և վերջնական կործանմամբ:

Մենք՝ պարտված և ջախջախված կողմ ենք: Մենք պարտավոր ենք դա պարզորոշ գիտակցել, անպայման հիշել և խիզախություն ունենալ փրկելու հայ ժողովրդի մնացած մասը և հերոսական մի փորձ կատարել այս փոքր, մեզանից դեռևս չլսված տարածքի վրա ստեղծել պետության մի նմանակ: Այդ ամենի գիտակցումը պետք է լինի մեր արտաքին քաղաքականության հիմնադրույթը:

Առավել հստակ լինելու համար, ներկայացնեմ այդ հիմնական սկզբունքի կիրառումը առավել խոշոր խնդիրների նկատմամբ, որոնք այս կամ այն չափով ենթակա են լուծվելու ժամանակավոր կառավարության կողմից:

Ինչպիսի՞ն պետք լինի մեր վերաբերմունքը Թուրքիայի նկատմամբ:

Թուրքիան պատճառել է մեզ հսկայական չարիք, նա մեր հանդեպ եղել է անողորք ու դաժան, նա մեր ազգային օրգանիզմին հասցրել է այնպիսի սոսկալի մի հարված, որից, հավանաբար, մենք երբևիցե չկարողանանք ապաքինվել: Իր ձևով լուծելով իր պետական խնդիրները, նա գիտակցված և ծրագրված ոչնչացրեց Արևելյան Անատոլիայի հայերին և դրանով իսկ իրական բովանդակությունից զրկեց հայ-թուրքական հիմնախնդիրը: Հետագայում, Բրեստում ստորագրած պայմանագրով, նա Արևմտյան Հայաստանից խլեց երկու հայկական շրջան (Կարսի և Կադփանի) և եկավ կանգնեց Արփաչայի ափին, դրանով իսկ ազատ մուտք բացելով դեպի Շիրակ և Արարատյան դաշտ: Միաժամանակ, նույն՝ Բաթումի պայմանագրով Թուրքիան Անդրկովկասյան Հայաստանից խլեց ամբողջ Ախալքալաքի գավառը, Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասը Ալեքսանդրապոլ քաղաքով, Էջմիածնի ու Էրիվանի գավառների լավագույն, առավել հարուստ հատվածները և Սուրմալուի գավառն ամբողջապես: Նա մեզ թողեց այնպիսի մի տարածք, որը բացարձակապես ընդունակ չէ ինքնուրույն պետական կյանքի: Բայց նա այդքանով էլ դեռևս չբավարարվեց և կանգ չառավ: Խախտելով նույն Բաթումի պայմանագիրը, Թուրքիան իր գորքերով գրավեց Ղարաքիլիսան և Ջալալօղլուն և չի ցանկանում թողնել դրանք, իսկ վաղը կարող է գրավի նաև Էրիվանը: Փախստականների մասով նա նույնպես չի կատարում պայմանագրերը,

որոշ շրջաններ ուղղակի թույլ չի տալիս վերադառնալ, իսկ մյուս շրջաններում անհնարին է դարձնում փախստականների վերադարձը: Ամեն ինչ գնում է նրան, որ Անդրկովկասում նույնպես Թուրքիան նպատակ է հետապնդում քաղաքական առումով գրոյի հասցնել հայկական տարրը և անհնարին դարձնել Անդրկովկասում նույնպես հայկական պետության ստեղծումը, ինչպես որ դա արեց Արևելյան Անատոլիայում:

Այսպիսով, մենք հիմքեր չունենք Թուրքիայի հանդեպ տածել բարեկամական զգացմունքներ ո՛չ անցյալում և ո՛չ էլ ներկայում նրա իրականացրած գործունեության համար: Հավասարապես հիմքեր չունենք վստահելու նրա բարեհաճությանն ու բարի տրամադրվածությանն ապագայում:

Այստեղից կարելի է հանգել այն տրամաբանական եզրակացությալն, որ, հետևաբար, մենք պետք է խզենք ամեն ինչ Թուրքիայի հետ և, պաշտպանելով մեր օրվա շահերը, պետք է պայքարի մեջ մտնենք նրա հետ: Այ նման եզրակացություն էս երբևիցե չեմ անի: Չեմ անի, քանի որ համարում եմ, որ նման պայքարը բացարձակապես վեր է մեր ուժերից:

Թուրքիան ունի լավ կազմակերպված, բարձր կարգապահությամբ բանակ, ունի գերմանական ռազմական դպրոցն անցած հրամանատարական կազմ, որը մեծ փորձ է ձեռք բերել այս և նախորդ պատերազմներում: Այդ բանակն արդեն նստած է մեր երկրում: Թուրքիան իր ձեռքում այսօր ունի հաղորդակցության կարևորագույն ճանապարհները և կարևորագույն ռազմավարական վայրերը: Տրապիզոնի, Էրզրումի, Բաթումի, Կարսի և Ալեքսանդրապոլի գրավումից հետո, վերջիններիս ահռելի հարստություններով, թուրքական բանակն ունի առատորեն և՛ զենք, և՛ հանդերձանք: Ունի նաև թե՛ հաց, թե՛ մսամթերք, որոնք տեղում իլել են մեզանից: Եվ, ի վերջո, նա ունի այնպիսի հենարան, ինչպիսին է Անդրկովկասի մահմեդական բնակչությունը, որը, Թուրքիայի հետ մեր պայքարի պարագայում, բնականաբար, կկանգնի Թուրքիայի կողքին:

Ի՞նչ ենք մենք կարող հակադրել այդ պատկառելի ուժին: Հոգնած, սովահար, ցնցոտիներով, վատ զինված և հանդերձավորված նախկին զինվորական միավորների կազմալուծված հատվածներ: Ոչ մի ամրոց, ոչ մի հենակետ: Ոչ մի պահեստ զենքի, հանդերձանքի և պարենի ոչ մի պա-

շար: Եվ դրանք որևիցե տեղից ստանալու ոչ մի հնարավորություն և ճանապարհ: Բացարձակապես չունենք գումար, ինչը հանդիսանում է ժամանակակից պատերազմի գլխավոր նյարդը: Իսկ ամենագլխավորն ու ամենաահավորն այն է, որ չունենք և մոտ ապագայում չենք կարող ունենալ այն պետական մեխանիզմը, որի միջոցով հնարավոր լիներ կազմակերպել և նպատակային օգտագործել գոնե այն ոչ մեծածավալ ներուժը, որը դեռևս առկա է պետության և ժողովրդի մեջ: Մեր այսպես կոչված կառավարությունը, չի կարողանում տեղափոխվել մայրաքաղաք, չի կարողանում վերականգնել փոստային և հեռագրային կապը մայրաքաղաքի հետ, չի կարողանում գտնել մի զույգ ավտոմեքենա և մի 10 լիտր բենզին իր կարիքների համար, այն չի կարողանում կարգ ու կանոն հաստատել նույնիսկ այն շենքի ներսում, որ տեղավորված է ինքը...

Կարո՞ղ է արդյոք նման կառավարությունը պատերազմ վարել ընդդեմ մի կազմակերպված պետության, թեկուզև վերջինս կոչվի Թուրքիա:

Այդ հարցին ես չունեմ մեկ այլ պատասխան, քան ուղղակի և կտրականապես – ո՛չ, չի՛ կարող: Իսկ եթե չի կարող, ապա պետք է իրեն համարի պարտված և ընդունի հաղթողի պայմանները, որքան էլ ծանր լինեն դրանք: Պարտավոր է ընդունել, եթե նույնիսկ կասկածներ ունի, թե արդյո՞ք հակառակորդն ինքը կկատարի այդ պայմանները: Պարտավոր է ընդունել նույնիսկ այն դեպքում, եթե ոչ միայն կասկածում է, այլ վաղօրոք համոզված է, որ այդ պայմաններն այս կամ այն չափով խախտվելու են ի վնաս իրեն: Պարտավոր է, քանզի այլ ելք չկա:

Կա բավականին տարածված մի բանաձև. Եթե փրկություն չկա, եթե խաղաղությունը սպառնում է նույն կործանմամբ, ինչ որ պատերազմը, այդ դեպքում ավելի լավ է մեռնել պատվով, զենքը ձեռքին, պաշտպանվելով մինչև վերջին հնարավորությունը:

Այդ բանաձևը հասկանալի է հոգեբանական առումով, սակայն կառավարության համար, որպես երկրի իշխող մարմնի, այն միանգամայն անընդունելի է: Կառավարությունը չունի նման կոչում՝ ժողովրդին տանել ինքնասպանության՝ թեկուզև հերոսական: Հակառակը, կառավարության գործը ժողովրդին փրկելն է: Երբ ծովում նավ է խորտակվում, նրա անձնակազմը ձգտում է փրկել նավը, ուղևորներին, նավաստիներին

և բեռը, քանի դեռ այդ ամենի համար դեռևս կա թեկուզ աննշան մի հնարավորություն: Եթե նավի անձնակազմը սպառել է իր բոլոր հնարավորությունները և այլևս ի գորու չէ որևիցե բան անելու, նա կոչ է անում. Փրկվեք, ով որ կարող է: Եվ այդ պահին, այդ քայլով, վերացնում է իր գոյությունը. Նավի անձնակազմն արդեն, որպես այդպիսին, այլևս չկա, չկա նավը դեկավարող, չկա հրահանգող և հրամայող իշխանություն, այլ կան ընդամենը անձինք, որոնք տրամադրված են իրենց ճակատագրին:

Մակայն հրամանատարը, նավապետը, ով կանգնած է իր կոչման բարձունքին, երբևիցե վայր չի դնում իր պատականությունները: Քանի դեռ ինքը ողջ է, նա կանգնած է հրամանատարական հարթակին և շարունակում է հրամաններ տալ, քանզի չկա և չի կարող լինել այնպիսի մի իրավիճակ, երբ ինքն այլևս չի կարող, կամ էլ պարտավոր է ինչ-որ մի բան անել, ինչ-որ մի բան ձեռնարկել: Եթե նրա մղիչները չեն հասցնում քաշել նավախցերը լցվող ջուրը, նա ծովն է նետում նավի վրայի բեռը, որպեսզի թեթևանա նավի կշիռը, եթե փոթորիկը նավը քշում է դեպի խութերը և նավը դարձել է անկառավարելի, հրամանատարը հրահանգում է հավաքել բոլոր առագաստները, եթե նավը թեքվել է կողքի և արդեն ջուր է լցվում նավակողից նավի մեջ, նա հրամայում է կտրել բոլոր կայմերը, եթե նավը սկսում է սուզվել, նա հրամայում է ջրի վրա իջեցնել բոլոր փրկանավակները, եթե զգացվում է դրանց պակասը, նա ընտրում է առավել ուժեղ տղամարդկանց, տալիս նրանց փրկագոտիներ և ատրճանակը ձեռքին թույլ չի տալիս, որպեսզի վերջիններս հանկարծ խցկվեն փրկանավակների մեջ, եթե փրկագոտիներն էլ բոլորին չեն հերիքում, փրկվելու համար օգտագործում են դատարկ տակառները, կայմերի բեկորները, տախտակներ և այլն... Քանի դեռ հրամանատարը ողջ է, քանի դեռ կարող է ոտքի վրա կանգնել, նա հրահանգում է, պահանջում է, ցուցումներ է տալիս, հրամայում է, սպառնում է, թույլ չի տալիս... Եվ նրա բոլոր հրահանգներն ունեն միայն ու միայն մեկ նպատակ. Փրկել դեռևս այն, ինչ հնարավոր է փրկել, թեկուզև մեկ մարդկային կյանք:

Այդպիսին է նաև ցանկացած կառավարության պարտքը: Քանի դեռ այն կա, պետք է գործի իրեն իշխանություն սված ժողովրդի օգտին: Իսկ

ամենատառաջնային, կոպտագույն և ամենատարրական օգուտը դա գոյության պահպանումն է, այլ ոչ թե դրա ոչնչացումը:

Երբ ասում են, պատերազմելու ենք թե ոչ, թուրքերը, միևնույնն է, մեր վերջը բերելու են, ապա դա հռետորական արտահայտություն է, որն աղերս չունի իրականության հետ: Ամեն մեկի համար էլ հասկանալի է, թե որքանով միևնույն չէ Երիվանի բնակիչների համար, թե թուրքերն, ասենք, քաղաք կմտնեն արյունալի ճակատամարտից հետո, թե հանդիսավոր քայլերով, առանց որևիցե դիմադրության հանդիպելու: Երիվանի գրավումը՝ առանց մարտի և դիմադրության, տվյալ պահին կարճանագրի Հայաստանի քաղաքական մահը և հայերի ստրկացումը՝ թուրքական անիրավության մեզ լավ հայտնի հետևանքներով: Եվ կառավարության պարտքն է՝ զենքը ձեռքին պաշտպանել քաղաքը, եթե կա հաջողության գոնե նվազագույն մի նշույլ: Դա մեծագույն դժբախտություն է: Սակայն, եթե չկա հաջողության թեկուզև նվազագույն մի հույս, ապա ավելի ճիշտ չի լինի արդյոք լայն բացել քաղաքի դարպասները, քանզի այդ դեպքում թուրքերը քաղաքի հասուն բնակչությանը կուղարկեն տաժանակիր աշխատանքների, բայց տեղում չեն կոտորի նրանց, ձեռք չեն տա մանկահասակ երեխաներին: Եթե բռնագրավեն իրենց պետական ապրանքն ու պարենը, ապա, համենայն դեպս, ինչ որ մի բան կթողնեն տանտերերին, կամ էլ վերջիններս մի ճանապարհ կգտնեն դրանցից ինչ-որ բան թաքցնել, կեցության համար կընտրեն լավագույն տները, բայց մնացածը գոնե չեն ավիրի և չեն այրի:

Նշված տարբերությունն այնքան ակնհայտ է, որ այն հնարավոր չէ հերքել ոչ մի ճոռոմաբանությամբ:

Հետո, լավ է պատվով մեռնել, քան... և այլն, միանգամայն անիրականանալի է կիրառած մի ամբողջ ժողովրդի նկատմամբ, եթե նույնիսկ կառավարությունը ցանկանար գնալ այդ ճանապարհով: Անհատ անձինք և մարդկանց խմբեր մոլուցքի պահին, զայրույթի կամ կամ ճարահատյալ վիճակում կարող են մահը գերադասել անարգանքից և իրոք՝ զոհվեն հերոսի մահով: Բայց հո՞ծ զանգվածները երբևիցե չեն գնա նման քայլի: Ինքնապահպանության հզոր բնագործ թույլ չի տա նրանց հասնել ինքնառնչացման: Ելիզավետպոլցիները որոշակի ժամկետում զենքը

հանձնելու առաջարկությանը պատասխանել էին հպարտ մերժումով: Սակայն բավական եղավ արձակել նրանց ուղղությամբ երեք հրետանու արկ և նրանք ճռճեցին սպիտակ դրոշը: Կառավարությունը կարող է հռչակել հետևյալ կոչը. Կմեռնենք, բայց չենք հանձնվի: Քանի դեռ դա լինելու է գուտ մի կոչ, որը հրապարակայնորեն հայտարարված է փոքրիշատե անվտանգ իրավիճակում, նա կարող է ընդունվել համաձայնության ու ողջույնի բացականշություններով: Բայց երբ եկավ այն իրագործելու ժամանակը, երբ կառավարությունը կասի. Քաղաքացիներ, ձեր կառավարությունն այլևս չի կարող պաշտպանել Ձեզ, Ձեզ մնում է միայն պատվով մեռնելը, ուրեմն, գնանք բոլորս միասին մեռնելու, - ժողովուրդը ակնթարթորեն կհռչակի նման կառավարությանը և ինքը կսկսի փնտրել փրկության ճանապարհներ, բայց ոչ այն ուղղությամբ, որ պատվով մեռնի, այլ այն ուղղությամբ, որ մնա և ապրի՝ թեկուզև առանց պատվի:

Կառավարությունը կարող է հասնել ժողովրդի ոչ թե հերոսական ինքնասպանության, այլ, ընդամենը նրա պարզունակ, անփառունակ ու անհիմաստ կոտորման: Եվ ամենակարճ և ուղղակի ճանապարհը դա պատերազմի շարունակությունն է պատերազմելու բացարձակ անընդունակ լինելու պայմաններում: Հնարավոր է, իհարկե, ժողովրդին բերել-հասցնել սրի բերան, հնարավոր է այնպես անել, որ դեռևս պահպանված քաղաքներն ու գյուղերը քարուքանդ արվեն թուրքական հրետանու համազարկերից, իսկ իրեն խնայել աղերսող բնակչությունը ասկյարների և գազանացած ամբոխի ձեռքով սրի կքաշվի իրենց սեփական տներում, կարելի է այնպես անել, որ տեղերում դեռևս մնացած հայերը խուճապահար թողնեն իրենց տներն ու ունեցվածքը և կփախչեն, ով ուր կարող է և ցրվելով վայրի գազանների նման սարերով ու անտառներով, կմեռնեն այնտեղ սովից, ցրտից ու համատարած հիվանդություններից:

Նման արդյունքի կառավարությունը կարող է հասնել, բայց դրա համար անհրաժեշտ է, որ նա դիմի ուղղակի դավաճանության: Եթե դեռևս կա ինչ-որ հնարավորություն հայ ազգի բեկորները փրկելու համար, ապա այդ հնարավորությունը պետք է փնտրել Թուրքիայի հետ համաձայնության ճանապարհով: Մի համաձայնության, ինչ գնով էլ լինի և ինչ էլ մեր համար այն արժենա: Հետագայի համար մենք կարող ենք ունենալ

հեռանկարներ՝ մեծ, կամ քիչ հավանականությամբ, փոքրիշատե հասանելի, բայց այս օրվա դրությամբ մենք կարող ենք ունենալ միայն մեկ քաղաքականություն՝ համաձայնվողական: Դա, իհարկե, չի նշանակում, որ մենք լռելյայն պետք է համակերպվենք թուրքերի բոլոր տեսակի անօրինականությունների հետ, բայց միաժամակ պետք է գիտակցենք, որ մեր պահանջներն ու բողոքները չպետք է հասցնենք հակասությունների ու բախման: Իսկ ամենակարևորը՝ ինքներս առիթ չպետք է տանք նրանց կողմից հարձակողական կեցվածք դրսևորելու համար:

Այսպիսին պետք է լինի մեր քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ: Ես նպատակային արտահայտվում եմ կոշտ և միանգամայն մերկ տեքստով, որ միմյանց չհասկանալու այլևս տեղ չմնա:

Իսկ ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը դեպի Ռուսաստանը, Անգլիան և Գերմանիան:

Ռուսաստանի հեռանալը Անդրկովկասից մեր համար ուղղակի և կասկածից վեր դժբախտություն էր: Այդ հեռանալը մենք չէինք ցանկանում, և եթե Ռուսաստանը երբևիցե վերադառնա, ապա, ի դեմս մեզ, նա կգտնի բարեկամների, որոնք պատրաստ են իրեն ընդառաջ գնալ: Սակայն ընթացիկ քաղաքականությունը չի կարող կառուցված լինել ռուսական կողմնորոշման հիմքի վրա: Տվյալ պահին Ռուսաստանը մեզ ոչնչով և ոչ մի ձևով չի կարող օժանդակել: Ես խոսում եմ հենց տեղում օգնելու մասին, այլ ոչ թե Կոստանդնուպոլսի վեհաժողովում դիվանագիտական օժանդակության մասին: Այդ պատճառով, ցանկացած խաղեր տալը Ռուսաստանի հետ ես համարում եմ մեզ համար կործանարար է ուժեղացնել թուրքերի կասկածամտությունը և նրանք, իհարկե, չեն հապաղի համապատասխան միջոցներ ձեռք առնել մեր և Ռուսաստանի համագործակցությունը կանխելու համար:

Բաքուն չի հանդիսանում մեզ օգնության եկող Ռուսաստանի առաջապահը: Բաքվի շարժումը կրում է զուտ տեղական բնույթ: Հնարավոր է, որ բաքվեցիներին հաջողվի իրենց ձեռքում պահել քաղաքն ու շրջանը: Բայց ես բացարձակ ուտոպիա եմ համարում, որ բոլշևիկներին կհաջողվի ապահովել իրենց թիկունքը, ճանապարհ բացել դեպի Էրիվանի նահանգ և մեզ իրական օգնություն ցուցաբերել Թուրքիայի հետ մեր պայ-

քարում: Ունենալ հենակետ Բաքվում և գործել Էրիվանում, դա այնպիսի մի խնդիր է, որի կատարման համար կպահանջվի ոչ թե հապճեպ կազմավորված կարմիր գվարդիա, այլ՝ իրական բանակ, իր բոլոր տեխնիկական և նյութական միջոցներով ու հնարավորություններով: Այնպես որ, կողմնորոշումը դեպի Ռուսաստան դա քաղաքականություն է, որը կարող է օգտակար և հնարավոր լինել ապագայում, սակայն տվյալ ժամանակաշրջանում այն կարող է հանգեցնել միայն նորանոր և ծանրագույն բարդացումների:

Նույն բանը, բայց որոշ ավելի պակաս վճռական տոնով, պետք է ասել Անգլիայի համար: Մենք չենք տեսնում, որտեղ է Անգլիան: Եթե նա գալիս է դեպի մեզ, ապա այնքան դանդաղ, որ Թուրքիան կհասցնի երկու, երեք անգամ մեր հետ հաշվեհարդար տեսնել, մինչ անգլիացին ոտք կդնի Արարատյան հովտի հողի վրա: Հնարավոր է, որ ոչ մեծաքանակ անգլիական մի ջոկատ շուտով ավիանում արվի, կամ արդեն արվել է Բաքու: Հնարավոր է, որ այդ առաջավոր ջոկատին հետևեն նաև մյուսները՝ քանակով ոչ նշանակալից, բայց հզոր իրենց նյութական կարողություններով: Բաքվի նավթային շրջանը և Բաքու-նավահանգիստը, որպես դարպաս դեպի Հյուսիսային Պարսկաստան և Թուրքեստան, դա այնպիսի արժեքավոր պարզ է, որ դրան տիրանալու համար Անգլիան միջոցներ չի խնայի: Անգլիան կարող է լուրջ օգնություն ցուցաբերել Բաքվին, սակայն ոչ՝ Հայաստանին: Նաև նշանակություն կարող էր ունենալ անգլիացիների արագ շարժը դեպի Ջուլֆա, այնտեղից էլ՝ Արաքսով վերև: Բայց այդ արշավը դեռևս մենք չենք տեսնում: Ջուտ այն փաստը, որ թուրքերը չեն շտապում իրենց գորքերը տեղափոխել Ալեքսանդրապոլից Ջուլֆա, այլ ուղղում են բացառապես դեպի Ելիզավետպոլ, ապացուցում է, որ մոտակա ժամանակներում նրանք Պարսկական Ադրբեջանից որևիցե հարված չեն սպասում: Եվ, առհասարակ, դժվար է հասկանալ, թե անգլիացիներին ի՞նչ անհրաժեշտություն կարող է ստիպել գալ հասնել Էրիվանի նահանգ: Հանուն մեր շահերի կձեռնակելի՞նք արդյոք անգլիացիները նման ծանր և շատ թանկ արժեցող մի երթ Միջագետքից դատարկված և ավերված Պարսկաստանի վրայով դեպի Կենտրոնական Անդրկովկասի խորքերը: Ի՞նչը կարող էր նրանց այստեղ գրավել: Չտեսնելով հիմնավորումներ և անգլիա-

ցիների մոտալուտ տեղաշարժը դեպի Անդրկովկաս, ես համարում եմ, որ Անգլիայից օգնություն սպասելու փաստի վրա կառուցված քաղաքականությունը նույնպես ուտոպիստական է և աղետաբեր:

Այլ է Գերմանիայի դիրքը: Լինելով Թուրքիայի ավագ և ամենահզոր դաշնակիցը, որից Թուրքիան կախված է շատ ու շատ հարցերով, Գերմանիան կարող է որոշակի չափով Թուրքիային նախանշել նրա վարքագիծը: Բացի դրանից, Գերմանիան արդեն այստեղ է, նրա դրոշն արդեն ծածանվում է Անդրկովկասի կենտրոնում: Գերմանիան ոչ ինդրահարույց, իրական ուժ է, որն իրեն զգացնել է տալիս ամեն քայլափոխի: Եթե կա մեկը, ով կարող է այս պահին պաշտպանել մեզ թուրքական հարձակումից, դա Գերմանիան է: Նա կարող է մեզ օգնել, եթե ցանկանա: Եվ մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի կարողանանք գրավել նրան մեր կողմը, շահագրգռենք նրան մեր գործով: Բայց այդ հարցում պահանջվում է ծայրահեղ զգույշ լինել: Գերմանիայի և Թուրքիայի միջև Անդրկովկասի վերաբերյալ առկա են ակնհայտ անհամաձայնություններ: Նրանց ճանապարհներն այստեղ խաչվում են և բաժանվում: Նրանք, կոմս Շուլենբուրգի ձևակերպմամբ, դաշնակիցներ են, բայց միաժամանակ նաև ախոյաններ: Նրանք շատ զգոն կերպով հետևում են մեկը մյուսին և նրանցից յուրաքանչյուրի թեքվելը այս, կամ այն կողմ, իսկույն առաջ է բերում մյուս կողմի դժգոհությունը: Վրաստանն արդեն կատարել է իր ընտրությունը. Նա բացահայտ ձևով տրվեց Գերմանիային: Նա դա իրականացրեց առանց որևիցե հետևանքների վտանգի, քանի որ Գերմանիան հիմնովին տեղավորվել է Գերմանիայի տարածքում և դարձել է նրա սահմանների պաշտպանը: Վրաստան հասնելու համար Թուրքիան պետք է անցնի գերմանացի զինվորի դիակի վրայով, իսկ նման քայլի նա թեթև սրտով չի կարող գնալ: Մեր դրությունն այլ է: Մեր տարածքում չկա և ոչմի գերմանացի զինվոր, և ոչմի գերմանական դրոշ: Կասկածներ կան, որ երբևիցե չեն էլ լինելու: Գերմանացիներին հետաքրքրում են Բաթում-Բաքու, կամ Փոթի-Բաքու երկաթուղիները, բայց ոչ Էրիվանի նահանգը: Հնարավոր է, որ Թուրքիայի և Գերմանիայի միջև համաձայնությունները կայանան ի հաշիվ Հայաստանի և թուրքերը հետագայում էլ մեր հողի վրա մնան որպես տերեր, ինչպիսիք որ փաստացի հանդիսանում են այսօր: Եվ դրա համար Գերմանիայի

որոնումները մեր կողմից պետք է իրականացնել այնպես, որ առաջ չբերենք թուրքերի դժգոհությունը: Ըստ այդմ, մենք կարող ենք դիմել Գերմանիայի օգնությանը միայն գալով նրա հետ որոշակի համաձայնության, որ այդ օգնությունը կցուցաբերվի այնպիսի մի պահի, երբ այն կարող է իրականացվել փաստացի: Նման պայմանավորվածությունների բացակայության դեպքում մենք պետք է դրսևորենք Սքիլայի և Քարիբդայի միջև խուսանավելու մարտավարություն, հիշելով, որ Գերմանիայի հանդեպ զուսպ պահվածք դրսևորելը մեր համար վտանգավոր չէ, քանզի Գերմանիան չի կարող մեզ կասկածել հավելյալ թրքասիրության մեջ: Մինչդեռ, Թուրքիան, հակառակը, գիտակցում է, որ մենք պատրաստ ենք ցանկացած պահի խզել հարաբերությունները իր հետ և անցնել իր հակառակորդների ճամբարը: Այստեղից էլ այն ծայրահեղ զգուշավորության անհրաժեշտությունը, որը պետք է դրսևորվի, եթե մենք քայլեր ձեռնարկենք Թուրքիային սանձելու նպատակով Գերմանիային ներգրավելու ուղղությամբ:

Ինչպիսի՞ն պետք է լինի մեր վերաբերմունքը դեպի Վրաստանն ու Ադրբեջանը:

Անդրկովկասի մասնատումը փոքր, մեկուսացված պետությունների լավ բան չի խոստանում մեր պետություններից և ոչ մեկին: Առավել աղետաբեր է այն Հայաստանի համար, որը, որպես երկիր, առավել թույլ է և բարենպաստորեն նվազագույնը կազմակերպված: Անդրկովկասը, որպես միութենական ամբողջականություն, դեռևս ուներ որոշ հնարավորություններ ինքնուրույն կացության համար, բայց տրոհված լինելով մասերի, այն անկասկած, խաղալիք է դառնալու հեռավոր և մոտակա հարևանների ձեռքին, դառնալու է անվերջանալի քաղաքական խարդավանքների օբյեկտ: Դա անխուսափելի է ոչ միայն Հայաստանի և Դաղստանի պարագայում, այլ նաև Վրաստանի ու Ադրբեջանի համար: Կարելի է հուսալ, որ այդ ճշմարտությունը շուտով կգիտակցվի բոլոր պետությունների կողմից և նրանք կվերադառնան դաշնության, կամ, առնվազն, համադաշնության սկզբնական գաղափարին: Այդ իրադարձությանը սպասելիս մեր ձգտումները պետք է ուղղված լինեն նրան, որպեսզի չխորացվի տեղի ունեցած խզումը, չսրվեն հարաբերությունները, չստեղծվեն ընդհարումներ, այլ հակառակը՝ ճանապարհներ նախապատրաստել

շուտափույթ վերամիավորման համար: Պարկեշտ, խիստ լոյալ և ուշադիր վերաբերմունքի դրսևորում երեկվա և վաղվա մեր դաշնակիցների հանդեպ,- ահա այն վարքագիծը, որ պետք է դրսևորվի մեր կողմից: Դա հավասարապես վերաբերում է և՛ Վրաստանին, և՛ Ադրբեջանին: Եվ ոչ թե ամեն մեկին առանձին, այլ երկուսին միասին և հավասարապես:

Ինչ որ պահից վրացական կառավարող շրջաններում մեր հետ անջատ մերձենալու միտում է նկատվում, ավելի ճիշտ, մերձեցման հրավեր, որն ուղղված է ընդդեմ Ադրբեջանի: Մենք պետք է զգուշանանք նման ուղու վրա հայտնվելուց: Մեզ շատ կարևոր է Վրաստանի բարի տրամադրվածությունը, մերձեցումը նրա հետ, բայց երբևիցե՝ ոչ Ադրբեջանի հետ հարաբերությունները խզելու գնով: Եթե, ի դժբախտություն մեզ, մենք հայտնվենք այդ երկու պետություններից մեկը կամ մյուսը ընտրելու անհրաժեշտության առաջ, ապա նախապատվությունը տրվելու է Ադրբեջանին: Խզումը Ադրբեջանի հետ մեզ համար շատ ավելի վտանգավոր է, քան խզումը Վրաստանի հետ, քանզի Ադրբեջանում մենք ավելի շատ հետաքրքրություններ ունենք, քան Վրաստանում: Հատկանշական է, որ վրացիները, ձգտելով մեզ ներքաշել հակամահմեդական քաղաքականության մեջ, ձգտելով օգտագործել մեզ սեփական տեսակարար կշիռը մեծացնելու համար, մեր հանդեպ չեն ցուցաբերում ոչ միայն որևիցե զիջողականություն, այլ նույնիսկ հասարակ լոյալություն: Նրանք ուզում են մեզանից ինչ-որ բան ստանալ՝ փոխարենը ոչինչ չտալով: Նրանց պահվածքը Տրապիզոնի և Բաթումի համաժողովներում, երբ նրանք մեր թիկունքի ետևում վարում էին սեփական քաղաքականություն և ջանում էին պահել Աջարիան և Ախալցխան Կարսի և Կաղզվանի հաշվին, Բորչալուի գավառի նրանց գավթումը և պահանջները Ղազաձի նկատմամբ, Անդրկովկասյան համադաշնության ընդհանուր ունեցվածքի նրանց կողմից գավթումը և ավելի մանր փաստերի մի երկար շարան, ականայից բերում են այն մտքի, որ վրացիները, շահարկելով մեր դրության անելանելիությունը, ձգտում են մեզ հետ հաստատել ոչ թե ազնիվ փոխգործակցություն, այլ նրան, որպեսզի մենք իրենց զիջենք մեր բոլոր դիրքերը՝ իրենց կողմից առանց որևիցե փոխհատուցման: Նման հարձակողական դիրքորոշումը, որը ոչ առանց հաջողության դրսևորվում է արդեն հենց այսօր, կդառնա միանգամայն

անդառնալի Ադրբեջանի հետ մեր կողմից վեճը սկսելու պարագայում: Ահա թե ինչու մենք չպետք է թույլ տանք մեզ ներքաշել այդ վտանգավոր խաղի մեջ:

Միակ հանգամանքը, որը կարող է մեզ ստիպել որոշում կայացնել շուտ գալ մեջքով դեպի Ադրբեջանը, բայց նաև՝ ոչ Վրաստանի կողքին, դա կարող է լինել Գերմանիայի կտրական պահանջը: Եթե Գերմանիան մեզ խոստանում է իր օգնությունն ու աջակցությունը Վրաստանի հետ Հայաստանի միություն կազմելու պարագայում, ապա այս դեպքում, իրոք մտածելու առիթ կլինի: Եվ եթե Գերմանիան բավարար ուժ ունենա մեզ թուրք-թաթարներից պաշտպանելու համար, ապա դա կլիներ առավելագույնը, ինչի վրա մենք կարող ենք հույս դնել տվյալ պահին: Իսկ նման պայմանների բացակայության դեպքում մենք չենք կարող մեզ շռայլություն թույլ տալ վիճել թաթարների հետ ի սիրաշահումն վրացիների:

Այսպիսին է քաղաքականությունը, որը ես մտադրված եմ վարել: Այն հաշվարկված է այսօրվա պահանջների համար: Եթե դրանք փոփոխվեն, իսկ դա, դատելով մեր վերապրվող ժամանակներից, կարող է պատահել ցանկացած ժամին, և պահանջվի քաղաքական կուրսի կտրուկ փոփոխություն, ապա ես նույն պահին կթողնեմ պաշտոնը, զիջելով այն ուրիշներին, ովքեր ինձանից ավելի ընդունակ կլինեն գնահատելու նոր իրադրությունը և շարժվել նոր հունով:

Իմ կողմից կազմակերպվող կառավարությունը ես դիտում եմ որպես իշխանության ժամանակավոր և ոչ կատարյալ մարմին: Համարում եմ, որ այդ իշխանությունը գոյանում է օրինական նորմերից դուրս, հրամայական անհրաժեշտության պայմաններում և բացառիկ դժվարին իրավիճակում: Այդ կապակցությամբ ենթադրում եմ, որ նման կառավարությունը չի կարող առաջնորդվել շատ լայնածավալ ծրագրերով և նա իր առջև պետք է դնի շատ նեղ շրջանակի պետական խնդիրների լուծման նպատակ:

Այն հանգամանքը, որ մեր պետությունը, հետևապես և նրա իշխանության մարմինները ստեղծվում են արտակարգ դժվարին պայմաններում, դա բացատրություններ չի պահանջում:

Հասկանալի է նաև, որ իմ կողմից կազմակերպվող կառավարությունը չի կարող համարվել օրինականորեն ստեղծվող, քանի որ իր լիազո-

րությունները նա ստանում է մի ինքնագլուխ մարմնի կողմից, որն իր հերթին ունի հայտագրական բնույթ: Նախկին Հայ Ազգային Խորհուրդը, որն այժմ վերափոխվում է Հայաստանի Պետական Խորհրդի ո՛չ իր ծագումով, ո՛չ ստացած լիազորագրերով և ո՛չ էլ իր ստեղծման նպատակներով չի կարող համարվել Հայաստանի օրինական - իրավագոր մարմին, ուստիև իրավասու չէ մեկ այլ մարմնին փոխանցել իրեն չպատկանող իշխանությունը:

Բայցնայնպես, եթե ես համաձայնվում եմ լիազորություններ ընդունել նման ինքնակոչ մարմնից, ապա միայն այն պատճառով, որ հաշվի եմ նստում հրամայական անհրաժեշտության հետ:

No 3

Հայոց Ազգային Խորհրդի հայտարարությունը Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության կազմավորման և նրա կազմի վերաբերյալ



ՀԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 10, ք. 4

Հավելված 2.

Սույն *Հավելվածում* ներկայացվում է «Ալիք» օրաթերթում տպագրված Հայաստանի Հանրապետության երրորդ վարչապետ Համազասպ Օհանջանյանի «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՄԵԱՅ ԿԵԱՆՔԸ**» հեղինակած հոդվածաշարը, որը գրվել է 1920թ. վերջերին և լույս է տեսել միայն 1964թ. նշված պարբերականի էջերում: Սույն հոդվածը, հանդիսանալով միանգամայն ինքնուրույն գրվածք, միաժամանակ լրացնում և առավել ամբողջական է դարձնում Ալեքսանդր Խատիսյանի հուշագրության վերջին՝ «**Անկախ Հայաստանի երկու տարիների կյանքը՝ մինչև Խորհրդային իշխանության կողմից նվաճվելը (28 մայիսի 1918թ. հունիսի – 2 դեկտեմբերի 1920թ.)**» գլխում շոշափվող հարցերի ընկալումը:

No 4

ՀԱՄԱՁԱՄՊ ՕՇԱՆՁԱՆԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԿԱՄԵԱՑ ԿԵԱՆՔԸ
(«Ալիք» օրաթերթ, 2-5 նոյեմբերի, 7-11 նոյեմբերի, 1964թ.)


ԲԱԺԻՆ III

ՆԱՄԱԿՆԵՐ. ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

(1918թ., հունվար-1920թ., սեպտեմբեր)

Բաժնում ներկայացված են Ալեքսանդր Խատիսյանից Համազասպ Օհանջանյանին ուղարկված թվով 23 նամակ: Մեկը թվագրված է 1918թ. հունվարի 18-ով, մեկը՝ 1918թ. հունիսի 11-ով և 21 նամակն ուղարկված է 1918թ. հունիսի վերջերից մինչև հոկտեմբերի վերջն ընկած ժամանակահատվածում: Դա 1918թ. այն ամիսներն էին, երբ հայկական պետությունը ներկայացնող մի պատվիրակությունը (Ավետիս Ահարոնյան, Ալեքսանդր Խատիսյան, Միքայել Պապաճանյան) բանակցություններ էր վարում Կոստանդնուպոլսում՝ թուրքական կառավարության և Եռյակ Միության դիվանագիտական ներկայացուցիչների հետ, իսկ մյուսը՝ Համազասպ Օհանջանյանի գլխավորությամբ, նույն օրերին Բեռլինում հայկական պետության ճակատագրին առնչվող հարցերի շուրջ ակտիվ շփումների մեջ էր գերմանական իշխանությունների և դիվանագիտական այլ շրջանների հետ: Ներկայացված է նաև մեկ նամակ, որն Համո Օհանջանյանը ուղարկել է Բեռլինից: Նամակները բերված են բնագիր ռուսերենով¹¹²: Բաժնում ընդգրկված է նաև մեկ նամակ, որը Բեռլինից 1918թ. հունիսի 16-ին ուղարկել է Համո Օհանջանյանը: Նամակի ընդգրկումը պայմանավորված է այն իրողությամբ, որ թե՛ ժամանակագրական և թե՛ բովանդակային առումով, այդ նամակը ներդաշնակ է ընդհանուր նյութի հետ և ուղղակիորեն լրացնում է այն: Վերջում բերվում է նաև 2 նամակ, որոնք ուղղված են Ռումինիայի քաղաքական ղեկավարությանը՝ ճանաչել Հայաստանի անկախությունը, հիմք ընդունելով Սևրի պայմանագիրը և հաստատել երկկողմ դիվանագիտական հարաբերություններ:

¹¹² No5 – No28 արխիվային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տրամադրել է Մայքլ Բաբայանը:



Համագասպ Օհանջանյանին Կոստանդնուպոլսից Բերլին գրած Ալեքսանդր Խատիսյանի նամակի բնօրինակի թերթերից:

№ 5

**Ալեքսանդր Խատիսյանի նամակը Համագասպ Օհանջանյանին
(18 հունվարի, 1918թ.)**

Նամակում Խատիսյանն իր մտահոգությունն ու դժգոհությունն է հայտնում այն կապակցությամբ, որ Ռուսաստանի տարբեր միավորներից ընտրված Համառուսաստանյան Մահմանադիր ժողովի պատգամավորների համար շեշտվում է կոնկրետ երկրամասը, սակայն Հայաստանի մասին՝ ոչ մի խոսք: Նշվում է նաև, որ միջազգային դրությունը խիստ լարված է, Միջին Եվրոպային սպառնում է սով, ինչը

*սյրսյրտ հոդ է հանդիսանում այդ տարածքներ նույնպես բոլշևիզմի
սկզբիչ ներթափանցման համար:*

1918 թ. 18^{օր} յանվարի¹¹³

Дорогой Амазасп Иванович. Что же это значит. Во всѣх газетах имѣется список делегатов от каждой [стороны /страны], не исключая и такие, которыя только что образуются или образовались, а объ Арменіи не одного слова. Пропускъ ли досадный или это на самом дѣлѣ.

Я очень радъ, что вы стали на эту точку зрѣнія, на которую у Васъ[...] по отношенію к грузинам и их самостоятельности. Ваш идеализм и вѣра в людей, – увы, должны быть разбиты, объ условія практической угодни. Напишите доктору Гринфельду, чтобы он выслал Вамъ тѣ изданія, которыя были выпущены в Берлинѣ Церетели и др. и которыя самым категорическим образом устанавливают связь грузин [...] далеко до таких ужасных дней, которые наступили после [...]. Эти книги будут очень полезны. Письмо к Макакову, я приготовил. Но, согласно уговора, пока держу у себя. Здѣсь зима. Падают снег, сани. Чудная погода, хотя, говорят, она бывает безконечно лучше, когда свѣтит солнце, котораго мы видим очень мало и все за облаками.

Международное положеніе чрезвычайно [напряженное] на радость большевиков. Поляки [жмут] нѣмцев, большевики поляков: снова создается обстановка, которая была во время войны: очевидно, на лицо будут помогать большевикамъ, когда опасность от их продвиженія чрезвычайно велика для самих нѣмцев.

Вместе с тем, голода охватывают Среднюю Европу. Блокада не дает возможности перейти промышленности на работу мирнаго времени. Огромное количество безработицы, а призн. дѣлать [...], организацию, [...] разлагается слабостью революционной власти въ центральных управлениях – очевидно, почва для большевизма готова или где дѣлает и [... дает] все более и более готовой. Обратите вниманіе на одно обстоятельство: съ каким вниманіем и напряженіем всѣ ждали въ ноябре и декабре мирнаго конгресса, его работы – въ настоящее время успѣхи большевизма заслонили наши союзники усваивают независимые точки зренія. Только теперь при 3^{мб} продленіи условій перемирія – поднимают вопрос о русских плѣнных, ставится вопрос

¹¹³ Նամակը, հավանաբար գրվել է այն օրերին, երբ **Համո Օհանջանյանը**, ով ընտրվել էր Համառուսաստանյան սահմանադիր ժողովի պատգամավոր, այդ մարմնի աշխատանքներին մասնակցելու նպատակով մեկնել էր Պետրոգրադ:

о предотвращении голода в Германии в связи со стремительным проникновением туда большевизма. Кажется и там Ленин осмеливает предложить допустить его на конгресс и [немцы] повидимому, не прочь на это согласиться. Прямо преступление сидеть здѣсь, наслаждаться приватной, растительной жизнью, когда м.б. в Париже можно было бы оказать хотя бы и небольшую пользу. Досадно, но, что же дѣлать, надо ждать.

Крепко жму Вашу руку/подпись Ал.Хатисян/

Выпишите по телеграфу книги Германо грузинских отношений – соч. Цертели

№ 6

Ալէքսանդր Խատիսյանի նամակը Համագասպ Օհանջանյանին

(11 հունիսի, 1918թ.)

Նամակում անդրադարձ է կատարվում Կովկասում առկա մթնոլորտին և ընդգծվում, որ, թեև Գերմանիան և Թուրքիան դաշնակիցներ են, սակայն դրա հետ մեկտեղ, Կովկասում նրանք մրցակիցներ են տվյալ պահին և գերմանական կողմը անգամ մտահոգություն է հայտնում, որ թուրքերի հետ հայերի բարիդրացիական հարաբերությունների հաստատումը կարող է նույնիսկ վնասել Վրաստանի և Գերմանիայի շահերին: Այդ իրողությունից ելնելով, հայկական պատվիրակությունը Բեռլինում պետք է հասնի նրան, որ Գերմանիան «հավասար աչքով» նայի Վրաստանին և Հայաստանին: Բնականաբար, թույլ չտալով դրա պատճառով թուրքերի տրամադրվելն ընդդեմ հայերի: Անհրաժեշտ է նաև գերմանական կողմին շահագրգռել դեպի Հայաստան տնտեսապես և ցրել նրանց կասկածները, թե Հայաստանը գաղտնի բանակցություններ է վարում Անգլիայի հետ:

Тифлис, 11 июня,

1918 г.

Дорогой Амо! Агаронян пишет Вам подробное письмо о фактическом положении вещей: Ив. Качазнуни и я добавляем слѣдующее: мы: подписывая мир, держались той т. зрѣнія, что отнынѣ надо установить «доброрососѣдскіе» отношенія с турками и татарами, – но не болѣе, т.е. не входя в какие либо военно-полит. «Союзы». И мы, входя в Арм. Правит., – получили одобение партіи на эту линію поведенія. Сейчас мы узнали, что у Германии и Турціи на Кавказѣ как будто пути расходятся. Вчера Шу-

ленбург эти отношенія: опредѣлил так: «Мы – Герм. и Турц. – союзники, но мы конкуренты на Кавказѣ». И потому германцы словно ревнуют нас к туркам и даже подозрѣвают, что мы в своей дружбѣ с ними зашли далеко, – даже предполагают, что эта «дружба» может быть вредна для интересов Грузіи и Германіи. Мы его вчера долго убѣждали, что это невѣрно, – и он нам, кажется, повѣрил. Вам слѣдует, если в Берлинѣ есть сомнѣнія на этот счет, – то же самое заявить. Затѣм мы видим, что Германія покровительствует Грузіи, но ничего не дѣлает для Арменіи, и ссылается она при этом на исключенія инструкцій из Берлина об его отношеніях к Арменіи. Вы должны добиться, чтобы Берлин предписал Шуленбергу покровительствовать нашей Арменіи, [при этом] не раздражая турок против нас. Надо нам имѣть симпатіи обѣх стран. В третьих, – было бы очень хорошо, если бы Германія вообще предписала Шуленб. на Арменію и Грузію смотреть одинаковыми глазами. Заинтересуйте Германію в экономических сношеніях с Арменіей. Пусть они пришлют эконом., дипломат. и военного агентов для Арменіи. Мы бы очень считали полезными, чтобы Вы, – в случаѣ сомнѣній, – убѣждали Берлин в том, что у нас с Англіей нѣтъ никаких переговоров: мы это говорим потому, что [были намеки] Шуленбурга о наших мнимых переговорах. Договор наш с Турціей Шуленбург посылает с этим же курьером в Берлин, Вы его можете видѣть там. У нас второго экземпляра нѣтъ для посылки Вам. Посылаем № «Ζηρηφην», гдѣ этот договор напечатан. Кромѣ этого, – осталось все то, что Вы уже знаете.

Мы вообще считаем необходимым, чтобы Вы выяснили задачи Германіи на Кавказѣ и их взгляд на наш вопрос на Кавказѣ и в Турціи, – желают ли они нашего государства или нѣтъ? И почему они тянут с вопросом об своем покровительствѣ нам?

На днях мы выѣдем в Эривань, – там объявим независимость и начнем управление страной.

Жму руку Ваш /подпись Ал Хатисян/

Все товарищи горячо кланяются.

Второе предположеніе – думаем кончить на днях. Идет разговор о Карабагѣ. Вообще татары сильно раздражены против грузин за их Германскую федерацію и для несправедлив. при дѣлежѣ оставшегося имущества от Закав. Республики.

ՀԱՄՈՕՉԱՆՁԱՆՑԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԲԵՌԼԻՆԻՑ

(16 հունիսի, 1918թ.)

16/VI 1918, Բերլին

Չուրաբովի ուղղումների մի քանիսի հետ ես համաձայն չեմ.- *գրված է գլխիվայր*

Միրելիք.

Ամսոյս 3-ից մենք գտնուում ենք այստեղ:

Պատմեմ մանրամասն, թե ինչպէս պատահեց, որ մենք ստիպւած եղանք զալ այստեղ օգնութիւն խնդրելու: Ինչպէս գիտէք, Տրապիզոնի բանակցութիւնները Անդրկովկասի Մէմի ներկայացուցիչների (որոնց մեջ էին մերոնցից Քաջագունին և Ալ. Խատիսեանը) և թիւրք կառավարութեան մեջ վերջացան թիւրքերի ուլտիմատումով, ուր նրանք պահանջում էին 48 ժամայ ընթացքում նրանց յանձնել Բրեստի դաշնագրով նրանց վերապահուած Բաթումը, Կարսը, Արդահանը: Մէմի ներկայացուցիչները չը ստանալով ժամանակին պատասխան Մէմից իրանք համաձայնում են այդ առաջարկութեանը, յանձինս իրենց նախագահ Չիւենկելիի և վերադառնում են Թիֆլիս համոզելու, որ Մէմն էլ ընդունի: Մէմը չի ընդունում և յայտարարում է պատերազմ ապրիլի մեկին, իսկ թիւրքերը այն օրն և ետ առնում են Բաթումը և մտնում Վրաստանի սիրտը՝ վերցնելով նաև Օզուրգեթը մէկ կողմից, միս կողմից էլ կատաղի կռիւներով վերցնում են Սարիղամիշը և մոտենում Կարսին: Մէմը ստիպւած է իրեն համարում համաձայնել Բրեստի պայմանագրին և համաձայն թիւրքերի բերնով իրեն հաղորդած Գերմանիայի և այլ դաշնակիցների ցանկութեան, յայտարարում է Անդրկովկասի անկախութիւնը (այս պայմանով միայն իբր թէ միւս դաշնակիցները կը համաձայնէին մասնակցել հաշտութեան նոր բանակցութիւններին): Այս վերջին հանգամանքը (հաշտութիւն կապելը ոչ միայն թիւրքերի, այլ բոլոր դաշնակիցների հետ համարում էր ամենակարևոր կետը: Կառավարութիւն կազմելը յանձնում է Չիւենկելուն, գլխաւոր կողմնակիցը Անդրկովկասի անկախութեան և Բրեստի դաշնագրի: Ապրիլի 9-ին յայտարարում է Անդրկ. անկախութիւնը և Չիւենկելին դեռ մինիստրութիւն չը կազմած, հեռագրում է թիւր-

քերին, որ համաձայն է Բրեստի դաշնագրին և միաժամանակ հրամայում է գեներալ Նազարբեկովին յանձնել թիւրքերին Կարսը, նախ թողնելով նրանց 2 վերստի տարածութիւն Կարսից: Նազարբեկովը, դժբախտաբար թէ չարամտութեամբ Չիւենկելու կողմից ստեղծած անհնարաւորութեամբ չի կարողանում իր ժամանակին իմանալ Ազգային խորհրդի կարծիքը և ստիպւած է լինում կատարել Չիւենկելու հրամանը, երբ սա խստաբար երկրորդ անգամ կրկնում է իր հրամանը: Ի պատասխան Նազարբեկովի առարկութեան, թէ երկու վերստի տարածութեամբ մօտ թողնելը թիւրքերին նշանակում է իսկոյն յանձնել բերդը առանց հնարաւորութիւն ունենալու նրա մեջ եղած միլլիօնաւոր հարստութիւնը դատարկել և տեղափոխել: Թիւրքերը երբ մօտենում են երկու վերստի, յիրաւի իսկոյն պահանջ են դնում երկու ժամայ ընթացքում յանձնել բերդը իւր ամբողջութեամբ: Ձորքերը իհարկէ այլևս հնարաւորութիւն չեն ունեցել պաշտպանել բերդը, որովհետև նրա ֆորտերը կարող էին գործել թշնամու վրայ միայն 4 վերստի վրայ, իսկ երկու վերստը արդէն անցած է այն զոնայից, որի վրայ գործում են բերդի թնդանօթները: Ձորքը մատնւում է այդ պատճառով կատարեալ դեմորալիզացիայի, լացով յանձնելով բերդը, որը կարելի էր պաշտպանել զոնէ դէռ երկու շաբաթ ևս և ասելով՝ այլ ինչու համար կուենք, եթէ ինքներս տալիս ենք մեր ամենաուժեղ դիրքերը: Դրանից յետոյ մեր զորքերը արդէն անընդունակ էին կուելու և ներկայացնում էին իրենցից միայն չկուած ամբոխ և ոչ զորք: Առհասարակ պետք է ասել, որ հայերը ունէին կռի դաշտում Անդրանիկի տաճկահայերի դիւիզիան (մոտ 12-15 հազար) և Նազարբեկովի ռուսահայերի կոռպուսը նոյն քանակութեամբ, որովհետև պոլկերը երբեք լրիւ չէին լինում իրենց կազմով: Անդրանիկը և իւր դիւիզիան բոլորովին անընդունակ եղան պատերազմի սկզբից, դէռ Էրզրումի առման օրերից, կանոնաւոր կռիւ մղել թիւրքերի դէմ և ենթարկւած կատարեալ դեմօրալիզացիայի մի գլուխ փախչում էին թիւրքերի շատ աւելի քիչ ուժերի առաջ: Նազարբեկովի կանոնաւոր զորքերը տեղ հասան միայն Էրզրումը տալուց յետոյ և ստիպւած եղան նոյնպէս տալ Սարիղամիշը մի քանի կռիւներից յետոյ, որից յետոյ բաւականին կազմակերպւեցին, ոգի առան և մի քանի լաւ յարւածներ տւին թիւրքերին Բեզլի Ահմետի մօտերքը, բայց Կարսի ականայ յանձնելը նրանց

ևս ենթարկեց դեմոսոպիզացիայի և կազմալուծեց, այնպես որ հայերը վերջը մնացին բոլորովին առանց գորքի, եթե չը հաշուել Երևանի շրջանի մօտ 10.000 լաւ կամակերպւած գորքը, որ ստեղծել էին Արամը և Դրոն: Նրանք էլ պատերազմի դաշտը չէին կարող դուրս գալ, որովհետև տեղական քրդերը և թուրքերը միշտ սպառնում էին նրանց թիկունքը վտանգել:

Չխենկելին իւր այդ բոլոր գործողութիւնները արել էր մեն մենակ, առանց իւր կազմուելիք կաբինէթի հետ խորհրդակցելու և ապրիլի 12-ին նրանց դրել էր կատարուած փաստի առաջ: Նրա կաբինէթին մասնակցող մեր երեք ընկերները՝ Քաջագունին, Խատիսեանը և Ա. Սահակեանը տալիս են իրենց հրաժարականը և սկսում է կռիվիս: Վրացիք յայտարարում են, որ եթե հայերը չեն մասնակցում կառավարութեան, այն ատեն նրանք իսկոյն յայտարարում են Վրաստանի անկախութիւնը, նոյնը անում են և թաթարները և նրանք առանձին-առանձին հաշտութիւն կը կապեն Թիւրքիայի հետ, իսկ հայերը ինչպէս ուզում են թող անեն, կամ թե չէ՝ ուզում են թող դաշնակցականները կազմեն Անդրկովկասի կառավարութիւնը, իսկ իրենք կը մտնեն այդ կառավարութեան մէջ իբրև օգնողներ, թէև նախագգուշացնում են, որ թաթարները երևի դաշն.-ների կազմած կառավարութեանը չեն մասնակցի: Ստիպուած դ.-ները նորից մտնում են Չխենկելու կաբինէթի մէջ նոյն կազմով: Չխենկելին դիմում է անում բոլոր դաշնակից պետութիւններին գալ Բաթում և սկսել բանակցութիւններ Բրեստի պայմանագրի հիման վրայ: Միաժամանակ յայտարարում է իբր թե զինադադար, թիւրքերը կանգնած էին Արփաչայի միւս ափին, Ալեքսանդրապոլի դիմացը (այն ափի մի քանի ֆորտերը մերոնք ստիպուած էին օդը ցնդեցնել, նախքան յետ քաշուելը): Հաշտութեան երկրորդ բանակցութիւնները սկսում են Բաթումում, առաջի նիստը լինում է մայիսի 11-ին, ներկայ են լինում դաշնակիցներից միայն թիւրքեր և գերմանացիք:

Այս անգամ թիւրքերը չեն բաւականանում Բրեստի դաշնագրով և պահանջում են տալ իրենց նաև Ախալցխայի, Ախալքալաքի և Սուրմալու ամբողջ գաւառները, Ալեքսանդրապոլի գաւառի մի մասը քաղաքով մինչև Համամլու, Էջմիածնի գաւառի մի մասը, առանց Էջմիածնի, Երևանի գաւառի մի մասը, առանց քաղաքի: Անդրկովկասի դէլեգացիան չի համա-

ձայնում այդ առաջարկներին և գերմանացու խորհրդով պնդում է Բրեստի դաշնագրի վրայ: Բանակցութիւնները շարունակուում են, ինչպէս և զինադադարը, Բայց մայիսի 15-ին թիւրքերը սկսում են յանկարծակի յարձակում Ալեքսանդրապոլի վրայ և առաջարկում են 3 ժամվա ընթացքում յանձնել իրենց քաղաքը և ամբողջ երկաթուղային գիծը մինչև Ջուլֆայ, որովհետև իբր թէ այնտեղ անգլիացիք իրենց նեղում են: Գեներալ Նազարբեկովը չունենալով ոչ մի տեղեկութիւն այդ առթիւ, սկսում է դիմադրել, Բայց 1 օր կռից յետոյ ստիպւած է լինում յետ նահանջել և յանձնել քաղաքը, հայ զորքերը բոլորովին չէին կռուում և մտածում էին աւելի շուտ իրենց ընտանիքները փրկելու մասին: Թիւրքերը շարժվում են դէպի Ղարաքիլիսայ, առնում են Ջալալօղլի, Վորոնցովկայ, Ղարաքիլիսան, որը յետ են տալիս (չի պարզւած ինչ պարագաներում) և այս բոլորը կատարում է զինադադարի և հաշտութեան բանակցութիւնների ընթացքում, չը նայած բոլոր պաշտօնական բողոքների և այլն զանազան պատրուակներով, որոնց մասին երկար կը լինէր գրել: Թիւրքերը պարզօրէն ասում են, որ իրենք նպատակ են դրել չը թոյլ տալ, որ հայերը որևէ կերպ քաղաքական գոյութիւն ունենան Կովկասում, թէ այլուր, որովհետև դա նրանց համար կը լինէր մի մշտական իրրեղենտայ: Գերմանացիք էլ մեր դիմումներին Բաթումում ասում էին, որ նրանք հակառակ են Թիւրքիայի գործելակերպին և երբէք չեն համաձայնի Բրեստի դաշնագրի սահմանից դուրս թիւրքերին տեղ տալ, Բայց ներկայումս իրական ուժ չունեն կանգնեցնելու թիւրքերի առաջխաղացումը, որովհետև գերմանական զորք չը կայ Կովկասում: Վրացիների և մեր առաջարկութեամբ նրանք զինեցին գերմանացի զերիներին և դրին մի քանի կացարաններում, ի միջիայլոց և Սանահին, Կալազիբան և Ղարաքիլիսայ: Միաժամանակ նրանք խորհուրդ էին տալիս համաձայնել թիւրքերին {թոյլ} երկաթուղուց օգտուել Ջուլֆա գնալու համար: Մենք այդ բոլորին համաձայնեցինք: Բայց թիւրքերը մայիսի 26-ին առաջարկեցին նոր ուլտիմատում` զիջել իրենց այն բոլոր երկիրները, որ վերևը յիշւած [են], աւելացնելով նաև Շարուրի և Նախիջւանի գաւառների մեծ մասերը և զիջելով մի քիչ տեղ Ալեքսանդրապոլի գաւառում - Համամլուից քաշւելով դէպի Ջաջուր: Այդ ուլտիմատումը արդէն յայտնի էր բոլորին, Բայց դեռ չէր արւած, որ Թիֆլիսում վրացիների նախաձեռնու-

թեամբ Մէյըը յայտարարեց իրեն լուծւած, քանի որ հայկական մասը Անդրկովկասի անցնում է թիրաքերին, իսկ թաթարական մասի խոշոր մասերը ցանկանում են անցնել նոյնպէս թիրաքերին, ինչպէս Գանձակը, ուր նստել էր արդէն Էնվերի եղբայրը տեղացի թաթարների հրաւերով, և վրացիք յայտարարում են ամսի 26-ին իրենց անկախութիւնը:

Մայիսի 26-ին երեկոյան 10-ին յանձնւել է մերոնց ուլտիմատումը, որւած է եղել ժամանակ մինչև 30-ի երեկոյեան 8-ը և յայտնւած, որ Անդրկովկասի հարաւային մասում թիրաքերի զինուորական գործողութիւնները կը շարունակեն և այդ միջոցին: Ամսի 31-ին թէ վրացիները և թէ հայերը ստիպւած են եղել ընդունել ուլտիմատումը իւր ամբողջութեամբ, միայն վրացիներին արւել է մի զիջում, տրւել է նրանց Աբասթումանը և Քուր գետի ձորի մուտքը Ածղուրի մօտը: Այս վերջին լուրերը մենք ստացել ենք արդէն Բերլինում, որովհետև մենք դուրս եկանք Բաթումից 26-ից ժամը չորսին, 27-ի առաւօտը եկանք Փոթի և 28-ի երեկոյեան 6-ին դուրս եկանք փոթիից դեպի Կոնստանցայ, այնտեղից էլ արտակարգ գնացքով հասանք Բեռլին ամսոյս 3-ին առաւօտը: Մեր գալու միտքը և պարագաները յետևեալն են: Ազգային խորհուրդը, Ալեքսանդրապօլի առնումից յետոյ, պարզ տեսաւ թէ ինչ է թիրաքերի նպատակը՝ վերջնականապէս ոչնչացնել հայ ժողովուրդը: Կարսի առումից յետոյ այդ շրջանի ամբողջ հայութիւն առանց բացառութեան թողեց շրջանը և իր բոլոր հարստութիւնները և ոտաբոբիկ և գլխաբաց փախսան դեպի Ալեքսանդրապօլ, Թիֆլիս, Հիւսիսային Կովկաս և այլուր, ուր որ թիրաքեր չը կային: Ալեքսանդրապօլից էլ փախչում էին, բայց ո՞ւր: Մի մասը մնաց քաղաքը, նոյնիսկ ընտրւել է մեջլիս և նախագահ Լ. Սարգիսեանը, բայց դա չէր փոխում դրութիւնը: Ժողովուրդը ամբողջը ուշ թէ վաղ մատնւելու էր տաճկահայերի վիճակին, և միակ փրկութիւնը մնում էր Գերմանիան, որ կարող էր ստիպել իւր դաշնակից Թիրաքիային խօսքով թէ ուժով չը գրկել հայ ժողովրդի մնացորդները ապրելու հնարաւորութիւնից և տեղից և ստիպել բաւականապէս Բրեստի դաշնագրի սահմաններով: Այլ ուժ չը կար մեզ օգնող, ռուսները գնացել էին և չէին կարող գալ, անգլիացիք դեռ Մոսուլ էին և կոնսուլը Թիֆլիսից հեռանալիս ասել էր՝ մենք ոչ մի բանով հայերին օգնել չենք կարող, արեք ինչ որ կարող էք և ինչ որ ուզում էք և հնարաւոր էք

գտնում ձեզ փրկելու համար: Այսպիսի պարագաներում Ազգային խորհուրդը ընտրեց մի պագամաւորութիւն իմ նախագահությամբ և մասնակցութեամբ Պապաջանեանի, Ալ. Ջուրաբովի և Յովս. Բեզգադեանի, տալով մեզ լիազօրութիւն բանակցել Թիւրքիայի և Գերմանիայի հետ հայ ժողովրդի անունից Բաթումում և նրանց մայրաքաղաքներում (նոյնպէս Աւստրիային և Բուլղարիային դիմելու իրաւունքով, որ մենք դեռ չենք արել): Մենք եկանք Բաթում մայիսի 17-ին, մնացինք մինչև 26-ի երեկոն և համարեայ ոչ մի հետևանքի չը հասանք, քանի որ թիւրքերը որոշեցին ոչինչ չը զիջելով ներկայացնել իրենց ուլտիմատումը, թէն մեր տեղական թայթարները և Ադաևը ու Հուսէյն Ալին, ստանալով մեզնից Ղարաբաղը, Ջանգեզուրը, Շարուրը և Նախիջևանը խոստացան համոզել թիւրքերին թողնել մեզ այն գաւառներ և տալ հնարաւորութիւն քաղաքականապէս ապրելու, բայց ոչինչ չը դուրս եկաւ: Մենք վերադառնում էինք Թիֆլիս խորհրդակցելու, երբ ճանապարհին ստացանք հեռագիր, որ ես և Ջուրաբովը վերադառնանք Փոթի և տեսնուելով Գերմանիայի ներկայացուցչին նրա հետ մեկնել Բերլին իբրև հայ ժողովրդի կառավարութեան (Ազգ. խոր.) ներկայացուցիչներ և ամեն գնով մինչև Գերմանիայի (...)-ի գնով փրկել դրութիւնը և հայ ժողովրդին:

Այստեղ մեզ ասացին, որ նրանք պնդելու են Բրեստի սահմանների վրայ: Գլխաւոր կвартира՞ն (hauptquartir), ինքը՝ կայսրը, հետաքրքրուել են դրութիւնով և ուղարկել շատ խիստ ձևով առաջարկութիւն Թիւրքիային բաւականանալ Բրեստի սահմաններով և մաքրել բոլոր գրաւած երկիրները: Հետևանքների մասին դեռ ոչինչ չը գիտենք: Թիֆլիսից ոչ մի լուր չունենք: Վրացիները, որոնց անկախութիւնը այստեղ համաձայն են ընդունել, ստացել էին մի հեռագիր, վերևը գրած բովանդակութեամբ, իսկ մենք ստացել ենք Մոսկվայի գերմանական դեսպան Միրբախի հաղորդագրութիւնը այստեղի Արտաքին գործոց նախարարութեան, թէ բժ. Ջարիևը, որ Մոսկվայում է, հեռագիր է ստացել Բագուից, թէ հայերը ստիպւած են տալ թիւրքերին բոլոր իրենց երկիրը և սահմանափակուել Նոր Բայազետի լեռներով և լճով: Ուրիշ ոչ մի լուր չունենք, թէն ինքներս միշտ հեռագրում ենք գերմանական radio-ով Թիֆլիսի գերմանական կոնսուլին Ազգային խորհրդին տալու պայմանով և նրանից ունենք նախօրոք ստա-

Այժմ թոյլ տուէք Ձեզ անձնապէս ասելու այն, ինչ որ ես բացի ձեզանից և Համօյից ոչ ոքին չեմ կարող ասել: Դա վերաբերում է իմ անձնական դրութեանը և իմ աշխատանքի պայմաններուն: Ահա գործը ինչու՞մ է՝ ես 3 տարի շարունակ աշխատում էի «Russie III.» և իմ բարեկամ Ղօրղանոֆի¹⁴⁶ ընկերութեան մեջ ստանալով այս երկու տեղերից միասին 2000 ֆր., յետոյ ես թողի «Rus. III.» և Ղօրղանոֆը մենակ ինձ տալիս էր ոռճիկ, բացառապէս դրա համար, որ ես կարողանամ նւիրել ազգային աշխատանքին: Իսկ ուրիշ տեղից ստանում էի ներկայացչական, որ ես ինքս պիտի ճառէի: Այժմ ի՞նչ է պատահել: Ղօրղանոֆ շնորհիւ պատերազմի փակեց իրա գործ և յայտարարեց ինձ, որ յունւարի 1-ից այլև ոչինչ չ'պիտի տայ ինձ, ասելով, որ չի կարող (որ ճիշտ է) այլևս և որ «ազգը» պիտի ինձ վճարէ, քանի որ պետք ունի իմ աշխատանքի: «R. III» նոյնպէս փակուեց: Ես

¹⁴⁵ Խոսքը **Արշակ Չոպանյանի** մասին է:

¹⁴⁶ Խոսքն, հավանաբար, վերը նշված **Նիկոլայ Ալեքսանդրի Ղօրղանյանի** մասին է:

չափազանց մտահոգւած եմ: Ի՞նչ պիտի անեմ յունւարի 1-ի՞ց: Մէկ կողմից, ես տեսնում եմ, որ իմ աշխատանքը չափազանց կարևոր է և ամեն կողմից ինձ վրայ են գալիս և ինձանից են պահանջում ամեն տեսակ գործ, և ես իսկապէս գիշեր-ցերեկ աշխատում եմ, միւս կողմից ոչ մի տեղից ես չեմ տեսնում նիւթական օգնութիւն պատ. համար և ես ստիպւած եմ, ինչպէս 10 տարի, այսօր էլ մուրալ հարուստներու մօտ:

Ուստի ես մի ամիս մտածելուց յետոյ վճռեցի երկու քայլ անել՝

ա) գրել Համոյին, որ նա իրա կազմի կողմից օգնէ պատուիր. որ այսօր ամենակարևոր գործ է վարում և

բ) գրել Ձեզ, որ Դուք անձնապէս, à titre privé, քանի որ դուք ինձ ճանաչում էք արդէն 20 տարի, ինչպէս շատ համեստ պահանջներով մարդ, գտնէք այնտեղ Ձեր կապերու շնորհիւ 2-3 մարդ, որոնք ուղարկեն Ձեր միջոցաւ ինձ ամիս 25-30 dollars, այն ծախսերու համար, որ այսօր անհրաժեշտ են մեր ընդհանուր քաղաքական գործի համար: Հասկացե՛ք՝ ես ընդունում եմ մարդկանց, տալիս եմ ճաշեր, rendez-vous, իմ տանը ժողովներ են անում, և ես ստիպւած եմ գրկել իմ ընտանիքը ամենաանհրաժեշտ բաներուց, որպէսզի կարողանամ ապրել: Ի՞նչ տրամադրութեամբ ես կարող եմ անել դիմումներ, ընդունել մարդկանց, երբ իմ վաղը և այսօրայ կեանքը ապահոված չէ: Ես կարծում եմ, որ դա ինձ համար չէ, այլ այն պաշտոնի և գործի համար, որ ինձանից են պահանջում և որը ես կատարում եմ, իմ կարծիքով, մեծ բարեխղճութեամբ: Իհարկէ դա կարող էք Դուք ասել միայն Ձեր ամենամօտիկ մարդկանց և ոչ [ԻԳԷին] և ոչ որևէ ուրիշ մարմնին: Ես թոյլ տւի միմիայն Ձեզ ասելու այն յոյսով, որ Դուք ինձ կհասկանաք և կանէք անհնարինը ինձ բաւարարելու համար: Ուրիշ կերպ ես երբէք չեի գրել: Բարի եղէք անմիջապէս ինձ տեղեկացնելու, որ այս նամակը Դուք ստացաք: Հաւատում եմ, որ Դուք ինձ լաւ հասկացաք:

Ձերն բարևներով Ձեր Ալ. Խատիսեան:

Արտաշես Չիլինգարյանին (Ռուբեն Դարբինյանին)¹⁴⁷

1 մարտ 1940 Paris

Միրելի Արտաշես, 1) ներփակ նամակը Միմոնին կարող էք բաց անել, կարողալ և նրան ուղարկել, քանի որ նրա մեջ կան լուրեր որ Ձեզ համար կարող են լինել հետաքրքիր:

2) Խնդրեմ մի քանի անգամ անդրադառնալ ազգային միութեան գաղափարի վրայ (տես Միմոնի նամակ կետ 4):

3) Թող նորից յիշատակւի, որ Հ.Հ. պատւիրակ. հետևում է մեր դատի, պէտք է որ իմանան, որ մենք միշտ կ'աշխատենք: Մեր կապերը այժմ լաւ են:

4) Դուք խօստացաք ամեն ամիս ինձ ուղարկել հոնորար: Ես ստացայ 14 dol. յունւար 12-ին, իսկ այսօր մարտի 1-ը և ես ոչինչ չունեմ Ձեզանից: Բարի եղէք անմիջապէս ուղարկել: Հաշւեցէք ինդրեմ 2 dol. յօդւածի համար:

5) Մի յարձակւէք ոչ թիրքերու և ոչ ռուսներու վրայ Ձեր թերթի մէջ:

6) Մի ուշացէք Ձեր նախագահին դիմում անելու, որի մասին գրած եմ արդէն:

Ձերմ բարևներով Ալ. Խատիսեան:

¹⁴⁷ Ռուբեն Դարբինյան (իսկական անունը՝ Արտաշես Ստեփանի Չիլինգարյան, - 1883, Ախալքալաք, Ռուսական կայսրություն - հունիսի 14, 1968, Բոստոն, ԱՄՆ), հայ նշանավոր հասարակական, քաղաքական, պետական և կուսակցական գործիչ: Ուսանել է Հայդելբերգի և Մյունխենի համալսարաններում, 1906 թվականին ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Հայաստանի Հանրապետության արդարադատության փոխնախարար, նախարար (1920թ.): Հայաստանուն բոլշևիկյան կարգեր հաստատվելուց հետո ձերբակալվել և ազատվել է 1921թ. փետրվարին՝ հակաբոլշևիկյան ապստամբության օրերին: Տարագրվել է, վերջնական հաստատվել է Բոստոնում, որտեղ էլ կնքել է իր մահկանացուն: Արտաշես Չիլինգարյանը այն հայ գործիչներից էր, ով մշտապես և հետևողականորեն ներկայացնում և բացատրում էր հայության գլխին կախված բոլշևիզմի սպառնալիքն ու ռուսական վտանգը:

Արտաշես Չիլինգարյանին (Ռուբեն Դարբինյանին)

9/III 1940 Paris

Նախորդ նամակի մեջ դրած էր Միմոնին ուղղած երկար նամակս:

Միրելի ընկ. Արտաշես, ներփակ երկու յօդուածներ շատ կարևոր են մեզ համար և ահա ինչու.

ա) Մենք եկանք համաձայնութեան մեր Կովկասի հարևաններուն հետ և պէտք է շեշտել մեր ընդհանուր շահեր և համագործակցութիւնը: Մենք դեռ չենք ստորագրել confederation acte, բայց դա շուտով կ'լինի: Դա անհրաժեշտ է Կովկասի ապահովութեան համար և բարի դրացիութեան համար:

բ) Մենք տեսնում ենք որ երբեմն «Հայրենիքը» գործածում է սուր լեզու տաճիկներու դէմ: Այսօր դա շատ վտանգաւոր է և խնդրում էք, որ դա տեղի չունենայ Ձեր թերթի մեջ: Մենք գտնում ենք նոյնպէս շատ անյարմար և անտեղի վիճաբանական հանդէս (թէ ո՞վ պիտի յաղթի), որ պիտի կայանար Ձեզ մօտ փետր. 11-ն: Շատ ենք խնդրում չանել նման վէճեր: Այստեղ դա առաջ բերեց շատ անցանկալի տպաւորութիւն: Այստեղ շատ լուրջ կերպով հետևում են մեր մամուլին: Պէտք է լինել լոյեալ և չեզօք: Ահա մեր նշանաբանը: Այս մտքով էլ ես շարունակ գրում եմ: Շատ եմ խնդրում այս երկտողը ուղարկել Միմոնին, որը իրա ճառի մեջ պարզ անցաւ Սովեթներու կողմը (եթէ տաճիկներու վտանգ կայ): Մի մոռացէք, որ տաճիկները դաշնակից են և մեր հարևան են Կովկասի մեջ:

Ձերմ բարևներով Ձեր Ալ. Խատիսեան:

P.S./ Ուղարկեցէք յօդուածներուս հոնորարը:

Գրեցէք ինձ Ձեր տպաւորութիւնները:


*Նիկոլ Աղբալյանին
(30 օգոստոսի, 1923թ.)*

30 օգոստոս 1923

¹⁴⁸ Արխիվային փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը տրամադրել է Մայրլ Բաբայանը («Համագայինի» կենտրոնական արխիվ, Նիկոլ Աղբալյանի ֆոնդ (ֆոնդ 2, գործ 41):

Միրելի Նիկոլ

Բարի գալուստ, շատ ուրախ եմ, որ գալիս էք Եգիպտոս: Ուրախ եմ, որ Ձեր թանկագին ոյժերը կարող են Ձեր սիրուած ասպարէզում օգտագործել: Իմ կողմից թոյլ եմ տալիս ինձ յանձնարարել Ձեզ մեր լաւագոյն ոյժերից մէկին՝ պ. Պարսամեանին, որը շատ է ցանկանում աշխատել ուսուցչի պաշտօնում Ձեր դպրոցում:



Նամակի բնագիրը

*Վահան Փափազյանին***Յունիսի 1-1923**

Միրելի ընկ. Վահան, Դուք երևի արդէն ստացած կլինէք իմ նամակը Պրագայի իմ ճանապարհորդության մասին: Այսօր ես ստացայ Ձեզանից նամակ պ. Գրինֆելդի և նրա աշխատակիցների մասին: Տեցի կարդալ նամակը և ընկ. Վրացեանին: Մեր երկուսի տպաւորութիւնը եղել է նոյնը՝ այսինքն, որ ոչ պատուիրակութիւն և ոչ Պատ. մարմ. չեն կարող ընդունել պ. Գրինֆելդի առաջարկը, ինչպէս բացարձակապէս հակասող Conference-ի վճիռներին և հաստատած budget՝ ին: Conference քննարկած է եղել պ. Գրինֆելդին ռոճիկ տալու հարցը և մերժեց: Առհասարակ մեր ներկայացչութիւնների համար վճուած է՝ պահել պատուակալ (առանց վարձատրութեան) ներկայացուցիչներին, իսկ այնտեղ, որտեղ դա հնարատր չէ, պահել մի քարտուղար (ռոճիկով): Այժմ թէ Berlin, թէ London, թէ Rom, մենք նախ՝ պէտք է ընտրենք պատուակալ ներկայացուցիչ: Ահա այս դերի համար էր, որ մենք խնդրեցինք Ձեզ խոսել պ. Գրինֆելդի հետ, այսինքն՝ առանց ռոճիկի: Եթէ նա համաձայնէր, մենք կարողանայինք հիւպատոսական (կամ միևնոյն ժամանակ և քարթուղարական) պաշտոնի համար ունենալ ռոճիկատր քարթուղար, որին կարող էինք տալ ի լրումն հիւպատոսական հասոյթների որոշ վարձատրութիւն (մոտ 150-200 fr.): Իսկ այն ձև, որ առաջարկում է պ. Գրինֆելդ, 1250 fr., անընդունելի է բացարձակապէս: Նոյն է և ընկ. Վրացեանի կարծիքը: Ուստի խնդրում եմ Ձեզ նորից խօսել այս մտքով պ. Գրինֆելդի հետ: Այս մտքով ես գրեցի նրան պաշտոնական նամակ: Թող նա վարի միմիայն diplomatique մասը, իսկ հիւպատոսական մասի համար մենք կունենանք մի քարթուղար: Նա կարող է ինքը նրան նշանակել, լինի դա Նազարեան կամ Քրիշլեան: Յիշում էք, որ Conference առհասարակ հիւպատոսական

¹⁴⁹ **No54 - No57** արխիվային փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տրամադրել է Մայքլ Բաբայանը («Համազգայինի» կենտրոնական արխիվ, Վահան Փափազյանի ֆոնդ (ֆոնդ 5, գործ 34):

վարիչի համար budget չի նշանակել, այլ ասաց, որ նրանք պիտի տեղական հասոյթներով ապրեն: Սպասում եմ Ձեզ անել լրացուցիչ նամակ:

Այսօր ստացայ Detroid (America)-ից 43 անգ. ոսկի, դեղեր առնելու համար և ուղարկելու Հայաստ. Կարմ. Խաչին: Խնդրեմ, բարի եղէք իմանալու, արդե՞օ ք կարելի է Berlin-ում առնել դեղեր և Berford-Premium միջոցով ուղարկել Հայաստ. Կարմ. խաչին? կարծեմ Berlin'ից արդէն մի անգամ դեղերը ուղարկուել են Երևան?

Ինչ ճանապարհով և հասել են արդէն?

Եթե դրական պատասխան ստանամ, դրամը կ'ուղարկեմ պ. Գրինֆելդին և գործը կ'յանձնեմ Berlin'ի մէջ կարգադրելու: Խնդրեմ այս հարցին էլ պատասխանեցէք:

Վերադառնալով պ. Գրինֆելդի հարցին, նորից խնդրում եմ համոզեցէք նրան, որ ընդունի պատուակալ ներկայացուցչի պաշտոնը: Մենք զարմացանք, որ դուք չ'բացատրեցիք նրան, որ այժմ ոչ ոքից կախուած չէ փոխել այն վճիռը, որ կայացել է Berlin'ում չէ փոխել այն վճիռը և սակարկելու կամ չ'սակարկելու ես բնաւ իրաւունք չունեմ:

Բարևներով ձեր Ալ. Խատիսեան:

No 55

Վահան Փափագյանին

Յուլ. 21-1923

Միբելի ընկ. Վահան, ստացայ Ձեր նամակը: Ես 10 օր անցկացրի London'ում: Բագրատունուն մեծ դժուարութիւններով վերջնականապէս հեռացրի, Բաֆֆիին մտցրի, ներկայացրի For[eign] office'ին, նա դիմել է գործին: For[eign] office-ին. խօսեցի՝ նրանց այսօրուայ ծրագիրը. մօտենալ ..., ճանաչել նրան և լինել տաճիկների դէմ և աշխատել նորից Cilicie հայերի համար:

Խնդրեցին նորից գալ հոկտեմբերին:

Berlin անձամբ կ'գամ օգոստոսին, գործերը վերջացնելու համար: Կ'գնամ և Պրագա ուսանողական հարցի համար Berlin'ից առաջ: «Պ. Մ.» խնդրեց ինձ 10.000 fr. ուղարկել Պարկաստ. մեր ընկերների օգտին: Ես երէկ դիմեցի պ. Գ. Գիլբերնկեանին և նա տուեց 10.000 fr., որ վաղը ես ու-

դարկում եմ ...in: «Լույսը՝ կայծի» հարցը դեռ վերջնականապես չեմ վճարել, ունեմ 12.000 fr., որ պ. Խորասանջեանը տուել է ինձ թերթի համար: Բարև Անումեանից և Վարդկէսից, ուրիշ մարդ չ'կայ: Ձեր վախերը բաժանում եմ: Միսակի համար գաղութը տալիս է ամսական որոշ գումար: Գործը շատ շատ է, օրական 25-30 մարդ գալիս է: Մեր կապերը շատանում են, ես ամբողջ օրերը զբաղւած եմ: Ուզում ենք Lausanne-ի Conference-ի առթիւ նորից մի բողոք-յայտարարութիւն անել: Ահարոնեանի հետ իմ յարաբերութիւնները նորմալ են:

... շատ ծանր էին անցել:

Վրացիները երազում են տաճիկների հետ Կովկասը մաքրել, բայց For. office դէմ էր այս ծրագրին, ահա և բոլոր մեր նորութիւններ:

Յարգանեք և սիրով Ձեր Ալ. Խատիսեան:

Դաստակեանը հեռագրով իմացնում է, որ մի քանի օրից յետոյ պիտի մեզ դրամ ուղարկի:

Ժեներ. Ղորղանեանին Նուբարը և Col. 4 ամսով ապահովացրին 1.500 fr. ամսական, որ նա գրի «Հայերի մասնակց. մեծ պատերազմի» մէջ:

Պ. Մ-ին գրեցի արդէն 15 զեկուցում: Նրանք շատ գոհ են, ինչպէս տեսնում եմ իրանց նամակներից:

Ալ. Խատիսայան

No 56

Վահան Փափագյանին

7 հոկտ.

Միբելի ընկ. Վահան

Ստացայ Ձեր նամակը: Հրաչ Տեր-Յարութիւնեանը ժամանակին արդէն ստացաւ ինձանից նամակ, որտեղ ես անձամբ նրան բացատրեցի նրա գործի դրութիւնը: Երևի նա ձեզ պատմած կ'լինի, որ Ղարաբեգեանը, որի տեղ նա պիտի մտներ, անսպասելի կերպով եկել է Prague և ես ինդրեցի Չէխօսլով. Խա. Իլիուսին էլ ընդունել, ամեն օր սպասում եմ պատասխանի, որ դեռ չ'կայ: Ահա գործի դրութիւնը: Ես հրաժարեցի, որ ...ից անմիջապէս Berlin visa ուղարկի, երբ գործը կարգադրի և պ. Մսկարեանը այս գործին հետևում է:

Համլ. Թումանյանի Վիեննայի conference-ից յետոյ գրեց ինձ անձնական նամակ, իբրև իմ ազգական (Գիգա-Աշխէն) և իբրև իմ նախկին քարթուղար, ինտրելով ծանօթացնել նրան անձնապէս իմ բռնած ուղղութեան հետ: Ես պատասխանեցի և երբէք չէի կարող ենթադրել, որ առանց իմ թոյլտութեան նա իմ մասնաւոր նամակը ուղարկի այնքան հեռու: Ահա ամբողջ պատմութիւնը: Ըստ էութեան ես իմ կարծիքները չեմ թաքցնում, բայց իհարկէ Համլիքը պիտի հարցնէր իմ թոյլտութիւնը:

Նրա նախկին ծառայութիւնը պիտի նրան սովորեցնէր այս ձևերին:

Երէկ եկաւ Փարիզ Ստ. Մամիկոնեանի որդին, նա պատմում է, որ մեր խմբից 13 թեքնած. Կովկասից չեն թողնում գնալ Prague, որովհետև Պրագա ժամանել են 32 հոգի, 5-ը ճանապարհի վրայ են, դա 37, իսկ 13 Թիֆլիսից չեն կարող դուրս գալ: Ես երևի նորից կգնամ Պրագա այս 13 հոգու տեղ ներկայացնելու նոր ցուցակ: Եւրոպայում նորութիւններ չկան, իսկ տեղում ռուս-տաճկական յարաբերութիւնները լարում են շարունակ:

Ձեր Ալ. Խատիսեան

No 57

Վահան Փափագյանին

7 մարտ 1930 Paris

Միբելի ընկ. Վ. Փափագյան

Ձեր փետր. 13-ի նամակը ես ստացայ և մարտի 5-ին հեռագրեցի Ձեզ՝ §Sarafian pour Papasian. Oui, envoyez télégraphiquement trois mille francs, film envoyens, Khatissian!:

Այժմ տալիս եմ մանրամասնութիւններ.

ա) Դուք խնդրեցիք 13 պատկերով նշանակել գինը 550 doll., այժմ վճարել 25 օսմ. ոսկի և մնացածը բաժանել երկու մասի (2 ամսից և 3 ամսից յետոյ) և ֆիլմը ուղարկել մարտ ամսուայ ընթացքին: Այս բոլորը ես ընդունել տի պ. Ղորղանեանին:

բ) Այժմ պ. Ղորղանեանը ունի ձեռքի տակ մէկ օրինակ ֆիլմի (որը արդէն գործածել է, բայց որ շատ լաւ դրութեան մէջն է), և որպէսզի Դուք անմիջապէս ստանաք այս ֆիլմը, նա Ձեզ ուղարկում է այս օրինակը:

զ) Քանի որ այս միակ օրինակը Ձեզ ուղարկելուց առաջ պ. Ղորղանեանը պիտի հանէր copie նրանից, նա խնդրեց (ինչպէս և դուք գրեցիք), որ Դուք ուղարկէք նրան այն 25 օսմ. ոսկի (մեր հաշուով մօտ 2.600 fr. français) որ նա պիտի միացնէր և նրա սեփական դրամը կ'վճարէր copie-ի համար (25 ոսկու փոխարէն նա խնդրեց 3000 francs français)

դ) քանի որ 550 doll. կազմում է 550 x 25=13.750 fr., Դուք այժմ կ'վճարէք 3000 fr. իսկ մնացած 10.750 կ'բաժանէք՝ 5000 - երկու ամսից յետոյ, իսկ 5.750 - երեք ամսից յետոյ: Այսինքն՝ ամեն ինչ Ձեր ցանկութեան համաձայն: (Ի միջի այլոց պ. Թիւթինջեանին 600 doll. էր նշանակած): Այժմ Ձեզ հասկանալի է, որ «Oui» խօսքը պատասխանում էր Ձեր պայմաններուն, իսկ 3000 fr. պէտք է copie-ն հանելու համար, որպէսզի ֆիլմը անմիջապէս գնայ ... և քանի որ 3000 fr. անմիջապէս պէտք է վճարել, և մենք խնդրել ենք ténographiquement ուղարկել:

«Film envoyens» պէտք է հասկանալ, որ 3000 fr. ստանալուց յետոյ, ֆիլմը կ'ուղարկուի անմիջապէս (այսինքն՝ copie հանելուց յետոյ, դրա համար պէտք է 2 օր): Այժմ կարծեմ Ձեզ ամեն ինչ պարզ է: Մուրհակներու համար ես վերցրի ինձ վրայ բարոյական պատասխանատւութիւն և համոզուած եմ, որ դուք կ'լինէք ճշտապահ: Ուստի ամբողջ մեքենան շարժելու համար սպասում եմ ձեզանից 3.000 fr. par télégraphie: Կրկնում եմ՝

- a) Դուք ուղարկում էք 3000 fr. անմիջապէս ինձ
- b) Հանում է 2 օրուայ մէջ copie-ն
- c) Անմիջապէս ֆիլմը ուղարկում է Ձեզ
- d) 5.000 fr. վճարում էք 2 ամսից յետոյ
- e) 5.750 fr. վճարում էք 3 ամսից յետոյ

Շտապելու համար պ. Ղորղանյանը ձեռնարկել է արդէն copie-ն հանելու գործին: Եթէ սպասէր copie-ի développement, տպագրութիւն, պէտք է առնուլ 1 1/2 ամիս, ի քանի օր Դուք մարտին պէտք ունէիք, նա ուղարկում է Ձեզ իրա օրինակը՝ ֆիլմը:

Ես համոզուած եմ, որ այս նամակը ստանալուց առաջ Դուք արդէն 3.000 fr. կ'փոխադրէք և ֆիլմը կ'ուղարկուի Ձեզ: Այս բոլորը ես գրում եմ Ձեզ մանրամասնութիւնները պարզելու համար:

Ուղարկում եմ և աֆիշաններ: Տայ Աստուած յաջողութիւն:

Այսօր այցելեց ինձ պ. Atchison (Աշխտն) N. E. R. [Near East Rellief] լիազոր, նա գնում է Beyrouth և Ձեզ հետ պիտի տեսնուի: Ես տի նրան Ձեր անունը: Նրանից շատ բան է կախուած, նա Ձեզ կ'պատմի (N. E. Rel.-ի տեղ կազմել է նոր N. E. Fondation, որ մեծ գումարներ ունի) գալու նպատակը: Լաւ պատրաստեք նրան Բերիոյ և Միջագետքի համար: Սպասելով Ձեր լուրերու կ'մնամ:

Ձեր Ալ. Խատիսեան:

No 58¹⁵⁰

*Հունաստանի խորհրդարանի նախկին պատգամավոր
Գևորգ Փափագյանին*

N 197

4 հոկտ. 1923

**Մեծարգոյ Տիար Գևորգ Փափագեան նախկին անդամ
Յունական խորհրդարանի**

Աթենք

Մեծարգոյ հայրենակից.

Ստացուած ենք Ձեր 28 օգոստոս և 9 սեպտ. 1923 թուագիր նամակները, որոնցմով մանրամասն տեղեկութիւններ տուած էիք մեզ ..., նա Relief-ի, Աթենքի խորհրդաժողովին մասին, ինչպէս նաև Յունաստանի հայ գաղթականութեան հպատակութեան հարցին վերաբերման:

Նախ և առաջ թոյլ տուէք, որ մեր ամենախորին շնորհակալութիւնը յայտնենք Ձեզ Ամերիկեան նպաստամատոյցի Աթենքի խորհրդաժողովին մօտ պատուիրակութեանս ներկայացնելու մեր առաջարկին, այնքան սիրայոժար կերպով ընդ առաջ երթալուդ և այդ առիթով այնքան արժանաւոր կերպով նոցա ժողովին մօտ մեզ ներկայացնելուդ համար: Շնորհակալութիւն նոյնպէս Ձեր տուած խիստ շահեկան և մանրամասն տեղեկութիւններուն համար:

¹⁵⁰ Փաստաթուղթը վերցված է Արգամ Այվազյանի ֆէյսբուքյան էջից:

Ինչ կը վերաբերի Յունաստանի հայ գաղթականության հպատակության չափազանց փշոտ հարցին, մենք լուրջ կերպով քննության առինք Ձեր ներկայացուցած բոլոր դիտողություններն ու դատողությունները և շուտով այդ մասին կ'ունենանք Արգոյին պատուիրակության հետ մտքերու փոխանակություն, հաւանորէն Խառն ժողովի մը մէջ կրկին կը քննենք խնդիրը և արդիւնքը չենք մոռնար Ձեզ հաղորդել:

Ընդունեցէք ամենագոյ հայրենակից յարգանոց հաւաստիքը:

Ի. տ. նախագահի ՀՀ պատուիրակության

Ալ. Խատիսեան


ԲԱԺԻՆ I V

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

№ 59

ՀՈՒՎԱՍԾ, ԳՐՎԱՍԾ ԳԱՐՈ (ԳԱՐԵԳԻՆ) ՓԱՍՏՐՄԱՋՅԱՆԻ,
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԵՎ ՍՏԵՓԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ
ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

(«Հայրենիք» օրաթերթ, ազգային, գրական, քաղաքական,
հասարակագիտական, ուրբաթ, ապրիլ 13, թիվ 3330, 1923թ., էջ 1)



Ո՛վ չէր ճանչնար Արմէն Գարսն, այդ կրակոտ յեղափոխականը, որ յաշխենապէս իր անունը կայեր էր Պանք Ռիւսմանի Հերոսական գործին հետ: Ո՛վ չէր ճանչնար Արմէն Գարսն, իրրեւ հայ կամաւորական խմբերու հրամանատար մեծ պատերազմի տակն, որ վերջի տարիներն ալ աշխարհ բարեխղճութեամբ ու եռանդով կը ներկայացնէր Հ. Հ. կառավարութիւնը Աւաչինկիների մէջ:

Այդ անվախ ու անբաւար ժողովրդի անձնաւորութեան մէջ կը ժարմնաւորէր հայ ժողովուրդի կամքը, անոր վճռականութիւնը՝ կեանքի եւ արեան զնով ձեռք բերելու ազատութիւն: Պայքարի մէջ ան կը մտնար ամէն անձնական բան, բնասներ, սեփական յարմարութիւն եւ վայելք ու վտանգի տակ կը զնէր իր կեանքը աներկիւզ ու անվերապահ կերպով: Շատ անգամ բախոր զինքը իննչոյն էր Հայաստանի եւ հայ ժողովրդի համար:

Անոր հողին բիրեղ մըն էր՝ անար խառնուածքը բո՛ւրբո՛ւրջ չէր ճանչնար: Բնաւորութիւնը սպերտական էր եւ մաքով՝ պայծաս ու յուստար:

Հայ ժողովրդի սնդատարութեան պատմութեան մէջ անոր անունը

նր, մեր ժողովրդի հողին բանաստեղծական խորքերը թափանցելու զմայլիկ բնդունակութիւնը, եւ բարանչիկի զաշխարհութիւնը՝ անոր լեզուին զարձայցած էին Քուսմանկանը հայոց բանաստեղծութեան արբան: Հայ երեխաներու ամբողջ սերունդներ հիացել ու սնուել են անոր երգերով եւ անոնց միջոցով սիրել են իրենց հայրենիքը: Ան կէրդէր Հայաստանը, հայ զիջազունները, հայ անասունները, չէրեւաթներն ու սաստիկները:

Յանձին անոր գերեզման կ'ըջէլ ժամանակակից հայութեան յուսուցոյն բանաստեղծը:

Ռուսոյ սահմաններէն ու Կովկասէն գալիս աւելի նուազ հաշակ սնի Մանթան Մամիկանեանի անունը: Հանդարտ, հուստարակից, խո՛ւան իրուպէլա մը, որ անձնուէր սիրով մը կը սիրէր իր հայրենիքը եւ սրուն համար վերջին տարբին թողուցած էր Մակուայի իր հանդիսա կեանքը:

Սկզբը իրրեւ Մակուայի Հայկական Կամիւռի նախադա՛ն, ազատ հայոց Ազգային Խորհուրդի զինուորական գործերու վարիչ, լիանոյ Հայաստանի Խորհրդարանի անդամ եւ վերջապէս Հայաստանի Հարապետութեան յատուկ լիազօր Վրաստանի կառավարութեան մօտ, ան

ճառայեց իր ժողովրդին մեծ անձնորիւրութեամբ ամէն տեղ երեւան բերելով հաստատակամութիւն, խորունկ հաստատ գէջի իր կատարած գործը եւ խիստ կարգապահութիւն:

Յեղափոխական չէր խառնուածքով՝ յայց հմուտ եւ փորձուած պետական գործիչի մը բոլոր յատկութիւնները ունէր:

Եթէ հայ ժողովուրդը կենդանի է եւ լեզուն հաստատ գէջի իր սպարզան, աւար պատճառներէն մէկն ալ Արմէն Գարսնեան, Յ. Քուսման-

կաններու եւ Ս. Մամիկանեաներու պէս անձնուէր զուսկներու զօշոթիւնն ու գործն է:

Անարժեքով մեր՝ զլուխները տանոց թարմ շիրմներուն առջեւ, մեր յարգանքի ամենամեծ տարբը անոնց առան սխախ ըլլանք, 'եթէ երգուինք նոյն անձնուրիւթեամբ ծառայել անոնց խաւքներուն եւ այդ խաւքներու միակ ազրիւրին, հայ ժողովրդին:

Ա. ԿԱՏՐՈՒՄԵՆ

Փարիզ

**ՀՈԴՎԱԾ, ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՌԶԱԿՄԱՆ 17-ԱՄՅԱԿԻՆ
ՏԱՄՆԸԵՕԹԸ ՏԱՐԻ¹⁵¹
(1918-1935)**

Երբեք ալ մէկ տեսակ ենթադրութիւն, հիմնւած ուրիշ ժողովուրդների պատմական տուեալների վրայ, իհարկէ չէ կարող լինել աւելի համոզիչ և փաստացի, քան սեփական փորձը՝ հիմնված երկարատև ապրումների վրայ:

Այս (6 բառ ջնջած) տեսութիւնը ծագում է իմ գլխում ամէն անգամ, երբ ես աշխատում եմ ըստ կարելիին առարկայորէն, (2 բառ ջնջած) առանց կանխամտածութեան, (1 բառ ջնջած) հետեւեալ զարգացման ընթացքին այն հիմնական դրութեանց, որոնք հիմ ծառայեցին 1918-ին Հայաստանի Հանրապետութեան հռչակման (1 բառ ջնջած): 1918 մայիս 28-ից մինչև այսօր անցած է (1 բառ ջնջած) 17 տարի: Այս ժամանակաշրջանը և՛ շատ կարճ է, և՛ շատ երկար, (1 բառ ջնջած) նայելով թէ ի՛նչ տեսակետից կը մօտենաք նրան: Նա շատ կարճ է որևէ մէկ երկրի (1 բառ ջնջած) պետական պատմութեան զարգացման տեսակետից, լինի այդ երկիրը փոքր՝ ինչպէս Զուեցերեան կամ Բելճեկա, կամ մեծ՝ ինչպէս Գերմանիա կամ Ֆրանսա:

Յաճախ դարեր պէտք են, որպէսզի պետութեան սահմանները (5 բառ ջնջած) լիովին բոլորակուին կամ վարչակարգերը, (3 բառ ջնջած) պայքարից յետոյ ստանան առաւել կամ նւազ (9 բառ ջնջած) վերջնական ձևեր, օրինակ՝ նման հանրապետական ձևին Ֆրանսայի մէջ, օրինակ՝ կամ սահմանադրական միապետութեան (1 բառ ջնջած) Անգլիոյ մէջ: Նման զարգացման համար պէտք են դարեր: Սակայն, որպէսզի փորձը ցոյց տայ թէ որքա՛ն առողջ էր պետութեան (1 բառ ջնջած) ստեղծման գաղափարն ինքը, թէ որքա՛ն (3 բառ ջնջած) ժողովուրդը իւրացրած է անկախութեան գաղափարը և ընդունած է երկիրը իբրև իր հայրենիքը, անկախ

¹⁵¹ Արխիվային փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը տրամադրել է Մայքլ Բաբայանը:

իր ծննդեան (6 բառ ջնջած) կամ դաստիարակութեան (1 բառ ջնջած) վայրից,– դրա համար 17 տարին բաւական ժամանակ է: (7 բառ ջնջած) Այդքան ժամանակի մէջ մի ամբողջ սերունդ է աճում: Այդպէս եղաւ նաև (1 բառ ջնջած) հայերի նկատմամբ. մարդիկ, որոնք ներկայիս 25-30 տարեկան են, 1918-ին 8-13 (1 բառ ջնջած) տարեկան երեխաներ էին: (3 բառ ջնջած) Այդ հասակի մէջ նրանք դեռ կարող էին գիտակցաբար վերաբերել իրենց աչքերի առջև կատարուող քաղաքական դեպքերին: Նրանք վկայ եղան ցնցող ողբերգութեան Թուրքիայում, կատաղի յեղափոխութեան Ռուսաստանում, պատերազմի, սովի դրամատիքական դեպքերի Հայաստանում, Կովկասում, մեկ խօսքով նրանք կեանքը տեսան միայն իր մռայլ կողմերով:

Ապրիլ 24 սերունդի (Չ.Ո.Մ.) այս երիտասարդ հոծ բազմութիւնը սովորում և աշխատում է Խորհրդային Հայաստանում, կամ գտնւում է տարագրութեան մէջ Եվրոպա, Ամերիկա կամ Ասիա: 17 տարուա ընթացքին այս սերունդը մեծացաւ, ստացաւ զանազան տպաւորութիւններ և որոշեց իր դիրքը հանդէպ հայրենիքի, Հայաստանի և այլ հարցերի, կապւած այդ անունների հետ: Նրա գործերից, ձգտումներից և նպատակներից կարելի է (1 բառ ջնջած) տեսնել անկախութիւն յայտարարելուց յետոյ առաջին այս սերունդի վերաբերմունքը հայ ժողովուրդի ամենայն կարևոր և հիմնական նպատակների հանդէպ:

Բացի այս սերունդից շատ զգայուն նկատի պէտք է առնել նաև հայ ժողովուրդի միւս տարրերը: Ողջ է դեռ այն սերունդը (50-60 օր) որ ի վերջոյ ստեղծեց Հայաստանի Հանրապետութիւնը և վերջացրեց աշխատանքները նախորդ սերունդների արդեն գերեզման իջած: Նրանց հիմնական տեսակետը այն է, թէ որևէ ժողովուրդի բազմակողմանի զարգացման և ազգային հանճարի ստեղծագործութեան տեսակետից անհրաժեշտ է ունենալ իր սեփական պետական կեանք իր երկիրը, իր լեզուն և իր կառավարութիւնը հիմնուած ժողովրդի կամքի վրայ: Ճիշտ է սակայն, որ շնորհիւ պատմական որոշ դեպքերի, պատերազմի և Ռուսական յեղափոխութեան ոչ բոլորը կատարւեց այնպէս, ինչպէս որ հայ ժողովուրդը կը ենթադրեր և կուզէր:

Այս յօդուածով մենք չենք հետապնդում այն միտքը, թե քանի տարիներ է անցած այն ժամանակից, մենք կարողացանք լիովին իրականացնել մեր իդեալը՝ Անկախ և Միացեալ Հայաստան իր բնական սահմաններով ամփոփելով ամբողջ Հայ ժողովուրդը իր հայրենիքի մէջ – մենք միայն կը ցանկանք պարգաբանել, 17 տարուայ փորձերը (1 բառ ջնջած) հիմք ունենալով, թէ արդեօք ճիշտ է եղել անկախութեան յայտարարումը Հայ ժողովուրդի շահերի տեսակետից և ինչպէս վերաբերուեց Հայ ազգը: Ի՞նչ է մեր իրականութիւնը, ի՞նչ կը պարզէ մեզ 17 տարուայ փորձը: Մենք գիտակցաբար մեկ վայրկեան կը մօտանանք այն բոլոր հարցերը, որ մեզ կը բաժանէ՝ վարչակարգ, կուսակցական տարակարծութիւն, օրիանտաւիոն, կամ համակրանք: Այս բոլորը շատ կարևոր հարցեր են, սակայն մշտնջենական չեն, նրանք ենթակայ են ձևափոխման պատմական ընթացքին հետևանքով, ազգային երկրամասի, պետական լեզու և ինքնավար պետական կազմի հարցերը շատ կարևոր և կենսական են:

Ազգային հողամասի հարցը ամենէն կարևոր և հիմնականն է, նա կը գերակշռի (1 բառ ջնջած) միւս հարցերը ինչպէս լեզուի և վարչակարգի, որովհետև չկայ երկրամաս, չկայ պետութիւն, մինչ դեռ առանց միազան լեզուի գոյութիւն ունեն (1 բառ ջնջած) մի շարք պետութիւններ, օրինակ՝ Զւեցերեա իր երեք սքանչելի լեզուներով, Հարաւային Ամերիկայի հանրապետութիւնները սպանական և փորտուգալական լեզուներով, Ամերիկայի Միացեալ նահանգները - անգլերէն լեզուով: Ահա ինչու ազգային հողամասի հարցը կը ստանայ հայ ժողովուրդի համար առաջնակարգ հանգամանք: Այս հարցի յարուցանելը շատ վտանգաւոր էր և մինչև 1914 թիւը մենք չէինք արտասանել Հայաստանի Հանրապետութիւն խօսքը, մենք խօսում էինք միայն Թրքահայաստանի բարենորոգումների մասին, մենք երազում էինք հայոց ազգային իրաւունքների մասին Անդրկովկասում, բայց դեպքերը անկախ մեր կամքից իրենք որոշեցին այնպէս, որ իրականանայ հայ ժողովուրդի ազգային իդեալը կովկասահայութեան պատմական հողերի վրայ Արարատեան դաշտում: Մենք պահանջել ենք և այժմ էլ պահանջում ենք լիակատար իրականացումը մեր իրաւունքների՝ կցելով ներկայ Հայաստանին նաև վեց վիլայեթները կամ նրանց մեծագոյն մասը, սակայն իրականութիւն է, որ 17 տարուա ընթացքին մենք

ունենք միայն 30.000 քառակուսի քիլոմետր ներկայիս գոյություն ունեցող Հայաստանի սահմանների մեջ: Միւս իրաւունքների մասին մենք պայքարել ենք և պիտի շարունակենք պայքարել: Սակայն կարևոր է անսահման կարևոր այն իրողությունը որ մենք ունենք ազգային հողամաս, հոգ չէ փոքրիկ, չքաւոր առանց ելքի դէպի ծով, անտառի, առանց կարելիութեան անհնար է տեղաւորել իր սահմանների մէջ 3 միլիոնանոց հայկական բազմությունը, սակայն (1 բառ ջնջած) կայ արդէն մի հողամաս, մի անկիւն, որ Հայաստանի Հանրապետութիւն կը կոչւի: Սկզբնական շրջանում, մայիս 28, 1918-ից յետոյ նա շատերի համար անհարազատ էր: Մարդիկ ծնուած Իզմիր, Կ. Պոլիս, Տրապիզոն կամ Վան իրենք տեսած չէին ոչ Երեւան, ոչ Ալեքսանդրապոլ, շնչած չէին այս Հայաստանի օդը, զգացած չէին նրա հողը և ի՞նչ. 17 տարի վերջ չկայ ոչ մէկ հայ Հնդկաստան, կրոպա (1 բառ ջնջած) Հայաստան կամ Ամերիկայ, որ չհամարեր ներկայ Հայաստան իր հայրենիքը, իր պետութիւնը. այս 17 տարուայ մեծագոյն նւաճումն է:

Հայ ժողովուրդն ունի իր սեփական հողամասը, այսինքն՝ պետութեան ամենէն կարևոր ազդակը և այս իրողությունը ընդունում են բոլորը և դաշնակցականները, և՛ ռամկավարները, և՛ հնչակեանները և բոլշևիկները և չեզօքները, այսինքն հայ ժողովուրդը արդէն ասացինք, որ թիւրիմացությունների տեղի չտալու համար մենք առաջինն էինք, որ ընդունեցինք նրա թերութիւնները որոնք դժուար կամ դիւրին և սակայն հախտահարելի, և այդ հախտահարութեան ձևերը մեթոդները և ընթացքը պիտի կազմեն ժամանակակից և ապագայ հայոդ քաղաքական պատմութեան էությունը, նրա առանցքը: Այդ հախտահարութեան մեթոդները պիտի թելադրեն (1 բառ ջնջած) ժամանակի, տեղի պայմանների հիման վրայ կազմակերպուած շարժումներով քարոզչութեամբ կամ պատահական հանգամանքներից, սակայն այդ մեթոդները պետք չէ լինեն միևնոյնը ամեն ժամանակների համար: Գիտեմ, որ կան մարդիկ, որոնք կարծում են, թէ անկախութեան յայտարարումը եղել է (2 բառ ջնջած) հայ ժողովրդի կամքից անկախ իրեն պատահական դեպքերի հետևանք ինչպէս պատերազմ, Ռուսաստանի յեղափոխություն, տաճիկների պահանջ կամ Կովկասի հարևանների բռնած դիրքը և այլն: Ես անելի կամ որևէ մէկը պիտի

չժխտեմ վերոյիշեալ փաստերի նշանակութիւնը Հայաստանի անկախութեան յայտարարման հարցին մէջ: Այս մասին մանրամասն գրած եմ իմ աշխատութեան «Հայաստանի Հանրապետութեան ծագումը և զարգացումը» գրքի մէջ, սակայն այդ դեպքերը չեն փոխում հարցի բնոյթը թէ անկախութեան յայտարարումը նպատակայարմար էր և թէ այսքան 17 տարուայ փորձը այդ արդարացրեց: Այս է հարցի էութիւնը: Չէ որ Ֆինլանդիան, Լեհաստանը, Լատուիան Լիտունեան անկախութիւն ստացան իբրև հետևանք դեպքերի դասատրման, ինչպէս պատերազմ և Ռուսական յեղափոխութիւն և շնորհիւ նոյն պատերազմի, որ եղաւ հակառակ Ֆրանսահ կամքից, Էլզաս Լոտարինգեան միացաւ Ֆրանսային մեր ժամանակները չկայ օրինակ ժողովուրդական ըմբոստութեան մեն մենակ իր ճնշումների դէմ: Ներկայիս պատերազմի պայմանները, սպառազինումը ազգերի դաշ. և միջազգային հարաբերութիւնները, բոլորովին փոխել են ժողովուրդների ազատագրման տեքնիկը և նոր պետութեան կազմութիւնը:

Կարևոր է ժողովուրդի ինքնագիտակցութիւնը, նրա կամքը ազատագրելու և կարենալ օգտագործել դեպքերը, որոնք ծագում և զարգանում են հաճախ մեր կամքից, մեր հավաստիութիւններից անկախ: Այսպէս մեր աչքերի առջև կազմեցաւ Ճապոնիայի կամքով Մանջուրական պետութիւնը նոյն իսկ առանց մանջուրացիների մասնակցութեան: Նոյն է նաև Աւստրիոյ գոյութիւնը, որ պարտ է մեծ պետութիւններին, եթե այս վերջինները չարգելեն Աւստրիան վաղուց հանձնած կը լինէր Գերմանիային: Ուրեմն մեզ համար կարևորն այն է, որ դեպքերի բերմամբ կազմուած Հայաստանի Հանրապետութիւնը անմիջապէս արտայայտեց իմ մէջ Հայ ժողովուրդի իդեալը և երազը: Հայաստանը եղաւ հայրենիքը բոլոր հայերի համար և տարիէ տարի զարգանում էր հայրենիքի զգացումը: Մի շարք պարագաներ նպաստում են նրան: Աշխարհի համատարած ազգայնամոլութիւնը անկարելիութիւնը հայերի համար վերադառնալ Թիւրքիայ, համազգայնորեն տագնապը, որ արգելում է հայերին տեղաւորելու հաստատապէս նոր վայրերի մէջ և վերջապէս ամենին կարևորը գիտակցութիւնը որ իր ազգային մշակոյթը, լեզուն և ազգային հանճարը կարող են ստանալ լիակատար զարգացումը միայն իր հայրենիքի իր (1

բառ ջնջած) ազգային պետութեան սահմանների մէջ: 1918-ին մենք դրինք հիմերը այդ գիտակցութեան, հայոց լեզուն դառաւ պետական լեզու, կազմուեցաւ ազգային բանակ, կառավարութիւն, քաղաքային և գաւառական ինքնավարութիւններ: Առաջին քայլերը դժուար էին՝ սով, վատ հարկաններ, տաճիկների և բոլշեիկների ներխուժում, այս բոլորը դժարացրին մեր աշխատանքները: Սակայն մենք ունէինք զօրեղ դաշնակից՝ ինքը ժողովուրդը, նրանց գիւղացիութիւնը, նրա մտաւոր դասակարգը, նրա զինւորականութիւնը, նրա գլխաւոր կուսակցութիւնը, նրա իղեալը նրա ստեխծագործական հանճարը: Այն ժամանակը դեռ կարելի էր խօսել տեսականօրէն ամեն մեկ ժողովուրդի ինքնաորոշման իրաւունքի մասին:

Մինչ այժմ, 17 տարի վերջը պետք է խօսել միայն իրական փաստերի մասին: Հայաստանի հողային տարածութիւնը ի հարկէ փոքր է, պետք է ընդլայնել նրա սահմանները փոխանակ 30.000 քւ. պետք է ունենալ առնւազն 150000, Մեվրի դաշնագրի հիման վրայ մեզ տրւած է 180.000 ք.ք.: Մենք տեսանք Սերբիայ և Ռումանիայ օրինակներից, որ պետք է տարիներ, տասնեակ տարիներ, որպէսզի կարենալ իրականացնել հողային իղեալն, և այդ իսկ պատճառով պետք չէ լալ այն մասին, թէ ինչ ունէինք և ինչ կորցրեցինք, այլ մտածել, որ պետք է ստանալ և ինչպէս:

Կեանքը հարատւ է, մահը և ծնունդը շարժում են աշխարհը: Մեր երիտասարդութեան ընելիքը՝ փոխարինել հոգնած և նահատակւած կուռղները և հետևելով աշխարհի ընթացքին՝ փնտրել վարկեանը ազգային իղեալները իրականացնելու համար: Այսպէս կը լուծի հողային հարցը, որ շատ կարևոր է մեզ համար:

Լեզուն ստացաւ ազգային պետական բնոյթ, մեր աչքերի առջև կը կատարւէր փոխադարձ ազդեցութիւնը երկու բառբառների՝ Արևելեան Երևանեան և Արեւմտեան Կ. Պոլսական և համադրութեան օրէնքի ազդեցութեան տակ կազմուում էր միացեալ մեկ լեզու՝ ամենին կարևոր ազդակը ազգային միութեան և 1918-ին լեզուն ստացաւ պետական հանգամանք: Լեզուի նւաճումը պետական հիմնարկութիւններից ներս եղաւ ոչ մեկ անգամից, անհրաժեշտ էր պայքարել Ռուսական լեզուի դեմ, որ բարձր էր իր մշակոյթով, գրականութեամբ և գեղեցկութեամբ և սակայն օտար հայկական պետականութեան համար և հայոց լեզուն շուտով գրաւեց իր տեղը:

Ճիշտ է, խորհրդային իշխանությունը աղաւաղում է հայոց լեզուն՝ մտցնելով նրա մէջ անհարազատ դարձւածքներ, բայց մենք կը հաւատանք, որ հայոց լեզուն պիտի պահէ հիմքին մէջ իր դարերով կուտակած արժեքները և նպաստաւոր պայմանների մէջ կրկին պիտի փայլի իր պատկերալից գեղեցկութեամբ:

Հայաստանի այսօրուան ազգային ինքնավար պետական և քաղաքական գոյութիւնը չեն համապատասխանում մեր ցանգութիւններին: Այս հարցի վերաբերեալ մեր տեսակետները արդէն յայտնի են: Մենք կանգնած ենք քաղաքական լիակատար անկախութեան տեսակետի վրայ: Այսօրուան Հայաստանի Հանրապետութիւնը այդ անկախութիւնը չունի, ճիշտ է թղթի վրա նա անկախ է: Քանի որ բուն Ռուսաստանում, Մոսկւայում տիրում է կոմունիստական իշխանութիւնը միակ և անբաժան Մովետական Միութեան բոլոր մասերի համար դժար է մտածել, որ Հայաստանը կարող է ստանալ իր լեզուն և իր պետական անկախ կեանքը: Կան և ուրիշ պատճառներ, ինչպէս օրինակ հարևան Տաճկաստանը, որ պիտի չը հանդուրժեր Հայաստանի ուժեղացումը, որովհետև նա գիտէ հայերի իրաւունքները և պահանջները իր հողերի վրայ, որ առայժմ կը գտնուեն թրքական տիրապետութեան տակ: Սակայն և Թիւրքիան և մենք լաւ գիտենք պատմութեան անխուսափելի օրենքի մասին: Ժամանակին թիրքերին կը պատկանէին Ռոմանեան, Բուլղարեան, Սերբիեան, Յունաստանը, Եգիպտոսը, Իրաքը, Պաղեստինը և Ալբանեան և այս բոլորը ազատագրուեցին և Թիւրքեան ստիպված եղաւ հաշտուել իրերի այս կացութեան հետ: Այս բոլորը եղաւ արեան գնով, տանջանքով հրով և սրով, պատերազմով, բայց ինչ անել, աշխարհը դեռ չհնարեց այլ միջոցներ արդարութեան և իրաւունքի հախտանանքի համար: Այս տխուր է սակայն և իրականութիւն է և մենք անզօր ենք դրա դեմ: Ազգերի դաշնակցութիւնը այս հարցի նկատմամբ ոչ ոքի ոչինչ Օ21 տուած է:

Ինչպէս կընդանան դեպքերը Խորհուրդային Միութեան մէջ ոչ ոք գիտէ: Սակայն անվարան կարելի է պնդել, որ խորհուրդային իշխանութիւնը իր գոյութիւնը պահպանելու և ուժեղացնելու իր դիրքը երկրին ներսը նոյն իսկ հակառակ իր կամքին ստիպւած պիտի լինի ընդյառաջ գնալ Ուկրայնաի, Վրաստանի և Հայաստանի հողային պահանջները բաւա-

րարելու որպէսզի պակսեցնի քանակը և ազդեցութիւնը «ներքին թշնամիների»: Մենք այդ արդէն տեսանք Ռուսաստանումը 1914-1918 ժամանակաշրջանում, երբ իշխանութիւնը թուլացած սկսաւ ազատութիւն խոստանալ Լեհաստանին, Տաճկահայաստանին և Գալիցեային 021: Մենք գիտենք նաև Երևանի հայ կառավարիչների բաւական սահմանափակ իրաւունքները և նրանց կախումը Մոսկուայից, և այդ իսկ պատճառով պետական կեանքի այս երրորդ ազդակը մենք համարում ենք, որ նա նախնական կամաւորութիւնը ընթացքին մէջ է: Ամեն բան ընթում էր համեմատութեան օրենքի վրայ: Եթէ 1918-1920-ին մենք ունեինք բոլորովին անկախ կառավարութիւն, այժմ իհարկէ մենք շատ յետ գնացած ենք, բայց երբ նկատի առնենք, որ մինչև 1916-ը Հայաստանը կառավարւում էր Ռուսաստան մէկ նահանգապետով, այսօրւան կայսրութիւնը ազգային տեսակետով պետք է համարել աւելի ընդունելի: Ճիշտ է, օրւայ կառավարութիւնը շատ քիչ տւեալներ ունի իսկական ազգային կառավարութիւն համարելու համար, սակայն այս ինչպէս նաև հողային հարցի նկատմամբ հայ ժողովուրդը դեռ շատ պիտի պայքարի որպէսզի հասնի լաւ օրերի: Մենք համարում ենք որ հայոց կարտավարութեան ազգային պարտականութիւնն է մեծ ջիքեր թափել հայ գաղթականները արտասահմանից Հայաստան փոխադրելու համար: Եթէ կառավարութիւնը այդ անէ իր մեղքներից շատերը կը ներեն իրեն: Շատ հատկանշական և շատ կարևոր է այն հանգամանքը, որ ներգաղթի հարցի շուրջ տարակարծութիւն չկայ հայ քաղաքական հոսանքների մէջ: Մի շարք կրոնական և Ռուսական գործիչների համար անհասկանալի է, թէ ինչպէս դաշնակցութիւնը, որ քաղաքական հակառակորդ է խորհրդային վարչաձևին անվերջ պահանջում է գաղթականների զետեղում է իր սեփական հայրենիքի մէջ: Նրան չեն հասկանում, որ այս հարցը հայերի համար պարզ մարդասիրական հարց չէ, այլ (4 բառ ջնջած) առաջնակարգ պետական նշանակութիւն ունեցող մի հարց: Հայերի, լինի Իզմիրի, Պոլսի, Սվազի, Էրզրումի կամ ուրիշ տեղի միահամուռ փափակն է ամփոփել իր Հայրենիքի սահմանների մէջ: Այս միահամուռ և միակամ ձգտումը պետական մեծ կարևորութիւն ունեցող մի փաստ է: Բայց ամենից կարևորն այն է, որ այս ձգտումը գոյութիւն ունի լայն զանգւածների սրտերի մէջ և մեզ կը թուի,

թէ հայ իրականութեան մէջ աժմէական հարցերից ամենին կարևորը ներգաղթի հարցն է և նրա լուծման համար պէտք է համախումբել բոլոր ճիւղերը, դրամական բոլոր միջոցները և պրոպագանդի բոլոր հնարաւորութիւնները: Այս հարցի հանդէպ միւս խնդիրները հանած կարևորութիւն ունեն, բացի ի հարկէ վարչաձևի և սահմանների խնդիրը: Առաջին հերդին հայութիւնը պիտի լուծէ այդ խնդիրները հայ գաղթականական զանգուածները ապագայման վտանգից զերծ պահելու համար: Այս անհրաժեշտ է հայ լեզուի և մշակոյթի պահպանման տեսակետից հայութեան այն մասի համար, որ պարտադրաբար ստիպուած է առայժմ մնալու արտասահման, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է դպրոցներ, գրադարաններ, մամուլ և հարազատ միջավայրեր: Ըստ էութեան այս բոլորը պետական կարգի հարցեր են՝ տեղի, ժողովուրդի, լեզուի պահպանման և այդ պատճառով Համազգային ընկերութեան գործնէութիւնը կը հանդիսանայ իբրև անհրաժեշտ և շատ օգտակար գործ Հայ ժողովուրդի պետական շահերի տեսակետից: Եթէ մեկ վայրկեան, մեկ թողնէք այն վեճերը և երկպառակութիւնը, որ գոյութիւն ունի մեր մեջ, կարելի է այնուամենայնիւ մատնանշել, որ 3 հիմնական հարցերի շուրջ կայ միաձայնութիւն հայ ժողովուրդի թէ՛ մայր երկրի և թէ՛ գաղութների իր բացարձակ մեծամասնութեան մէջ:

(2 բառ ջնջած) Այս հիմնական հարցի նկատմամբ՝ ինչպէսին է սեփական պետութեան ունենալը հայութեան մեկ մասի համար բոլորովին անկախ, իսկ միւս խորհուրդային սովետական հանրապետութեան միութեան անբաժան մեկ մաս, չկայ ոչ մեկ տարակարծութիւն: Մենք բոլորս համաձայն ենք որ մեզ պէտք է մեկ անկիւն մեր սեփական հայրենիքի մեջ, մեր մեջ ամենին ուժեղ հոսանքը պահանջում է անկախ և միացեալ Հայրենիք և դրանով պէտք է բացատրել այն արտակարգ ոգևորութիւնը, որ հայ ժողովուրդը և ի յայտ կը բերի տարի է տարի մայիս 28-ի տօնակարտարութեան ժամանակ: Հայ ժողովուրդը աւելի և աւելի մեծ թուով կը մասնակցի այդ տօնակարտարութեան և աւելի մեծ ոգևորութիւն առաջ կուգայ նրա նոր սերունդի մեջ, որ կուզէ տեսնել իր հայրենիքը ազատ, աշխատել և գոհուել նրա համար: 17 տարի առաջ ցանւած սերմը տուաւ փառահեղ բերք*։ Կան ակադէմական վեճեր ոճի, ուղղագրութիւն առաւել-

լութեան մասին: Վարչաձևի խնդիրները մեր կարծիքով տեսական չեն՝ օրինակ միապետութեան կամ հանրապետութեան, դաշնակցական կամ բոլորովին անկախ պետութեան առաւելութիւնների մասին ինչպէս նրանք գոյութիւն ունեն այսօր Յունաստանում կամ Իրլանդիայում: Այստեղ հարցը վերաբերում է Ռուսական հովանաւորութեան մասին տաճկական վտանգի պարագային, եթէ այս վտանգը չլինէր այն ժամանակ անկախութեան հարցը կը քննէր իր իսկական լոյսին տակ: Այսօր նա քողարկւած է, ոմանց համար նա նպատակայարմարութեան խնդիր է տւեալ պայմանների համար, այդ իսկ պատճառով վիճաբանութիւնները նրա շուրջ չեն արտացոլում վիճող կողմերի հսկական մտքերը: Մեզ համար կարևոր է մեր (2 բառ ջնջած) այս նիւթը պարզաբանելու տեսակետից մատնանշել, որ նրանք, որոնք որ ժխտում են (1 բառ ջնջած) անկախութեան անհրաժեշտութիւնը հայերի համար (1 բառ ջնջած) ելակետ անեն ոչ թէ նրա անկարողութիւնը ազատ ապրելու կամ հակակրանք ունեն դէպի անկախութիւն գաղափարը, այլ պարզապէս վախը զրկել կարևոր օժանդակութիւնից թրքական նաճողական քաղաքականութեան պարագային և (3 տող ջնջած) այդ իսկ պատճառով վեճը շեղում է իր սկզբունքային ուղիից և ստանում քաղաքական նպատակայարմարային խնդիր: Ինչ կը բերի մեզ յետագայ 17 տարիները, մենք չգիտենք, սակայն գիտենք, որ անցած 17 տարին ամբացրել է հայ ժողովուրդի ազգային քաղաքական նաճումները և այդ այն պատճառով, որ մինչև 1918-ը կար հերոսների սերունդ պատրաստ մեռնելու հայոց ազատագրութեան գաղափարին համար, կար գրիչներ ահագանգը հնչեցնող, կար հրապարակախոսներ ինքնագործնէութեան հրաւիրող, հորդորող, կար քաղաքական և կուսակցական գործիչներ հայ զանգւածները միացնող դրոշակի շուրջ՝ մակագրած «Մահ կամ ազատութիւն»: Այս բոլորը տեղի ունեցաւ և այս բոլորը պատրաստեցին մայիս 28-ը դեպքերը և անձերը կաղապարեցին գաղափարները 1918-ի աքսիս մէջ և հետագայ տարիների ընթացքին շատ բաներ կախում պիտի ունենայ այն հարցից թէ որքան հայ ժողովուրդը, նրա հերոսները, գործիչները, գրողները երիտասարդութիւնը, կազմակերպութիւնները կարող են ունենալ վայրկեանի գիտակցութիւնը, (5 բառ ջնջած) որպէսզի պատրաստել լաւ ապագայ և լինել «իր եր-

ջանկութեան դարբինը»: Ամեն անգամ և ամեն ինչ պետք չէ բացատրել և արդարանալ «արտաքին պայմաններով»:

Ալ. Խատիայան:

* Լեզի մասին վեճ չկայ

Մասնագրություն
 17 ցամառ (1918 - 1935)
 Երբեք ես ոչ զի պետական երեսօրհանում,
 հիմա-աս ուրիշ ճանաչմանը չկարծեմ
 քան որ ինչ էր զբոս, և հասցի չէ
 թարգմանչի, ինչ անելի համարել և
 փոփոխել, քան անհամար փոփոխել
 հիմա-աս Խոսքեր և պատմություն
 զբոս:
 Ընդ հասցի
 Մեծ համարում, և քան թույլ է
 և անցյալ (սեպտեմբեր 1918) ինչպես
 թույլ է հիմա ինչ հիմա քան
 1918 և 29 սեպտեմբեր 2 սեպտեմբեր
 թույլ է հիմա ինչ հիմա քան
 28-ի հիմա ինչ հիմա քան
 17 ցամառ: Ընդ համարում ինչ հիմա
 և զար թույլ է, և զար թույլ է,

Հողվածի ձեռագիր բնօրինակի առաջին էջը:

Ալեքսանդր Խատիսյանի ինքնակենսագրությունը¹⁵²

Հետևեալ տողերը Աղ. Խատիսեանը գրի է առած իրեն ձեռքով, 1929-ին Փարիզի մէջ, իմ խնդրանքով: Ս. Վր.

Ծնուել եմ 1874 թ. փետր. 17-ին, Թիֆլիսում: Հայրս պետական բարձր պաշտոնեայ էր, մայրս՝ գրագետ, վեպեր ունի, Մարիամ անունով: Աւարտել եմ Թիֆլիսի գիմնազիան և բժշկութեան ուսանող եմ եղել Մոսկուայի ու Խարկովի համալսարաններում: Աւարտել եմ Խարկովի համալսարանը: Հասարակական պաշտօններս Թիֆլիսի քաղաքային դումայի և վարչութեան անդամ, Թիֆլիսի քաղաքագլուխ, Անդրկովկասի քաղաքների միութեան նախագահ, Անդրկովկասեան Սէմի անդամ, Անդրկովկասեան կառավարութեան անդամ, Հայ Ազգային Բիւրոյի անդամ, պաշտօնական ներկայացուցիչ «Կամաւորական խմբերի» կազմակերպութեան ռուս կառավարութեան առաջ, Հայ Ազգային Խորհրդի անդամ, Տրապիզոնի, Բաթումի և Ալեքսանդրապոլի հաշտութեան պատուիրակութիւնների անդամ: Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ, Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար, ապա՝ վարչապետ, Հայաստանի Հանրապետութեան Փարիզի պատուիրակութեան անդամ: Աշխատակցել եմ «Հայրենիք» օրաթերթին և ամսագրին սեփական անունով: Աշխատակցել եմ Թիֆլիսի մամուլին: Ունեմ բազմաթիւ յօդուածներ և գրքեր ռուսերէն լեզուով քաղաքային տնտեսութեան մասին: Դաշնակցութեան մէջ մտել եմ 1917-ին, կուսակցական ոչ մէկ պաշտօն չեմ վարել:

¹⁵² Փաստաթղթի սկանավորված կրկնօրինակը տրամադրել է Մայրլ Բաբայանը: Պահվում է Բելրուրի «Համազգայինի» կենտրոնական արխիվի Սիմոն Վրացյանի ֆոնդում (ֆոնդ 3, գործ 56):

No 62

**Ալեքսանդր Խատիսյանի մոր՝
Մարիամ Խատիսյանի Կենսագրությունը¹⁵³**

Խատիսեան Մարիամ՝ մայրը Ալ. Խատիսեանի:

Ծն. 1845 թ., Թիֆլիսի մեջ: Ուսած. Թիֆլիսի աղջկանց վարժարան: Ծնողները վիրախօս էին: 40 տարեկան հասակին, երբ Եւրոպա ճամբորդելով կայցելէ Վենետիկի Միսիթարեան վանքն, Հ. Ղ. Ալիշանէն կը յանդիմանուի, թէ հայուհի մը հայերէն չգիտէ: Վերադառնալով հայրենիք սկսաւ սովորել հայերէն: Սկսաւ հետաքրքրուել հայկական կեանքով: 1877-78 դէպքերու ազդեցութեան տակ լոյս ընծայեց «Արևելեան հարց» իր գիրքը: Ապա սկսաւ գրել վիպական երկեր. «Հեղինէ», «Նոր ճանապարհի վրայ», «Փեսայ որսողներ», «Դժբախտ կինը» վեպերը: Կը գրէր ռուսերէն և թարգմանէին Շիրվանզադէ և այլ: Ծածկանունը Մարիսեան:

Հիմնադիր Հայուհեաց բարեգործական ընկերութեան, որի նախագահն էր երկար տարիներ: Անոր կտակեց 10.000 ռուբլի:

Հասարակական գրական հայեացքներով ազդուած էր Գր. Արծրունուց, որին մոտ բարեկամ էր:

Եռանդով մասնակցած է Թիֆլիսի հայ ազգային կեանքին:

Հայ կնոջ ազատութեան ախոյեան էր:

Մեռաւ 1914 թ., փետր. 9/22:

No 63

Ալեքսանդր Խատիսյանի կենսագրությունը ֆրանսերէն¹⁵⁴

¹⁵³ Փաստաթղթի սկանավորված կրկնօրինակը տրամադրել է Մայքլ Բաբայանը: Պահվում է Բեյրութի «Համազգայինի» կենտրոնական արխիվի Սիմոն Վրացյանի ֆոնդում (ֆոնդ 3, գործ 56):

¹⁵⁴ Արխիվային փաստաթղթի պատճենը տրամադրել է Մայքլ Բաբայանը: Պահվում է Բեյրութի «Համազգայինի» կենտրոնական արխիվի Սիմոն Վրացյանի ֆոնդում (ֆոնդ 3, գործ 56):

Alexandre KHATISSIAN - Docteur en Médecine
né à Tiflis (Caucase) le 17 Février 1874
Décédé à Paris (France) le 10 Mars 1945.

NOTICE BIOGRAPHIQUE

E T U D E S.-

1er Gymnase Classique de TIFLIS.-
Faculté de Médecine de Moscou. (5 ans)
Faculté de Médecine de Kharkow. (2 ans)
Faculté de Médecine de Berlin.
(Professeurs WIRCHOW et KLEMPERER).

OUVRAGES PUBLIES.-

- 1 - Les Origines et l'Evolution de la République Arménienne (400 pages)
- 2 - L'Etat Economique des Ouvriers dans les Villes du Caucase.
- 3 - Les Questions de la Santé Publique dans les Villes de l'Allemagne.
- 4 - Nombreux articles dans le "HAIRENIK" quotidien arménien de Boston.

C A R R I E R E.-

1902 - Conseiller municipal de la Ville de Tiflis.
1906 - Adjoint au Maire de la Ville de Tiflis
1908 - Premier Adjoint au Maire de la Ville de Tiflis.
1909 à 1917 - Maire de la Ville de Tiflis
1914 à 1917 - Président de l'Union des Villes du Caucase (44 villes)
Fin 1917 à 1918 - Maire de la Ville d'Alexandropol.
1er Semestre 1918 - Ministre des Finances du Gouvernement Transcaucasien.
Février 1918 - Membre de la Délégation de la Diète Transcaucasienne à la Conférence de Trébizonde.
Mai 1918 - Membre de la Délégation de la Diète Transcaucasienne à la Conférence de Batoum.
28 Mai 1918 - Proclamation de l'Indépendance de la République Arménienne.
Novembre 1918 - Ministre des Affaires Etrangères de la République Arménienne.
Févr. 1919 - Mai 1920 - Premier Ministre de la République Arménienne (Président du Conseil des Ministres).
Juil. Oct. 1920 - En mission en Europe pour la conclusion d'un emprunt (France, Angleterre, Belgique, Grèce, Roumanie, Bulgarie, Yougoslavie, Egypte).
Décembre 1920 - Président de la Délégation Arménienne à la Conférence d'Alexandropol.
Février 1921 - Membre de la Délégation de la République Arménienne à la Conférence de la Paix à Paris.
depuis, Vice Président et Président de cette Délégation.
1936 - Président de l'Office des Réfugiés Arméniens à Paris.
1945 -

Ալեքսանդր Խատիսյանի կենսագրությունը ֆրանսերեն¹⁵⁵

Ֆրանսերեն բնօրինակի ոչ պաշտոնական հայերեն թարգմանությունը:

Ալեքսանդր Խատիսյան – բժիշկ

Ծնված Թիֆլիսում (Կովկաս) 1874 թ-ի փետրվարի 17-ին

Վախճանվել է Փարիզում (Ֆրանսիա) 1945 թ-ի մարտի 10-ին

Կենսագրական Նշումներ

¹⁵⁵ Համազգայինի կենտրոնական արխիվ (Բեյրութ), Սիմոն Վրացյանի ֆոնդ (No 3), գ. 56: Փաստաթղթի սկանավորված կրկնօրինակը տրամադրել է Մայքլ Բաբայանը:

Ուսում՝ 1-ին դասական գիմնաստ՝ Թիֆլիսում
Բժշկական համալսարան Մոսկվայում (3 տարի)
Բժշկական համալսարան Խարկովում (2 տարի)
Բժշկական համալսարան Բեռլինում
(Դասախոսներ՝ Վիրխով, Կլեմպերեր)

Հրատարակված աշխատություններ
Հայաստանի Հանրապետության ծագումն ու էվոլյուցիան: (400 էջ)
Աշխատավորների տնտեսական վիճակը Կովկասյան քաղաքներում:
Հանրային առողջության խնդիրները գերմանական քաղաքներում:
Բազմաթիվ հոդվածներ Բոստոնի «ՀԱՅՐԵՆԻՔ» հայկական օրաթերթում:
Կարիերա
1902-Թիֆլիս քաղաքի քաղաքային խորհրդական:
1906-Թիֆլիս քաղաքի փոխքաղաքապետ:
1908-Թիֆլիս քաղաքի քաղաքապետի առաջին տեղակալ:
1909-1917-Թիֆլիս քաղաքի քաղաքապետ:
1914-1917-Կովկասի քաղաքների միության նախագահ (44 քաղաք):
1917-ի վերջ-1918-Ալեքսանդրապոլի քաղաքապետ:
1918թ. կես-Անդրկովկասյան կառավարությունում ֆինանսների նախարար:
1918թ. փետրվար-Տրապիզոնում կայացած կոնֆերանսում Անդրկովկասյան ներկայացուցչական ժողովի պատվիրակության անդամ:
1918թ. մայիս- Բաթումում կայացած կոնֆերանսում Անդրկովկասյան ներկայացուցչական ժողովի պատվիրակության անդամ:
1918 թվականի մայիսի 28 - Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը:
1918 թվականի նոյեմբեր - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար:
1919 փետրվար - 1920 մայիս՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ (Նախարարների խորհրդի նախագահ)
1920 թվականի հուլիս հոկտեմբեր - Եվրոպայում փոխառություն կնքելու առաքելությամբ (Ֆրանսիա, Անգլիա, Բելգիա, Հունաստան, Ռումինիա, Բուլղարիա, Յանգոալավիա, Եգիպտոս):

1920 թվականի դեկտեմբեր-Ալեքսանդրապոլի կոնֆերանսում հայկական պատվիրակության նախագահ:

1921 թվականի փետրվար - Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության անդամ. Այնուհետև՝ այս պատվիրակության փոխնախագահ և նախագահ:

1936թ.՝ Փարիզի հայ փախստականների գրասենյակի նախագահ:

1945 – *ավելացված է ձեռագրով, ձեռագիր տեքստն անընթեռնելի է*¹⁵⁶:


No 64

Ալեքսանդր Խատիսյանի զինապարտության վկայականը¹⁵⁷

(4 սեպտեմբերի, 1896թ., վկայական No 165)


¹⁵⁶ Հավելենք, որ 1926թ. դեկտեմբերի 5-ից Ալ.Խատիսյանն անդամագրված է եղել Փարիզում Ռուսաստանից քաղաքական վտարանդիների կողմից հիմնված «Северная звезда» («Հյուսիսային աստղ») մատնական օթյակին: Օթյակում քննարկվող ամենակարևոր հարցերից մեկը եղել է բոլշևիկներից Ռուսաստանի ազատագրումն ու նրա հետագա քաղաքական ու պետական կարգերի կազմակերպումը: Ալեքսանդր Խատիսյանը այդ հարցի շրջանակներում օրակարգային է դարձրել նաև Հայաստանի անկախ պետականության վերականգման հարցը: Ի դեպ, նույն օթյակի անդամ է եղել նաև Սիմոն Վրացյանը: Տե՛ս, I.L.Babich, HISTORICAL PARADIGM OF RUSSIAN-ARMENIAN GEOPOLITICAL RELATIONS (THE CASE OF PARTICIPATION OF ARMENIANS IN RUSSIAN MASONIC LODGES IN FRANCE, 1919-1939), January 2016, Historical and Social-educational Ideas 8(5/2):43-52; DOI:10.17748/2075-9908-2016-8-5/2-43-52

¹⁵⁷ Արխիվային փաստաթղթի պատճենը տրամադրել է Մայքլ Բաբայանը: Փաստաթուղթը վերջինիս փոխանցվել է Ալեքսանդր Խատիսյանի ժառանգների կողմից:



No 65


Հայաստանի Հանրապետության Պարլամենտի ՈՐՈՇՈՒՄԸ Ալեքսանդր
Խատիսյանին երկրի վարչապետ ընտրելու վերաբերյալ¹⁵⁸
(8 օգոստոսի, 1919թ.)



¹⁵⁸ Օրէնքների հաւակածու: Հրատարակութիւն Պարլամենտի:1919թ.,No1, 3 նոյեմբերի,Երեւան:

No 66

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից
Հայաստանում Ֆրանսիայի ռազմական ներկայացուցիչ կապիտան
Պուադեբարին տրված հավատարմագիրը:
(6 մարտի, 1919թ.)



Փաստաթղթի ֆրանսերեն բնագիրը:

Փաստաթղթի հայերեն ոչ պաշտոնական թարգմանությունը¹⁵⁹

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

No A99

